

18

Բ Ա Լ Ո Ւ

ԻՐ ԱՌՎՈՐՈՅԻԹՆԵՐԸ, ԿՐԴԹԵԿԿԵՆ
ՈՒ ԻՄԱՅՑԵԿԿԵՆ ՎԻՃԵԿԸ

ԵՒ

ԲԵՐԲԵՈՒՇ



ԵՐԵՎԱՆԻ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՏՆ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
(ԵԼԵՒՈՐ)



Գ. ԵՏԻՐԷ
ՏՊ. ՍԵՏԵԿ - ՄԵԱՐՈՊ
1932

Բ Ա Լ Ո Ւ

ԻՐ ԱՌՎՈՐՈՅԹՆԵՐԸ, ԿՐԹԵԿԿԱՆ
ՈՒ ԻՄԱՅԿԿԱՆ ՎԻՃԵԿԸ

ԵՒ

ԲԱՐԲԱՌԸ



ԷՇԻՐԱՅԱՐԵՅ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՏՆ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
(ԷԼԵՒՈՐ)



Գ. ԷՏԻՐԷ

ՏՊ. ՍԷՏԵԿ - ՄԵԱՐՈՊ

1932

206

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

1926ին՝ Գահիրէ հրատարակուող «Լուսարձակ» շաբաթաթերթին խմբագրութեան թելադրութեան վրայ, «Գիւղի սովորոյթներ» խորագրով, եւ, «Ալեւոր» ծածկանուն ստորագրութեամբ, գրելու սկսայ յօդուածներու շարք մը, որ, նոյն թերթին մէջ, թերթօնի ձեւով, պարբերապէս լոյս տեսաւ:

1928ին, երբ «Լուսարձակ»ի հրատարակութիւնը դադրեցաւ, ինծի առաջարկուած նիւթը տակաւին սպառած չէր. ուստի, միեւնոյն ուղղութեամբ աշխատութիւններս շարունակեցի. գրեցի՝ ի՛նչ որ տակաւին կը յիշէի, եւ, ի՛նչ որ կրցայ հաւաքել 1930ին, Պէյրութի ու Դամասկոսի մէջ ապրող տարազիր հայրենակիցներէս, որոնց հետ, քանի մը շաբաթ, շփման մէջ գտնուելու առիթն ունեցայ:

1931ին երբ մամուլին յանձնեցի աշխատութիւններս, յիշողութիւնս երեւան կը բերէր մոռցուած էջեր, ու յաճախ, կը հարկադրէր ետ դառնալ՝ նորանոր յաւելումներ ընելու նիւթերու եւ քացատրութեանց, ու այս կերպով մեծապէս կը դժուարացնէր տպագրական պայմանները: Ստիպուած այս հարկէն ու նիւթական միջոցներու անբաւականութենէն, չէի կրնար աւելի երկարածրգել հրատարակութեան գործը, ուստի աւելին՝ ապագայի հրիտակելով քաւականացայ:

Այս գիրքը ուրեմն, զոր «ԲՍԱՌԻ» անուանեցի, կը բովանդակէ նոյն յօդուածներուն շարքը, եւ անոնց՝ ապա գրի առնուած շարունակութիւնը:

Ես, Բալուի Թրրխէ — տեղական ուղղագրութեամբ Թրխէ — գիւղը ծնած եմ, եւ հոն ապրած մինչեւ 1895 թուականը, իբրեւ՝ մանուկ, պատանի ու երիտասարդ, եւ իբրեւ՝ արհեստաւոր, ուսուցիչ ու քահանայ: Այս բնական պատեհութեամբ՝ ընտելացած այդ փոքրիկ գաւառին սովորոյթներուն, զբաղմանց ու բարբառին բոլոր ձեւերուն ու նրբութիւններուն, զանոնք ներկայացուցած եմ, այս գիրքով, անթերի ճշտութեամբ մը, առանց անոնց վրայ բան մ'աւելցնելու, առանց անոնցմէ նշանախեց մ'իսկ պակսեցնելու, փոխելու կամ սեթեւեթելու վնասակար ունայնամտութեամբ:

Կը մտածէի թէ այս գաւառակը՝ որպէս իրականութիւն ներկայացնել, ա՛յն է՝ տալ, անոր հարազատ ու ամբողջական դիմա-

զրծութիւնը ա'յնպէս, ի'նչպէս որ է, եւ, հասկնալի դարձնել ամէ-
 նը, զոր ես տեսած ու իւրացուցած եմ, անոնց՝ որոնք զայն ո'չ
 տեսած են, եւ ոչ ալ նման սովորոյթներու զուգորդիչ գաղափար-
 ներու պատկերներն ունին իրենց երեւակայութեան մէջ, նաեւ, գը-
 լուխ հանել զործ մը, որ փոխանակ՝ գրականութեան բանաստեղ-
 ծական բաժնին մէջ դասաւորուելու Բանասիրական, Ազգագրական
 եւ Լեզուաբանական ուսումնասիրութեանց իբրեւ հարազատ ա-
 տաղծ ծառայելու սահմանուէր, ինծի համար, շատ ծանր յանձնա-
 ութիւն մը պիտի ըլլար: Ծանր կ'ըսեմ անոր համար որ՝ շուրջ
 քառորդ դարու, անընդհատ շրջան մը զիս կը բաժնէ բնագաւառէս,
 ու, այս երկարատեւ ժամանակաշրջանին, մոռացութիւնը շատ բան
 տարած է յիշողութենէս, եւ, այն ամէնը, որոնք դեռ յիշողութեանս
 մէջ անվթար կ'ապրին, հանրութեան հասկնալի դարձնելու համար
 գլխաւորապէս նիւթական միջոցներս՝ զիս վիատեցնելու աստիճան
 սեղմիչ կը գտնէի:

Սակայն, հայրենի գաւառիս դարաւոր գոյութեան եղերա-
 կան փլուզումէն յետոյ, անոր երագը, երեւակայութեանս մէջ աւելի
 ուժգնութեամբ ապրելու սկսաւ, ու ես, այդ երնագին հզօր ներշնչ-
 շումներուն տակ, չէի կրնար արդար ու վսեմ վրիժառութեան մը
 հարկը հատուցանելու պարտականութիւնս զանց ընել:

Վրիժառութիւնը, որուն խօսքն ըրի, պէտք չէ հասկնալ
 այն, զոր չարագործները ստեղծած են, եւ հոմանիշ է՝ արիւնի ու
 աւերածութեան, եւ որ, իբրեւ հասարակ, հակամարդկային արարք,
 իրաւունքը կը նուաստացնէ, զրկողին դերն ու դիրքը զրկեալին
 փոխանցելով, այլ, պէտք է հասկնալ աշխատանք մը, որուն նպա-
 տակը պիտի ըլլար՝ դարաւոր կառուցուածքի մը հիմնայատակ ցըր-
 ւած մասունքները հաւաքել, անոր ոսկերոտին ամփոփել, պատ-
 րաստել, հանդիսաւոր այն մեծ օրուան համար, երբ, կը հաւատամ
 թէ՛ անոնց վրայ Եհովայի հրամանը պիտի շնչէ, (Եզեկիէլ՝ Գլ.37.
 հ. 1-10) եւ անոնք, ոգեւորուած աստուածային շունչէն, հոն այդ
 ամայութիւններուն մէջ, ցեղերու Եղբայրակցութեան, Սիրոյ, Խա-
 ղաղութեան ու Բարգաւաճումի աւելի՛ հոյակապ կառուցուածքի
 մը ատաղձանին պիտի դառնան:

Այդ մասունքները, որքան ալ փոքր ու աննշան համարուին
 մեզի համար, կրնան թանկագին ըլլալ սակայն բանասիրութեան
 համար, եւ կրնան տալ՝ ազգագրական թաքուն մնացած մեծ երշ-
 մարտութիւններու առեղծուածային լուծումը: Այս նկատումով,
 հարկ էր երկիւղած հոգածութեամբ մը հետեւիլ ճշտութիւններուն,
 եւ արտայայտել այնպէս ինչպէս որ են կամ՝ երեկ էին...:

Բալուի հայ բնակչութեան հարազատ բարբառը, զբաղում-

ներն ու սովորութիւնները հանրութեան ներկայացնել, առանց անոր՝ բնական, քաղաքային կամ վարչական պայմանները ամփոփ գիծերով ծանօթացնելու, միշտ աւելի՛ թերի աշխատութիւն մը պիտի մնար, այսպիսի զանցառութեամբ մը, ոչ միայն հայ գիւղացիին հոգեկան վիճակներուն առարկայական աղբիւրը անծանօթ պիտի մնար, այլ, անոր սովորոյթներուն ու կենցաղին՝ իրենց վաղընջական, հարազատ ձեւերուն մէջ անվթար շարունակութիւնը՝ անբացատրելի:

Այս մտածումով, անհրաժեշտ համարեցի՝ սոյն Ներածութիւնը ընդլայնել քանի մ'անջատ հատուածներու յաւելումով, որոնք ցոյց պիտի տան թէ ինչ պայմաններու մէջ ապրած է հայ ցեղը, ի՛նչ եղած է իր յարաբերութիւնը՝ իր հայրինակից ցեղերուն հետ, եւ հետեւաբար ի՛նչ եղած է ժամանակին ստոյգ դերը՝ հոն՝ դարերով կղզիացած մասնաւորապէս ապրող հայ ցեղին անհատական ու ընկերային, իմացական ու բարոյական բարեշրջութեան, կեանքի յառաջդիմական շարժման կամ յետադիմական կայունութիւններու տեսակէտներով:

Ներածութիւնը ամբողջացնող այդ հատուածները հետեւեալներն են. Ա. Բնական դիրք եւ Վարչական բաժանում. Բ. Պետական պայմաններ կամ կառավարութիւն. Գ. Յեղափոխական բաժանում եւ յարաբերութիւն. Դ. Բարբառ.

Ա.

ԲՆԱԿԱՆ ԴԻՐՔ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՒՄ

Բայու կամ Բալահովիտ, պետական արձանագրութեամբ ու հնչումով ՓՍԱՌԻ, որպէս վարչական բաժանում, ասկէ շուրջ կէս դար առաջ, Խարբերդի կուսակալութեան արեւելեան ծայրագոյն մէկ գաւառակը եղած է. բայց յետոյ, վարչական նոր Բաժանումով մը, Օսմանեան Կեդր. Կառավարութիւնը զայն՝ Տիգրանակերտի կուսակալութեան միացուցած է: Նախապէս գիւղախումբ կամ Աւան մը եղած է, բայց վարչական նոր փոփոխութենէն յետոյ, գաւառակի վերածուած՝ Միւտիւրութիւնը Գայմազամութեան փոխուելով:

Այս նոր փոփոխութիւնը, այն է Խարբերդէն անջատելով զայն Տիգրանակերտի միացնելը՝ Բալուի ժողովուրդին համար, պաշտօնական շատ մը յարաբերութիւններու տեսակէտով, աննպաստ եւ անբնական կարգադրութիւն մ'եղած է. որովհետեւ, ասով, կառավարական կեդրոնէն հեռացուած է ենթարկուելով՝ կեդրոնին: հետ հաղորդակցելու բացառիկ դժուարութիւններուն, որոնցմէ մին եղած է ճամբաներու անապահովութիւնը:

Իր սահմաններն են՝ Հիւսիսէն՝ Կարնոյ, Արեւմուտքէն՝ Խարբերդի, Արեւելքէն՝ Բաղէշի նահանգները, որոնց ծայրագոյն զաւառակներուն՝ Չարսանճագի, Ճապաղջուրի, Քղիի եւ Հայնին միջեւ սեղմուած փոքրիկ հողամաս մը կը ձեւացնէ:

Արածանի կամ Մուրատ Չայ գետը՝ Արեւելքէն Արեւմուտք կ'երկարի քանի մը ծոցաւորումներով, եւ Բալուի հողամասը երկու հատուածներու կը վերածէ, Հարաւային եւ Հիւսիսային: Հարաւային կամ Չախափնեայ հատուածը՝ լեռներու շեղջակոյտով մը՝ Արդրնի կամ Պագըր Մատէնի կը կրթնի, եւ նեղ երիզ մը կը ձեւացնէ: Այս շեղջակոյտը՝ գետին հետ զուգահեռօրէն երկարելով մինչեւ Խարբերդի սահմանը՝ դէպի հարաւ կը հակի, եւ կը կազմէ Տարոսեան շղթային վերին հատուածներէն մին:

Սոյն շղթային հիւսիսային ստորոտը կը գրաւեն Թիլ, Թըրխէ, Նանարան, Վերի Վարդենիկ եւ Վարի Վարդենիկ գիւղերը: Վերջին երկու գիւղերը նախապէս հայաբնակ եղած են, ապա՝ բոլորովին քրդաբնակ: Նոյն լեռներուն բարձունքները կը գրաւեն Սրին եւ Պաղին երկու հայաբնակ գիւղերը:

Չախափնեայ այս շերտին մշակելի դաշտօրան նոյն լեռնաշղթային ստորոտը կը տարածուի, եւ միշտ ենթակայ է գետին գարնան յորդումներուն պարբերական աւերածութեանց: Կէս դարու ընթացքին, այս գիւղերը մեծ տարածութեամբ մշակելի ընտիր արտեր կորուսած են:

Արածանիի աջ ափը, գետին երկայնքը կը գրաւեն՝ Բալու քաղաքէն սկսեալ՝ Սէյտիլար թրքաբնակ, Նոր Գիւղ, Նոր գեղայ Մրգայ, Արմրնայ (կառավարական արձանագրութեամբը Եէնի-Քէօյ, Եարրմնայ), եւ Կիւլիչկէր, Ուզուն-Օպայ գուտ հայաբնական գիւղերը: Ասոնք ՎԱՐԻ ԳԵՂԵՐ կ'անուանին: Իսկ գետին աջ ափէն դէպի արեւելեան Հիւսիսեր կարող դաշերը կը գրաւեն՝ Չէթ, Սղամ, Սագրաթ, Շնաղ, Ապրանք, Մռջոմի, Մրգայ Չայրի Մրգայ, Հավաւ, Ներխի, Նպրշի, խոշմաթ, Խամիշլու, Իսապէկ, Արթըխան եւն. զուտ հայաբնակ գիւղերը, որոնք ունին մշակելի ընտիր հողեր: Այս շրջանը՝ ՎԵՐԻ ԳԵՂԵՐ կը կոչուի: Իսկ այս դաշտամասը շրջապատող լեռներուն ծոցերը կամ կողերը կը գրաւեն միւս գիւղերը, ո-

որոնք բաղդատաբար նուազ մշակելի գետին ունին, եւ շրջապատ-
ւած են քրդաբնակ գիւղերով: Եւկու ուրիշ հայ գիւղեր ալ, Օխու
եւ Թափայ կամ թէփէ, գաւառակին Արեւելեան ծայրամասին
մէջ խիստ բարեբեր դաշտ մը կը գրաւեն:

Լեռները ընդհարապէս ապառաժուտ չեն, եւ կրնան մշակելի
դառնալ: Տեղ տեղ դեռ կը պահեն հինաւուրց ճոխ անտառներու
ցանցառ հետքերը, մեծ մասամբ անմշակելի կը մնան, եւ կը սնու-
ցանեն միայն գաւառին աղբիւրները: Հարաւային շեղջակոյտը բը-
նութենէն աւելի օժտուած ըլլալ կը թուի, ունի ջրառատ արօտա-
տեղիներ, եւ վրանաբնակներու ամառնային հաճելի եւ առողջա-
րար կայաններ:

Հանքային հարստութեան տեսակէտով կարելի չէ որոշ բան
մ'ըսել. բայց հաւաստողներ եղած են թէ ունի կապարի, ածու-
խի եւ սսկիի հանքեր, որոնք դեռ անշահագործելի, թագնուած
կը մնան:

Գաւառը կ'արտադրէ արմտիք՝ ցորեն, գարի, կորեկ, կըլկըլ,
ընդեղէն՝ ոսպ, քուշնայ, սիսեռ, Ֆիթ, շուշմայ, կտաւատ, կանեփ,
պտուղ՝ թութ, բալ, կեռաս, տանձ, խնձոր, սալոր, ծիրան, խա-
ղող, եւ բանջարեղէններ: Բայց, այս արտադրութիւնները տեղ-
ւոյն վրայ միայն կ'սպառին, եւ վաճառումի նիւթ չեն կրնար ըլ-
լալ: Միայն բալն է որ մինչեւ Տիգրանակերտի շուկան կը հասնի,
երբեմն ալ՝ թութը: Մշակութիւնը թոյլ, անբաւական է. ընդհա-
կառակն ժողովուրդը չարքաշ աշխատասէր ու համբերատար է:

Ըսի թէ՛ արտածութիւն չունի, բայց ընդհակառակն կը նե-
րածէ մսացու կենդանիներ՝ այծ, ոչխար, ուլ. նաեւ՝ կամ, աղ եր-
բեմն ցորեն, կերպասեղէն, երկաթեղէն եւն:

Մշակելի դաշտերը երկու մասերու կը վերածուին, ջրարբի
եւ անջրդի արտերու: Այս վերջինները, որոնք միայն անձրեւներով
կ'ոռոգուին կը կազմեն աւելի ընդարձակ տարածութիւն մը, բաղ-
դատմամբ ջրարբի գետիններուն: Լեռներուն ընդերքը սակայն ան-
բապառ ջուր կը գտնուի. բնակչութիւնը կը բաւականանայ բնու-
թեան հայթայթած ջուրի հոսանքներովը կամ բխեցուցած աղբիւ-
րներովը:

Բ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ի՞նչ եղած են կառավարութեան դերն ու հեղինակութիւնը՝ Բալուի ընդհանուր բնակչութեան վրայ, ու մասնաւորապէս հայ գիւղացիներու համար: Առանց ո՛րեւէ նախապաշարումի, կամ կանխակալ կարծիքներու, կրնամ պատասխանել,— յոռեգոյն քան ո՛չինչ:

Սուլթաններու կայսրութեան շրջանին, կառավարութիւն կոչւած մարմինը, Բալուի մէջ, անգիտակից մեքենականութիւն մ'եղած է, բաղկացած ըլլալով տեղացի անուս, դաստիարակութիւն չտեսած եւ օրէնքներու անծանօթ պաշտօնեաներէ, որոնք կ'առաջնորդուէին դուրսէն դրկուած քանի մը պաշտօնեաներէ եւ կառավարիչէ մը: Ասոնք ալ սակայն յաճախ կ'ստիպուէին ենթարկուիլ իրենց ստորակարգեալ տեղացի պաշտօնեաներու քմահաճոյքներուն:

Իպրահիմ, Շիւքրի, Թէյֆուր եւ Տիւշտի պէյեր, գաւառակին իրական տէրերն ու կառավարիչները մնացին մինչեւ իսկ Օսմանեան Սահմանադրութեան մայրամուտի օրերուն:

Այս բռնակալները զինեալ հետեւորդներ կը պահէին. ուր որ երթային իրենք, ասոնք ալ իբրեւ հեծեալ զինուորներ իրենց կը հետեւէին: Կը հրամայէին կառավարութեան, եւ աս ալ առանց յապաղելու անոնց հրամանները կը կատարէր: Ոստիկանութիւնը պատկառանք ունէր անոնց հանդէպ, մինչ անսխալ կը գտնուէր յաճախ օրէնքի կիրառութեան մասին:

Կ'սպաննէին անխտիր իրենց հակառորդները կամ իրենց հրամաններուն դէմ անաստողները ըլլային անոնք հայ, քուրդ, թուրք կամ կառավարական պաշտօնեայ: Քուրդերը, խօսքը Բալուցի քուրդերուն մասին է, որոնք բնութեամբ խաղաղասէր են, անոնց ձեռքին տակ, ու անոնց թելադրութիւններով ու մղումներովը կը դառնային՝ գող, հարստահարող ու ոճրագործ: Հայ, քուրդ, թուրք գիւղացիները, հասարակ երկրագործ ժողովուրդը, կալուածատէրը, ունեւորը կը սարսափէին անոնցմէ, ու կը վախնային կառավարութեան իրենց ցաւերը յայտնելու, որովհետեւ գիտէին թէ կառավարութիւնն ալ իր կարգին անոնց ենթարկուած

էր, եւ ինքն ալ իր կարգին, այդ բռնակալներուն պակաս թողածը կը լրացնէր հարկերը ու տուրքերը անմարդավայել եղանակներով զանձելով:

Գաւառին ընդհանուր ապահովութիւնը այս բռնակալներուն ու անոնց հետ շփում ունեցող կարգ մը աւազակներու քմահաճոյքէն կախում ունեցած է. նամբաներու երթեւեկը միայն կառավարութեան ոստիկաններուն համար ապահով էր առանց յելուզակային արգելքներու:

Ասոնց դէմ բողոքելու, միամիտ յանդգնութիւնը կ'ունենար երբեմն, միայն հայ զիւղացին, ուղղակի կամ Ա.զգ. Պատրիարքարանի միջոցաւ. ամէնը ապարդիւն կամ անհետեւանք կ'անցնէ ինչ որ հորհիւ այն տխուր մտայնութեան, ըստ որում խտրականութիւն մը՝ ցեղային, եւ խտրականութիւն մը կրօնական, պետական մրտքի՝ ժողովուրդները վարելու դրութեան հիմն ու խարխուխը կը կազմէին:

Կառավարութեան որդեգրած այս մտայնութեան ազդեցութիւնը իր ծանր անդրադարձումն ունեցաւ հայրենակից ցեղերու փոխադարձ յարաբերութիւններուն վրայ: Նոյն խտրական եզրին անոնց մէջ յարաւեւեց ու փոխուեցաւ՝ ատելութիւններու, թշնամութեանց ու չեզոքացումներու: Անոնք կը վախնային իրարու մօտենալու, կը նողկային իրարմէ, եւ միշտ կասկածամտութեամբ կը նայէին իրարու: Յարաբերութենէ մեկուսացած՝ իւրաքանչիւրը ինք իր մէջ ամփոփուելու՝ եւ իր ազդակներով ինքն իրմով զարգանալու հարկին տակ դրուած էր:

Մեկուսացման այս դրութիւնը որ մեծապէս օգտակար կը դառնար աւազակապետներու շահագործութիւններուն, ու փոխադարձաբար ասոնցմէ՝ օրէօր աւելի կ'արժարժուէր ցեղերուն միջեւ, վերջին ժամանակները լայնօրէն շեշտուած էր Բալուի բնակչութեան մէջ: Վտանգաւոր դրութիւն մըն էր աս զոր կառավարութիւնը իբրեւ զէնք կը գործածէր՝ ցեղերը իրարու դէմ հանելով եւ զանոնք իրարմէ չեզոքացնելով:

Յեղերը դժբաղդութիւնն ունեցան ուրեմն իրարու չմօտենալու եւ տգիտութեամբ՝ հասարակաց ու պետութեան գաղափարին թշնամի եղողներուն միահեծան տիրապետութիւնը միշտ աւելի ամրացնելու: Այս կերպով՝ մշակութիւնն ու արհեստները շարունակեցին նախնական վիճակի մէջ մնալ, տուեալներն ու վաճառականութիւնը անդամալուծուեցան, արտադրութեանց քանակը՝ ո՛չ որ հետամտութիւնն ունեցաւ՝ արտածութեան նիւթ դարձրնելու աստիճան աւելցնելու, եւ աշխատութիւնները աւելի հարստաբեր դարձնելու, քանի որ ո՛չ ինչքի ու կեանքի ապահովու-

թիւն կար, եւ ոչ ալ՝ փոխադրութեանց դիւրութիւն:

Տարակոյս չկայ թէ՛ եթէ իմաստուն կառավական վարչական ոգին լայնօրէն իրագործուէր՝ թուրք կառավարութեան շրջանակներէն ջնջուէին նախապաշարունակներն ու խտրականութիւնը. եւ անձեռնմխելի ապահովութիւն մը երաշխաւորուէր, անխտիր քաջալերու էին աշխատասէր ու ստեղծագործող բոլոր տարրերը ի՛նչ ցեղի ալ որ պատկանէին, այն ատեն այս շինարար ժողովուրդը տարբեր վիճակ պիտի ունենար:

Միւս կողմէն կառարավարութիւնը, աստիճանաւորումի տեսակէտով, գայմագամութիւն մ'ըլլալով, չէր կրնար ունենալ գոնէ կարող՝ լուսամիտ եւ ժողովրդային բարգաւաճման հոգածու պաշտօնեաներ. որոնք կարենային տեղացիներուն մտածելու կերպին, ու գործունէութեան ձգտումներուն վրայ բարերար փոփոխութիւններ առաջ բերել. Սուլթանութեան շրջանին կեդրոնական կառավարութիւնն ինքն իսկ այդպիսի պաշտօնեաններ շատ չունէր, եւ հետեւաբար ստիպուած էր Պոլսէն հոն զրկելու այնպիսի կառավարիչներ՝ որոնք՝ իրենց հանգամանքովը միայն կը տարբերէին տեղացիներէն, անոնք, ընդհանրապէս, կ'ըլլային նոյնքան սոգէտ ու նոյնքան նեղմիտ, եւ շուտով կ'ենթարկուէին տեղացի պաշտօնեաներու ազդեցութեան:

Բալուի հայ ժողովուրդը անմոռաց կը յիշէ կառավարիչ Ալի Իւլվի պէյի պաշտօնավարութիւնը. որ իր հանգամանքը արժեցուցած է անխտրական ոգիով եւ արդար դատողութեամբ, որքան որ այդ օրերուն հանգամանքները իրեն կը թոյլատրէին: Բալուցին, դժբաղդաբար, միակ այս պատուական կառավարիչին յիշատակն է որ կը պահէ, ինչպէս Սեբաստիա՝ իր Րէշիտ Աքիֆ փաշայինը:

Այս վիճակը, ուրեմն, որ յետադիմութեան ազբիւրը դարձած էր, պատճառը մնաց միանգամայն որ հայ գիւղացին՝ մինչեւ վերջ անվթար պահէ իր աւանդութիւնները, իր բարբառն ու սովորութիւնները, եւ զարգանայ միայն ինքնիրմով, իր կարելիութիւններով եւ իր սեփական ներքին ազդակներու մղումներովը:

ՅԵՂԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Քալուի բնակչութիւնը բազմացեղ ժողովուրդ մը չի կազմեր՝ ան կը բաղկանայ՝ Հայ, Թուրք եւ քուրդ ցեղերէ։

Քուրդերը մեծամասնութիւն կը կազմեն, իսկ Թուրքերը՝ թիւով աննշան փոքրամասնութիւն մը։ Քաղաքին Իսլամ բնակչութեան մեծ մասը, Զովիա արսւարձանը, Սէյտիլար եւ ուրիշ երկուերեք գիւղեր, կ'ամբողջացնեն ամբողջ թրքական հատուածը։ Հայերը կ'ամփոփուէին մեծ ու փոքր շուրջ 40 գիւղերու սէջ, բոլորովին անխառն, եւ բաժնուած երեք շրջաններու. Վերի գիւղեր, Վարի գիւղեր, Աւմուլուս կամ Հաբաւայի գիւղեր։

Վերի գիւղերու շրջանը մեծագոյնն է, եւ ընդհատուած չէ քրդական գիւղերէ։ Ասեր բազմութիւ գիւղերը կը գրաւեն քաղաքին հլւս. կուզմը, Սրեւմուտքէն Արեւելք երկարող դաշտ մը, ու այս դաշտը շրջապատող լեռներուն ստորոտները կամ կողերը։ Իսկ լեռները կը գրաւեն քուրդերը։

Այս ցեղերը կարելի է մէկ ակնարկով իրարմէ զանազանել՝ իրենց տարազէն։ Հայ գիւղացին ցոյց կուտայ շինարար ու չարքաշ ժողովուրդի մը շատ մը արտաքին յատկանիշերը, իր պարտէզները, այգիները, ծառաստանները, կալերը, կամարաւոր աղբիւրները, քարուկիր եկեղեցիները, աղօթիքները, սրբավայրերն ու վանքերը, իր բնակութիւնները ամէնն ալ ցոյց կուտան չացառիկ նաշակ հոգածութիւն, մաքրութիւն ու խաղաղասէր ծրգտումներու գերազանցութիւն չը։

Յոյժ բազմանդամ ընտանիքներու նահապետական կազմակերպութիւնը, եւ մեծածաւալ տուներէն ներս տիրող մաքրութիւնը, կարգն ու պատկառազգու ներդաշնակութիւնը, որ ինքնավար մեքենականութեան մը զմայլելի պատկերը կը ներկայացնէր, դրական փաստը կուտայ վստահութեան, համագործակցութեան, տիլապետելու եւ տիրապետուելու ազնուական բարոյականին, որ, տրուած պայմաններուն տակ՝ գոյութեան պահպանման անխորտակելի ոյժը դարձած է։

Հայ գիւղացին ինքնամփոփ ապրելու այս հարկին տակ թեր իր մէջ զարգանալու ազդակներ ալ ունեցած է, որոնք զերծ մնացած են օտար աւերիչ կամ փոխակերպող հակազդեցութիւններէ։

Այդ նպատակին ծառայած են՝ Եկեղեցի, Աւանդութիւններ, Աւելորդապաշտութիւններ, ուխտավայրեր, ուխտագնացութիւններ, պարբերական տօնակատարութիւններ, հանդիսութիւններ, պարեր, հաւաքական խրախճանութիւններ Բարեկենդանի, այգեկութներու հարսնիքներու եւ ուրիշ առիթներով, միշտ հայ գիւղացիին համար՝ ոգեւորութեան, զգացումներու կենդանութեան եւ ազնուական ձգտումներու վերանորոգիչ ու անսպառ աղբիւրներ եղած են: Ասոնց վրայ կ'աւելնայ, նաեւ, վերի գիւղերուն բնակչութեան, մայրաքաղաքին հետ, հեռաւոր անցեալէ մ'ի վեր ունեցած շփումը յարատեւ պանդխտութեան ձեւին տակ:

Պանդխտող հայ գիւղացին, Պոլսէն հայրենիք կը տանէր՝ դրամ, մշակութի սէր, ուսման հաճոյք եւ գեղեցկութեան ճաշակ: Բայց, ինչ տարօրինակօրէն հակասական երեւոյթ, ան կը խորշիք քաղքենի կեանքէն, սովորոյթներէն ու տարազէն, զանոնք գոհիկ եւ ստար կը գտնէր ու կ'արհամարհէր. իր սովորութիւնները, տարազը, կը նախընտրէր: Կ'արհամարհէր նոյնիսկ Պոլսական բարբառը, նոյնիսկ իր քաղաքին բարբառը: Եթէ մէկը, սովորական խօսակցութեան ընթացքին՝ «կուտեմ, կը գրեմ, կը տեսնեմ, ո՛չ...» ըսէր, փոխանակ՝ «կո՛ւտիմ, կը գրիմ, կը տեսնամ, չ'ը ...» ըսելու «հա՛, Իսթանպուլցի՛ ը էղեր...» ըսելով կը հեզնէին:

Սակայն խորապէս կ'ենթարկուէր Պոլսոյ մտաւորական շարժման, պատկառանք կը տածէր համբաւաւոր ուսուցիչներու հանդէպ, կը սիրէր վարժարանը եւ մասնաւորապէս Պոլսոյ Եկեղեցական երաժշտութիւնը. եւ ամէն ճիգ չէր խնայեր զաւառին մէջ նոր վարժարաններ ունենալու, եւ ունեցածները բարւոքելու:

Բալուի հայ գիւղերէն ոմանք, արդէն 1830 թուականներէն, իրեց վարժարաններն ունեցած են. 1850-1859 թուականներու Մելքոն Կիւրճեան (Հրանդ) իր նախնական ուսումը Հաճաւ գիւղի վարժարանը առած է:

Հայ գիւղացին ո՛չ կրնար թուրքերէն, եւ ոչ ալ քրդերէն խօսիլ, բացի լեռնաբնակ գիւղացիներէն, որոնք քուրդերէն չէին զանազանուեր եւ սահուն քրդերէն կրնային խօսիլ: Այրերէն քիչեր միայն կրնային կոշտ թուրքերէն մը խօսիլ: Իսկ կիներէն միայն տարէց տանտիկիներէն ոմանք: Քուրդ մը, ճամբորդութեան միջոցին, հայու մը տունը կը հանդիպի եւ տանտիկնոջ կը խնդրէ որ հրեն հաց մը տայ. այս վերջինը կը պատասխանէ, «քը՛րվա, քը՛րվա, աքմակ եօք, կէթ, սափաթտա պիր, կուտ վար, ա՛լ վարդաղբրիկսա թրջել էթ, դի՛ք գօտրնա, կե՛ր ու գնա...:» Կնքահայր, կնքահայր, հաց չկայ, սակառին մէջ կուտ մը կայ (տես բառարանը), գնա՛, ա՛ն, տար Վարդաղբրիկ (աղբիւրի մը անունը) թրջէ՛

գօտիիդ մէջ դիր, ուտելէն գնա...: Հայ ժողովուրդին մեծագոյն մասը թուրքերէն չէր գիտէր:

Ահա ցեղային յարաբերութեանց գլխաւոր միջոցը, լեզուն, որ բացարձակապէս կը պակսէր: Այս պայմաններուն մէջ ապրող կիներ, որ դատապարտուած էր իր գիւղի սահմաններուն մէջ ապրելու, միշտ աւանդութիւնները, սովորոյթները եւ լեզուն խստամբեր սրբութեամբ մը անվթար պահեց. ան մնաց վստահելի բառերանը՝ պտուղներու, ծաղիկներու, բոյսերու, միջատներու, թրոջուններու բազմատեսակ անունները արտայայտող զմայլելի բառերուն, որոնք մատենագրութեան մէջ կամ տարտամ իմաստով հետք մ'ունին, կամ բնաւ չունին:

Մեր հայրենակից քուրդերը, ինչպէս թուրքերը, ներքին ինքնագարգացման տեսակէտով, ալ աւելի դժբաղդ էին: Բազմաթիւ քուրդ գիւղերէն ոչ մէկը դպրոց ունէր: Անոնք կրօնական պաշտամունք չունէին ընդհանրապէս, բայց հայոց ուխտատեղերը կը յաճախէին եւ ունէին նոյն աւելորդապաշտութիւնները՝ նուիրական ժայռերու, ծառերու ու աղբիւրներու մասին:

Թուրքերը մէկ վարժարանի նմանող հաստատութիւն մը միայն ունէին քաղաքին մէջ, պետական հսկողութեամբ ու նիւթական մատակարարութեամբ կառավարուած: Ասոնք չունէին, գիւղերու մէջ ո՛չ մէկ մզկիթ: Չունէին տօներ, հանդիսութիւններ, կառավարութեան դերը, զանոնք առաջնորդելու գործին մէջ, միշտ ժխտական մնացած է: Ուստի ասոնք ոչ մէկ կերպով աչքառու դիրք մը ունեցած են, եւ մնացած են իմացական տեսակէտով շատ յետադէմ: Ասոնք հայ գիւղացիին հանդէպ, կը տածէին բացառիկ գնահատութիւններ, որպէս առաւելապէս օժտուածի, եւ եթէ անոր նկատմամբ չարագործութիւններու կը դիմէին, պարզապէս պատասխանատուն կառավարութիւնն էր, իսկ դրդողները, այն չարագործները, որոնց արդէն յիշատակութիւնն ըրի:

Ահա, այս պայմաններու մէջ ապրող հայ գիւղացին, իր շուրջը բարոյական ու քաղաքակրթիչ ոչ մէկ զօրաւոր ազդակ կը գտնէր, ընդհակառակն ինքն էր որ կը գտնուէր ընկերային բարձրագոյն աստիճանի մը վրայ, եւ իր այս վիճակն էր որ իր վրայ հրաւիրեց՝ նախանձ, հալածանք որ իր մէջ շեշտեց ազգային աւանդութեանց պահպանման անխորտակելի հակում մը եւ որ վերջապէս իր փնացումը վճռեց...:

ԲԱԼՈՒԻ ԲԱՐԲԱՌԸ

Քանի մը օտար, անծանօթ ու խժալուր բառեր հաւաքելով՝ իբրև զաւառի մը բարբառը՝ հանրութեան ներկայացնելը՝ անիմաստ ու աննպատակ աշխատութիւն մը կատարել պիտի համարուէր. ընդհակառակն, հարկ է, զայն ճանչնալ ամբողջութեամբ ու ծանօթացնել իր բոլոր ձեւերով, իր բոլոր նրբութիւններով՝ ընդհանուր լեզուին յարաբերմամբ՝ իր նմանութեանց ու աննմանութիւններու բոլոր այլազանութիւններովը. որքան ալ անոնք, մեզի, ծանօթ կամ աննշան թուին: Սյս կերպով է որ կարելի կ'ըլլայ գիտնալ թէ՛ ցեղին այս կամ այն զաւառական հատուածը իր բարբառով ի՛նչ համեմատութեամբ մաս կազմած է այն ոստանիկ ամբողջութեան, որ, մշակոյթի մէջ առաջաւոր զիրք մը զբաւած էր երէկ, եւ կամ, նոր լեզուին մէջ ընդելուզուելու համար, որքան արժէքաւոր տարրեր կը բովանդակէ:

Ի հարկէ, կարելի չէ ժխտել թէ՛ մեր հին մատենագրական լեզուն, մէկ քիւրեղացած մասն է միայն ժողովրդային լեզուին, եւ ո՛չ թէ ամբողջ լեզուն. իսկ զաւառական լեզուները կամ բարբառները, կը կազմէին ամբողջութիւն մը, աւելի ճշիւ, ու այսօր իսկ դեռ այդ ամբողջութենէն շատ մը գոհարներ կը հասցնեն մեզի, թէ եւ այլափոխեալ, կամ մերթ նոյնիսկ անխառն վիճակի մէջ: Գաւառացի ժողովուրդը, ուրեմն, եղած է այն անգիր մատեանը, որ զբաւորին առնթեր, կուտայ լեզուական ճոխ մթերք մը՝ բառերու, ոճերու, ասացուածներու, որոնք միւսին մէջ գոյութիւն չունին, եւ ունին սակայն գերազանց արժէք մը՝ իրենց կարծ, կոկ ու քաղցրալուր կերտուածքովը, իմաստի անուզգական ճոխութեամբը, հանգիստութիւններու կամ զուգորդութեանց անթերի պատկերացումներովն ու քերականական նրբին այլաձեւութիւններովը: Ասոնք ոչ միայն թանկագին են բանասիրութեան ու լեզուաբանութեան, այլ՝ նոյնքան արժէքաւոր գոհարներ՝ նոր լեզուին ճոխացման ու զեղեցկացումին համար: Ո՛ր հայագէտը պիտի չզմայլէր՝ ռն, կորի, բոթ, բուրակ, նազուկ, բանս, գոճ, սողնակ, կրունկ, գօթի, ցոլ, ցուլալ, սիլ, սլուրլսալ, բունբնալ, նոննկիլ եւ այլն բառերու զաւառական կիրառութեանց վրայ. եւ ո՛վ պիտի մերժէր՝ ոստանիկ լեզուին մէջ նախապատիւ տեղը ա-

սոնց վերապահելու ասոնց բոլոր հոմանիշներուն շարքին, եթէ սակայն գոյութիւն ունին այդ հոմանիշները: Ո՛վ պիտի կրնար մերժել կիրառութիւնը շաք, շուր, շթել, շարմայ, շարմայել, շողան, շոկանակ, լական եւ դեռ շատ մը բառերու՝ կենդանի լեզուին մէջ. զանոնք ենթադրապէս միայն օտար նկատելով: Արտաքին պայմաններէ բոլորովին մեկուսացած ժողովուրդի բարբառին այս բառերուն ապրումը, շատ սովորական ձեւով, ապացոյց է ի հարկէ թէ ասոնք, հին ժամանակներու մէջ հայացած կամ հայերէն բառեր եղած են. սխալ է ենթադրել թէ լական բառը՝ թուրքերէն լեյէն բառէն ծնած է, ընդհակառակն երկու պիտի ըլլար ըսել թէ «լեյէն»-ին մայրը լական բառն է, որ հայ է իր բոլոր միւս կիրառիկ արմատովն ու ածանցումներովը, ամէնն ալ սովորական դարձած Բալուի բարբառին մէջ. ինչպէս՝ լակ, լական, լկել, լկաման եւն:

Այս խոնարհ գնահատութիւններով, այն եզրակացութեան եկած եմ թէ՛ զաւառի մը բարբառը գրի առնելու պարագային, անհրաժեշտ է զայն առնել՝ իր ծանօթ ու անծանօթ վիճակներովը, առանց զանց ընելու անոր նշանախեցն իսկ, ունայնամտօրէն աննշան, անկարեւոր կամ անպէտ համարելով զայն: Այս նկատողութիւններով, ուշադրութեամբ հետեւեցայ բարբառին, եւ, հակառակ որ գրաւոր ոչինչ ունէի աչքի առջեւ, պարզապէս յիշողութեանս շնորհիւ, յաջողեցայ ի մի հաւաքել շուրջ 4000 բառեր, ոճեր, ասացուածներ ու առածներ, անցնող չորս տարիներու ընթացքին, եւ ասոնք կը ներկայացնեն այդ ափ մը ժողովուրդին խօսած լեզուին մեծագոյն կոտորակը:

Ասոնցմէ դուրս կը մնան դեռ բուսական, կենդանական, արհեստական, առարկայական անուններ ներկայացնող մերձաւորապէս չորս հարիւր բառեր, նաեւ վերջին ժամանակներու ընթացքին լեզուին վրայ աւելցուած թուրքերէն 2-300 եւ վերջապէս ընդհանուր լեզուին դեռ շատ մը բառերը, որոնք հնչումով ու նշանակութեամբ նոյն կիրառութիւնը կը պահեն: Այս կերպով, այս փոքրիկ գաւառը, բաղկացած շուրջ 40 մեծ ու փոքր գիւղերէ, մինչեւ վերջին ժամանակները տէրն ու աւանդապահը մնացած է, զմայելի բարբառի մը, որ վեց հազար բառերու, ոճերու, ասացուածներու պատկառելի ու պատկերալից մթերքի մը անմոռանալի զանձարանը եղած է:

Սա ալ յիշատակելի եղմարտութիւն մըն է թէ՛ մինչեւ 1870 թուականը, գոյութիւն ունեցող հայ գիւղերը, ինչպէս, սովորական պեղումներով երեւան եկող՝ պատեր, հիմեր, թոնիրներու, կարասիներու, ամաններու բեկորներ, շինութեանց քարեր, գործիքներ, եւ

դեռ, այդ թուականէն առդին, գլւղերէն դուրս գտնուող եկեղեցիներ, մէկէ աւելի ազօթատեղիներ ցոյց կուտան, թէ՛ այժմու բրնակչութեան հնգապատիկն ունեցած են առնուազն, ու կազմած են անթափանցելի հոծ բազմութիւն մը, որ մնացած է իբրեւ աւանդութեանց ու լեզուի անառիկ ամբուսութիւն մը:

Ուրիշ պարագայ մը: Բալուի բարբառը, հնչումի ու բառամթերքի մերձակցութիւններու, ինչպէս նաեւ իր քերականական ձեւերուն նմանութենէն դատելով, մաս կը կազմէ՝ այն մեծ հոգամասին վրայ ապրող հայ ցեղին հատուածներուն լեզուին, որ Խարբերդէն սկսելով կը տարածուի մինչեւ Կարին, իր մէջ բովանդակելով Ակը, Արաբկիր, Չարսանէազ, Քզի, Երզնկայ եւն, զաւառները, ու դեռ չեմ կրնար վեճապէս վերջակէտ դնել Կարնոյ սահմաններուն վրայ:

Հարաւայիներու կամ Աշմուշատի բարբառը, զոր երկու լեռնաբնակ գիւղեր միայն կը գործածեն, Սրին եւ Պաղին, թէեւ հրնչումով ու մասամբ միայն բառերու մթերքով կը միանայ զաւառաբարբառներու այն ճիւղին որ կը տարածուի դէպի արեւելք եւ կը հասնի Մուշ զաւառը, ասիկա սակայն չի կրնար ազդել հիւսիսայիներու բարբառին:

Բալուի բարբառը, ուրեմն, առաւելապէս հնչումի տեսակէտով, երկու գլխաւոր մասերու կը բաժնուի. Հիւսիսային կամ Աջափնեայ, եւ Հարաւային, Չախափնեայ կամ Աշմուշատի ճիւղը: Արածանիի աջ ափը գտնուող գիւղերէն մեծ մասը, բարբառի տեսակէտով ենթարկուած են հիւսիսային բարբառին. ասիկա տիրական ազդեցութիւն մը ունի միւսներուն վրայ, շնորհիւ վերի գիւղերու համեմատաբար բարձր մշակոյթին:

Քաղաքին բարբառը՝ իր հնչումովը, եւ իր բառամթերքովը երկուքին միջեւ որոշ դիրք մը կը գրաւէ: Առօրեայ շփման մէջ գտնուելով ան թուրք տարրին հետ, լեզուական տեսակէտով, իր աւանդապահութենէն բան մը կորուսած է. այսպէս, առեւտուրի, վաճառականութեան մէջ ան ներմուծած է շատ մը օտար, մասնաւորապէս թուրքերէնի տարրեր, պաշտօնական ասութիւններ, դատական, օրինական ու վարչական բառեր, առանց շատ բան կորսնցնելու սակայն իր բնատուրիկ բարբառէն, որովհետեւ ան ենթարկուած է նաեւ Վերի Գիւղերու հայ բնակչութեան իմացական ազդեցութիւններուն:

Քուրդերը կը խօսին քրդերէն մը որ հայերէնին հետ ունի որոշ հանգիստութիւններ: Դիտելի է որ ան իր բարբառը կ'ամբողջացնէ հայ գիւղացիներու բարբառէն փոխառեալ բառերով. ինչպէս՝ կոտ=քէոտ, ծլիկ=զլիկ, այս քրդացած ձեւը դարձեալ հայ

բարբառին անցած է իմաստի թեթեւ փոփոխութեամբ մը . բուլ-
պայ=բիւլպայ, ցուիք=սուիք, կամ = կեամ, բմպիկ, ցաք = սաք,
գում=բէօմ, ման, բոթ=բէօթ, սիլիկոն=սիլիկէօն, բաղարջ=փեա-
ղարջ եւն, որոնց շարքը շատ երկար է: Իսկ հայ բարբառին տը-
ւած են՝ սրուուն, հրպրք, գըչէ կամ գեաչէ (այս վերջին հնչումը
բրդական է, առաջինը հայացած), կումայ, բրրվայ եւ ուրիշ բանի
մը բառեր, այնպէս որ բրդերէնը գրեթէ զանցառելի ազդեցութիւն
մը ունեցած է հայ բարբառին վրայ:

Թուրքերը կը խօսին թուրքերէն մը, որուն հնչումը մեծա-
պէս կը տարբերի պելասկան նուրբ հնչումէն: Աս ալ հայերէնի
վրայ ազդած չէ ուղղակի:

Բալուի հայ բարբառը սոյն գործիս մէջ ամփոփելու պարա-
զային հետեւեալ նկատողութիւններէն առաջնորդուած եմ, ամ-
բողջական բարբառը ներկայացնելու դիտաւորութեամբ.

Ա.— Առած եմ այն բառերը, որոնք մատենագրական լեզ-
ուին մէջ արդէն գոյութիւն ունին, բայց գաւառին մէջ, տարբեր
իմաստով կամ տարբեր առումներով ալ գործածուած են՝ ինչպէս՝
մուրն, ալք, գոց, գորտ, ծեծ, ձող, փռշի, երդիք եւ այնպիսի բա-
յեր ալ որոնց սեռը փոխուելով տարբեր իմաստով կը գործած-
ուին, ինչպէս զարնել (չէզոք բայ) = մէկուն հարուած մը տալ, մէ'կ
անգամ զարնել մէկուն, զարնել (ներգ. բայ) = սպաննել: Օրինակ
Յակոբին զարկաւ = Յակոբին հարուած մը տուաւ: Յակոբը զար-
կին = Յակոբը սպաննեցին:

Բ.— Այն բառերը՝ որոնք մատենագրական կամ ընդհանուր
լեզուին հետ իրենց իմաստի նոյնութիւնը պահած են, բայց՝ հնչա-
կան կամ ուղղագրական աւելի կամ նուազ տարբերութիւններով
կիրարկուած են, ինչպէս՝ կաղրչնայ = կաղանչան, բարս = բարծր,
աղբիր = աղբիւր, ալիր = ալիւր, մնեիկ = մժղուկ, խոլ = խոյլ եւն:

Գ.— Այն բառերը, որոնք բառագրքերու մէջ գոյութիւն ու-
նին թէեւ, բայց, իմաստի ու կիրառութեան տեսակէտով աւելի
կամ նուազ բացատրութիւններու կը կարօտին: Այս կարգի բա-
ռեր են, օրինակի համար, սամի, ներքնակ, կռան, կորի, կաւառ,
կեմ եւն, գիւղացին ասոնց գործածութեան համար, շատ որոշ
տեղեր սահմանած է. ինչպէս կեմ բառը հասարակօրէն կապ բա-
ռին տեղ չի գործածեր, ու՝ փոխադարձաբար:

Դ.— Գրական լեզուին բոլորովին անծանօթ բառերը, որոնք
Բալուի բարբառին մէջ սովորական ու անփոխանակելի են. ինչ-
պէս՝ սիլիկոն = ջրամբարի յատակին վրայ թողուած անցք, ատրը-
պաս, խեէն, խուլինհակ, սալմին, ռատամ եւն:

Ե.— Այն բառերը որոնք թուրքերէնի դրոշմ ունին, բայց

վաղնջական գործածութիւն մը բունին բարբառին մէջ. ինչպէս՝ գռռ, չաթ, չաթմայ, չաթմայել, որոնցմէ առաջինը՝ պարսկերէն է, իսկ երկրորդը՝ սեմական ըլլալ կը թուի:

Զ. — Այն պարզ, բարդ, ածանց, բնածայն ու կրկնածայն բառերը, զորոնք, մեծ մասամբ, գիւղացին ինք կերտած է եւ որոնցմով կ'ապացուցուի թէ՛ իր ստեղծագործող միտքը դարերու ընթացքին օտար ազդեցութիւններէ անկախ ապրած է՝ լեզուի տեսակէտով: Ինչպէս՝ հոսել, հարել, ցարել, հոսելի, երկումասնի, քարկեզուր, սուսու, վզուկ, պսալիք, պատիհոն եւն:

Է. — Զանց ըրած չեմ նաեւ տեղական յատուկ անուններէն մաս մը, իբրեւ նմոյշ, որոնք, կառավարական արձանագրութիւններով ալ յաւերժացած են. ինչպէս՝ Ակնիկ = ջրառատ հախճախուտ տեղեր, Օձիկ, Օձկընի, Լարեր, Բարակլար Քոսաղբիր, Խոռոչնի, Վարդաղբրիկ, Զութքար, Աւզընոց, Շամիրան, Սիզուտնի:

Ը. — Այս աշխատութեան մէջ կը պակսին թուրքերէն շուրջ 2-300 բառեր, որոնք վերջին ժամանակներու ընթացքին՝ բարբառին մէջ տեղափոխել փորձած են, պանդխտութենէ դարձող այրեր, բայց տեղւոյն վրայ ժողովուրդը միշտ անոնց հումանիշները գործածած է, ինչպէս նաեւ դուրս կը մնան պաշտօնական բառեր, որոնք այսպէս կամ այնպէս տեղաւորուած են բարբառին մէջ: Առաջին կարգին օրինակներ են՝ տասթարա = սղոց, քեասար = ուրագ, տօլապ = պատիհոն. զանց առնուած են նաեւ այնպիսիներ ալ, որոնցմէ շատերուն գաւառական հումանիշները մոռցուած են. ինչպէս՝ հարիմ = բժիշկ, պառպառ = սափրիչ, խավորմայ = խարկուած միս, խախայ = ագռաւ եւն: Եւ այս՝ պարզապէս տրպագրական ծախքերը կրճատելու նպատակաւ է որ ըրած եմ:

Թ. — Կը պակսին ընդհանուր լեզուին ծանօթ բառերը, որոնք նոյնութեամբ գործածուած են սովորական յարաբերութեանց պաշտօնական ու անհատական թղթակցութեանց, ժողովներու, որոշումներու մէջ, ասոնք ալ կը կազմեն ստուար թիւ մը. ինչպէս՝ ախոռ, քար, ծառ, ուտել, պառկիլ, խմել, նստիլ եւն:

Ժ. — Չեմ մոռցած մատնանշելու նաեւ, իրենց կարգին, այն կիրառութիւնները, որոնք կը տարբերին Վերի Գիւղերու եւ Աշմուշատի կամ Զախափնեայ բարբառներուն մէջ, եւ կամ՝ մէկուն կամ միւսին յատուկ են. ինչպէս տամր = տարմ, հրալք եւն:

Բալուի հայ բարբառին ու սովորութիւններուն առընթեր պէտք էր որ նոյն մանրամասնութեամբ գրի առնուէին նաեւ Վերի Գիւղերու շրջանը ամբողջացնող քուրդերու բարբառն ու սովորութիւնները: Ասիկա անշուշտ շահեկան պիտի ըլլար, երեւան հանելու թէ ասոնք հեռաւոր արեւակցութիւն մը ունեցած

են հայ ց'ղին հետ, բայց ներքին ու արտաքին պայմաններու բերումով յաջողած չեն իրենց արեւակցական բոլոր յատկանիշները պահելու:

* * *

Այս աշխատութիւնը, իր ամբողջութեան մէջ, երկու մասերէ կը բաղկանայ, առաջինը կը բովանդակէ՝ սովորութիւնները, երկրորդը՝ բարբառը: Երկու մասերը յաճախ իրար կը լրացնեն. սովորութիւններն ու զբաղումները որոշապէս կը լուսաբանեն բառերու իմաստն ու կիրառութիւնը, եւ բառ մը, մերթ լայնօրէն բացատրուելով, զբաղման մը կամ սովորութեան մը ծանօթութիւնները կը լրացնէ:

Գործը ալ աւելի հասկնալի դարձնելու համար տուած են պատկերներ ալ՝ գործիքներու, առարկաներու, բոյսերու, ամաններու, գուլպայի զարդերու եւն, որոնք ամէն տարակ-յս կը ջնջեն անոնց ցոյց տուած անուններու բացատրութեան մասին:

Հոգ տարած են ճշդելու հնչական ուղղագրութիւնը, եւ այս ճշդումները կարելի է ըսել թէ անվիճելի կը մնան. գրած են այնպէս ինչպէս գիւղացին հնչած է: Ասիկա կարելի եղած է շնորհիւ անոր ծանր արտասանութեան, որով իւրաքանչիւր բաղաձայնի յարաբերական արժէքը երեւան եկած է. ուր որ լսողութիւնը դժուարութիւն ունեցած է այդ ճշդումը վճռելու, դիմած են նոյն բառին ածանցումներուն, ու այս կերպով ճշդած են լսողական արժէքը. օրինակ, Վարդենի՞ք թէ՛ Վարդենիկ, դժուար է զանազանել, բայց անոր սեռական հոլովին դիմելով = Վարդենկայ, որոշապէս լսելի կ'ըլլայ «կ» տառին հնչումը:

Բառարանին մէջ «Ը» տառին գործածութեան անսովոր յաճախութիւն մը կը տեսնուի. ասիկա անհրաժեշտ էր երկու պատճառներով. նախ յաճախ ան իբրեւ ամբողջական ծայնաւոր մը կ'արտաբերուի, ու ամբողջ վանկ կը կազմէ. երկրորդ, կրկնածայն բառերու արտաբերութեան մէջ առաջ գալիք շփոթութիւնը ջնջելու համար գրած են ը տառը, որ պիտի կրնար, ըստ ոմանց չգրուիլ, մասնաւորապէս գրական լեզուին մէջ ծանօթ նմանատիպ բառերու կանոնին հետեւողութեամբ մը:

Բառերու ռեբրու հաւաքման ու անոնց իմաստներու ճշդումի աշխատութիւններուն մէջ, ինծի մեծապէս օգտակար եղաւ հայրենակիցս Պ. Ս. Գոլոյեան, որ նոյնպէս գաւառական երգերն ու պարերգները հայկական եւ եւրոպական ծայնագրութիւններով գրի առաւ այս գրքին համար, իմ երգեցողութեանս համաձայն:

Գիրքը կը պարունակէ նաեւ Բալուի մէկ քարտէսը, ուր գլխաւոր հայ գիւղերը նշանակուած են, ճշդուած դիրքերով ու հե-

սաւորութիւններով: Այս աշխատութիւնը սիրայօժար կատարեց Պ. Մարտիրոս Պալայեան, տրուած ուրուագծի մը համաձայն:

Ընելով այսքանը, անխառն գոհունակութիւնը կը վայելեմ մտածելով որ մեռնող ժողովուրդի մը մասունքները հաւաքելու, համադրելու եւ յաւերժացնելու պարտականութիւն մը կատարած եղայ՝ տրուած միջոցներէն միշտ աւելի սրտանց միշտ աւելին օգտագործելով:

Իսկ այն որ կը պակսի իբրեւ նիւթ, որ թերի է իբրեւ դասաւորութիւն, կը թողում զայն իբրեւ շարունակելի աշխատութիւն մը Բ. տպագրութեան առիթին, եթէ Աստուծոյ կամքը տնօրինէ, իսկ հակառակ պարագային՝ ուրիշ հայրենակիցներու իբրեւ նուիրական հրիտակ մը:


Յ. ՔԶՅ. ՍՍՐԳԻՍԵԱՆ

(Ալեւոբ)

ԲԱԼՈՒԻ ՍՈՎՈՐՈՅԹՆԵՐԸ

Ա. ԳԼՈՒԽ

ՆՇԱՆՏՈՒՔ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ



Հին ժամանակներէ ի վեր, նահապետական արտադրութի մը համաձայն, գիւղացիներուն մէջ, ծնողքը կ'ընարէ իր հորանցուն կամ փեսացուն: Ամուսնութեան տարիքը, անոնց մէջ, քսանէն պակաս պէտք է ըլլայ մանչերուն համար, իսկ աղջիկներուն համար 14 կամ առ առուելն 15, տակէ առելին, աղջկան համար գովելի սովորութենէ դուրս է: Երբ ընտրութիւնը կատարուի ծնողաց կողմէ, մանչու աղջիկը առարկութիւն չեն կրնար ընել. հարկաւ՝ ծնողքները իրենց համար գէշ բան չեն կամենար իրենց ամուսնութեան ընտրութեան մէջ ըսելով կը համակերպին ամենայն հնազանդութեամբ: Երկու կողմերու ծնողաց հաւանութենէն ու վերջնական համաձայնութենէն յետոյ, խօսքիապը կը արուի, որ արժաթէ մատանի մըն է, կամ զոյգ մը օղ և կամ մահմուտիէ ոսկի մը: (Օսմանեան հին դարպասկի մը որուն արժէքը մերձաւորապէս օսմանեան արժաթ դրամով 60 դահեկան է): Պաշտօնական նշան օրհնել չեն տար քահանային խօսք կապի ատեն, այլ կը թողուն զայն հարուի օրհնութեան ժամանակ. բայց նշանաւորը նշանաւոր է, երկու կողմերն ալ աչքի լոյսի գացողները կ'ընդունին, զայն իբրեւ կատարուած իրողութիւն համարելով: Գիւղացիներուն օրուան խօսուելաւորի նիւթը կ'ըլլայ խօսկապը, «չտա լաւ ընտրութիւն մը, տղան ըլ աղջիկն ըլ յարմար էն: Աստուած խէրլի ընէ, շէն ըլլի, Աստուած թամամին հասցնէ» և այլն. մտղթանքներ կ'ընեն: Աղջիկը այլեւս իր համարձակութիւնը կը կորսնցնէ, ալ չի կրնար հոս ու հոն երթալ առանձին: Զգուշանք կ'ընէ ամէն մէկ քայլափոխին, նշանաւորն չհանդիպելու համար, կը տափի անկէ (պահուելով) նոյնպէս կը տափի կեսրայրէն, կեսուրէն և անոնց տունին բարտ անդամներէն: Ինչպէս որ տաքերը զսպած է ամէն տեղ չերթալու

հա՛մար, նոյնպէս ալ լեզուսն չի իօսիր անոնց աւջեւ. ման-
չուն կողմէն ուր որ երթալու ըլլայ ազջկան տունը, ինք ամենեւին
երեւան չ'երևիր, կը պահուըտի տունին մէկ անկիւնը, և երբ զինքը
ստիպեն, այն տանն երեսին վրայ քող մը առնելով՝ կ'երթայ ակա-
մայ, եկողներուն ձեռք պահներու արարողութիւնը կ'ընէ ծա՛նր, ծա՛նր
ծուելով: Ասիկա երկար կը տեւէ, և կը նկատուի համեստութեան և
պարկեշտութեան արտայայտութիւն. ըսի թէ աչքերն ալ կը դապէ. այ-
սինքն, չի նայիր վեր կամ դիմացը կամ կողմնակի այլ միշտ վար, գը-
լուխը կախ իբրև պայման ամօթ խածութեան: Երբ դաշտ կ'երթայ, կամ
պարտէզ, այգի, կալ և կամ աղբիւր՝ ջուր բերելու, այս երեւոյթը կ'առ-
նէ: Բայց աւանց տեսանելի ընելու չարածճի նայուածք մը կը նետէ դէ-
պի նշանածին տունը, հոն թերեւս տեսնելու համար նշանածը, փնտասուք
մը կ'ընէ կէս գոց, կէս բաց աչքի նայուածքով, կամ անոր տան դը-
րան աւջեւ, կամ չարտախին մէջ, կամ տանիքին մեծ բուխերիկին
ետին և կամ գէր ու խոշոր գոմէշները աղբիւրը լողցնելու տարած տանն
կ'ուզէ երեւնալ նշանածին և նշանածն ալ՝ իրեն, երբեմն ալ ազա-
տութիւնը կ'ուենայ այդ պարագային մեղմ ու ամօթ խած հող մը
ստեղծել կոկորդին մէջ նշանածին ուշադրութիւնը իրեն վրայ դարձը-
նելու. այս անկող հետապնդումները երկու կողմէն ալ կ'ըլլան եթէ
գիրենք լրտեսողներ չունենան, հակառակ այդ զգուշութիւններուն,
մերթ կը մտանուին և կ'ընդունին չախեր իրենց ծնողներէն, մա-
նաւանդ ազջիկը, այդ չախերէն գեանէ գետին կը մանէ:

Երբեմն նշանուած կը մնան տարիներ, տարին երկու մեծ
տաղաւարներուն երկու անգամ փայ (բաժին) կը տանին աղուն կող-
մէ ազջիկին տունը, հոն գացողներուն թիւը պարագային համեմատ,
կը հասնի քսանէն մինչեւ 40 հոգիի, տարուած փային գլխաւոր
նիւթը կը կաղմեն թոնիրին մէջ խորոված ոչխար մը, լայն
ու խոշոր տիպէի մը վրայ լաւ պատրաստուած անուշեղէն մը, ո-
րուն մէջտեղը մեծկակ նուս մը կամ խնձոր մը դրուած. սակէ վերջ
հարմնցուին արուելիք հագուստներուն ծրարը տօնական օրերը
հողներու համար. հագուստներն են զանազան գոյներով կերպաս-
ներ, թաշկինակ, սեւ մետաքսէ փուշիներ, մատանիներ, արծաթեայ
ապարանջաններ, և այլն, և այլն: Նոյնը կը կրկնուի յաջորդ տաղաւա-
րին, աղուն կողմէ գացող բոլոր հիւրերը հարմնցուին նուէրներ կու-
տան, իւրաքանչիւրը իր կարողութեան համեմատ, քսաննոց ոսկիէն
(օսմ. դազի) պահաս չկայ, անկէ վեր տուողներ շատ կ'ըլլան. բը-
նականաբար աղուն հայրն ու մայրը աւելի արժէքաւոր նուէրներով
կ'օժտեն իրենց տարագայ հարսը: Այս փայը կը կրկնուի տարին եր-
կու անգամ անոր համար որ հարմնցուն իրենց տունին մէկ անգամը
սեպելով, պարտաւոր են բաժին հանելու անոր. Վերջապէս հարմնի-

քին օրը կ'որոշուի աղջիկին հօրմէն վերջին խօսքը ստանելէն և անոր
ձեռքը իբրև պաշլըխ (գլխագին) 10-15 օսմ. սակի դնելէն յետոյ:

Հարսանիքին որոշումը տրուելուն պէս, կ'սկսին պատրաստութիւններ տեսնել. այդ առթիւ, բացառիկ ծախքի նախահաշիւը այդ տարուան պիւտճէին մէջ անցում է արդէն. պսակի արարողութենէն շաբաթ մը առաջ, եթէ ունեւոր են հարսանիքի աւերերը տուուլն ու զուռնան կ'ը բերեն, աւ կ'սկսին իրենց առանդական հաճելի եղասակները հնչեցնել, տալու համար աղգարար նշանը գիւղացիներուն թէ հարսանիքը սկսած է: Այ հո՛ն են գիւղին երիտասարդները, չափահաս կամ անչափահաս աղջիկները, մեծ, պղտիկ հոն են, ամենեւին ինչո՞ւ են եկեր ըսող չկայ, հարսանիք է որովհետեւ, ամօթ կ'ըլլայ իրենց համար եթէ մէկը սեւէ պարագայի տակ վշտանալով հեռանայ հարսնետունէն, զայն հարսնետուն բերելով կրկին, հազար ներողութիւն կը խնդրեն անկէ: Գիշեր ու ցերեկ տուուլին ու զուռնային ձայնը չի դադարիր. ամէն մէկ անգամին երկու կամ երեք աղջիկներ, կամ կիներ և կամ հարսներ կը պարեն տունց իրարու ձեռք բռնելու, ձեռքներին մէկ մէկ թաշկինակ բռնած կը խաղան վարժ ու ճկուն շարժումներով: Նոյնը՝ հարսին տունը, բայց ոչ ամէն օր, այլ միայն վերջին իրիկունն ու առաւօտը: Այդ իրիկունը հարսը հագցնելու, իր երեսին քողը ձգելու և ձեռքերը հինայելու կ'երթան տուուլով ու զուռնայով, այդ միջոցին, ամենէն յուզիչ և արցունք խլող եղանակները կը նուագուին զուռնածիին վարժ մասներուն տակ. ան կը լացնէ հարսն ալ, անոր ծնողքն ալ և աղգակուններն ալ: Յետոյ հարսին թեւերէն բռնած ոտքի կը հանեն զայն, ըստ սովորութեան որպէս զի պարէ, վերջապէս, այդ հարկադրանքին տակ թէ կուլայ, թէ կը պարէ հարսնետորնելուն նէնիներուն և ծափերուն միջեւ, վերջը կարգը կը տրուի զուռնածիին, որուն փչելու եռանդը կ'ելէ քարտկանանայ այդ պահուն, կարծես թէ մեռելներուն անգամ պարել կուտայ, ինչպէս կ'ըսեն գիւղացիները: Հարսը հագցնելէն վերջը, կը վերադառնան փեսին տունը, ուր փեսա-մանուկները կեցած իրենց կ'ըսպասեն, որպէսզի փեսան հագցնեն, նախ զայն զայջ ջուրով կը լողցնեն, ու յետոյ ձերմակեղէնները հագցնելով, անոր թեւերէն բռնած կը բերեն զինքը հոն, ուր քահանան և հարսնետորները նըստած են, արդէն առաջուրնէ հալաւը օրհնուած ըլլալով զգեստները իրարու վրայ կարգով սեղանի մը վրայ քահանային առջեւ են: Փեսան և փեսա մանուկները ոտքի կը կենան որպէսզի զայն զգեստաւորեն օրհնուած հագուստներով: Քահանան, լուսարարը, կամ վարժապետը «Սորհուրդ խորին»ով կ'սկսին, առաջին տունը միայն կ'երգեն, վերջը հագցուելիք հագուստներէն հատ հատ կ'առնեն կը գովեն եղանակներով ու կուտան փեսայ մանուկներուն, որոնք իրենց կարգին հագուստ ին

Երեսուցի տաղով կը գովեն այսպէս:

Ըսե՛ք ճնաճոր, վայլե՛ ճնաճոր,
Ըս մեր քաղաքին ելակ (բաճկոն) ճնաճոր:
Ըսե՛ք ճնաճոր, հագնի՛ ճնաճոր,
Ըս մեր քաղաքին շորսայ ճնաճոր:

Ծափաւոր յորդոր

3/8

Ըսե՛ք շա
վայ ԼԵ
Ըս մեր քաղ
Ըս մեր քաղ
Ըս մեր քաղ
Ըս մեր քաղ

Allegro Moderato

Ըսե՛ք շա
վայ ԼԵ
Ըս մեր քաղ
Ըս մեր քաղ

Ըսե՛ք ճնաճոր, վայլե՛ ճնաճոր,
Ըս մեր քաղաքին բուսպայ (տափառ) ճնաճոր:
Ըսե՛ք ճնաճոր, հագնի՛ ճնաճոր,
Ըս մեր քաղաքին գօթի ճնաճոր: Եւն.

Ե այսպէս կը շարունակուի մինչեւ փետին գուլպաներու, կօշիկներու հագնիլը: Փետան հագուստներով զարդարուելէն յետոյ սիւնի մը կը թնայ կը կենաց ոտքի, կնքահայրը փետոյ մանուկներու հետ, նոյն աստիճան մը կը բերէ (գոր նախապէս պատրաստած կ'ըլլան) մէկ ու կէս մէթը բարձրութեամբ, որուն գագաթը եօթը ճիւղեր պիտի ունենայ ճկոյթի մը շափ հաստ: Ատոնց վրայ կը շարեն խնձորներ, սանձեր, չամիչի շարոցներ, ու յետոյ ճիւղերուն բոլոր ծայրերը միացնելով վրան կ'անցնեն մեծկակ նուա մը զարդարուած մապուէններով, բամպակէ ոլորուած ճերմակ պատրոյզներով, այս ծառը սրպէս թէ փե-

սին ու հարսին սպառազ բարգաւաճումը կը խորհրդանշէ, ինչպէս սր
այդ պահուն, նոյնիմաստ երգով ծառը կը գովեն այսպէս.

Էրթամ բերիմ գոգ մը կախաւ,
որ գայ գովը ծառնը ծաղկեր:
Հարս ու փեսան ծառ սնկեցին,
Եկե՛ք գովին՛ք ծառն ը ծաղկեր:

11/8 Զափ. յորդ.

էր թամ բե թի մ՝ զո գ մը կա փաւ
որ գայ գոզը ծառնը ծաղկեր:

Allegro Moderato

էր թամ բե թի մ՝ զո գ մը կա փաւ
որ գայ ին ՎԸ Զառ նը Զաղ կեր

Եւ շն. յետոյ կ'սկսին փեսան գովել, դարձեալ եղանակներով, այսպէս.

Թագւոր ի՛նչ բերիմ է ու նման,
է ու կանանչ աքելուդ նման.
Թե որ բերիմ կարմիր վարդեր,
չեն նմանի՞ր թուշիդ կարմիր,
Թե որ բերիմ ջորի ու ձի.
չեն նմանի՞ր պոյիդ երկան.
Թե որ բերիմ հարս մը աղկէկ (տղուոր)
ան պիտ նմանի արսիդ թագւոր:

ու երբ այս գովանքի տրարողութիւնները կը վերջանան, հա-
լաւին հետ միասին, օրհնուած թուրը կուտան փեսին իբրեւ թա-
գաւորի որ անով պաշտպանէ իր թագուհին պատիւը, յետոյ մետաքս-
եայ թաշկինակի մը մէջ ծրարուած կարմիր, հոտուէտ խնձոր
մըն ալ կուտան փեսին իբրեւ օրդեճուութեան նշանակ, ասոր հետ կը
տրուի նաև Աւետարան մը, երբ փեսան կարգով գրել գիտէ, երբ պատ-

կուռելու կ'երթայ, պատկէն վերջ, Աւետարանը կ'առնեն անկէ, բայց թաշկինակով խնձորը՝ ո՛չ. զայն քիթէն չպիտի հեռացնէ, մինչեւ հարանիքին աւարտումը:

Նոյն ատեն՝ պարագլուխներէն մէկը որ աւելի փորձառութիւն ունի, իր բոլոր ուժովը կը պոռայ.

— Փեսայ մանկախ՝ ք...

— Հրամեցէ՛ք.

— Ըսէ՛ք. «Թուրը կտրո՞ւկ թագաւորի՞ն»:

Նոյնը կ'ըսեն փեսայ մանուկները:

— Ասողը պայծա՛ւ թագաւորի՞ն, բողոքը բանո՞ւկ թագաւորի՞ն, շատ տարիներ թագաւորի՞ն, շնա՛ֆոր, հա՛, շնա՛ֆոր..., կը կրկնեն ա-մէնքն ալ մէկ բերան:

Ընդհանրապէս, շատ մը գիւղերու մէջ, հարանիքներու նախօր-եակը կը կատարուի կիրակի իրիկուն, թէ փեսին և թէ հարսին տուներուն մէջ, հագցնելով անոնց պսակի հագուստները: Երկու կողմն ալ, մանաւանդ փեսին կողմը, մեծ ու պզտիկ, առանց քնանա-լու, խողալով, պարելով, կերուխումով կը զուարճանան մինչեւ առտու:

Արշալոյսէն քիչ վերջ, արդէն պատրաստած են փեսին ու հարսին ձիերը անոնց դռներուն առջեւ, զանոնք եկեղեցի տանելու համար: Ձիերով պսակի տանիլը՝ սակայն, ամէն սեղերու համար չէ, այլ գիւղերուն համար որոնց եկեղեցիները գիւղէն դուրս կը գտ-նուին շատ հին դարերէ ի վեր. անշուշտ նախապէս գիւղը բազմա-մարդ եղած է և տարածուած եկեղեցիին շուրջը, յետոյ հալածանք-ներու կամ ամառասական այլ պատճառներով ան կոտորակուած է, և եկեղեցիին շուրջը գանուող տուները քանդուած են այս կերպով ան գիւղէն հեռու մնացած է:

Նախ հարսը առնելու կ'երթան տաւուրով ու զուռնայով: Հարսին փոքր եղբայրներէն մին (հարսնաղբարը) նախապէս ձին կը հեծցնեն: Իբրեւ թէ ան շուղեր որ իր տունէն բաժնուի: Բայց յե-տոյ անոր նուէր տալով կը հաւանեցնեն ու ձիէն վար առնելէ վերջ, հարսը կը հեծցնեն: Այդ ատեն գիւղին բնակիչներու մեծ մասը դուրս կը թափուի, տանիքներու ցուիքներուն վրայ, փեսին ու հարսին անց-քը դիտելու համար: Փեսան առջեւէն, հարսը անոր ետեւն կը տար-ուին եկեղեցի: Հոն, դրան առջեւը, վար կ'առնեն զանոնք ձիերէն ու կը տանին սեղանին առջև ուր քահանան կ'սպասէ իրենց, կատա-րելու համար պսակի Ս. խուրհուրդը:

Պսակի ձեւը նոյնն է ամէն տեղ: Փեսային բռնած թուրը կնքա-հայրը կ'առնէ, խաչին հետ միասին կը դնէ փեսին և հարսին միա-ցած գլուխներուն վրայ. աս ալ շատ խորհրդաւոր իմաստ մ'ունի իր մէջ... մեկնութիւնը ընթերցողին կը թողում:

Պատկը կոտորուելէն յետոյ, նորէն հեծած, կաւգան հարան ու փե-
սան դէպի փեսին տունը: Տաւուլն ու զուռնան լեռ ու ձոր կը թնդաց-
նեն իրենց բամբ ու հնչեղ ձայներով, բայց այս անգամ ոչ թէ յուզիչ ու
սխառը եղանակներ կը հնչեցնեն, այլ յաղթական բանակի մը քայլեր-
գը կարծես: Այդ միջոցին վարժ ու փորձ վահան խաղացողները կը
խաղան այդ հին, բայց դիւցազնական հետաքրքրաշարժ խաղը:


Տղուն ծնողքը, մանուսնդ մայրը կ'սպասէ փեսան ու հարսը
ընդունելու համար, սան դրան տաջեւ, ուր անոնք վար կ'առնուին
ձիերէն: Փեսին ծնողքը անոնց ձակասները համբուրելէն վերջը,
զասնուէ մը կամ ուլ մը փեսին բոլորաթիքը դարձնելով կը մորթեն
զայն դրան սեմին վրայ, որուն վրայ կոխելով պիտի անցնին հարան
ու փեսան ու երթան իրենց յատկացուած տեղը ոտքի վրայ կենալու:
Նստիլ չկայ երբեք, ժամերով ոտքի կը պահեն զանոնք իբր պատիժ. այն
խնայտով որ անգամ մըն ալ չ'ամուսնանան (վաղաժամ մահ չունենան):
Այդ օրը մինչեւ իրիկուն հարանիքին հանդիսաւորութեան էն գեղեցիկ
օրը կ'ըլլայ: Մինչեւ երեքշաբթի կէսօր հարանիքը կը տեւէ ամենէն տաք
խրախճանութիւններով՝ նոյն օրը, կէս օրուան ստեն պատկի նարօտը վար
կ'առնուին: Անկէ յետոյ փեսան անմիջապէս պարելու կը հանեն. կը պարէ
հարսին ներկայութեան և փոխադարձաբար՝ հարսը: Այդ պարերով վեր-
ջապէս հարանիքը կը փակուի. տաւուլն ու զուռնան այս անգամ թոյլ ու
կէս սրտով կը հնչեցնեն թափթփուկ եղանակներ, փեսան կնքահօրը
տունը փախցնելու համար, ուր պիտի մնայ մինչեւ ուրբաթ օրը,
այսինքն՝ չորս օր:

Փեսան ու կնքահայրը, փեսա մանուկներուն հետ միասին, հարանե-
տունէն դուրս կը հանուին և շխտակ կ'երթան կուլերը, ջրաղացներու
տուներէն կամ աղբիւրէն քարընկեցի մը չափ հեռու կը կենան, ուր-
կէ փեսան ու կնքահայրը կը վազեն արագութեամբ դէպի այն տունը,
զայն երկու մասի բաժնելու համար՝ փեսան իր թուրովը, իսկ
կնքահայրը՝ այդ թուրին պատեանովը, որպէս թաղաւոր և թիկնա-
պահ: Անկէ վերջը կ'երթան կնքահօր տունը և պղտիկ ուրախու-
թիւն մըն ալ հոն կ'ընեն հարանիքը կը վերջանայ:

Փեսան չորս օր կնքահօր տունը կը մնայ փեսայութեան հագուա-
ներով, կնքահօր հետ միասին այցելութիւններ կուտայ իր և կնքա-
հօր ազգականներուն և բարեկամներուն, միշտ կերուխումով զուար-
ճանալով, երբ անոնց մեկնելու պահը կուգայ զիրենք պատուասի-
րող տուներէն, ստոնց տանափիկիները փեսին գլուխը կը զարդարեն
բամպակէ ձերմակ պատրոյզներով, այնպէս որ ան նոր ծաղկած նը-
չենի մը երեւոյթը կ'առնէ (*): Ուրբաթ իրիկուն միջնադին,

(*) Այս սովորութիւնը յատկ է միայն ազափնեայ կամ հարա-
ւային գիւղերուն:

ուր այլևս ամէն ոք իր տունը կը քաշուի, ու դուրսը մարդ մարդասանք չի տեսնուիր, կնքածայրը փեսան տունելով կը ասնի փեսին տունը, ուր տրդէն պարտաստութիւն տեսնուած կ'ապասնն անոնց: Փեսին ծնողքը, տանը բոլոր անդամները փեսին ու կնքածօր հետ կ'ուրախանան, կը զուարճանան ուտելով ու խմելով: Ամէնքը ցնծութեան մէջն են այդ իրիկուն, միայն նոր հարսը մէջտեղը չկայ, երեւան չ'ելլեր ան այդ միջոցին, անկիւն մը կ'ծկաւած է. կ'ապասէ այդ խրախճանութեան վերջանալուն...: Արդէն այդ իրիկուն կնքածայրը փափկանկատօրէն շատ չի նստիր հոն. շուտ կը մեկնի փեսին տունէն: Հարսանիքը վերջացած է:



Բ. ԳՆՈՒՆ

Ծ Ն Ն Դ Ա Բ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բալուի գիւղացիները բազմածին են. կին մը կրնայ ունենալ տեղի քան տասներկու զուտկներ. բայց սճումը ծնունդներուն հետ երկու առ երեք համեմատութիւն ունի, այսինքն երեք ծնունդներու վրայ, միջին հաշուով երկուքը կրնան ապրիլ, բնական պայմաններու մէջ: Հակառակ օղին ու ջուրին մաքրութեան, կեանքի աեւողութիւնը 60-80 է ընդհանրապէս, հազուադիւս բացառութիւններ են 85-90 տարի ապրողներ: Ես, իբր իրողութիւն տեսած եմ միայն երկու անձեր, որոնք 125-130 տարի ապրած են. ասոնցմէ մէկը եէնիչէրիներու բանակներուն մէջ ծառայած է և անոնց ջնջումէն ճողոպրած իր գիւղը, Ձէթ ապաստանած ու մեր օրերուն հոն մեւած է: Ջերմի հիւանդութիւնը, գլխաւորապէս, կը թուի թէ երկարակեցութեան հակադրած է:

Կինը յղութեան ամբողջ շրջանին, իր դաշտի կամ տան աշխատութիւնը չ'ընդհատեր, վիժումի վտանգներ երկիւղ չեն պատճառեր բնաւ: Հիւանդանոց, բժիշկ, վկայեալ մանկաբարձներ գոյութիւն չունին: Բայց կան փորձառու և հասուն տարիք ունեցող կիներ, որոնք դայեկութիւն (մանկաբարձութիւն) կ'ընեն: Դայեկը՝ երկունքի ցուերը սկսելուն պէս, հիւանդին քով կ'ապասէ: Ո՛չ միայն կը քաջակրէ գոյն անոր սուր խիթերուն միջոցին, այլ գոյն յարմարագոյն գիրքերով կը տեղաւորէ, ծննդաբերութիւնը գիւրացնելու համար, այս ամէնը կը կատարէ մեծ զգուշութիւններով և կատարեալ յաջո-

զուժեամբք Երբ մանուկը աշխարհ կուգայ, դայեկը մկրտառով անոր պորտին լարը կը կտրէ իբր վերջին կապը մայրական արգանդին հետ, և բուսական երկար մաս մը այդ լարէն դեռ մանուկին պորտէն կախուած կը մնայ: Այս ալ թելով կը կապէ փորին մօտէն և քունի մ'օր այսպէս կապուած մնալով ինքնին կը կտրի: Այդ կտրուած մասը, դայեկակը սան մէկ անկուշը կը թաղէ, որպէս զի մանուկը, իր կեանքի ամբողջ սեռողութեան միջոցին սանք հետ կապուած մնայ:

Երկուքէն աղտակէն քանի մը ժամ յետոյ, աղացկան կնոջ (ծընոյ) մեզրի և կտրագի խաւնուրդ կը կերցնեն առանց հացի, և թէ մեզր չգանուի, ուսպ և կտրագ կը խտանեն իրարու հետ, կը կերցնեն նաև արգար իւզով (այլէն զտառուած կտրագ) տապկուած հուկիթ, սա է անոր կերակուրը մինչև վեց օր: Ասկէ վերջն է որ կ'սկսին զայն հաց ուտելու արածունել: Այս վեց օրերու ընթացքին առտա կաթ կը խմցնեն, առանց շաքարի, և պոպ ջուր տալէ խիստ զգոյշ կ'ըլլան: Եթէ խիթեր ունենայ, կը խմցնեն, նոյնիակ ջուրի տեղ ալ, անխոսի, լուինճի և մայրամ խոտի (սաստիկ լեզի բոյս մը) դաղջ արգանակներ:

Երկուքը ընդհանրապէս երկար չի տեւեր, մէկ երկու ժամէն արդէն վերջ կը գանէ, սակէ կը հետեւի թէ գիւղացի կինը մանուաւորապէս դժուարածին չէ, երկու երեք օր միայն անկողնի մէջ հանգիստ կ'ընէ, երեք օր յետոյ ան սաքի կ'ելնէ. ու կ'սկսի անական թեթեւ աշխատութիւններ կատարել. բայց քառասուն օր ոչ տունէ դուրս ելնելու է և ո՛չ ալ արև տեսնելու է: Երեխային լուացուած լաթերն ու շորերն իսկ շուքին մէջ կը չորցնեն: Բառսունքի ամբողջ տեւողութեան, կտոր մը հաց և մկրառը՝ որով մանուկին պորտին լարը կտրուած է, աղացկանին բարձին տակ կը պահուին, քառսունքէն յետոյ, հացը հասուն ջուրին մէջ կը նետեն, իսկ մկրառը մկրտութեան տակն միւսոսի ջուրով (մեւոն) կը լուան և իբրև սովորական գործիք մը կը գործածեն:

Տղացկանին անկողինը, քառսունքի տեւողութեան, սեւ մազէ հիւսուած պարանով մը պէտք է շրջապատուած մնայ, ու անոր քով երկաթեայ շամիուր մը և դանակ մը գանուի (Հարաւայնոց սովորոյթ): Ասանցմով աքլերը ու դեւերը կը հարածուին: Եթէ զանցառութիւն ըլլայ այս սովորոյթին դէմ, ան տակն ալքեր կուգան և ոչ միայն աղացկանին լեարդը կը հանեն, այլև երեխան ալ կը փոխանակեն ուրիշ նիհար, վատոյժ, ազատողջ երեխայով մը:

Լ Ո Ղ Ա Ն Ք Ը

Մինչև երեսուցին մկրտութիւնը, անոր լողանքը դայելը կը կատարէ, դաղջ ջուր պարունակող տաշտի մը մէջ: Օճառի փրփուրով անոր մարմնայն բոլոր մասերը կը լուայ, կը մաքրէ: Յետոյ դլուխին, ճակատին, քիթին, ինչպէս նաև ծնօտին զանազան մասերը բթամատով կը մարձէ, զանանք ձեւաւորելու համար: Մտտով երեսուցին կտկորդն ալ ներսէն գէպի վեր կը ճնշէ, քիմքը կը վերցնէ կ'ըսեն: Հեղ մ'ալ օճառով լուայէն յետոյ, գլուխը երկու ձեռքերուն մէջ սանելով սաւանց ցնցուճի կը կախէ, որպէս զի պարանոցը հարճ չմնայ, յետոյ երկու սաքերէն բանելով գլխիվար կը կախէ, որպէս զի սրունքները ուղիղ ըլլան: Հեղ մ'ալ տաշտին մէջ կը պտակեցնէ կանակի վրայ, նախ երկու երեք անգամ երեսուցին թեւերը կուրծքին վրայ կը խաչածեւէ, և յետոյ սրունքներէն իւրաքանչիւրը կը ծալլէ փորին վրայ այնպէս որ ծունկերը պորտին մօտենան: Ասով լողանքը կը վերջանայ:

Դիակելի է որ բոլոր բալուցիներու գլուխները իրարու կը նմանին, բայց կը տարբերին իրենց դրացի քուրտերուն և թուրքերուն գլուխներէն որոնք աւելի ձուածեւ են, մինչդեռ առաջինները աւելի կլոր են:

Մանուկին խանձարուրը հետեւեալ կերպով կը պատրաստեն: Մեծ ու մաքուր քաւակուսի պատտաւ մը կը փռեն, անոր վրայ՝ ուրիշ աւելի փոքր մը նոյնպէս քաւակուսի կտաւի կտար մը, ասոր վրայ ալ մոմլաթ մը, այս մոմլաթին վրայ ալ ուրիշ կտոր մը կտաւ կը տարածեն, սրուն վրայ կը լեցնեն շատ նուրբ մաղուած մաքուր կաւ զոր կը տաքցնեն պուտուկի մէջ: Երեսուցին անոր վրայ կը պտակեցնեն երբ դաղջ բարեխաւանութիւն մ'ունի ձմեռնային եղանակին մէջ, իսկ գոլ՝ ամառնային եղանակին մէջ: Երեսուցին կանակի վրայ պտակեցնելէ յետոյ, դայելը, անոր անութներուն, երանքներուն միջոցները մէկ մէկ քիչ այդ նուրբ կաւէն կը լեցնէ որպէս զի բորւոքում առաջ չգայ, երկու սրունքները քով քով կ'երկարէ ուղիղ դիւքի մէջ պահելու է սաքերը: Սեկը կը դնէ վրան այնպէս որ պորտէն մինչև ծունկերը ծածկէ, յետոյ շորով մ'ալ ծածկելով կը փաթաէ մոմլաթը, սակէ վերջ թեւերը կ'երկարէ իր երկու կողմերուն վրայ, ու վերջին պատասաներով ալ կը փաթաէ և կը դնէ օրանը (օգօրոցը) ուր յարդարուած է արդէն իրեն համար բուրդէ և բամբակէ յատկապէս կապուած փոքրիկ անկողին մը՝ բարձավ ու վերմակով միտասին, երեսը

Քաց կը թողուն մինչեւ որ քնանայ, քնանալէն յետոյ միայն բարակ շղարչով մը կը ծածկեն զայն որպէս զի ճանճեր չիջնեն վրան :

Այս լողանքը, առաջին օրերը օրը երկու անգամ տեղի կ'ունենայ, առաւօտ և երեկոյ, իսկ անկէ յետոյ, օրը մէկ անգամ, և ա՛յսպէս երկու օրը մէկ անգամ, մինչև մանուկը քայլելու սկսի, վերջին լողանքը դայեկը կը կատարէ կնուռքէն յետոյ, այս լողանքը կը կոչուի մանուկը մեռնէն հանելը : Այս լողանքին ջուրը սովորական աղառտ ջուրերուն հետ չեն խառներ, մեղք կը համարեն, զայն ասնիքին մէկ անկիւնը կը սրսկեն : Ասկէ վերջ այլեւս լողանքը պիտի կատարուի երեխային մօրը կամ անոր կեսուրին ձեռով ճիշտ այնպէս ինչպէս դայեկը կը լողցնէր զայն :

Օրական երկու անգամ մանուկին խանձարուրը կը քակեն և աղտոտութիւնները մաքրելէ յետոյ կը թողուն որ հողին վրայ շարժումներ ընէ, սաղին անգին թաւալի, մինչև որ քունը գոյ, այն ատեն կը փոթան և օրանը կը դնեն :

Մայրը փոփոխակի օրօրոցին աջ և ձախ կողմերէն ծիծ կուտայ երեխային, այսպէս կ'ընէ, որպէս զի, անոր շղին (վիզը) ուղիղ դիրքին մէջ մնայ :


Օրանը երկու տեսակ է, կախօրան և օրան : Կախօրանը սիւնէ սիւն կապուած պարանի մը երկու ճիւղերուն վրայ լսի մը կը ձգեն, եզերքները գէպի ներս դարձնելով և այդ երկու եզերքը համաչափ սախաակներով իրարմէ հեռացնող անջրպետ մը կը ձուայնեն, որուն վրայ կը փռեն անկողինը : Իսկ միւսը սախաակով շինուած զարդարուն մանձակալ մըն է, որ կրնայ գեանի վրայ աջ ու ձախ թաւալական ճօճումներ կատարել : Այդիներու մէջ օրանը ծառէ ծառ կը կապուի իսկ դաշտերու մէջ ալ, ևս ասանի վրանի մը (Չաթմայ) երկու սաքերուն :

Տ Ղ Ա Ր Ո Ւ Ք

Ծննդաբերութիւնը տեղի ունենալէ յետոյ բոլոր բարեկամներուն, ազգականներուն լուր կուտան : Կիները կը փութան աչքի լոյսի գալ իրենց հետ բերելով առպակ հաւկիթ (ձուածեղ) : Ութը օր այս այցելութիւններն անպակաս կ'ըլլան : Ութերորդ օրը տեղի կ'ունենայ մանուկին կնուռքը (մկրտութիւնը) կնքամօր առաջնորդութեամբը : Երբ մկրտութիւնէն ատեն կը դառնան, տեղի կ'ունենան այն ատեն հանդի-

սաւոր շնորհաւորութիւններ: Աղագականներ, բարեկամներ, դրացիներ
կը հաւաքուին տղացկանին տունը, իրենց հետ բերելով այս անգամ
զանազան կերակուրներ և նուէրներ: Նուէրներ կ'ըլլան զարդոսկի-
ներ, ոսկեդրամ, արժէքաւոր կերպասի կտորներ ևն: Հոն կ'ուտեն,
կը խմեն, և ժամերով ուրախութիւններ կ'ընեն, կը շնորհաւորեն
տղացկանը, կեսուրը, ամուսինը «աչուընիդ լս'ս, մարով պապով մեծ-
ցընէք, մնացկան ըլլի», ըսելով: Իսկ անոնք ալ կը պատասխանեն,
տաւոսը ձեր տունը ըլլայ, ձեր վրայ, (եթէ անոնց մէջ դեռաւախ կի-
ներ գանուին): Ուշ տան վերջ կը գտնէ խնդակցութեան այս արտ-
րոգութիւնը, որ տղարուք կ'անուանուի: Ասկէ յետոյ կ'սկսի բնու-
կան կեանքը: Հաջկ է յիշել թէ՛ տղարուքի միջոցին՝ կնքամայրը և
կնքահայրը երկիւղած յարգանքի ու պատիւներու սուտրկայ կը դառ-
նան:

Մայրը պարտաւոր է դիւցնելու իր երեխան մենչեւ 2-3 տարի,
եթէ կաթ չունենայ բացառիկ պարագաներու մէջ, այն տան նորա-
ծին տղացկան մը առանց վճարումի կը դիւցնէ զայն, այս պարա-
գային ստնտուին երեխան ու առաջինը իրարու կաթնաղբար կը հա-
մարուին: Կան մայրեր, որոնք իրենց մէկ հասիկը մինչեւ 5-6 տարի
կը դիւցնեն, հակառակ որ այդ տարիքին մէջ այլեւս անոնք պէտք
չունին ատինքով սնանկելու:



Գ. ԳԼՈՒԽ

Կ Ա Ղ Ա Ն Դ

Կաղանդը նոյն կերպով կը տօնուի գրեթէ Բաղուի բոլոր գիւղերուն մէջ, շատ քիչ կը տարբերին իրարմէ այդ օրուան համար կատարուած սովորութիւնները: Կաղանդը կ'սկսի իրիկունէ բազմասեռակ միրգերու, պտուղներու և անապա՛ղ գինիի կերուխաւմով: Չեւք պտղներու և նաւիրատուութեան ընտանեկան հին, բարի սրտողութիւնները կը կատարուին այդ իրիկունը: Մինչեւ լոյս տունին անդամները մեծ մտտամբ բացի երեսամերէն, չեն քնանար, այդ օրուան պատրաստութիւնները արդէն օրնոք աւաջ անսնուած են, եօթը տեսակ կերակուրներ եւրած են, որք են, Ա. Պղլուր (ձուար), աղընծուած ու ծեծուած և խիւսի վերածուած շուշմայ (սուսամ), քիչ մը ծեծուած մանր կարմիր պղպեղ, բաւական շատկեկ ջարդուած սոխ իրարու հետ խառնելով կը լեցնեն զանոնք մինչեւ կէսը կամ քիչ մը աւելի ջուրով լեցուն պտուղի մէջ որուն կոսիտրիչը վրան դնելով անոր բլորտիքը կը ծեփեն խմորով ու կը դնեն թոնիրին մէջ որ եփի, ասոր կ'ըսեն Խորու, Բ. Պղլուրով և անոր երեք անգամն աւելի սիտեռով գրեթէ թոփիկի յար և նման գնդիկ կը շինեն, Գ. Միրանէ, սալորէ, չամիչէ և ուռպէ խոշապ կ'եփեն, Դ. Անուշապուր, որուն նիւթերն են ծեծուած ցորեն, որ մաքրուած է իր թեփերէն՝ ընկուղ, նուշ, չամիչ, մեղր կամ ուռպ երբեմն գաղպէն(*) ալ կը դնեն երբ զոյն ունենան, Ե. Փերփեր-տապուր, ասոր ալ նիւթերը կը բազկանան չորցուած փերփերէ, ծեծուած ցորենէ, կարմիր լոպիկէ (լուբխոյի տեսակ մը), աղացուած ոսպէ, չոր, բայց քիչ պղպեղէ, սոխէ և շուշմայի իւղէ, Զ. պահոց քէչքէկ, աս' կը բազկանայ

(*) Հայաստանի մանանան է, որ ունի իր ժամանակը քափուելու անսառնելու ծառերու տեւելու վրայ, ուր կ'երթան մարդիկ կը հաւաքեն: Մեղրեն աւելի քաղցր է:

ժեծուած ցորենէ, սապէ, սխաւէ՝ շարցուած կանկարէ, յեւոել ըսուած չոր բանջարէ և շուշմայի իւղէ (շիրիկ), է. Շուշմայի հաց, սախիա զուտ ցորենի ալիւրի շաղուած խմոր մըն է զոր կը բանան խիստ բարակ ու կը սապկեն շուշմայի իւղին մէջ ու յետոյ անոնց ամէն մէկուն երկու երեսներուն վրայ կը լեցնեն կամ կը քսեն ուռալով կամ մեղրով շուշմային խիւսին հետ խառնուրդը, և կը շարեն զանոնք իրարու վրայ, որպէս զի կակուղ մնան և թէ աւելի անուշնան իրար ծծելով, պէտք է գիտնալ թէ այս բոլոր կերակուրները պահոց կերակուրներ են:

Եփած են նաև իրենց արջառներուն համար Կաղանդի հացեր (*)
Մութը կոխելուն պէս, գօտեկախը կ'սկսի ստախարակ տանիքին կլորակ կամ քառակուսի երդիքներէն վար: Այդ երկայն գօտին ծայրը կցուած է բաւական մեծ կակ տոպրակ մը, տանտիկինը տուանց դոյզն սրտնեղութեան, սիրով կը լեցնէ կախուած տոպրակներուն ընկոյզ, նուշ, չամիչ, պաստեղ, առճիկ (քաղցրեղէնով պատրաստուած շարոց նուշի, ընկոյզի եւն .ի) շատ եփուած ու թանձրացած ուռալի պատտուներ (լոգումի պէս) որուն բեամե կ'ըսեն, ևայլն, այսպէս շարունակ մէկը միւսին ետեւէն կախուած տոպրակները կ'ոճամբէ գոհունակ սրտով և կատակներով մինչեւ անոնց վերջանալը, գրեթէ մինչեւ կէս գիշեր: Անկէ յետոյ ամէն մարդ իր սուներ կը քաշուի: Նոյն ստեն սան մեծը, իր աղաքը առնելով նոյնպէս՝ արջառներուն համար եփուած հացերն ալ մազի մը մէջ լեցնելով կ'երթայ աղբիւրը, այդ զանազան ձեւերով եփուած հացերուն մէջ կան նաև խոփի նման հացեր, եթէ սանաէրը հողագործ է, կկոցներ, եթէ՝ ոստայնանկ է, սանաիկնոջ մատի մասնացն ու մկրասն ալ չեն մոռցուիր: Հոն աղբիւրին շուրջը այդ կէս գիշերին, կը լեցուին գիւղացիները, որպէս զի թէ լուացուին և թէ այդ հացերը թրջեն, երեւակայեցէք թէ Բալուի, գիւղերուն մէջ Յունուար ամիսը որքան սաստիկ ցուրտ կ'ընէ առ հասարակ, մանաւանդ գիշերուան պահերուն, և սակայն այդ խստաշունչ եղանակին և արիւն սառեցնող մամերուն, գիւղացիները նոր տարուան բարեբերութեան վրայ սողորուն յոյսերով, ցուրան ու սառնամանիքը արհամարհելով աղբիւրին ահերուն գալջ ջուրին (ձմեռը աղբիւրներու ահերէն հոսող ջուրը գալջ կ'ըլլայ) սակ բոլորովին մերկ, կը պղղին ու կը լոգնան: Աղբիւրին աւաղանին մէջ չեն մտներ լոգնալու համար, զայն կը նկատեն իբրև անցող տարուան ջուր, այլ, անպատճառ կ'ընեն այդ լոգանքը կէս գիշերին ու հացերն ալ

(*) Կենդանիներուն կնդակներուն ու սնական եւ էրկրագործական ուրիշ գործիքներուն նմանող բազմազան ձեւերով:

կը թրջեն նոյն պահուն միմիայն տկերուն ջուրովը որպէս նոր
տարուան ջուր :

Պատահի որ սեւէ մէկ քնտանիքի մը մէկ անդամը սարեգոյ (միտմ-
եաց ջերմ) ունենայ, կ'ապուսեն մինչև կազանդի դիշեր. զոյն ասնելով
իրենց հետ ազբիւրը լողցնելու համար գաղջ ջուրով, երեք անգամ խելճ
հիւանդը տկերուն տակ կը մտնէ կ'ելլէ մէկ երկու վայրկեանի մէջ,
կրկնելով երկու երեք անգամ «Առ քեզի փող, կըսքէ իմ դող» յետոյ
զայն կը հանեն թիկնի ծառի մը վրայ ու կ'ըսեն անոր, «Օօ, Ասօ,
ի՞նչ կ'ընես ըս ծառին վրայ» «Թո՛ւթ կ'ուտեմ թո՛ւթ» կը պատաս-
խանէ. «Հիմա՛կ ըլ թո՛ւթ» կ'ըսեն իրեն, «Հիմա՛կ ըլ դո՛ղ» պատաս-
խանը կ'ըլլայ անոր. դարմանալի է այս ծիծաղելի նախապաշարուածէն,
չստ անգամներ սարեգոյ ունեցողները ճամբու դրոժ են զիրենք
կրծող այդ սարսափելի հիւանդութիւնը, անգամ մըն ալ չրանուելու
պայմանաւ Այգ տարօրինակ ունեգական նախապաշարուածէն գտա,
ուրիշ միջոցներ չեն գտներ շատ մը գիւղի բնակիչներ, գիացողներն
ալ կարեւորութիւն չեն տար. Հայ գիւղացին ընդհանրապէս գելի
գարմանումի, բժիշկի մեծ կարեւորութիւն կ'ընծայէ, բայց հարկ է
ըսել թէ գաւառին կեզրունին մէջ յաճախ գեղ գեղարան, մանուսնոյ
գէթ թաղապետական բժիշկ կը պահուի. Շատ հարկեցուցիչ պարտ-
գային կամ հիւանդը, եթէ կարելի ըլլար մերձակից կուտակալու-
թեան մը կեզրունը կը տանէին, կամ անկէ բժիշկ կը կանչէին մեծ
ծախքերու ենթարկուելոյ. Սակայն ժողովրդական բժիշկներ, երբեմն,
գործեր մը կը կատարեն, դիպուածով սուղջոցներով կամ մեռցնելով.
հոն մարդը տժտն է... Քինքինայի և բժշկական այլեւայլ գարման-
ներուն կը դիմեն թէև բացառիկ պայմաններու մէջ. Թութի ծառը ի՞նչ
գօրութիւնով, կամ այդ գիշերուան սաստիկ ցուրտին աղգեցութիւնը
ինչպէս կը բուժեն հինցած ջերմը, այս մասին սեւէ բացատրութիւն
տալը, իմ կարողութենէս վեր ըլլալով մասնագէտներուն կը թողում:
Ես կ'անցնիմ իմ պատմութեանս. վերջապէս, ազբիւրէն տուն կը դառնան
ամէնքն ալ, տանը մեծը նոր տարուան ջուրով թրջուած ու մաղին
մէջ իրարու վրայ դիզուած հացերը տանելով կը տանի զանանք ախո-
ւր իւրաքանչիւր դուարի վերաբերող կճղակածեւ հացերը անանց
կերցնելու, իբրև կազանդչէք, ինքն ալ իր խտիր (խախածեւ հացը)
կուտէ, կամ կկոցը, կամ ուրագն ու սղոցը, տանտիկինն արդէն ու-
նանցմէ տառջ ճաշակած է իր մասնոցն ու մկրտար: Առաւօտուն
նոր Տարին կ'ախի, եօթը տեսակ կերակուրները, զորս նախապէս
պատրաստած են, կարգով կը շարեն երկայնիկ սեղանին վրայ, շը-
նորնաւորութեան համար եկող հիւրերը կը մեծարութիւն կազանդի կե-
րակուրներուն մասնակից ընելով, սեղանը այդպէս զարդարուած ու
դրուած կը մնայ մինչև յոջորդ աւուօտ, աւտա ու անտարակ դինին

ալ կը խմեն գրգռուած ախուժակով ազուտը պատրաստուած թորիկին
 չնորհիւ, գինիին ազգեցութիւնը հեազհեաէ զգայի դառնալով կը
 խզէ անոնց լուծիւնը, ու կ'սկսին Նոր Տարուան յարմար երգեր ու
 խաղեր երգել. այսպէս.

«Քարի եկար Նոր Տարի
 տո՛ւր միզի ցորեն գարի,
 լե լե, լե, լե, ախ լե լե,
 մեր փեթակն ալիւր (ալիւր) կ'ուզէ
 լե, լե, լե, լե...
 քանիկինը եղ (իւղ) կ'ուզէ լե, լե
 բուխերիկս մուխ կ'ուզէ, լե, լե...
 մեր օնախը փաս կ'ուզէ լե, լե...
 եզուն (այգի) պաղօջին պտուղ տուր լե, լե.
 մեր աղջկին փեսայ տուր լե, լե...
 մեր տղային հարս մը տուր լե, լե...
 հիւրնտուրին (հիւանդտուրին) բող չ'ըլլի՞
 քեանտուրին (վասակի ցուաղտուրին)
 բող չ'ըլլի, լե, լե,
 հեյբան Նոր տարի:»

Եւ այս անմեղ խրախճանութիւնը կ'ըլլայ գրեթէ ահապարտի
 ամէն տուներու մէջ, ազաքն ալ յարմար խաղերով իրենց հասակա-
 կիցներուն հետ օրուան հանդիսութեան փայլը կ'ընեն:



Գ. ԳՎՈՒՆ

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋ

(ՏԵՐՆՏԱՍ ՄԵԼԵՄԷՏ)

Բաշուի գիւղերուն մէջ «Տեառն ընդ առաջի» իրիկունը, մեղեմէ-
տի կամ մեղեմի կրակը կը վառեն երկու տարբեր տեղերու
մէջ. մէկը եկեղեցւոյ գուլիթին մէջտեղը, իսկ միւսը գիւղին
ախին տանը տանիքին վրայ: Հարաւայնոց սովորոյթն է սառ խոկ
Հիւսիսայնոց սովորութեան համաձայն եկեղեցւոյ գէմ քանուղ հրա-
պարակին վրայ կը կաղմուի խարոյկի դէզը: Եկեղեցւոյ գուլիթին մէջ
խարոյկը կը պատրաստուի չորցած ցոխերով, իսկ ախին տան տանիքին
վրայի վառուելիքը կանանց ցրդին է: Առաջինը կը բաղկանայ ինչ-
պէս ըսի չորցած ցոխերու մէկ երկու փոքր խուրձերէ, մինչդեռ
վերջինը մշատալար ցրդիներու ածաղին խոշոր դէզ մըն է: Ես պի-
տի գրեմ այս վերջինին վրայ և ընդհանուր Բաշուցիներուն Մեղեմէ-
տին նկատմամբ ունեցած սովորութեանց մասին:

Տեառն ընդ առաջի իրիկունը, նախատօնակը կատարելէ առաջ,
այդ տարուան ու օրուան նոր կարգուող փեսաներն ու անոնց կըն-
քանայրերը ցրդիներու ճիւղերը արդէն դիզած կ'ըլլան ախին տան
տանիքին վրայ: Անոնք այդ օրուան արշալոյսէն առաջ կ'երթան
վեռ, լեռնէն գիւղ երթ ու գարձը կ'ընեն իբրև իրենց վրայ գրուած
սրբազան պատահանութիւն: Այդ յաղնեցուցիչ պայմաններուն տակ
սակայն իրենց դէմքին վրայ շտենուիր երբեք դժգոհանքի սեւէ նը-
շան, ընդհակառակը, անոնք ժպտուն են ու դուարի՛ արհա-
մարնելով եզանակին խառութիւնը, իրենց գոյծը ճշատապահօրէն
կը կատարեն և իրիկուն ժամերգութենէն դոնէ մէկ երկու ժամ
առաջ կառուցած կ'ըլլան ցրդիի դէզը ախին տան տանիքին վրայ:
Մեղեմէտը կամ ցրդիի այդ դէզը մօտաւորապէս կը բաղկանայ 30-40
շալակներէ:

Թէպէտև իւրաքանչիւր տուն իր տանիքին, կամ իր դրան տու-
ջեւ այդ իրիկուն կրակի բոց մը կը հանէ, բայց պաշտօնական Մե-
ղեմէտը ախին տան տանիքին վրայ տեղի կ'ունենայ, անոր շուրջը
կը բոլորուի գիւղին բնակչութեան մեծ մասը, մեծ, պղտիկ, մանչ
սղջիկ. մինչև անգամ ծծկան երեխան իր մօրը սախիքին փակած կը
սպասեն հոն, տանիքին վրայ ցրդիին վառուելու արարողութեան,
զոր պիտի կատարէ քահանան եկեղեցւոյ երեկոյեան ժամերգութենէն

յետոյ : Մուլթը հազիւ կը սկսի և ահա, ժամուորները վառուած մոմեր ձեռքերնին, թափօրով կուգան դէպի Մեղեմէար, անոնց ետեւէն ալ՝ քահանան ու դպիրները : Քահանան նախ կը խաչակնքէ, յետոյ կը վառէ ցրդին իր ձեռքի մոմով, նոյն ատեն իրեն կը հետեւին ժամուորները, իրենց բռնած մոմերով կը բռնկցնեն ցրդին այդ հըսկայ դէզը, կրակը ամէն կողմերէ կը սկսի, բոցերը հեազհետէ երկինք կը բարձրանան և մէկ երկու ժամէն այրուած վերջ կը դանէ, բոցերը կը դադրին և կը մնայ մոխիրի և կրակի դէզ մը կէս այրող կամ մխացող ճիւղեր : Ինչպէս ըսի, գիւղին երկսեռ ստուար բազմութիւնը մեծով պզտիկով հաս, Մեղեմէարն առջեւն է : Անոր շուրջը կը դառնան շատերը, գրեթէ բոլորը, մանաւանդ նոր փեսաները ա՛լ աւելի փութկոտութիւնը կ'ունենան առաջնութիւնը ուրիշին չտալու համար Մեղեմէարն բոլորաթիքը դառնալու վազքին մէջ :

Ամուրին, ամուսնացեալը, մանչ, տղջիկ, հարսնցու, անդաւակն ու զաւակ ունեցողը, տարէցները Մեղեմէարն յարմարցուած շերերը կ'երգեն (Հարաւայնոց սովորոյթ) : Երիտասարդներէն ոմանք, անվախօրէն Մեղեմէարն կրակին վրայէն կը ցատկեն, ոմանք ալ ճարճատող կրակին բոցերուն մէջէն անոր միւս կողմը կ'այցնին խիտ արագ վազքով մը : Այս խաղերը վազքերը և ցատկումները սակայն իրենց յատուկ նպատակներն ու նշանակութիւնները ունին աւանդաբար հիներէն իրենց փոխանցուած, այսինքն, ով որ Մեղեմէարն կրակին մէջէն անցնի անվնաս, կամ անոր վրայէն ցատկած ատեն առանց անոր կրակին կամ անոր մէկ կայծին դափուլ, անիկա ազատ կը մնայ կայծակի արկածներէ, օձերու և կարիճներու խայթումներէ և պատահական ամէն վտանգէ :

Հոն գանուողներէն շատեր, մանաւանդ երկսեռ պատանիներ իրենց բազմանքներն ունին, որոնց իրականացման համար, անոնք զոյգ զոյգ իրարու ձեռք բռնած երեք անգամ արագօրէն կը վազեն այդ կըրակի դէզին շուրջը, նոյնը կ'ընէ դեռատի հարսը իր ծծկան մանկիկը կուրծքին սեղմած, ակնդոտ ոգեւորութեամբ մը մէկը միւսէն առաջ անցնելու փութկոտութիւնը կ'ունենան դառնալու կրակին շուրջը, անմտան չմնալու համար Մեղեմէարն կարծեցեալ պարզեւներէն :

Յետոյ, երբ կրակը իր սաստկութիւնը կորսնցնելով հեազհետէ մըշիւ կ'սկսի, իբէ շուրջի բազմութիւնը աւելի կը մօտենայ անոր . և այդ պահուն ամէն ոք կրակին եզերքներուն վրայ թափած կիսայրեաց ցրդի ճիւղերէն մէկ մէկ հաստ առնելով առն կը տանի զայն իր հաւնոյին մէջ կը դնէ : Նաեւ ամուսն կարելով բաժիններ կը հանէ մարագին, գոմին, տխոռին, որպէս զի անոնք այդ տարին բեղուն առատ բերքերով լեցուին :

և միեւնոյն ժամանակ զերծ մնան վասնզաներէ և համաճարակ չուէ (արջառներուն հիւանդութիւն) : Անոնք ո՛չ միայն այդ կիսայրեաց ցրզինները կը տանին իրենց տուները, այլ Մեղեմէտին կրակին մոխիրն անգամ չեն ձգեր որ մնայ տանիքին վըրայ ի տես երկինքի և երկրի : Մոխիրն ալ, մանաւանդ ըստ իրենց հաւատքին, մեծ նշանակութիւն մը ունի, սատր համար զայն կը պահեն մինչեւ տարի մը : Տարի մը, անկէ մաս մաս տանելով կը խառնեն ամէն տառաւ օճախին մէջ վառուած կրակին մոխիրին հետ, նոյնպէս անկէ մաս մ'ալ կը կը լեցնեն հաց եփած ստեն թոնիրին բարկ կրակին մէջ :

Անոնք այն հաւատքն ունին, թէ իրենց դուրանին դուրսի դին, փողոցին վրայ, տարուան մէջ հաւաքուած մոխիրակոյտին հետ երբ այդ մոխիրէն քէչ մը խառնելով փոխադրեն արակերուն վրայ, այդ տարի մեծ առատութիւն կ'ըլլայ, արմաթները բեղուն և աւատ կ'ըլլան :

Ուրիշ նախապաշարուած մըն ալ կայ, որ աւելի խո՛ր է Բալուի գիւղացիներուն մէջ . երբ Տեառն ընդ աւաջի իրիկունը Մեղեմէտը վառուիլ սկսի, հան հաւաքուած բազմութիւնը իր ուշադրութիւնը կը դարձնէ դէպի այդ վառուող դէզին ծուխը, տեսնելու համար թէ անոր հասանքը ո՛ր կողմը կ'ուղղուի : Եթէ ծուխը այդ միջոցին թեքուած է դէպի հիւսիս, սերտիս կ'ըլլան անոնք և ալ չեն մտահոգուիր իրենց սարեկան տպրուստին վրայ, խորհելով որ այդ տարին բերքի առատութեան տարի մը պիտի ըլլայ : Իսկ եթէ ծուխը դէպի հարաւ երկարի, օ՛հ, ատիկա իրենց համար խիստ դէշ երեւոյթ մըն է, իբրեւ յայտարար նշանը երաշտ տարիի մը, ուր ալբիւրներուն, վասակներուն ջուրերը իրենց ամէնամուտազ ստախճանին պիտի իջնեն, երկինքը պզինձ պիտի ըլլայ ամբափակելով անձրեւի սահանքները կտթիլ մը անձրեւ երկրին վրայ չթափելու համար : Նոյն ստեն դաշտ, լեռ, բլուր, պարտէզ, անու և այգի պիտի այրին, մրրկին արեւին խանձող ճառագայթներէն, ու պիտի չորնան ծառ, ճիւղ, բոյս և յն . և հետեւանքը պիտի ըլլայ տարապայման սղութիւն, գուցէ համատարած սով մը, որ աւլէ, սրբէ բազմաթիւ մարդեր ու անասուններ :

Այսպէս կը մեկնէ երկրագործ գիւղացին այդ միջոցին Մեղեմէտին աւջեւ կեցած, ծուխին դէպի հարաւ հակումը . կը տխրի ան այդ պահուն չափազանց, գիտելով վեր բարձրացող կրակին ծուխը, որ չի դառնար դէպի հիւսիս, հարաւի կողմէն, անոր յաւած են աչքերը շարունակ, այդ կողմը, ծուխին . կը գիտէ, ու կը գիտէ, չափելով այդ վհատեցուցիչ երեւոյթին ահաւոր խորութիւնը : Իսկ եթէ հովին պատահական մէկ դարձուածքովը ծուխը դէպի հիւսիս թեքի, նոյն ստեն հոտ կեցող բազմութիւնը ցնծագին ապագակներով վեր, վեր կը ցատկէ, կարծես ծուխը գրկելու փայփայելու ան-

զըսպուլթիւնը կ'ուսնենայ, ալ կը կարծէ թէ աշխարհ իրենն է:

Հակառակ պարագային, եթէ երբեք դէպի հիւսիս չհասկի, գիւղին բազմութիւնը կը տխրի, անոր սիրտը կը ճմլուի, սոսկումով կը պաշարուի, յուսահատ ու գլխիկոր, հոտ, իրարու կ'ըսեն անոնք, որ գիւղին մեծերը, փորձառուները կը սեպուին, և հողին ու ջուրին յատկութիւնները սերտած ու սովրած են, «աղբար, տնուրնիս կ'աւրի, փոշինիս կը մաղուի, ըս տարի գէշ տարի ը (է) Ասուած օղորմի աշխարքին, (աշխարհ) սով պիտի ըլլի, (պիտի ըլլայ) օնչ էնինք, ուր էրթանք (երթալ) շուրուս, չոճուխ, սաւար, սօնլըղ ունինք, ի՞նչսեխ (իւչպէս) պէյինք (սրահել) և ին, և ին:

Այսպէս ձեռքերնին ծոցերնին դրած, տուն կը դառնան կէս գիշերին մօտ. այդ երեւակայական բայց իրենց ծուծը ցնցող ահաւոր սպաւորութեան տակ: Զարմանալի է որ անոնց առասպելական այդ հաւատքը երբեմն կուտայ իր արդիւնքը, եթէ ոչ ընդհանուր, գէթ մասնաւոր տեղերու մէջ աւաւել կամ հուազ աստիճանով մը: Անոնք նախապաշարում մը ևս ունին. ա՛յն է թէ Մէլեմեաին կիսայրեաց փայտերը իրենց տուները կը տանին ուրիշ նշանակութեան մը համար ալ, այսինքն այդ կիսայրեաց փայտերով, Շուտը պիտի հարածեն իրենց տուներէն: Ես լաւ կը յիշեմ որ մայրս երբ անհանգիստ կ'ըլլար մեր անհանգարտ վիճակէն, կ'ազդարարէր որ հանգարտ ու խելօք կենանք, եթէ ոչ, Շուտը պիտի կանչէր աշխարհներուն գոմէն, կամ մառանէն մեզ պատժելու համար: Շուտը կանչելու սպաւնալիքը մեզ կը սոսկացնէր, այնպէս որ գոմին ու մառանին կողմն անգամ նայելու կը սարսափէինք:

Բալուի գիւղերէ ոմանց մէջ հինէն ի վեր սովորութիւն եղած է, որ Մելեմէաի կրակին փայտը անպատճառ ցրդիի ծառէն ըլլայ, մանաւանդ որ այդ գիւղերը աւելի լեռներուն մօտն ըլլալով ունին կաղնիի և զանազան փայտերու տառտութիւն բայց դարձեալ անոնց վառածը ցրդին է Մելեմէաին համար: Արդէն ամբողջ տարուան մէջ կանանչ է, տերեւ չունի անիկա. ունի խիտ, խիտ սըրածայր փուշեր կանանչ գոյներով: Ասոր փայտը սակայն կարծր ու շատ դիմացկուն է: Անիկա երբ կը սկսի վառիլ, կայծերու տեղատարափ մը կը ցանցնէ բաւական հեռաւորութեան մը վրայ, այս պատճառաւ մարդիկ չեն համարձակիր շատ մօտենալու անոր կըրակին: Այս ծառը ունի նաեւ սիսեւի մեծութեամբ և անոր պէս կլորիկ ու կարմրագոյն պտուղներ, զոր «ցրդի պլար» կ'անուանեն գիւղացիները: Այս ցրդի պլոր ըսուած պտուղը սակայն, կ'ըսուի թէ կը գործածուի բժշկութեան մէջ: Ասկէ զատ, այս պտուղէն քիչ քանակութեամբ ալ կը լեցնեն խմորելի այն խառնուրդին մէջուրկէ օղի պիտի թորուի: Ցրդիի այս պտուղը օղիին ախորժելի համ մը կ'ուտայ:

Ե. Գ. Լ. ՈՒ Խ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանի նախաստօնը կ'ըլլայ պարկեցումով մը այդ շաբթը-
 ւան նախորդ կիրակի օրուան մէջ: Երեք օր դողալով տալէն վերջը,
 հինգշաբթի առաւօտուն կը սկսի Բարեկենդանը: Բոլոր տուներուն
 բխերիկներէն ծուխերու թանձր քուլաները կը բարձրանան զիկ-
 զակ գալարումներով: Ամէնուն օձախները իրար գերազանցող տեն-
 դոտ գործունէութեան մէջն են: Արշալոյսէն առաջ, ժամերգութենէն
 վերջը, որ կանուխ կը վերջանայ՝ արեւին ելնելէն առաջ, ճաշին
 սեղանը, պատրաստ պիտի ըլլայ: Ատոր համար ժրածան տան-
 տիկիները կերակուրներու դէզին սակ կ'ըսած՝ տապակին կ'սթը ձեռ-
 քէ չեն ձգեր, բռնած են զայն կրակին վրայ իրարու ետեւէ եփելու
 համար կերակուրներ շոյաստանի պատուական և անխտրդախ իւղե-
 րով, զորս պատրաստած են բուն խկ իրենց ձեռքով: Այդ օրուան
 կերակուրներն են Փաթիլայ, Սրոն, Բխբխիկ: Փաթիլան խմորեղէն
 մըն է: Խեղճ կիները ինչե՛ր կը քաշեն զայն պատրաստելու համար.
 զուտ ցորենի ալիւրով խմորը կը պատրաստեն, յետոյ փայտէ սե-
 ղանի մը վրայ չափին համեմատ զայն կը բանան^(*) շատ բարակ, մա-
 սի պէս, տանտիկինը այդ բացած հացերը մէկիկ մէկիկ առնելով կը
 դնէ յղկուն կլորակ սեղանի մը վրայ, մէջը չափով մը պանիր կամ
 խաւովմայ կը դնէ ու յետոյ անոր վրայ բարակ հացով մը կը ծածկէ,
 երկու հացերուն եզերքները իրարու հետ փակցնելով կ'նստն սաճին
 վրայ, այսպէս խաւ խաւ մէկը միւսին վրայ դիզելով մեծ ափսէի մը
 մէջ, կը կտրէ զայն՝ փոքր և քառակուսի պատտառիկներու բաժ-
 նելով, ու վրան կը լեցնէ հալած սքանչելի իւղը: Սըռօնն ալ այսպէս
 բարակ բացուած հացով կը պատրաստուի, սա ալ մանր պատառիկներու
 կը վերածեն ու սխտորուած մածնաթանի մէջ թաղելով կը հանեն ու կը
 շարեն խորունկ պնակի մը մէջ, վրան իւղ լեցնելով կ'ուտեն: Բըխ-
 բըխիկը ալիւրով, հաւկիթին դեղնուցով ու կաթով չ'եփեն իւղին
 մէջ անոր ամէն մէկ պատառը ընկոյզէն քիչ մը մեծ կ'ըլլայ, սեղա-
 նին վրայ բերելէ առաջ, վրան ոռայ կամ մեղր կը լեցնեն: Չ'մոռ-
 նամ ըսելու որ փաթիլայի երկրորդ տեսակ մ'ալ կայ, ան ալ առաջուան
 փաթիլային նիւթերն ունի թէպէտեւ, բայց տարբեր համ կ'ունենայ:

(*) Բունալ կը նշանակէ խմորին գունը փայտէ գլանով շա-
 բարակ նկանակներու վերածել:

այսինքն ձեռքի մեծութեամբ կը պատրաստեն զայն կը տապ-
կեն իւզի մէջ ու վրան ալ ուռալ կամ մեզր կը լեցնեն: Ճաշը
ընելէն վերջը, տանիք կ'ելնեն մեծ ու սղաթիկ իրենց նոր ու
գեղեցիկ հագուստները հագած, մանաւանդ կիներն ու աղջիկները,
իրենց նախշուն և բազմագոյն զգեստներովը պճնուած: Դեռ խմբա-
կան պարը չ'սկսած, հոս ու հան, իրենց գուռներուն առջեւ, կամ իրենց
տանիքներուն վրայ, հինգ, տասը հարս, աղջիկ կեցած կ'ապասեն պա-
րին սկսուելուն: Չ'ուշանար ան սակայն, և ահա, Եղսօ Խաթունը իբրև
ամէն տարուան պարկցողն ու պար պարելու ամէնէն վարպետն ու
առաջնորդովը, պաշի շրջանակը կազմած, իր նրբանուշ և քաղցրա-
հունչ պարերովը, պարողները իրեն կը կանչէ, որոնք անմիջապէս
կը փութան երթալ հոն պարին շրջանակը մեծցնելու: Հետզհետէ
պարը կը մեծնայ, կ'ընդարձակուի, տենդոս ողեւորութեամբ մը ա-
մէնքը կը հետեւին Եղսօ Խաթունին վարժ շարժումներուն, կրկնե-
լով անոր ըսածները, որ հետեւեալն է, «Յնկն (ծունկ) աճո, ծնկն
աճո, ծնկն աճոին ֆնար, Կրպօ էլիբ սեներ (սանիֆ) Կրպօ էլիբ սենե-
ր, սէ'ս Մրօին (Մարիամ) բեր, կարմիր խնձորի պէս բ (է), կարմիր
խնձորի պէս բ, մազերը ձնի (ձիւնի) պէս բ մազերը ոսկու պէս բ,
մազերը ոսկու պէս բ, պօյր ջինարի պէս բ, նինի, նինի, նինի, նի, նինի,
նինի, նինի, նի:» Կը փոխէ այս անգամ դրուասիքը (Մրօին) կող-
մէն որպէս թէ ուղղուած Կրպօին, «Մրօ Կրպօն չինար բ, Մրօ
Կրպօն չինար բ, ան ֆու ուզած լաւ եարն բ, ան ֆու ուզած լաւ եարն
բ, երնեկ ֆիզի (քեզի) որ ունիս, երնեկ ֆիզի որ ունիս, Կրպօին պէս
նշանած, Կրպօյին պէս նշանած, աչքեր ունի եղնիկի, աչքեր ունի եղ-
նիկի, սիրս մը ունի սրբի պէս, սիրս մը ունի սրբի պէս,» ևլն. ևլն:

Պ Ա Ր Ե Ր Գ Ա.

Պաղչին պասը փըլեր բ

Եարբս մեջը ֆրներ բ

Չան (ձայն) կուսամ, ձանրս չ'առներ

Մըկըր իզմեն (ինձմէն) ցաւեր բ:

Ըս օր աղկեկ մը (գեղեցիկ) սեսայ,

Կուժն առաւ ջո'ւրը կ'երթայ,

Ասֆը սըլըխուաւ (տանիլ) ինկաւ,

Չեռֆին քրոնած, կո'ւժը կոսրաւ:

Մի՛լար աղջի՛կ, ըսի մի՛ լար,
 Կուժրդ շինիմ ոսկի անկով.
 Ջուր լեցնեմ վարդի ունկով:

Պ Ա Ր Ե Ր Գ Բ.

Աղկէկ իմ աղն ի՞նչ ընեմ.
 Վլոր իմ, մաղն ի՞նչ ընեմ,
 Էլլամ (*ելլել*) Տիներն ի՞չ է՛նիմ,
 Հո՛ն տեսնելու ես՛ր չունիմ:

Յարս ղարիպ երկիր թ,
 Աշխարհ ինձի հոս մութ ը,
 Էլին (*ուրիշին*) ծառնը ծաղկեր,
 Իմս՝ կարկուտնը գարկեր:

Աղկէկ կեսուր, խաթուն կեսուր,
 Քու ըս տղուդ խօսք մը հասցուր,
 Իս, (*գիս*) կը բողբ (*թողու*) կ'երթայ պառկի
 Մեծ ախոռին գուշին (*գամէշ*) մըսուր:

Մեր դուռը ձեր դռան դիմաց,
 Հերիք ենիմ աչօք իմաց,
 Ճեպիկըս խաշլըղ չը մընաց,
 Քոյուրբ քու օղուրդը գընաց:

Մեր տունը բակի կըլմանի,
 Մազերըս բագի կըլմանի,
 Անցաւ, գնաց սիրականըս
 Գիտես քի Պէկի կըլմանի,

Ռեհան ցանեցի, քեզ մը (*չուտ*) բուսցաւ
 Խապարըդ եկաւ ինձի հասաւ,
 Լսեցի որ կարգըւեր ես
 Գըլոխըդ երկի՛նք հասաւ:

Պատին քաղիկը կամ քիչ մը հեռու, զանազան խաղեր տեղի կ'ուենենան. պատերուն ստորտան ալ, պտուտները, ծերերը, կաղերը, կը պաղղին կռնակնին անոր սալով և պարն ու խաղերը դիտելու վայելքը կ'ուենենան:

Գիւղին մեծերը և անոնց կիները, նոյնպէս քան տարեկանէն վեր երիտասարդներ փոխադարձաբար ճաշի կը հրաւիրուին կարգով, ուր ժամելով կը նստին սեղանի առջեւ, Բարեկենդանի ուրախութիւնն ընելու: Վերը, տանիքներու վրայ պարն ու զանազան խաղերը, վարը, տուներու մէջ հիւրասիրուած ջոջերու և աչքի գարնու ճիւղան երիտասարդներուն երգերը ցնծալից կէնտուակ կեանքի մը երեւոյթը կուտան այդ օրերու մէջ գիւղի բնակիչներու, ամէնքն ալ երէկի հողն ու վիշտը մոռցած են, վաղուան ըլլալիքն ալ վաղուան ձգելով կ'ապրին այդ օրուան հաճոյքը, վայելքի կեանքը: ամէնուն երեսներուն վրայ ժպիտը կը տեսնուի, անտեսական տաղնապ, կառավարութեան տուրք, չեն կրնար խառվել բարեկենդանի իրենց ուրախութիւնն ու հրճուանքը:

Գիւղի պարը իր շատ տեսանքներն ունի, ամէնքն ալ ծանր կամ միջակ և կամ թեթեւ եղանակներ ունին, պարողներն ալ կը հետեւին անոնց համաչափ քայլերով և մարմնական շարժումներով, հնուանդ սովորութիւն մըն է, որ նշանուած մանչ ու աղջիկ միասին պարեն միայն քանի մը վայրկեան աղջիկին դէմքը ծածկելով բարակ և թափանցիկ շղարշով: Շաբաթ օրուան պարը ընդհանուր հանգամանք կ'առնէ անոր կը մտանակցին այր մարդերն ալ, գիւղին բոլոր տուներուն մեծերը իրենց կիներուն հետ միասին, պարին մէջն են, երկսեռ է այդ օրուան պարը, տարեցիներն ալ այդ հաճոյքէն չեն զրկուիր, անոնց պարե'րդ ալ երգել կուտան և կը հրճուին լսելով հեռուոր անցեալին ձայնը:

Պարտէզէն ո՛չ շատ հեռու տեղ մը, երիտասարդները սեղան կը պատրաստեն գիւղին մեծերուն համար, կէսօրուան ճաշը հոն ընելու: Այդ երկայն սեղանին շուրջը կապերաներ ու անոնց վրայ ալ պզտիկ տապասաններ կը դնեն բարձերով միասին: Պարին մէջէն կը հրաւիրեն մեծերը, դալ իրենց յատկացուած տեղերը նստելու, տանիքին վրայ ամէնէն առջեւն են: Արդէն նախապէս անոնց տուներէն բազմատեսակ կերակուրներ բերուած են հոն: Այդ օրուան կերակուրին տեսակները մեծաւ մտամբ մսեղէն են, որոնցմէ լաւագոյնն ու պատուականը, խորովուած ոչխարն է, բերանը կափարիչով մը գոցուած ու ծեփուած թոնիբէ մը կախուած: Նախ քան ոչխարին կախուելը թոնիբէն, անոր փորը կը լեցնեն համեմներով շաղուած պղլուր ու յետոյ զայն կը կարեն, թոնիբի կրակին վրայ կը կախեն մինչև որ կալմըի, ասոր կ'ըսեն խափամայ կամ պրիան: Ամէն ունեւոր տուն, Բարեկեն-

գանի Շարաթ օրը անպայման պիտի ունենայ այդ խորովումը ոչխոր-
 րը : Ճաշը կ'սկսի, գինիի գաւաթները կը պարպուին իրարու ետեւ, գը-
 լուխնին կը տաքնայ, կամաց կամաց, ձայները կը բարձրացնեն պո-
 աւալու սատիճան, սեղանին ծայրը, կամ մէջտեղը : Գիզոն (Գրիգոր)
 ու Կակոն (Կիրակոս) տաք խօսակցութեան մը կծիկը քսկած տասր,
 անոր, այգիին, կամ արտին կամ գոմէշին ու եզան գովքը կ'ընեն,
 ոմանք ալ գիւղին վերաբերեալ այլ և այլ բայց կարեւոր հարցերու
 մասին կործիքնին կը յայտնեն իրարու իրենց տաքցած գլուխներով,
 ուրիշ մըն ալ անդիէն գինիին գաւաթը ձեռքը բռնած, «աղբար, ըս
 օր ուրախութեան օրը, է՛դ խօսքերը պէյեցէք (պահել) մեծ պահքի
 երկուշարթի օրուան, կենդանութի՛ւն ձեզ» ըսելով կը խմէ, ասոր
 վրայ ամէնքն ալ կ'սթափին, գիտնալով որ Բարեկենդանի սահմանէն
 իրապէս դուրս ելած են «հախ ունիս, հախ, (իրաւունք) խմենք ձեր
 կենացը» կ'ըլլայ ամէնքին պատասխանը : Ու երբ սուներու կենդա-
 նիններուն կէս օրուան ձաշը տալով գործերնին աւարտած կ'ըլլան մի-
 այն գործով զբաղողները, կը հաւաքուին հոն, ուր մեծ պարը և մե-
 ծերուն սեղանը կայ, այդ պահուն, հոտ, գիւղացիներուն թիւը պէտք
 է ամբողջ ըլլայ, վասն զի գիւղացիներուն բարքերուն, կամ աւե-
 լի ճիշդը գիւղին օգտին համար օրուան Ռէսին ընելիքներուն վրայ
 յարմարցումը թատերախաղը պիտի սկսի : Թատերախաղը ներկա-
 յացնողը դատաւոր անունը կը կրէ, ու կ'ունենայ իր ոտիկանները,
 իր գրադիրները, ամէնքն ալ իրենց սատիճաններուն համեմատ զգեստ-
 ներ կը հագնին : Ներկայացման ժամանակը եկածին պէս, դատաւո-
 րը վայտաշէն ձիու մը վրայ հեծած՝ կը յաւաջանայ հոն, ուր կեղրո-
 նական պարը կայ և ուր գիւղին Ռէսը ու միւս մեծերը նստած ու-
 րախութիւն կ'ընեն : Կը յաւաջանայ ծա՛նր, ծա՛նր բայց խոժոռ ու
 դժնեայ կրեւոյթով մը : Անոր սուրհանգակ սատիկանները առջևէն
 կուգան ճամբայ բանալու լեցումը բազմութեան մէջէն : Երկու կող-
 մերն ու ետեւն ալ իր պահապան սատիկաններն ունի : Անոր կեանքին
 պաշտպանութիւն ընելու համար : Ամէնքն ալ ծպտուած են : Եթէ
 ձայներնին գիրենք չի մտանէ, կարելի չէ ձանչնալ անոնց ով ըլ-
 լալը : Դատ պիտի տեսնէ (*) դատաւորը : Դատը պիտի ըլլայ անկա-
 շառ ու անաշառ, դատուելիք տնձերը նախապէս ընտրած ու առած է :
 Քոյն են ստոնք, գլխաւորն ստոնցմէ, որպէս թէ գիւղին Ռէսն է :
 Միւսներն ալ գիւղին մեծերը : Այս նմանցումը կեղծ Ռէսը ու միւս
 կեղծ մեծերը քննուելէն յետոյ դատաւորէն, կը պատժուին, նոյն տեղ-
 ւոյն վրայ բարձրացումը ու ծայրերը իրարու միացումը կրկու հաս-
 փայտէ սանդուխներուն մէջտեղը նստեցնելով զանոնք մէկիկ, մէկիկ
 ձեռքերնին ալ շղթայուած : Բայց իրական Ռէսն ու մեծերն ալ դա-

(*) Դատ տեսնել = Դատաւարութիւն ընել :

տաւորին յանդիմանութենէն զերծ չեն կրնար մնալ:

Ատեանը կազմուած է ու դատաւորը իրեն յատկացուած բայց քիչ մը բարձրկեկ երկու բարձերու վրայ կը նստի, ճիշտ մեծերուն սեղանին մօտիկը, անոնց սուրնթեր: Այ սարն ու միւս բոլոր խաղերը կը դադարեցուին, վասնզի դատաւարութիւնը պիտի սկսի: Կը դադարի նաև հոն բողմող մեծերուն կերուխումն ալ: Դատաւորը եկած սեպելով ատենը, ատեանը կը բանայ և հրաման կուտայ որ կեղծ ուսը ատեան կանչուի. զայն անմիջապէս կը բերեն օստիկանները, և հարցաքննութիւնը կ'սկսի հրապարակաւ հետեւեալ հարցումներով, զորոնք երկու մասի բաժնած է դատաւորը, մէկը հանրային իսկ միւսը անհատական: Զաննք կը կարգայ դատաւորին գրագիրը և կոտարուած հարցաքննութիւնն ալ կ'արձանագրէ: Ամբաստանագիրը ձեռքն առնելով, դատաւորը կը հարցնէ ուսին. «զեզին աքիններուն (ցանքեր) նոր խորուճին (պահապան) ինչո՞ւ համար ընօրը օր (որ) հինը ելաւ չը բռնեցիր, տասը օր սողն (վերջ) բռնեցիր, օր դող կուրդոն ու Մրածոն, մօրը եղը (իւղ) գողցող Աւօենց Խուկ, ը՛տ խլուղները, օր Աատծու մալը, ժամուն մո՞՞ր գողնալը պողազնուն հարալ կ'էնեն, իրանց էճէրն (այժ) ու մաքինները՝ կովերն ու եզները, մութուն շաֆախը (արշալոյսին) չը բացուած, տարան սայպեցին (թոյլ տալ) խալխուն (ուրիշներուն) աքիններուն մէջ արծելով (արածել) շատ զարար զիան (մնաս) տուին, ու դուն ը՛տ շուներուն հախէն չէկար, գեղացիներուն էզած ըս զարար զիանը վէ՞վ (ով) պիտ տայ: Գեղին օրմաններն ըլ խորուճի շունեցան հազկէ (մինչեւ) հիմայ, Աեւ հատիկի օրմանն ըլ, Տըմըքին օրմանն ըլ, մընացին քրդերու ձեռքը, անտէր անտիրական, ուզածնուն խաստար (չափ) փատերը (փայտ) կըյրեցին (կտրել), թէ պիլա (մինչեւ անգամ) փատերուն, քուլի (ամէն) մոշաներուն (կտրնի) մրգիքները հանեցին, ալ խերը չը մընաց օրմաններուն, գեղին մուխը մարաւ (մարիլ), հարիր քեսայ զարար էզաւ գէղին, ըս զարարը վէ՞վ պիտ տայ, ուս: Դաշտին ջուրն ըլ քիչ էր հերու, բամպակը, լոպիկը, կտաւատը, կորեկը, խիարն ու կուլթան, ձմերուկն ու խավունը, կուշա ջուր չը խմեցին, ըս սապապով (պատճառով) շատ պակաս էզաւ գեղին մասուլը (բերքը) ը՛տ տարին, ինչո՞ւ ճայթ (ջանք) չէրիր ատոր համար խըյեանէթ (ապերախտ), չը գցէր (գացիր) ջրին ալը տեանայիր քի սապապը ի՞նչ է, օր գեղին ջրին փայը (բաժին) քիչը ու քրդուն փայը, շատ ը, ը՛տ զարարը՛ վէ՞վ պիտի տայ ուս: Էգիներու (այգի) պողպանչին (պահապան) ալ հախը թամամ, թամամ (ամբողջ տարեկանը) աուու, վա՛յ պապամ, վա՛յ, սապա՛պ, էյ զալը՛մ (անգութ) վէ՞վ չը լսեց օր ը՛տ շուն պողպանչին էգիներուն թամալը (հիմը) փորեց ըս տարի անձախ (հազիւ) վեց բեռ ունեցաւ, շահատով, իսպաթով վրան հախ եզաւ՝ (հաստատ-

ունեցաւ) ըստ շուքի, օր Մշօէնց խաղողը գողցաւ, Պզընենց խաղողը գողցաւ, Թազոսենց խաղողը գողցաւ... ո՛րը ըսիմ, ո՛րը թողի՛մ. ը՛տ խեղճերուն ի՛նչ խառար գարար էզաւ, դգալ մը ուսւղ շուքին օր ուտեն մասըմները (խեղճեր, գրկեալներ, անմեղներ), ինչո՞ւ համար ձէն (ձայն) չը հանեցիր ու ընոր հախը թամամ տուիր, ըստ խեղճերուն ու գեղին գարարը վէ՛ժ պիտ տայ աէս: Հը՛պը (հասպա) օխչարներուն, էծերուն չոպանը (հովիւ) ը՛ն ըլ իր թամամ հախն աւաւ, հէ՛չ (բնու) չըսիր ըստ շուքի չոպանին, ո՞ւր ը Մրատէնց էծն ու մաքին, ո՞ւր ը Մանուկանց օխչարն ու խոյը (խոյ) ո՞ւր ը գըռ (խուլ) Զարգարենց չափիճը (մատաղ այծ), տըհա (գես) չարե՞մ, մէկը գալը (գայլ) կերաւ, մէկըլները ինք կերաւ, նա փնտուցիր, նա ըլ հարցուցիր աէս, ու հախն ալ թամամ տուիր. ըստ գարարը վէ՛ժ պիտ տայ: Հերու, ամասը, գղիր Գողոյենց, մեծ Տէրաըրոնց ու Խորոզենց անուընին գողեր մտան, քուլլի (բոլոր) բաները սրբեցին տարան, աման, չաման (պղնձեղէն), եզ, կալ, էծ, մաքի, էչ, քուռակ, մինակ շընուըտիքը (շուներ) թողին, խեղճերը սեւ ճըլին վրայ նըստըցուցին, գեղը ահուղողի մէջ ձգեցին, ամէն գիշեր գո՛ղ, գո՛ղ, գո՛ղ, գուն ըս գիւղին աէսն էս, տարա չէրիր, հոգ չէրիր տը (թէ) գողեր կան, մուխաթ (զգուշութիւն) ըլլինք, ըսօր ինծի, վաղը քիզի կ՛ըլլի, մալերնիս կ՛երթայ, տալարնիս կ՛երթայ, օր մըլ՛ըկըր (եթէ) ըսցէ (այսպէս) նայմարաղըմ (ինչիս պէտք) էնինք նը, մեր կնկուըտիքն ըլ (կիներ) կ՛երթան, մեր ախշըտիքն ըլ (աղջիկներ) կ՛երթան: Գեղին աէսը, գեղին մէսուլն է (պատասխանատուն) ըստ բաներուն: Գուն էւաջուց (տաւջուընէ) տուշուըմիշ (խորհիլ) պիտ ըլլէիր, գեղին մէջ փաւք Ասծու (Ասածոյ) աժտարի պէս խուլաթով (ուժով) ճահիլներ (երիտասարդ) կան, ընոնցմէ քնի (քանի) հասը կանչէիր աւուգ գողաւուկ, մարդ մարդտանք թող խաղար շուքենար, բարձիգ վրայ պաւկողը պիլա (անգամ) թող չի գիտնար, ըսէիր, ամը (հրաման) ընէիր ընոնց օր գիշերը գեղին պոյպանութիւն (պահպանութիւն) ընէին, գողերուն ճամբաները բռնէին, սիրահ (զէնք) կայ, թֆանք (հրացան) կայ, թուը կայ, մութի՛ն կարելի էր օր գողերը ճասարաթ կնէին (համարձակէին) ու ըստ գարարը տային գեղին, ինչո՞ւ չէրիր աէս, ինչո՞ւ չի կանչեցիր գեղին տալանի (աւիւծ) պէս կարիճները, քովգ, աէս Հերու Հասան աղան, ըստ գալըմ մարդը գեղին շայնան էր, (բոլոր բերքերուն հաւաքիչը, այսինքն աստանորդողը) գեղը այրեց թափեց այդ խողի ճագը, թթին (թութ) ուշուըրը (տասնորդը) հարիրին իճճուն (յիսուն) աւաւ, պօսթան մը քուլլի ձմերուկով, խալուհուլ, խըյորով, կաւթայով, (վարունկին մէկ տեսակը երկայն ու աղեղնաձեւ) ըկըր ծախուէր անձախ (հաղիւ) հինգ հարիր զչ. կը բըռնէր, ը՛տ անիծածը, ը՛տ պօսթանէն իրէք հարիր զչ. ուշուըր աւաւ:

Հըպը էզիներս՞ւն ուշուրը, ինչ՞իսէ (որքան) սուղ կըյրեց (դին դրու) օ խապողն ըլ, օրթոան (որթը) ըլ, թուփերն (տերև) ըլ, ճղերն ըլ (ճիւղ) քուլլի ծախես տրկէն չէս կըրնար (կրնար) էլնէլ, ինչո՞ւ ըս շանը համար արզալ չի տու իր հուքուամթին (կառավարութեան) օր մուխամէմ ճամբէր (քննիչ) քննէր ըսօր կորայ (համեմատ) ուշուր տանէին, լաքին (բայց) չէրիր, ու թողիր օր ըս գազանին կըյրածը կըյրած ըլլի, կապածը՝ կապած:

Անհատական քննութեան կ'ըսկսի, որ հետեւեալն է՝ Տարի մը էլէլ էզու կուրդոէնց ու Մըքոէնց կուուրսուքը իրանց լարերուն (արտեր) սինտոներուն (տանման) վրայ, ըն (ան) կ'ըսէ օր դուն իմ սինտոն քակեր էս լարս գողցէր էս՝ ըն կ'ըսէ օր դուն, ու ըս սուպապով (պատճառով) իրարու հետ կը գզուըտին: Մամպակին (սէյ) շներուն սէս, ոէս, դուն կը լըսէս ըտոնց խաղքութիւնը սինտոներու վրայ, տանէիր հեարդ Մէլիք Արթոն, Մէլիք Տօնոն էրթայիք ըտոնց լարերը, չափէիք պարանով հախը հախին (իրաւունք) բերէիք օր խալըսէր, փրթէր էրթար, ընոնք ըլ, դուն ըլ, գեղն ըլ ըռահաթ (հանգիտ) կ'ըլլէիք (ըլլալ), ըս բանը քու շլլիթ (վիզիդ) պարտքըն էր, ոէս, Փախաթ չէրիր ոէս, չէրիր ժամուն էզիները, պողչաները տէրարանց Մրտօն քնի, քնի տարի կ'ընէ օր կ'ուտէ, տուէ՞ց հիտապ (հաշիւ), նա հիտապ, նա միտապ, ժամուն մալը ընի թող ուտէ, ու ըսդին ըլ (այս կողմը) մեր խեղճ տէր պապը, օտից տանն չունի (կօշիկ) բուճ չունի (գուլպայ), խեղճին օճախին մուխն ըլ կըյրեցիք, կը կնքէ, չի գայ, կը թողէ չի գայ, կը պաակէ չի գայ, պատրազ կէնէ չի գայ, մէկ կնուք, մէկ հախս բամպակ կըյրեցիք տարի մը էռաջ գիրով, իմզայով (ստորագրութիւնով) ըն ըլ չի տուին, մէկ պասկի համար չափ մը ցորեն (7 հոխա) կըյրեցիք, ընոր էլ կէսը տուին, կէսը չը տուին: Առտու իրիկուն ժամը կը բանայ, հիւանդ ըլլինք նը, կուգայ տեարան, նարեկ կը կարդայ, սրբութին կուտայ, մեռել կը թաղէ, ջուր կ'օրչնը, [օրհնել] դող կը կապը, ափսոն կէնը օճի, կորի, [կախիճ] ճմեռն ըլ մղի [մեզի] պառամութիւն կ'էնը, խեղճ տէր պապը անօթի մնայ ու տէրարանց Մրտօն ըլ ժամուն մալն ուտը, վայ պապամ վայ, գեղին մենծը պիտ ըլլիս ոէս, հըպը ինչո՞ւ կ'ըսէք տէրտէրը, դաշտ կ'երթայ, տէրտէրը լեռ կ'երթայ, տէրտէրը փատ կը կըրը իշով, թութ կը չորցնը, ցորէն, գարի կը հոսը ուլեր կառնը ու կը ծախը, ալիշ վերիշ կէնը, հախ ունի տէր պապան հախ, ոէս, գցէք տուայ [աղօթեցէք] էրէք օր մեր տէր պապան վիժտան ունի, [խեղճ] չը նը մեր ժամը հիմա գոց պիտ ըլլէր:

Ազնօէնց կակոն [կիրակոս] ըս քօւը [ցաւոտ աչք] ժամուն կօշնակին [կօշնակ] ճանը լսելուն պէս, իր եղն ու գոմէշը կը սայպէ խալխուն [ուրիշին] աքիններուն մէջ ու ինք ընոնց քով կը կենայ

ժամ կէնը [կ'աղօթը], խորոճին քնի, քնի հեղ ըտոր եզն ու գոմէշ-
 ները ձեռեց քչեց դուրս էրաց [ըրաւ] խալխաւն, աքիններուն մէջէն,
 Կակոյին երեսը թքաց օր խալխաւն ցորենները չ'արծը աղօթքը սա-
 պապ էնելով, ըս մարդը սուտ քրիստոնայ ը, մեր օրէնքը, մեր ժամը
 այլազգիներուն եւաջ խայտառակ կէնը, դրսէն քահանայ ներսէն սա-
 տանայ ք, ըտոր, ը'տ կեղտոտ մարդուն ինչո՞ւ ճաղա [պատիժ] մը
 չէ՞ս ի տար, ոչս : Վալժաւեար բանեցիք հերու, սա-
 նաթով [պայմանագիր] մէկ տարիի համար երկու չարէկ ցորնի, [մէկ
 չարէկը 406 հոխա կը կշռէ] 12 հոխա բամպակի, 15 բեռ [իշու] փա-
 աի, խեղճը ետլվար ետխար էղաւ, անձախ [հազիւ] իր հախաւն կէսը
 առաւ, հիմա նա կարդալու հալասա ունի [փափաք] նա աշկերաներու
 ըրախոտ [թուարանութիւն], գիր սորվեցնելու սիրտ ունի, շարական
 ըլ, գիրքն ըլ նազով աուզով կը կարդայ, մարդը հախ ունի, ըկըր
 ըսցէ էրթայ դրպոցն [վարժարան] ըլ, ժամն ըլ պիտ գոցուին, ոչս,
 ինչո՞ւ չէք ի տար, մարդուն հախը, [ձայներ ամէն կողմերէ, հախլի
 խօսք, հախլի խօսք]: Եւ այսպէս հարցումներուն շարքը կ'երկարի
 բոլոր մանրամասնութիւններով ուղղուած ոչսին որ իր պարտա-
 կանութիւնք չէ կատարած խղճմտօրէն իբրեւ պատասխանատու
 անձ :

Կեղծ ոչսը այդ հարցաքննութեան միջոցին, դատաւորին կողմէ
 իրեն եզած հարցումներուն պատասխանելու համար որքան որ ինք-
 զինքը արդարացնել կը ջանայ իր պաշտպանողականն ընելով չի կըր-
 նար սակայն, փան զի ինքնարդարացման փաստերը բաւարարութիւ
 չեն տար զինքը անաշաւօրէն դատող ստեանին, որուն ձեռքը մանա-
 լանդ ոչսը դատապարտելու և դայն իր պաշտօնէն հանելու տպա-
 ցոյցներ կան, շատ մը պարկեշտ և հաւատարիմ վկաներէ հաստատ-
 ւած: Քիչ մը դողար տանելէն յետոյ, տեսանը կը բացուի, դատա-
 ւորին գրագիրը ի լուր ժողովուրդին վճիւր կը կարդայ հետեւեալ
 խօսքերով: «Մեր գեղին լաւ տիրութիւն [պաշտպանութիւն] չի կըր-
 ցաւ էնել [ընել], շատ զարար գիւտն տուեց՝ գեղին, իմ
 մախքէմէս [դատարան] մահքիւմ [դատապարտեց] էրաց ըս ոչսը,
 ճաղա տուեց ըտոր [ատոր] ու հանեց ոչսութիւնէ, ըլ [ալ] ընի [անի-
 կա] մեր գեղին ոչսը չէ, զարար գիւտնը քուլլի [ամբողջ] պիտ տայ,
 մարքս [քանտ] պիտ էնիմ [ընել] ըս անկաւած նարտիվաններու վը-
 րայ [տանգուխ]: Վճիւր կարդալէն յետոյ, անմիջապէս ոչսին վրա-
 յէն կը հանեն մուզ տպան [որ անոր արուած է ընդհանուր ժողո-
 վուրդին հաւանութեամբը իբրեւ գիւղին ոչսին հանգաման-
 քը ցոյց տուող վերարկու, անկէ զատ գիւղին մէջ մուզ հաղ-
 նող չըլլար], և դայն ոստիկաններուն միջեւ սանդուղին վրայ
 կը նստեցնէ ի տես ժողովրդեան, յետոյ անոր խորհրդականները ի-

բարու ետեւ այդ պատիժը կը կրեն ձեւական խառութեամբ մը, որով
 մասամբ մը միայն գործողութեամբ կ'ըլլայ վճիւր, իսկ ուր, իր ան-
 հոգութեամբ գիւղացիներուն պատճառով բոլոր վնասները ապագա-
 յին հատուցանելու համար, երաշխաւորութիւն կուտայ: Անկէ վեր-
 ջըն է որ ազատ կը ձգուին ուսն ու իր պաշտօնակիցները: Այս
 գործնական բայց կենդանի պատկերը կը ներկայացուի տարին անգամ
 մը միայն, այդ ձեւին տակ, իբրեւ նախազգուշութիւն, որպէս զի օր-
 ւան ուսը և գիւղին մեծերը մանաւանդ, լու ու աչալուրջ կերպով
 հսկեն գիւղին ընդհանուր շահերուն վրայ: Գուցէ իրական ուսն ու
 գիւղին մեծերը քննադատութեան տեղի տուող աննշան բայց գիւղին
 վնաս բերող թերութիւններ գործած ըլլան իբրեւ մարդ, թերեւ
 ակամայօրէն, կամ անգիտակցաբար, հոգ, այդ խաղի ներկայացման
 ընթացքին, դատաւորէն ուղղակի պղտիկ յանդիմանութիւն մ'ալ կը
 լսեն անոնք բայց առանց նեղուելու, իրաւունք կուտան. սովորութիւն
 մըն է սա, ըստ որում, այդ օրուան պատշաճութեամբ մեծերը պէտք
 է որ ներողամիտ գտնուին փոքրերու այդ կարգի վարմունքներուն:
 Յետոյ դատաւորը կը մեծարուի մասնակցելու տանիքին վրայ մեծե-
 րուն սեղանի խնճոյքին, իբր պատիւ իրեն և գնահատանք իր պատ-
 կերալից խաղին: Թատերախաղը կը վերջանայ և պարն ու միւս
 խաղերը կ'սկսին: Բարեկենդանի օրերուն մէջ, գիւղացիները օրի-
 նակելի բարի սովորութիւն մ'ալ ունին, այսինքն. եթէ այդ տար-
 ւան մէջ տուն մը մահ ունեցած է, ու սուգի մէջ ըլլալով կ'ողբայ
 տակաւին իր սիրելիին անդառնալի կարուստը, անկէ հեռու կը պա-
 հեն պարերն ու խաղերը: Միեւնոյն ատեն առանց մխիթարութեան
 ալ չեն թողուր դայն նոյն իսկ այդ կերախումի օրերուն մէջ: Քա-
 հանան յաճախ կ'այցելէ հոն. կ'այցելեն նաեւ գիւղին ուսն ու ունե-
 ւորներ ազգայինները, առանց ճաշի ալ չեն թողուր երբեք այդ սգա-
 ւոր տունը, որուն դրան առջեւէն կամ անոր տանիքին վրայէն մա-
 նաւանդ զգուշանքի քայլերով կ'անցնին իբր յարգանք հանգուցելոյն և
 իբր ցաւակից այդ սգաւոր տան վիշտերուն: Գիւղացին շատ բնա-
 կան է որ իր սղքատն ալ կ'ունենայ: Բարեկենդանը դեռ չ'եկած,
 կը մտածեն սղքատներու մասին, հոգալով անոնց ալ Բարեկենդանի
 անհրաժեշտ պէտքը, անոնց սեղանն ալ չէն ու զարգարուն կ'ընեն
 նոյն օրերուն յարմարող կերակուրներով, անոնց մանչ ու աղջիկ գա-
 ւակներն ալ պարողներու մէջն են վայելուչ հազուատներով, գիւղին
 ունեւոր դասակարգի տիկիներուն կողմէ պատրաստուած: Անոր
 կողմն ու այժն արդէն առանց պաշարի չեն թողած, նոյնիսկ կալի ժա-
 մանակ, լեցուցած են այդ խեղճերուն մարտդները պաշարով, որպէս
 զի Բարեկենդանը ամէնուն համար, հաւասար ըլլայ: Այս ընկերա-
 կան բարձր գաղափարականը գիւղացիին սրտին, ու ուղեղին մէջ

արմատացած է աւանդաբար, այն գիւղացիին՝ որ տակաւին իր ան-
դին մէջ մնալով պատահութիւն կամ հարկադրանք չէ ունեցած անկէ
հեռանալու և շփուելու քաղաքկրթութիւն ըստած պիտակին հետ:

Բուն Բարեկենդանի կիրակի օրուան պարը իր խելայեղ ողե-
ւորութիւնը կ'ստանայ, գիտնալով որ իր վերջին օրն է, անոր հա-
մար Եղսոյ կամ Եղսա Սաթուհը իր ձայնին բոլոր ուժը թող կուտայ
իբրեւ զեկավարը այդ ստուարացած պարին, այնպէս որ մինչև մութ,
տակաւին անոր մերսնուչ երգերուն թրթուումները կը լսեն անոնք,
որ այլևս պարը կամ այլադան խաղերը ձգած մտած են իրենց տու-
ները:

Զ. ԳԼՈՒԽ

Մ Ե Ծ Պ Ա Ն Ք

Երկուշաբթի է, Մեծ Պահքը վերջ՝ տուած է այլևս հաճոյքի, կե-
րուխումի և զուարճութեան: Արշալոյսը ծագած է, աքաղաղները
վար իջած են իրենց թաւերէն հաւերով միասին, կը գոռան իրենց
կուկուլիկներով, իբր թէ Բարեկենդանի երգիչներն ըլլային անոնք,
ըսելու համար անեցիներուն, որ արթնան: Իրենց կերին, կուտին
ժամանակն է, հաւերը տան դուան վրայ հուաքուած զիրար կը ծե-
ծեն կտուցներով, կարծես գիտամար չարածըճիօրէն աղմուկներ կը
հանեն, որպէսզի անեցիները եթէ ո՛չ ամէնքը, գոնէ տանտիկինը
եղնէ անկողնէն, կ'սպասեն անոր երեւումին, բարակ գլուխնին կոխել
են դուան սողնակէն ներս, իրենց պզտիկ, բայց սուր ու պճխուն աչ-
քերով, տանտիկինը կը փնտռեն: Ախուէն ուրիշ կողկողազին ձայ-
ներ սկսած են հանել, նորածին հորթուկներն ու նախշուն փքրիկ
դաւնուկներն են անոնք, որոնք իրարու ետեւ անվերջանալիօրէն կը
բառաչեն ու կը մայեն, իբրեւ զարթուցիչներ անեցիներուն, է՛ն ալ
իբր քուակովը միասին իրենց անձուանի գոնչականութիւնով հետ եւած
են անոնց օրինակին: Բայց չեն արթնար: Վերջապէս անոնց այդ
աններդաշնակ երաժշտութենէն կէս մարած ձայն մը կը լսուի, «աղաք,
էլէք, ձաշք (կէս օր) էզէր է», կ'ըսէ, որոնք սակայն կէս արթուն
կէս քուն, ելնել չեն ուղեր: Ո՛չ սիրտ ունին, ո՛չ փոփաք: Աչքեր-

նուն հասարիչը դեռ ծանր է քունի մրտիէն : Յոգնած են անոնց
 բոլորին ալ մարմինները, կը յօրանջեն լայն, լայն բացուած բերան-
 ներով : Բարեկենդանի յողնեցուցիչ խողերուն, պարերուն, երգե-
 րուն, ցատկաուռքներուն աղղեցութիւնը դեռ թարմ է անոնց վրայ :
 Վերջապէս տանտիկինը աչքը կը բանայ « քա, ճաշք է էղեր արիմարդ
 (էրիկ մարդ) կ'ըսէ ամուսնոյն, որ արթնցած է արդէն իրմէ առաջ
 և չէ ուզեր իր կինը անհանգիստ ընել, ալ չ'սպասեր, կէս մը
 հագուած հագուստներով կ'երկննայ դէպի օձախը անթեղուած կրակը
 մոխիրին տակէն հանելու : Փայտն ու կշգուրը (չոր թրիք) կը շարէ
 կրակին վրայ, կը բռնկցնէ զայն, և ահա կրակը օձախէն իր կտրմիր
 ու կանաչ լեզուներով ու ճարձատիւններով կ'սկսի ամէնքն ալ դուրս
 թափել իրենց անկողիններէն : « Հայտէ հարս Մագոյ (Մարգրիտ) Աշ-
 խէն, Էղսոյ, Վարդոյ, Թէզ (չուտ), մեծ թանձիրան (կաթսան) բե-
 րէք, ամբնները պըտի վրացուին, (լուացուին) : Կաթսան կը դնեն
 բարձր օձախին վրայ ջուրով, եռացնելու համար զայն երէկի իւզոտ,
 մսոտ ամանները լուարու, այնպէս որ պահքը աւրող պղծող աղա մը,
 բիծ մը անգամ չի մնայ ամաններուն մէջն ու դուրսը : Ալ ամէնքն
 ալ տանտիկնոջ քովն են, որմէ հրահանգի կ'սպասեն իրենց ամէն մէ-
 կուն արուելիք գործերն ընելու : Ջուրը տաքցած է այլեւս, պնակ,
 տապակ, տիսէ, պուտուկ, սինի (սեղան պղինձէ) ամէնքը կը շարեն
 օձախին տուջեւ, տանտիկնոջ ձեռքին տակ : Կը լուայ զանոնք մէկիկ
 մէկիկ, ու յետոյ մոխիրով սրբել կուտայ քովիններուն : Աւարտելուն
 պէս այդ սրբուածքի գործը պնակներուն, կարգը իրենց կուգայ լը-
 ւացուելուն : Բազնիք չունի գիւղացին, անոր բազնիքը տանը գաւի-
 թըն է, ծածքի մը տակ, ուր ջուրը կը տաքցնեն կաթսաներուն մէջ :
 Հս'ն է տանտիկինը գարձեալ, նախ պղտիկները կը լողցնէ, յետոյ ա-
 մուրի աղաքը, օրիորդները, իսկ ամուսնացեալ այրերը իրենց կինե-
 րէն կը լուացուին : Ամէնէն վերջը կարգը կիններունն է լողանքին,
 կիները օձախին հետ միասին, կուտով ալ կը լուացուին, այս վերջինը
 ցեխ մըն է մոխրագոյն, զայն լեռներէն բերելով կը չորցնեն արեւին
 տակ գործածելու համար լողանքի միջոցին, որ պապղուն վայլ մը
 կուտայ կանանց մազերուն : Վերջապէս երկուշաբթին մաքրուելու
 օրն է, չէ՞ որ նոյն օրուան ժամուն (եկեղեցի) մէջ կարգացուած գիր-
 քը « Լուացարուք, Սրբեցարուք » կը յանձնարարէ : Այսպէս անոնք
 ո՛չ միայն կը հետեւին գիրքին տառական իմաստին միմիայն սրբելով
 իրենց մորթերնուն արտաքինը, այլ՝ անոր ակնարկած հոգեւոր գա-
 ղափարին, սրբելու համար իրենց ներքինն ալ : Մեծ Պահքի բոլոր
 օրերուն առտուան ու իրիկուան ժամերգութեանց մանաւանդ ներկայ
 կ'ըլլան անխափան մեծ մասամբ :

Մեծի Պահոց երկուշաբթի օրը կերակուր եփելու հոգ չեն ըներ :

Որովհետեւ ուսուցիչը ախորժակ չէ մնացեալ միմակ նօսք, թե-
 թեւ ու թթուաչ կորկոտ ապուրով մը կը բաւականանան: Բոլոր
 տուներուն մեծերը նախորդ իրիկուրնէ, սոխի մը բոլորակ կողերուն
 վրայ աքաղաղի եօթը փետուրներ անցընելով, ամուր կապով մը զայն
 կը կախեն իրենց միջնատան մէջտեղի կլոր երգիքէն (լուսա-
 մուտ) վար, սա ունի երկու բայց խորհրդաւոր պատճառներ: Առա-
 ջինը աքաղաղի եօթը փետուր, ո՛չ աւելի, ո՛չ պակաս. իսկապէս
 խորհրդաւոր թիւ, որ իբր թէ կը խորհրդանշէ ո՛յն աքաղաղին փետ-
 րազարդ թեւերուն զարնուիլը միայնուած անոր կուկուլիկու կանչին,
 որ կը յեշեցնէ Պետրոս Առաքեալին ուրացման պարագան: Երկրորդը,
 Մեծ Պահքի եօթը շաբաթները կը ներկայացնէ իբրեւ պահեցողու-
 թեան, ալօթքի, ինքնազստումի և ազաշխարութեան շաբաթներ:
 Մանաւանդ փոքր բայց շարածձի տղոց համար, բարի և խելօք
 կենայ կը հարկադրէ ան: Ի հարկին կ'ըսեն անոնց մեծերը
 «տղաք խելօք կեցէք էրգիքին խորիտլողը կը տեսնայ»: Տանը բոլոր
 անդամները այս երկու պատճառներուն ալ նշ սնակութիւնը պզտիկուց
 սովրած են, իրենց մեծերէն: Որքան նայելու ըլլան երգիքէն կախ-
 ուած զիրենք մեղքէն զգուշացնող և Առաքեալին ուրացման պարա-
 գան յեշեցնող այդ պատկերաւից տեսարանին, այնքան մեծ պահքը
 պիտի արժեցնեն իրենց տպրած բարոյական կեանքի արտայայ-
 տութիւններով, Եօթը փետուր, եօթը շաբաթ, ամէն մէկ շա-
 բաթ որ պակսի, մէկ, մէկ փետուր կը պակսեցնէ իրեն հետ: Մինչեւ
 Խթման շաբաթ իրիկուն մնացած մէկ հասն ալ, որ իր վերջալոյսի
 պահը կ'ապրի, պիտի փրթի հետեւեալ աւաւտ սոխին հետ միասին:

Ըսի թէ այդ կիները կ'զբաղին լուացքի, սրբուածքի կար-
 կրանութի և լսգանքի գործերով: Այրերն ալ իրենց զբա-
 ղումներն ունին այդ օրը: Մէկը ալօրը և անոր մասերը աչ-
 քէ կ'անցնէ գիտնալու համար թէ նորոգուելիք, կամ շինուելիք
 պէտք մը կ'ա՞յ: Միւսը բանն ու բրիչը, յօտոցն ու կացինը կը փոր-
 ձէ հասկնալու համար թէ երկաթագործին տանիլ հա՞րկ է: Այսպէս
 երկրագործական բոլոր գործիքները կը թափեն առջեւին և կ'ըզ-
 բաղին անոնցմով: Ուրիշը եզներն ու գոմէշները տարած է կալերը
 անոնց պուշտութիւնները, ցատկաւաւքները տեսնելու, որովհետեւ վաղը,
 Մարտ իննէն յետոյ, գաշտ պիտի երթան գարնան ցանքերն ընելու:

Տանը մեծն ալ, թանձր բայց ճերմակ թաղիքէ կլորակ գատիկը
 սև մետաքսեայ փոշիներով փաթթած՝ վայելուչ ձև մը տալով ա-
 նոր, զբոս է գլուխը, օճախին անկիւնը նստած կը նայի իր արալա-
 նի պէս կնոջ, որ թեւերը սթաթած տան գործերը կ'ընէ կրակի պէս՝
 հրամայելով միեւնոյն տանն բոլորին ալ, ընել տալու համար իրենց
 պատկանած գործերը: Այս ամէնուն ի տես, Սրգօ (Սարգիս) ամուսին

սիրտը հպարտութեամբ լեցուած կ'ըսէ իր կնոջը «Հալալ ըլլի քեզի հազածդ ըլ, կերած, խմածդ ըլ արսւանս', փառք քեզ Ասուած, փառք քեզ»։ Այս գովասանքներէն կինը աւելի քաջալերուած կ'արժեցնէ ինքզինքը իբրեւ լաւագոյն տանտիրիկինը իր պաշտած ամուսնոյն։ Սրգօ ամուսն ալ քարիմանը աւած, բուրդ կը մանէ, իրեն ու աղոցը գուլպաներ պատրաստելու համար, մանողն ալ հիւսողն ալ ինքն է, իրենն է այդ գործը, աղաքը վաղը գործի պիտի երթան, դաշտը կամ լեռը, այգին կամ պարտէզը։ Մինչեւ Մարտ ինը դուրսի գործը չ'ընէր գիւղացին, վամնզի այդ օրը նախապաշարուամով մը, ան նկատած է փոթորկայոյզ և արկածալից։ Այդ օրուան համար կ'աղօթեն գիւղացիները ըսելով «Ասուած ողորմի ջուրերու վրայ եղողներուն» այսինքն ծովու վրայ եղողներուն։ Զարմանալի է որ արագիւն ալ նոյն հաշիւը ընելով՝ մինչեւ որ Մարտ ինը չ'անցնի, իր այցը չի տար նախորդ տարիներու մէջ երկնասլաց բարտիներու վրայ իր պատրաստած բոյներուն։ Երեքշաբթի, կանուխ, գիշերանց, տանտիրիկինը տակաւին իր քունը լիովին չառած կ'ելնէ անկողնէն արթնցնելով Սրգոյ ամուսն ալ, իր ամուսինը։ Երկուքը միասին կ'իսազգեանելով օձախին երկու անկիւնները կը նստին դէմ դիմաց։ Անթեղուած կրակը կը բանան, ճրագը կը վառեն, իբր ազգարար նշան միւսներուն ելնելուն, և տհա՛, մէկը միւսին ետեւէն կը պատրաստուին ելնելու գալու հաւաքուելու օձախին շուրջը, անոնց քով։ Արդէն իրիկուընէ պատուիրուած են անոնք այդ օրուան գործին համար, կրկնելու պէտք չկայ, հաց պիտի եփուի բուելու համար եօթը շաբթուան, մինչեւ Զատիկ։

Երկայն փայտաչէն տաշար կը տեղաւորեն իր տեղը, ուր կը լեցնեն ջուրն ու ալիւրը իրենց ուզածին չափ, նաև թթխմորը տանտիրիկինին հրահանգին վրայ, անոր աչքերուն առջեւ։ Մագոն ու Եղսոն, բնութենէն օժտուած այդ կայտառ ու ուժեղ զոյգերը, ալիւրով բեռնաւորուած խմորը կը շաղեն սոթտուած թեւերով։ Երբեմն, իրենց այդ սիրած աշխատութեան արգելք կ'ըլլան անոնց օսկեզոյն մազերը զորս յաճախ կը նետեն կռնակնուն վրայ։ Խեղճ գեղջիուհիներ եթէ գիտնային որ օր մը իրենց քաղքենի քոյրերը իրենց պարգեւուած և իրենց շնորհքը աւելցնող մազերու տաղտուկէն պիտի ազատուէին սափրիչին մկրատին տակ, գուցէ իրենք ալ, այդ պահուն, խմոր շաղած միջոցին, մտածէին այդ ծանրութենէն թեթեւալ պղծելով իրենց այնքան շնորհալի գլուխներն։ Ինչ որ է, շարունակեմ, երբ հայսը պատրաստուած է այլ եւս կը դադրին շաղելէ, նոյն տակն անոր վրայ կը ծածկեն լաթերով որպէսզի խմորուի։ Արշալոյսը ծագելուն պէս, թոնիրը կը պատրաստեն, կաղնիի փայտեր կը լեցնեն անոր մէջ և կշգուր, եթէ

փայտ չունին, ու կը բռնկցնեն մինչեւ որ անոնք բոլորովին կայծե-
րու վերածուին: Յետոյ թոնիրին բերանն ու ծործը(*) կը գոցեն կա-
փարիչներով, որպէսզի կրակը լաւ մը նստի, մեղմանայ, ասոր չափն
ու ժամանակը շատ լաւ դիտէ, իր փորձառութեամբը, հասց եփող տան-
տիկինը, որ կը նստի թոնիրին մօտ: Հո՛ն են նաեւ հարսներն ու աղ-
ջիկներն ալ: Մէկը խմորը կը գնտէ եփուելիք հասցին համեմատ,
միւսը այդ գունտերը կը բանայ մասնաւոր յզկուն ու քառակուսի
սեղանի մը վրայ: Ուրիշը գոյն տանելով կուտայ հասց եփողին, որ
կ'աւնէ այդ բարակ բացուած լաւաչները մէկիկ մէկիկ, կը փակցնէ
թոնիրին կողերուն, եփելով զանոնք կը հանէ, ուրիշներ կը դնէ ա-
նոնց տեղը արագօրէն մինչեւ որ հասցը վերջանայ, կրակը չմարած:
Վասնզի եթէ այդ գործին արագութիւն չի տան անոնց վարժ ու ճարտիկ
ձեռքերը, խմորը դեռ չի լմնացած, կրակը իր ազդեցութիւնը կը կոր-
սնցնէ և ոյժ չունենար հասցը եփելու, ու մնացած հայան ալ մինչեւ որ
թոնիրը գործեալ տաքցուի չափէն աւելի կը խմորուի կամ կը թթուի:
Որպէսզի այս անպատեհութիւնները չ'ըլլան, արագ շարժելու ստի-
պումը կ'աւնենան: Ունեւոր գիւղացիին հասցը, գուտ ցորենի ալիւ-
րէ կը պատրաստուի, ո՛վ որ կերած է Բալուի գիւղերուն մաքուր
ցորենի հասցը, դիտէ թէ ի՞նչ համ ունի ան, մաւաւանդ թոնիրի
բարակ հասցը, ձերմակ՝ ձիւթի պէս, համեղ՝ ու անագարար, ուտելով՝
մարդուն ախորժակը կը բացուի:

Ամբողջ եփուած հասցերը կը փակն տանը մէջ կապերաներու վը-
րայ, որպէսզի լաւ մը չորնան անոնք, ու յետոյ կը հաւաքեն տեղա-
ւորելու համար մասնաւոր տեղ մը ուր մտնելին ո՛չ կը բորբոսի ո՛չ
ալ համը կը կորսնցնէ հակառակ այնքան երկար մնալուն:

Չորեքշաբթի և հինգշաբթի օրեր բամպակ կ'աղնեն: Աշնան
վերջին ամիսը աղնած են մէյմը ու մանածի վերածած: Մէկ մ'ալ
գարնան սառչին տանուն, այսինքն Մարտին, որպէսզի դաշտին գոր-
ծերը դեռ չ'սկսած աղնուած բամպակը մանեն, կամ եթէ բան մ'ալ
մնայ մանուելիք, տանտիկինը թող ալջ մնայ, արդէն առնն է ան,
մինչեւ Ապրիլի վերջերը կը լմնցնէ: Բամպակի մասին յատուկ գրե-
լիքս յաջորդիւ:

Մեծ Պահքին երկուշաբթին լուացքն ու սրբուածքն ըրին, երեք-
շաբթի հասցը եփեցին, չորեքշաբթի, հինգշաբթի բամպակ աղնեցին
գիւղի կիները, ուրբաթ ու շաբաթ, արդէն մտնէ մէկը իրեն յար-
մար գործն ունեցած է ու կ'զբաղի անով: Գիւղացին Մեծ Պահքի

(*) Թոնիրին վարի մասը բաց սեղ մը ունի, ի հարկին կը գո-
ցեն կամ կը բանան հաց եփած ատեն, ասոր ծործ անուր կուտան:

ն թիայն օրերը կ'ապրի ո՛չ միայն նիւթականին վրայ մտածելով,
 այլ նոյն իսկ կ'ապրի հողեւոր կեանքն ալ առանց օր մը պակաս
 թողելու իր ներկայութիւնը առտուան և իրիկուան ժամերգութեանց:
 Մեծով, պղտիկով եկեղեցին են, մինչև Մաղկազարդի իրիկուն: Ա-
 ւաք շաբթուն հինգշաբթին ալ մինչև Ս. Յարութեան մեռելոցին
 օրը: Անոնց աղօթքներուն մէջ ձեւականութիւն չկայ բնաւ, ինչ-
 պէս կը հաւատան, այնպէս ալ կ'աղօթեն, ջերմեռանդ են անոնք մե-
 ծով պղտիկով, այր թէ կին, միեւնոյն հոգին, միեւնոյն անկեղծու-
 թիւնը, միեւնոյն սրտացութիւնը կը յայտնեն իրենց նախնիքներուն
 պաշտած ու հաւատացած Աստուծուն: Իրենց հասկցած, ըմբռնած կը-
 րօնքը կոյս է մնացեր իրենց սրտերուն մէջ: Անոնք չունին նորա-
 ձեւութեան մոլութիւնը, կինը խենդեցնող մանաւանդ եկեղեցւոյ
 մէջ ինքզինքնին ցուցադրելու համար: Գիւղացի կինը եկեղեցւոյ
 մէջ զարդեղէն չ'ունենար վրան երբեք: Հոն կը նկատէ այդ կերպ
 ներկայութիւնը Աստուծոյ տաճարին մէջ, իբրև պարասիրութիւն,
 որ խաղալայրերու կը յարմարի: Անշնորհք կեցուածք չունի
 ան աղօթած ատեն: Իրարու հետ չեն խօսիր, այդ միջոցին եկեղեց-
 ւոյ մէջ փախուկ մը անգամ չի լսուիր անոնցմէ: Կ'աղօթեն մտամ-
 փոփ առանց աջ ու ձախ նայելու, այլ միայն՝ խորանին, դասին, ուր
 կը կատարուի ժամերգութիւնը: Գիւղի եկեղեցին պահած է իր հին
 սովորոյթը առանց թոյլ աալու որ Ֆէմինիզմը մուտ գանէ իր մէջ,
 կանանց տեղը վերնաստունն է: Խառն չեն աղօթեր անոնք եկեղեց-
 ւոյ մէջ, ժամերգութենէն վերջը Աւետարան համբուրելու ալ նա-
 խապատուութիւնը կանանց արուած չէ հոն... «Զի այր է գլուխ կը-
 նոջ»ը դեռ պահած է իր ազգեցութիւնը անոնց վրայ ու կը կատա-
 րուի անփոփոխ: Կոչնակէն առաջ, հոն, ժամուն գաւիթը կը լե-
 ցուին: Գիւղին Ռէսը, ունեւոր դասակարգը, միջակը, աղքատը, ծե-
 րը, պառաւը, երխաասարդն ու պատանին, ամէնքը, գրեթէ,
 քով քովի նստած մտիկ կ'ընեն օրուան նիւթերուն վրայ Տէր Պա-
 պային տուած բացատրութիւններուն (երջանիկ ժամանակներ): Եկե-
 ղեցւոյ ժամերգութեան աւարտումէն յետոյ, ժամուորները տուն կը
 դառնան բայց մտածելով, որո՞՞՞ւով, իրենց խղճմասնքնին արթնցը-
 նող աղօթքներուն, շարականներուն և երգերուն վրայ, «Տէր Ամե-
 նակալ կ'ըսուի, Արեւազալ կ'երգուի, Խաղաղական կ'ըսուի» կ'ըսեն
 գիտցողները իրենց տան անդամներուն առհասարակ: Մեծ Պահքի օ-
 րերը շատերը ծոմով կ'անցնեն, կարծես թէ ամենուն երեսներու վը-
 րայ ժպիտը տեղ չունի այլևս, մեղք ու սոսթ կը սեպեն անոր, որ
 տկամայ անխոհեմութիւնը կ'ունենայ պարերգ մը, կամ շարգի մը
 ըսելու դաշտէն և կամ այգիէն դարձին: Ո՛չ, ալ լռած են մարմի-
 նին հաճոյք ըմբռնելու տուող զուարճութեան տաւուրն ու զուռնան:

Հողեւոր կեանքն է անսնց օրուան կարգախօսը: Այս հողեւոր կեանքը իր բոլոր կանոնադրութեամբը կը շարունակուի մինչեւ Շաղկազարդին կիրակին, այդ օրերը իբրեւ սզօթքի, ծամապահութեան և ապաշխարութեան օրեր են: Շաղկազարդէն շարաթ մը առաջ, չարատախար ելնելու պատրաստութիւն կը տեսնեն, որ միայնակ տան վրայ շինուած է իբրեւ ամառուան բնակարան: Երան ալ չի պաակուիր, դուրսը կեանք կայ: Գարուն է, որուն դուռները բացած է Մարտ ամիսը: Ուսեւին, ծառերուն անհամբերը, իր կլոր ու կաշարածեւ սաղարթներէն վերածնունդի տւտումը տուած է գիւղացիներուն իի պզտիկ կանոն տերեւիկներովը: Նշենին ալ տեղ տեղ սկսած է նշաններ առ իր ճերմակ ծաղիկներով: Հարսնուկը, «կուժ կոյրուկ»ը (տեսակ մը ծաղիկ) բամպօսը (զանազան գոյներով գեղեցիկ ծաղիկ մըն է) մանիշակը, ալ լեցուցած են իրենց գեղեցկութեամբն ու զմայլելի հոտերով լեռները, գաշտերը, պարտէզները կը խնկաւէտեն Գիւղացիներ գուրս կ'ելնեն իրենց ձմեռուան թագասացներէն: Ո՞վ կ'ուզէ ներս մնալ: Կիները, մանուանդ մանկամօրդ կիները, ու աղջիկները գործի վրայ են: Չարատախը պիտի ձեփուի, եօթն օրէն հողիւ կը շորնայ ան: Շաղկախը կը պատրաստեն յատուկ, կաղձի [կաւ] մրեզով ու մերթ կենդանիներու քակորի ջուրով շաղկելով, որ քիչ մը կարմիր գոյն ունի: Գիւղէն բաւական հեռու է անոր տեղը, տարբեր է միւս հողերէն ան: Կարծր է, ուժեղ բացուկի կը կարօտի զայն իր կողերէն փորելու համար: Ունեւորը, էշերով տուն կը կրէ հախապէս պատրաստուած հողը, իսկ չ'ունեւորն ալ կը կրէ շաղկելով:

Չարատախին համար բաւող ձեփին չափը գիտեն անոնք. մանուանդ կիները, որոնք աչքէ կ'անցնեն կամ հաշիւ կ'ընեն բերուած հողը ու յետոյ քուլակներով (խովոյ) ջուր կը բերեն ու կը խառնեն հողին հետ: Անսնցմէ ուժովը երկաթեայ թիմ բռնած պատրաստուելիք ցեխը կը խառնէ, միւսներն ալ կը տրորեն իրենց կրանիթէ ոտքերով: Ու երբ այլեւս շաղկախը բաւական կը թանձրանայ տրորումէն ու խառնուելէն, անոր հետ կը խառնեն խիստ բարակ մրեզ, (յարդ) գարձեալ թիով, ոտքերով կը խառնեն, կը տրորեն զայն մինչեւ որ կպրածիւթի յատկութիւնը տան անոր և կամ մինչեւ որ ձեփուելու սատիճանին հասնի: Ծեփելու ստանը եկածին պէս, կին, աղջիկ կ'սկսին գործել: Նախ Չարատախին պատերը կը ձեփեն, մէկը շաղկախը պատին կը փակցնէ, միւսը այդ փակցուած ցեխը կը յարդարէ մարայով (որմնադիրի գործիք): Երբ պատերուն ձեփուիլը կ'աւարտի, կ'սկսին այնուհետեւ յատակը ձեփել: Մէկ, կամ երկու օր վերջը, երբ քիչ թէ շատ ցամքելու վրայ է ձեփը, զայն կը յղկեն, կը կոկեն մասնաւոր կլոր ու կոկ քարերով, կ'սպասեն մինչեւ

որ լաւ մը չորնայ ան: Անկէ յետոյ, ամբողջ պատերը կը ճերմըկ-
ցընեն ճերմակ հողով մը Չարտախին շքեղութիւն մը տալու համար:
Ծաղկազարդի շաբաթ օր, արդէն ձմեռուան տունը ձգած, վերը, Չար-
տախը կը կրուին այլեւս:

Չարմանալի սովորութիւն մ'ալ կայ Բալուի դանազան գիւ-
ղերուն մէջ, ա՛յն է թէ Ծաղկազարդի առաւօտ, տասնէն մին-
չեւ տասնիհինգ տարեկան տղաք, ուռենի, թէ բարաի, կար-
միր ներկով նախշուած, մէյ մէկ բիրեր ձեռքերնին առած, տանիք-
ներուն վրայ կամ փողոցներու մէջ, իրարու բիրերուն գիմացկութիւ-
նը կը փորձեն, այդ բիրերը կը կոչուին սրսէ չպուխ: Մէկը իր սրսէ
չպուխը կը կրթնցնէ պատի մը շեղակի, միւսը իր բիրովը կը դար-
նէ ուժգին անօր: Հարուածը մէկ անգամ պէտք է ըլլայ և փո-
խըն ի փոխ, մինչեւ որ անոնցմէ մէկը կտարի: Կտարուածը յաղթո-
ղին է, զայն կ'առնէ տուն կը տանի: Այսպէս մինչեւ իրիկուն տա-
նիքներուն վրայ, դուռներուն առջեւ, փողոցներուն մէջ, այդ սրսէ
չպուխներուն չախ չուխը կը լսուի: Այս տարօրինակ սո-
վորութեան նշանակութիւնը ըստ գիւղացիներուն, սա իմաս-
տը ունի, որպէս թէ անոնք կը խորհրդանշեն ա՛յն բիրերը, ո-
րոնցմով Հրեաները Յիսուսը ծեծեցին և ներկուեցան անոնք Անօր
Արիւնով: Իրենք ալ իբր թէ այդ բիրերը կը կտարեն բիրը բիրին
զարնելով, և անոնց կտորուանքը ամբողջութեամբ, ինամքով կը
պահեն մինչեւ Չատկուայ Ճրագալոյցի իրիկունը, այդ օրուան թանա-
պուրին տակ վառելու համար:

Ամէն տուն այդ իրիկուն իր սեղանին վրայ թանապուրը պիտի
ունենայ, զոր կը պատրաստեն թանով, ծեծուած ցորենով և դաղձով:
Ասիկա անհրաժեշտ կերակուրն է անոնց նոյնպէս՝ կարմիր հաւկիթը,
ուրիշ կերակուր չունի գիւղացին այդ իրիկուան համար ասոնցմէ
զատ:

Է . ՊԼՈՒԽ

Վ Ի Ճ Ա Կ Ը

Հ Ա Մ Բ Ա Ր Ձ ՈՒ Մ

Քննչապէս Հայաստանի կարգ մը տեղերու մէջ, նոյնպէս Բալուխի, մանուսեանդ գիւղերուն մէջ հինէն ի վեր սովորութիւն եղած է, որ Վիճակին օրը, այսինքն, հինգշաբթի, երկուսու բազմութիւն մը հաւաքուի գիւղէն դուրս ընդարձակ հրապարակի մը վրայ, ուր շատ մը խումբերու բաժնուած այդ բազմութիւնը զանազան խաղեր կը խաղայ, այսինքն, սրբեր, կովանաներ (չրջար), թելխաղ, երգ, ցատքել և ընչ։ Այս խաղացողներէն ոմանք տաւուլ, զուռնայի առջեւ կը խաղան, ոմանք ալ անոնցմէ քիչ մը հեռու սրնգածուներու քաղցրահնչիւն եղանակներու նախընտրութիւն ընելով իրենց սիրած խաղերը կը խաղան։ Այս խաղերը ոգեւորութեամբ կը շարունակուին մինչեւ կէս օր, ուր ժամու մը շափ կամ աւելի դադար կուտան ճաշելու, խմելու համար։ Անկէ յետոյ նորէն կը սկսին նոյն խաղերը շարունակել բուն բարեկենդանի շաբթուան մէջ եղած խաղերուն պէս։

Վիճակի օրուան բարձր նշանակութեան հանդէպ, իրենց մեծերէն յաջորդ սերունդներուն թողուած ստորուէ տարի յարգանքի ցնծութիւնն է, որ կ'արտայայտեն անոնք անմեղունակ զուարճութիւններով։ Առաջին օրուրնէ նախապէս իրենց մէջ որոշուած եօթը անչափահաս՝ հազիւ 13-14 տարեկան աղջիկներ մէկական հողէ փարչեր առնելով, կ'երթան եօթն աղբիւրներէ ջուր բերելու, նոյնպէս՝ եօթը տեսակ ծաղիկներու փունջեր, զորս առած կ'երթան ուղղակի եկեղեցի օրհնել տալու համար զանոնք քահանային։ Անկէ յետոյ կը վերադառնան գիւղ, և կը սկսին այդ օրհնուած ջուրերէն ու ծաղիկներէն մաս մաս քաշխել գիւղին բոլոր տուններուն, որոնք այդ ջուրը կը լեցնեն հարուելիք մածունին հետ խնոցիին մէջ, որպէս զի իրենց կաթն ու իւրը անսպառ ըլլայ ու ծաղիկներն ալ կը կերցնեն կաթնտու կենդանիներու և լծկան եղներուն։

Այս գործողութիւնը Վիճակին, նախորդ իրիկունը կ'ըլլայ։ Յաջորդ առաւօտ, արշալոյսը դեռ չծագած եկեղեցւոյ կոչնակին՝ ձայնը ընդոստ կ'արթնցնէ գիւղացի ժամուորները, որոնք կրօնասի-

րական ջերմ փոփոքներով, կ'աճասորեն երթալ եկեղեցի երդուած «Զարթիք»ին հասնելու : Նոյն ատեն, առջի իրիկուընէ եօթն աղբիւրներէ ջուր բերող եօթն աղջիկներն ալ իրենց ընկերացող հինգ աղջիկներու հետ, որպէս Տասներկու թիւը ամբողջացնողներ՝ կը հաւաքուին նախապէս իրենց տրամադրուած սենեակին մէջ, որոշելու համար իրենց ամէն մէկուն ընելիք գործը Վիճակին օրուան մէջ :

Նախ կը սկսին վիճակ ձգել որոշելու համար թէ իրենց ո՞ր մէկը կեղծ հարս պիտի ըլլայ, և ո՞ր մէկը այդ հարսին հետ պիտի պարէ իրենց այցելելիք տուներուն մէջ : Յետոյ, զանոնք խաղցնող դափը (տէֆ) ո՞վ պիտի զարնէ, որո՞նք պիտի երգեն փոխն ի փոխ, Վիճակին վերաբերեալ երգերը իրենց այցելած տուներուն մէջ, այդ տուներէն իրենց տրուած նուէրները, այսինքն, իւղ, հաւկիթ, աղ, պղլուր և շն, որո՞նք պիտի տանին լեցնելու համար զանոնք զատ, զատ ամաններու մէջ : Այս կարգադրութիւններն ընելէն յետոյ, սեմէնքն ալ կը պատրաստուին եկեղեցւոյ արարողութեան աւարտումէն վերջը գործը սկսելու : Ամէնքը միասին տան մը դռնէն ներս կը մտնեն, ուր կեղծ հարսը և իրենց հետ խաղացողը դափին առջեւ կը սկսին պարել ոգեւորուած ծեփծեփումներով զրեթէ տասը վայրկեանի չափ, անկէ յետոյ երգել կը սկսին անոնք, որոնք վիճակով որոշուած են : Երգուած երգերըը հետեւեալներն են :

Վիճակն եկեր (եկեր) մեր դուռը, օխ լե, լե, լե, լե, լե
 Եօթն աղբիւրէն ջուր կուզը (ե) օխ լե,
 Կարմիր կովուն եղ (իւղ) կուզը, օխ լե,
 Սեւ հաւուն հաւկիթ կուզը, օխ լե,
 Մեծ փեթկէն պղլուր կուզը, օխ լե,
 Պզտիկ փեթկէն աղ կուզը, օխ լե,

* * *

Հայտե, Եղսա ու Մագոյ (Մարգրիտ) օխ լե,
 Փարչեր դնեն մեր փիճին (ուս) օխ լե, լե,
 Էրթանի, Եռաջ (առաջ) կաթն աղբիւր օխ լե,
 Զուր լեցնեն մենի ընկե (անկե) օխ լե,
 Փարչերուն մեջ ու դառնան օխ լե,
 Էրթանի մեկ մըլ Տող աղբիւր, օխ լե,
 Ընկե Էրթանի Պաղ աղբիւր օխ լե,
 Քամուն աղբիւրն ըլ Էրթանի օխ լե,
 Սեւ հասիկի պաղ զուլալ օխ լե,

Ջուրն ըլ առնենք ու դառնանք օխ լե,
 էրթանք գեղին Մենձ աղբիրն օխ լե,
 Մեղրիկ ջուրն ըլ չի մառնանք (մոռնալ) օխ լե...:

*Դարձեալ ուրիշ տան մը մէջ նոյն երգին շարունակութիւնը կ'ը-
 նեն պակաս թողուած մասէն այսպէս,*

Եօթն ախշիկ էինք երեկ (երեկ) լե, լե հէյրան լե, լե,
 Եօթն աղբիրեն ջուր բերող լե, լե
 Տարինք ըս ջուրը Պապուն լե, լե
 Տեր պապն օրենեց (օրհնել) ըս ջուրը լե, լե
 Ու խնայեցինք Վիճակին լե, լե
 Ու սողը գցինք (լացինք) ամեն տուն լե, լե
 Օրենած ջուրեն մէյ մէկ քաս լե, լե
 Տուինք ընոնց (անոնց) որ խառնեն լե, լե
 Մաճունին հէս խնոցուն լե, լե
 Օր (որ) օրենուի, մաճունը լե, լե
 Օր եղն ընոր շաս ըլլի լե, լե


*Յետոյ, Վիճակին համար իրենց ըրած այս երգախառնն դաժտանալը-
 ներուն իբրև փոխարինութիւն, աղաչանք ու խնդրուածք կը դնեն
 իրենց նոր երգած երգերուն ձեւին մէջ, այսպէս, Վիճակ, միզի տուր
 լե, լե հէյրան լե, լե:*

Եօթը կտրին աղկեկուկ լե, լե, հէյրան լե, լե,
 Չնարի պոյ ունեցող, լե, լե
 Առնենք ելլանք սարերը լե, լե
 Պարենք մեկտեղ գօտիման (իրարու գոտին բռնած) լե, լե
 Սարեր, ձորեր քող խնսան լե, լե
 Մեր ձաներեն (ձայն) քանպուրայ լե, լե
 Ու շենցնենք մեր սներ լե, լե
 Վարենք, ցանենք մեր լարեր (արս) լե, լե
 Որ շան մեզի շաս բերբեր ելլն, լե, լե

*Իրենց բոլոր այցելած տուներուն մէջ այս երգերով ու խաղե-
 րով կը զուարճացնեն ամեցիները, որոնք հաճոյքով մտիկ ընելն
 վերջը, նուէրներով զանոնք ճամբու կը դնեն: Անանկ մը
 կարգադրած են որ մինչեւ կէս օր վերջանան տուներուն իրենց տը-
 ւած այցելութիւնները: Անկէ յետոյ դեռատի տաներկու, աղ-
 ջիկներու այդ խումբը կ'ուղղուի գէպի իրենց տրամադ-*

րութեան տակ դրուած սենեակը, ուր իրենց հաւաքած նուէրները
 տեղաւորած են: Չանոնք կարգի կը դնեն, այսինքն անոնց մէկ
 մասը տանելով կերակուր կ'եփեն կէս օրուան ճաշի համար: Կերա-
 կուրներն են ճաւարէ եղինձ խաւուրմայով կամ իւղով, և իւղով
 տապկուած հաւկիթ, ու սուպով առիտայ (հէլուայ): Կերակուրները
 պատրաստելէն յետոյ, կը հրաւիրեն քահանան տիրացուներով, նոյն-
 պէս՝ գիւղին չքաւոր աղքատները: Քահանան սեղանը օրհնելով կը
 ճաշեն հրաւիրեալները միասին իբրև հիւրերը տաներկու աղջիկ-
 ներուն:

Ճաշէն վերջը մնացած մասը հաւաքուած նուէրներուն, կուտան
 այդ աղքատներուն, որոնք հազար օրհնութիւններ կուտան այդ աղ-
 ջիկներուն, գիւղին, գիւղացիներուն, անոնց վար ու ցանքին, վա-
 տակին և ազգին, կը մեկնին անկէ ուրախ սրտով և նուէրներու
 ծանր պաշարով մը:



Ը. ԳՂՈՒԽ

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ւ Ի Ն

Ա.

Բ Ա Մ Պ Ա Կ Ը

Բամպակի մշակութեան համար դիւղացի հողագործը, առաջուրնէ իր արտերուն մէկ քանին կը յասկացնէ անոր, զանոնք նախորդ տարւոյն մէջ կը վարէ (հերկել) արօրով հինգ-վեց անգամներ: Ամէն մէկ հերկումէն յետոյ, տասը օր դադար կուտայ: Յաջորդ տարին ապրիլի եօթէն յետոյ, ցանուելիք բամպակին սերմը իր չափին համեմատ, տունին յասակին վրայ կը փռեն և անոր հետ կը խառնեն կենդանիներու քակորի անօսը լուծոյթ մը, զոր կը կերցնեն (ծծել առ) լաւ մը ցանուելիք բամպակին հաւնտերուն, մինչեւ որ այդ բոլոր սերմնահատիկները զայն ծծելով քիչ մը սւռին: Մէկ կամ երկու օր զանիկա այդ վիճակին մէջ պահելէն վերջը, զայն էշերուն վրայ բեռցնելով, կը տանին ցանելու՝ շարաթ մը տալով ուղղուած արտին մէջ: Վարպետ սերմնացանը ճերմակ քառակուսի առանին երկու ծայրերն ալ ձեռքով կը բռնէ, այնպէս որ պարկ մը կը ձեւացընէ, ուր սերմը լեցնելով կը կենայ արտին առաջին (*) կորին վրայ, այսինքն ծայրը, (կորին արտի բաժանում մըն է, որուն լայնութիւնը մերձաւորապէս չորս մէթր է) ու կ'սկսի ցանել իր աջ ձեռքով: Իր ափը իբրեւ չափ կը գործածէ: Երբ այդ կորին ցանելը կը լմնցնէ, կ'անցնի միւս կորին, մինչեւ որ ամբողջ արտը լմննայ: Սերմնացանին հետէն ալ մէկ, կամ աւելի արօրներով ցանուած կորիները կը վարեն: Ըվարները: Ուրիշ մըն ալ մէկ կողմէն այդ վարուածները ցաքելու գործը կ'ընէ զոյգ եզներով կամ գոմէշներով: Յաքելու գործողութիւնը քանի մը անգամներ կը կրկնեն, որպէսզի ան լաւ մը հարթուի, չունենալով ամենեւին իր վրայ ցցուածք մը բամպակի

(*) Ամբողջ արտը ցաքելէն վերջը, բահով ու թիով ցաքով կորսուած կորիները նորէն կը շկեն, որովհետեւ կորիները դիւրութիւն կուտան բամպակին արտը ուղղելու ժամանակ:

բոյսին ուղղածիդ ածուճը արգիլող: Յաքումով կը վերջանայ բամպակին ցանքը: Շարաթ մը կամ քիչ մը աւելի յետոյ, արտը կը կանաչնայ բամպակի բոյսերով, որոնք իրենց պղտիկ ծլած բայց երկու տերեւները իրենց կոկոններէն դուրս հանած, մանաւանդ աւոյգ ցցուածքով արեւը կ'ողջունեն և կ'սպասեն զիրենք խնամող ձեռքերու: Հետզհետէ կ'աճին, կը մեծնան ու կը զարգանան անոնք, որոնց հետ նաև կ'աճին իրենց թշնամի և իրենց կեանքին սպասնայող բազմատեսակ բոյսերն ալ: Կը վասնզուի անոնց ածուճը անպայման, եթէ ասեմին չի հասնին գիւղացի հարսն ու աղջիկը այդ վասնզէն ազատելու բամպակի բոյսերը:

Հողագործ գիւղացին, արդէն նախապէս աչքէ անցուցած է բամպակին արտը և աեսած անոր վնասող բոյսերուն աճիլն ալ հաւասարապէս զանանք ջնջելու ատենը և կամ սեպիլով հրամայած է իրեններուն, որ վազն իսկ երթան բամպակին արտը «քախանքի»: «Հայտէ հարսներ, տխըրներ, վողը հազրուեցէ՛ք (պատրաստ) թէզ (շուտ) դցէք, բամպակը քախանեցէք» կ'ըսէ անոնց. հրամանը չի կրկնուիր, քախանքին ատենը զիտէ գիւղացի հողագործը իր աւանդական փորձառութեամբը: Անիկա հողին, բոյսին, տունկին ու արեւին մարդն է դարձեր: Անոնց մասնագէտն է: Այսպէս, ատենը պէտք չէ որ անցնի քախանքին, զի խտտը կ'աճի ու կը զօրանայ բամպակէն աւելի և թոյլ չի տար որ բամպակը աճի:

«Քախանքը» կ'ընեն ուրազին նմանող քուլպայով (բրիչ). բայց բերանը աւելի նեղ ու կեռ է, անոր կոթն ալ՝ ուրազի կոթէն քիչ մը բարակ: Այս գործիքները առաջուրնէ շինել կուտան երկաթագործին: Երբ անոնց բոլորին ալ կոթերը կ'անցնեն, կը կանչեն հարսներն ու աղջիկները, որպէս զի իւրաքանչիւրը իր գործածելիք քուլպան նշանակէ: Այդպէս ամէնքն ալ նոյն ատեն կը զատեն իրենց գործածելիքը և անոր կոթին վրայ ալ նշաններ կը դնեն, մէկը միւսին հետ չշփոթելու համար, և «քախանքի» ատեն աս իմս է, այս քուկդ է չ'ըսուի:

Տունին մեծին հրամանին վրայ, առաուն կանուխ, արշալոյսը ծագելէ առաջ, ելած են ամէնքն ալ, մանաւանդ քախանքի գացող հարսներն ու աղջիկները: Տենդոտ գործունէութեան մէջ են անոնք այդ պահուն, պատրաստուած են, ամէն մէկը իր քուլպան ի ձեռին ունենալով: Զուարթ են անոնք, զի կը սիրեն քախանքը, անոր համար որ միասեռ են և ազատ կ'ըլլան բարձր խօսելու իրարու հետ և արատայայտուելու՝ իրենց փափաքին համաձայն: Ատկէ զատ գործն ալ կը սիրեն, ո՛չ թէ որովհետեւ չեն յոգնիր, այլ որովհետեւ փոշի չեն ունենար քախանքի պահուն: Քախանքի պղտիկ խուճըրը ճամբայ կ'ելնէ արտ երթալու: Ճամբու վրայ կը հանդիպին ուրիշ քու-

խանքուոր խուճբերու, որոնք կը կազմեն լաւական մեծկակ խուճբ
մը հարաներու և աղջիկներու: Անոնք իրենց ամէն մէկ բամպակին
արտը հասնելուն պէս իրենցմէ փորձառուն ու տարէցը, օրուան ճաշը
անկիւն մը տեղաւորելէն յետոյ, ալօթքը կ'ընէ Հայր մերն ըսելով,
գործի սկսելէ առաջ: Յետոյ իր աշխատակիցները կարգի կը դնէ
քախնուելիք արախն առաջին կորիին վրայ, ու կը սկսին գործել
նրբանուշ շարգին կամ պարերգն ալ անոր հետ միացնելով: Ամէն-
քըն ալ գլխիկոր և խոնարհած ծռած արախն վրայ կը գործեն: Այս
աշխատութիւնը կը շարունակեն այնքան ատեն, որքան ատեն որ չեն
լրացուցած բամպակին ամբողջ արտը: Քախանքի այս կանացի աշ-
խատութիւնը հինգ վեց անգամներ կը կրկնեն, մինչեւ որ գիւման
թէ բամպակի բոյսը այլեւս զօրացած ըլլալով կրնայ դիմադրել վը-
նասակար բոյսերուն: Քախանքի այս աշխատութեան հինգ վեց ան-
գամի կրկնութիւնները կ'ընեն տասն օր անգամ մը: Նոյնքան ան-
գամ ալ կը ջրեն: Ամէն քախանքէ տասն օր յետոյ ուղղուած տե-
ղի կ'ունենայ և մէկ երկու օր յետոյ կրկին կը քախնեն նոյն արտը
մէկ անգամ ուսգելէն վերջը, երբ արտը ցամքիլ կը սկսի, քա-
խանքը կը սկսի ինչպէս որ ըսի, մինչեւ որ այլեւս պէտք չի մնայ
երկու աշխատութեանց:

Յուլիսի մէջ բամպակի թուփերը կը բարձրանան իրենց ցողուն-
ներուն վրայ առանց ճիւղերու: Ասոր ալ հետքը գտած է գիւղացի
հողագործը, որպէսզի այդ ցողունները ճիւղեր ունենան, շաբաթը
անգամ մը գործեալ հարաներն ու աղջիկները այդ ամսուն մէջ կ'եր-
թան բամպակին արտը, անոր բոլոր բամպակի ցողուններուն գա-
գաթներուն ծայրերը կը կտրեն քշիկ մը: Այս աշխատութեան «բամ-
պակ կրտել» կ'ըսեն անոնք: Քանի մը անգամներ այս գործողու-
թիւնը կը կրկնեն: Եւ տասով արգարեւ բամպակը աւելի կ'ածի, ա-
ւելի շատ ճիւղեր կ'արձակէ և բերքը կ'ըլլայ աւելի աւատ: Եթէ
կրտումի գործողութիւնը չկատարուի բերքը նուազ կ'ըլլայ: Անկէ
մինչեւ օգոստոսի վերջը, ալ կը ձգեն գոյն իր վիճակին մէջ: Նոյն
ատեն բամպակը կը ծաղկի դեղին գոյնով, յետոյ ան կը վերածուի
կանաչ ու կ'ըր ընկոյզներու, որոնք կը բացուին արեւին տաք ճա-
ռագայթներուն տակ զարգարելով ամբողջ արտը իրենց սպիտակա-
գոյն խճէճներով (բացուած խողակ) ի մեծ ուրախութիւն գիւղացի
հողագործին:

Գիւղացի հողագործը Օգոստոսէն մինչեւ Սեպտեմբերի վերջը, իր
տարեկան աշխատութեան արդիւնքը, տուն կը բերէ, այսինքն, ցորե-
նը շիկոնը (կարմիր ցորեն), գարին՝ ոսպը, կառուտոր, շուշման,
քուշնան, Փիթը կլիբը, լուբիան և կորեկը: Ասոնց ամէնքն ալ
քաղելով սայլելու վրայ կը բեռնէ ու անոնց լծուած եղներով կամ

գամէջներով հետզհետէ զանոնք կը կրէ կալը, ուր կը կամնէ, կը թեզէ, կը հոսէ, կը մաքրէ, ու չափելով տասանորդի պաշտօնական (կուսակարական) հաւաքիչի ներկայութեան տուն կը տանի իր բաժինը, և անոնց յարգն ալ կրելով՝ կը լեցնէ մարագներու մէջ, իբրև ձմեռան պաշար՝ իր սաւարներուն:

Այգեկութն ալ կը վերջանայ այդ ամիսներուն մէջ: Վերջապէս, ամէն բան, կալէն, այգիէն, պարտէզէն տանը պղտիկ կամ մեծ շանմարաններուն, հողէ վեթակներուն, կարասներուն մէջ տեղաւորելէն յետոյ, կարգը կուգայ բամպակին հաւաքման, այսինքն քաղին: Հոկտեմբերին կիսուն, կամ Նոյեմբերի սկիզբը, գիւղին ընդհանուր բերքերուն տասանորդի հաւաքիչը (շայնան) գիւղին սէսին և ուրիշ փորձառու և վստահութիւն վայելող անձնաւորութեանց հետ, ինչպէս ուսով միւս բերքերուն համար, նոյնպէս հիմա, բամպակին արտերը կ'երթան, անոնց արժէքները գրահատելու: Գիւղացիները տար կ'ըսեն «բամպակ կըյրել», այսինքն կուսակարութեան կողմէն զրկուած շայնան բամպակի արտերուն արժէքները, իբն ընկերացոյ անձանց հետ գնահատելով՝ վերջնական համաձայնութիւնը գոյացուցած են իրենց միջև և պաշտօնական տեսրակն ալ ստորագրած են երկուստեք:

Համաձայնութեան լուրը խկոյն կը տարածուի գիւղին և շրջակայ քուրդ գիւղերուն մէջ: Վաղուրնէ սկսեալ գիւղի բնակիչներուն մեծ մասը բամպակին արտերը կը թափի բամպակաքաղը ընելու: Հո'ն են համեատուած էջերն ու եզներով լծուած սայլերը, որոնք ժողովուրդը խճէճները պիտի կրեն տուն իրենց վրայ բեռցուած լիփ լեցուն քուրճերով և սապօտներով: Հո'ն են գրացի և հեռուոր քուրդերու, նուա, խնձոր, ընկոյզ, տանձ, չամիչ, պոստեղ բամպակի հետ փոխանակողներ, և բամպակի մուրացողներ: Քուրդը լեռը տպրելուն համար, բամպակի մշակութիւն չի կրնար ընել: Իր տանը բամպակը կ'ուճենայ այդ միջոցներով: Գրեթէ անոնց մեծագոյն մասը հայ գիւղացիին չափ ու անկէ աւելի թերեւս կ'սպասէ բամպակաքաղին: Ոմանք զանազան միրգեր ծախելով, ոմանք ալ հայուն վեհանձն ու իր պապերէն ժառանգած բուղխ սրտին գիմելով՝ կ'ուճենան իրենց տան բամպակը: Գիւղացի հայ հողագործը իր խղճին գէմ կը նկատէ կալի վրայ իբն գիմողները պարտապ ճամբել առանց բան մը տալու անոնց:

Բամպակին քաղը երկու երեք շաբաթներ կը տեւէ: Կան բամպակ յանուած արտեր, որոնք աւելի զօրուոր ըլլալով՝ բամպակի տունկը առայգ և միշտ աճման մէջ կը պահեն և անոր խճէճները ուշ կը բացուին, մինչև որ սկսին բացուիլ, այլևս արևուն զօրութիւնն ալ մտամբ մը իր ուժը կը կորսնցնէ և բամպակին ընկոյզներուն քառորդ մասը կը մնայ չբացուած, որոնք կը մնան իրենց տունկե-

բուն վրայ կախուած: Ասոր համար, հարկ կ'ըլլայ սպասել մէկ երկու շաբաթ եւս, մինչեւ որ անոնք ալ բացուելով խճէճներու վերածուին: Իսկ եթէ այդ միջոցն ալ չբաւէ անոնց բացուելուն, այն ատեն այդպէս կանաչ վիճակի մէջ կը հաւաքեն բոլոր ընկոյզները բամպակին, մանաւանդ դեռ ցուրտը չեկած, տուն կը փոխադրեն, նախապէս տուն փոխադրուած խճէճներուն տեղէն, տարբեր տեղ մը լեցնելով զանոնք: Որոնցմէ մաս մը, ամէն օր տանիքը կը տանին ու կը փռեն պատերուն առջեւ արեւին տակ: Ասկէ դատ հոց եփուած ժամանակ տաք թոնիրին վրայ ալ կը լեցնեն այդ ընկոյզները, որոնք հետզհետէ տաքնալով արեւի և թոնիրի ջերմութենէն, ճերմակ բամպակը դուրս կ'ելնէ զինքը պարփակող կեղեւէն: Բայց այս վերջամասց և հետեւաբար արհեստական միջոցներով բացուած ընկոյզին բամպակը, արախն մէջ բացուած բամպակէն վար արժէք կ'ունենայ ընականօրէն՝ խիստ աչքառու տարբերութիւնով մը, անոր համար որ, ոչ աւաջինին ճերմակութիւնը, ոչ ալ անոր թելի երկայնութիւնը ունի ան:

Աւաջին տատիճանի խճէճները (խոզա) որ սկիզբէն քաղուած ու տուն փոխադրուած են, չոր են, և հետեւաբար զանոնք արեւելու պէտք չեն տեսներ: Միայն մաքրուելու պէտք ունին անոնք, ասոր համար ալ հնարած են ուռնիի խիստ բարակ ու ճկուն ճիւղերով հիւսուած գործիք մը, մէկ մէթրէն քիչ մը սւելի երկայնութեամբ, տակաւի նմանող բայց երկու ծայրերը քիչ մը նեղ խնոցիի նմանութեամբ: Այդ բարակ ու նեղկուկ երկու ծայրերուն մէջտեղերը, ծակեր թողուած են հիւսուած ատեն, որպէսզի այդ ծակերուն մէջէն զայն դարձնող ձողը անցուի: Այդ ձողն ալ հարկ է որ զինքը ճնշող ծանրութեան դիմանալու համար դոնէ թելի մը հաստութիւնն ունենայ: Յզկուած ու շիփ շխտակ այդ ձողը սապասէ գործիքին ծակերէն անցընելով լաւ մը կ'ամուրցնեն զանոնք իրարու հետ ու յետոյ կը դնեն զայն յատկապէս ասոր համար պատրաստուած և իրարու մերձաւոր երկու սիւներու զամուած փայտեայ յենարաններուն վրայ: Այս գործիքին անունը Չալխավու է: Մաքրուելիք խճէճները անոր մէջը, լեցնելով կը դարձնեն ձեռքով ոչ այնչափ արագ և կամ ծանր, այլ չափաւոր: Ամէն մէկ անգամին մաքրուելիք խճէճներուն չափը կամ կշիւր տանէն տանիինդ քաշ է գրեթէ: Կէս ժամէն աւելի խճէճներով լեցուած այս գործիքը կը դարձնեն չափաւոր արագութեամբ որպէսզի խճէճին վրայ գտնուած կամ անոր հետ փաթառուած բամպակի տունկերու չոր տերեւներու մանր մունր մասերը, հողին չոր ու անոնց կպչած փոշիները այլեւայլ նիւթերու աղտերն ու կեղտերը, այս չալխավուէն դուրս թափին դարձուած ատեն: Ահա այս

միջոցով կը մաքրեն բամբակին բոլոր խճէճները: Ատկէ զատ վերջն է որ կ'սկսին մաքրումները օրը օրին զատել իրենց չոր ու սուր կեղեւներէն: Այն տուները որ շատ բամբակ ունին, իրենց դրացիները, ծանօթները իրիկուները կը հրաւիրեն իրենց տուները խճէճփաշելու: Ասանայի և կամ ուրիշ տեղերու պէս, դրամով ընել չեն ստար այս գործը, գիւղացիին համար սավորութիւն եղած չէ դրամով իրարու օգնել:

Երբեմն կը պատահի այդ տուներուն մէջ քսան հողիներէ աւելի կ'ըլլան խճէճ փաշողները: Մինչեւ ժամը տասը տասնմէկ կը նստին անոնք այդ գործին համար: Քաշուելիք խճէճը հաւասարապէս կը բաժնեն ամէնուն, գիտնալու համար թէ անոնցմէ ո՞րը ձեռքի ճարպիկութիւն ունի իրեն տրուած աշխատանքի բաժինը շուտ լինցնելու: Այս պատճառաւ մրցումը կ'սկսի անոնց միջեւ ու բամբակը իր կեղեւէն ամբողջապէս զատելով՝ կ'աշխատին այդ տաշակալի գործէն:

Ըսի թէ տաշակալի գործ մըն է խճէճը իր կեղեւէն զատելու աշխատութիւնը գիւղացիին՝ մանաւանդ անոնց չարքաշ կիներուն համար: Արդարեւ հողագործական բոլոր աշխատութիւնները այնքան չեն զբաղեցներ գիւղի աշխատուորը, որքան զայն կ'զբաղեցնէ բամբակը: Մինչեւ որ անիկա թել ըլլայ, թելն ալ՝ կտաւ ու կտաւն ալ հագուատ, ինչէ՞ր կը փաշեն անոնք և անոնց կիները առաւելապէս: Սակայն հակառակ այս նեղացուցիչ երկար տան աշխատանքին, չեմ վարանիր ճշմարտութիւնը խոստովանիլ հոս, որ ան դարձեալ կը սիրէ հաշն ու հողագործութիւնը: Հանեցէք, փրցուցէք զայն հողին, առուակին, բոյսին, արօրի մածին ու բրիչին կառչումներէն, կը մեռնի ան և իրեն հետ կը մեռցնէ զանոնք և անոնց հետ հողագործութիւնն ալ: Ապրին, բնութեան օրհնեալ զաւակներն են անոնք, մաքուր և հարազատ: Անոնք կոշտ, բայց համբուրելի բազուկներն են, որ քաղքենի իրենց քոյրերուն պըշրասիրութիւնը կը յաշեցնեն, հասցնելով անոնց յաճախ նորաձեւութեան նիւթեր բամբակէն, և միւս կենսական նիւթերն ալ անոնց անյագ հեշտակեցութեան: Հո՛ս է որ գիւղին կիներն ու աղջիկը իրենց բնական բոլոր պարզութեամբ կը բարձրանան առանց չափազանցութեան, բարձրագոյն աստիճաններու, ըլլալով մեր հիացման աւարկան:

Գիւղի կիներ քրտնցնող աշխատանքին արժանի վերլուծումը կը թողում աւելի ձեռնհասներու, գառնալով ես իմ ըսելիքներու: Բամբակը գոտուած է իր կեղեւներէն և ամբարտուած տուներն մէկ անկիւնը, անիկա իր հունտերէն ալ պէտք է զատուի: Գիւղացին չունի գիտական արդի սիտէմներով հնարուած մեքենաներ, զատելու համար բամբակը իր հունտերէն, ինչպէս որ ունին Եւրոպայի և Ա-

մերիկայի հողագործները Հայ գիւղացիին այդ մասին ունեցած
 գործիքը, նահապետական դարերէ մնացած շատ պարզ գործիք
 մըն է «ճըրճը» կոչուած: Հետաքրքիր ընթերցողներուն ծա-
 աայութիւն մը մտաուղանելու համար, յանձն կ'առնեմ ճըր-
 ճըսին մասերը նկարագրելու: Անիկա կը բազկանայ ընկոյ-
 գի և կամ կաղնի փայտէ հինգ մասերէ, որք են՝ պտտուան-
 դան մը, երկու սաքեր, լող մը, թեւ մը և իլ մը: Պտտուան-
 դանին երկայնութիւնն է 50 սանդիւմ, լայնութիւնը 30, իսկ սաք-
 րութիւնը 10. սաքերուն երկայնութիւնը 10 սանդիւմ, լայնութիւնը
 10, իսկ թանձրութիւնը 5 սանդիւմ է: Պտտուանդանին երկու ծայ-
 րերէն 5-6 սանդիւմ ներսէն կը փորէ դուրով ստաղձագործը, ծակեր
 քանալու համար, որպէսզի անոնց մէջ սաքերը անցուելով՝ ամուր-
 ցուին: Յետոյ սաքերուն ալ երկու ծայրերէն 5-6 սանդիւմ վար կ-
 ղերքէ երէն քանի մը սանդիւմ ներսէն կը փորէ դուրով, քանալով
 անցքեր ներսի կողմէն մինչեւ դուրսի կողմը: Պտտուանդանին փոր-
 ուած քներուն մէջ անցուելիք և ամուրցուելիք այդ սաքերուն փոր-
 ուած ու անցքեր բացուած տեղերուն մէջ յղկուած ու կոկուած
 փայտեր կը շարուին իրարու վրայ իբրև ճըրճըսին իրանը. իրա-
 րու վրայ շարուած այդ փայտերը, սաքերուն վերի մասերէն գրեթէ
 10 սանդիւմ վար են: Այդ ստաղ սանդիւմ պարսաղ միջոցը, լողին հո-
 մար է, որ պիտի նստի այդ շարուած փայտերուն վրայ ամուր մը:
 Կողը կաղնիի աղնիւ տեսակէն է, զոր ստաղձագործը ճախարակէն ան-
 ցընելով պտտրաստած է, «խմորի օխլովուին» ձեւն ունի ան: Անոր
 հաստութիւնը 35 սանդիւմ երկայնութեան վրայ 3 սանդիւմէթր արամա-
 գիծ ունի. ստոր երկու ծայրերը 5 սանդիւմ բարակցուած են, մանուսանդ
 աջ կողմինը որ կոթն է, և որ ճըրճըսին աջ սաքէն դուրս պիտի
 մնայ որպէսզի անոր հետ միացուի զինքը դարձնող թեւը: Այս լողին
 յատկութիւնը կակուղ է, անոր վրայ խաւ խաւ, խիտ փոքրիկ, բայց
 շատ խիտ շերտեր կան: Բանեցնելով զայն, քանի մաշի, այնքան
 դուրս կ'ելնեն այդ շերտիկները: Անկէ վերջը այդ լողին վրայ կը
 գնեն պողպատեայ կամ մաքուր երկաթէ շինուած իլը, որ գրեթէ
 50 սանդիւմ երկայնութիւն և մասի շափ ալ հաստութիւն ունի:
 Ատոր ալ երկու ծայրերը բարակ են իր մէջքէն: Մէկ ծայրը տափակ
 է ու ծակուած, և լողին վրայէն ճըրճըսին ճախ սաքէն դուրս պի-
 տի մնայ փայտեայ անիւէն՝ ճախարակին մէջտեղը ազուցուե-
 լու համար: Իսկ միւս ծայրն ալ լողին աջ կողմի սաքէն դուրս պի-
 տի ելնէ, կամ՝ անոր հաւասար: Ահա, այս է բամպակը իր հունտե-
 րէն զատող գիւղացիին ճըրճըս մեքենան: Ամէն մէկ ճըրճըսի կրնայ
 այդ գործիքը շաղկելով հեռու տեղեր տանիլ: Շատ բամպակ ունե-
 ցող տուներուն մէջ 4-5 հաս ճըրճըս դարձնողներ կարգով կը նստին

իրենց այդ գործիքներուն առջեւ ու բամբակը ձախ ձեռքով կը բռնեն լողին ու իլին մէջտեղ ու աջով ալ ճըրճըռին թեւը, որ լողին կոթին հետ ամուրջուած է, կը դարձնեն, նոյն ստեն զտուած բամբակը մեր պզտիկ մեքենային ետին կը դիզուի, իսկ հունտերն ալ անոր առջեւ կը թափին ճըրճըռճին գողին մէջ:

Իայց չմոռնա՛մ ըսելու, որ այդ գործիքին երկու ոտքերուն մէջ ուր լողն ու իլը իրենց ծայրերը իրարու միացուցած են, հոն իլին ու լողին միջեւ քուրջի մէջ ծրարած ու ջուրը չձգուած օձառ կը դնեն, որպէսզի անոր վրայ իլն ու լողը սահելով դիւրին դառնան և չյոգնեցնեն ճըրճըռը դարձնող գործաւորը: Ծըրճըռճին նախ բամբակը լու մը կը ձաղկէ ձաղկով և յետոյ կ'սկսի կթնել, [կուտը զատել բամբակէն] (*):

Գիւղացիներէն մէկ շատ աննշան մասն է որ իր սեփական հողը ունի և որ կրնայ ի հարկին իր արտերէն երեք չորս հատ յատկացնել բամբակի մշակութեան ամէն մէկ տարուան համար: Եթէ բամբակի բերքը չի ստուի մարտիսէն, թրթուրէն որեւէ մէկ տարի, ու ամէնէն բեղուն արդիւնքը տայ, հողատէր հողագործը, նոյն արտերէն առնուազն՝ իբրեւ դուա հասոյթ, մօտաւորապէս կ'ունենայ 6-700 հոխա բամբակ իւրաքանչիւր տարի: Ասոնցմէ կառավարութեան բաժինը և իր տունին համար գործածուելիք մասը հանելով՝ մնացածը կը ծախէ երբ յարմար գինը ձեռք բերել կարենայ: Իսկ այն հողագործը որ սեփական հող չունի ու մարտական է հողատէրերու, չի կրնար աւամադրելի բամբակ ունենալ ծախելու համար: Վասնզի իր ցանած բամբակին տարեկան հասոյթին կէսը, անոր կը թողու: Մնացած կէս բաժինէն, տասանորդն ալ պիտի տայ կառավարութեան, տունին համար գործածուելիք ու զանազան ծախքերն ալ մնացածէն պիտի հանէ: Հապա եթէ բամբակի վրայ ալ, բամբակը չքաղած, կանխաւ դրամական փոխառութիւն ըրած է վաշխառուներէ, այդ ստեն գրեթէ բան մը չի մնաք անոր ձեռքը՝ կամ եթէ մնայ ալ, շատ ոչինչ քանակութիւն մը պիտի ըլլայ որ հողիւ պիտի բաւէ անոր տարեկան խավուրմային, տղին, օձառին, կօշիկին, խոփին, արօրին և հագուստներու ներկերուն: Անոր ունեցած առաւելագոյն շահը բամբակի կուտն է, զոր կը կերցնէ ձմեռ ստեն իր արջառներուն, որոնց մսուրներու մէջ գրուած կերին համեմատ, մէկ երկու տի կուտ կը դրուի: Մասնաւոր լծկան գոմէշներու և եզներու, կթան մատակներու ու կօտերու միշտ կուտան բամբակի կուտերէն: Տաւարներուն համար պատուական կերակուր մըն է ան, գիրցնող ու կաթը առատացնող:

(*) Այս գործաւորին կթող (կսնող) ալ կ'ըսեն:

Առաջին տարիձանի բամպակին խճէճը իր մեծութեամբը կը զանազանուի միւսներէն արտին մէջ բացուած միջոցին: Բամպակին աշխիւ տեսակն է ան, զոր մէկիկ մէկիկ կը գտան խճէճներուն մէջէն ու կը լեցնեն զանոնք մասնաւոր տեղ մը, ու յետոյ անոնց բամպակը կը յատկացնեն իրենց ասրեկան հագուստներուն և անոր հունարն ալ իբր ցանուելիք տերմ կը պահեն յաջորդ տարուան համար: Գիւղացիին զբաղումը բամպակին հետ, կը շարունակուի գրեթէ մինչև Ս. Սարգիս: Բամպակը, հունար, խճէճին կեղևը, այլևս տեղաւորած կ'ըլլան իրենց յատկացուած տեղերուն մէջ, ծախուելիք մասն ալ առնին մէկ անկիւնը քնելով կը կազապարեն զայն ծանր տարկաներով, այսինքն քարերով ճնշելով: Տունին համար մաս մը բամպակ աղնած են ձմեռուան սկիզբը՝ հարսներուն միջոցու, հազիւ պզտիկ մաս մը մնացած է աշնուած բամպակէն, զոր պիտի լրացնեն մեծ պահոց առաջին շարթուան մէջ, գիւղացի տանտիկինին ու հարսներուն ժիր ու առկան ձեռքերը: Անոնք, տան համար դաշձեալ բամպակ պիտի աղնեն երբ առջի մասը կը լմնայ: Մարտին սկիզբը կ'ըլլայ այդ աշխատութիւնը առ հասարակ, գրեթէ մեծ պահոց առաջին շարթուան, ինչպէս ըսի վերը:

Բամպակ աղնելու գործիքը պարզ աղեղ մըն է^(*), մէկ երկու կամ աւելի կիներ, բայց վարժուած և գորաւոր, կը նստին մէկ կարգի վրայ քով քովի, ամէն մէկը իր աղեղը ձեռքը ունենալով կ'սկսին աղնել բամպակը: Աղնուած մասը չափազանց նուրբ պիտի ըլլայ, այնպէս որ անոր մէջ բնաւ չպիտի մնայ կամ տեսնուի չաղնուած խիտ աննշան մասնիկ մը, որ վրիւշտ ըլլայ աղու նոյններու աչքերէն: Եթէ անոնցմէ մէկը պատահի որ այնքան կարեւորութիւն չտայ բամպակին տանտիկինը անմիջապէս կը յանդիմանէ զայն՝ աղնուածը կրկին աղնել կ'ուսայ անոր: Տանտիկինը իրաւունք ունի, անոր համար որ, նուրբ չաղնուած բամպակին, մանուելիք մանածին թելը բարա՛լ ու միատեսակ չըլլար և գործուած կտուռն ալ բնակահարար նոյն արդիւնքը պիտի տայ, այսինքն կտուռին մէկ տեղը հաստ

(*) Աղեղին երկու ծայրերէն կապուած է ոչխարի աղիքէն շինուած բարակ լար մը: Բամպակ աղնողը աջովը աղեղը կը բռնէ որուն սակէն դեպի լայնփին, երկնցող մինչեւ անոր լարը, նպսովը միասին, եւ ձախովն ալ բամպակը աղնող աղեղին լարին կը զարնէ 15 սանդիս քշագծով կլորցուած փայտեայ գործիքով մը, զոր անոնք «չափ» կամ աղնփառ կ'անուանեն:

մէկ տեղը բարակ, կոշտ բան մը պիտի ըլլայ: Աս է պատճառը որ անոնք որքան կարելի է կը ջանան բամպակը լաւ ու մաքուր պահել:

Անոնց ամէն մէկուն առջեւ, մէկ մէկ ազջիկ կամ հարս կը նըստին սեննաշով իրենց առջեւ զատ զատ յղկուն, կըտրակ սեղաններ, որոնց վրայ աղնուած բամպակէն մաս մը կ'առնեն ու բարակ ճարտին վրայ փաթթելով 25-30 սանթիմ երկայնութեամբ պատրոյգներու կը վերածեն ու յետոյ զանոնք մաշկը մէջ իրարու վրայ կը դիպեն: Ուրիշներն ալ այդ դիպուած պատրոյգներէն ութէն տաս հասը իրարու հետ պլորելով հանգոյց մը կը շինեն: Անոնց կ'ըսեն «բամպակի քուլայ»: Անկէ յետոյ կարգը կուգայ զայն մանածի վերածելու ճախարակին (Ջայր):

Բամպակը մանածի վերածող գործարան չունի հոյ գիւղացին: Անոր գործարանը իր պապերէն մնացած իրրեւ նաւիրական ժառանգութիւն, պարզ, անձեւ ջանքովն է, որ բարդ մեքենականութիւն մը չէ: Մանածին այս կոշտ ու տձեւ, բայց հին պատկանական փոքրիկ գործիքը կը բաղկանայ քանի մը փայտի պարզ մասերէ, այսինքն պատուանդան մը 1.30 մէթր երկայնութեամբ և հինգ սանդիմ թանձրութեամբ և 15 սանդիմ լայնութեամբ (պատուանդանն ալ նոյնչափ լայն է): Ասոր երկու ծայրերէն 5-6 սանդիմ ներսօք 10 սանդիմ տրամագծով կըտր ծակեր բացուած են, ասոնց մէջ անցուած են գրեթէ 50սանդիմ սանդիմ երկայնութեամբ և մերձաւորապէս 5 սանդիմ տրամագծով ուղղաձիգ երկու սիւներ: Աս երկու սիւներուն ներսի երեսներուն վրայ իրենց գլուխներէն 8-10 սանդիմ վար ճիշտ իրարու դէմ դիմաց կըտր ծակեր բացուած են, որոնց մէջ կ'անցուի ճախարակուած գրեթէ 2 սանդիմ տրամագծով յղկուած, կըտր ձող մը, ասոր վրայ անցուած է տափակ այսինքն տասը սանդիմ թանձրութեամբ, նոյնքան լայնութեամբ ու երկայնութեամբ կոճղ մը: Յետոյ այդ կոճղին երկու երեսներուն վրայ միացուած են մեծ կըտր երկու տախտակներ, այնպէս որ մէկ տախտակը մէկ սիւնին կողմը կ'իյնայ, միւսը՝ միւս սիւնին: Եւ ասիկա՝ կ'ըլլայ անիւը ջանքակին որ իբրեւ լծակ կը ծառայէ: Յետոյ ջանքակին աջ կողմէն տասը սանդիմ դուրս երկընցող ձողին ծայրին վրայ անցուած է բութակ մը (բանակ):

Այս բութակին վրայ, և անոր ուղղահայեաց, մանիչը, իսկ միւս ծայրը, երկու ձողերու վրայ հաստատուած է ճաղը, որուն անցուած է 10 սանդիմէթր երկայնութեամբ, եղջիւրէ պտուտակ մը պուքրայ անուռով: Ահա այս է Ջայրը որուն պատկերը կը տեսնուի բառարանին մէջ:

Քիւղացի կիւր ձմեռուան երկայն գիշերները շատ կը սիրէ : Անոր համար որ, լաւ պատեհութիւն մըն է իրեն, ճրագի լոյսին սակ մանուանդ ջահրակին առջեւը նստիլ, հանգարտ ու խաղաղիկ բաճապակին քուլաները մանածի վերածել : Անոր մանած թելը երբ շարունակ ճաղին վրայ փաթթուելով շատնայ, զայն կը կծկէ կարծաւին վրայ : Անոր մէկ կտտ կ'ըսեն անոնք : Կան կիներ, որոնք իրենց ձեռքի տրագութեամբ էն լաւ բարակ մանածէն, օրական երկու կտտ երեք կտտ կը մանեն : Գուցէ չորս կտտ ալ : Չորս կտտին մէկ «բանա» կ'ըսեն անոնք :

Մանուելիք մանածը երեք տեսակ յատկութիւն պէտք է որ ունենայ, բարակ, միջակ և հաստ : Բարակ տեսակէն ինչպէս որ ըսի, օրական երկուքէն մինչեւ չորս կտտ մանած կը մանէ գիւղացի վարժ կիւր : Միջակէն, չորսէն գրեթէ վեց կտտ, իսկ հաստ տեսակէն, վեցէն մինչեւ եօթը ութը կտտ կրնայ մանել եթէ շարունակ նստի ան ջահրակին առջեւ : Բարակ մանածին մեծ մասը զանազան գոյներով ներկել կուտան ու յետոյ զայն կտաւի կը վերածեն կանանց հագուստներուն համար, այդ կերպ կտաւը «խատ» կ'անուանեն : Միջակ տեսակէն մանածն ալ այր մարգոց համար է, իսկ հաստ տեսակը՝ անկողիներու, զոգնոցներու համար : Մանածը երբ նուրբ ու լաւ ալորում ըլլայ, մանուանդ կոկիկ ու հարթ, շատ կը յարգուի անոնց մէջ և անոր մանողին անունն ալ, բերնէ բերան շրջան կ'ընէ իրենց մէջ, և այդ գովասանքէն ու գնահատութենէն աչքի զարնուելիք փառասիրութիւն մը և անմեղ հպարտութիւն մը կ'ունենայ ան, իբրեւ լաւագոյն մանող մը գիւղի կիներուն մէջ : Վերջապէս այդ բարակ մանածէն գործում խատ ըսում կտաւէն կիները ոչ միայն իրենց հագուստ կը կարեն, այլ շատ անգամ հարս ըլլալիք օրիորդին համար պատրաստուելիք օտիտին մէկ մասն ալ անկէ կը կարեն, այդ ներկուելիք մանածին ներկի գոյները իրենք կ'որոշեն իրենց ճաշակին համեմատ, ու ներկել կուտան : Այս գոյները քանի մը տեսակներէ կը բաղկանան, այսինքն կարմիր (տորոն) կապոյտ, կանաչ, գեղին տեւ, թուխ ևն., մանածը ներկուելէն վերջը զայն կշուելով կուտան սատոյնանկին գործուելիք խատին օրինակովը միասին, ան ալ զայն աւնելով (*) շրէզի լուծոյթին մէջ կը թանայ, կը ձմռէ ու թեւերուն վրայ անցնելով արագ ու ամուր կը դարձնէ որ լաւ մը ծծէ ան շը-

(*) Հեճիք օրեզին մեջ քանալու, մասուրաներուն վրայ կծկելու, զանոնք տասանադին վրայ օտելու եւլնի մասին պիտի գրեմ իրենց կարգին :

բէլին մածուցիկ հիւթը, ու յետոյ, կաթը կ'անջնէ հաղուկին վրայ կծկելու համար մասուրաներու վրայ ջահրակով: Ոստայնանկը գոյ- նըզգոյն մասուրաները կը շարէ գործիքին վրայ ու կը հենէ հենքը: Այս գործուած խատէն կլիներ իրենց հասակին հասկամտ երկայն պատ- մուճաններ (զպուէն) կը կտրեն, որոնց վրայէն ալ ծոպեր կը կտայն երկու տեղերէ, այնպէս որ ծոպին մէկ մասը զպուէնը հագնող կնոջ առջեւ, գօտիին վրայ կուզայ, իսկ միւս մասին՝ իսկ եր- կու ծայրերն ալ տնոնց քովերէն երկնցած կը հասնին մինչև անոնց ոտքերը:

Ծոպը կը հիւսեն գիւղի կիները ընտիր բուրդէ, իլիկով մանուած բարակ թելերով. ա՛ս ալ կը ներկեն զանազան բայց անջնջելի դոյ- ներով. ասոր լայնութիւնը գրեթէ չորս սանդիւմ է, երկու մէթր երկայնութիւն ունի մերձաւորապէս: Գիւղացի կիներուն ու աղջիկներուն մէջքի ու կուրծքի աչքի զարնող զարդն է ծոպը, որ ձեւ ու վայելչութիւն կուտայ խատէ զպուէնին վը- րայ կապուելով: Ըսի թէ բամպակին բարակ մանածը կանանց հա- գուսաներուն համար է. այս պատճառաւ լաւ հող ու խնամք կը տանին անոր նրբութեան, կակիկութեան: Երբ այլևս բամպակը մանածի կը վերածեն, կաթերը մէկ մէկ բանա (կապ) ընելով կը տեղաւորեն իրենց յատկացուած ամաններուն մէջ: Շատ մը տուներու մէջ արդէն անոնք ունին իրենց ոստայնանկը ու կտուի փոքրիկ գործարանը. զոր հոս կ'անուանեն: Անոնք կտաւ գործողին կ'ըսեն «հոր գոր- ծող»: Այս հորը, բաւական միտք կը չարչարէ կտաւը մաքուր ու յաջող կերպով արտադրելու համար:

Հորը պատրաստած տանն, վարպետ հոս շափողը անոր բո- լոր գործիքները իր առջեւը կ'ունենայ. ու յետոյ, ոստայնան- կին հատած տեղին և անոր կաթնելիք պատին առջեւ գրեթէ 60 սանդիւմ երկայնութեամբ 30 սանդիւմ լայնութեամբ ու 40-45 սանդիւմ խորութեամբ հորը փորել կուտայ. ասոր առաջին մասը, այսինքն սկիզբը, ուր ոստայնանկը կը նստի, երկու եղերքներ ունի աջ ու ձախ. իրարմէ գրեթէ մէկ մէթր հեռու. այդ երկու ե- զերքներուն վրայ 40 սանդիւմ երկայնութեամբ, հաստ բայց յղկուած ցիցեր կը զարնէ. ցիցերուն գլուխներէն 4-5 սանդիւմ վա- րօք լայն ու կլոր ծակեր բացուած են իբրև յենարաններ գոր- ծուելիք կտաւը իրեն վրայ փաթտող սալմինին, որ գրեթէ 40 սան- դիւմ շրջագիծով գլան մըն է, յղկուած ու ծայրէ ծայր իրարմէ 15ական սանդիւմ հեռու, չորս երեսներու բաժանումով, ծիրանի փայտ մըն է մէկ մէթր երկայնութեամբ:

Այս սալմինին աջ կողմը 5 սանդիւմ ներսէն չորս հատ զիրար

խաչածեւող կլոր ծակեր կը բանան անոր չորս երեսներուն վրայ, որպէսզի անոնց մէջ անցուի 50 սանդիւմ երկայնութեամբ և 20 սանդիւմ շրջագծով բանակը, ասիկա, հետզհետէ գործուած կառուը մաս մաս սալմինին վրայ փաթաւելու կը ծառայէ:

Փորուած հորին սկիզբի մասին երկու կողմերուն վրայ զարնուած այդ հաստ ցիցերուն մէջ սալմինը դնելէ յետոյ, հոր չափող վարպետը հորին մէջ, բայց անոր սկիզբը իրարու տալնիթեր 30 սնդ. երկայնութեամբ երկու ցիցեր ևս կը զարնէ գեանին մէջ 25 սնդ. խորութեամբ, այնպէս որ անոնք սասայնանկին կրունկներուն դպին: Այս երկու ցիցերուն տմէն մէկուն գլուխէն զատ, զատ երկաթեայ բարակ շղթաներ կ'անցնեն և կամ կանեփանիւս հաստատուն չունեներուն կը կապեն երկու հաստ կտկուած հաստատուն տախտակներ, իբր պատուանդաններ սասայնանկին ստ.քերուն:

Այս տախտակները իրենց կապերովը կ'երկարին մինչև հորին ծայրը: Այս երկու տախտակներուն իւրաքանչիւրին ծայրերուն մէջ տեղերէն մէկ-մէկ ծակեր կը բանան, որոնց մէջերէն ալ երկաթեայ շղթաներ անցնելու համար, որպէսզի անոնք զատ զատ անցուին հորին լայնքին հաւասարող երկու հաստ տակուն, տափակցուած փայտեայ ցուպիկներուն վրայ ծակուած ծակերուն մէջ:

Յետոյ, հորին երկայնքին ծայրի երկու կողմերուն վրայ, իրարու դէմ դիմաց երկու ցիցեր ևս կը զարնէ վարպետը, որոնց երկայնութիւնն է 50 սնդ. և թանձրութիւնը՝ 10 սնդ., այնպէս որ անոնց 25 սանդիւմը գեանին մէջ կ'ամրացուի, 25 սանդիւմն ալ գեանէն բարձր կը մնայ, և որոնց իրարմէ հեռաւորութիւնը գրեթէ 60 սանդիւմ է, այսինքն հորին լայնքը, ուր այդ երկու ցիցերը զարնուած են:

Այս երկու ցիցերուն գլուխները երկու մասերու բաժնած են 5 տկան սնդ. վարձք հաւասար փորուածքով, որպէսզի անոնց մէջ գլուխի իրենց լայնքին հաւասար 6 սնդ. թանձր և 8 սնդ. լայնութեամբ տափակ ու յզկուն փայտը, որ բարավար անունով կը կոչուի հան: Այս բարավարը սալմինէն գրեթէ 10 սնդ. բարձր կը մնայ: Սալմինին ու բարավարին մէջտեղը կը մնան սասայնանց ցուպիկները, այնպէս որ ի հարկին, սասայնանկը իր նստած տեղէն կրնայ իր ձեռքերը հասցնել հենքին թելերը շակելու կամ կտրած ուէ մէկ թելը կապելու (պատրուակ) համար: Այս բարարին ետև գրեթէ 5 սնդ. հեռու և իր ցիցերուն երկու կողմերուն վրայ 5 տկան սնդ. անոնցմէ գուրս, 20 տկան սնդ. երկայնութեամբ երկու հաստ հաստատուն ցիցեր կը զարնէ իրարու դէմ դիմաց հորին լայնքին վրայ 15 սնդ. խորութեամբ գեանին մէջ:

Գեանէն վեր մնացած երկու կողմերուն վրայ եզող այդ երկու ցիցերուն փորուած գլուխներուն մէջ կ'անցնեն գրեթէ մէկ մէթր երկայնութեամբ և 30 սնդ. շրջագծով կլորուած ձող մը, յետոյ այդ ձողին երկու ծայրերուն մէջ 8 սնդ. երկայն երկու փոքրիկ, բայց յզկուած սիւնակներ կ'ամրացնեն, որպէսզի անոնց մէջ անցուին 50 սնդ. երկայնութեամբ փորտեայ երկու թեւեր, այդ երկու թեւերուն ծայրերը, որոնք աֆային պիտի միացուին, մէկ շարքի վրայ քով քովի 3, 4 փոքրիկ ծակեր կ'անենան իբրև օդակ աֆային երկու

ծայրի ճաղերուն : Այդ երկու թեւերը իրեն միացնող մէկ մէթրի չափ երկայն այս ճաղիկին «փերկել» կ'ըսեն անոնք փերկելը, թեւերը և տփանը կը կապուին իրարու հետ ճաղերով և գամերով, այս երեք առարկաներուն միացումովն է որ կարելի կ'ընէ սասայնանկին կտու հիւսելը :

Յետոյ ձեղունէն երկուսկան զոյգ հաստատուն և կանտիփահիւս շուաններ կը կախեն ուղղակի հորին կուրծքին վրայ, որոնց երկու զոյգը տփային համար են, իսկ միւս երկուքը, տփային ետին կեցող աղբին ճպտաներուն : տփային շուաններուն մէկ զոյգը կը կապուի անոր մէկ ուսին վրայ անցում օղակին հետ : միւս զոյգը, միւս օղակին հետ :

Ձեղունէն կախուած այս չորս զոյգ շուանները իրարմէ գրեթէ 40 սմ. հեռու կը կապէ վարպետը ձեղունին երկու կողմերուն վրայ զարնուած գամերուն հետ, ճիշդ իրարու դէմ :

Աղբին պատկանող երկու զոյգ շուաններուն երկու ծայրերովը կը կապէ 4 սմ. երկայնութեամբ և մէկ սմ. շրջագծով յղկուած ցուպիկ մը, որուն երկու կողմերուն վրայ 10սկան սմ. ներսօք մէկ մէկ հաս փոքրիկ և ելուէջ ընող ճախարակներ, կամ իրենց բաւով (ճնճղուկներ) կ'անցնէ. այդ անցում տեղերուն վրայ, աղբին ճպտաներուն շուանները կը ձգուին :

Այս կախուած շուաններն ալ չափելով ու հաշուելով կ'ընէ վարպետը, որպէսզի անոնք ուղիղ համեմատութիւններ ունենան իրենց հետ յարաբերութիւն ունեցող մասերուն, այսինքն ետ ու առաջ չըպիտի ըլլան մէկը միւսէն դէպի աղբը, տփան ու սալմինը :

Յետոյ, վարպետը ներքինակին երկու ցիցերը կը զարնէ, որ սալմինէն գրեթէ երկուքուկէս մէթր վար է, բալասարին ետեւը, ան ալ 60 սմ. երկայնութիւն ունի, և 10 սմ. շրջագծով կ'ընդունուած յղկուն փայտ մըն է, որուն երկու ծայրերը բարակցուցած են ցիցերուն մէջ անցուելու համար, այս ցիցերը սալմինին ցիցերուն երկայնութիւնն ունին, անոր համար որ կտուը գործուած ստեն, ամբողջ ուժը ասոր, սալմինին և վերնակին վրան է :

Տփան մաքուր տեսակէն ծիրանի փայտ մըն է : Անոր գագաթին երկու երեաները ստիակ են, բայց գագաթը սրածայր գրեթէ զմբէթածիւ է : Անոր երկայնութիւնը մերձաւորապէս 110 սմ. է, իր երկու ծայրերուն վրայ քչիկ մը դէպի վեր ծուած երկաթեայ բարակ ճաղեր դամուած են, անցուելու համար փարկեալին թեւերուն վրայ ծակուած յարմար գայիք ծակերուն մէջ : Տփային միացող վարի մասն ալ միւսնայն փայտէն է իրեն հաւասար երկայնութեամբ, իրարու միացում այս երկու գործիքներուն ճիշդ մէջ տեղերէն, մինչև իրենց ծայրերը սղոցին բերնին չափ նեղ, բայց ուղիղ ու բարակ անցք մը բացուած է իրեւ տեղ, հոն դրուելիք սայրին (սանար) :

Տփային ու իրեն միացում տակի գործիքին երկու ծայրերէն գրեթէ չորս սանդիմ ներսօք ճիշդ իրարու դէմ դիմաց, չորս սանդիմ լայնութեամբ ծակեր բացուած են այդ ամէն մէկ կողմի ծակե-

րուն մէջերէն, վերէն վար անոնց լայնքին համեմատ, յղկուած փոք-
 րիկ պարզուածակներ (սողնակ) անցուած են. և անոնց վրայէն ու մին-
 չեւ տակէն ալ, (այսինքն տֆային ու իրեն միացուած տակի գործի-
 քին) բարակ և օղակաւոր կաշիով մը ամրացուած է, որպէսզի անոնց
 միջեւ անցուած կառու հիւսող սամարը չի շարժի տեղէն ուստայնանկին
 աշխատած միջոցին: Տֆային չափն ալ սալմինէն կ'առնէ վարպե-
 տը. երկուքին աջ ու ձախ կողմերը բարակ լարով կը չափէ. եթէ
 անոնց աջ կողմերը իրենց ձախին հաւասար չ'ըլլան, այսինքն եթէ
 տֆային աջ կողմը, սալմինին մօտ ըլլայ. ձախ կողմին հաւասարե-
 լու համար այդ կողմի ձեղունէն կախուած չուանները ետ, կամ ա-
 ռաջ կը բերէ որպէսզի անոնց երկու կողմերն ալ հաւասար գոն
 սալմինին. յետոյ, անոնց իրարու հակառակ անկիւնները կը չափէ,
 սալմինին աջ կողմէն լարը կը բռնէ և լարին միւս ծայրն ալ կը
 բռնէ տֆային ձախ թեւին զամուած ձողին սկիզբը, նոյնը կ'ը-
 նէ հակառակ կողմը. եթէ իրարմէ տարբերին անոնց չափերը, սալմի-
 նին սեւէ կողմէն հեռու մնացած կողմը կը մօտեցուի անոր ձեղունէն:
 Տֆային գաղտնի ալ կը չափուի սալմինին անկիւններէն, տարբե-
 րութիւնը կը չափէ վարպետը դարձեալ ձեղունին չուաններովը, զորս,
 կամ առաջ կամ ետ և կամ դէպի սալմինին հակառակ անկիւնը կը
 բերէ: Կառուը գործուած միջոցին, ուստայնանկին նստած տեղէն մին-
 չեւ իր աջ ձեւքին հասած տեղւոյն վրայ, 20 սանդիւմ շրջագծով և
 30 սանդիւմ երկայնութեամբ ցից մը կը զարնէ. որուն վրայ կանէ-
 փահիւս հաստատուելու և կօթը մեթրի չափ երկայն չուանը կ'անցը-
 նէ չուանին երկայնութիւնը անոր համար է որ, ուստայնանկին
 հորին մէջ նստած տեղէն սկսեալ հենքին հետ կապուած պիտի բարձ-
 րանայ մինչեւ անոր գլխուն վերեւ ձեղունին զամուած վերնակը.
 ու անկէ ալ շրջուելով վար պիտի գայ տֆային ու ազրուած
 ձալտաներուն երկու կողմերուն հետ կապուելիք ձեղունէն կախուած
 չուաններուն մէջ տեղերէն անցնելով հասնի մինչեւ ներքինակը,
 ու անկէ ալ մինչեւ սալմինը: Վարպետը այս երկայն չուանին գոր-
 ծածութեան համար, ցից մը եւս կը զարնէ, այս ցիցն ալ միւսին
 չափ հաստ ու երկայն է, բայց երկճղի է, վարպետը կը զարնէ
 զայն. ուստայնանկին նստած տեղին ճիշտ ետեւը այնպէս որ, անոր
 մէկ ճիւղը գետնին մէջ կը մխուի, միւսը՝ պատին մէջ, հազիւ այդ
 ցիցին գլուխը չորս հինգ սանդիւմ վեր կը մնայ գետնին, անոր գը-
 լուխին տակը գրեթէ գետնին հաւասարած, ծակ մը յառաջ եկած է
 ցիցին երկճղէն ուրկէ պիտի անցնի այդ չուանը, հենքին հետ մխու-
 ցուելիք փայտէ կոճակին վրայ ձգելու և զանոնք իրարու հետ կա-
 պելու համար: Այս վերջին երկճղեայ ցիցն ալ սալմինին և վերի-
 նակին անկիւններէն կը չափէ վարպետը անոնց հետ հաւասարեցնե-

լու համար Գործուելիք կտաւին հենքը կծկելով իրարու վրայ հանգոյց մը կ'ընէ ոստայնանկը ու զայն կը կախէ իր ձախ կողմի պատին վրայ բաւական բարձր զարնուած ցիցէն, երբ ան կ'սկսի կտաւը գործել, մասի մը երկայնութեամբ ու նոյնքան ալ հաստութեամբ, ինչպէս որ ըսի, փայտէ կոճակին հետ գործուելիք հենքը կը կտայէ այն չուանով, որ անցուած է իր ետեւի երկճղի ցիցին ծակէն, կոճակը հեքնին հետ կապող այդ չուանին ծայրը օղակ մըն է, հենքն ու չուանը իրարու հետ կը կապուին, ոստայնանկը, իր աջ կողմի ցիցին վրայ հանգոյցով կ'ամրացնէ միւսնոյն չուանին ետքի մնացած մասը, որ իր ցիցին քով ամփոփուած է :

Վերինակն ալ, ներքինակին պէս յղկուած ու անոր չափ ալ երկայն, կլոր փայտ մըն է, զոր գամած է վարպետը ձեղունին, ճիշտ ոստայնանկին գլխուն վերեւ, ասոր անկիւններուն չափն ալ սալմինին վրայ կ'առնէ վարպետը լարով, սալմինին ու վերինակին անկիւնները հաւասար պէտք է ըլլան իրարու, թէ երկուքին աջ անկիւնները և թէ ձախ, և մէկին ձախ անկիւնը միւսին աջ անկիւնը պէտք չէ որ իրարմէ մազի չափ տարբեր ըլլան, կամ ետ կը ասնի սալմինին մօտ մնացած անկիւնը վերինակին, կամ առաջ կը բերէ զայն երբ հեռու է ան սալմինէն : Անոր իրարմէ բարձրութիւնն ալ կը չափէ վարպետը լարով, որուն երկու ծայրերը ինք բռնելով լարին մնացած մասին երկու տեղերէն ալ ուրիշի մը բռնել կուտայ, ու ինք կոնակը կուտայ վերինակին տակը եղով պատին : Վարպետը սալմինին երկու անկիւններուն եզերքներուն վրայ բարձրութիւնը կը հասկնայ : Եթէ լարը լարին չդպի, բարձր մնացած վերինակին այդ կողմի անկիւնը կը ցած ցընէ մինչեւ որ անոնք հաւասարին իրարու :

Հորը չափելու համար կատարեալ ճշտութեամբ, ամէնէն յարմար չափը ազբին լարն է, որ ինչպէս ըսի, ջութակին լարին պէս բարակ է : Անոր չափով վարպետը, հորին վրայ զարնուած բոլոր ցիցերը, ձեղունէն կախուած չուանները, սալմինին վրայ կը շտկէ, վերինակին չափն առնուելուն պէս միւսներուն ալ չափն կ'առնէ, այսինքն, կը չափէ սալմինին ու ներքինակին երկու կողմերը, եթէ ներքինակին մէկ կողմը հեռու է սալմինին այդ կողմէն, ներքինակին ցիցը կը մօտեցնէ վարպետը սալմինին : Այս չափը անոնց հակառակ անկիւններէն կը բռնէ վարպետը ուրիշի մը հետ միասին : Այսինքն, ինք լարին երկու ծայրերէն կը բռնէ, (վերինակին պէս) իր բռնած լարին երկու ծայրերուն ամէն մէկն ալ բռնել կուտայ ուրիշին : Ինք կը նստի սալմինին ետեւ և լարը կը

բանէ երկու ծայրերէն, մէկ ծայրը աջով, միւսը ձախով սուլմիւն
 երկու անկիւններուն վրայ: Միեւնոյն լարին երկու ծայրերէն ալ
 միւս մարդը բանած է ներքինակին անկիւններուն վրայ: Բայց ոչ
 թէ իրարու դէմ դիմաց անկիւններու վրայ, իրարու հակառակ ան-
 կիւններու, այնպէս որ լարը լարին վրայ կուգայ: Եթէ իրարու գը-
 պին անոնք, ճիշտ են, հակառակ պարագային, բարձր եղող այդ
 կողմի ցիցը կ'իջեցնեն, մինչև որ հաւասարին անոնք իրարու: Այս
 է բարձրութեան չափը անոնց: Արդէն ամէնէն կարեւորներն են, սուլ-
 մինը, վերինակը և ներքինակը, որոնք երբ ճշտութեամբ չտեսնին
 ու իրենց տեղերուն վրայ ամրացուին, միւսներուն չափը ամենլը
 դիւրին կ'ըլլայ: Զեղունէն կախուած ազրին ու տփային չուսնե-
 րը, բացուած հորին երկայնքին ճիշտ մէջտեղին վրայ պիտի իջնեն
 անոնք ալ հետեւորար, սուլմինին երկու անկիւններուն պիտի հաւա-
 սարին եւ ու առաջ չ'ըլլալու համար իրարմէ:

Ծուռ հորը, քնականարար ծուռ արդիւնք կուտայ, սատայնանկ մը,
 որ հոր շակել չգիտեր, առաւապանք է իրեն համար, վտանգի ան-
 կարելի կը դառնայ իրեն համար ուղիղ կտու գործելը, անոր համար
 որ կտուին մէկ կողմը առաջ կ'երթայ, միւս կողմը ետ կը մնայ.
 նոյն ստեն տփան կ'սկսի ծուռ դարնել կտուին եզերքին և շատ ան-
 դամ ալ այդ պատճառաւ անոր մէջ տեղաւորուած սանարը կը կտու-
 րի իրեն հետ նաև խեղճ սատայնանկին փախաքն ալ. կորովն ալ
 և իր արհեստաւորի արժանապատուութիւնն ալ, որովհետև տղէտ
 մնացած է իր արհեստին մէջ:

Գիւղի կտուի գործարանը սա է, սատայնանկը կտու գործած մի-
 ջոցին տփան բանելով կը դարնէ կտուին, անոր համար հետուէն
 թէ մօտէն անոր ձայնին չափ չուխը կ'իմացուի: Թէպէտև ազմուկը
 շատ է այս կերպ գործուելիք կտուին, բայց միեւնոյն ստեն պէտք
 է ըսել թէ այս ձև հորով գործուած կտուին տեղաւորութիւնը
 ուրիշ ձևով հորերը չեն կրնար աւել, երբ սատայնանկը տփան բանելով
 ամուր կը դարնէ հիւստուածքին կտուը աւելի խիտ կ'ըլլայ, թող
 որ ուրիշ միջոց մ'ալ կայ կտուը խիտ ու հաստատուն ընելու հա-
 մար. անոնք պիտի բացատրեմ կտուին պատրաստուած գլխուն մէջ:

Բազաքներուն, այսինքն Պոլսոյ կամ Կիլիկիոյ շրջանին մէջ,
 տարբեր ձևով շինուած հորեր կան, տփան առանց սատայնանկին
 բանելուն կը դարնուի հիւստուածքին, որովհետև այս տփան մերինին
 պէս թեւերով փարկեալ չունի, անթեւ է ան, միայն ձեղունէն կախ-
 ուած է ու շատ մօտ է սուլմինին: Սատայնանկը միշտ ետ պիտի հրէ
 իր երկու բոյթ մասներովը և յետոյ ազատ պիտի թողու, տփան իր
 քնական թափով կը սահի և կը ճնշէ հիւստուածքը: Ասիկայ ձայն ու
 ազմուկ չունի, կոկիկ ու սիրուն է ու արդիւնքն ալ առաջինէն շատ,
 իր գործած կտուին ցանցաւորութեան համար:

Ասպը կամ ազբը մոմածի չորս թելերով ոլորուած լար մըն է գրեթէ ջութակին լարին նմանոյ՝ Ասիկա ոլորելէն յետոյ կաժերու կը վերածեն։ Այդ կաժերը վերջը շրէզի չափաւոր թանձր լուծոյթին մէջ լաւ մը ճմաւելով՝ կ'անցնեն նազուկին վրայ ու կը կծկեն մասուրաներու վրայ։ Յետոյ այդ մասուրաներուն վրայի թելերը զստ զստ կը ձգեն արեւին տակ զարնուած ցիցերու վրայ որպէսզի չորնան։ Ահա, այս է ազբը, ասով է որ կը հիւսեն մէկ սանդիւմ աքամագծով մարսենիի (մարսենի) բարակ և յզկուէն ճարտներու վրայ։ Այս ազպին գործողութիւնն ալ իր գործիքն աւնի, մէկ մեթր երկայնութեամբ պատուանդան մըն է փայտէ, 5 սանդիւմ լայն ու նոյնքան ալ թանձր է։ Ասոր երկու կողմի ծայրերուն վրայ 30ական սանդիւմ երկայնութեամբ և 5ական սանդիւմ թանձրութեամբ՝ թեւեր անցուած են, որպէսզի ազբը հիւսուած ատենը տեղէն չի շարժի։ Յետոյ այս թեւերուն՝ պատուանդանին երկու կողմի ծայրերուն միացում ճիշտ մէջտեղերէն կը ծակեն դուրով, ու անոնց մէջ կ'ամրացնեն 50ական սանդիւմ կամ քիչ մը աւելի երկայնութեամբ երկու ուղղաձիգ փոքրիկ սիւնակներ։ Ասոնց գլուխներուն մէջտեղերէն հաւասար չափով սղոյով ճեղք մը կը բանան իբրեւ խիստ բարակ յենարաններ, հոն գրուելու համար նոյն համեմատութեամբ յըզկուած ու կոկուած ութը սանդիւմ լայն ստիստակ մը։

Այս ստիստակին վրայ ազբուելիք ճպտաբ գնելով կը կապեն զայն չուաններով ստիստակին երկու ծայրերուն հետ, այնպէս որ ճպտաբ չշարժի ազբուած ատեն։ Բայց այս ճպտաին մէկ ծայրը, որ ազբողին աջ կողմը կ'իջնայ, կապուած է լար մը որուն մէկ ծայրը կը հասնի մինչեւ ձախ կողմը ու կ'երկարի անկէ դուրս, այսինքն սիւնակին մէջ դրուած ստիստակին ձախ կողմը (նկատի ունենալով ազբողին աջն ու ձախը)։ Ճիշտ այդ տեղւոյն դուրսի կողմէն դամուած է սիւնակին հետ՝ ստաբ սանդիւմ երկայնութեամբ և երկու սանդիւմ թանձրութեամբ յզկուած փայտ մը, որուն ծայրն ալ երկու սանդիւմ վարօք ծերպ մը բացուած է։ Այս յզկուէն փայտը, որ 10 սանդիւմ երկայն է իրեն միացող ստիստակէն ու սիւնակէն և ուղղաձիգ պզտիկ գործիք մըն է, որ ազբին ճպտաին աջ կողմի ծայրին կապուած, լարին ծայրէն կը կապեն 25 ախրհէմնոց քար մը, և կամ նոյն ծանրութեամբ երկաթի կտոր մը, և կը կախեն զայն ձախ կողմի սիւնակին և ստիստակին դամուած այդ փայտին փոսացուած ծայրէն վար, որպէսզի ազբին ճպտաին լարը դէպի ձախ բարձր մնայ ազբուելիք ճպտաին։ Անկէ յետոյ ազբել կ'սկսի (հիւսել) պզտիկ կկոցով մը, որ կը կրէ իր վրայ ազբուելիք լարը։ Աջէն դէպի ձախ կը հիւսէ ազբողը։ Նախ, կկոցին վրայ փաթթուած լարին ծայրը կը կապէ ազբուելիք ճպտ-

տին աջ կողմի ծայրին հետ . յետոյ կկոցը կ'անցնէ անոր վրայի
 լարին վրայէն ու կ'իջնցնէ զայն ծայրին : այդ ճպտաբ իր վրան գրկող
 տախտակին տակէն բերելով դէպի իր կողմը՝ ու վեր հանելով կկո-
 ցը, զայն կ'անցընէ ճպտաէն բարձր մնացող լարին մէջէն, դարձեալ
 դէպի իր կողմը բերելով, զայն կ'ամրացնէ ճպտաին աջ կողմի ծայրին
 հետ ուրկէ որ սկսած է : Յետոյ կկոցին լարը օղակ ընելով ճպտաին
 վրայի լարէն դուրս կը հանէ և անոր մէջէն կ'անցընէ կկոցը ու
 կ'ամրացնէ զայն ճպտաին ու վրայի լարին հետ : Այնպէս որ այդ օ-
 ղակը միշտ ազբող մարդուն դիմացի ճպտաին ետին կը մնայ : Այսպէս
 ազբողին մէկ ձեռքով կկոցը արագութեամբ ճպտաին վրայի լարին
 մէջէն անցնելով դէպի իր կողմը կը բերէ , ու յետոյ օղակ ընելով
 զայն, լարին տակէն դուրս կը հանէ իր դիմացի ճպտաին ետին դարձ-
 նելով կ'անցնէ կկոցը՝ ճպտաին ու անոր տախտակին ետեւէն ու
 ներքեւէն ու միւս ձեռքով զայն վեր կ'առնէ : Ա՛ս է ազբ հիւսելու
 կերպը :

Ազբուելիք ճպտաները վեց հատ են , որոնց երեքը ոստայնանկին
 մէկ ոտքին համար է, իսկ միւս երեքը՝ միւս ոտքին : Այս երկու մա-
 սերուն երկուսկան ճպտաները վեր կը մնան գործուելիք հենքին
 վրայ : Իսկ միւս երկուքը վարը կը մնան հենքին ներքեւ, բայց իրար-
 մէ անջատ : Ազբումը գործուելիք կտաւին լայնութեան համե-
 մատ կ'ըլլայ, այսինքն , եթէ կտաւին լայնութիւնը 7 չլայ կ'ուզ-
 ուի (մէկ չլան 10 թելերէ կը բաղկանայ) կամ ութը՝ կամ ինը ,
 մինչեւ 12 չլայ, ասոնց խրաքանչիւրին համեմատ կ'ազբուին չլա-
 ները : Այսինքն 7 չլան իր վեց ճպտաներն ունի, ութը՝ իրը, և այսպէս
 կարգաւ : Այնպէս որ ուզուած կտաւին լայնութեան համեմատ կը պատ-
 րաստեն զանոնք : Ոստայնանկը, ստիւգուած է ասոնց ամէնքը հիւսել,
 զանոնք իր ձեռքին տակ պտարաստ ունենալու համար . որպէսզի ի
 հարկին անանցմէ գործածէ այն որ կը յարմարի պահանջուած հեն-
 քին : Ըսի թէ մէկ չլան 40 թելերէ կը բաղկանայ : Հեն-
 ուած հենքին ամէն մէկ չլայի թելերը մէկիկ մէկիկ կ'անցնեն ճպտա-
 ներու վրայ հիւսուած ազբին ամէն մէկ լարին մէջէն : Ու յետոյ այդ
 թելերուն երկուսկան հատը կ'անցնեն ափային մէջ զեակողուած կտաւը
 հիւսող սանարին եղէգ էտտամներուն ձերպերէն, որոնք հաշուըուած ու
 թելերուն յատկութեանց համեմատ ձերպեր կը ձեւացնեն : Ազբուելիք
 վեց ճպտաներուն տակի երկու ճպտաները խիտ կը հիւսուին : Այնպէս
 որ անոնց վրայ հիւսուած ամէն մէկ չլան քառասուն թելերու անց-
 քերէ կը բաղկանայ : Իսկ անոնց վրայի իրենց ամէն մէկուն մաս կազ-
 մող երկուսկան ճպտաները քսանուսկան թելերու անցքեր ունին : Անոր
 համար, որ վրայի ճպտաներուն ազբին անցքերը ցանցաւ՝ և միւսնայն
 տան դիւրին կը հիւսուին : Չլային, այսինքն գործուելիք կտաւին

լայնքին համեմատ, ազբուելիք ճարտաներուն թէ տակը և թէ վրան ծայրերէն երկուակուն չլայ ներսօք, կապերու տեղեր կը ձգեն: Այս ձգուած տեղերուն վրայ կապեր կ'անցնեն իբրև օղակներ: Անոնց մէջ անցուելու համար, ձեղունէն կախուած փոքրիկ ճախարակները իսկ վարի կողմէն ալ հորին մէջի երկու պատուանդաններուն կը միացուին: Ոտայնանկը երբ մէկ ոտքով պատուանդանին վրայ կսխէ, աֆային ետև կեցող հենքին վրայի ազբուած երկու ճարտաները վար կ'իջնեն հենքին դպելով, միւս ոտքին կողմի երկու ճարտաներն ալ վեր կ'ելլեն հենքէն: Այդ միջոցին, կկոցին համար անցք կը բացուի հենքին մէջ աֆային առջև: Նոյն ատեն դատայնանկը իր երկու ձեռքերով կկոցը հենքին այդ բացուած անցքէն արագ արագ կ'առնէ կուտայ եթէ վարժ է ան:

Կտաւին հոր-գործարանին բոլոր մասերը չափուելով զարնուեցան իրենց յարմար տեղերուն մէջ: Մնացին երկու աւարկաներ միայն, կկոց ու մթիթ: Կ'արժէ անոնց մասին ալ բացատրութիւն մը տալ: Կկոցը գոմէշի եղջիւրներէն կը շինուի ընդհանրապէս: Անոր երկու ծայրերը տախակ, սուր լու յղուած են ու մէկ սանդիւմի չափ ալ լայն: Ասոնց վրայ գրեթէ 1 սանդիւմ լայնութեամբ մետաղ կ'անցնեն: Անոր երկայնութիւնը քսան սանդիւմ է մերձաւորապէս, և իր երկուծայրերուն մէջտեղը, այսինքն մաքոքին երկայնքին կէս տեղը, ունի անցք մը: Այդ անցքին երկու ծայրերուն մէջ դէմ դիմաց, փոքրիկ ծակեր կան փորուած, ասոնց մէջ անցքին երկայնքին համեմատ, մասուրային բարակ ձողը կ'անցուի: Անցքին աջ կողին վրայ ծակ մը կայ, մասուրային թելը անցնելու համար: Այդ ձողին երկայնութենէն քիչ պակաս, հիւսող կտաւին թելը իր վրայ փաթթող մասուրան այդ ձողին վրայ կ'անցուի: Ահա մաքոքը (կկոցը):

Մթիթը. սա գործիքին դեյն ալ կարեւոր է: Անոր տեղը գործուած կտաւին, այսինքն աֆային ճիշտ դպած եզերքին վըրան է, որ կը զարնեն: Գրեթէ 2 սանդիւմ ետ, կտաւին լայնքին վրայ: Աս գործիքը հիւսուելիք եզերքէն պրկելով կտաւին լայնքը շատ կը դիւրացնէ աֆային շարժումները: Զեռքի մը չափ կտաւը գործուելուն պէս, մթիթը կը փոխուի աֆային մօտ: Մթիթը երկու մասերով և երկու մասի լայնութեամբ բարակ տախտակ մըն է: Ամէն մէկ մասին երկայնութիւնը գրեթէ քառասուն սանդիւմ է: Երկու ծայրերուն վրայ երեքական ասեղներ կը զարնեն, կտաւին լայնքին երկու եզերքներուն մէջ շուրուելու համար: Այս երկու մասերը իրարու վրայ հաստատուած են և ծխնիի մը պէս կրնան իրարու վրայ դառնալ: Երկուքը երբ ուղիք գիծ մը ձեւացընեն կտաւին լայնքէն աւելի երկար կ'ըլլան: Երբ անոնց ծայրի ասեղները կը կառչին կտաւին երկու եզերքներուն, այն ատեն

իրենց իրարու միացած կէտին վրայ բռնի անկիւն մը կը ձեւացնեն : Արդ, կտաւին լայնքին ուղղուածին չափ պրկում տալու համար, պէտք է անկեան գագաթը ճնշելով զայն մեծցնել : Որպէսզի այս անկեան երկու կողմերը պրկուած մնան, իրենց միջնամասին վրայ հաստատուած է երկաթեայ կեռ մը, որուն մէկ ծայրը կ'աղուցուի մթիթին մէկ թեւին վրայ դանուող ծակին մէջ. իսկ միւսը յաջորդ թեւին ծակին մէջ : Այս ծակերը մէկէ աւելի են, իրենց թիւը յարմարցուած է պրկումի չափին :

Ասով, մեր գիւղացիին կտաւին հոր-գործարանը, կը վերջանայ, իր հետ ունենալով անոր ամբողջ մասերը : Հիմայ կարգը կուգայ գործուելիք կտաւին : Բայց կտաւը առանց հաշիւի, կտաւ չըլլար, զայն յաւաք բերողը, մանուած թելերն են, այն է հենքը. ի՞նչ է հենքը, բացատրեմ : Ոստայնանկը, հենուելիք մանածին կշիւքին համեմատ, շրէզը կը պատրաստէ կլոր ու բաւական խորունկէկ տաշաին մէջ ջուրով միասին, այնպէս որ, այդ լուծոյթը մածուցիկ վիճակ մը կ'առնէ : Բայց նախ քան այս, ոստայնանկը աջ ափովը շրէզը կ'առնէ ու քշիկ քշիկ կը թափէ ջուրով լեցուն լականին մէջ, և ձախ ձեռքովն ալ զայն կը խառնէ, մինչեւ որ ան ստանայ վերեւ յիշուած յատկութիւնը : Անկէ վերջը կ'սկսի կարգու մանածին բանդերը քակել ու կաթ, կաթ, թանալ այդ մածուցիկ հեղուկին մէջ : Ու յետոյ զայն անցնելով իր թեւերուն վրայ, ուժով բայց արագ արագ կ'ոլորէ, պրկելով կը դարձնէ շատ անգամներ, մինչեւ որ այդ կաթ մանածը լու մը ծծէ շրէզը և անոր մէջ ուռէ թել մը չմնայ այդ լուծոյթը չծծող : Ու այսպէս կը շարունակուի հենուելիք մանածին շրէզով թանալու աշխատութիւնը, մինչեւ որ աւարտի ան : Ա՛ս է հենք թանալը : Իրենք ասոր «հեւանձ թանալ» կ'ըսեն : Անկէ վերջը, թանուած այդ կաթերը, մէկիկ մէկիկ ոստայնանկը, կամ ուրիշ մը, որ ընդհանրապէս կին մը կ'ըլլայ, կ'անցնէ նազուկին վրայ (կարծար) ջահրակով զայն կծկելու համար մասուրաներու վրայ : Ամբողջ կաթը, գրեթէ մէկ մասուրայ մը կ'ընեն : Այդ կծկումի գործը աւարտելէն յետոյ, առտուն կանուխ, բաւական է որ օդը անձրեւոս կամ ձիւնոս չըլլայ, ոստայնանկը մէկ մէթրէն քիչ մը աւելի երկայն, 70-80ի չափ խուրձ մը յղկուած ցուպի նման ցիցեր ուսին վրայ գնելով կը տանի կալը կամ ուրիշ տափարակ տեղ մը, անկելու համար զանոնք գետնին վրայ որպէսզի հենուելիք հենքը ընէ :

Ոստայնանկը մանածին բարակութեան կամ հաստութեան նայելով, հաշիւը հանած է, գլտէ թէ քանի կանգուն տեղ պիտի յատկացնէ անոր տեղւոյն երկայնութեան վրայ, և անոր վրայ կը շարէ այդ ցիցերը ասոնց ծայրերը խրելով գետնին մէջ : Եթէ հենուելիք մա-

նստը բարակ տեսակէն է ու կշիռքը՝ վեց հոխտ, երեսուն կանգուն
 կը չափէ, (մէկ կանգունը երկու արշըն է հոն) սկսած տեղէն մինչեւ
 անոր ծայրը, ուր կը վերջանայ երեսուն կանգունը: Եւ որովհետեւ
 այդքան երկայնքին երկու կողմերուն վրայ կը տնկէ ցիցերը, գոր-
 ծուելիք կառւին երկայնութիւնը կ'ըլլայ հարիւր քսան արշըն, այ-
 սինքն վեց թոփ (ծրար): Սկսուած տեղին աջ կողմին վրայ զար-
 նուելիք (տնկուելիք) ցիցերը չորս հատ են: Մէկ գիծի վրայ, և ի-
 րարու մօտիկ են անոնք, այսինքն հինգական սանդիմ հեռու իրարմէ
 և բարձրութիւննին ալ իրարու հաւասար: Չախ կողմն անոր, երկու
 ցիցեր կը զարնէ: Երկու շարքերուն միջոցը, հազիւ կէս մեթր է:
 Այդ ծայրէն կ'սկսի, զարնուած չորս ցիցերուն սկիզբէն, չափել դէ-
 պի առաջ երեք կանգուն ու քսուորդ մը: Այսքան երկայնութիւնը
 մէկ կոճակ կ'անուանուի. հող կը զարնէ երկու ցիցեր, երկու ցիցեր
 ալ ճիշդ ասոնց դիմաց միւս կողմին վրայ, դարձեալ բարձրութիւն-
 նին հաւասար պիտի ըլլան: Եւ այսպէս կը շարունակէ չափուած ե-
 րեսուն կանգուն երկայնքին երկու կողմերուն վրայ զոյգ, զոյգ ցի-
 ցերը զարնել իրարու դէմ դիմաց, մինչեւ անոր աւարտած տեղը՝ ուր
 կը զարնէ միայն մէկ հատ: Բայց միւս ցիցերէն աւելի հաստ ու եր-
 կայն ցից մը եւս գետնին մէջ 15 սանդիմ խորութեամբ, կը զարնէ
 հենքին երկու կողմերուն ներսէն ճիշդ այդ զարնուած հաստ ու հաս-
 տատուն մէկ ցիցին դիմաց իբր յենարան: Որպէսզի հենքը հետզհե-
 տէ այդ հաստատուն մէկ ցիցին կանակին վրայ փոխթուած միջոցին
 իր տեղէն չշարժի: Ոստայնանկը աջ կողմի ծայրի չորս ցիցերէն
 կ'սկսի հենել հենքը ու կ'երթայ առաջ երկու ցիցերուն վրայ ալ կը
 ձգէ հենքին թելերը: Այսպէս կը շարունակէ իր երթը մինչեւ յե-
 նարանուած ծայրին մեծ ցիցը, անոր կանակէն դառնալով, կ'անցնի
 ձախ կողմը հենելու: Անկէ ալ հենելով, հենելով կուգայ ծայրը,
 չորս ցիցերուն դիմացի երկու ցիցերուն, ու ասոնց վրայ ալ հենքը
 ձգելով կը դառնայ ետ: Այսպէս սա երթ ու դարձը կ'ընէ մինչեւ,
 որ աւարտին պահանջուած չլաները: Չ'ըսի թէ ոստայնանկը հենքը
 ինչո՞վ կը հենէ՝ ո՞ւր կը շարէ առէջքին մասուրաները — գործիք
 մըն է ան, տաստաճաղ անուանով:

Տաստաճաղը կը բաղկանայ քանի մը մասերէ: Գրեթէ մէկ մեթր
 երկայնութեամբ երկու փայտեայ պատուանդաններ ունի ան: Որոնց
 լայնութիւնն ու թանձրութիւնը մերձաւոր հաշուով երկու սանդիմ
 է: Այս պատուանդաններուն առջեւի ծայրերը միացած են գրեթէ
 20 սանդիմ երկայնութեամբ անջրպետով մը իրարմէ հեռու և պատ-
 ուանդանին թանձրութեան ու լայնութեան համեմատ փայտով մը:
 Ասիկա տաստաճաղին առջեւի մասը կամ գլոխն (գլուխ) է: Առջեւի
 մասը նեղ, իսկ սկիզբը լայն է: Ետեւի ծայրերն ալ իրարու միա-

ցամ են գրեթէ 35 ամուգիմեթր անջրպետով մը Այս ետեւի բոյն մասին երկու անկիւններուն վրայ ուղղաձիգ գիրքով հաստատուած են, իւրաքանչիւրը 30 ամուգիմ քարձրութեամբ և ծական ամուգիմ շրջագծով կը սրցուած երկու սիւնակներ: Այս սիւնակներուն դէմ դիմաց գտնուող ասանական ծակերուն մէջ հաստատուած են իրարմէ երկուսական ամուգիմ անջրպետով մը անջատուած տասը ձողիկնիս , որոնց իւրաքանչիւրին վրայ երկու ծակեր քայուած են: Այդ ծակերէն կ'անցնին աստատուած ձողիկնի երկայնութեան երկու կողմին վրայ շարուած, բոյց իրարմէ գրեթէ 10ական ամուգիմ հետու ձողերուն վրայ անցուած մասուրաներուն թելերը, այնպէս որ այս տասը ձողիկներուն երկու կողմերուն վրայ քայուած ծակերը, դէմ դիմաց են աստատուողին երկայնութեան երկու կողմերուն վրայ շարուած մասուրաներուն: Այսինքն աստատուողին աջ կողմի տասը մասուրաներուն թելերը զատ զատ կ'անցնին անոր աջ կողմի տասը ձողիկներուն ծակերէն: Տաստուածողին սկիզբի մասուրային թելը՝ ամէնէն ասկի ձողիկին ծակէն կ'անցնի: Երկրորդ մասուրային թելը երկրորդ ձողիկին ծակէն, երրորդը՝ երրորդին մինչեւ ասաներորդը, ձախ կողմին ալ՝ նոյնպէս: Յետոյ այս տասը ձողիկները հաստատուած են 30 ամուգիմ երկայնութեամբ ուղղաձիգ երկու սիւնակներուն հետ և իրենց յարմարող ասխատակով մը գտնուած են: Հսկէ 30 ամուգիմ դէպի առաջ աստատուողին երկայնութեանը վրայ, երկու պատուանդաններուն երկու կողմերուն վրայ ասխատակ մը եւս գտնուած է: Անոր ալ երկու կողմերուն վրայ երկուսական ամուգիմ ներսօք ճիշդ իրարու դիմաց՝ ետեւի բոյն մասին երկու անկիւններուն վրայ հաստատուած 30 ամուգիմ քարձրութեամբ ուղղաձիգ երկու սիւնակներուն հաւասար եւ անոնց նման երկու սիւնակներ անցուած և իրարու միացուած են անոնց գլուխները ասխատակով մը: Ծիշգ ետեւի սիւնակներուն վրայ գտնուած ասխատակին պէս:

Ըսի թէ անոնց իրարմէ ունեցած հեռաւորութիւնը 30 ամուգիմ է, հետեւաբար այդ հեռաւորութեան համեմատ 10 ամուգիմէթր շրջագծով կը բռնու յզկուն փայտ մը գտնուած է թէ սկիզբի, և թէ անոր առջեւի երկ երկու սիւնակներուն և իրարու դէմ դիմաց եզող երկու ասխատակներուն վրայ իբրև բանակը հենք հենողին, առ է աստատուածը: Հենք շինողը առէջքէն կ'ընդմ մասուրաները, աստատուողին երկու կողմերու երկայնութեան վրայ գործուած ասանական ձողերուն վրայ կարգու շարելով կ'սկսի հենել, աջ ձեռքով վերը յիշուած բանակը կը բռնէ ու ձախ ձեռքով ալ ձախ կողմի ձողիկներուն տասը թելերը բռնելով կը ձգէ սկիզբի շարս ցիցերէն առաջինին վրայ, յետոյ երկրորդին, յետոյ՝ երրորդին, ամէնէն վերջը շարորդ ցիցին, փոխն ի փոխ, միշտ աջ ու ձախ գործնելով աստատուողը:

Հենք պատրաստեալու ծառայող տասնամասնադր թող չկարծուի թէ բոլորովին կոչաւ ու ածեւ է, ընդհակառակը, զայն շինող գիւղացի հիւանք կամ աստղծագործը գիտցեք ու կըրցեի է անոր տալ բաւական նրբութիւն ու թեթեւութիւն, անոր բոլոր մասերը, հաշիւով հաստատուած են իրենց հարկ կողմ տեղերուն վրայ, այնպէս որ ան սիրուն ու կոկիկ է և գիւրութեամբ գործածուելու յարմար:

Նախապէս որոշակի ըսի թէ հենուելիք սաէջքին սկիզբի չորս ցիցերէն մինչեւ անոնց երկայնքին զոյգ ցիցերը, երեք կանգուն ու մէկ քառորդ է, այս քոնք, մէկ կոճակ կ'ըսուի, այս երկայնութիւնը կը հաւասարի հորին փոսին երկայնութեան, այսինքն, ստայնանկին հորին մէջ հասած տեղէն մինչեւ անոր գլխուն վերեւ ձեղունին միացուած վերինակը, ու անոր վրայէն ալ շրջուելով գէպի վար մինչեւ ներքինակը, որուն սակէն ալ անցնելով մինչեւ սալմինը, երեք կանգուն մէկ քառորդ է, որ մասուերապէս 7 արշըն կ'ըլլայ, ասոր պէս երեք քոնքամբ այսինքն երեք կոճակը քսան արշըն կտաւ կ'ըլլայ մերձաւոր հաշուով, որ է մէկ թօփ. (պրակ): Ոստայնանկներ կան, որոնք օրական երեք կոճակ հենք կրնան գործել, այսինքն մէկ թօփ կտաւ, կան ալ՝ որ աւելի վարժ են ձեռքի տրագութեամբ, կրնան օրական Նուկէս թօփ կտաւ գործել. սակայն այս վերջինին գործած կտաւը, աւաջինին գործած կտաւին զիմացկունութիւնը չունենար անորինին պէս խիտ շրջալուսն համար: Հենքին ամէն մէկ գործուելիք կոճակին, չորս կամ մանած կ'երթայ, զոր կը կծկեն նազուկին վրայէն ջահրակին ձողին անցուած մասուերաներուն վրայ:

Նազուկը ունի երկու մասի լայնութեամբ, քառասուն քանդիմ երկայնութեամբ և մէկ անդիմ հաստութեամբ չորս թեւեր, որոնք հաստատուած են խաչածեւ իրարու մէջ ազուցուած երկու փայտերու ծայրերուն վրայ: Այս, խաչը երկուք է, մէկը ստորին միւսը վերին: Ստորինին թեւերը աւելի երկայն են վերինին թեւերէն: Թեւերուն իրար կտրած տեղին վրայ մէկական ծակ ունին, ուրկէ կ'անցնի քորի մը վրայ հաստատուած ուղղաձիգ և բարակ ձող մը: Այս ձողին վրայ նազուկին չորս թեւերը կրնան անարգել աջ կամ ձախ դառնալ: Նազուկին վրայ կարժը կ'անցնեն, անկէ ալ մասուերաներու վրայ կը փոթանեն:

Մանածը կտաւի վերածուելու գործը պէտք է վերջանայ գոնէ մինչեւ Մայիսի կէսը, կամ աւառուելն Մայիսի վերջը, վասնզի գործուած կտաւը պէտք է խասար (ճերմկցուի) ըլլայ՝ և խասարը միայն այդ ամսուն կարելի է դնել (ընել), Մայիս ամիսն է այդ գործին յարմար ժամանակը, գիւղացի հայ կիներ շատ լաւ գիտէ ասիկա իր աւանդական փորձաւորութեամբը, ո՛չ թէ որովհետեւ միւս ամիս-

Կերպը արդեւք կ'ըլլան այդ գործին աշխատութեան, այլ որովհետեւ,
 այդ ամիսները կտաւ ճերմկեցնելու նիւթը շունին. ի՞նչ է այդ նիւ-
 թը, — տառապաներու անօտ քակորը, որ Մայիսին մէջ կ'ըլլայ,
 մայիս կը նշանակէ նաեւ չորքառանկներու քակոր, Բալուի բարբա-
 ուին մէջ. իսկ մայիսել կը նշանակէ նախ քակորով ճերմկեցնել երկ-
 րորդ, թրքել, ք. քնել, երրորդ քակորով վրան սղտաւել: Հետո-
 քքրական չէ՞ք գտնէր տա, ի՞նչ է գաղտնիքն ստոր: Իրենք ստոր
 կ'ըսեն «կտաւը պիտի մայիսենք»: Ըսեմ թէ ինչպէս կ'ընեն կտաւ
 ճերմկեցնող հայ կիները: Մեծ կաթսաներու մէջ ջուր կը լեցնեն
 կէսէն վեր, որոնց մէջ կը լեցնեն այդ ամիսին մէջ արածող տառապ-
 ներուն՝ բաւական չափով անօտ քակորը, «մայիսաւած են տառապանե-
 րը» կ'ըսեն իրենք ու կը խառնեն զայն ջուրին հետ երկայն շերեփ-
 ներով, ու յետոյ, կտաւները մաս մաս դնելով այդ կաթսաներուն
 մէջ, լաւ մը կը արտրեն, կը ճմռթկեն, մինչեւ որ կտաւները լաւ
 մը ծծած ըլլան այդ լպրծուն լուծուցիքը: Այդպէս կը ձգեն գանձնք
 երկու կամ երեք օր, անկէ վերջ մայիսաւած կտաւները կը սանին
 սղբիւրը կամ աւուակներու եղերքները լուարու համար: Հմե, գիւ-
 զացի հայ կիներ ու սղջիկը կտաւին ամէն մէկ պրակը կը թափեն
 ջուրին մէջ, կը լուան ու կը թակեն զայն, յետոյ անոր երկու ծայ-
 րերէն բռնած «կը մեյնեն», (կը մեկնեն, կը փռեն) արեւին տակ տա-
 փարակ գեանին վրայ: Այս գործողութեան կրկնուածը կը շարունակ-
 ուի քանի մը անգամներ, այսինքն կը լուան, կը քամեն, կը փռեն,
 կը չորցնեն գանձնք արեւին տակ, ու երբ կը տեսնեն որ կտաւները
 պահանջուած աստիճանով ճերմկած են, գանձնք վերջին անգամ
 չորցնելէ յետոյ տուն կը փոխադրեն:

Խնդիր է թէ, ինչու տարբեր ամիսներու մէջ տարող և արած-
 ող տառապաներուն քակորը չի գործածուիր թափչութեան մէջ ու
 միայն Մայիս ամսուանը կը գործածուի: Ասոր պատճառը գիւղացի
 կիներ չի գիտեր, սակայն գիտնասարարարանին գործն է, բայց աւան-
 դութեան սորվեցուցած գիտական դասը ճիշդ է, ու գիւղացիին մօտ՝
 դարերու փորձարկութիւններով հաստատուած:

Այս գլուխով կ'աւարտեմ բամպակի մասին իմ ծանօթութիւն-
 ներս, և կ'անցնիմ գարիի և սւրիչ ընդեղէններու և արմաիքներու
 մշակութեան:

Թ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Բ.

ԳԱՐԻ

Յորենի արտերուն պէս, պէտք է, սերմանումը կատարելէ առաջ, գարիի արտը քանի մը անգամ հերկել :

Իւրաքանչիւր հողագործ, իր ունեցած հողերու տարածութեան համեմատ, մէկէ աւելի արտեր կը վերապահէ գարիի մշակութեան :

Տարին, երկու անգամ գարիի սերմանում տեղի կ'ունենայ, մէկը՝ աշունը, իսկ միւսը՝ գարունը :

Աշնան ցանքը՝ շուտ, այսինքն ցորենէն առաջ կը հատուենայ, մինչդեռ գարնանը ցորենին հետ :

Գարիի ցանքը, ցորենին պէս, քանի մը անգամ միայն կ'ուսուցուի: Ասոր ցողունները կարճ են քան ցորենին ցողունները, իսկ հասկերը առ հասարակ աւելի երկայն ու ստուար են քան ցորենին հասկերը : Գարիին քաղը աւելի դժուար է և աւելի երկար ժամանակ կ'առնէ մանաւանդ իր ցողուններուն ցանցառութենէն և կարճութենէն : Յորենին պէս մանգաղը հեռուէն զարնելով ցողուններուն չեն քաղեր, այլ՝ բուռ բուռ բռնելով մանգաղով կը կտրեն: Ասոր համար որ անոր ցողունները դիւրաբեկ են, և շուտ կը կտրտին մանգաղին թեթեւ ճնշումէն ու գետինը կը թափթփին հասկերը, յօգուտ աղքատ պաշտխճիներուն (հասկաքաղ) : Գարիին հատիկները ծածօթ են շատերուն, անոնք աւելի գէր ու երկայն են քան ցորենին հատիկները, աւելի զօրաւոր ու սննդարար են մանաւանդ մատաղ ստամոքսներու համար: Ձին, ջորին ու էշը աւելի կը նախընտրեն գարին ուտել քան ցորենը: Լեցուցէք անոնց առջեւ առ երկու տեսակէն՝ պիտի համոզուիք իմ ըսածիս: Այդ կենդանիները երբ գոյն կանոնաւորապէս ուտեն, քիչ ժամանակէն կը գիրնան, կը գեղեցկանան, աչքերնին կը կարմրի և կ'ըլլան աշխոյժ : Գարիին գինը ընդհանրապէս աժան է՝ ցորենի գինէն, երբ ցորենին գինը տարապայման կերպով բարձրանայ, ինչպէս կ'ըլլայ սղութեան տարիներուն, գարին օգնութեան կը հասնի հաց փնտուղներուն՝ ազատելով զանոնք սովի և հարկու ճիրաններէն:

Գարիին յարգն ալ կը տարբերի ցորենի յարգէն, ուժի, համի

տեսակէտով: Ա՛ս ալ փորձուած է, բոլոր արժանները կը շափեն զայն
 աղին պէս, մանաւանդ ոչխարներն ու այծերը ձմեռուան եղա-
 նակին գարիի յարդէն օրական երեք անգամ ուտելով այլևս
 սուրիչ կեր չեն փնտռեր: Վերջապէս քուչնային, Ֆիթին, ոսպին և
 կտաւտաին յարգերուն գուցէ բամպակին հունտին չոսի օգ-
 ասկար է տաւարներուն համար: Գարիին կամնուիլը դիւրին և շուտ
 կ'ըլլայ, ինչպէս ըսի, անոր ցօղունները կարճ ու մանաւանդ բեկա-
 նուտ են: Ասոր մէկ սայլը, հազիւ հարիւր խուրձերէ կը բաղկանայ,
 կարճ ըլլալուն համար կարելի չէ աւելի բեռցնել սայլը: Աւտուրնէ
 մինչեւ իրիկուն երկու կամերով կը մանրուի, թերեւս աւելի շուտ:
 Մինչդեռ ցորենին շարչը այդպէս չէ: Վասնզի անոր ցօղունները ա-
 վելի երկար, աւելի տուածիգ կամ ձկուն են գարիէն: Նոյնքան խուր-
 ձեր, երեք կամերով, արշալոյսէն սկսեալ մինչեւ իրիկունն ժամը
 ութը, հազիւ կը մանրուին:

Գիւղացի հողագործը կալը պատրաստելէն անմիջապէս վերջը,
 ցորենին քաղէն տառջ, գարիին քաղը կ'ընէ ու զայն կը կրէ սայլերով
 կալը, ուր ետեւէ ետեւ կը կրէ նոսեւ քուչնան, Ֆիթը, ոսպը, և, օր
 առաջ կամնելով, հասելով տուն կը փոխադրէ: Անոնց հասիկները
 մասնաւոր ամաններու մէջ կը տեղաւորէ, իսկ յարդն ալ՝ մարաքնե-
 րու մէկ անկիւնը կը լեցնէ, տունց՝ յետոյ մարաք փոխադրուելիք
 ցորենի յարդին հետ խառնելու:

Այս հունձքերը, գիւղացի երկրագործին համար, մանր մուկն ու յշ-
 խատանքներ կը համարուին: Իրենց համար գլխաւորը ցորենի հունձքն
 է: Քուչնան, և ուրիշներ կալէն տուն փոխադրելու և տեղաւորելու
 աշխատանքները վերջ գտնելէ յետոյ է որ, կարգը ցորենին կուգայ:

Ցորենի քաղին զուգընթաց կը մեան միայն շուշմայի և կտաւտաի
 քաղերը: Բայց ասոնք որովհետեւ շատ տեղ չեն գրուեր, կալը գրեթէ
 ամբողջապէս կը յատկացուի ցորենը դիզելու, շարչելու, կամնելու,
 թեզելու և հոսելու գործողութիւններ, որոնց համար ընդարձակ գե-
 տին պէտք է:



Ժ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Գ.

ՔՈՒՇՆԱՅ

Քուշնան, գարունը, Ապրիլ ամսուն սկիզբը կը սերմանուիտ Նո-
ղագործը, իր պէտքերուն համեմատ, մէկ կամ երկու արտեր կը յառ-
կացնէ այս ընդեղէնին մշակութեան:

Քուշնայի մշակութեան յատկացուած արտերը նախապէս քանի մը
անգամներ կը հերկուին, և ապա սերմանումը տեղի կ'ունենայ:

Երբ հատիկները կը ծլին, ծիլերուն հողէն դուրս երեւնալէն մէկ
երկու շաբաթ յետոյ առաջին ուռագումը տեղի կ'ունենայ, ու ապէ յե-
տոյ, շաբաթը կամ ասոր օրը անգամ մը պարբերապէս կը շարունակ-
ուի մինչեւ որ հասունանայ:

Քուշնայի արաը՝ քախանքի պէտք չունի, արտերուն մետասկար
նկատուած խտտերը, չեն կրնար անոր տճման արգելք ըլլալ. այսպէս
անոնք այլևայլ խտտերու հետ միասին կ'աճին, կը հնձուին, և կը կամ-
նուին: Հատիկները, հոսելով կը զտուեն և կը մնայ միայն խոտախառն
յարդը:

Քուշնային յօղունը կարճ կ'ըլլայ, հազիւ գեանէն թիզ ու կէս կամ
երկու թիզ բարձրութիւն կ'ունենայ: Արմատը հասակէկ է, գրեթէ
ճկոյթի չափ, և կարծր ալ է: Գաղաթը մինչեւ արմատը կըր է կար-
ժառի նման: Արմատէն բաժնուած փոքրիկ ծղօաները իրարու հետ
խառնուած՝ փունջ մը կը կազմեն: Իւրաքանչիւր ծղօանի վրայ, իրա-
րու քով խիտ խիտ շարուած, կլորածեւ պտճուկներ (պատիճ) կան, ո-
րոնք քուշնայի հատիկներուն ընդունարաններն են:

Հատիկները փոքրիկ սիւսուէ մ'ալ աւելի փոքր են, և անոր պէս
փոխանակ զնգածեւ ըլլալու, բազմանիտ են, կորանկիւն եզերքներով
անջատուած փոքրիկ երեաներուն: Գոյնը կ'ըլլայ մոխրագոյն կա-
նանչ:

Քուշնայի քաղը մանգաղով դժուար է ընել՝ իր կարծութեան և
արմատին կարծրութեան պատճառաւ. շատ անգամ, զայն քաղելէ քա-
նի մը օր առաջ, արաը կ'ուռոգեն: Երբ ուռագում գեանը քիչ մը
ցամքի, այն տանն կ'ին ու աղջիկ քաղուորները գործի կ'սկսին, զայն

Կը քողեն, արմատախիլ ընելով: Քաղուած քուչնան խուրձերու չեն
 վերածեր, որովհետեւ անոնց ցողունները կարճ են, զանոնք իրարու
 վրայ դնելով փոքրիկ դէզեր կ'ընեն, որոնց վրայ ծանրկէկ քա-
 ջեր կու՛ս գունձգեր գնելով խորամներ կը կազմեն. հեռուէն դիտողը
 պիտի կտրծէր թէ արախն վրայ մակաղած ոչխարներու հօտ մը կայ.
 Քովէքով շարուած խորամները այս երեւոյթը կը պարզեն:

Քուչնային այս խորամները, զեռ կալը շփոխողբուած, այս վի-
 ճակով արախն մէջ կը մնան, մինչեւ որ ցորենի կամնուձի և հասու-
 մի գործողութիւնները աւարախն, այն ասան միայն կալը կը փո-
 խաղրեն:

Քուչնան, կենդանիներուն համար, պատուական անուագ մըն է,
 ձմրան եղանակին մէջ: Իր յարդը՝ առուոյտի շափ յարդի է: Յուրա
 եղանակին դոյն կը խառնեն ցորենի յարդի կամ քոսի հետ (կամ-
 նուած մկնիտը) և արջառներուն կը կերցնեն: Քալով հասիկնե-
 րուն, զանոնք ալ, որոշ չափով, նախարդ օրուքնէ, ջուրով լեցուն
 կուտի մէջ (հողէ մեծ ու խոր աման) կը լեցնեն, ու կրակարանին մէկ
 անկիւնը կը գետեղեն: Ոչ շատ հեռուէն, կրակարանին ջերմութեան
 մեղմ ազդեցութեան տակ մնալով մինչեւ հետեւեալ առատ, հասիկ-
 ները կ'ուռին, կը կակուղնան և քիչ մ'ալ կը թթուին (խմորութի):
 Աւաւատուն, տրչալոյտին, երբ կենդանիներու կերին ժամանակը գոց,
 զանոնք ջուրէն մաղին մէջ կը փոխաղրեն, անկէ ալ իւրաքանչիւր
 մսուրի մէջ լեցուած յարդին հետ մէկտեղան տի կամ աւելի քուչնայ
 կը խառնեն: Միշտ չձկան եղներուն, դամէշներուն, ինչպէ՞ս նաև
 կաթնատու մատակներուն և կովերուն աւելի կուտան:

Գիւղացիք կ'ըսեն թէ, առ ալ դարիին չափ անուղարար է, և՛
 գիրցնող:

Գիւղացի ամսախիլիները քիչ անգամ, երբ մամաւանդ իրենց
 սոսի տարեկան լիցքը (պոշտը) պակաս է, քուչնան աղալով երկա-
 նաքարով, պահոց կերակուրներու մէջ կը գործածեն, ուրիշ ընդե-
 ղէններու հետ քիչ քանակութեամբ խառնելով:



Ժ.Ա. Գ.Լ.ՈՒ.Խ

Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Ի Ի Ն

Դ.

Ո Ս Պ

Այս պատմական ու պատժական ընդհանրին մասին գոհեցանք
զրի առնելու պէտք չկայ . անոր յատկութիւնները արդէն հանրա-
ժանօթ են, հին ժամանակներէ ի վեր:

Գիւղացիին պահոց օրերու անաւտութեան մէջ շատ կարեւոր
զեր մը կը կատարէ: Իբրև կերակուր, ծանօթ է ան գիւղացիին .
(սապընջուր) սոսնջուր և սոսնջուր անուաններով, սոսնջմէ տար-
բեր կերակուրներէն (պահոց) շատերուն մէջ, պէտք է որ սոսը գըտ-
նուի: Գիւղացին թէ քաղաքացին հաւասարապէս այս ընդհանր գը-
խաւոր անուանի տեղ կ'առնեն: Աս էր որ Եսաւին անգրանկութիւնը
Յակօբին առաւ...: Ուրեմն, սոսը գիւղացիին տարեկան ապրցուին
(սոսըի յատկացուած ընդհանր, ձուար, ծեցած ևն.) մէջ անգանցու-
ակի և զուն ուրիք փոխանակելի տեղ մը կը գրաւէ:

Սոսը, գորունը, Սպըիլ ամսուն սկիզբը կը սերմանուի, և, առ-
հասարակ Յունիս ամսուան ընթացքին կը քաղուի: Գեանէն վեր
շատ չի բարձրանար . իր բարձրութիւնը մէկ թիղէն աւելի չըլլար:
Յօղունը, արմատը նուրբ են. այս պատճառաւ գիւրութեամբ կը հըն-
ձուի. աւելի ճիշդ է ըսել արմատախիլ կ'ըլլայ քան թէ կը հնձուի:
Աս ալ, քուշնային նման, շատ մը ծղօտներու փունջ կը ձեւացնէ:
Այս ծղօտները կը ծածկուին պաճուկներով, որոնց մէջ կ'ամփոփուին
սոսին հասիկները:

Ասիկա քուշնային ցեղակից կը համարուի . անոր նման մութ
մոխրագոյն կեղեւ մ'ունի, իր միջուկը ընդհանրապէս գեղին է: Ու-
սոսը կը կատարուի 10-15 օրը անգամ մը:

Չայն երկու ձեւերու տակ կը գործածեն . աղալով, և, առանց
աղալու: Երկայնաքարով Չայն կ'աղան, առանց մանրելու կամ փըշ-
րելու, միայն թխորակ նուրբ կեղեւը կը դատուի, իսկ սղնձային
գեղնութեամբ հասիկները երկուքի կը վերածուին: Միւսը առանց
աղալու կը գործածեն. սապընջուրը շաղացուած սոսով կ'եփեն հեաք
քիչ մը ցորեն ու սոխ միայն խառնելով:

Ե. Գ. Գ. Գ. Գ.

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ե.

Յ Ի Թ

Ֆիլիթը ընդհանրապես է: Երկայն ցողուններ ունի, որոնք իրարու կը փաթառան: Ասոր մէկ հատիկէն կը բուսնի ցողուն մը, որուն վրայ կ'երկարին, հարիւրաւոր ծղօաներ: Անտուր կերպով ածող բոյս մըն է: Եթէ յաճախ ուռաւի, ճիւղերը մէկ մէթրի շափ կ'երկարին, ու շատ խիտ կ'ըլլան: Յօղունը, քուշնային ցողունին շափ հաստ ու կարծր չէ, ուստի իր հունձքը դիւրութեամբ կը կատարուի: Ֆիլիթին (հատիկներուն) կեղեւը թխորակ է, իսկ միջուկը՝ կարմրագոյն:

Երեք համահաւասար բեղմնաւորութիւն ունեցող արտերու մէջ միծամանակ մշակուած եթէ ըլլան՝ քուշնայ, սոսկ և ֆիլիթ, երեք արտերուն արդիւնքները իրարմէ սարքեր պիտի ըլլան, յարդի և հատիկի աւատութեան տեսակէտով՝ ֆիլիթը կը գերազանցէ միւսները: Ասոր յարդը իր կանանչ գոյնը բնու չի կորսնցներ, ու այս գոյնովը կը տարբերի միւսներուն յարդէն: Սակայն, սնունդի տեսակէտով, ըստ գիւղացիներու աւանդական կարծիքին, միւսներուն չի հաւասարիր: հակառակ սոր, կենդանիները զայն աւելի տխորժամ կը գտնեն, ուստի լափելով կ'ուտեն զայն, ամէն անգամ որ տրուի իրենց:

Ասոր հատիկներն ալ, քուշնային պէս, երկամաքարով կ'աղան ու ջուրի մէջ թթուեցնելով (խմորել)՝ քիչ քանակութեամբ կը խառնեն արջառներու կերին հետ:

Գիւղացիները առ ալ իբր սպրցու կը գործածեն: Եթէ ֆիլիթը ընտիր տեսակէ ըլլայ, այսինքն եփուն և ածուն ըլլայ, հաւասար շափով կամ աւելի նուազ քանակութեամբ մը, ազացուած սոսկի հետ կը խառնեն անկէ, կերակուր եփելու համար: Գիւղացիներու չքաւոր մասը մանուսնու, երբ սոսկ ունենալու միջոցներէն զուրկ ըլլայ, կամ սոսկի տարեկան լիցքը անբաւական ըլլայ, վեց ամիսի շափ, ֆիլիթով պատրաստուած կերակուրներով կը բաւականանայ. անոր՝ սոսկնապուրին տեղը՝ ֆիլիթապուրը կը գրաւէ:

Այսպէս ուրեմն՝ սոսկը, քուշնայն, ֆիլիթը, գիւղական անտեսութեան մէջ, իբրև ընդհանր կարեւոր գեր մը կը կատարեն, կազմելով մարդոց և անասուններուն սնունդին մէկ կարեւոր մասը, քանակի և որակի տեսակէտով:

ԺԳ. ԴԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Զ.

ՇՈՒՇՄԱՅ

Ահա բոյս մըն ալ, որ այլապէս գիւղական անտառութեան գլխաւոր մէկ նիւթը կը կազմէ: Ասոր խզն է զոր գիւղացին ձէթի տեղ կը գործածէ, պահոց օրերուն, կերակուելներու մէջ և նոյնիսկ լուսաւորութեան համար:

Շուշման, գարունը, Ապրիլ ամսուան ընթացքին կը սերմանուի: Ասոր ցօղունը, մերձաւորապէս, մէկ մէթը երկայնութիւն կ'ունենայ. հազուադիպօրէն ցօղունէն քանի մը ճիւղեր կը բաժնուին: Ան հասառու քաւակուի է, ունի շատ կակուղ ու փայտեղէն մաս մը, և զայն պատաղ նուրբ կեղեւ մը: Տունկի մը նմանութիւնն ունի, թէև արմատը շատ խոր չէ, և ամէն կողմի վրայ տարածուող նուրբ մզնիքներէ կը բաղկանայ:

Այս ցօղունին և ճիւղերուն վրայ, անոնց երկու կողմերը, տատիճանաբար կաթուններով միացած պտճուկներ կ'երկարին, որոնք երկու մասերէ կազմուած են, և այս մասերը իրարու միանալով չորս խուռչներ կը փակեն իրենց ներքին մասին մէջ, այս չորս խուռչներուն մէջ ահա կարգով կը շարուին շուշմայի թխտրակ հասիկները: Թխտրակ են անոնք երբ հասունցած են, իսկ սպիտակ՝ երբ դեռ խակ են:

Այս բոյսը, երբ հասուննայ, ցորենին, գարին և ուրիշ բոյսերու նման չի ճերմկիր, ընդհակառակն կանանչ գոյնը կը գեղնի: Այս գոյնէն է որ երկրագործը անոր հասուն կամ խակ ըլլալը կը հասկընայ:

Ասոր սերմանումը, երկրագործական լայն փորձառութիւն պահանջող գործ մըն է: Երկրագործը պէտք է որ գիտնայ թէ՛ այս ինչ արտին մէջ ի՞նչ քանակութեամբ շուշմայ պիտի սերմանուի: Եթէ հողը զօրաւոր է արգասաբերութեան տեսակէտով, կրնայ տեւի քանակութեամբ շուշմայի սերմանումին պատշաճիլ: Բայց պէտք է ցանցաւ ըլլայ սերմանումը այն հողին վրայ, որ նուազ արգասաբեր է:

Շուշման՝ քաղելով խուրճերու կը վերածեն, ու, այս խուրճերը,

սայլեշով, կարերը կը փոխադրենա Ասիկա չի կամնուիր, որովհետեւ
ցողունը յարդ չ'արտադրերս Խուրձերուն կեմերը (կապ) կարելով,
զանոնք կը տարածեն ամբան քարի արեւին տակս Այս վիճակին մէջ
քանի մը շարաթ կը մնան անոնք: Երբ բոլորովին չորնան, պա-
ճուկները մէջ տեղէն, վերէն վար երկուքի կը բաժնուին, առանց
կոթուններէն զատուելու, կը բացուին նաեւ ներքին չորս նուրբ
մաշկերը, որոնք չորս խռոտներու մէջ հասիկներու շարքերը կը
ծածկեն, ու, այս կերպով, անցք կը բանան անոնց, թեթեւ ցնցումի
մը ազդեցութեամբ անկէ դուրս թափելու:

Չորցած ցողունին արմատէն բանելով վեր կը բարձրացնեն, գա-
գաթները դէպի գետին դարձուցած, և կը ցնցեն զայն. այս ցնցու-
մէն, շուշմայի հասիկները անձրեւի պէս գետին կը թափին: Այս
գործողութիւնը շուքմայ բօքվել կ'անուանեն:

Շատ մը գիւղերու մէջ, փոխանակ խուրձերը կալին երեսը տա-
րածելու, զանոնք երեքական կ'առնեն և անոնց գագաթները իրա-
րու միացնելով վրանածեւ կը կանգնեն եւոտանիի պէս ու այս վի-
ճակին մէջ աւելի լու կը չորնան, և շուշման, թօթվելէ առաջ գե-
տին չի թափիր:

Թօթվում շուշմային ցողունները, զորոնք ցոլ կ'անուանեն,
իբրեւ վառք կը գործածեն: Այս ցոլերուն կեղեւը կը հանեն, զա-
նոնք բարակ ծղօտներու կը փերածեն և յետոյ, անոնց ծայրերը հա-
լեցուած ծծումբի մէջ թաթխելով կը պահեն, ըստ հարկին իբրեւ
լուցկի գործածելու համար: Շուշմայի ցողունը շատ դիւրաւ առ է:

Գիւղացին, միայն շուշմային ցոլերը չէ որ կ'օգտագործէ, իբրեւ
վառք, և իբրեւ կայցանք, այլ՝ կ'օգտագործէ նաեւ անոր իւղը, անոր
խիւսը, և նոյնիսկ հատիկը իր պարզ վիճակին մէջ:

Հատիկը կ'աղնձեն տապակներու մէջ, կամ ձիթի հանքերու վառ-
ուերուն մէջ: Այս աղնձուած հատիկները կ'առան, կամ զանոնք սան-
դերու մէջ կը ձեծեն ու խիւսի կը վերածեն: Այս խիւսը համեզ
կ'ըլլայ, զայն հացի վրայ քսելով, կամ երբեմն ոռւպի հետ խառնե-
լով կ'առան, կամ անով պահոց կերակուր կը պատրաստեն, անկէ
կը շինեն նաեւ գետիկներու միջուկներ:

Ձիթի հանքերու (ձիթահանք) փուռերուն մէջ մեծ շափով աղնձե-
լէ յետոյ, անոր կալին վրայ կը ձեծեն լու մը կամ կը ձմլեն մին-
չեւ որ մանրուի, առանց իւղը դուրս տալու: Այս վիճակին մէջ կը
լեցնեն բոլորածեւ պարկերու մէջ, որոնց կեղրոնը լայն ծակ մը
թողուած է միշտ. այս պարկերը մազով հիւսուած են, այնպէս որ
իւղը չեն ծծեր: Ծեծուած շուշմայով լեցուն պարկերը իրարու վրայ
կը շարեն ձիթի հանքին պատին վրայ շինուած մէկ մեծ հանին մէջ,
տափարակ քարէ յատակի մը վրայ, որ կը միանայ վիմափոր փոքրիկ

գումարի կամ աւազանի մը: Պարկերուն վրայ կը յանգին երկու հսկայ գերաններու ծայրերը, որոնք պտուտակաւոր շատ զօրաւոր լծակներ կը ձեւացնեն: Ասոնց ճնշումին տակ, շուշմային իւղը կը գտատուի ալիւրէն, և կը հոսի վիճափոր աւազանին մէջ:

Այս իւղը, գիւղացիները շիրիկ կ'անուանեն: Շիրիկը՝ գիւղացիներու համար այն է ինչ որ է ձէթը պոլսեցիներու կամ ձիթենիի մշակութիւն ունեցող երկիրներու համար: Ձիթենին անժամօթ է մեր գիւղացիներուն, ինչպէս հասեւ ձէթը: Ձէթ անուանին տակ, մեր գիւղացիները կտաւատի իւղը կը հասկնան, զոր միայն լուսաւորութեան և մեքենաներու համար կը գործածեն:

Պահոց կերակուրները եթէ իւղաւոր են, անպայման շիրիկով պէտք է որ եփուած ըլլան: Անով կ'եփեն տպուրներ, նոյնիսկ եղինձ, կը տապկեն զանազան բանջարեղէններ, կը պատրաստեն իւղով հացեր, բլիթներ, ևն:

Ե. Գ. ԳՆՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Է.

ԿՏԱՒԱՏ

Կտաւատը, գիւղացիներուն համար, ո՛չ նուազ օգտակար բոյս մըն է: Այս բոյսը, մասնաւորապէս կը մշակուի, միւսներուն պէս, բայց անոնց չափ խնամքի առարկայ չըլլար, որքան կը յիշենք, պետական տուրքէ կամ տասանորդէ զերծ էր:

Յօղունը շատ չի բարձրանար. վերջին բարձրութիւնը կ'ըլլայ 75 սանդիւմէթր: Իր բազմաթիւ ճիւղերը, իրենց գազաթներուն ծայրերը կը կրեն սիսեռի մեծութեամբ գնդիկներ, որոնց իւրաքանչիւրին մէջ կ'ամփոփուին տասնեակ մը հատիկներ, խորշիկներուն մէջ ճառագայթաձեւ շարուած:

Հատիկները շուշմայի հատիկներուն կը նմանին ձեւով, բայց անոնցմէ քիչ մը խոշոր են: Ոսկեգոյն և սահուն մակերես ունին: Գիւղացին զայն կ'անուանէ կսաւսի հուլիս:

Կտաւատը չեն հնձեր, այլ կը քաղեն: Անոր ցողունը չեն օգտագործեր. ոչ ալ ցողուններուն մետաքսաման քուզը, որմէ պիտի կրնային ընտիր կտաւներ հիւսել:

«Կտաւտի հունտ»ը կ'օգտագործուի միայն իր իւզին համար:

Ձիթի համաքերու փուռերուն մէջ կ'աղնձեն, անոր կալին վրայ քարով (երկանաքար՝ որ իր լայն շրջապատին վրայ կը թաւալի աւաատաղէն կալին կեդրոնը ագուցուած շարժուն առանցքի մը շուրջը) կը ճզմեն, ալիւրի կը վերածեն, յետոյ շուշմային պէս, մասնաւորապէս մազէ հիւսուած բոլորածեւ տրպակներու (տարի) մէջ լեցնելով մեքենական մեծ ճնշումի կ'ենթարկեն: Այս ճնշումին տակ կտաւտի հունտին իւզը կը դատուի և կը հոսի ճնշարանին առջեւ շինուած վիմափոր փոքրիկ աւազանին մէջ:

Գիւզացին, այս իւզը ձեթ կ'անուանէ: Չայն կը գործածէ միայն լուսաւորութեան և մեքենաներ, գործիքներ, պատուհանի թուղթեր, եւն իւզոտելու համար: Հողէ շինուած, թրծուած ու ներքին երեսը մուրտասանկուած փոքրիկ աման մը, որուն եզերքը փոքրիկ կառցի մը պէս դուրս կ'երկարի, գիւզացիին գործածած ճրագն է: Ասոր մէջ կը դրուի պայրոզը (պատրոյզ) գալարուած վիճակի մէջ, մէկ ծայրը միայն ամանին խողովակածեւ կառցին վրայ կ'երկարի: Ասոր վրայ կը լեցնեն ձէթը ու ձէթով թրջուած պատրոյզին ծայրէն կը վառեն: Այդ փոքրիկ ամանով ձէթը, քանի մը ժամ տունը լուսաւորելու կը բաւէ:

Ձէթ, ձիթպան, ձիթաման, ձիթճախ, ձիթման բառերը հասարակ, շատ սովորական բառերն են իր բարբառին:

Այս ձէթը, կերակուրներու համար երբեք չեն գործածեր, միայն 1895ի կտորածէն ու թալանէն յետոյ, գիւզացիներ, չքաւորութենէ մզուած, զայն սովորական իւզի տեղ գործածեցին քանի մը ամիս:

Ճնշումէն յետոյ, երբ ձէթը կտաւտի հունտէն կ'անջատուի, կը մնայ իւզոտ ալիւր մը, ցամքած խիւսի նման, այն է դիրտը: Ասիկա կոչօն կանուանեն: Չայն, ձմեռնային ցուրտ եղանակին միայն, եզներու և ցուլերու կը կերցնեն. շատ զօրաւոր ու գիրցնող անուող մը կ'ըլլայ արջառներուն համար:

Կտաւտի մշակութիւնն ուրեմն, այնքան ընդարձակ չէ, իւրաքանչիւր տուն 30-40 լիտր ձէթով կը բաւականանայ:

Վերջին ժամանակները քարիւղի գործածութիւնը մանաւանդ սկսաւ տարածուիլ գիւղերու մէջ, և կտաւտի ձէթին կարեւորութիւնը մտամբ նսեմացուց: Քարիւղէն զատ, լուսաւորութեան համար, կը գործածուէր կանակէրչաքի (արջընկոյզ, *datura stramonium*) հունտին իւզը: Այս պատճառաւ, գիւզացին փոքրիկ արտ մը միայն կը յատկացնէ, կտաւտի մշակութեան:

Կտոււտաւոր չեն հնձեր մանգաղով, զայն արմատէն կը հանեն: Հունտերը զտակուս համար չեն կամներ զայն, այլ կը ծեծեն, ծանր փայտերով: Փոքրիկ գնդիկները, որոնք հասիկները կը պարունակեն, շուտով կը փշրին և հոսուելով կը զտասուին իրարմէ:

Քանի որ կանակէրչաքի յիշատակութիւնն ըրի, անոր մասին ալ կարգ մը ծանօթութիւններ աւելցնեմ՝ կտուտաւոր այս գլխուն մէջ, փոխանակ անոր առանձին գլուխ յտակացնելու:

Կանակէրչաքը մինչեւ երկու մէթր բարձրութեամբ տճող տունի մըն է, քան բոյս մը: Խոշոր տերեւներ ունի, ցօլունը եղէգի պէս կարծր է: Ծառատունկի մը պէս շատ մը ճիւղերու կը բամբուլի և տանց յօգուածներուն միջեւ կը ցցուի մսեղէն փուշերով ծածկուած մսեղէն կեղեւով իր պտուղը, որուն ներքեւը կայ փայտեայ կեղեւ մ'ալ: Այս կճեպին մէջ կան չորս խորշեր, որոնց մէջ կ'ամփոփուին լուբիայի մեծութեամբ, թուխ ու ճերմակ կոր գիծերով զարդարուն հաւրք բայց կարճր կեղեւով հունտերը:

Կանակէրչաքը թունաւոր բոյս մըն է, եթէ կենդանիները ուտեն զայն, նախ կը տկուին (կ'ուռին), յետոյ կը մեռնին: Այս պատճառաւ, լնդհանրապէս բամբակի արտերուն եղերքները կը ցանկն զայն, որ աճելով՝ կենդանիներուն անմերձենալի ցանկապատ մը կը կազմէ: Կենդանիներ բնազդաբար չեն մօտենար անոր և հետեւաբար ցանքը զերծ կը մնայ անոնց աւերիչ արշաւանքներէն:

Ասոր միայն հունտերը կը քաղեն, ու տանիքներու վրայ կը լեցնեն արեւին տակ, որուն ջերմութենէն, կճեպը չորնալով յանկարծ ճարձատիւնով կը բացուի, և մէջի հունտերը մինչեւ մէկ մէթր կամ աւելի հեռուները կը ցատկեն: Այս պատճառաւ, անոր շուրջը տարպասէ (*) պատով մը կը փակեն:

Ասոր հունտերը շատ աւելի իւղ կը պարունակեն քան կտուտաւորն ու շուշմային հունտերը. ուստի զայն ճնշելու և իւղէն զտակուս համար շատ քիչ կ'աղնձեն, և քիչ կը ծեծեն «ձիթածանուց քարով»: Կեղեւները կտորելուն պէս, կը դնեն ձիթիճանքի վիթխարի մամուլին տակ:

Ուշագրաւ պարագայ մը կայ զոր հարկ է յիշատակել: Այս բոյսը, գլխաւած է որ ժամագրաւայր է շատ մը թրթուրներու: Քիւղացիները կը կարծեն թէ, այս թրթուրներուն յաճախութեամբն է որ տունիը կը թունաւորուի և մահացու կը դառնայ իրենց կենդանիներուն:

(*) Տես ասրպար իր մասնաւոր գլխուն մէջ:

ԺԵ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Ը

ԶԻԹԻՆԱՆՔ

Իւզաւոր հունտեր արատաւրող բոյսերու մշակութեան շարքին մէջ, շեղում մը ընելով, հարկ կը տեսնեմ բացասել թէ ի՞նչ է ձիթի հանքը:

Իւզ արատաւրող այս պարզ գործարանը, իր վաղնջական կազմութեան վրայ, նորութիւն ըլլալով, ոչ ի՞նչ աւելցուցած է: Բաւական ընդարձակ շէնք մըն է միւսյարկ, ճիշդ գեանին հաւասար յատակով, որ քանի մը գլխաւոր մասերէ կը բաղկանայ, փուռուեր (փուռ), կալը, նուկէկը, նահանգամբ, գերանները, սուպակները:

Փուռը, ամէնուն ծանօթ է, և ոչ ինչով կը տարբերի սովորական փուռերէն: Ընդարձակ ներքին անջրպետ մը ունի, որուն մէկ կողմը դիւրաւառ նիւթեր, ինչպէս շուշմայի, կանեփի ցուր և կտաւատի ձանձ կը վառեն, միւս կողմը աղնձուկիք ընդեղէնը կը լեցնեն: Ասոր շտիւր մէկ դիւր ըլլալու է: 1 դիրքը կրնայ ըլլալ 12—24 օխայ, թէև այս սահմանը այնքան ճիշդ չէ: Դիրքը ըսելով պիտի հասկնանք այն քանակութիւնը, որ կալին ընդարձակութեան յարմարելով երկանաքարով դիւրութեամբ կրնայ ծեծուիլ: Իւզաւոր հունտը որոշ սատիճան աղնձելէ յետոյ պէտք է ծեծել հատիկները մանրելու համար:

Կալը, մէկուկէս մէթր արամագծով և գեանէն 70 սանդիւմէթր քարձր, բոլորակաձեւ քարաշէն սիւն մըն է, որուն վրան սալաքարերով ծածկուած է, առանց ո՛րեւէ անհարթութիւն ունենալու: Այս մակերեսը քիչ մը գոգաւոր կ'ընեն, որպէսզի ընդեղէնները կամ արմտիքը՝ ծեծուելու գործողութեան ընթացքին, միշտ փոխանակ եզերքներէն դուրս թափուել, դէպի կեղրոնը, ծեծող քարին ներքեւ հոսին: Կալին կեղրոնը հաստատուած փոս երկաթի մը մէջ կ'ազուցուի գերանի մը երկաթապատ կրունկը, որուն միւս ծայրն ալ կ'ազուցուի՝ առաստաղին գերանին հետ հաստատուած երկաթեայ կամ մըրջակի մը մէջ: Այս ուղղաձիգ գերանը կրնայ իր կրունկներուն վրայ դառնալ ըստ հարկին: Երկանաքարը, որուն գիւղացիները ձիթի հանուց քար անունը կուտան, իր լայն շրջագիծ եզերքներով կալին վրայ կը նստի, իսկ իր մակերեսով կը կրթնի՝ կալին կեղրո-

նին և սուսաստաղին մէջ ազուցուած դերանին, որուն հետ աղխաաղխա-
 սած կ'ըլլայ: Քարին կեղրանէն և սիւնին մէջակէն հորիզոնաձեւ
 լուծ մը կ'երկարի, և այս լուծին ծայրը սամիներու միջոցաւ քարը
 դարձնող եզան կամ դամէշին պարանոցին կը կապուի: Կենդանին
 շրջանակաձեւ կը դառնայ կալին շուրջը, իրեն հետ դարձնելով քարը
 և սիւնը թիանգասայն: Որպէսզի կենդանիին խելքը չդառնայ, աչ-
 քերը երկու քովերէն կը կապին, սուսաժամասը միայն բայ կը թողուն:

Չիթպանը, որ թի մը ձեւքը, ձիթ իհանուց քարը դարձնող կեն-
 դանիին կը հետեւի, շարունակ՝ ծեծուող արմախքը վրայ կուսայ (քա-
 րն կզերքներէն դուրս մնացած հուսակերը կամ ցորենները գէպի կալին
 կազրանը կը մզէ, որպէսզի քարին հորովական ծիրին վրայ դանուի):

Կալին վրայ իւզուար հուսակերը սրոշ սատիճանով մը կը ծեծ-
 ուին: այսինքն ծեծելուն նպատակն է փշրել զանոնք, սուսնց անոնց
 իւզը հանելու: Ուստի շուշման, մանուսնոգ կատուստի հուսաը միշտ
 աւելի կը ծեծուին, որովհետեւ անոնց հատիկները աւելի դժուար կը
 փշրին: Իսկ կանակէրչաքը, որ շատ իւզ կը պարունակէ և հատիկներն
 ալ խոշոր ըլլալով դիւրութեամբ կը փշրին, քիչ ժամանակ կը ծեծուի:

Չիթիհանքի կալին վրայ կը ծեծուին նաեւ արմախքներ, անոնց-
 մէ՛ ծեծած, կորկոտ և ձուար ունենալու համար: Ասոնք ծեծուելէ
 սուսջ չեն աղնծուիր, և կը ծեծուին միայն իրենց թեփերը հանելու
 համար: Ծեծուելիք արմախքին վրայ քիչ մը ջուր կը սրակեն, որ-
 պէսզի՝ թէ թեփը դիւրութեամբ անջատուի, և թէ հատիկները
 չփշրին:

Չիթիհանուց կալը և իր վրայ կատարուելիք գործողութիւնները
 սսոնք են:

Ճահաննամը՝ ձիթ իհանքին շէնքին երկրորդ մասն է, որ սուսջին
 մասէն 1 1/2 մէթր խոր է, նոյն սուսաստաղին ներքեւ. 4-5 մէթր
 լայնութիւն և 6-7 մէթր երկայնութիւն, 6 մէթր ալ բարձրութիւն
 ունի: Մէկ պատին վրայ հոն մը շինուած է սրբատաշ քարերով ու
 փոսացած սալայատակով, 1 1/2 մէթր բարձրութեամբ, 0,80 սանդի-
 մէթր խորութեամբ և մէկ մէթր լայնութեամբ. սաոր յատակին կը
 միանայ վիմափոր փոքրիկ աւազան մը:

Այս փոս յատակին վրայ է որ կը շարուին ծեծուած ընդեղէնով
 լեցուած բոլորաձեւ պարկերը, թուով՝ 10—12 հատ. ու այս պար-
 կերուն վրայ կը յանգին երկու հակայ դերաններու ծայրերը:

Գերանները, իրարու միացած, ճնշող ճշմարիտ լծակ մը կը ձե-
 ւացնեն: Այս լծակին կառուանը կամ յինարանն է հոնին վերին բա-
 րաւորը որ նոյնինքն պատին վերին մասն է, ծանրութիւնը՝ երկուքին
 ծայրերուն կատարելիք ճնշումն է, իսկ զօրութիւնը՝ կառուանէն 4-5
 մէթր հեռու երկարող երկու դերաններուն միւս ծայրերը կը կազմեն:

Այսպէս .

Քերամներուն վերջին երկու ծայրերը հաստ քառակուսուած կոճ-
 դով մը իրարու միացած են ամրապէս , իրարմէ կէս մէթր անջրպե-
 սով մը անջատուած : Այդ միացնող կոճղին մէջտեղը , որ գերամն-
 ները իրարմէ բաժնող անջրպետին միջև կ'իջնայ , երկու ծայրերէն
 հաւասարապէս հեռու , պտուտակաւոր ծակ մը կայ 20 սանդիմէթր
 արամագծով : Այս ծակէն կ'անցնի սերիչ պտուտակաւոր գերան մը ,
 որ երկու կրունկներով գետնին և աւաւաւղին գերանին միացած է
 կամրջակով , և կրնայ ինք իր վրայ հարմար գիւրաւթեամբ : Այս
 պտուտակաւոր սիւնին ստորին մասին վրայ հաստատուած է մեծ եր-
 կանաքար մը նուկեկ անունով , գետնէն 70 սանդիմէթր բարձրու-
 թեամբ : Ասիկա կը կազմէ լծակին շարժող մասը : Երբ նուկեկը
 դարձնեն աջ կամ ձախ , պտուտակաւոր սիւնը միասին կը դաւնայ ,
 և իր միացնող երկու գերամներուն ծայրերը հեռուհեռէ վեր դէպի
 սաւաւաւղ կը բարձրանան , կամ վար կ'իջնեն : Այդ , ամէն հեղ որ
 գերամներուն զօրութեան կողմը դանուող ծայրերը վեր բարձրանան ,
 միւս ծայրերը դէպի վար կը ճնշեն իրարու վրայ շարուած և ծեծ-
 ւած ընդեղէնով լեցուած մագանիւս պարկերուն վրայ : Ասիկա
 լծակներու ամէնէն զօրաւոր տեսակին կը պատկանի , և իր արտագ-
 րած սաստիկ ճնշումին տակ իւզը մանրուած ընդեղէններէն կ'ան-
 ջատուի , ու կը հոսի վիմափոր աւաղանին մէջ :

Նուկեկը մէկ մէթր արամագծով 50-60 սանդիմէթր հաստու-
 թեամբ երկանաքար մըն է , որ , պտուտակաւոր սիւնին հետ լծակի
 սերիչ մէկ տեսակը կը կազմէ : Սիւնին պտուտակներուն քայլերը
 իրարմէ 6-7 սանդիմ հեռուորութիւն ունին : Նուկեկը ամրապէս
 հաստատուած է պտուտակաւոր ստորին մասին վրայ , գետնէն 0, 70
 սանդիմէթր միայն բարձրութեամբ : Ասիկա ճախարակի դեր կը կա-
 տարէ . նուկեկը եզերքներէն բանելով կը դարձնեն և այս կերպով
 աւաղ կուգայ հարմարական անդիմադրելի ոյժ մը , որուն թափին տակ
 բուն լծակին (գերամներուն) միւս ծայրը բարաւորէն արդիւուած
 վիթխարի ճնշում ի գործ կը դնէ պարկերուն վրայ :

Իւզի , ձէթի համար կը գործածուին պարունակութեան չափեր ,
 որոնք ամաններ են . ինչպէս՝ նուկի , բուղբ և լիւր : Նուկին , ծան-
 րութեան չափի վերածուելով քանակահինգ տիրէմի կը հաւասարի .
 ութը նուկին մէկ բուղբ է , ութը թուղթը 200 տիրէմի կամ կէս օ-
 խայի հաւասար է . տասներկու թուղթը մէկ լիւր է , այն է՝ վեց օ-
 խա : Սնշուչա , պարունակութեան և ծանրութեան չափերուն այս
 բաղդատութեան մէջ , նիւթերուն տեսակարար ծանրութիւնը նկատի
 չենք ունենար , բաղդատութիւնը կ'ընենք պարզապէս թորեալ ջուրի
 ծաւալն ու ծանրութիւնը միայն նկատի ունենալով :

Ահա, Բալուի ձէթի՝ կամ բուսական իւղեր սրտադրող գործարանը առ է. և կը ներկայացնէ, ամենայն հարադատութեամբ իր նախնական տիպը. գիւղացին ոչի՞նչ աւելցուցած է անոր յորինուածութեան վրայ, և ոչի՞նչ սրտադրուցած է անկէ: Ինչ որ եղած է ցարդ, նոյնը եղած է նաեւ դարեր առաջ: Ամէն գիւղ ձիթիանք չունի, քրդական գիւղեր քնաւ չունին. հայ գիւղերէն քիչեր միայն ունին, իսկ միւսները այս քիչերէն կ'օգտուին:

Չիթպանը՝ ձիթիանքը բանեցնող աշխատաւորն է, ձիթպրնի լաթը, այն ձիթոտ զգեստն է, զոր աշխատաւորը կը հագնի ձիթիանքի աշխատութիւններուն ընթացքին:

Այս շեղումով վերջացնելով ձիթիանքի կազմութեան և գործածութեան ծանօթութիւնները, կը շարունակենք մշակութեան մասին մեր գրութիւնները:

ԺՁ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Թ.

ԲԱԿԼԱՅ

Ընդեղէններու կարգին կը պատկանի նաեւ բակլան: Բալուի մէջ ասոր մշակութեան լայն գետին կը յատկացուի, որքան չի յատկացուիր մերձաւոր գաւառներու մէջ: Միտոյն լեւնաքնակ քիւրտերը չեն մշակեր զայն:

Այս բոյսին ցօղունը ընդհանրապէս տերեւներով շրջապատուած կ'ըլլայ, ու տերեւներուն ցօղունին միացած յօդուածէն կ'երկարին՝ հատիկները պարունակող՝ լայն, ուռած ու երկայն պանուկներ: Բարձրութիւնը 75 սանդիմէթրէն աւելի չըլլար: Ցօղունը թէեւ հասա կ'ըլլայ, բայց կարծր չըլլար, այնպէս որ մոնգաղով քաղել կարելի կ'ըլլայ: Քաղելէ կամ հնձելէ յետոյ, խորումներու կը վերածեն, ու խորոմի վիճակին մէջ է որ կալ կը փոխադրեն:

Գիւղացիները, բակլան, կանանչ ու մատղաշ վիճակին մէջ, հազուադիպօրէն իբր բանջարեղէն կը գործածեն, անկէ կերակուրներ պատրաստելով: Բայց հատիկները, պահոց օրերուն, ցորենի հետ խաշելով, և հետը կարմիր պղպեղ ալ խառնելով կ'ուտեն իբրեւ կերա-

կուրս Արդէն յ լուրիայի շատ տեսակներ ունին, և պէտք ալ չին տես-
ներ բակլանս իբրև բանջարեղէն գործածելու:

Կալը իոխագրուած խորմները կը կամենն, կը հասնն, հատիկ-
ները կը զատեն փշրուած տերեւներէն: Իսկ ցողունները, չորնալէ
յետոյ կամ հուամի գործողութեամբ շմանքուելու տաախճան կը չոր-
նան: Գիւղացիները, զայն, շուշմայի և կանեփի ցոլերուն պէս կը
վառեն:

Գիւղեր ալ կան, ուր բակլային հատիկները աղալով ալիւրի կը
վերածեն, այս ալիւրը ցորենի ալիւրին հետ խառնելով հաց կը
պատրաստեն անկէ: Այսպիսի խառնուրդ ալիւրով պատրաստուած
հացը թէև այնքան ախորժանամ չըլլար, բայց աւելի անդարտը
կ'ըլլայ:

Բակլայի հատիկներն ալ, թրջելով կը խառնեն յարգերու հետ
և արջառներուն կը կերցնեն ձմեռային եղանակին. ա՛ս է անոր մշա-
կութեան զլխաւոր շարժառիթը, որովհետև, ինչպէս վերը ըսուե-
ցաւ, գիւղացին քիչ անգամ զայն կը գործածէ իբրև հուազ կարե-
ւորութիւն ունեցող կերակուր մը:

Ժ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Ժ.

ԿՈՐԵԿ (ԿՈՐԵԱԿ)

Կորեկը՝ արմախքներու խումբին կը պատկանի: Հատիկները՝
չտա մանր, սակեզոյն, կարծրիկ և կլոր կեղևի մը մէջ, սպիտակ
գոյնով ալիւրէ միջուկ մը կը պարունակեն:

Սերմանումը տեղի կ'ունենայ՝ Յաւիս ամառու սկիզբները, իսկ
հունձքը՝ Սեպտեմբեր ամսուան ընթացքին: Սերմանումէն չորս հինգ
օր յետոյ, արտը կանանչութեամբ կը զարգարուի:

Երկրագործները՝ իրենց ջրարբի, կամ աւելի ճիշդը ճախճախուա
տքերը կը յատկացնեն կորեկի մշակութեան, նոյն իսկ ցորենի նոյն
տարուան խոզանը, այսինքն ցորենը հնձելէն անմիջապէս յետոյ, արտը
կ'ուռզեն, քիչ մը ցամքելէն յետոյ կը հերկեն, և սերմանումը կ'ը-
նեն: Երբ կորեակի ցանքը բուսնի, ալ այնուհետև յաճախ ուռզե-

լու է, նայնիակ մինչեւ որ հասունեայու մօտ ըլլայ, գրեթէ ջուրը
անպակաս կ'ընեն: Ասոր համար է որ կորեկի կը յատկայ ունի ընդ-
հանրապէս այն արտերը, որոնք գետափներու կամ առուներու ե-
զերքները կը դանուին, և ցած ու ստախարակ կ'ըլլան: Շեղ կամ
զտախիւր եղող արտերը սնոր մշակութեան երբեք չեն յարմարիր:
Ուղղութիւնը շարաթը անգամ մը տեղի կ'ուեննայ, սկիզբները, իսկ կը
դադրի երբ այլեւս հասունցած է, և հնձուելու մօտ:

Յօղունը կէս մէթրէն նուազ բարձրութիւն կ'ուեննայ ընդամէնը,
ու կը վերջանայ բազմաթիւ ճիւղերէ կազմուած գարգամնակով, որ
ծանրաբեւեռուած կ'ըլլայ խաղողի ողկոյզի նման շատ խիտ, ու բազ-
մաթիւ հատիկներով: Ատիկա բոսին ամէնափափուկ մասն է, աղ-
ուամաղերով ծածկուած է, և քիչ մը հակած կ'ըլլայ երբ հասունցած
է, կամ մօտ է հասունեայու, տակնադործուած փունջերու նմանու-
թեամբ:

Կորեկը՝ մանգաղով կը հնձեն: Ասոր հունձքը, որ Սեպտեմբեր
ամսուն տեղի կ'ուեննայ, երբ, օգերը, բազդաստարար աւելի զով
կ'ըլլան, կ'իները իրենց համար հաճելի աշխատութիւն մը կը համա-
րեն: Քաղելէ յետոյ, խուրձերու կը վերածեն զանոնք: Խուրձերը՝
շարաթներով դիզուած չեն թողուր արտին մէջ, այլ, քանի մը օր
միայն, խողանին վրայ ցիր ու ցան կը թողուն արեւին տակ, մին-
չեւ որ բաւական մը չորնան: Ասկէ յետոյ կը փոխադրեն կալը, ուր
այլեւս ո՛չ մէկ արմաթ կամ ընդեզէն մնացած կ'ըլլայ:

Կորեկով կը վերջանան կալերու այդ տարուան աշխատութիւն-
ները: Խուրձերը ցանցաօրէն կը շարեն կալին տարածութեան վը-
րայ, անոնց կեմերը (կապ) կը կարեն, կը տարածեն կամ քիչ մը
կ'անօսրացնեն, որպէսզի արեւը դիւրութեամբ թափանցէ անոնց մէջ:
Քանի մը օրեր, այս անօսրացած վիճակին մէջ մնալով, ցօղունները
կը չորնան, և դիւրութեամբ կամնուելու պատրաստ կ'ըլլան, թէեւ,
ասոր ցօղունները չոր վիճակի մէջ իսկ իրենց եղէգնեայ ճկնութիւ-
նը կը պահեն: Սակայն, կամին հատու ակումներէն (կայծքարեր՝
կամին ներքին երեսին վրայ շարուած) կը մանրուին և յարդի կը
վերածուին: Սեպտեմբերը կը հարկադրէ հողագործը որ փութացնէ
իր այս վերջին աշխատութիւններն ալ, որովհետեւ շատ չանցած անձ-
րեւները պիտի սկսին: Ուստի, քանի մը օրուան մէջ կը կամնէ, կը
հոսէ, և անձրեւ չդպած շտեմարան կը փոխադրէ: Եթէ պատահի որ
անձրեւէն թրջի, կորեկին խերը կ'անիծուի..., այլեւս չորնալու հնա-
րաւորութիւն չունենար, խոնաւութիւնը իր մէջ պահելով, ձմրան
ամիսներուն կը նեխի, և անգործածելի կը դառնայ:

Կորեկը կ'աղան, ալիւրի կը վերածեն, և այդ ալիւրով հաց կը
պատրաստեն: Հայ գիւղացին կորեկ-հաց կը գործածէ միայն սովի

օրերուն, կամ շատ քիչեր երբեմն, ծայրագոյն չքաւորութեան սրտա-
ճառաւ, անով իր կեանքը կը փրկէ: Որովհետեւ, սա, ցորենին
բաղդասամբ շատ ածան է, երբ գրիւ մը ցորեն (24-28 օխտ) 40
գահեկանի բարձրանայ, գրիւ մը կորեկը 6-7 գահեկանի կրնայ գըն-
ուիլ: Երբեմն, ցորենի նուազութեան կամ անբաւականութեան հա-
մար, որպէսզի տարեկան ալիւրի պակասը միջնաւ սառնիկայ հունձ-
քի օրերը կարելի ըլլայ բաւեցնել, կորեկի ալիւրով կը լրացնեն
պակասը:

Իսկ քիւրտերը իրենց հացը, սովորապէս կորեկի ալիւրով կը
պատրաստեն: Անոնց մէջ քիչ է բայտաւթիւնը, որ ցորենալիւրի
հացով կը անանի: Այսպէս սերեմն, իրենց մշակութեան գլխաւոր
նիւթը կորեկն է, մինչ հոյ գիւղացիներ՝ ցորենը: Կորեկալիւրի
հացը ոսկեգոյն է և քիչ մ'ալ քաղցրամ, բայց դժուարամարս է:

Կորեկալիւրով հաց սրտարտասելու համար, նախ ալիւրը կաթ-
ասյի մը մէջ եռացած ջուրով քիչ մը կը խաշեն, յետոյ, կաթասյէն
տաշտի մը մէջ պարպելով կը շաղեն, մինչև որ թանձրանայ հայսը:
Դիտելի է որ կորեկալիւրը, ցորենի ալիւրին չտփ կաշուումով իւր
չունի. ուստի որքան ալ շաղեն, դժուարութեամբ իրարու կը փակ-
չին մասնիկները, և հետեւաբար բարակ նկանակներու չի վերածուի
հայսը: Անոր նկանակները թանձր կ'ըլլան, ու թոնիւրի կողերը՝
անկարելի է փակցնելով եփել, այլ զինկէ թիթեղներու (սաճ) վրայ
կ'եփեն:

Այս հացը թարմ եղած ատեն միայն կարելի է ուտել. այս պատ-
ճառաւ, օրը կամ երկու օրը անգամ մը անպատճառ պէտք է թարմ
հաց եփել:



ԺԸ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԺԱ.

ՑՈՐՆՆ ԵՒ ՀՈՒՆՁՔ

Գիւղացիի, գարնան ու տարան եղանակներուն ընթացքին, ցորենի յաակացուած արտերը, սերմանելէ առաջ, չորս հինգ անգամ կը հերկէ, իւրաքանչիւր հերկումէ վերջ 10-15 օրուան դադար մը տալով: Այս հերկումներէն յետոյ, արտերը կը մնան իրենց վիճակին մէջ մինչեւ սերմանումի օրերը, առատօրէն ու ոնտրգել կերպով ծծելով արեւին կենսատու ճառագայթներն ու քեղմնաւորիչ օդը: Հողը, այս կերպով պատրաստ կ'ըլլայ ընդունելու իր մէջ ինկող հասիկները, և զանոնք կենսաւէտելու:

Սեպտեմբեր ամսուան 10-15 օրերուն երկրագործը կ'սկսի զանոնք կարգով ուռոգելու, եթէ անոնք ջրարբի արտեր են, հակառակ պարագային, պիտի սպասէ այնան առաջին անգամ տեղացող անձրեւներուն:

Արեւէն այրած մրկած հողերը, ջուրէն տնձրեւէն տառնալով հարկ եղած ամակուլիւնը, թարպիս կ'ըլլան (կը խոնաւնան), ինչպէս կ'ըսէ Բալուի երկրագործ գիւղացին, պատրաստ կ'ըլլան սերմանումի:

Նախ, առաջին անգամ ուռոգուած արտին սերմանումը կ'ընէ երկրագործը, յետոյ՝ անկէ անմիջապէս վերջը ուռոգուածինը, այսպէս ուռոգման կարգը առանց խախտելու, կը շարունակէ իր գործը: Եթէ այդ կարգը չպահուի, արտերէն ոմանք իրենց խոնաւուլիւնը յարմարագոյն աստիճանը կը կորսնցնեն, որով սերմանումի ճիշդ ժամանակը կ'անցնի և ցանքը լաւ չըլլար:

Արտերէն առաջին ուռոգուողը երբ կ'ունենայ իր խոնաւուլիւնան պահանջուած աստիճանը, տան մեծը կը հասկնայ, և երեկոյին երբ բոլորը կը հաւաքուին ճաշասեղանին շուրջը, չուշանար յայտարարելու. «Տա՛ (ձօ՛), տղա՛ք, լարին (արտին անունը) թարպիսը եղեր ը՛, վաղը ես մէկուլ օր դըցէք (գոցէք) ու սերմը ցանեցէ՛ք»:

Այս հրամանը չի կրկնուիր, աւաւտուուն իսկ, սերմանացանը, հերկուը, և ցոքուը՝ ընտրուած սերմնահատիկով, եզներով, արօրով

ու ցաքով միտասին, արագէն արաին գլուխը կը գտնուին: Յանողը մեծկակ սաւանի մը երկու տնկիւններուն ծայրերը իր մէջքին կը կապէ, անոր մէջ կը լեցնէ տերմըցու ցորենը (սերմնացու) և միւս երկու տնկիւնները քով քովի բերելով ձախ ձեռքով տմուր մը վեր կը բռնէ: Աջ ձեռքով բուռ բուռ հատիկները կ'առնէ գոգնոցէն, և մինչ յամբ ու համաչափ քայլերով արաի մէկ ծայրէն միւսը կը տեղափոխուի, ցորենը տփ տփ կը սրակէ ավ ու ձախ, ուշադրութիւն ընելով որ ցանցընուած հատիկներուն ցանցաուլթիւնը համաչափ ըլլայ և տեղ տեղ կուտակոււմներ չըլլան, և ո՛չ ալ աւելորդ ցանցաուլթիւններ:

Սերմնացանին կը հետեւի արօրը, որ սերմնուած մասերը հեղ մ'ալ տակնու վրայ ընելով, հատիկները իրենց վերջին հանգրաւանները կը տեղաւորէ. իսկ արօրին կը հետեւի ցաքը, որ լայներախ տկօսները փակելով, հատիկները կ'ապահովէ ճնճղակներու կամ ուրիշ թւչուններու սպառիչ յափշտակութեան դէմ: Յաքը քանի մը անգամ, չըջան կ'ընէ յղի արաին մակերեսին վրայ, մինչեւ որ սեւէ անհարթութիւն չմնայ, ո՛չ կորի, ո՛չ ակօս, և ո՛չ կաւառ:

Արար, այս վիճակին մէջ, բնութեան խնամքին կը յանձնուի այլևս. պէտք է որ ձիւնի վերմակին աակ, հատիկներուն մտադարձիւերը սաւուցիչ ցուրաին դէմ պաշտպանուին, մինչեւ գարուն: Երբ ձիւները կը հալին, այն ատեն արար ցոյց կուտայ կանանչութեամբ ծածկուած իր գեղեցիկ երեսը, այնուհետեւ կարկուտի կամ երաշտութեան վախը միայն կը մնայ: Ապրիլէն մինչեւ Մայիս հապիւ երեք չորս անգամ ուղղումի պէտք կը տեսնուի: Բախանքի պէտք չունի:

Բալուի մէջ ցորենի տեսակները չորս են. Մաննափի, Աոռայ, Եիկոն եւ ձոն:

Մաննաքին կտրմբորակ է. հատիկները ուռած են և աւելի կարծր ու ծանր: Ասոր հասկերը ուելի խոշոր ու աւելի ծանր են: Իր ցողունին բարձրութիւնը մէկէն մինչեւ մէկուկէս մէթր կ'ըլլայ: Այս ցորենը հացալիւրի համար չի գործածուիր, որովհետեւ, տակէ պատրաստուած հացը, թէեւ համեղ, բայց կարծր կ'ըլլայ: Սակայն միակ ցորենն է սոս, ուրկէ կը պատրաստեն իրենց ապրցուին մէկ մասը, կորկոտ, ծեծած են:

Աչորան միակ ցորենն է որմէ հացալիւր կը պատրաստուի: Աւատ նշոյ կը պարունակէ: Ասոր հատիկները սպիտակ են, ո՛չ այնքան ուռած և ո՛չ ալ այնքան կտրծր: Ասոր երկու տեսակները կ'ըլլան. մէկն է Չրարբի, միւսը՝ անջրդի: Անջրդի աչորան, շատ աճուն (տճեկուն, ինչպէս կ'ըսեն իրենք) և շատ ալ համեղ է: Հայսը պատրաստելու ատեն աւելի քանակութեամբ ջուր պէտք է տալ, և

աւելի երկար տանն պէտք է շաղել: Հայսը շատ կպչուն կը դառնայ, յատկութիւն մը, սրմէ օգտուելով, շատ նաւրբ նկանակներու կրնան վերածել փայտէ գրաններու միջոցաւ: Աշորային հայսը սպիտակ կ'ըլլայ, մինչդեռ մանհաւիինը՝ կարմրորակ:

Աշորան ո՛չ միայն հացալիւրի համար կը գործածեն, այլ, անկէ կը շինեն նաեւ ձուարը, որ, գիւղացիին գլխաւոր սպրցուն է, ինչպէս նաեւ՝ սմբրակը, որ ձուարին մանր տեսակն է:

Յարենի հունձքը (քաղը, ինչպէս կ'ըսեն գիւղացիները) Յունիս ամսուն կ'սկսի. բոլոր երկրագործ գիւղացիներուն համար Յունիս, Յունիս և Օգոստոս ամիսները գլխաւորապէս, քաղի եղանակը կը կազմեն: Յունիս ամսուն, արտերը, իրենց սերմանումի կարգին համաձայն, յաջորդաբար կ'սկսին հասուննալ:

Գիւղացիները այցելութիւն մը կուտան դաշտերուն, և կը հաւկնան թէ՛ քաղը ո՛ր արտէն պէտք է սկսիլ: Իսկոյն իրարու կը հարցուն, թէ գիւղին ո՛ր կողմը, ո՛ր արտը պիտի քաղեն (հնձեն): Երբեմն ալ, պաշտօնապէս... գիւղին գգիրը, նախորդ երեկոյին, երբ բոլոր գիւղացիները տուն գործած կ'ըլլան, բարձր ասնիքի մը վրայ ելնելով, բարձր ձայնով կը պուռայ ըսելով. «Վաղը մանկա՛ղ ը, մանկա՛ղ հա՛... հաղըր էղէք որ դաշտ էրթա՛ք... չըսէք որ չի լսեցինք հա՛...» (Վաղը մանգաղի (հունձք) օր է, պատրաստուեցէք որ հունձքի երթաք):

Իրիկուընէ պատրաստութիւնները կը տեսնուին: Հարս, աղջիկ, երիտասարդներ իրենց մանգաղները, մասնոցները, երկուամանին, երեխային չաթման (վրան եռօտանի) մէկդի կ'ամփոփեն, որպէսզի աւաւաւուն փնտաւաւքով ժամովաձաւ չըլլան: Իսկ իրենց ձաշը տանտիկինը կը պատրաստէ, և կէսօրուան մօտ դաշտ կը հասցնէ:

Արշարոյսէն աւաջ, քաղուորները (հնձող), իւրաքանչիւրը իր մանգաղը ուսին վրայ կրելով, արտ կը հասնին: Տուներ կան, որոնք շատ հնձողներ կ'ունենան, համեմատ իրենց արտերուն ընդարձակութեան, մինչև 15—20 մանկղուոր (մանգաղուոր, հնձող) մէկ արտի մէջ կարգով, ուղիղ գծի վրայ շարուած, հնձելով կը յաւաջանան, աւանց կարգը խանգարելու:

Այս քաղուորներուն կը հետեւին պաշախնիներ ալ (հասկաքաղ) որոնք վրիպած կամ հոս հոն թափթփած հասկերը կը հաւաքեն: Իսկ երկրագործ չեղողներն ալ վարձքով հնձելու կ'երթան բանուորի պէտք ունեցողներուն: Այսպէս գիւղերը կը մնան միայն ծերերը, տանտիկիները, անչափահաս 6-7 տարեկան մանուկներ, և հաւեր... շուներն իսկ, քաղուորներուն հետ միասին արտերը կ'երթան, և, երեխաներու օրօրոցներուն քով կ'ընկողմանին, ու չեն թողուր որ ո՛նէ թունաւոր կամ անփնաս սողուն, օձ, մողէս, կոր, անոնց մօտենայ:

Ամբողջ դաշտը եռուզեռ մը կայ, բայց ներդաշնակ ու անաղ-
մուկ. կարգ մը կը ախրէ, որ միօրինակ է, ամէն արտերու մէջ, ու
մանգաղներու շաշիւններէն, և կարուող ցողուններու հասկերուն
չրշիւններէն դատ, դո՛ւն ուրեք քաղաւորներէն մեծին, կամ սուաջ-
նորդողին հրահանգները կամ քանի մը բաւերէ բողկացող հրաման-
ները կը լսուին. վէճ չկայ, դիտողութիւն չկայ, յապաղում չկայ, և
մանգաղը կը հասնի իսկոյն հոն, ուր որ մեծաւորը նշանակած է :
Սկսիլն ու գործէն դադրելը միտածամանակ տեղի կ'ունենան. Հարսը,
մեծաւորին հրամանին վրայ միայն մանգաղը կը թողու և երեխա-
յին մօտ կ'երթայ, ունոր ծիծ տալու (կտիժ տալու) համար, երբ ման-
կիկը քանի մը անգամ լացած է արդէն :

Բոշաներ ալ (դնչու) երբեմն կ'այցելին քաղաւորներուն և խուր-
ձեր կը մուրան : Ասոնք ընդհանրապէս անախարժ այցելուներ կը
նկատուին, որովհետեւ անվաստակի են. և թէ պատեհ տալիժը գաննն,
հոն, ինչոր տեսնն, մանգաղ, յօտոց, շոր եւն, «ելէթիմնք կ'ենն»,
կը գողնան : Այս մուրացիկները երբեմն ալ փաղով ու թմբուկով
դաշտէ դաշտ կը պտտին, զուարթացնելու համար մանկղուորները .
որոնց համար, սակայն, միշտ նոյն կասկածելի հիւրերը կը մնան, ւ-
մէնուրեք :

Մանկաղ քաղողներէն (հնձող) ամէնէն փորձաւորն, որ կ'ունենայ
փորձաւորութենէ դատ, ձեռքի մեծ սրագուլթիւն, Մնճի կ'անուանուի :

Մնճին, նախապէս հնձուելիք արտին բաժանումը կ'ընէ, և իւ-
րաքանչիւրին բաժինը կ'որոշէ : Ամբողջ հունձքի տեւողութեան, ան
կը վարէ հնձողները իր ցուցմունքներով : Անոր որոշման համեմատ,
հունձքը կ'սկսի արտին կէսէն : Այս կերպով կեդրոնը խողանի կը
վերածուի, ուր կը դիզեն կամ կը հոււաքեն խուրձերը :

Հնձողները, մասնացները՝ ձախ ձեռքի հինգ մասներուն վրայ
անցուցած, և իրենց աջովն ալ մանգաղը բռնած, կ'սպասեն ծնճիին
հրամանին : Եւ ահա, ծնճին, խաչակնքելով կ'ըսէ «Յանուն Հօր և
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն...», ու մանգաղին բերանը կուտայ
բուռ մը ցորեն, ասիկա սկսելու նշանն է. մանգաղները կը շարժին,
և արտին վրայ կանգուն հասկերը յաջորդաբար գետին կը թափին :
Արտը յաջորդաբար կը մերկանայ խորախաղոյն հասկերէն, հետզհե-
տէ շլացուցիչ սպիտակութեամբ խողանն է որ կը տարածուի կեդ-
րոնէն մինչեւ իր կորդերը (սահմանները) :

Այս լռին, համաչափ ու եռանդուն աշխատութեան ընթացքին,
ծնճին կը պոռայ. «Խուրձ համպար ը ըս ծնը» ըսել կ'ուզէ. պէտք է
որ անձնիւր հնձող, իր քաղածը խուրձերու վերածէ և համբելով
գիտնայ թէ քանի՞ խուրձ քաղած է, որպէսզի հասկցուի թէ ո՛վ շատ
քաղած է. մրցո՛ւմ կայ ուրեմն... Իրենց քաղած ծնը (արտին այն

մասը, որ հնձուելու աահմանուած է, առանց այս մասը հնձելով ա-
ւարտելու, ոչ ոք կրնայ միւս մասերն հնձելու սկսիլ) պէտք է որ
խւրաքանչիւր հնձողի 100—120 խուրձ հունձք տայ, ցանքին աւելի
կամ նուազ խիտ ըլլալուն համաձայն: Վաճճն ը էկեր (վաճճ անոր)
անոր որ այդ թիւէն պակաս հնձած է, տխուր ու ամօթահար կը
մնայ սն միշտ միւսներուն առջեւ, ինքզինքը ապիկար ու անձարակ
համարելով: Այլեւս չուզեր միւսներուն երեսը հայիլ: Սակայն, իր
քով միասին հնձողները զինքը կը քաջայերեն, և մերթ, անոր
խուրձերուն վրայ՝ քանի մը հաստ ալ իրենց խուրձերէն կ'աւելցնեն,
որպէսզի իրենց ընկերը հեզանքի և յանդիմանութեան առարկայ
չըլլայ:

Երկու ծն ցորեն հնձելէ յետոյ, նախաձաշի կը հատին. նախաձա-
շի պահը իրենք սրտադեղ կ'անուանեն: «Արատդեղ ը» երբ կ'ըսեն.
հասկցնել կ'ուզեն թէ նախաձաշի պահ է: Ասիկա, առտուան ամառ-
ուան եղանակին, ժամը 7-8 միջոցները տեղի կ'ունենայ:

Հնձողներէն խւրաքանչիւրը՝ իր մօտը, խուրձ մը կեմ միշտ
պատրաստ կ'ունենայ: Կեմը կապ կը նշանակէ: Յորենի հասկով
ցողունները արմատէն խլելով խուրձերու կը վերածեն, և առուակին,
կամ ազբիւրին աւազանին մէջ մինչեւ մէկ օր ընկղմած կը պահեն՝
ծանր քարերու տակ: Յորենի ցողունները կը ծծեն ջուրը, կը կա-
կուղնան, և իրենց բեկանելիութիւնը կը կորսնցնեն: Ատոնցմէ 10
ական հաստ կ'առնեն, և հասկերուն կողմէն իրարու հետ կը հանկուր-
ցեն, ու այս կերպով շուրջ երկու մէթը երկայնութեամբ կապեր
կ'ունենան: Այս կապերը անբացաւապէս կեմ կ'անուանեն: Կեմ
կապողները՝ (կապ շինող) ազջիկներ ու հարաներ են. քիչ անգամ
երիտասարդներ կեմ կապելով կ'զբաղին, որովհետեւ, իրենց համար,
ասիկա շատ թեթեւ ու դիւրին աշխատութիւն մըն է, ուստի իրենք
կը նախընտրեն աւելի դժուարին գործերով զբաղիլ:

Խոզանին վրայ ինկած ցորենի ցողունները հաւաքելով իրարու
վրայ կ'ամփոփեն պայմանաւ որ բոլոր հասկերը մէկ խակ արմատ-
ները միւս կողմը վերջանան, յետոյ անոնց մէջքէն կեմով կը կապեն
ամբողջս, ծունկով ճնշելով, այնպէս որ, արտէն մինչեւ կալ փո-
խադրուելու, դիզուելու, կամ դէզէն վար առնելու բոլոր ցնցումնե-
րէն կեմը անխաղի կը մնայ, և խուրձը չի ցրուիր մինչեւ շորչ ըլ-
լալու պահը:

Առտուան նախաձաշէն յետոյ երկու ծն եւս քաղելով կէս ժա-
մու չափ հանգիստ կ'ընեն: Այս միջոցին, արտին վրայ հոս հոն,
ցիրուցան թողուած խուրձերը՝ խոզանին կեղբոնը կը կրեն, առաջին
անգամ հնձուած ծնին տեղը: Փորձառու մէկը անոնցմէ, 5-6 մէթը
արամազծով բոլորակ խարխախ մը կը կազմէ, ու այդ խարխախն վրայ

հետզհետէ խուրճերը գիշերով 6-7 մէթր բարձրութեամբ կան մը կը ձեւացնէ միշտ հասկերը դէզին մէջ, իսկ արմատները դուրսի կողմը ակադաւորելով: Դիզողը վարակաւ ըլլալու է, թէև սեւէ չափ չի գործածեր, պարզ գործիք մը միայն (երկու մասնի) ունի, բայց փորձառական հմտութեամբ կրնայ հաշուել իր սալիք ընդարձակութիւնը, բարձրութիւնը և կանի վերածելու աստիճանական արամաղծային սեղմումը:

Հնձողները, խուրճերը դէզի վայրը փոխադրելէ յետոյ, կը հանգչին: Դիզողը և իր օգնականը կ'աշխատին: Դիզողը դէզին վրայ կ'եղնէ, երբ արտէս մէկ երկու մէթրի չափ բարձրացած կ'ըլլայ. իսկ օգնականը, երկու մասնիով խուրճերը վեր կ'ուտայ, զորոնք վարակաւ աւանելով յարմարօրէն՝ դէզին վրայ կը շարէ:

Հանգիստի պահը վերջ գտած կը համարուի, երբ օնձին ոտքի կ'եղնէ, և օն կ'աւանէ (հնձուելիք մասը կ'որոշէ) թէև այս անգամ ո՛չ նախորդներուն չափ լայն. սրովհետև, օրուան ամէնաջերմ մամերն են որ կը սահին, և, արեւին կիզիչ ճառագայթներուն տակ կքած քրանաթոր քաղուորները, կորուսած են աւատուան իրենց կորովն ու եռանդը, ոգևորութիւնը նուազ է, և ո՛չ ալ մանգաղներուն առոյգ շկանիւնը կը լսուի բայց, ո՛չ մէկ տրտունջ, ո՛չ մէկ փափառկ, անոնք վարձկաններ չեն մեծ մասամբ, իւրաքանչիւրը՝ իր գործին, իր աշխատութեան, իր յոգնութեան ու ճակատագրին գիտակից, հոգեկան աննկուն կորովով մը ճիգ կ'ընէ շարքային ներգաշնակութիւնը պահելու, չուզելով յաւատ ոչ մէկէն ետ մնալ աշխատութեան բաժինով մը: Աս հերոսութիւն մըն է: Ահա՛, քիչ մ'ալ, լար մը միայն կայ, կանգուն հասկերու գիծ մը միայն մնացած է. և սնա յաղթանակի ոգևորութիւնը կը զարթնու, օնը վերջացած է այլեւս...: Հունձքը դադրած է, կէսօր է, խուրճերը կը կրուին դէզին մօտը, և շուքը ամփոփուած է դէզին ոտքին տակ, արեւը վերէն շեշտակի վար կը նայի:

Քաղուորները հաւաքուած են չաթմային շուքը. տանախիլինը արդէն ճաշը ժամանակին խոզանը հասուցած է: Կէսօրուան ճաշը ճոխ է. խարկուած միտով ու ճաւարով եփուած եղինձ, հետը միասին մածնաթան կամ թանապուր. կան նաեւ սեր, կարագ, հացբրդօն (ձուածեղ): Աւատուան նախաճաշը ընդհանրապէս սերէ ու կարագէ կը բաղկանայ. կէսօրուան ճաշը միշտ պէտք է որ ապուր մը ըլլայ: Ճաշելէն յետոյ շուքը երկու ժամ հանգիստ քուն մը կը քաշեն, դէզին կամ չաթմաներուն և կամ մերթ ծառերու, եթէ կան, ստուերներուն տակ երկնալով:

Այս հանգիստով իրենց ոյժերը վերստացած, ոտքի կ'եղնեն, և օնձին հրամանին կ'սպասեն: Ա՛յ ալ արդէն իրենցմէ առաջ իսկ

ուտքի վրայ է, և հնձելու սկսելու նշանը կուտայ: Նոյն կանոնաւոր
ու ներդաշնակ աշխատանքն է որ կը շարունակուի. արդէն օդը քիչ
մը զովանալու սկսած է, այլեւս կիզիչ տաքէն չեն նեղուիր: Ընդ-
հուպ ետինք, կէսօրուան ու երեկոյեան միջին պահը պիտի ըլլայ ար-
դէն, ոգեւորուած կեանք մը կը վերսկսի, ու տակաւ թափ կ'ստա-
նայ, քանի ժամանակը սահի, որովհետեւ կը տեսնեն որ արեւը
հեազհետէ կամարէն դէպի վար կը խոնարհի, ծառերուն, բլուրնե-
րուն ու քարբակներուն ստուերները կ'երկարին, իրար խաչածեւե-
լով: Խոզանք կը դողայ անոնց մանգաղներուն առջեւ, և հասկերը՝
ետեւէ ետեւ կը խոնարհին դետին: Խուրձերը շարք շարք կը մնան
հնձողներուն ետեւը:

Եթէ ցորենին ցօղունները երկայն ու խիտ են (մանձաքիին ցօ-
ղունները այդպէս կ'ըլլան), հունձքը տարբեր եղանակաւ կը կա-
տարուի: Քաղողը երբ ձախ ձեռքով ցօղունները կը բռնէ, ձախ
ուտքն ալ անոնց ներքեւ դնելով, և աջ ձեռքի սուր մանգաղով դա-
նոնք կը կտրէ, և իր ձախ ոտքին վրայ կը հուտքէ, այս կերպով,
քանի յաւաջանայ, քաղուածներն ալ ոտքով առաջ կը մղէ: Ասով
արտին մէջ լայն արահետ մը կը բացուի, գրեթէ մէկ մէթը երկայ-
նութեամբ: Այս եղանակով հնձող մը ո՛չ կրնայ կանգ առնել, և ո՛չ
ալ հանգիստ ընել: Հունձքի այս եղանակը սիլվե կ'անուանեն:

Մինչեւ մայրամուտ, չորս հինգ օն եւս քաղելով խուրձերու կը
վերածեն, և կը փոխադրեն դէզին մօտերը: Բացատրած ենք արդէն
թէ դէզը ինչպէս կը դիզէ վարպետ դիզողը: Եթէ արտը ընդարձակ
է, այսինքն ութը կամ տասը ոն (արտաւար) տարածութիւն ունի,
մէկէ աւելի դէզեր կը կառուցանեն անոր վրայ, անոնց մէջ ամփո-
փելով ամբողջ նոյն արտին ցորենը: Այսպիսի մեծ արտ մը 8-10
հնձողներ հազիւ կրնան երեք չորս օրէն աւարտել, պայմանաւ որ ա-
նոնք վարձ քաղուորները ըլլան: Ունեւորները, ժամանակին իրենց
հունձքը աւարտելու համար կ'առիպուին մշակներ վարձել՝ օրական
մէկական չափ (= 6-7 օխայ) ցորեն վարձքով: Վարձուած մշակնե-
րը, պարտաւոր են, մինչեւ հունձքին աւարտումը, անընդհատ շա-
րունակելու, չեն կրնար, հունձքին աւարտելէն առաջ, լքել իրենց
ստանձնած գործը, և ուրիշի մը արտը հնձելու երթալ: Թէեւ այս
վերջինը նախորդէն աւելի լաւ վարձատրելու խոստումներ տայ ի-
րեն: Վարձկան մշակները, նախաձայր, ձայր, նոյնիսկ ընթրիքը
վարձողին սեղանէն պիտի ընեն. ամօթ է որ իրենց տունէն ձայնն:
Այսպիսի աշխատութեամբ մշակ մը ամառն ի բուն աշխատելով, այ-
սինքն միայն հունձքի շրջանին որ առաւուսէն 80 օր պիտի կրնայ
տեւել զանազան քաղերն ալ միասին հաշուելով, կրնայ շահիլ 80
չափ կամ 560 քաշ ցորեն: Այս կերպով մշակներ, մշակութեամբ,

կրնային ինքնաբաւ ըլլալ տակէ շուրջ 50-60 տարիներ առաջ:

Այսպէս, մշակները իրենց խոստումը միշտ կը յարգեն, իրենց համար դրժումը անարատիւ վարձուք մը կը համարեն և հետեւաբար ամօթալի:

«Մանկաղը» (հունձքը) Օգոստոս ամսուն կը լրանայ: Շուտ լինցնողները՝ իրենց դրոցիներուն կամ ազգակամներուն օգնելու կ'երթան, առանց փոխարինութեան, և թէ անոնք ի վիճակի չեն մշակ վարձելու:

Օգոստոսի վերջերը բոլոր ցորենի արտերը սպիտակ խոզաններու վերածուած կ'ըլլան: Այլեւս դաշտերու ամայութիւնն է որ կ'սկսի հետզհետէ ցոյց առլ իր անախարժ ու տխրագին երեւոյթը: Խոզաններու միտազազազ սպիտակութիւնը ընդհատող, մերթ ցոնցառ, մերթ շատ խիտ, բողկեկ խոտն է այժմ որ իր մութ կանանչութեամբ, կամ և թէ հասունցած է, թուխ գոյնովը ազուաններու, սարմերու նման կը ծածկէ աչքի առջեւ մինչև հորիզոնը կամ մինչև լեռներու սաքը տարածուող մերկութիւնը:

Շեղում մը ընելով, ցորենի կարգին ներկայացնեմ նաեւ այս բոյսը, որ օգտակար է մասամբ ցորենի արտերուն պարարտացումին:

Ասիկա, ոսպի բոյսին նման, փոքր ու նուրբ է, բազմաձղի, մութ կանանչութեամբ: Շատ փոքր, գրեթէ կորեակի մեծութեամբ ծաղիկներ կ'ունենայ, երբ կը հասուննայ, ցորենի արտերուն, աւազուաններուն մէջ աւատօրէն աճող անձնաս բոյս մըն է. ասոր կեանքը կարճատեւ է, մէկուկէս երկու ամիս հազիւ կը տեւէ, սրմէ յետոյ կը շորնայ:

Չոր վիճակին մէջ գրեթէ սեւ գոյն մը կ'ստանայ: Չափազանց դիւրավառ բոյս մըն է, այնպէս որ, երբեմն զայն կը քաղեն և տուն տանելով դորդանին մէկ անկիւնը, ծածքին տակ կը դիզեն և իբրեւ կպցանք կը գործածեն սերիչ դիւրավառ կպցանքներու հետ միասին: Իբրեւ վառք չի գործածուիր, որովհետեւ շուտով կ'այրի, խոշոր դէզ մը բողկեկը եթէ բռնկցուի, կէս վայրկենի մէջ մոխիրի կը վերածուի:

Աշունը, այն դաշտերու մէջ, ուր բողկեկը աւատօրէն աճած է, չեն քաղեր, այլ հունձքերը աւարտելէն յետոյ կը բռնկցնեն. շուտով բոցերը կը տարածուին ընդարձակ արտերուն մակերեսը, և բողկեկին միջոցաւ այրելով նաեւ ուրիշ խոտեր ու փուշեր ալ, ամբողջ արտը պարարտացուցիչ մոխիրով մը կը ծածկեն: Ասով գիւղացիին արտը ոչ միայն դիւրութեամբ պարարտացուած կ'ըլլայ, այլ նաեւ զանազան խոտերու, փուշերու, տատասկներու, կառերու սերմնահունտերէն կամ բեղմնափոշիներէն ալ մաքրուած կ'ըլլայ:

Բողկեկը, այս կերպով, Բալուի հայ երկրագործին օգտակար

բոյս մը ըլլալու սահմանուած է. անոր աճումէն՝ գիւղացին չի նեղ-
ուիր, որովհետեւ դժուար չէ, եթէ հալկ ըլլայ, զայն փճացնել....

Բողկեկն ալ չեն հնձեր, այլ ըստ հարկին զայն արմատախիլ կը
հաւաքեն, որովհետեւ խոր արմատներ չունի, ուստի դիւրութեամբ
կը բաժնուի հողէն, քաղուած բողկեկները իրարու վրայ կը դիզեն,
այս դէպքերուն վրայ քարեր դնելով քանի մը օր ճնշումի տակ կը
պահեն. այս կերպով խորոմներու վերածուած կ'ըլլան անոնք: Խո-
րոմները ձեւացնող բողկեկները այլեւս իրարմէ չեն անջատուիր, չեն
ցրուիր, այնպէս որ երկու մասնիով կարելի կ'ըլլայ փոխադրել զա-
նոնք սեղէ սեղ: Շալագով տուն կը կրեն այդ խորոմները:

Բողկեկին մասին այս ծանօթութիւններէն յետոյ կը դատնամ
նորէն ցորենին: Ասոր սերմանումը, հաւնձքը բացատրեցի, այսքա-
նով չի վերջանար, մինչեւ հասիկներու օգտագործութիւնը, դեռ շատ
մը աշխատութիւններէ պիտի անցնի: Ասիկա գիւղացի երկրագործին
մասնագութեան, խնամքին, յոյսերուն գլխաւոր առարկան է:
Որովհետեւ, գիւղացիին տունը ինչ որ չգանուի, ցորեն հացը պէտք
է գանուի, ու եթէ տա չգանուի տունը թափուր կը համարուի, և
անեցիները սովի ու մահուան ստուերին ծածանիլը կ'երեւակայեն ի-
րենց տան անկիւններուն մէջ....

ԺԹ. ԴՆՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ.

ՅՈՐԵՆԸ

Դէպի կալը: Մանգաղը (հունձքը) վերջ գտած է այլեւս Բոլոր՝
գաշտի աշխատաւորները տունն են. մէկ երկու օր հանգիստ պիտի
ընեն. պիտի մաքրուին գաշտի փոշիներէն ու քրտինքէն գոյացած
աղտերէն, և պիտի պատրաստուին իրենց աշխատութիւնները այլեւս
կաշերուն մէջ շարունակելու:

Տանախիլներ, ուրախ ու աշխոյժ, գործի վրայ է միշտ Սրահատ-
նում մը կ'ունենայ, տեսնելով որ՝ իր դեռատի հարսները, տղաքնե-
րը և բոլոր գաշտի աշխատաւորները քրտինքով ու փոշիի խաւերով
չաղախուած են: Կաթսաները, ջուրով լեցուն, արդէն կրակի վրայ

դրուած են. ճղերը* (*) ճարձասելով, բոցարձակ կը վառի, և ջուրը եռարու աստիճան տաքցած է:

Ուրիշ կաթսաներու մէջ տաք ջուրը կը փոխադրէ, հովցունեով կը բարեխառնէ, լոգանքի աստիճանին վերածելով զայն: Իր ճագուկները հատիկ հատիկ կը լոգցնէ մեծ խնամքով սանտրելով ու օճառելով քանի մը անգամ, անոնց գլուխը, կրնակը, կուրծքը, թեւերը, սրունքները և կոշկուտատած սաքերը՝ քանի մը անգամ հառաչելով. «Վա՛խ, քուռնո՛ւմ ես, ըս ի՛նչխէ (տա որչա՛փ) կեղտ (աղա) ը (է) լցուեր վրայ...»:

Փոքրերը, պատանիներն ու հարսները այսպէս գուրգուրանքով լոգցնելէ և հագուեցնելէ յետոյ, կը թողու որ հարսներն ալ, իրենց կարգին, իրենց ամուսինները լոգցնեն: Լոգանքը այս կերպով կ'աւարտի, միաժամանակ լուացքն ալ վերջ կը գանէ:

Հանգիստը մէկ երկու օր միջոյն կը տեւէ: Պէտք է ընդհուպ կաշերու պատրաստութեան սկսիլ: Կարտակըն գրաւուած է ամբողջութեամբ՝ ծեփուած կեզուրներով, որոնց միջոցներէն խոտեր սկսած են իրենց ծիւերը բարձրացնելու: Պէտք է կշգուրները տուն փոխադրել:

Բոլորը, տանտիկինն ալ միասին ըլլալով, կայն են առտուն կանուխ: Իւրաքանչիւրը՝ կշգուրի քանի մը կաղպար (կաղապար) շաբկած դէպի տուն, մինչեւ կեզուրն կ'երթայ կքած: Այս երթ ու դարձի շարքը, եռուզեռը կը տեւէ մինչեւ որ ամբողջ փոխադրութիւնը աւարտի: Այս աշխատութեան ընթացքին, նոյն գուարթութիւնն ու եռանդն է որ կը ախրէ իրենց մէջ: Մանուկներ իսկ հաճոյքով կը մասնակցին փոխադրութեան գործին, և շալկելով մէկական կաղապար կշգրտուն կը տանին ու կը դառնան, շաղակրատելով իրարու հետ: Այս աշխատութեան ընթացքին, տանտիկինը, ինչպէս ամուսինը միշտ կալը կը մնան, և կշգուր կրողները կը բեռնաւորեն, իւրաքանչիւրին շարակը մէկ, երկու, երեք, չորս կաղապար դնելով: Որպէսզի այս կշգուրները չթափին, կրողները՝ իրենց մէջքին մէկական պարան կապած են, բեռնաւորողը՝ կաղապարները կըրողին կրնակին վրայ շարելէ, պարանին երկու ճիւղերը անոնց վըրայէն դարձնելէ յետոյ, կրողին ձեռքը կուտայ: Կրողը, կը պրկէ զանոնք, և այս կերպով շալակը կ'ապահովուի:

Այս փոխադրութենէն յետոյ, որ շատ չի տեւեր, քանի մը ժամէն կ'աւարտի, ամբողջ կալատեղին կ'ուռոգեն, արօրով կը հերկեն, — հիւսիսայինները չեն հերկեր, — ու թաց վիճակին մէջ կը ցաքեն մինչեւ որ ո՛ւրէ անհարթութիւն, կամ բուսականութիւն չմնայ: Այս վիճակին մէջ մէկ երկու օր կը թողուն որպէսզի ցամքի և քիչ մը պնդանայ հողը: Յամաքումէն յետոյ, դեռ խոնու վիճակի մէջ սա-

(*) Այս բառը իբրեւ եզակի կը գործածուի:

կայն, կ'սկսին ծանր լողքորերով լողել: Լողելու գործողութիւնը քանի մը շրջանով կ'աւարտի. այսինքն, առաջին անգամ, կալին ամբողջ մակերեսը կը լողուի, երկրորդ, երրորդ և չորրորդ անգամ նոյնը կը կրկնուի, որմէ ոչ մէկ մաս կը վրիպի: Այս գործողութիւններէն յետոյ, կալը չորնալով կ'ըլլայ՝ մաքուր, կատարելապէս հարթ, և մանաւանդ այնքան կարծր, որ կամուսի բոլոր ճնշումներուն հակառակ, և հակառակ որ մարդիկ, կենդանիներ շաբաթներով կ'երթեւեկեն, անխաթար կը մնայ, ու քիչ մը փշրուած հող կարելի չըլլար անոր վրայ դնել: Այս կերպով, անոր վրայ կամուսուած և հասուած արմաթքը միշտ հողերէ ու քարերէ զերծ կը մնան:

Կալերու այս պատրաստութեան մեծ խնամք կը տարուի, եթէ ոչ բոլոր արմաթքը հողերու հետ պիտի խառնուէր:

Կալատեղին պատրաստ է այլևս Երկրագործ գիւղացիին առաջին գործը կ'ըլլայ՝ քուչնան, սալը, գարին, Ֆիթը, կտաւատը, բակլան և սիսեւը՝ սայլերով հոն փոխադրել, և նախ, ասոնք կամնել, հոսել և տուն կամ մարտք (*) տեղաւորել, որպէսզի կալը դատարկուի և ամբողջովին արամադրելի ըլլայ ցորենի՝ աւելի ընդարձակ ու աւելի երկարատեւ աշխատութիւններու և գործողութեանց: Վերը յիշուած ընդեղէններու և արմաթքին կամուսի և հոսելու գործողութիւնները երկար չեն տեւեր, մէկ երկու շաբաթէն կ'աւարտին:

Կարգը, ցորենին կաւգայ:

Շատ հեղ ըսի թէ, գիւղացին, իր արտերուն արդիւնքը սայլերով կալ կը փոխադրէ: Սայլը անոր մեծաքանակ փոխադրութիւններուն գլխաւոր միջոցն է: Ասիկա ճիշդ է միայն դաշտի գիւղերուն համար, որոնք լայն ու ասիւրակ ճամբաներ ունին, և որոնց արտերուն վրայ ամէն ուղղութեամբ, առանց արգելքի, սայլին աւելները կրնան թաւալիլ: Նոյն չէ լեռնային գիւղերու համար, ուր ճամբաները կածաններ են ընդհանրապէս, վտանգաւոր փուլերով ընդմիջուած: Այս պարագային անոնց փոխադրութիւնները կը կատարուին՝ էշերով ու ջորիներով միայն: Այս պատճառաւ, անոնք, բողբոսաբոր, դանդաղորէն կը կատարուին, և հետեւաբար երկար ժամանակ կ'սպառեն:

Շատերն այս գիւղերէն, փոխադրութեանց դժուարութիւններէն ու ժամավաճառութիւններէն զերծ մնալու համար, իրենց խոզաններուն վրայ նոյնիակ կը յարդարեն իրենց կալերը, ոչ շատ ընդարձակ գետնամաս մը յատկացնելով ասոնց: Ասոնք ալ, ընդհանրապէս, շատ

(*) Այս բառը «f»ով կը վերջանայ եւ ո'չ թէ «q»ով. ասիկա որոշապէս հասկնալի կ'ըլլայ երբ գայն գիւղացին կ'արտաբերէ սեռական հոլովով կամ հոլովուած ձեւով մը, ինչպէս. մարֆի, մարֆէ:

հաւնձք չեն ունենար, և իրենց ցորենի տրտերը եթէ իրարու կից չըլլան, իրարմէ շատ ալ հեռու չեն ըլլար, ուստի փոքր կալստեղի մը իրենց կրնայ բաւարարութիւն ստալ:

Գաշտային գիւղերը ո՛չ միայն իրենց փոխադրութիւնները սայլերով կը կատարեն, այլ, միաժամանակ, որպէսզի աւելի տրտք ընթանայ գործը, էշերով ալ կ'ընեն, իւրաքանչիւր էշի վրայ 10-12 ցորենի խուրձեր բեռցնելով:

Ցորենի, գարիի՝ կալ փոխադրելը, ըլլայ սայլով, ըլլայ գրասաներով, Օրան կրել կ'անուանեն, փոխադրողին ալ՝ Օրան կրող: Օրան գուցէ որայ բաւէն ծնած է:

Այս աւիթով, կարեւոր է Բայուի գիւղացիներուն գործածած սայլին մասին քիչ մը ծանօթութիւններ ստալ: Իրենք, գիւղացիները սալ կ'անուանեն զայն: Նոյն բարբառին մէջ, սալ կը նշանակէ նաեւ տափարակ քար, որ գետինները սալոյտատակելու համար կը գործածուի:

Սալը կա՛մ սայլը կը բողկանայ՝ երկու արեղներէ, երկու գլաններէ, նետէ մը, չորս արղաններէ (ակուայ) և տունէ մը:

Արեղները՝ երեք, երեք ու կէս մէթր երկայնութեամբ և 15-20 սանդիմէթր արամագծով, կեղեւէն մաքրուած ու քերուած երկու գերաններ են, որոնց բարակ ծայրերը իրարու հետ ամրապէս հաստատուած են, երկաթեայ անուրի մը մէջ սեղմուելով: Ասոնք, զուգակտար երկարելով սուր անկիւն մը կը ձեւացնեն, որուն վերջին բացուածքը շուրջ 1.75 մէթր է: Արեղներուն այս վերջին ծայրերը՝ երկու մէթր, իսկ մէկուկէս մէթր դէպի առաջ երթալով՝ մէկ մէթր երկայնութեամբ երկու գերաններու միջոցաւ ամրապէս իրարու կը միացուին: Այս երկու գերանները իրենց միջեւ կը ձեւացնեն տրտալիզածեւ անջրպետ մը, որ տախտակներով լեցուած է: Որպէսզի այս տախտակեայ խորիխօր բեռներու ծանր ճնշումներուն կարենայ սուկալ, իրենց ներքեւէն, խաչածեւ մէկ երկու ձողեր կ'երկարան, որոնց ծայրերը կ'ադուցուին արեղներուն վրայ դէմ դիմաց բացուած փոսերու մէջ: Այս ձողերը գօտի կը կոչուին: Իսկ արեղներուն՝ տախտակներով զոցուած այս անջրպետը տուն կ'անուանեն: Տանը վրայ կը շարուին փոխադրելի ծանրութիւնները:

Արեղներուն ներքեւ, տանը ճիշդ միջին կէտին վրայ 30-35 սանդիմէթր երկայնութեամբ ցիցեր հաստատուած են ամրապէս: Այս ցիցերը արղայ (ակուայ) կը կոչուին. տանց միջեւ կը թուալի գըրաններուն նետք, այն գերանը, որուն երկու ծայրերուն վրայ կ'ադուցուին բուն գլանները: Գլանները հաստատուեն են նետին հետ, ու ստոր հետ միասին կը թուալին, և ո՛չ թէ տուանձին:

Նեարը, կարծր պէտք է որ ըլլայ, ուստի, թթենի, բունչի (լաուա), թեղիի (թեղօշ) կամ փշատի փայտերէն կը շինեն: Որովհետեւ

Թթենին ամէնէն շատ տարածուած ծառն է, և անկէ միշտ կրնան յարմարագոյն գերաններ ունենալ, այս պատճառաւ նետը ընդհանրապէս Թթենիի գուկաններէ կը շինեն:

Ասիկա, 2 1/2 մէթր երկայնութիւն ունի, մէջ տեղը բոլորածեւ յղկուած է. իսկ, ծայրերուն մօտ, արեւներէն ներս, աւելի ուռած կ'ըլլայ: Այս ուռերէն անդին, այն մասը, որ արզաններուն (ակառներուն) միջեւ պիտի անցնի, դարձեալ քոլորածեւ յղկուած ու աւելի բարակ է տրամագծով, իսկ երկու ծայրերը քառանկիւն երեաներով կը վերջանան, և կը հաստատուին գլաններուն քառանկիւն ծակերուն մէջ. գլաններուն ծակերէն 10-15 սանդիմէթր տակաւին դուրս կ'երկարին ծայրերը, որոնց վրայ աղխաղխումը կը կատարուի, որպէսզի գլանները չշարժին կամ չքանուին նետին:

Գլանները, երկաթեայ շրջանակներու մէջ ամրապէս պրկուած մայրի տախտակէ բոլորակներ են, որոնց, դէպի կեդրոնը, հաստութիւնը հետզհետէ կ'աւելնայ, քաղդատամբ եղերքներուն, և, երկկորնթարթ սագնեակի մը նմանութիւնը ունին: Ասոնք, շուրջ մէկ մէթր տրամագիծ ունին:

Գլանները սեղական արտադրութիւն չեն, կը ներածուին Սեբաստիոյ նահանգին պատկանող կեմերէկ դիւղէն. այս է աւանդութիւնը: Աւանդութիւն կ'ըսենք, որովհետեւ գլաններու վրայ տեւական ու յաճախադէպ գնումները չեն ըլլար: Գլան մը կրնայ 100 տարի ու աւելի դիմանալ, այնպէս որ մեր ժամանակներուն, նոր ներածութիւններ տեղի ունեցած չեն: Մեր հայրերը կ'աւանդեն թէ անոնք կ'ստացուին Սեբաստիոյէն: Այս ներածութեան պատճառը, պարզապէս, Բալուի մէջ մայրի կամ շոճի չգանուիլն է: Գանուած ծառերուն տախտակներն ալ ջուրի ու արեւի ազդեցութեան սակ, կը ճեղքուին, կը ծամուկին, կ'որդնոտին կամ կը փտին. ուստի գիւղացին ստիպուած է ուրիշ նահանգէ մը պատրաստ բերել տալ:

Գլանը ձեւացնող երկու տախտակները իրարու միացուած են կպրածիւթով ու բեւեռներով, և, ինչպէս ըսի վերը, սեղմօրէն պըրկուած են երկաթեայ շրջանակներու մէջ:

Նետը չեն թողուր որ ուղղակի արեւներուն հետ շօշափման մէջ գանուի, որովհետեւ թաւալումով ո՛չ միայն նետը, այլ արեւներն ալ կը մաշին, և քանի մը տարի յետոյ սայլը անգործածելի կը դառնայ: Նորոգութիւնը թէ սուղ կ'ըլլայ և թէ շատ աշխատանք կը պահանջէ, ուստի, նախ արզաններուն միջոցը, ճկուն ուռերի ճիւղերով հիւսուածք մը կ'ընեն.—այս հիւսուածքին վրայ է որ կը յենուն նետին երկու պարանոցները. այս կերպով, արեւներն ու նետը բաժնուած կը մնան: Այս հիւսուածքը Բալուի գիւղացիները բարձ կ'անուանեն, «սալին բարձեր», կ'ըսեն:

Բարձերը, մաշելու պարագային, դիւրին է փոխել, աւանց ո՛րեւէ ծախքի, և աւանց ժամաւաճառութեան. մինչ, եթէ արեղինները և նետը մաշին, այն ատեն հարկ կ'ըլլայ ամբողջ սայլը քակել. և նոր արեղիններու վրայ, նոր նետով, վերստին կառուցանել: Ասիկա ո՛չ միայն օրեր տեւող ժամաւաճառութիւն մը կ'ըլլայ, այլ, գիւղացիի քակին վրայ, ուր ամիսներով նոյնիսկ, ընդհանրապէս, աւանց մը անգամ չի գանուիր, շատ սուղի կը նստի:

Սայլին կամ սայլին կառուցուածքին գլխաւոր մասերը ասոնք են. չմտնում սակայն ըսելու թէ, ճան չորս անկիւններուն վրայ մէկ մէթը երկայնութեամբ չորս ցիցեր կը բարձրանան արեղիններուն մէջ ամբողջս ուղուցուած, և այս ցիցերը, սայլին երկու արտաքին կողերուն վրայ հորիզոնական ձողերով իրարու միացուած կ'ըլլան: Յիցերը և ձողերը կրելիք մեծաքանակ բեռնաւորումը կը գլխացրնեն, անոնք երկու կողերուն վրայ, չեն թողուր որ բնւր դուռ իյնայ: Տան առջեւը և ետեւը բաց կը մնան, և բեռնաւորումի կամ բեռնաթափումի իբր անցք կը ծառայեն:

Այն մասը, ուր արեղիններուն երկու ծայրերը իրարու միացած են, սալին գլխիս (սայլին գլուխ) կ'անուանեն: Սայլը, քանի որ երկու գլաններ միայն ունի, միշտ հորիզոնական դիրքի մէջ պահելու համար, պէտք է որ անոր գլխուն ներքեւ յենակ մը կամ մայթ մը դրուի երբ լծուած չէ, և պիտի բեռցուի: Այս յենակը կամ մայթը, որ մէկ մէթը երկայնութիւն կ'ունենայ աւառուելին, գլխիս կը կոչուի: Ուրիշ պարագաներու ատկ սայլին գլուխը միշտ գեանի վրայ կը յանգի, և արեղիններն ու սունը շեղ դիրք մը կ'ունենան հորիզոնական գեանի վրայ:

Սայլին գլուխը պրկող անուրէն ներս, ու անոր շատ մօտ, երկու արեղիններուն՝ դէմ դէմի ունեցած մէկական ծակին մէջէն անցուած է կարճ գուտգան մը, որուն երկու ծայրերը, Վճական սանդիսէթրի չափ դուրս կ'երկարին: Ասիկա սալին անկանն է, աս է որ կ'անցուի՝ սայլը և լուծը իրարու միացող փակին գալարներուն մէջ, և միացումը կ'ապահովուի ասոր միջոցաւ:

Գլխիս քաւին տեղ, հարաւային կամ Արածանիի ձախտինայ գիւղացիներ ճարգ բուր կը գործածեն:

Սայլի մասին այս բացատրութիւնները սալէ յետոյ, կ'անցնիմ փոխադրութեան աշխատութիւններուն:

Արշարոյսէն նոյնիսկ աւազ, սալ կրողները (սայլորդ) ինչպէս կ'անուանեն գիւղացիները, արդէն իրենց գոմէշները և հուժկու եղները լու մը կշտացուցած ըլլալով, ախտէն դուրս, կալը, սայլին քով կը բերեն: Լուծը փակի մը միջոցաւ արդէն սայլին գլուխին հետ կապուած է, գլխիս վրայ, երկուքը միասին հորիզոնական

գիրքի մը ուղղութիւնը ստացած են: Գոմէշները, եզները անոր մօտ
կը բերուին: Կենդանիները վարժ են, ու կարծես գիտակցօրէն սայ-
լին արեւելիներուն քով կանգ կ'առնեն, առանց սաղին անդին շեղե-
լու, իրենց պարանոցը լուծին սամիներուն մօտ երկնցուցած: Սայ-
լորդը՝ անանց պարանոցը կ'անցնէ երկու կոր սամիներուն միջև ու
րոնց ծայրերը սաակնշուանով կը կտայէ իրարու հետ. այս կերպով ա-
նանք լծուած կ'ըլլան:

Գեւատի եզները, որոնք նոր սկսած են՝ արօրի, սայլի կամ կա-
մի լծուելու, գիւրութեամբ չեն համակերպիր սայլորդին, սաղին
անդին կը փախփախն, կից կը նեանն, գլուխներնին կը չանչեն, ու
լուծէն հեռու կը փախին, բայց սայլորդը, անանց ախանջէն բանելով
փայփայելով, գլուխնին շփելով, շոյելով կը մօտեցնէ լուծին և վեր-
ջտայէս անանց այ պարանոցը, սամիները աքծանի պէս կը գրկեն: Այ
տակէ անդին իրենց խենդութիւնները մասսայով (երկայն գաւազա-
նով) կարելի կ'ըլլայ զսպել:

Սայլորդը, իր հօշը սաւանի մը մէջ ծրարած, սայլին մէկ ցիցին
ծայրը կը կտայէ, և գիշերուան զով օդին, արշալոյսէն առաջ, խո-
զանը, ցարենի հսկայ գէղին տաջեւ կանգ կ'առնէ: Երկու հողի կը
բեռցնեն սայլը. մէկը խաւրձերը երկու մասնիով կուտայ միւսին,
որ սայլին վրայ կեցած զանանք կանոնաւոր կերպով կը շարէ քով
քովի, միշտ խաւրձերուն արմատին կողմը դուրսի կողմը բերելով,
իսկ գլուխները՝ ներսը: Խաւրձերու շարքերը կ'աւելնան, հետզհետէ,
շարսղը, որ վարպետ է փորձաւորութեամբ, աստիճանաբար բեռին
արամագիծը կը նեղցնէ, այնպէս որ անոր կանի մը ձեւը կուտայ:
Բեռը հաշիւով մը կ'ընեն, և խաւրձերու թիւով կ'որոշեն անոր ծան-
րութիւնը, համեմատ լծկան կենդանիներուն տարողութեան, և ճամ-
բուն բնութեան ու երկայնութեան: Երբ խաւրձերու գէղը կ'աւար-
տի, զայն պարաններով կը կտայեն սայլին արեւելիներուն հետ քանի
մը կողմերէ, և այս կերպով, բեռը շրջուելու կամ քայքայուելու
վտանգէն զերծ կ'ըլլայ:

Արշալոյսին, արդէն բեռնաւորուած սայլերու գարձը տեղի կ'ու-
նենայ: Ծամբուն երկայքին վրայ, անանց շարքը գիտող մը պիտի
նկատէ զանանք որպէս շարժուն բլրակներու հանգոյց մը, որ կ'ա-
ռաջանայ յամբօրէն, անշուշտ ու կանոնաւոր: Հովիտները անանց ճարն-
չիւնին արձագանգը գիւղ կը հասցնեն, որ, յաճախ, երկաստիճան երա-
ժշտութեան մը հեշտօրօք քաղցրութեան կը փոխուի, և, միանալով
ուրիշ սայլերու ալ, հեռաւոր կամ մերձաւոր, ճանչիւններուն ներ-
գաշնակութիւն մը կը յօրինեն: Սայլորդը, յաճախ, բեռին կրթնած,
կը քնանայ, բայց եզները, գոմէշները իրենց ճամբան գիտեն, իրենց

ճամբանն անվամուզ է. յամբ յամբ կը քալին համայնաբար սրածայով գէ-
պի գիւղը, գէպի գիւղին կալը:

Կալին վրայ կանուզ կ'առնեն: Բեւը սայլէն վար կը թափեն
խուրճ խուրճ, մ'նոջ ուրիշներ՝ զանանք կալին եզերքներուն վրայ
երկուքուկ, ու մէկը լայնութեամբ սրտուրու ձևով կը շարեն:

Արեւը հարիզանին վրայ է: Կէս ժամուան հանգիստէ մը յետոյ,
— չմտնանք ըսելու թէ, հոն, գիւղը ժամանակը ժամերով շին բամ-
ներ. անոնք «պահ»երով կը խօսին, պահ բառով կը հասկնեն ժա-
մանակի միջոցները, ինչպէս՝ պահ մը, պահիկ մը. — սայլը գաշախն
ճամբան կը դառնայ: Մինչև երկուց աչա երթեալէն է որ անդի
կ'առնենայ. և, հետզհետէ խողաններու գէղերը կալերը կը վախազ-
րուին:

Փոխադրու լիւնը մէկ երկու շարաթէն կը վերջանայ, դաշախ
երթեալէն կ'աշարի աչիւն. այժմ ետուզեալ կալն է, գիւղացին
փնտռող մը պէտք է որ զայն կալերը գտնէ:

Ե. ԳՆՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ.

ԿԱՄ, ԶԱՐԶ, ԿԱՄՆՈՒՄ

Պէտք է մանրել ցորենի թուրճերը, զանանք յարդի վերածել,
անոնց հասիկները քիտաւար կճեպներէն գուրս հանել, հոսել: Ահա
կալի գործողութիւնները, որոնք երկու երեք ամիսի չափ գիւղացի-
ները կ'զբաղեցնեն:

Ցորենը՝ կամով կը մանրեն:

Կամ, կամնել, կամուար, բառերը անոնց մանուկներուն համար
խիչ շատ սովորական բառեր են:

Կամը, շոճիի երկու սախաակներէ կը բաղկանայ: Ասոնց եր-
կայնութիւնը շուրջ 170 սանդիսէթը կ'ըլլայ, իսկ իւրաքանչիւրին
լայնութիւնը 50ական սանդիսէթը, 4-5 սանդիսէթը հաստութեամբ:
Ասոնց ծայրը գէպի վեր գարձած են կար անկիւն մը ձևայնելով:
Այս երկու սախաակներուն եզերքները իրարու միացուած են, եր-
կու վ'այանայ գօտիներով, որոնք, անոնց լայնութեան վրայ դամուած

են, իրարմէ մէկ մէթր հեռաւորութեամբ: Կամին այս արտաքին երեսը, կամին կրնակը կ'անուանեն: Միւս երեսը, որ քակը, կամ քակի երեսը կ'անուանուի, ծածկուած է սուր գայլախաղերու կտորներով, որոնց կրնակի մասը տախտակին մէջ խրած է մէկ սանդիմէթր ու աւելի խորութեամբ:

Կամին այն ծայրը որ դէպի վեր դարձած է, կամին գլխը կ'անուանեն: Գլուխին կողմը գտնուող գօտին ճիշդ մէջտեղը անցք մը ունի, սերկէ պարանոյլ կամը կը կապեն կեռածայր ձողի մը ծայրին հետ: Այս ձողին կեռը անցընելով լուծին փակին մէջ, կամը լծուած կ'ըլլայ այլեւս: Այս կեռ փայտը կամ ձողը կամքնէ կ'անուանեն: Կամընտէին երկայնութիւնը մէկ ու կէս երկու մէթր է: Այս է անկամին կազմութիւնը:

Կամնուծի առաջին գործողութիւնը Չարչն է:

Երեկոյին, երբ ամն ուրիշ աշխատանքները դադարած կ'ըլլան, կիներ, պատանիներ, աղջիկներ, 7-8 տարեկան մանուկներ մեծերուն հետ կալը կը լեցուին: Յաճախ լուսնի լուսով, շատ գուարթ, շատ սիրելի աշխատութիւն մըն է զոր պիտի կատարեն: Չարչը... ինչ անուշ աշխատանք... Այժմ, բոլորն ալ խուրձ կը հասցնեն շարչող կալուորին. տախտ, երկու մասնիով, գանտնք շրջանակածեւ կը շարէ նախ, միշտ հասկերը դէպի շրջանակէն ներս դարձած: Այս շրջանակին ամբողջ ներքին պարապութիւնը խուրձերով կը լեցնէ, գանտնք կողք կողքի շարելով:

Խուրձերու այս շարակարգութիւնը երբ աւարտի, հարսներ ու աղջիկներ, մանգաղ ի ձեռին, կ'սկսին խուրձերուն կեմերը կտրել, յաջորդաբար: Հինգ վայրկեան յետոյ 2-300 խուրձերու կեմերը արդէն կտրուած կ'ըլլան:

Կարգը փորձառու կալուորներունն է: Ասոնք ալ հոսելիով քակուած խուրձերու ցողունները կը ցրուեն, այնպէս որ, կազմուած բոլորակին վրայ, ամէն կողմ, ցորենի ձանձերը (ցողունները) հաւասարապէս տարածուած կ'ըլլան: Այս գործողութեան ամբողջութիւնը շարչի է, իսկ ձանձերով կազմուած բոլորակը շարչ կ'անուանուի:

Առաջին շարչը, դեռ չկամնուած, 75 սանդիմէթր բարձրութիւն կ'ունենայ. այս շարչը կամնուելէն յետոյ, յարդը և ցորենը առանց ամփոփելու կամնուած վիճակին մէջ կը պահեն, և անոր վրայ շարչ մըն ալ կը կազմեն, այս երկրորդ շարչը մէկ մէթր բարձրութիւն կ'ունենայ: Ի հարկէ, այս բարձրութիւնը կը ցածնայ կամերու քանի մը շրջանառութենէն յետոյ:

Կարգը այլեւս կամնուորներունն է:

Կամերը լծուած են: Չարչը բարձր է սակայն, լծկան կենդանիները դժուարութեամբ պիտի կրնան կամերը անոր վրայ բարձ-

քայնել : Կամուր մանուկներու գործը չէ սոս, մեծ չափանոս կալ-
 ւորը, որուն գործն է այլևս կամնուսի գործողութեան հսկել, մաս-
 սան ձեռքը բռնած, կամին վրայ կը բարձրանայ, կը մտրակէ կարիճ
 գոմէշները կամ եղները, որոնք, չնայելով որ մինչեւ իրենց փորը
 ձանձին մէջ թողուած են, կը թռչին կարծես, և կամը կամուրին
 հետ շարչին վրայ կը վազցնեն շրջանականուս : Այսպէս քանի մը
 շրջան ընելէ յետոյ, կալուորը կամը կը յանձնէ մանուկներու, ո-
 ռոնք, նստած կամին վրայ զետեղուած արտառիին վրայ, մասսայով
 կը վարեն լծկանները, ուշագիւր ըլլալով որ ասոնք կամը գետին չհա-
 նեն, այսինքն շրջանակէն դուրս չելնէ : Շրջանները իրարու կը
 յաջորդեն, և 4-5 ժամէն, արդէն շարչը իր նուազագոյն բարձրու-
 թեան կը մօտենայ, և ասով կամնուսի գործողութիւնները հետզհետէ
 կը դիւրանան :

Եզները, կամ գոմէշները լծելէ յետոյ, անոնց դռնչերը, փրնչը-
 տե կոչուած գիւտցիուն փայտի ճիւղով շինուած անուրի մը մէջ
 կ'առնեն : Ասիկա փոքրիկ շրջանակ մըն է, երկու ծայրերը իրարու
 վրայ կապուած : Եզներուն կամ լծուած գոմէշներուն դռնչը կ'ան-
 ցընեն այս շրջանակը և անոր մէկ կէտին կապուած մազէ սուտանը
 (խազը), լծկաններուն եզջիւրներուն հետ խաղը կ'ընեն (կը հան-
 կուրցեն) : Այս կերպով կենդանին չի կրնար չափէն աւելի, այսինքն
 վնասուելու սատիճան մալաղմայ (կամնուած յարգախառն հասիկ)
 ուտել :

Կէս օր կ'ըլլայ, կամերը կը քակեն (կենդանիները լուծէն կը
 զատեն), կամնուսի գործողութիւնը կ'ընդհատուի, ճաշի կ'երթան :
 Կամուր եզներուն ջուր խմցնելով մէկ երկու ժամ ստուերին մէջ
 կը հանգչեցնեն զանոնք : Մանուկներն ալ կը հանգչին շուքերուն
 մէջ, երբ ժամանակը գայ, դարձեալ կը լծեն, և մինչեւ արեւը
 մտրը մանելէն յետոյ երկու երեք ժամ սակաւին կը շարունակեն
 կամնելու գործողութիւնը :

Կալուորը, հասելին կամ երկու մասնին ձեռքը, շարունակ կը
 հսկէ, և կալը վրայ կուսայ (եզերքին վրայ գանուող խոշոր ձանձերը
 գէպի ներս, կեդրոն մղել) միշտ, որպէսզի ցողունները հաւասարապէս
 մանրուին :

Կէսօրէն յետոյ, դեռ կամերը չլծուած, սմբողջ շարչը կը ԵՐՉԵՆ,
 այսինքն հոսելիով շարչին տակը ծածկուած ու դեռ չմանրուած ձան-
 ձերը վրան կը հանեն, ասոր համար կը բաւէ հոսելին ներքեւը խրել,
 ու վեր բարձրացնելով քանի մը անգամ ցնցել, մանրուած յարգը
 վար կ'իջնէ, իսկ երկայն ցողունները վրան կը մնան : Այս գործո-
 ղութիւնը շարչը ԵՐՉԵՂ կ'անուանեն :

Երջումը, միեւնոյն շարչին կամնուսի գործողութեան ընթաց-

քին, քանի մը անգամ տեղի կ'ուենանայ, մինչև որ ամբողջ ձանձերը այլևս հաւասարապէս ու բաւականաչափ մասնութին:

Արածանիի ձախափնետոյ գիւղերուն մէջ, կամը, տաաջին առաւել չարչին վրայ հանելէ առաջ, երբ մէկ մէթրէ աւելի բարձր ըլլայ, իրենց բոլոր կենդանիները, մեծ ու փոքր, կը մղեն անոր վրայ: Ասանք ամէն ուղղութեամբ զայն կոխկրտելով բաւականաչափ կը ցածցնեն. սակէ յետո՛յ է որ կամը անոր վրայ հանելով կամենելու կ'սկսին:

Յորենի մէկ չարչին կամնուամը երկու օր կը տեւէ:

Փոքր չարչերը մէկ կամով կը կամնուին, իսկ մեծ չարչերը, որոնցմէ իւրաքանչիւրը գոնէ երեք հարիւր խուրձերէ կը բաղկանայ, երկու, չորս, մինչև վեց կամերով միաժամանակ կը կամնուին: Ասանցմէ երկուքը կամ երեքը մէկ ուղղութեամբ շրջան կ'ընեն, իսկ միւս երկուքը կամ երեքը ներհակ ուղղութեամբ կը դառնան, առանց իրարու բաղխելու, սրովհետև չարչին բոլորակը ընդարձակ է, այնպէս որ իւրաքանչիւր կամնաչարքի համար կամնուելիք շոյն պըսակ մը իբրև բաժին կ'իյնայ:

Եթէ պատահի որ չարչը մեծ ըլլայ այնքան որ կամնուելէ յետոյ կարելի ըլլայ զանիկա ամբողջ թեղ մը ընել, անոր վրայ այլևս նոր չարչ չեն ընէր, զայն կը հաւաքեն կալին մէկ անկիւնը, երկար ձեւ մը կուտան մէկ ու կէս մէթր բարձրութեամբ, և երեք, չորս մէթր երկայնութեամբ, ուշադիր ըլլալով որ անոր երկայնութիւնը արեւելքէն արեւմուտք ուղղուի, եթէ հոսելիտով պիտի հոսուի կուտակուած այս յարդի ու հասիկի խառնուրդը, զոր մալաղմայ կ'անուանեն, թեղ կը կոչուի, հաւաքելու գործողութեան ալ՝ թեղել, կամ թեղ ենել: Կալին միւս մասին վրայ նոր չարչ մը կ'ընեն նոյն կերպով, կը կամնեն, և կը թեղեն: Այս գործողութիւնն է որ տեղի պիտի ունենայ, մինչև որ ցորենի խուրձերը լմանն:

Կալին մէջ, անոր եզերքներուն վրայ, քանի մը թեղեր կը կազմուին կամ բլրակի ձեւով, կամ արեւմուտքէն արեւելք երկարող լերան շերտի մը նմանութեամբ: Այս ուղղութիւնը կուտան թեղերուն, որպէսզի ճիշդ արեւմուտքէն փչող հովէն օգտուին զայն հոսելու տան: Հարկ է ըսել թէ՛ ամառնային եղանակին, ընդհանրապէս արեւմտեան հովն է որ կը փչէ:

Թեղերը այսպէս օրերով կրնան մնալ, սրովհետև, մինչև որ կաւավարութեան կողմէն տասանորդիչ պոչտօնեան, կամ տասանորդը գնողներու կողմէն մասնաւոր ներկայացուցիչ մը (չայնայ = շահնայ) չարտօնէ, ապօրէն գործողութիւն մը և հետեւեքսր գողութիւն կը համարուի թեղը հոսելով արմաթքը յարդէն զատելը:

Կաւավարութիւնը ինք ուղղակի չի տասանորդեր գիւղերու բեր-

քերը, որովհետև առիկա իրեն համար շատ զբաղեցնող աշխատութիւն մը կը համարուի. այլ՝ գիւղերու ամբողջ տասանորդը միանուագ կերպով, ունեւորնելու՝ ածուրդով կը վաճառէ, ածուրդուած տասանորդներուն փոխարժէքը կանխիկ կը գանձէ, կամ մասնավճարներով, եթէ գնորդը կաշուածական երաշխաւորութեամբ ապահովցուցած է պատկանելու պաշտօնատուներ, իսկ տասանորդները հաւաքելու, շտեմարաններու, փոխադրելու և վաճառելու հոգը, իրաւունքն ու աշխատութիւնները գնորդին կը թողու, ըստ հարկին միայն, սատիկանութեան միջոցաւ գիւրացիներով անոր գործը, երբ ճնշում բանեցնել հարկ ըլլայ կամ տասանորդիչը յարմար գտնէ՝ գիւղացիին վրայ, ըլլայ արդար, ըլլայ անիրաւ կամ ապօրէն, չըսենք միշտ, այլ յոճախ ապօրէն:

Տասանորդներու ածուրդը՝ անուանական է: Ածուրդով գնողները, ուժով, բանութեամբ և հարստահարութիւններով համբաւուած քանի մը, 3-4, ոչ աւելի, տէրէպէյիներ են, ամբողջ կոշուած հողատէրեր, որոնք կառավարական պաշտօններուն իսկ, սկսեալ կառավարիչէն մինչեւ դատաւորին ու սատիկանութեան սոսկում պատճառած են: Ասոնք են որոնք ածուրդին կը մասնակցին. տանոց անունը սոսկ բաւական է, ո՛վ կը համարձակի մրցակցութեան մանելու անոնց հետ: Այս պայմաններով ածուրդը բացարձակէս անպատու կը մնայ կառավարութեան հաշուոյն իսկ անհաւատալի շահը ամիրային տպարանքը կը կրուի իր սեկպաններուն խորազանին տակ գիւղացիներու կողմէ: Իւրաքանչիւր գիւղացի պարտաւոր է իր սայլերով, կամ իր էշերովը տասանորդը պէյին շտեմարանները հասցնելու գիւղէ գիւղ տանելով, մերթ քանի մը ժամուան հեռաւորութիւն կտրելով:

Ըսինք թէ տասանորդումը կառավարութեան հաշուոյն սպասուածին չափ արդիւնաւոր չըլլար: Դիտուած է որ գիւղի մը տասանորդը, երբ պէյերը ի վիճակի եղած չեն ածուրդի մասնակցելու, տարեկան 30,000 զրշ.ի բարձրացած է, բայց երբ պէյերը (ամիրաները) մասնակցած են, 6000 զրշ.ի միայն ծախսուած է: 1895 թուականէն յետոյ, երբ ամիրաներու դիրքը աւելի զօրացու քաղաքական նպատակներու հետապնդութեան պատճառաւ, տասանորդի տուրքերու քանակը քառապատիկ, հնգապատիկ նուազեցաւ: Որովհետեւ, հայերը ընկճուեցան, և թուրք ունեւորները իրենց համարձակութիւնը աստիճան մ'ալ կորուսին, ուստի ամիրաները կառավարութեան ու գիւղացիին մինչեւ սանձարձակ տարրը դարձան, միշտ ի վնաս պետութեան գանձին:

Գիւղացին, իր թեղերը հոսելու համար, ուրեմն, պարտաւոր է Ամիրային կամ պէյին ներկայանալու, և անկէ արտօնութիւն խնդ-

րելու : Ամիրային բարեհաճ հրամանով, որոշուած օրը , իր ներկայացուցիչը (շայնայ) կալը կը գտնուի ժամանակին, և կը հրամայէ որ հոսելու սկսին :

Կը պատահի որ քանի մը շայնաներ միասին գտնուին , իբրև ներկայացուցիչ կամ տասանորդիչ՝ մէկէ աւելի պէյերու կողմէն : Կալին կորդը, ծառի ճիւղերով և տերեւներով տողաւոր մը կը պատրաստուի շայնաներու հանգիստը ապահովելու համար : Այս տողաւորը խոյլ կ'անուանեն բալուցիները :

Շայնաները խուզին մէջ նստած կը հսկեն հոսելու գործողութեան : Հոն կը ճաշեն, ճաշը գիւղացին պարտաւոր է տալու քանի օր որ անոնք գիւղը մնան . և պէտք է որ իրենց տխորժակին գոհացում տրուի, ապա թէ ո՛չ , անոնք կալատէրին գլխուն չարիք մը կը դառնան, չարախօսելով իրենց մասին կամ զիրենք զրպարտելով ամենակարող Ամիրային առջեւ :

Գիւղացի երկրագործներէն շատեր, սեփական հող չունին մշակութեան համար . անոնք ալ իրենց ամիրային հողերը կը մշակեն : Արդիւնքին տասանորդը զատելէ յետոյ մնացածը , ամիրան, իր շահնային միջոցաւ կը բաժնէ իր իրաւունքը նուազագոյն բաժինը գիւղացի մարապային (վարձկան մշակ, որ ամիրային հողերը կը մշակէ) կը թողու :

Հոսելու գործողութիւնը կ'սկսի : Թեղը հոսելու երկու եղանակ կայ . մէկը հովի միջոցաւ , իսկ միւսը մասնաւոր մեքենայի միջոցաւ :

Հովի միջոցաւ հոսելու համար երկու երեք կալուորներ թեղին վրայ կը բարձրանան, հոսելիներ ի ձեռին : Երբ հովը կը փչէ , անոնք թեղին մալաղման հոսելիին վրայ առնելով , վեր , օդին մէջ կը նետեն : Յարդը թեթեւ ըլլալով , հովէն հեռունները կը մղուի իսկ հատիկները, իրենց ծանրութեան պատճառաւ թեղին վրայ կը թափին անձրեւի պէս : Այս գործողութիւնը շարունակելով հեաղհեաէ յարդը և արմաիքը անջատ կոյտեր կը ձեւացնեն : Յորենի այս կոյտը մողէ մ'ալ կ'անցնեն , և կ'անոնաւոր կոնածեւ կամ շերտածեւ կոյտերու կը վերածեն : Շայնան, իսկոյն այս կոյտը , ստիտակէ կնիքով մը կը կնքէ շուրջանակի, վրան և կողերը տեղ տեղ, այնպէս որ ո՛րեւէ կողմէ անկարելի կ'ըլլայ, սփ մը ցորեն կամ արմաիք գողնալ տուանց կնիքը աւրելու : Կնիքը աւրել օրինական ծանր պատասխանատուութիւն հրաւիրել է . գիւղացին, ուրեմն, օրերով զգուշաւոր պահպանութիւն պիտի ընէ , որպէսզի ոեւէ ձեւով , կամ ոեւէ պատճառով այն կնիքներէն մէկ երկուքը շուրուին, մինչեւ չափելու օրը :

Հովի միջոցաւ թեղը հոսելու գործողութիւնը ինչպէս կը հե-

տեւցուի, շատ տաժանեւի և շատ ալ երկարատեւ կ'ըլլայ, ասիկա հին ձեւն է :

Թեղը կը հասուի նաեւ դատիչ մեքենայով մը : Ասոր դիտաւոր մասերը թեւաւոր անիւ մը, մաղերը, և անիւը շարժող մեքենական լծակներ : Անիւը դառնալով օդի ուժգին շարժում առաջ կը բերէ : Անիւին լայն ու երկայն թեւերէն ո՛չ շատ հեռու անիւին թաւալման հետ միասին ու անոր լծակներէն մէկուն հետ հաստատուած, շեղ դիրքով շրջանակ մը աջ ու ձախ արագ շարժումներ կ'ընէ : Այս շրջանակին մէջ կը հաստատուին մետաղեայ թելերով հիւսուած մանր կամ խոշոր ծակերով մաղեր :

Ասոնք հաստատուած են սախասակներով շինուած հիւղակի մը մը մէջ, որուն վրայ քառակուսի, 30 սանդիմէթր կողմով ծակ մը կը գտնուի : Վրայի այդ ծակէն, հասելիով կամ մաղով մինչ մէկ կողմէն մալաղման կը լեցնեն, մեքենային մաղին վրայ, ուրիշ մը մանիչի մը միջոցաւ, անիւին առանցքը կը դարձնէ, ասիկա յենած է փոքրիկ ստամնաւոր անիւի մը միջոցաւ, ուրիշ աւելի մեծ ու ստամնաւոր երկաթեայ անիւի մը : Անիւը սասաիկ արագութեամբ դարձած ատեն, առաջ եկող օդի հոսանքը մէկ կողմէն յարդը դուրս կը վանէ, միւս կողմէն աջուձախ արագապէս շարժող մաղը, իր վըրայ գտնուող մալաղման կը ցնցէ, և արմաիքը իր ծակերէն շեղ մակարդակով անցքէ մը մեքենային ետեւ գետինը կը կուտակուի :

Մաքինայով մէկ երկու ժամէն կարելի կ'ըլլայ մեծածաւալ թեղ մը հոսել :

Հարկ է ըսել թէ, ցորենը մեքենային ետեւը երբ կը հաւաքուի, կոթնիքը ուրիշ տեղ մը կը հաւաքուի : Կոթնիքը ցորենախառն կարծր կճեպներ են, որոնք կամէն վրիպած են և այլեւս անկամեւելի են : Կոթնիքը երբեմն կամընտէներով կը ձեծեն, և այս կերպով հատիկներէ մաս մը տակաւին կճեպներէն կը զատեն կամ նորէն կը կամենն :

Մաքինայով հոսուած ցորենը հեղ մըն մ'ալ կը հոսեն, այս անգամ անոր վրայ աւելի մանր ծակերով մաղ մ'անցնելով. այս երկրորդ հոսումով արմաիքը աւելի կը մաքրուի կոթնիքներէ և քարերէ, այս կերպով շատ մաքուր արմաիք ունենալ կարելի է :

Կանոնաւորապէս կուտակուած ու կնքուած արմաիքը կրնայ այդ վիճակին մէջ մնալ օրերով : Անոր վրայ պաշտօնական վերջին գործողութիւնը Չափելու գործողութիւնն է, զոր կատարելու համար արտօնութիւն պէտք է ձեռք բերել ամիրայէն, կամ իր փոխանորդ շայնայէն :

Կնքուած արմաիքի շեղջակոյտին քանակը գնահատելու համար գիւղացի երկրագործը մասնաւոր փորձառութիւններ ունի : Եթէ այդ

շեղջատկոյտին գրաւած գեանին շրջանակը քառասուն և հինգ կամ յիսուն անգամ շայնային կնիքը պարունակէ իր մէջ, անասրակոյս, կնքուած այդ շեղջատկոյտը, չափուելու տան չորս ճալիս (մէկ տալիսն հինգ շարեկ է) կ'ըլլայ: Մէկ շարեկը տասնեւվեց օլչակ գրի է, մէկ օլչակը, տանուազն քսանեւչորս օխաքաշ կամ 1.283 քիոկրամ կը կշռէ: Մէկ օլչակը չորս Չափ է (թուրքերը և քիւրտերն ալ չափ բաւը կը գործածեն), տախտա տանուազն վեց օխայ է. իսկ մէկ չափը չորս 'Իռլանդ' է. մէկ դոյլը չորս կից է, մէկ կիցը երկու սփ է: Ափը պարունակութեան այն չափն է, որ երկու ձեռքերը, ճկոյթներուն կողմէն իրարու միացնելով կը կողմուի, գոգաւորելով զանոնք:

Գիւղացի հողագործը, իր փորձառութեամբը, արա մը տակաւին չհնձած, կրնայ գիտնալ կամ հաշուել թէ՛ այդ հունձքը քանի շարեկ արմախք պիտի տայ, նոյնիսկ սայլերուն փոխադրութեանց քանակը հաշուելով կրնան գիտնալ թէ սայլի մը մէկ բեռը որքան արդիւնք կուտայ: Յորենի խուրձերու դէզ մը երբ քառասուն կամ քառասունը հինգ սայլի բեռ կ'ըլլայ, անկէ տանուելիք զուտ արմախքը մերձաւորապէս երեք ճալիս կը հաշուեն. այսինքն տասնհինգ շարեկ, կամ վեց հողար օխա:

Հասուած, մաքրուած եւ կնքուած ցորենը չափելու արտօնութիւնը դիւրութեամբ ձեռք չբերուիր, երբ պէյը կամ իր շայնան սիրաշահուած չէ կալատէրին կողմէն: Պէտք է սղաչել, պողատել, ամիրոյին կամ իր շայնային, կամ շայնային հետեւորդներուն, կնքողին սիրտը տանել, անոնց յօժարութիւնը ձեռք բերել կերցնելով, խմցնելով կամ կաշտուելով:

Օր մը, երկու, երեք, ութը օր ու գիշեր կալատէրը աչալուրջ կերպով պէտք է որ հսկէ կալին վրայ, որպէսզի չափուելիք շեղջին կնիքը չուրուի, ո՛չ մարդ և ոչ ալ անասուն չեն թողուր որ մօտենայ անոր:

Վերջապէս ինչպէս կ'ըսեն անոնք «կալը չափել» ու հրամանը կամ արտօնութիւնը ձեռք կը բերուի:

Կալը եռուզեռ մը կայ: Գիւղին գզիրը, շայնան, կնքակիրը, շայնային գրագիրը. գիւղին մեծը կամ ռեսը, ցորենը կրողներ մէկ մէկ քուրձ իրենց ուսերուն վրայ, աղքատներ, մերթ պարտապահանջներ, կօշկարներ եւայլն, և դիտող գիւղացիներ հոն են: Ասոնք ցորենին չափուելուն կ'սպասեն:

Շայնան շեղջին կնիքները՝ վերջին հեղ մ'ալ աչքէ կ'անցնէ, հաստատելու համար անոնց անաղարտ մնացած ըլլալը. և հրաման կ'ընէ որ չափելու սկսին:

Գզիրը և կալուորներէն մին, երկու օլչակնոց պարունակու-

Թեամբ մեծ շափը շեղջին մօտ դրած երկու կողմը կ'ապաստեն, և շայնան հրամանը ապուեն պէս, կ'սկսին փայտեայ թիերով ցորենը մեծ շափին մէջ լեցնել: Գզիբը ուղիղ ու յղկուած փայտով մը շափին եզերքին վրայ դնելով կը սահեցնէ, աւելորդ ցորենը դուրս կը թափի: Գզիբը և կալուսորը այդ խոշոր շափին (քիլայ) երկու անկերէն բռնելով շեղջէն քիչ մը հեռու կը պարպեն գետինը, այն տակն դզիբը կը պատայ բարձր ձայնով ու թուրքերէն լեզուով. «Պի՛ր, Ալլա՛նըմ, պի՛ր...» մէկ, Աստուան՝ ծա, մէկ...:

Գատարկ շափը դարձեալ շեղջին քով կը տանին և մինչ ուրիշ աշխատանքներ թիերով ցորենը քիլային մէջ կը լեցնեն, գզիբը պարբերապէս ու եղանակով կը կրկնէ միշտ «պի՛ր...» ըսելով: Երկրորդ անգամ շափը կը պարպեն նախորդին վրայ, դարձեալ գզիբը կը պտուայ «Ի՛քի, պարաքեան թ», երկրորդ, օրհնեալ ըլլա՛յ...: Այս կերպով կը շարունակեն մինչև որ շափելու գործողութիւնը վերջ գտնէ: Շեղջակոյտէն եթէ քիչ մը մնայ գետ, շափելը կը դադարեցնեն, մնացածը վերապահելով աղքատներու որպէս կալամա կամ կալամաս տեղական բարբառով:

Չափուած ցորենին կէսը հողատիրոջ կը պատկանի, մնացածին ալ ութուկէսէն մէկը տասանորդ գատելէ յետոյ, վերջին մնացորդը հողագործին բաժինը կ'ըլլայ: Ուրեմն, ի՛նչ որ տասանորդ կ'ըսենք, բերքին մէկ տասներորդը հասկնալու չէ, այլ՝ պէտք է հասկնալ տնոր մէկ ութուկէսերորդը նոյնիսկ մինչև մէկ եօթներորդը: Այս պատճառաւ ալ, անցողակի ըսենք, գիւղը յաճախ ինքնաբաւ եղած չէ:

Կալը (արմաթիքը) շափելէն յետոյ, պէյը կամ հողատէրը և շայնան իրենց բաժինները կրել կուտան մասնաւոր շտեմարաններու մէջ: Նոյն տակն կալատէրը կ'սկսի կալամաս աւալ, կը կանչէ աղքատները և անոնց մէկական գոլ ցորեն տալէ յետոյ կը ճամբէ:

Կարգը պարտապահանջներուն կուգայ: Երկաթագործ, կօշկակար, ներկարար, և ուրիշներ, որոնք որ ներկայ են, կ'ատանան իրենց իրաւունքները: Ասկէ յետոյ է որ տուն պիտի կրեն մնացած ցորենը:

Մեծ քանակութեամբ ցորեն արատաբողներ, իրենց տուններուն անկիւնները շինել տուած էին տախտակէ խոշոր շտեմարաններ: Ասոնց վրայ տանիքը կը ծակէին, ու ցորենը կալէն կրելով այդ ծակէն շտեմարանին մէջ կը պարպէին. շտեմարանը լեցուելէն յետոյ, այդ ծակը կը գոցէին, որպէսզի ձիւնի և անձրեւի եղանակին ողողումէ զերծ մնային. շտեմարանին բերանն ալ տախտակով կը գոցէին: Շտեմարաններէն «մէնափոքրը 7-8 չարեկ արմաթիք պարունակելու շափը՝ գունակութիւն ունի: Մինչ մէկ կողմէն հարս, աղջիկ, պատանի, շափանաս իրենց շալակի քուրձերը (ճուռլ, ինչպէս կ'ըսեն իրենք)

կը սրտապէին տանիքին ծակին վրայ, փոքրիկ աղաքներ ալ, ծակին վրայ կուտակուած ցորենին՝ ծակէն վար հասումը կը գիւրացնէին, խառնելով ձեռքով և ցրուածները անցքին վրայ բերելով:

Քանի մը ժամէն, եռուզեռը կը դադարի: Չտիրուած արմախքին կամ մասնաւորապէս ցորենին շեղջը շտեմարան փոխադրուած վերջացած է, աւրուած, մաքրուած ու իր սովորական վիճակն ստացած է: Կայ կամենելի չարչը, կայ դեռ խուրձերու գէզը, կան ուրիշ թեղեր ալ, որոնք հետզհետէ պիտի անցնին կամէն, հոսելիէն, հովէն կամ մաքրնայէն, շայնայի կնիքէն, ու տասանորդումէն: Շայնայ, կնքատար, հետեւորդներ, ամիրայ իրենց տեղերը կը դառնան այս առաջին չափումի գործողութեան աւարտումէն յետոյ:

Քանի մը մաղեռու ընդարձակութեամբ շարձախիւն երկայնութեան արդէն քառասուն յիսուն հոգիներու բաւող երկայն ու ցած սեղանը դրուած պատրաստ է: Բոլոր աշխատաւոր անեցիկներն ու վարձուած մշակները նոյն սեղանին շուրջը մեծութեան կամ տարիքի համեմատութեամբ նստած են երկիւղած լռութեամբ մը, որովհետեւ Սարգիս արարը, տանը ամէնէն սարէցը, հոն սեղանին գլուխը բազմած ներկայ է: Տանտիկինը կերակուրի կաթսաները օձախէն մէկդի առած է. կերակուրը պատրաստ է: Հարսները ու աղջիկները պնակներ կը բերեն կերակուրով լեցուն և ընտիր հացերը սեղանին վրայ առատօրէն կը շարուին: Ճաշ պիտի ընեն:

Տան մեծը, Սարգիս ամուսն, — ըսենք առանց մոռնալու թէ, ամէն ինչ թէեւ պատրաստ է, բայց ո՛չ ոք ձեռքը դգալին կրնայ երկնցնել, որքան ալ անօթեցած ըլլայ, հոն խիստ կարգը ու աւանդական սովորութիւնները ամէնակատարեալ ճշտութեամբ կը տիրեն: — Սարգիս արարը, տանը մեծը որովհետեւ դեռ սկսելու նշան տուած չէ: Ահա լռութեան մէջ «Յանուն Հօր և Որդւոյ...» ըսելուն պէս ամէնը մէկէն կը խաչակնքեն, «Հայր մեր»ը կը շարունակէ, «և փառք յաւիտեանս» ըսելուն պէս դարձեալ ամէնը մէկէն կը խաչակնքեն. «Ճաշակեացուք խաղաղութեամբ զկերակուրս» ևն. ալ կ'ըսէ և աւարտելուն վերջին խաչակնքումը կ'ընեն, բայց ամէնուն աչքը կը դառնայ գէպի Սարգիս արար ձեռքը:

«Ապրիք, զաւակներս, Աստուած բարի վայելում տայ ձեզի ամէնուդ» ըսելով կարճ բարեմաղթութենէն յետոյ ձեռքը դգալին վրայ կը դնէ, իրեն կը հետեւին մեծերէն մինչեւ պզտիկները տարիքի կարգով: Հարսները, աղջիկները զատ սեղանի շուրջ կը հաւաքուին:

Իգայներու ձայն պիտի չհանեն, երբ քանի մը պզտիկներ մեծերու հետ ամէնը մէկ պնակէ պիտի ուտեն, իրենց դգալները ուրիշներու առջեւները պիտի չերկարեն. ամօթ է, մեծ զգուշութիւն կայ, ոչ

մէկ խօսակցութիւն, ոչ մէկ շշուկ, ո՛չ մէկ խնդուք, աստնք անքաղաքաւարութիւն, անպատկառութիւն իսկ կը համարուին մեծին ներկայութեան: Բայց ուրախ են որ վերջապէս տարեկան լիցիին (պաշար) մէկ մասը տունը լեցուցին:

Առ առաւելն մէկ ժամէն ճաշը կ'աւարտի: Նախ հարսներն ու աղջիկները ոտքի վրայ են, անշուշտ մեծին վերջին «Հայր մեր»ը և «Զլիւթիւն սեղանոյ» ըսելէն յետոյ: Մէկ վայրկենի մէջ, սեղանը թափուր է. հարսները կը հաւաքեն պնակ, լական, դգալ, կը մաքրեն սեղանները, կը վերցնեն զանոնք, կ'աւրին գետինը զգուշութեամբ այն պէս որ հայր ո՛չ մէկ վշտանք ոտքի տակ չմնայ, մեղք կը համարուի: Ամանները, դգալները լուարու աշխատանքը տանտիկնոջ կը մնայ, իսկ միւսները, դարձեալ կալն են, ուր դեռ կը մնան՝ տուն փոխադրուած ցորենին յարդը և կոթնիքը՝ և մրեղը:

Մարաքներուն տանիքին վրայ խոշոր լուսամուտներ կը բացուին: Բոլորն ալ, հարս, աղջիկ, պատանի, չափահաս ուսենիէ հիւսուած խոշոր սափաքներ իրենց շալակը մէկական սպիտակ բաթով իրենց գլուխն ու վիզը ծածկած կ'սկսին յարդը և մրեղը կրել: Տանիքին մասնաւորապէս բացուած լուսամուտէն յարդը կը պարպեն մարաքին մէջ. մինչեւ աւաստողը կը հասնի յարդի կոյտը: Այս կերպով յարդն ալ կը տեղաւորեն: Իսկ մրեղը որ յարդին շատ մանրն է և կը գործածուի շաղախներու մէջ, ուրիշ անկիւն մը կը լեցնեն: Գիւղացին, պէտքին համաձայն մէկէ աւելի ախոռներ, մէկէ աւելի մարաքներ, քոզեր, կշգրատուներ կ'ունենայ, եւ տեսած եմ նահապետական տուններ, որոնք հինգ ախոռներ ունէին, և իւրաքանչիւր ախոռի մէջ քսանական եզներ կը կապուէին դէմ դիմաց երկու շարք մտուրներու առջեւ:

Յարդին և մրեղին փոխադրութիւնը աւարտելէն յետոյ կը մնան կոթնիքին վրայ կատարելիք աշխատութիւնները, զորոնք փութացնելու ստիպողական հարկ մը չկայ:

Կոթնիքը, ցորենին ոստերն են, այսինքն հասկերուն ցողունին հետ միացած մասը, որ կամնուամի գործողութեան միջոցին չի մանրուիր և ոտը կճեպը և հատիկը անբաժան կը մնան իրարմէ: Երբ թեղը հոսուի, աստնք յարդէն կը զատուին հատիկներուն հետ խառն մնալով. երկրորդ անգամ մաղուելով հատիկներէն կը զատուին, և որովհետեւ մեծ քանակութեամբ, կրնայ ըլլալ որ, կոթնիք չեղնէ մէկ թեղէն, զայն կալին մէկ անկիւնը կը լեցնեն, հոն կը մնայ, մինչեւ որ ուրիշ թեղեր ալ հոսուին: Վերջէն հոսուող թեղերուն կոթնիքներն ալ առաջինին վրայ կ'ամփոփեն, մինչեւ որ շատնայ և բաւական ըլլայ անկէ շարչ մը կազմելու և կամնելու համար:

Կը պատահի որ քանի մը տեսակ ցորեններու կոթնիքները ի-

բարու հետ խառնելով չարչ մը կազմեն. սախկա կ'ըլլայ այն ատեն, երբ մէկ տեսակ ցորենի կոթնիքը անբաւական ըլլայ մէկ չարչ կազմելու: Կոթնիքը կը կամենն կը հոսեն այնպէս ինչպէս ցորենը: Եւ եթէ այս երկրորդ կամուսմէն դարձեալ կոթնիք մնայ, այն ատեն կամընտէներով կամ թակերով կը ծեծեն և կամ ծանր լողքարով կը լողեն, հասիկները կճեպներէն զատելու համար: Ասիկա կ'ըլլայ վերջին գործողութիւնը:

Կոթնիքէն զատուած արմախիքը տասանորդէ զերծ է թէև, բայց հողատէր ամիրան կամ պէյը իր մարտադրոյին հետ զայն ալ հաւասարապէս կը բաժնէ: Եթէ հողատէրը ինք երկրագործն ըլլայ, ամբողջովին իրեն կը մնայ, պայմանաւ որ մեծ քանակութիւն մը չներկայացնէ: Բայց եթէ կոթնիքը մեծ քանակութեամբ ըլլայ, այն ատեն ենթակայ կ'ըլլայ տասանորդուելու գործողութեան, ուստի պիտի կամենուի, պիտի հոսուի, պիտի կնքուի, պիտի չտիուի և ոպրա տասանորդը համուելով մնացածը բաժնուի հողատէրին ու երկրագործին միջեւ:

Այս կոթնիքէն առաջ եկած մասը, ցորենէն զատ իբրև յարգչի գործածուիք, որովհետև կարծր է, և կենդանիները չեն ուտեր, սա ալ թուրղի (թուրծ), ամաններ, թրծելու գործողութեան միջոցին կը փառեն, ասոր ջերմութիւնը մեղմ կ'ըլլայ, և հետեւաբար թրծուելիք ամանները ոչ միայն չեն ճեղքուիր, այլ հաւասարապէս կը թրծուին իրենց ամէն մասերովը:

Գիւղացի նուալակները (անոնք որ հողագործութեամբ չեն պարապիր, արհեստներով ու մշակութեամբ կամ քանուորութեամբ կ'ապրին) որոնք կոթնատու կենդանիներ՝ կով, մատակ, այծ, ոչխար կը սնուցանեն, իրենց արջառներուն համար հարկ եղած յարգը դրամով չեն գներ, այլ երկրագործներէն կ'առնեն, աշխատութեամբ փոխարինելու պայմանաւ: Երբեմն ալ առանց փոխարինումի: Չկայ ճուալակ մը, որ յարգ ուղելու պարագային մերժուի իր դրացի երկրագործէն:

Կալերու գործողութիւնները Աեպտեմբերի ընթացքին վերջ կը գտնեն. Աեպտեմբերի վերջերը հազիւ հոս, հոն կալերուն անկիւնները քիչ քանակութեամբ կոթնիք կը գանուի: Կամը, հոսելին, երկու մասնին, փրնչրտէն և բոլոր գործիքները տունին մէջ, իրենց յատուկ տեղերը գրաւած են այլեւս, ո՛չ ոք անոնցմով կ'ըլլաղի:

Ցորենները ամբողջովին տունը փոխադրելէ յետոյ, կը մնայ անոնցմէ սերմըցուն (սերմնացու) զատել: Ասոնցմէ ամէնէն մաքուրը, խոշորն ու կատարելապէս հասունացածը կը մտնեն խնամքով, և չգործածելու համար, մասնաւոր փեթակներու մէջ կը պահեն իբրև սերմըցու ցորեն: Մանձաքին, աշորան, շիկոնը իրենց ինքնուրոյն տե-

տանհներու սերմըցուները կ'ուենեան, առանձին փեթակներու մէջ պահուած, որպէս արմախքներէն իւրաքանչիւրին ընտրելագոյն մասը :

Կարգը սպրցուներուն կուգայ :

Ապրցու բառով կը հասկցուին բոլոր այն արմախքները և ընդեղէնները, որոնք, մասնաւոր լիճակի մը մէջ գրուելէ յետոյ, կերակուրներու պատրաստութեան կը վերապահուին :

Ապրցուներ են, ուրեմն, պլլուրը (պուլլուր, ձաւար), սմբրաիկը (մանր պլլուր), կորկատը, ծեծածը, սսպը, սխառը, բակլան, Ֆիթը :

Յորենի այս գլխուն մէջ բացատրել յարմար կը դասեմ թէ ի՞նչպէս կը պատրաստուին անոնք :

Պլլուր, պլլուր բառին երկու ձևերն ալ անխափր գործածական են հոյ գիւղացիին և քաղաքացիին բերնին մէջ : Իսկ քուրդեր և թուրքեր պուլլուր բառը կը գործածեն : Գծուար է՝ զայն թուրքերէն բառ մը համարել, ասիկա ստուգաբանութեան և բանասիրութեան վերաբերեալ հարց մըն է, կը թողու՞մ զայն՝ անոնց :

Գծուարին աշխատութիւն մըն է պլլուրին պատրաստութիւնը, և՛ մէկէ աւելի կիներու, հարաներու, այրերու օրեր տեւող զբաղում հայթայթող գործ մը :

Պլլուրը, միայն աշորայէն կը պատրաստեն, ո՛չ մանձաքին և ո՛չ ալ շիկօնը կրնան ընտիր պլլուր ստր : Նախ չմտնում ըսելու թէ՛ ասիկա ամէնէն գլխաւոր սպրցուն է, և տարեկան անոր լիցքը պէտք է որ մեծ քանակութեամբ ըլլայ :

Տանախիկներ, նախ, կ'որոշէ այն քանակը, որ պլլուր կամ ձաւար պիտի ըլլայ մէկ տարուան բաւելու չափ : Անիկա, տարիներու փորձառութեամբ լաւ գիտէ այդ չափը, նոյնիսկ մէկ երկու օլչակ ալ՝ աւելի կը հաշուէ, չնախատեսուած, կամ պատահական սպառումներու համար : Տան անդամներուն թիւին համեմատ տարեկան պլլուր կը պատրաստեն : Իւրաքանչիւր անձի համար, ամբողջ տարին, առնուազն երեք օլչակ պլլուր կ'սպառի : Տուն մը եթէ հողագործ է, և ունեւորի համբաւ ունի իր սահմաններուն մէջ, ու 20-25 անդամներէ կը բաղկանայ, իւրաքանչիւրին համար մէկական օլչակ աւելի պլլուր կը խաշէ, ասն համար պատրաստուելիք պլլուրի քանակէն զատ : Որովհետեւ, այդպիսիներու դուռը միշտ բաց է եկող զնացող, ծանօթ կամ անծանօթ հիւրերու առջիւ : Ասոնցմէ դուրս, ուտիկանը, տասնապետը, հազարապետը, կառավարիչը իր հետեւորդներով, գործի մը առիթով երբ գիւղ հանդիպին, ունեւորին առնը կ'օթեւանին : Այսպէս անոր սեղանը «զեանէն բնաւ չի վերնար» ինչպէս կ'ըսեն անոնք, հասկցնելու համար թէ միշտ սեղանը պատրաստ լիճակի մէջ է :

Պլլուրի յատկացուած շիկօնի շեղքը պատրաստելէ յետոյ, ասն-

տիկինը, իր շուրջը հաւաքելով հարսներն ու չափահաս աղջիկները — ո՛չ մէկ այր չի մասնակցիր այս աշխատութեան, — անոր քով կը նստի։ Ամէնքն ալ մասնաւոր մազերով կը մազեն աշորան, և մազուածը մէկդի կը կուտակեն։ Մազելու գործողութիւնն աւարտելէ յետոյ, մազուած ցորենը կը տեփրեն. (տես բաւարանը) քարերէ և կոթնիքներէ ինչպէս նաեւ սրտներէ մաքրելու համար։ Տեփրելու գործողութեան ընթացքին, այդ օտար նիւթերը, քար, օրոմ, կոթնիք, խլոր, տեփուրին եզերքը կ'անջատուին ցորենէն, և այն ատեն ձեռքով զտակ դիւրին կ'ըլլայ։ Ասիկա, պղլուրցու ցորենը մաքրելու վերջին գործողութիւնն է. ասոր կը յաջորդեն՝ խաշելու, չորցնելու, ծեծելու, հոսելու, աղալու, մազելու, և աստիճանաւորելու անհրաժեշտ գործողութիւնները։

Պղլուրին քանակին համեմատ, քանի մը պղինձներ (խոշոր կոթսաներուէն պղինձ — պլինձ կ'ըսեն) գորդանին մէջ շինուած մասնաւոր օձախներու վրայ կը դնեն. անոնց մինչեւ կէսը ջուրով կը լեցնեն, ու կ'սկսին տաքցնել, ջուրը քիչ մը տաքնալէ յետոյ, իւրաքանչիւր պղինձի մէջ մէկէն մէկ ու կէս օլչակ մաքրուած ցորենէն կը լեցնեն։ Ջուրը հետզհետէ աւելի կը տաքնայ, կ'եռայ. ցորենը կ'ուռի, կը բարձրանայ, գէղի պէս, ասկէ խաշուած ըլլալը կը հասկցոտի։ Այս վիճակին մէջ, միշտ խոշոր շերտիներով կը խառնեն խաշուող ցորենը, որպէսզի ամբողջը հաւասարապէս խաշի, ասիկա անհրաժեշտ է, լաւ պղլուր ունենալու համար. հակառակ պարագային թերխաշ ցորենը եփուն պղլուր չըլլոր։ Տանտիկինը, իր տաքիներու փորձաւորութեամբ, խաշուած ցորենին գոյնէն, ուռելու աստիճանէն կրնայ հասկնալ թէ՛ պէտք է այլեւս խաշելու գործողութիւնը դադրեցնել. երբ ժամանակը գայ, խկոյն խոշոր ու ծակտակէն շերտիներով խաշուած ցորենը քուրձելու մէջ կը լեցնեն. հարսներ ու աղջիկներ զայն շալակով տանիքը կը հանեն։

Տանիքը քանի մը օր առաջ արդէն մաքրուած ու շաղախուած է, խաշուած ցորենը հոն կը պարպեն, և կը մէյնեն (կը փռեն, կը տարածեն) հաւասար թանձրութեամբ։ Ասոր ուշադիր կ'ըլլան, որպէսզի չորացումն ալ հաւասարապէս տեղի ունենայ։ Չարեկ մը, երկու, երեք, չորս խաշուած ցորենը, որ ուռելով կրկնապատիկ, եռապատիկ ծաւալ ունեցած կ'ըլլայ, շուտով կարելի չըլլար տանիք փոխադրել, քանի մը ժամ կը տեւէ։ Ամէնն ալ գործի վրայ են. տանիքէն գորդան և գորդանէն տանիք երթեւեկ մը կայ. չորս հինգ հոգի շալակով կը կրեն մէկ երկու հոգի ճուղները կը լեցնեն. մէկ մէկ հոգի ալ կը փռեն կամ կը տարածեն տանիքին վրայ։ Մանուկներն անգամ գործի կը խառնուին. անոնք ալ տանիքին վրայ մէյնուած ցորենին մօտ կը կենան, և կը հսկեն, որպէսզի ճնճուկները,

սպիտակ սպառաճեցրը, որոնք բո՛ւի խախա կ'անուանուին տեղւոյն վրայ, ուրուրները հասիկները չժողվեն: Ճնճղուկները սառւար սառմերով արդէն տուներու ցուրքներուն մշանջենական հիւրերն են: Երբ երամով կ'իջնեն փռուած ցորենին վրայ, մանուկները «հէլ, հէլ, հէլ...» պուլուլով կը փախցնեն զանոնք: Այսպէս օրերով պահարսութիւն կ'ընեն, մինչև որ խաշուած ցորենը չորնայ, և ճուարներու մէջ ամփոփուի դարձեալ:

Շուներն ալ փռուած ցորենին փնտնէր կը հասցնեն, ճնճղուկներէն ալ աւելի, եթէ հեղ մը տալի՛ն ունենան սանիք ելնելու: Ճնճղուկները հասիկ հասիկ կ'ուտեն, մինչդեռ տուներու այդ չորքատանի պահապանները... լսիւլով աւեր կը գործեն: Միայն մանուկներու չի վստահուիլ հսկողութեան գործը. չափահաս աղջիկներ, մերթ հարսներ ալ հոն կը գտնուին, կ'ուենենան իրենց մօտ դաւազան և տախարակ երկու փոքր քարեր. երբ թռչուններ գան, այդ երկու քարերը իրարու կը բախեն, տանց բախումէն առաջ եկած ձայնէն թռչունները կը փախչին: Իսկ գաւազանը շուներուն համար կը գործածեն վայելչօրէն...:

Այս պահարսութիւնը օրեր կը տևէ: Երբ լաւ մը չորնայ, կը հաւաքեն զայն տեղւոյն վրայ, և քանի մը կլիներ, անշուշտ վարժ եղողներէն, կ'սկսին ամբողջ ցորենը տեղի աւերել: Մէկ կողմէն մինչ տեփրուածքը տեղի կ'ուեննայ, միւս կողմէն մեծ սեղանի մը վրայ կուտակուած տեփրուած ցորենը կը նրշեն (ընտրեն, մէջէն աւելորդ, օտար նիւթերը գտակ, ինչպէս, խլոր, խզիւմ, կռթնիքի հետքեր, քար եւն): Ասիկա երկրորդ անգամն է որ պղլուրին մաքրութիւնը կը կատարուի: Հըյրուած ցորենը ճուարներու մէջ կը լեցնեն, ու կը կարեն խոշոր մախաթներով (մեծ տակ):

Հոս, կիներուն աշխատութիւնը կ'ընդհատուի: Խաշուած, մաղաւած, տեփրուած, ու հըյրուած ցորենը այլևս ձիթի համբ կը տարուի ծեծուելու համար: Զայն դիրք, դիրք, ձիթի համուց կալին վրայ կը լեցնեն, և քիչ քանակութեամբ վրան ջուր սրսկելէ յետոյ, խոշոր երկանաքարը կ'սկսին անար վրայէն շուրջանակի թաւալեցնել: Երկանաքարին այս երկարատեւ թաւալումէն խաշուած ցորենին թեփը կը դատուի բոլորովին անկէ: Որքան թեփը լաւ դատուի ցորենէն, այնքան պղլուրը ընտիր կամ յարգի կ'ըլլայ. անոր թէ եղինձը և թէ բուժքան համեղ կ'ըլլան:

Թեփերը ցորենէն զտակէն յետոյ, ծեծելու գործողութիւնը կը վերջացնեն: Թեփախառն ցորենը դարձեալ ճուարներով տուն կը փախադրեն:

Գիւղեր կան որոնք ջրաղացներու մէջ կամ տանց մօտ ունին մանաւոր ծեծարան, զոր գիւղացիները Տրնկ կ'անուանեն, ուր կը

ձեռնն իրենց գիւղին կամ մերձակից գիւղերու ալ պղլուրն ու կոր-
կտար կամ ձեռածը: Աս ալ ջրաղացքին նմանութեամբ ու անոր բա-
ժանումներն ունեցող անակ մըն է, եթէ աղօրիքէն անջատ է: Աս ալ
երկու յարկերէ կը բաղկանայ, ստորին յարկը, ուր ջուրի ցայտի մը
զօրաւոր ճնշումին սակ, ուղղածից առանցքով անխ մը կը դառնայ
իր առանցքին հետ միասին: Այս առանցքը, ջուրջ 2 1/2 — 3 մէթր
երկարութիւն ունի, և 8—10 սանդիմ ալ՝ արամագիծ, և կը շինուի
կաղնի կամ թեղօշիի կարծր, դիմացկուն դուկանէ:

Ասոր ստորին կրունկը գեանի վրայ հաստատուած է, իսկ վերին
կրունկը կ'անցնի երկաթեայ կամուրջակի մը մէջ, երկանաքար մը
այս անիւին առանցքին հետ հաստատուած է, և երբ անիւը դառնայ,
իրեն հետ միասին, հաստատուն խարիսխի մը վրայ կը դառնայ նաեւ
երկանաքարը. այս կառուցուածքը շատ կը նմանի ձիթիհանքի կա-
ռուցուածքին. սա ստորբերութեամբ որ, ստոր երկանաքարը ջուրի զօ-
րութեամբ կը դառնայ, մինչդեռ ձիթիհանքին քարը, եզ մը կամ ձի մը
կամ գոմէշ մը կը դարձնեն: Անիւի թաւարման արագութիւնը կախում
ունի ջուրին թափէն: Տընկին մէջ պէտք է, երկանաքարը մեծ ա-
րագութեամբ չդառնայ, ստոր համար ջուրին անկումը կը չափա-
ւորեն:

Երբ խաշուած ու չորցուած ցորենը կը լեցնեն տընկին կալին
վրայ, նոյն վայրկենին, քարը դեռ դառնալու չսկսած, անոր վրայ
քիչ մը ջուր կը սրսկեն, որպէսզի, թէ թեփը կակուղնալով դիւրու-
թեամբ բաժնուի ցորենէն և թէ հատիկները չփշրին:

Ըսի թէ ձեռուած ցորենը, իր թեփին հետ խառն, տուն կը
փոխադրեն, դարձեալ սանիքը, և, այս անգամ կապերաներու վրայ
կը մէյնեն ու կը թողուն արեւին ներքեւ քանի մը ժամ, նոյնիսկ օր
մը թեփն ու պղլուրը, որպէսզի ոեւէ խոնաւութիւն չմնայ, սակէ
յետոյ սանիքին վրայ հոսելու գործողութիւնը կը կատարեն: Ասոր
համար, ոչ մաքինա և ոչ ալ հոսելի կը գործածեն: Մազերը միայն
կը բաւեն: Մաղին մէջ կը լեցնեն թեփախառն պղլուրը, և, ոտքի
վրայ կենալով, մաղը աւելի վեր կը բարձրացնեն: Ասոր շեղ դիրք
մը տալով կ'սկսին մեղմօրէն շարժել: Մաղին եզերքէն հատիկները,
իրենց ծանրութեան պատճառաւ, ուղղակի առանց շեղումի, գետին
կ'իյնան, մինչ թեփը, իր թեթեւութեան պատճառաւ, հովէն հեռու
կը քշուի, և կը կուտակուի սանիքին տարբեր մէկ մասին վրայ:
Այս կերպով թեփը պղլուրէն կը դատեն: Այս աշխատութիւնները
քանի մը օրեր կը տեւեն:

Թեփէն մաքրուած պղլուրը, դեռ գործածելի պղլուրը չէ. պէտք
է զայն աղալ և մաղել՝ մանրն ու խոշորը իրարմէ զատելու համար:
Կան որ ջրաղացքներու մէջ կ'աղան, կան ալ որ, և սա՝ ընդհանրապէս,

մտանաւոր փոքր երկանաքարերու միջոցաւ, սան մէջ կ'աղան: Ազօրիքներու միջոցաւ աղացուած ձուարը այնքան յարգի չի համարուիր. աւելի յարգի է երկանաքարով աղացուածը, որովհետեւ, երկանաքարը, այնքան ալիւր չի հաներ, և թէ կլոր կտորներու կը վերածէ, մինչդեռ միւսը տափակ շերտերու վերածելէն զատ ալիւր ալ շատ կը հանէ:

Տան մէջ աղալը, գիւղացիներու համար հանգիստութիւն մըն է: Պղլուրին քանակին համաձայն, երկու, երեք, չորս նոյնիակ հինգ էրկանք կը դնեն (երկանաքարեր կը զետեղեն) իրարմէ քիչ հեռու: Կը հրուելիւրուն դրացի երիտասարդները, որոնք տան երիտասարդներուն հետ միտսին, երեքական կամ չորսական կը բոլորուն երկանաքարերուն շուրջը: Իրենց մօտ ունին մեծ սաշաի մէջ լեցուած աղացուելիք պղլուր: Երկանաքարին եզերքին վրայ հաստատուած ցիցը բռնելով, արագ արագ կը դարձնեն, տանցմէ մէկը միտամանակ պղլուրը սփսփ կը լեցնէ դարձող երկանաքարին ծակին մէջ: Ասոր համար շատ վարժ ըլլալու է սին:

Այս աղացողներուն մօտ կը նստին կիներ ու աղջիկներ, երկուական կամ երեքական, որոնք աղացուած պղլուրը պիտի մաղեն: Անոնցմէ մէկը խոշոր պղլուրը մաղելու, վերցնելու և ամբնելու (ամնել, ամաններու մէջ տեղաւորել) աշխատանքը կը կատարէ: Ուրիշ մը մանր պղլուրը կը զատէ դարձեալ մաղելով, ուրիշ մը սմբիկը կը զատէ պղլրալիւրէն (պղլուրի ալիւր): Պղլրալիւրը ոչ մէկ կերակուրրի համար կը գործածուի. զայն հացալիւրին հետ կը խառնեն և հաց կը պատրաստեն անով:

Խոշոր պղլուրը կամ փիլաւի պղլուրը ամէնէն խոշորն է. տափկա կը գործածուի միայն եղինձի համար: Մանր պղլուրը կը գործածեն միայն բուժքայի համար: Սափկա ծեծելով աղացուած կամ փայտէ գլաններով ծեծուած միսի հետ կը շաղեն, և գնափկներու վերածելով կ'եփեն: Ասկէ աւելի մանր պղլուրը, զոր սրմբիկ կ'անուանեն, անօտր ապուր եփելու կը յօտկացնեն: Ասով եփուած ապուրը շատ ուշ կը սլաղի բաղդատմամբ եղինձին:

Պղլուր ազատու գիշերները, — քանի մը գիշեր երբեմն, — տանտիկինը բացառիկ կերակուրներով կը պատուէ երկանգ աղացողները, որոնք շատ զուարթ ու հաճելի կ'անցնեն ժամանակը՝ յաճախ երգելով, կատակելով և պատմութիւններ պատմելով՝ միշտ ընտանեկան պատշաճութենէն առանց անսխտրժ շեղումներ ընելու:

Խոշոր պղլուրը կը զետեղեն հողէ շինուած և անթուրժ փեթակներու կամ խոշոր ու թրծուած կարամներու մէջ: Նոյնպէս մանր պղլուրը և սրմբիկը: Քանակութեամբ առաջին տեղը կը գրուէ խոշորը, այսինքն ամէնէն շատն է, որովհետեւ շաբաթը քանի մը ան-

գամ եղինձ կ'եփուէի. ուստի ամէնէն շատ գործածականն է: Ասկէ վերջ կուգայ մանր կամ բուժքի պղլուրը, որ աւելի քիչ է. որովհետեւ շարաթը մէկ անգամ կամ միայն բացառիկ օրերու մէջ է որ քուֆթայ կ'եփեն: Իսկ ամբողջը՝ ամէնէն քիչն է. ամբողջ ասարեոյն մէջ քիչ կը պատահի որ սքմըրաիկով ապուր եփեն:

Ասոնք ամէնը կարամներու մէջ կը տեղաւորէ ասնաիկինը, և անոնց խուփերը բերանները դնելով եղերքները կաւով լաւ մը կը ճեխէ (կը շաղախէ) այնպէս որ եղերքները ոչ մէկ փոքր ծակ իսկ չի մնար, այս կերպով մուկերու դէմ ապրցուն ապահովուած կ'ըլլայ: Այս դարչելի կենդանիները կը պատահի երբեմն, որ փեթակները ծակեն և ներս մտնեն, ապրցուն կ'ապակամեն զայն ծրտելով:

Կարամներու բերանը, երբ սկսին պղլուրը գործածելու, կարգու կը բանան. մէկ կարասին պղլուրը չլննցած, միւսը չեն բանար. բայց ասնաիկինէն, սերիչ ոչ ոք իրաւունք ունի փեթակի կամ կարասի մօտենալու: Անոնց տէրն ու տիրականը ասնաիկինն է, որ ամէն հեղ որ կարասի մը բերանը բանայ, «Յանուն Հօր և Արդւոյ» մը կ'ըսէ ցած ձայնով՝ խաչակնքելով:

Յորենին դերը այսքանով չի վերջանար: Կտկոսք և ձեծածը որ պղլուրէն յետոյ, ապրցուններուն շարքին մէջ երկրորդ տեղը կը զբաւեն, ցորենէն կը պատրաստուին:

Չեծածը և կորկտար մանձաքի ցորենէն կը շինեն. ասոր համար այնքան աշխատանք թափելու պէտք չկայ: Ընտրուած մանձաքին մաղելէ, սեփրելէ, մաքրելէ յետոյ, արնկի կամ ձիթի հանքի մէջ ձեծել կուտան պղլուրին պէս: Ասիկա աւելի դիւրութեամբ կը ձեծուի քան պղլուրը, որովհետեւ, ցորենը խաշուած չէ նախապէս:

Յորենին վրայ նախապէս քիչ քանակութեամբ ջուր սրսկելէ յետոյ երկար տան քարը կը թաւալի անոր վրայ: Այսպէս, ամէն մէկ դիրքը ձեծելու համար, քանի մը ժամ ժամանակ պէտք է յատկացնել: Երբ ձեծելու գործողութիւնը կ'աւարտի, զայն տանիք կը փոխադրեն և կապերաններու վրայ լեցնելով կ'սկսին մաղելով հոսելու պղլուրին պէս: Հոսելով թեփը ամբողջովին կը զտուի ձեծածէն կը մնայ հատիկը որ մերթ բրինձի սպիտակութիւն կ'ունենայ:

Չեծածը շատ աւելի թեփ կ'արտադրէ, որովհետեւ պղլուրէն աւելի երկարատեւ կը ձեծուի: Եւ ձեծած մը, որքան աւելի ձեծուած ըլլայ, այնքան աւելի եփուն (եփուն, դիւրութեամբ եփուող) կ'ըլլայ:

Հոսելէն յետոյ կապերաններու վրայ փռելով կը չորցնեն, այնքան որ խոնաւութիւն չմնայ. որովհետեւ ասիկա շուտով որդնտակու ենթակայ է: Չորացումէն յետոյ, երկու տեսակ մաղելով կը մաղեն

զայն : Առաջին մաղը՝ խոշոր ծակեր , երկրորդը մանր ծակեր կ'ու-
նենայ : Առաջինով ծեծածը կ'առնեն , իսկ երկրորդով մանրուքը զոր
կորկոս կ'անուանեն , և ուրիշ բան չէ բայց եթէ ծեծածի փշրուէնք-
ներ , քարին ճնշումէն սուղ կեղծ : Հիւսիսայինները ծեծածին կոր-
կոս կ'ըսեն , մինչ հարաւայինները մանրուքին կորկոս կ'ըսեն և խո-
շորին՝ ծեծած : Կորկոտը , ինչպէս ծեծածք աւելի գիւրամարս կը
համարի գիւղացին քան պղլուրը . այս պատճառաւ հիւանդներուն
կորկոտ ապուր (չորպա) կը կերցնեն , փոխանակ բրինձ ապուրի :
Բրինձը շատ քիչ ծանօթ է գիւղացիներուն . վերջին ժամանակները
միայն բրինձի մշակութիւնն ընելու սկսան մէկ երկու գիւղեր :

Ծեծածով կ'եփեն կորկոտ ապուր , որ ուրիշ բան չէ բայց եթէ՝
ծեծածով ու միսով եփուած եղինձ : Ասով կ'եփեն նաեւ քաւեփեակ
(հէրխա) :

Ասոր մանրուքը երբեմն պղլուրի մանրուքին հետ խառնելով
քուֆթայ կը շողեն . ասով շողուած քուֆթան աւելի հաստատուն
կ'ըլլայ և եփուելու ատեն չի փլիւ (փլչիլ , ցրուիլ) : Երբեմն , քան-
իաւ կ'եփեն անով : Թանխաշը միսով կամ արդար իւղով ու կոր-
կոտի մանրուքով եփուած կերակուր մըն է :

Ահա , հոս կը վերջանան՝ ցորենի մշակութեան , անոր վերաբեր-
եալ արհեստներուն , կամ ճարտարարուեստին , և գիւղական անաւ-
տութեան մէջ անոր ունեցած այլեւայլ վիճակներու սակ , գերերը :



ԻՍ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԺԴ.

ՊՏՈՒՂՆԵՐ

ԹՈՒԹԸ

Ընդհանուր սամամբ, պատուհներու մասին խօսելէ առաջ, կարեւոր կը համարիմ պողտառու և անպատու ծառերու մասին ծանօթութիւններ տալ: Բարուր՝ այգիներն ու ծառաստանները, — այս վերջինները պաղչայ կ'անուանեն, — բազմաանակ ծառերով կը զարդարուին:

Բարախն, իր սեղաբերձ ցցուածքով, ամէնէն շատ տարածուած ծառն է. ամէն ծառաստանի մէջ, մեծ թուով բարախներ պիտի գտնուին, նոյնիակ միայն բարախի ծառաստաններ ալ կան, ուր մասնաւորապէս տունկեր կը անկուին, կանոնաւոր շարքերով ու անջըրպեաներով, և անոնց ածուճն սպահովող ամէն խնամք կը ստանին: Կ'ուսողեն, կը նորդեկ (յօտեն) և քանի մը տարուան մէջ կ'ունենան հսկայ բարձրութեամբ ու գրկաչափ հաստութեամբ ծառեր: Խօսքը բարախի մասին է:

Այս ծառը, իբրեւ շինութեանց առաջն աբառողը աղբիւր՝ առաջին տեղը կը գրուէ: Ասկէ կը հանեն՝ ամէն մեծութեամբ գերաններ, գուկաններ, մարդակ, սիւներ, տախտակներ՝ դուռի, սնտուկի, առաստաղի համար: Շատ գործածական է ասոր փայտը՝ շնորհիւ իր կակուղ, նուազ վարակաւոր (պուտտող), և բազիլ բունին, որուն կողերուն վրայ ցանցառ թիւով բարակ ձիւղեր միայն կ'աճին: Կը գործածուի նաեւ իբրեւ վառելիքայտ:

Կայ նաեւ սոս բարձի ծառը: Ասոր կեղեւը աւելի սպիտակ է, և իր լայն տերեւներուն ներքեւը ձիւնի պէս սպիտակ թաւշանման խաւով մը ծածկուած է, իսկ վրայի երեսը կանանչ է: Մինչդեռ բարախին տերեւներուն կամ ինչպէս բարուրները կ'անուանեն, ռաբիլներուն երկու երեսներն ալ կանանչ են:

Սուս բարձրն այնքան առատ չէ, և իր գործածութիւնը այն է, ինչ որ է բարձրին գործածութիւնը:

Անպատու ծառերու շարքին մէջ կը դանուին՝ թեղին, որ հազուագիւատ է. կարծր փայտ ունի, և շինութեանց մէջ ալ նուազ կամ պատահական դեր մը միայն կ'ուսնենայ. կաշնին, որ վառելիքփայտը կուտայ. ուռնին, որ առուակներու եղերքները հովանաւորող զարդ մըն է, դէպի վար երկարող վարսանման տերեւներով. ազճուռին, որ ուռնիի տարբեր մէկ տեսակն է, երկայն, նուրբ և շատ ճկուն կամ առածիգ մոլերով: Այս մոլերով կը հիւսեն գիւղացիները՝ իրենց բոլոր մեծ ու փոքր սակառները, սափաքները, կանխակները, ինչպէս նաեւ սայլերուն բարձերը:

Ասոնք ահա գլխաւոր անպատու ծառերն են, Բալուի պարտէզներուն:

Իսկ պաղատու ծառերուն մէջ առաջին տեղը կը գրաւէ թթենին: Բալուի գիւղերուն՝ պատու արտադրող ծառերուն մէջ, ամէնէն կարեւորը, և ամէնէն բազմերեւը այս է, որ, անոր անտեսութեան ամենակարեւոր պղբերներէն մին կը համարուի:

Թթենին, բարձրին պէս ուղղաբուն չէ, ան ամէն ուղղութեամբ թեքումներ ունի, ու, բազմածղի է: Ամէն կողմ, երկարող իր հաստ ճիւղերը՝ իրենց բազմաթիւ, աւելի բարակ կամ երկրորդական ճիւղաւորումներովը, օգին մէջ մեծ տեղ կը գրաւեն: Իր բարձրութիւնն ալ, յաճախ, բարձրներու բարձրութեան կը հաւասարի: Թթենիին պատուն է, զոր գիւղացին կ'օգտագործէ: Իսկ փայտը անյարմար է վառելու և տուներու շինութեանց, միայն կարելի է անկէ շինել, արօրի ռաւաճ, արօրի ձող, կամրնե շնորհիւ իր փայտին կարծրութեան: Վառելու յարմար չէ ըսի, որովհետեւ այրումը յամր ու դժուար տեղի կ'ուսնենայ գիւրաւառ չէ ան, նուազ բոց կ'արձակէ առատ կրակ չի թողուր. վառելու պահուն, ճարձատիւնով ջրգրուիկ (փոքրիկ կայծ) կը ցոյտեցնէ շարունակ, ինչպէս կ'ընէ ուռնին՝ բոցաւառ այրումի տակն: Դժուարաւառ ըլլալուն համար մեծ քանակութեամբ ջերմոյժ առաջ չի բերեր:

Իր փայտին օգտագործումը, ուրեմն, նկատառելի կարեւորութիւն մը չունի, նոյն նկատողութիւնը պիտի ընէի նաեւ իր տերեւներուն համար ալ: Միայն թէ, վերջին ժամանակները, 1895 թուականէն յետոյ, գիւղացիները, հետեւելով խարբերդցիներու և տիգրանակերացիներու, սկսան շերամաբուծութեամբ ալ պարտապիլ: Այս պարտապումը պատճառ եղաւ որ թթենիին տերեւներն եւս օգտագործուին:

Ունեւոր կամ միջակարեւոր, երկրագործ կամ հուալակ, ամէնն ալ, թթենին սոսկ իր պատուին համար կը մշակեն: Շերամաբու-

ծուծիւնը, Բալուի մէջ, գլխաւոր կամ անհրաժեշտ գրադումներու կարգը չանցաւ. անիկա, միշտ, հետաքրքրութեան, և ժամանցի գրադում մը մնայ գիւղացիին համար: Շահագործումի միջոց չդարձաւ. որովհետեւ, Բալու քաղաքը, շերամի, մետաքսագործութեան տեւարաւայր մը չէր. անոնք որ շերամագործութեամբ զբաղեցան, իրենց աշխատութեան ու զոհողութիւններուն արդիւնքը՝ հարկադրուեցան, Սարքերդ տանելու անձամբ, և հոն վաճառելու: Այս վաճառումը, արուած պայմաններով, հրապուրող փոխարինութիւն մը չէր ըլլար. ուստի, հողագործին համար, օրերով իր երկրագործական գրադումներն ընդհատելով քաղաք քաղաք թափառելուն մէջ մնալ կը տեսնէր. հետեւաբար, շերամարուծութիւնը կը մնար արժէքէ զուրկ գործ մը, կամ մնասակար ժամաւաճառութիւն մը, որ, իբրեւ գրադում, աւելի կը պատշաճէր անոնց, որոնք, դաշտի գրադումներուն յարմարութիւններ չունէին մասնաւորապէս Ֆիզիքական տեղունութեան կամ չարքաշութեան տեսակէտով: Այս կարգին կը պատկառէին իրենց տարրեղէն հեռու սպրող ուսուցիչներ, և գիւղերու մէջ շրջուն տեւաւորով զբաղող անձեր, որոնց եղբայրները, գիտնալով անոնց Ֆիզիքական անընդունակ վիճակը, և, իբր տեսակ մը գնահատանք իրենց եղբօր խնայական առաւելութիւններուն, թոյլ կուտային որ, ան այդ ձեւին տակ, զերծ մնայ դաշտի ծանրածանր և յոգնեցուցիչ գրադումներէն:

Դիտել տալիք սրարագայ մըն է սա թէ, թիկնին՝ այգիներու կամ ընդհանուր առմամբ անջրդի տեղերու մէջ չաճիր. թթաստանները պէտք է որ ջրառատ պարտէզներ ըլլան: Այս պատճառաւ, Բալուի գիւղերուն աղգիներուն մէջ, անկարելի է թիկնիի ծառ մը իսկ գտնել: Քաղաքը միայն բացառութիւն է, իր գետափնեայ այգիներովն ու թթաստաններովը:

Թուծ բաւը, բացի բալուցի հայերէն, կը գործածեն հաւե քուրդեր ու թուրքեր, և սաոր հոմանիշը չունին իրենց լեզուներուն մէջ: Ասոնք, ընդհանրապէս թիկնիին ու թիկնիի փայտին ալ բուք անունը կուտան:

Գիւղացիներուն ու քաղաքացիներուն, հայերու, քուրդելու և թուրքերու համար, թիկնիի անկագործութիւնն ու մշակութիւնը, հաւասարապէս իր պտուղին օգտագործումովը անհրաժեշտ դարձած են:

Թուծը քաղցրահամ է, և իբրեւ առատ սնունդ բովանդակող պտուղ մը շատ օգտակար կը համարուի:

Բալուն՝ թուծի շատ տեսակներ ունի: Ասոնցմէ լաւագոյնը անկոնս բուք ըսուածն է. լաւագոյնը կը համարուի անոր համար որ ամէն տեսակներէն ալ քաղցրահամ է և սպիտակ կ'ըլլայ, և իր՝ կոր-

եակէն աւելի մանրիկ, ու սեղօթէն իրարու յենուած հասիկներուն շուրջը նուրբ մազմզուքներ չեն ծածկեր: Ասիկա բալի կամ կեւասի մեծութիւն ունի բայց քիչ մը աւելի երկայն կ'ըլլայ անոնցմէ: Հարուային գիւղացիները զայն «խնձիր» կ'անուանեն, բառ մը՝ զոր հիւսիսայինները չեն գործածեր:

Անկուս բուքս՝ միւս բոլոր տեսակներէն ալ շուտ կը հասուենայ. Մայիս ամսուն իսկ, այլեւս գիւղացին, կրնայ օգտուիլ անկէ՝ «դգալները դգալնոցին մէջ ամփոփելով» ինչպէս կ'ըսեն անոնք, երբ թութը կ'սկսի հասուենալ: Ասոր օգտագործումը ամիսի մը կամ ամիս ու կէսի շաբ կը տեւէ: Գիւղացիին ու քաղաքացիին ամէնօրեայ ուտելիքը կ'ըլլայ. աւաւօտները, զով պահերուն, փոքրիկ կոնածեւ սակաւներով քաղաք կը հասնեն. և քաղաքացիներն, անխտիր, կը գնեն տաւասպեղական ամանութեամբ մը և անօթուց կ'ուտեն: Ագքասներուն համար, ան յաճախ ճաշի տեղ կը գործածուի: Չքաւոր պէյեր կան, որոնք բուք-պէյի կ'անուանուին. սասնք պէյ կը յորջորջուին բայց իրենց սեփականութիւն մնայած թթաստաններովը կը սնունին տարւոյն մէկ գլխաւոր մասը: Ասոնց անուան «պէյ» բառը, թութ-պէյի բարդութեամբ, հեգնական մակդիր մը դարձած է ժողովուրդին բերնին մէջ: «Թութը հասաւ» (հասուեցաւ) կ'ըսեն, այլեւս հացի, տպուրի տեղ չի մնար. դգալները՝ դգալնոցներու իսկ ամանները իրենց սեփական անկիւններուն մէջ սեղաւորուած, շաբաթներով անշարժ կը մնան: Ահա թութին մէկ կարեւոր տիւրը գիւղական անտեսութեան մէջ, ու այսքանով չի վերջանար ան. պիտի անդրադառնամ անոր՝ յետոյ:

Միւս տեսակները՝ սասնեակ մը կը համրուին: Ասոնք ծանօթ են իրենց ինքնուրոյն կազմութեամբը, համովը, գոյնովը և խոշորութեամբը:

Մրնան կամ մրնան բուք, մօն բուք կամ մօր բուք, իօրուք կամ իօն բուք, կոնիկ բուք կամ կրնիկ բուք, պոչուս, փալուս, դեղնուս թութեր են:

Մռճանը կամ մրճանը՝ ճերմակ ու կտաւոր է. բայց նաեւ քաղցրահամ է:

Մօր բուքը խոշոր ու բոտրագոյն է. մօրի պէս թթուանոյշ, շատ հաճելի համ մը ունի. տսիկա՝ խոշոր փուշեր իրրեւ պատառաքաղ գործածելով. զգուշութեամբ կ'ուտեն, որպէսզի մտաներնին և շըրթունքներնին չի ներկուին: Ասիկա նաեւ ջրաւատ է: Ասոր ծուռն ալ կը տարբերի միւսներուն ծուռերէն՝ իր տերեւին կարծրութեամբն ու խարտոցի նման անհարթութեամբը:

Կայ ասոր մէկ տարբեր տեսակը որ կարմիր կ'ըլլայ, և քիչ մը աւելի թթուահամ է. իսկ ուրիշ մէկ տեսակն ալ՝ որ սովորական

Թուժէն քիչ մեծութիւն կ'ունենայ, կամ անոր չափ կ'ըլլայ, բայց աւելի մութ գոյն կ'ունենայ քան բնորոշոյնը:

Իժժութիւն կամ իժժութիւն մերթ սպիտակ և մերթ կարմիր կ'ըլլայ համը թէև քաղցր է, բայց մազմազքներով ծածկուած կ'ըլլայ. կ'ունենայ երկայն կոթուն մը կամ պոչ մը տեղական բարբառով յորջորջուած:

Փալուսը՝ բթամասի հաստութիւն կ'ունենայ. դեղնուտը՝ դեղնորակ կ'ըլլայ: Ասոնք ալ աւելի կամ նուազ քաղցրահամ կ'ըլլան, բայց բնակչութիւնը զանոնք յարգի չի նկատեր:

Ըսի թէ թուժը գիւղի անտեսութեան բացառիկ աղբիւրներէն մէկը համարուած է անցեալին մէջ: Արդարեւ, զայն ո՛չ միայն իր թարմ վիճակին մէջ կ'ուտեն, ըլլայ իբր անդատու պտուղ, ըլլայ խնայողութեան համար, այլ անոր քաղցուէն կը պատրաստեն, իրենք գիւղացիները՝ քրե-րուպ (առւպ), քրե-պասեխ (պաստեղ), օղի քաղցրեղէններ, պատուներու ձեւին տակ, որոնք ձմեռնային անդեղէններու պաշարին մէջ գլխաւոր տեղերէն մին կը գրուեն: Թուժը կը չորցնեն, և աղալով ալիւրի կը վերածեն, անկէ՛ լոյծ, կիսապինդ մալեզներ պատրաստելու համար:

Թթե-ուպը շատ յարգի է գիւղացիին համար: Կ'ըլլայ թանձր ու դեղնորակ, և կը գործածուի ո՛չ միայն ուտուելու կամ իբրև օշորակ խմուելու համար, այլ՝ իբրև դեղ: Գիւղական բժշկութեան մէջ, անիկա կը համարուի իբրև պալարները հասունցնելու, ծակելու. և բանեցնելով մաքրելու յատկութիւն ունեցող դեղ մը՝ դուրսէն գործածուելով: Իսկ ներսէն գործածելով արիւնը անօսրացնելու. սրտի, ստամոքսի և պնդութեան սրտաճառու անհամապատասխանները ամօքելու կը ծառայէ: Հիւանդներուն՝ զայն կիսով չափ ջուրի հետ խառնելով կը խմցնեն, որպէս լուծողական: Ամէն գիւղացի անոր այս յատկութիւններուն ծանօթ է:

Երբ թուժը «հասնի» (հասուննայ), գիւղացին այլեւս չի յամենար, պէտք է որ թօթուէ գոյն, ապա թէ ոչ ճիւղերը հովերէն շարժելու պահուն, «հասած» թուժերը վար, գետին թափելով, հարամ կ'ըլլան (չեն օգտագործուիր) մըջիւններուն, և ուրիշ միջատներու կեր գառնալով, կամ աղտոտելով:

Սփնփն տանները, այսինքն իրիկուան դէմ, կամ կիրակի տատուները, եթէ ալալանկ (պարտէզներու, անտաներու ուղղում) չունենան, ասն բոլոր մարդիկը մասնաւորապէս կին, աղջիկ, մանուկ և երիտասարդ, իրենց հետ առնելով՝ սուամներ, թակ, սալիաք, բուլակ կամ սըթըլ, թթաստան կ'երթան: Սուամները, կամ ինչպէս կ'ըսեն գիւղացիները, թթի-սուամները, երեք չորս մէթը կողմերով

քառակուսի պատասխաներ են, որոնք միայն այս նպատակին համար կարուած են :

Չորս հոգիներ այս սուաններէն իւրաքանչիւրին, — եթէ քանի մը ծառեր միանգամայն պիտի թօթուըլին, կամ եթէ թօթուըլիք ճիւղը այնքան տարածուն է որ, մէկ սուանի տարածութիւնն անբաւական ըլլալով հարկ կ'ըլլայ երկու հաս քով քովի տարածել, որպէսզի ամէն կողմէ վար թափող թութերէն ոչ մէկ մասը, ո՛չ մէկ կողմէն գետին չթափի, — չորս անկիւններէն բռնելով կը պրկեն : Մագլցելու վարժ երիտասարդը, թակը միասին տանելով, ծառին վրայ կը բարձրանայ, և, աւաջանալով այս կամ այն ճիւղին վրայ, կ'սկսի դայն թակով զարնելով ցնցելու : Այս ցնցումներուն ազդեցութեամբ, հասունցած թութերը անձրեւի պէս վար, սուանին վրայ կը տեղան, իսկ խակերը՝ ճիւղերուն վրայ կը մնան, մինչեւ որ հասունանան : Ասիկա թուք թօթուել կ'անուանեն բոլոր Բալուցիները :

Թութ թօթուողը, յաջորդաբար ճիւղէ ճիւղ կ'անցնի աներկիւղ, և այսպէս ամբողջ ծառին հասած թութերը վար կը թափէ, առանց բացառութեան : Արդէն, երբ թակով կամ դրթակով ուժգնութեամբ մէկ ճիւղին կը զարնէ, ասոր հետ շատ մը ճիւղեր ալ միանգամայն կը շարժին, նոյնիսկ ամբողջ ծառը կը ցնցուի :

Սուանները թութով կը ծանրաբեռնուին : Կ'ամփոփեն զանոնք, և իրենց մէջ կուտակուած թութը կը մաքրեն աւելորդ չոր տերեւներէն, շիւղերէն, ժախերէն, որոնք ծառին վրայէն միասին վար թափած են, անոր ճիւղերուն ցնցումին շտկալով : Սուաններէն ալ կը լեցնեն՝ քուլակներուն, փոքր ստիսթիներուն և սըթըլներուն մէջ, ու տուն կը փոխադրեն :

Իւրաքանչիւր տեսակի պատկանող թութ, իր հասունեալու որոշ ժամանակաշրջանն ունի : Ծառ մը մէկ անգամ թօթուելէն յետոյ, պէտք է շաբաթ մը յետոյ երկրորդ անգամ թօթուել, այս միջոցը կը տրուի որպէսզի խակերը հասունանան : Մէկ ծառը, այսպէս 5-6 անգամ կը թօթուըլի մէկական շաբաթ միջոց տալով :

Իսկ ուրիշ տեսակի թութեր, միաժամանակ չեն հասուննար տեսակներ կան, որոնք նոյնիսկ Ապրիլ ամսու կէսին հասուննալու կ'սկսին, և մինչեւ Յունիսի կէսը կ'սպառին : Ուրիշներ ալ կան, որոնք աւելի ուշ հասուննալու կ'սկսին, և հետեւաբար, աւելի ուշ կ'սպառին : Բնութեան այս իմաստուն կարգադրութեամբ, գիւղացիները կրնան Մայիսէն մինչեւ Օգոստոսի վերջերը՝ ուտելու թութ ունենալ անընդհատ :

Թթենի մը, յաջորդաբար, ամէն տարի թութ կուտայ, անիկա, քանի մը պտղատու ծառերու նման պարբերական հանգիստի կամ դադարի պէտք չունի :

Թօթուըլած թուժը տուն փոխադրելէ յետոյ մէկ մասը քանի թարմ է, կ'ուտեն, առանց լուտլու, ոմանք ալ լուտլէ յետոյ կ'ուտեն. թէեւ լուտցուելով ան իր քաղցրութիւնը, մասամբ, կը կորսընցնէ. սակայն մաքուր կ'ըլլայ. մինչդեռ անլուայ վիճակին մէջ մաքուր չի կրնար ըլլալ:

Մնացած մասը յաջորդ օրուան չեն կրնար պահել, որովհետեւ 10-12 ժամ յետոյ, մանուսանդ ամառնային եղանակին մէջ, կ'աւելի. ուրիշ բացատրութեամբ խմորուելու կ'սկսի: Ուտի, մնացած թուժը՝ խոշոր սաշտերու մէջ լեցնելով նախ լաւ մը կը ճմուեն (տափով ճմլել): Այս ճմլումէն յետոյ սաւաջ եկած քաղցուն, իր դիրտէն անջատելու համար, շարմաղէ կամ պարզուտէ կ'անցրնեն: Որպէսզի բոլոր օտար նիւթերէն լաւ մը մաքրեն զայն, երկրորդ ու նոյնիսկ երրորդ անգամ պարզուտէ, կամ շատ մանր ծակեր ունեցող շարմաղերէ կ'անցնեն, կամ մարմաշով կը քամեն, և այսպէսով՝ կ'ուտենան քաղցումը իր ամէնազուտ վիճակին մէջ:

Այս քաղցուն է սնա, զոր սաշտերով կը դնեն բարկ արեւին տակ, որուն ջերմութեան ազդեցութեամբ կ'եփի. այսինքն կը ջրատի, շոգիացմամբ, և ոչ թէ կ'եռայ, այս ջրատումով կը թանձրանայ, և մածուցիկ զանգուածի մը կը վերածուի, մալէզի նման: Ասիկա կը կոչուի քթառուպ կամ քթ բոռապ, — բաւը այս երկեակ հնչումներովն ալ կը կիրարկուի գիւղերու մէջ: Երբ արագ խօսին սաւաջին հնչումը լսելի կ'ըլլայ. իսկ երբ ծանր խօսին՝ բառին երկրորդ հնչումը լսելի կ'ըլլայ:

Արեւով «եփուած» այս թանձր քաղցուն, կամ թթեռուպը յարմար կամ մուրտասանկուած կարասներու մէջ կը լեցնեն, և իբրև ճմրան պաշար կը պահեն. և արդէն, գիւղացին, ճմրան եղանակին է որ քաղցրեղէններ կ'ուտէ, ամառը չախորժիր անոնցմէ:

Չմրան եղանակին, ան աւելի կը թանձրանայ, և շաքարի կարծր հատիկներ կը գոյանան անոր մէջ, մանր սաւաղի նման. սակայն անոր բիւրեղացումն է. և, գիւղացիները՝ «ըռուպը ծլե'ր է» կ'ըսեն. ուրեմն, ծլիլ բաւը բիւրեղացման տեղը կը գործածեն:

Թթեռուպը կ'ուտեն իր պարզ վիճակին մէջ՝ հացով, կամ անոր հետ խառնելով՝ կարագ, մածուն, սեր, թորախ: Այս խառնուրդները, յայտնի է թէ՛ ո'րքան հաճելի համ մը կուտան այդ կաթնեղէններուն: Անով կը շինեն նաեւ օշարակ, զոր, ինչպէս ըսի հիւանդներուն իսկ իբրև լուծողական կը խմցնեն: Ռուպի այս օշարակը եղինձի նման կերակուրներու հետ միասին կը գործածեն:

Հարկ է խօսիլ նաեւ թթեպտատելի մասին:

Թուժին քաղցուն, քանի մը անգամներ պարզուտով մաքրելէ յետոյ, կաթասի մէջ լեցնելով կ'եփեն, այս անգամ կրակի ջերմու-

Թեամբ եռայնելով : Ռուդին պէս արեւել «չին եփեր» : Եռայնումը
կը շարունակուի, մինչեւ որ քաղցուն թանձրանայ, մալեզ ըլլայ :
Այս մալեզը՝ տանիքներու վրայ մէյնուած (փռուած), քանի մը մէթր
երկայնութեամբ և կէս մէթր լայնութեամբ կտաւներու վրայ շե-
րեփներով կը լեցնեն մէկ կողմէն, միւս կողմէն, տանախիլինը ձեփի-
չով կը մալայե մալեզը և անոր կուտայ կտաւի անօսութիւն : Ա՛չ
միայն կտաւին պէս բարակ կ'ըլլայ մալայուած մալեզը, այլ շատ
կոկ, յղկուն մակերես մ'ալ կ'ունենայ : Այս վիճակին մէջ քանի մը
օր կը մնայ, մինչեւ բարձրովին ցամքի Յամքելէն յետոյ, կտաւները
կը ժողլեն և տանիքներէն ներս կ'առնեն :

Տանախիլինը մեծկակ սեղանի մը տաջեւ կը նստի՝ իր շուրջը ու-
նենալով իր հարաները և սղջիկները : Քովը ունի մաքուր ջուր, և
մաքուր քուրջերէ շինուած գնդակ մը : Կը հրամայէ որ պատակա-
ուած կտաւները, կարգաւ սեղանին տաջեւ իր մօտը բերեն : Հրամանը
խկոյն կը կատարուի : Տանախիլինը, կ'սկսի կտաւին հակառակ ե-
րեսը (սպիտակ կողմը), ջուրով թրջուած իր քուրջէ գնդակով ձե-
ծելով խոնուցնել : Այսպէսով ամբողջ կտաւը կը խոնուցնէ : Խո-
նուանալով՝ կտաւը և պատակը, իրարմէ դիւրութեամբ կը բաժնուին :
Պատակին եզերքները նստի կ'անջատէ կտաւէն, յետոյ մաս մաս այս-
պէս ամբողջութեամբ իրարմէ կը դատէ : Կը պատահի որ պատակին
երկու ծայրերը հարաներէն մէկը ու կտաւին երկու ծայրերէն ալ
տանախիլինը բռնելով քաշեն և իրարմէ անջատեն, այն պարագային,
երբ պատակը շատ կարծր կամ ատկուն ճկունութիւն մը ունի : Հա-
կառակ պարագային, տանախիլինը գործն է որ տաւնց քաղցուն կտոր
կտոր ընելու ամբողջապէս կտաւէն դատէ : Այս գործողութեան ըն-
թացքին մանուկները սեղանին շուրջը կը սլքտան, կամ հոն պալզած
են : Իրենց համար ուրախութեան օր մըն է՝ պատակին օրը, շատ
կ'ախորժին անկէ, մէկը նստած է մօտը, միւսը քիչ մը հեռու ոտքի
վրայ կ'ստատէ, իրարու ակնարկներ կը փոխանակեն, կը լզուը-
տուին, թուքերնին կը կլնեն, և պատակը, կտոր մը պատակը «եզ
էրթանք ընելու» կամ թուցնելու փորձեր կ'ընեն անհամբերու-
թեամբ, օգտուելով տանախիլինը զբաղեալ ուշադրութենէն : Բայց,
տանախիլինը, փոքրիկ աւազակները լու կը ճանչնայ, իր աչքէն չի
վրիպեցներ անոնց շարժումները : Անոնցմէ մէկուն, որ շատ մօտե-
ցած է սեղանին, պատակի հարուած մը կուտայ կրնակին, որ հեռու-
նալ կը փորձէր իր փոքրիկ աւարովը : Քրքիջ մըն է կ'ելնէ հոտ .
հարուածը տանողը կուրայ, ոչ թէ անոր պատճառով ցուէն այլ իր
արժանապատուութիւնը՝ միւսներուն ներկայութեան վիրաւորուած
զգալէն : ուրիշ մը կը խնդայ : ուրիշ մըն ալ ցուելով, իր եզրօր
զգացած վիշտին վրայ, ներողութիւն կը խնդրէ մօրմէն ըսելով՝ «ալ

չէնէր, չէնէր, մի ձեռք...»։ Տանտիկինը, սպասուհու, յորդորելով, և նոյնիսկ խոստովանութիւններ ալ ընելով թէ՛ աշխատութիւնները աւարտելէն յետոյ ամէնուն ալ պատակը պիտի բաշխէ, քովէն կը հեռացնէ զանոնք, այդ չարածճի խափանարարները, որոնց մերթախի քնքշանքներուն, տանտիկնոջ փուխ սիրտը չգիմանալու փորձութեան պիտի Լնթարկուէր, մէկ կողմէն պատակը ամբողջովին աւարի աւելու։

Աշխատութիւնները կ'աւարտին։ Հարսները կտանները կը ծալեն և մէկ անկիւն մը կ'ամփոփեն, աւազին աւթիւ զանոնք լուսլու մաքրելու մտածումով։ Տանտիկինը իր խոստովանութիւնները կը կատարէ, ամէնուն ալ մէկ մէկ քիչ պատակը տալով։ յետոյ, բոլորը կը ծալէ Յօտկան սանդիմէթը կողմով քառակուսի ծալքերով, և կտաներու մէջ (կէս կտրաս, լոյնաքերան տման) կը տեղաւորէ իրարու վրայ կանոնաւորապէս շարելով։

Ծալ մը, երկու ծալ, չորս ծալ, տասը ծալ պատակը կ'ըսեն, ամէն անգամ որ անոր քանակութիւնը հասկցնել ուզեն, ինչպէս հաւկիթին քանակութիւնը հասկցնելու համար բարդ բառը կը գործածեն. (տես բառարանը)։

Կտաներու մէջ տեղաւորելէ վերջ, կը զեռեզեն մառանին մէկ անկիւնը։ Կը պատահի որ մառանը դուռ չունենայ, բայց տանտիկինը խիստ է, և շատ փոքրիկներն են որ կը փորձուին մերթ կտաներուն մօտենալու։ Գողութիւնը, տան մէջ, ստատիկ այսպանելի է, և այդ յանցանքը գործելու դայթումն ունեցող մը, 7-8 տարեկան արզաններուն մէջ, օրերով չի համարձակիր միւսներուն երեսը նայելու ամօթէն։ Բայց տանտիկինը կտաներուն խռփերը՝ անոնց բերանը դնելով, կաւով լու մը կը շխտէ եզերքները, և այս կերպով երկուտանի և չորքոտանի մուկերուն անմատչելի կը դարձնէ պատակը։

Այս պատակը առանձին, այսինքն իր պարզ վիճակին մէջ կ'ուտեն. բայց իւրով ու հաւկիթով տապկելով՝ կերակուր ալ կը պատրաստեն անով։

Պատակէն դատ, թութին քաղցուովը կը պատրաստեն նաեւ ուրիշ քաղցրեղէններ, պատառներու ձեւին տակ, զորոնք կարելի է լօգուսին նմանցնել։

Կրճիկ թութը ամէնէն ուշ կը համնի, քաղցր է ան, և կոթունները դիւրութեամբ ճիւղերէն չեն զատուիր. այնպէս որ, ոչ միայն հովի մը ցնցումէն, ծառէն վար չեն թափիր, այլ նոյնիսկ, ծառին ճիւղերը թակելով դժուար կը թափին։

Այս թութը Օգոստոս ամսուան սկիզբէն մինչև Սեպտեմբերի 15ը՝ ծառին վրայ կը մնայ, և, արեւին տակ յամբօրէն եփելով կը «համնի», և կ'ունենայ զեղնորակ սպիտակութեան վրայ, կարմիրի

մօտ գուշուսուրուհիներ, գեղեցիկ է այս գոյնը, կարծես թէ՛ խաղողէն պատրաստուած կարմրագոյն չամիչի գոյն ըլլար ան :

Երբ, այս թուփը թօթուելու ժամանակը գոյ, գիւղացին չի յամենար : Թօթուողը ծառին վրայ կ'ելնէ, ինչպէս որ տակէ առաջ նկարագրեցի, և ճիւղէ ճիւղ մագլցելով, դանոնք յաջորդաբար կը թակէ, կամ սաքով դռիկելով կը ցնցէ : Ծառին տակ ալ՝ սաւանները ստրածուած հետզհետէ շուրջանակի կը դառնան, թօթուելիք ճիւղերուն տակ կանգ կ'առնեն : Դժուարութեամբ կը յաջողին թօթուել :

Կրճիկ թուփը ցամաք կ'ըլլայ, միւսներուն նման սաւառքաղցու չունենար, ուստի, բաղդատամբ միւսներուն, աւելի մաքուր կ'ըլլայ, դերձ՝ հողէ, փոշիէ, շիւղերէ : Այս վիճակով սուն կը փոխադրեն ստիտիներու կամ քուրակներու մէջ լեցուցած, և կը տեղաւորեն տաշտերու մէջ :

Այս թուփն է անա, զոր շորցնելով կը սրանն իբրև ճրմբան սրայար, և իբրև յարզի նաւէր ուրիշներու ալ կը դրիեն : Զոյն սուն փոխադրելէ յետոյ, շուքին մէջ փռուած կամ մեյնուած սաւաններու վրայ կը ստրածեն : Մնալով այսպէս քանի մը օրեր, կը չորնայ, կը կարծրանայ, փշրուելու սատիճան : Զորնալէ յետոյ մէկ մէկ կը մաքրեն կոթուներէն, — տեղացիները կոթ կամ պոչ կ'անուանեն, — յետոյ գոյն կարտաներու կամ կտտերու մէջ կը լեցունեն, ուր կը մնայ մինչև Դեկտեմբեր ամիսը : Դեկտեմբերին, բոլոր թուփը կարտաներէն պարտելով տանիքները կը հանեն, և արեւին տակ կը փռեն : Վտիտ ջերմութեան տակ, ան փոխանակ աւելի չորնալու, ընդհակառակն կը կակուղնայ : Իսկ, արեւին յաջորդող իրիկուան կծու ցուրտին տղղեցութեան տակ դարձեալ կը չորնայ : Ասիկա սարօրինակ երեւոյթ մըն է... : Գիշերն ի բուն այդ չոր վիճակը կը տեւէ, մինչև սաւառ, սաւառտուն գոյն երկամաքարով կ'աղան սակաւին չկակուղցած : Աղացուած, կամ, ըստ գիւղացիներուն, աղցուած թուփը ալիւրի կը վերածուի, սսիկա քթալիւր, թուփի ալիւր կ'անուանեն : Զոյն շարեաղով կը մաղեն, ապրդած խորշունքը դատելու համար, մաղուածը պղինձէ տաշտերու մէջ լեցնելով դարձեալ տանիք կը հանեն՝ արեւելու համար : Քանի մը ժամ արեւին տակ մնալով քթալիւրը դարձեալ իրարու փակչելու սատիճան կը կակուղնայ ծծելով օդին խոնաւութիւնը : Երբ տեսնեն թէ՛ փակչոտութիւնը պահանջուած սատիճանին հասած է, կ'սկսին, դանակներով փոքրիկ խորանարդածեւ բրդօններու կամ սրատուներու վերածելու : Այսպէս կարատուած վիճակին տակ, գոյն ներս կ'առնեն տանիքներէն, և անկիւն մը կը տեղաւորեն տաշտերով, որպէսզի, գիշերուան չոր ցուրտն դարձեալ չորնայ : Այս չոր վիճակին մէջ անա, կաղա-

սրբութեան բարձրանալը մէկական կը հասնեն տաշտերուն մէջէն, և կը գետնեղեն յարմարագոյն ամաններու մէջ: Ասիկա՞ թուքի քիսի կը կոչեն:

Թթալիւրը իւզով տապկելով՝ մասնաւոր կերակուր մ'ալ կը պատրաստեն:

Թուլթէն կը պատրաստեն նաեւ օղի:

Բալուի գիւղացիները, նոյնպէս և քաղաքացիները, օղին թուլթի խմորումէն կը պատրաստեն: Գիւղերու մէջ սովոր չեն ընդհանրապէս բարկ օղի գործածելու, արդէն, քաղաքը բացառութիւն ըլլալով, իբրեւ ոգելից ըմպելի, մեծ առատութեամբ գինի կը գործածեն, բայց միայն ձմրան ցուրտ եղանակին: Ամրան եղանակին ոչ գինի կը գործածեն և ոչ ալ օղի, որուն կարեւորութիւնը աննշան է: Այն գիւղացիները, որոնք տարիներով Պոլիս մնացած են և ընկերային քիչ մը աւելի ընդարձակ յարաբերութիւններ ունեցած են իբրեւ շինութեանց կապալտուռներ, կամ ճարտարապետի հանգամանքով ապրած են քաղքենի աւելի լայն կենցաղով մը, անոնք ամառ ձմեռ օղի գործածելու հետամուտ եղած են:

Քաղաքացիները, ընդհակառակն ոգելից ըմպելի գործածելու տեսակէտով, տարւոյն եղանակներուն միջեւ խտրութիւն դնել գիտցած չեն: Ամառնային, երեկոները, քաղաքի իրենց զբաղումներէն ազատելով կը քաշուին իրենց այգիներուն հնձանները, որոնք վաքրիկ սիրուն և բաւարար ամառանոցներ եղած են միշտ, գրացիներով կը հաւաքուին, օղիի շինը պաղ ջուրի մէջ կը պաղեցնեն և կը խմեն մինչեւ կերակուրի պահերը, ասիկա սովորական եղանակն էր օղիի գործածութեան: Պիտի անդրադառնանք անսովոր ձեւերուն՝ տօնախմբութեանց գլխուն մէջ: Ու քաղաքացին, ընդհանրապէս օղին կը նախադասէ գինիէն:

— Ի՞նչպէս կը պատրաստեն օղին, Բալուի գիւղերուն մէջ:

— Նախ ըսեմ թէ՛ օղիի պատրաստութեան մասնագէտը ամառիկինն է, հակառակ որ կիները ո՛չ օղի և ո՛չ ալ գինի կը խմեն, գիւղացի կնոջ համար ամօթ է՝ ոգելից ըմպելի գործածելը և բոլորովին արգելուած է ան՝ իր աղջիկներութեան և հարսնութեան շրջաններուն, և այս ժողովարութիւնը կամ անընտելացումը կը տեւէ նաեւ իր ամառիկնութեան շրջանին ալ՝ բացառութիւնները շատ ցանցաւոր նոյնիակ զանցառելի թիւ մը կը կազմեն:

Արախ, արախի բաւերն են որ օղի բաւին տեղ գործածակոն են. այս վերջինը հազուադէպ գործածութիւն մը ունի, ան ալ մտաւորականներու կողմէն միայն:

Բալուի մէջ, օղին կամ արախը թուլթէն կը պատրաստուի հետեւեալ կերպով: Թուլթը կը լեցնեն կարտաներու մէջ, պէտք եղած

քանակութեամբ, անոր վրայ ջուր կը լեցնեն, մինչև որ ծածկէ. ջուրին քանակութիւնը ճշակու համար, երկայն ու քիչ մը տափակ գաւազան մը կ'ընկղմեն անոր մէջ այնպէս որ ծայրը մինչև յատակը հասնի, այդ ընկղմումին մէջ այդտեղ կը թողուն. եթէ գաւազանը ազդածից դիրքի մէջ չմնայ, կամ ասդին անդին շեղի, կը հասկցուի թէ ջուրին քանակութիւնը աւելի է. իսկ եթէ իր ազդածից դիրքը պահէ, այն ասեմ ջուրը բաւական կը համարուի: Գաւազանը կտրասին մէջ կը մնայ, որուն բերանը լաթով կամ կտուտով կը ծածկեն: Խմորումը տեղի կ'աւնենայ 7-8 օրուան ընթացքին, ամէն օր տանախիլներ կ'այցելէ կտրասին, և գաւազանով կը խտնէ խմորելի թուխը: Վառում ճրագ մը կը մտնայնէ անոր, եթէ բոցը մտրի, կը նշանակէ թէ դեռ խմորումը կը շարունակուի, քայց եթէ չմտրի, ասիկա նշան է թէ խմորումը վերջացած է: Երեսը առաջ կուգայ աւելի ծորական հեղուկ մը, ելիելու ասեմ գոյացած պղպղակաւոր ու քիչ մը աւելի թանձր հեղուկին տեղ. այդ ջուրէն քիչ մը գաւաթով կը վերցնեն, ու անոր վրայ ալիւրի պէս մանր մոխիր կը լեցնեն. եթէ մոխիրը լեցուելուն պէս ետուաւ ըլլայ, կը հասկցուի թէ այլևա թարակու աստիճանին հասած է: Պէտք չէ ուշացնել այս վերջին գործողութիւնը, սպա թէ ոչ արախը կը թռի կ'ըսեն, այսինքն թորումի ժամանակը կ'անցնի և այլևա օղին թոյլ կամ անպէտ կը դառնայ:

Արախ հանել, այս քայտորութիւնը երկու խմատով կը գործածուի. մէկը, օղի պատրասակու բոլոր գործողութիւնները կը բովանդակէ, իսկ միւսը միայն թորումի գործողութիւնը կը ցուցնէ: «Աղջի, Մրօ՞, մարդ ի՞նչ կ'ընը» — «Արախ կը հանը (հանէ)» — «Աղջիկ, Մարիամ, մայրդ ի՞նչով դբաղած է» — «Օղի կը թորէ»:

Թորումը հետեւեալ կերպով տեղի կ'աւնենայ: Թորումը կը կտատարուի պարզ ամաններու, և, երբեմն ալ մասնաւոր թորանօթի միջոցաւ, որ լուրայ կամ արախի լալայ կը կոչեն:

Պարզ ամանները հետեւեալներն են պղինձ (պղինձ = կաթնայ) մը. պղինձին բերանին մեծութեամբ տաշտ մը, և հողէ շինուած թրծուն կոճ մը. որ փոքր ասնի մը ձեւն ունի: Խմորում թուխը իր ջուրովը միասին պղինձին մէջ լեցնելէ յետոյ, մաքուր կտոր կ'ընկղմեն անոր մէջ, անշուշտ եզերքները հեղուկէն դուրս մնալու շտի բարձր ըլլալու են, որպէսզի խմորումը հիւթը անոր մէջ չլեցուի: Կտաին յատակին վրայ մաքուր ու ծանրիկ քար մը կը դնեն, զայն իր դիրքին մէջ անշարժ պահելու համար՝ ընդդէմ լոյծ թուխին վեր մղումին: Անոր մէջ կը դնեն նաեւ մաքուր քարջի կտորի մը մէջ ծորումով զրգիի պտուղ (դի՛ի ծաւին հասիկները): Անխտնը, իր ծոց ներսով միասին կը մտնեն, և խմորում թուխին հետ կը

խառնեն : Այսպէս պատրաստելէ յետոյ, պղնձին վրայ իբր կտրա-
րիչ, տաշտ մը կը դնեն, և տար մէջ սովորական բարեխառնու-
թեամբ ջուր կը լեցնեն : Պղնձին եզերքները՝ տաշտին հետ կաւի
շաղախով լաւ մը կը ծեփեն, սրպէսզի շագին դուրս չկարենայ ելնել :
Այս ամէնը ընելէն յետոյ կ'սկսին մեղմ կրակով տաքցնել : Թորումը
կ'սկսի, և թորումը օդին կը լեցուի կտրին մէջ : Եթէ իբրև կա-
փարիչ ծառայող տաշտին ջուրը տաքնայ, այն ատիճան սր, ամառի-
կինը մտար անոր մէջ ընկզմամ միջոցին, անոր ունեցած ջերմու-
թեան չկարենայ տակալ, կը նշանակէ թէ աւաջին թորումը կատար-
ուած է : Վար կ'առնեն տաշտը, և կտրին մէջ հաւաքուած արտար
կը սրարակն կամ մեծ շիշերու, կամ մուրաստանկուած (ապիկուած)
փարչերու մէջ :

Այս թորումը առջի բերան կը կոչուի, և օդին ալ առջի բերնի
օդի, որ համեմատաբար բարկ կ'ըլլայ, և ընտիր կը համարուի :
Նայն խմորում թուփին վրայ երկրորդ թորում մ'ալ կը կատարեն,
ճիշդ աւաջինին պէս. տակէ անուած օդին աւելի թոյլ կ'ըլլայ, իսկ
երրորդ թորումէ մը անուած օդին ամէնէն քիչ ալքալ կը պարու-
նակէ, և հետեւաբար ամէնէն թոյլը կը համարուի Ասիկա, ընդհան-
րապէս, կնկայ արախ կ'անուանեն : Իբրև թէ կիներու կը յարմարի
այս օդին, որոյ հետեւ անոնք բարկ օդի շեն կրնար խմել, եթէ խմե-
լու իսկ ըլլան : Ամէն անգամ որ նոր թորում մը կատար-
են, տաշտին ջուրը կը փոխեն, այսինքն տաք ջուրը կը պարակն,
և անոր տեղ պաղ ջուր կը լեցնեն : Աւաջին թորումով ստացուած
օդին՝ կ'անուանեն նաեւ մեկ ջուրով համուած արախ, երկրորդը՝ եր-
կու ջուրով, երրորդը՝ երեք ջուրով :

Թորումէն յետոյ մնացած գիրար, այսինքն թուփի լուծոյթին
հեղուկ մտար կը դառնն, և դոյն խառնելով կողմի հետ (տես բառա-
բանը), շաղախ մը կը պատրաստեն : Այս խառնուրդով, չարտասինե-
րու կամ սենեակներու յատակները կը շփեն կամ նաւրը խաւով մը
կը ծեփեն : Այս կերպով շփուած գետինը՝ կ'ըլլայ կարծր ու պոսկ
փայլուն, թէև՝ քիչ մը թխարակ :

Այսպիսի գետնի մը յատկութեան հետ կոպ ունեցող իրողութիւն
մը չենք կրնար գտնայ ընել :

1903 թուականին. Թարբերդ քաղաքի տառներէն մէկուն մէջ
հիւանդի մը մահիճը. թուփի ջրով, և մաս մ'ալ կաւով շփուած
գետնի վրայ փռուած կը մնայ օրերով : Սենեակը, ուր հիւանդը կը
մնար, բարձրկեկ փոքր պատուհան մը միայն ունէր ուրկէ լոյս
կ'առնէր : Օրեր անցնելէն լետոյ, կ'ուզեն որ հիւանդին սենեակը
աւլերու, մաքրելու համար, մահիճը վերցնեն : Վերցնելով դոյն կը
տեսնեն որ հիւանդին սրտակերը նոյնութեամբ գետնին վրայ դրոշ-

ճաւած է: Աւրաղ անկցի հարսը կամ կինը սարսափահար դուրս կը
 փախչի, ու տեսածը կը պատմէ: Ամէն կողմէ, հոն կը դիմեն պատ-
 ճաւթիւնը իրենց ոչքովը ստուգելու: Եփրատ Քաղէճի, Թլիսասինցիի և
 ուրիշ վարժարաններու ուսուցիչներ, նոյն շատ մը հետաքրքիրներ
 իրբև տիպանտես իրադաւթիւնը կը հաստատեն: Պատկերին վրայ
 ամէն մանրամասնաւթիւն, ինչպէս հիւանդին վերքերը յասակօրէն
 գրոշմամբ տեսնուած են: Այս պատկերը քանի և չորս մամ միայն,
 շնորհիւ անշուշտ սենեակին մթաւթեան, անջինջ մնացած է, անկէ
 յետոյ հետզհետէ անհետացած է:

Անշուշտ, Ռէճիթ կէնեան ճաստպայթիւներու տրդիւնք եղած բլրա-
 ջու է, և ոգորկուած դետինը քալանդակամ է սարսափահարանն այն
 յատկաւթիւնները, որոնք ընդունակ են՝ այդ ճաստպայթիւներուն ներ-
 զարծաւթեանց միջոցաւ այդ պատկերը կողմելու:

Իսպառ իմ նիւթիս: Հեղուկ մասէն գտատուած թութը կամ
 թանձր մասը կը թափեն կամ կենդանիներուն կը կերպցնեն:

Կուլայով կամ թորանօթով արախ հանելը հարկ չեմ տեսներ
 բացատրելու: Միայն սա սարքերութիւնն ունի սր, սասր օղին կո-
 տի մէջ շիջներ, այդ կողմնական խաղովակ մը այնպէս մը յարմար-
 ցուած է կաթմային կորնթարդ կաթարիչին եղերքին վրայ սր շո-
 գիացմամբ թորուած օղին այդ խաղովակէն դուրս կը հոսի իր դէմ
 գրուած ասիտրին մէջ: Երբեմն, մանրուած անխանը, մաքուր լա-
 թով մը այս ծորակին ծայրը կը կապեն: Անոր մէջէն անցնելով օ-
 ղին, անոր համը և հոտը կ'տանէ:

Թորմ թութէն ոչ օղի կը հանեն: Ասոր խմորումը ուելի շուտ,
 այսինքն 3-4 օրէն կը կտատրուի: Ըստ ոմանց, հետը ճմլուած սա-
 յար ոչ կը խառնեն, և կ'ըսեն թէ՛ սախիտ խմորումը կ'արագացնէ,
 ուրիշներ կը ժխտեն:

Բաղուցիներու արախար սա է: Անոնք, ուրիշ մրդեղէններէ՛ ինչ-
 պէս, ասնձէ, խնձորէ, սայսրէ ևւայլն արախ հանել չեն գիտեր:

Օղիով վերջ կը գանէ՝ գիւղական անտեսութեան մէջ՝ թութին
 կտատրած կարեւոր դերը:

Թթեմիին կամ թութին երկու վասնգուտը թշնամիներ կան-
 տանցմէ մէկն է՝ կարկուտը, իսկ միւրը՝ ծիծեռնակի նմանող սեւուկ
 փոքրիկ թռչուն մը, որ ճամբ կը կոչուի: Ասոր միւրը՝ յարմարգիի
 միսին շափ հասնող ու իւզաս է: Այս բոսը հեղելու ատեն վերջին
 երկու բաղամաններով սուղ փանկ չեն կողմեր, այլ բոսը ամբողջ
 մէկ վանկով կը հնչեն, միայն վերջը, երբ ստանց յօդի դարձածին,
 համը «ը» մը կ'ուելցնեն, երբե՛ք սամբը չեն հնչեր:

Կարկուտը կը ջրատէ, կը թափէ դեռ չհասունցած թութերը, և
 այս պատուհասը՝ սարուան այդ անհրատեշտ բերքը սպարդիւն կը

դարձնէ: Բայց, բազմաամսաբ երկրորդ պատուհասին, կրնայ թեթեւ համարուիլ:

Երկրորդ պատուհասը ամբարտա երամներն են, տանք հարիւրաւորներէ կը բողկանան, ու թուռներում կ'ողողեն թթաստանները: Ասոնց արշաւանքը տեղի կ'ունենայ Մայիս ամսուան ընթացքին, երբ արդէն թուր հաստենալ սկսած է: Կը թառին ճիւղերուն վրայ, և, անխնայ անյողութեամբ մը կը փճացնեն հասուն թուրերը ուտելով թափելով կամ ցեցկելով վիրաւորելով:

Ասոնց խուռներում դալուստը, կամ պարտէզներէն ներս թափանցումը ո՛չ մէկ գիւղացիի աչքէն կը վրիպի. արդէն անոնց ճշուռաղիւնէն պարտէզներն ու գիւղերը միանգամայն արձագանգ կ'ուտան: Ամէնքը կը լսեն, կը տեսնեն ու կը մտահոգուին: Կ'ըսեն. «տամբը էկեր ք, տղա՛ք, քս տարի թուր պիտի չուտինք, տնուրնիս փլու, տեղերնիս աւրաւ, քս տարի սեւ հաւը կանչեց վրանիս...»:

Այս վտանգաւոր հիւրերը թթաստաններէն վտնելու համար, գիւղացիները թմբուկով, սրափողով (զուռնայ), հրացանով պարտէզները կը ցրուին: Տամբերու երամները, թմբուկներու թնդիւններէն, սրափողի խլացուցիչ սուր ձայնէն և հրացաններու սրայթիւններէն սարսափահար, խուռներում դաշտերը կը փախչին, բայց, աներև են... քիչ տանէն կը վերադառնան իրենց այցելութիւնը կրկնելու համար, դարձեալ կ'ստիպուին փախչիլ: Բարեբախտաբար, արշաւանքի այս շրջանը երկարատեւ չըլլար. արդէն տարագնաց թռչուններ, շատ չանցած կը հեռանան անհիւրեկալ... դուռտաէն:

Հոս կը վերջանան այլևս թթերն ինն, թուրին ու տար վերաբերեալ ճարտարարուեստին մասին իմ ծանօթութիւններս, զորոնք, ուղեցի, իրենց մանրամասնութիւններովը ամբողջ ցեղին սեփականութիւնը դարձնել, երբ անոնց բուն տէրերը չկան այլևս, ու, թերեւս, անդամաւորէն ալ պիտի չըլլան:

Այս դիտուն միացնել պատշաճ կը համարիմ նաեւ ուրիշ քանի մը պտղատու ծառերու և անոնց պտուղներուն մասին ալ քիչ մը ծանօթութիւններ: Քիչ մը ծանօթութիւններ կ'ըսեմ, որովհետեւ, տանք, գիւղական տնտեսութեան մէջ, բացի խաղողէն, կարեւոր տեղ մը չեն դրուեր. և ո՛րքէ ճարտարարուեստի ալ իբրեւ նիւթ չեն ծառայեր:

Այս պտղատու ծառերն են. սալորենի, տանձենի, խնձորենի, կեռասնի ևն:

Սալորենին, զոր տեղացիները սալվորի ծառ կ'անուանեն, նուազ ասրածուած ծառ մըն է, սալորը կամ տեղական հնչումով սալվորը, շատ գործածուած պտուղ մը չէ, ուտի իւրաքանչիւր պարտէզի

մէջ, մէկ կամ երկու ծառ հազիւ կը գտնուի, իբրեւ տեսակ կամ նմոյշ :

Ծիրանի ծառը, մրումբենի կոչուած, ամէն գիւղի մրգատասանին գլխաւոր ծառն է՝ թթենիէն վերջ. շատ առատ է քաղաքին պարտէզներուն և այգիներուն մէջ միանգամայն: Քանի մը տեսակները կան. ասոնցմէ մէկ տեսակը խաւի մրումբ, կը կոչուի, որովհետեւ, կորիզին միջուկը լեզի չէ, իսկ միւսը՝ լեզի մրումբ, որուն կորիզին միջուկը լեզի է: Ծիրանիին լեզի միջուկները թելի մը վրայ շարելով, մոխրաջուրի մէջ կ'առայնեն և կը չորցնեն տրեւիս տակ. ասոնց լեզիութիւնը կ'անցնի, և շարոցը եփուած քաղցուի մէջ ընկղմելով քանի մը անգամ, առձիկ կը շինեն: Ծիրաններուն խոշոր և մանր տեսակները կ'ըլլան:

Ամբան եղանակին ծիրանը կը չորցնեն, և ձմրան եղանակին կերակուրներու մէջ կը գործածեն. ասիկա մրումբչոր կ'անուանեն:

Խաղողէն ու թութէն յետոյ, ամէնէն առատ մրգեղէններն են ծիրանն ու բալը: Հարբունք, Ալխաթեան, Թրխէ, Թիլ և Պուպան գիւղերը ինչպէս նաեւ քաղաքին այգեստանները, որոնք Արածանիի հարաւային տիերէն մինչեւ լեւներու ստորոտները կը տարածուին, ծիրանի ու մանուսնոգ բոլի տրատալութեան միակ վայրերն են. ուրիշ գիւղեր, որոնք Արածանիի հիւսիսային կողմը կը գտնուին, այս տեսակէտով սղքատ կը համարուին: Բալը մինչեւ Տիգրանուկերաի շուկան կը տարուի իբրեւ վաճառքի նիւթ: Ընտրելագոյն խնձոր կ'արատաբէ՝ Պալխայա քրդաբնակ գիւղը, որուն խնձորները երբ ծառէն վար իյնան, կը ձեղքրաին: Բալը կը չորցնեն, ու ձմրան և նոյնիակ ամբան եղանակներուն, երբ թարմ բալ կարելի չըլլար գտնել, կը գործածեն շարակ պատրաստելու անկէ, կամ հիւանդներու իբրեւ կաղղուրիչ արգանակ, անոր ջուրը խմցնելու:

Տանձերու շատ տեսակներ կան: Տանձենին ընդհանրապէս լեւներու մէջ անոզ ծառ մըն է, և կը գտնուի այգեստանները, ու ոչ թէ ջրարբի ծառատասանները:

Խնիկ՝ սանձը շատ փոքր, ընկոյզէն քիչ մը մեծ, տանձ մ'է, համը թթուաչ ու ակտրթելի է: Մեղրուկ սանձը խոշոր ու քաղցր է և երկար ժամանակ չի գիմանար ծառէն քաղուելէն վերջ: Փոքուկը, որ քաղուած ատեն անհամ ու ատպեցնող է, իսկ ժամանակ մը յարգի մէջ եթէ մնայ կը քաղցրանայ: Չմբուկ սանձը, որ ձմեռները կ'ուտուի, շատ ջրուտ ու յարգի է. ասիկա ամէնէն ուշ հասունցող տանձն է:

Խնձորը և տանձը կը շերտեն, և թելերու վրայ անցընելով շարոցներ կը կաղմեն, կը չորցնեն և իբրեւ ձմրան պաշար կը գործածեն: Չորցուած տանձը՝ սանձկես, խնձորը խնձորկես կ'անուանեն:

Ալոճը զանցառելի պատու մըն է, որուն ծառը լեռներու մէջ կամ այգիներու անջրդի կորդերը կ'աճի: Այս պատուին մեծագոյն մասը կորիզները կը կազմեն: կազինի մեծութիւնն ունի և դեղնագոյն է: համը քիչ մը թթուանուշ է:

Մամսիւր վայրի աւրոր մըն է, թթուաւշ համ մը ունի, թխագոյն է սովորական սալորէն շատ փոքր է: կը չորցնեն զայն, և պահոց կերակուրներու հետ միասին կ'եփեն: կերակուրներու թթուաւշ համ մը կուտայ:

Պատուներու կարգին բալուցիներու ծանօթ են նաեւ՝ մորմը որ մարանիին (մասրենի, մորենի) պատուն է. մութ կարմիր գոյնով ու թթուանուշ համով, փշափի պտուղը, որ ձիթապտուղի կը նմանի, անոր նման կորիզ մը ունի, բայց պատուը ծածկող մաշկը սպիտակորակ է, և ծածկուած բուսական սպիտակ փոշիով մը: Բռինչը սիսեռէ փոքր պտուղ մըն է, բոլորովին կլոր, խակ վիճակին մէջ կանանչ գոյն մը ունի, իսկ հասունցածը դեղին է. ամէնէն մեծ մասը գրաւողը կորիզն է: Ասիկա չամիչի հետ կը խառնեն, ու պզտիկներուն կուտան:

Այս պտղատու ծառերուն փայտերը, շինութեան մէջ, իբրև տաղձ ո՛րէէ կարեւոր դեր չեն կատարեր: Միայն, անոնց ճիւղերը, հաստ կամ բարակ, տեղին համաձայն, իբրև մարդակ կը գործածուին: Արհեստներու մէջ ալ իրենց կիրառութիւնը հազուադէպ է: Ալոճի, ծիրանիի, տանձենիի, խնձորենիի փայտերը՝ դժուար և չափնայ (չերևի տեղ գործածուող մեծ դժուար) շինելու ամէնէն յարմար տաղձը կուտան: Անոնց փայտերը կակուղ են, նեարդուա չեն, և հետեւաբար, ո՛չ միայն դիւրութեամբ կը տաշուին, այլև լուր կերպով յղուելու ընդունակ են:

Գիւղացին՝ իր դժուարները միայն այս ծառերուն փայտերէն կ'ընտրէ. տանց հաստ ճիւղերը որոշ երկայնութեամբ կը կտրէ, այնքան որքան դժուարին երկայնութեան համար հարկաւոր է: Զանոնք իրենց հաստութեան համեմատ ձեւքելով երկայնքին, երկու կամ երեք մասերու կը վերածէ, իւրաքանչիւր մասէ մէկ դժուար պիտի շինուի: Այս մասերը նախ ուրազով կը կոպտե (դժուարի նախնական ձեւը տալ), յետոյ դանակով տաշելով աւելի կը ձեւաւորէ, կը նրբացնէ իր ճաշակին համեմատ: Անոր վերջնական ձեւը տալէն յետոյ, կ'սկսի փորել դժուար սնունդով գործիքով մը, որ կոր շեղբով դանակ մըն է փայտէ կոթի մը վրայ հաստատուած: Գժուարին խորութիւնը կ'ըլլայ շուրջ մէկ սանդիսթր: Բոլորածեւ է ան ու ոչ թէ ձուածեւ, ձուածեւ դժուարները ուրիշ քաղաքներէ կը բերուին ու յորդի չեն: Գժուարին այդ բոլորակը կը վերջանայ կտուցի նմանող, շատ փոքր ու դուրս ելած մասով մը, որ դժուարին քիւրք կ'անուանեն, անոր գո-

դաւար մասը՝ փոք, տառւնը՝ պոչ և կորնթարդ կողմն ալ՝ կռնակ
(կրնակ):

Չամճան խոշոր դգալ մըն է, 50 սանդխմէթը երկայն հաստ
տառւնով մը, և կրնայ պարտւնակել շուրջ կէս լիդը հեղուկ:

Փշտախին, բռնչիին փայտերը շատ նեարդուտ են, ոչ դիւրու-
թեամբ կը սոսշուին, և ոչ ալ կը յղկուին կամ կ'ազորկուին, անկա-
րելի է որ արհեստաւորը կարենայ զանոնք միւսներուն շափ փայ-
լեցնել: Ասոնց փայտերը գրեթէ անպէտ են, որովհետեւ իբրեւ
վառք ալ կարեւոր անդ մը չեն գրուեր դիւրամատ չըլլանուն և
նուազ տատիճանի ջերմութիւն արտադրելուն պատճառաւ: Երբ շատ
դիմացկուն գործիքներու պէտք ունենան, այն տակն սասնց փայ-
տերը կը նասընտրեն, ինչպէս արօրի ռասամ, կամրնէ, երկումասնի
եւայն:

Բռնչի, ալոճի, մամոխի ծառերը ինքնաբոյս են: Գիւղացին ոչ
կը անկէ զանոնք և ոչ ալ անոնց խնամք կը տանի, միայն բնու-
թեան խնամքովը կը բուսնին ու կ'աճին: Բռնչին մանուսանդ ժայ-
ուերու ձերպերուն մէջ իսկ կը բուսնի և կ'աճի իր սովորական մե-
ծութեամբը: Ընդհանրապէս, սախա նուիրական ծառ մը համարուած
է՝ թէ հայ և թէ քիւրտ գիւղացիներէ, որոնք երբ այդ ծառին քո-
վէն անցնին, անոր ճիւղերուն վրայ՝ պատրոյգ կամ քուրջերու
ծուէններ կը կապկպեն ի նշան պաշտումի և երկիւղածութեան: Իսկ
հայ գիւղացիները շարաթ երեկաները կը լուսեն զայն, այսինքն ծա-
ռին սաքը զանուոյ քորերուն վրայ վառուած մամեր կը փակցնեն,
կը խաչակնքեն ու կ'ազօթեն անոնց առջեւ:

Ալոճենին փշալից ծառ մըն է, ընդհանրապէս այգիներու սահ-
մաններուն վրայ կ'աճի, կամ՝ լեռներու մէջ: Իր փայտը դգալներ
շինելու շատ յարմար է, ինչպէս նաեւ մամխանիինը, սակայն օգտա-
գործելի բաւական չափով ատաղձ չեն տար, որովհետեւ, թէ իրենց
բունը շատ ստուար չէ, թէ ճիւղերը բարակ են, և թէ ուղիղ չեն,
ընդհանրապէս ծուռ ու մուռ են:

Պտղատու ծառերու այս շարքը կ'աւարաի այսքանով, սասնցմէ
զատ ուրիշ պտղատու ծառեր չունի Բալուն, բացի որթատունկէն,
որուն վրայ պիտի գրեմ ասկէ յետոյ:

Այս ծառերուն անկագործութեան մասին ալ քանի մը տող հարկ
է աւելցնել հոս, որթատունկին անցնելէ աւել:

Բարախին անկագործութիւնը, որ սախադականն է՝ հարկ եղած
չափով ատաղձ պատրաստելու մտահոգութեամբ, հետեւեալ կերպով
կը կատարուի:

Նախ, բարախի ծառերէն կը կտրեն այն մասնազ ու թարմ ճիւ-
ղերը, որոնք ուղիղ ցօղուն ունին և վարակուտ (պուտապլը) չեն,

ասանց հողին մէջ խրելիք ծայրը կը տաշեն, և յետոյ, ուղղածիդ գիրքով, շարք, շարք, ուղիղ գծի վրայ կը անկեն՝ տաշուած ծայրը խրելով հողին մէջ 30-35 սանդիմէթր խորութեամբ, իրարմէ 7 մակուն սանդիմէթր հեռաւորութեամբ: Այս շարքերը իրարմէ կ'անջատուին սկօսներով, որոնք ուղղուած կը դիւրացնեն:

Տնկադործութիւնը կատարուելէն յետոյ, երբ տունիկերը կը բռնեն ու աճուած կ'սկսի, 7-8 ամիս յետոյ աչքէ կ'անցնեն նորատունկ ծառատանը, և այն տունիկերը որոնք լաւ չեն կրցած աճիլ, կը կտրեն, որպէսզի միւսներուն աճուած չխափանեն: 7-8 սարի յետոյ, բարտի տունիկերը մեծամեծ ծառեր կ'ըլլան, ունենալով 30-35 սանդիմէթր արամագծով բուն: Ասանցմէ ամէնէն հասակը դերմնացու են, իսկ բարակները՝ կցակցու: Ասանց հասա ճիւղերը մարդակցու կ'ըլլան: Բարտի, ծառատաններուն համար, դիւրացին ուրիշ խնամքներ չի տանիր, դիւրութեամբ, արագութեամբ ու քիչ խնամքով աճող ծառ մըն է, որ սասակաշունչ ձմեռներու ցուրտին կրնայ սովոր, սուանց ստակու:

Պատասու ծառերուն տնկադործութիւնը ընդհանրապէս կորիզներու միջոցու կ'ըլլայ: Պատշենբու կորիզները պատահամբ հողին մէջ իյնալով կը ծլին, և հետզհետէ կ'աճին ու տունիկեր կ'ըլլան: Քիւղացիները այս տունիկերը իրենց արմատով միասին հանելով հողին մէջէն, իրենց ուղած սեղը կը թաղեն, ու ժամանակ մը թաղուած արմատը պահանջուած տասիճանի խոնաւութեան մէջ կը պահեն: 2-3 սարի աճելէ յետոյ զայն կը պատուաստեն, որպէսզի պատու արատդրէ: Այս պիտի գրեմ պատուաստի մասին: Բոլոր պատասու ծառերը այս կերպով աւաջ կը բերուին, իսկ անպտուղ ծառերը բարտիին պէս կը անկադործեն, ինչպէս փշտաին, թեղին, մորակնին եւն:

Կաղնիի տնկադործութիւնը չեն կատարեր, ծառ մըն է ան անջրջի վայրերու մտանաւորապէս յեռներու, ուր աւաթրէն կ'աճի, ու գեանին սակ հասա ու բազմաճղի արմատներու ցանցով մը կը ծածկէ:

ԻՌ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԺԵ.

ՈՐԹԱՏՈՒՆԿ

Բալուխ կլիման բարեխառն է, թէեւ, երբեմն, ձմեռը սաստիկ ցուրտ կ'ընէ. գէրոյէն 70 - 80 վար: Պատահական այս ցած բարեխառնութիւնը, սակայն, այգեմշակութեան արգելք չի կրնար ըլլալ, չնորհիւ այն կանխազգուշական միջոցներուն, զոր գիւղացիները ի գործ կը դնեն, որթատունկը՝ ստեղծելով վտանգին դէմ սպառնալից համար: Գիւղացին կը գուրգուրայ իր այգիներուն վրայ, որովհետեւ տա ալ, թիթենիին պէս, գիւղական անտեսութեան մէջ, ամենակարեւոր դեր մը ունի: Խաղողը, որպէս սոսկ պտուղ, առանց հաշուելու ռուպը, քաղցուն, գինին և անկէ պատրաստուած զանազան քաղցրեղէնները, միւս բոլոր պտուղներէն ալ յարգի է, յարգի՝ թութին չափ, եթէ ոչ անկէ աւելի: Այս պատճառաւ, ոչ միայն բոլոր երկրագործները, այլեւ բոլոր ճուղակներն ալ, շատ աննշան քոցառութեամբ մը, իրենց այգիներն ունին. իւրաքանչիւր ընտանիք, իր կարողութեան ու բազմամարդութեան համեմատ, կ'ունենայ մէկէն մինչեւ եօթը ութը այգիներ:

Բալուխ այգիները, անբացառապէս, անջրդի գեախններու վրայ անկուած են. ընդհանրապէս լեռնային փոքր տափաստանները կը գրուեն ու արեգին: Արեգի կը կոչուին այն լեռնակողերը, կամ զառիշարները, որոնք դէպի արեւելք կը նային, կամ ցերեկուան մեծագոյն մասը, արեւին հառաքայթներուն տակ կը գտնուին: Ընդհակառակն, ծմակ կը կոչուին այն վայրերը որոնք քիչ անգամ արեւ կը տեսնեն: Գիւղացիները գիտեն թէ, արեգի և անջրդի այգիներուն խաղողները աւելի յարգի են, որովհետեւ անոնց քաղցուն տւելի քաղցր ու թանձր կ'ըլլայ, մինչդեռ, ջրարբի այգիներուն խաղողին պտուղները թէեւ նուազ չափ խոշոր կ'ըլլան, բայց իրենց քաղցուն աւելի լոյծ ու նուազ քաղցր կ'ըլլայ: Շրջակայ գաւառներէն, Խարբերդն է որ ջրարբի այգիներ շատ ունի:

Բալուցիները, ուրեմն, միշտ այգիի անկագործութեան համար արեգի ու անջրդի լեռնակողերը կ'ընտրեն: Այգի անկելու համար

ընտրուած գեաւինը նկատելով որ ընդհանրապէս քարուտ կ'ըլլայ, գիւղացի, նախապէս այդ բոլոր քարերը կը հաւաքէ ամբողջովին, ու տեղ տեղ, շատ հեղ սահմաններուն վրայ քարքակներ (քարակոյտ) կը ձեւացնէ անոնցմով, այս քարերը, սպա, կը գործածէ, այգիին բոլորաթիքը չոր պահ շինելու: Չոր պատ կ'անուանեն այն պատերը, սրանց մէջ բնուէ շաղախ գործածուած չէ: Բայց այգիները իրարմէ պատելով չեն անջատուիր, այլ անոնցմէ իւրաքանչիւրին միջեւ չմշակուած և 15-20 սանդիմէ թր քարձրութեամբ երկդ մը կը գանուի միայն, ու այս երկդը, խտակաւ ծածկուած, կորդ կ'անուանեն, կամ սիւն: Բայց այգիներուն արտաքին եզերքները միայն տեղ տեղ շրջապատով մը կը փակեն, գողերու և կենդանիներու մտաքը գծաւորոյնելու համար:

Քարերը մաքրելէ յետոյ, կը մաքրեն նաեւ ամէն կարգի խտուրը, սեղեր, փուշեր, մայրաններ, վարձօթիներ ևն, կը մնաց միայն մաքուր ու թխտրակ հողը, զի այս խտուրը որթատունկերու տնումը կը խախտեն, եթէ արմատախիլ չըլլան: Այս կերպով, քարերէ և օտար բոյսերէ մաքրուած գեաւինը կ'սկսին արօքով հերկելու, կամ քահերով փորելու: Հերկուած գեաւին վրայ, իրարմէ երկուակոն մէթր հեռուորութեամբ և շուրջ մէկ մէթր խորութեամբ փոսեր կը քանան: Այս փոսերը ուղիղ գծի վրայ կը գանուին, և իրենց թիւը կախում ունի անկազարծելի գեաւին տարածութենէն: Իւրաքանչիւր որթատունկ, այս կերպով, իր շուրջը մէկ քառակուսի մէթր տարածութեամբ գեաւին կ'ունենայ, ազատօրէն աճելու համար: Այս փոսերուն մէջ է որ կը անկեն որթատունկը, հետեւեալ կերպով:

Տնկադարձութեան համար ընտրուած մատղաշ ու կենսաւետակ բոլոր ճիւղերը կամ շաշերը, ըստ տեսակի, խտրձերու կը վերածեն, այսինքն խաղողի այսինչ տեսակը արտադրող որթին բոլոր անկելի ճիւղերէն առանձին խտրձ կը կազմեն. այսպէս իւրաքանչիւր տեսակէ մէկ կամ տեղի — պէտքին համաձայն, — խտրձեր պատրաստելով, զանոնք իրենց իւրաքանչիւր տեսակին յատկացուած կարգին մէջ կը անկեն ու հողով կը ծածկեն: Այնպէս որ խաղողի տանն, երբ գիւղացին իր այգին կը մտնէ խաղող քողելու համար, գիտէ թէ ո՞ր տեսակ խաղողը, այգիին որթատունկերուն ո՞ր շարքին մէջ պէտք է փնտակէ:

Որքոսները կամ որթատունկերը ըսինք թէ կանոնաւոր շարքեր կը ձեւացնեն, համաչափ անջրպետներով իրարմէ հեռու. այս շարքերէն իւրաքանչիւրը քաղաղցիները պարան կ'անուանեն: Պարանը, իրենց այգիին տարածութիւնը ցոյց տուող չափն է: Երբ ըսեն թէ այսինչ այգին քսան պարան է, կը նշանակէ թէ այգիին երկայնութան վրայ քսան շարք որթատունկեր կը գանուին, և եթէ իւրա-

քանչիւր շարքի վրայ քսան որթատուենիեր գանուին ուրեմն ամբողջ
այգին չորս հարիւր որթատուենի բաժանուած կ'ըլլայ: Պարան բա-
ռը երբեմն ծառատուենիերու կամ անկատաններու համար ալ կը գոր-
ծածուի միեւնոյն իմաստով:

Տնկուելիք ուռը, կամ չաչը մէկ մէթը երկայնութիւն պիտի
ուեննայ, զայն փոսին մէջ սւղղածիք դիրքով գնելէ յետոյ հողով
փոսը կը լեցնեն այնքան որ անկուած ուռին կամ ճիւղին երեք չոր-
րորդ մասը հողով ծածկուի իսկ մէկ չորրորդը հողէն դուրս մնայ:
Կը պատահի երբեմն որ չաչը երկայն ըլլայ, այն ատեն զայն կը
թեքեն և երկու ճիւղերու կը վերածեն. յետոյ մէջանդի կորացած
մասը փոսին մէջ կը դնեն և հողով կը ծածկեն, իսկ երկու ճիւղե-
րուն ծայրերը դուրս կը մնան: Այս կերպով մէկ ուռէն կամ չաչէն
երկու որթատուենի սուսջ կուգայ:

Այգիի անկադործութիւնը Մարտ ամսուան կէսէն յետոյ անդի
կ'աւնենայ: Պարբերական սուգումներ չեն ընէր, միայն տեղացող
անձրեւները կը բաւեն որպէսզի նոր անկուած ուռերը արմատ
ձգեն և կանանչան: Մայիս ամսուան վերջին կիսուն, ամ-
բողջ այգին փորելու գործողութիւնն է որ կը կատարուի, եթէ ար-
դէն որթատուենիերը կանանչ ծիլեր արձակելու սկսած են: Ասիկա
սովորական խնամքն է, զոր տարուէ տարի գիւղացին սուսնոց զան-
ցառութեան կը կատարէ: Այգին փորելու գործողութենէն զտա
կայ նաեւ եզին բանալու գործողութիւնը, որ միտամանակ կը կա-
տարուի, ինչպէս նաեւ եզին կրչելու գործողութիւնը:

Գիւղացին գիտէ թէ այս գործողութիւնները Մարտ ամսուան
սուսջին կիսուն պէտք է որ կատարուի, որովհետեւ, կլիման վատա-
նելի չէ, և պէտք է թողուլ որ որթատուենիին բողբոջները (մտաղայ
ճիւղերը) հողին սակ ծածկուած մնան. կրնայ տարտապոյման ցուրտ
մը եզին մսեցնել, այսինքն մնասել անոր, զի պաշտանք բոլոր սուն-
կերուն մէջ, որթատուենին է որ ցուրտէն դիւրութեամբ կ'աղդուի:

Եզին բանալը այն գործողութիւնն է որով որթատուենիին բու-
նին շուրջը բաւական խորութեամբ փորելով փոս մը կը բանան, և,
մասաղ որթատուենիին արմատին մէջ մասը, օդին հետ անմիջական
չիման մէջ կը գանուի: Այս խառնչները կամ փոսերը, չյամեցող
անձրեւներու միջոցին ջուրով լեցուելով փոքրիկ սուսգումներ կը
ձեւացնեն, որոնց մէջ գանուող ջուրը՝ որթատուենիի արմատը շրջա-
պատող հողերը կուռուկուչտ ծծելով, ամառնային ամբողջ երաշտ ե-
զանակին բաւելու շափ անսպաս խոնաւութիւն կ'շտեմարանեն: Այս
խոնաւութեան շնորհիւ է որ որթատուենիերը կը սնանին ու կ'աճին
այնքան ճոխութեամբ, որքան ջրարբի սունկերը:

Այս նկատմամբ այգիի անկարկութեան համար ընտրուած գետ-

Ինչն ընտանիքն ալ ո՛չ նուազ օգտակար կ'ըլլայ: Անոնք ընդհանրապէս կը գտնուին լեռներու գրկին մէջ կամ անոնց կողերուն ստորին մասերու վրայ: Չմեռնային ձիւներու, աշնան ու գարնան անձրեւներու ջուրերը լեռներու բարձունքներէն մզուելով, կը հասնին մինչեւ իրենց խոնարհագոյն մասերը և կը տարածուին ամէն կողմ, գէպի վարերը, տարածելով անսպառ խոնաւութիւն մը, որուն շնորհիւ, որթատունիները, ամբողջ ամբան ընթացքին, իրենց կենսունակ թարմութիւնը անթաւամ կը պահեն յայտնելով զայն իրենց տերեւներուն վրայ կենդանի կանանչութեամբ մը:

Էգին բանալը նոր անկուած այգիներուն աւաջին տարին տեղի չունենար, նոքսուկ այգիները պէտք չունին տար, տարի մը, երկու յետոյ, երբ այլեւս տունիները կամ ուները լաւ մը արմատացած կ'ըլլան, այս գործողութիւնը սախագրական կը դառնայ, ու գիւղացին զայն ընելու չի թերանար:

1895 թուականին տեղի ունեցող կոտորածներու և տարասխներու հետեւանքով գիւղացիները չկրցան իրենց այգիները, բանալ, փորել և յօսել: Այդ տարի այգիներու երեւոյթը անցորդին, որ այգեգործութեան ծանօթ ըլլար, թախիծ կը պատճարէր, ամէն կողմ խեղդող փուշեր, սեղեր և ուրիշ խտեր բարձրացած, կը ծածկէին որթատունիները՝ խափանելով անոնց արեւը և օդը, հազիւ ընդհատ ցանցաւորութեամբ անոնց կորածեւ ու տերեւածածածկ բազուկները կը նշմարուէին: Այդ տարի քիչ այգիներ միայն կրցան քիչ քանակութեամբ խաղող արտադրել:

Որթատունի արմատներուն շուրջը բայուած փոսը աչք կ'անուանեն, եգիին աչքը բանալ կը նշանակէ եգին բանալ: Տան մեծը կ'ըսէ, «Տղա՛ք, վաղը գըցէք (գնացէք) էգուն աչքը բացէք»:

Այս գործողութեան կը յաջորդէ՝ որթատունիները յօսելու, ըստ գիւղացիներու բացատրութեան եգին կըյրելու գործողութիւնը, նոյնքան անհրաժեշտ է, որքան աչք բանալը: Երբ, այգիին բոլոր աչքերը կը բացուին, այգեգործ գիւղացին իր հետը առնելով փոքրիկ յօտացը, որ կոր շեղբով կարոց մըն է, կ'երթայ այգին յօսելու համար: Նոքսուկ այսինքն նախորդ տարուան անկուած ու արմատ բռնած որթատներուն (որթատունիներուն) ձիւղերուն քովերը գոյացած մանր սասերը կը կորեն, — փորձաւոր գիւղացին լաւ գիտէ թէ ո՛ր սասերը հարկ է կտրել, — կը թողուն միայն գլխաւոր ձիւղերը, որոնք, յօտումով աւելի զօրանան և աւելի կ'աճին: Բոլոր այգեատէրերն ալ այգի յօսելու արհեստին հմուտ չեն, իւրաքանչիւր գիւղի մէջ որոշ թիւով մարդիկ կը գտնուին, որոնք այգիները կըյրելու յօտելու գործը կը կատարեն, աս ալ յաճախ, տունց վարձքի, մերթ չնչին վարձքով մը: Քաղաքին այգիները վարձքով կը յօտեն:

Այգիին աչքերը բանալէ, և զայն կրչելէ յետոյ, կարգը զայն փորելու կուգայ: Ասիկա անգի կ'ուշեհայ Մայիս ամսուն վերջերը, երբ այլեւս անդատադատներու վախը չկայ: Ամբողջ այգին ծայրէ ծայր, սրածայր բռներով կը փորեն խոշոր գունձեր հանելով, ասով, տարւոյն ընթացքին գոյացած խոտերը արմատախիլ կ'ըլլան և անելու հնարաւորութիւններէն կը զրկուին, միւս կողմէն հողը կը կակուղնայ և ընդգեանեայ օդառութեան նպաստաւոր կը դառնայ: Փորուած այգիին մէջ, զայն ծածկող գունձերուն պատճառաւ, կարելի չէ գիւրութեամբ պտըտիլ:

Նորատունկ այգի մը չորս հինգ տարի յետոյ հազիւ կ'սկսի ծաղկելու և խաղող արտադրելու նշաններ տալու: Երբ այս առաջին նշանները յայտնուին, աէրը անպատուժ ուրախութիւն մը կ'ուշեհայ, իբրև թէ մեծ հարատուութեան մը տիրացած ըլլար: Ասիկէ յետոյ, ան միշտ իր սեշտութեան ու խնամքին սուտրկան կը դառնայ, իբրև թէ՛ իր սիրելի գաւակներէն մին եղած ըլլար: Չորս հինգ տարի միշտ կը հետեւի անոր ճիւղերուն բազմամարտն և աստիճանական ուճացման, մինչև անոր խաղող տարու աստիճան հասուննալը: Տէրը, խրախուսուած այս խստամտալից երևոյթէն, այլեւս կը համոզուի թէ իր աշխատութիւնները ընդունայն անցած չեն, այլ իր յոյսերը պատկելու աստիճանին հասած են:

Բնութիւնը մեծապէս կ'օգնէ իր աշխատութիւնները արդիւնաւորելու, միտկ երկիւղը զոր կ'ուշեհայ գիւղացի այգեատէրը, կարկուտն է, որ կրնայ փճացնել զայն Չարգուփշուր ընելով որթատունկերուն մասաղ ծիւրն ու ծաղիկները: Այս անսակէտով, Մարտ Ծը իրենց համար նախապաշարման թիւ մըն է. կը կարծեն թէ, եթէ՛ այգին Մարտ Ծէն առաջ յատեն, կարկտահար կ'ըլլայ կամ թրթուրներէն կը վնասուի:

Մարտի Ծը անցնելէն քանի մը օր յետոյ, եթէ սուսին անպամները շատուոր են, երկու երեք հոգիներ, իրենց յօտոցներն և յետանները (լետան) հետեւինին առնելով այգին կ'երթան, իւրաքանչիւրը մէկ որթատունկի ճիւղերը կը յօսէ մեծ զգուշութեամբ. այդ ճիւղերը մոլ կ'անուանեն: Անոնք գիտեն թէ՛ մոլերէն որո՞նք պիտի կտրուին, և որո՞նք պիտի պահուին, որովհետեւ, ամէն մոլ խաղող չի տար: Ընդհակառակն, եթէ կտրողը չգիտնայ թէ՛ ո՞րը պիտի կտրէ, այգիին պիտի վնասէ, կարելով ուղղակի խաղող արտադրող մոլերը: Վարպետ կտրողը, ուրեմն, պէտք է գանազանէ թէ՛ որթատունկին արմատէն մեկնող բազմաթիւ ճիւղերէն, որոնք մերթ երկու մէթրէն աւելի երկնցած կ'ըլլան, որոնք են կտրուելիքները: Այգեգործը, այդ մոլերը մէկական բռնելով, բունին քովէն սկսեալ, կ'սկսի անոր վրայի աւելորդ ճիւղերը կտրելու, միշտ յօտոցը,

կարելու ատեն, դէպի իր կողմը քաշելով և ո՛չ թէ դէպի հակառակ կողմը ճնշելով:

Այգին կարելու (յօտել) գործուղութիւնը ս'ա է: Ասիկա միայն այրերու գործն է, ո՛րքէ կին չկրնար այգի կարել, եթէ պատահի որ, մահուան կամ պանդխտութեան պատճառաւ տան մը մէջ այր մարդ չգտնուի, կինը ստիպուած կը մնայ դրացի կամ աղգական, կամ խնամի այրերուն օգնութեան դիմելու. անոնք, սիրայօժար յանձն կ'առնեն գալու և անոր այգին կարելու: Բայց շալակով բեռ կրելն ալ կիներու աղջիկներու և բացառապէս ալ երիտասարդներու կամ չափահաս պատանիներու գործն է: Արդ մինչ մէկ կողմէն եզի կըյրողնէրը որթատունկերը կը յօտեն, կիներն ու աղջիկները անոնց կը հետեւին, կարուած մուկերը կը հաւաքեն, անոնցմով խուրձեր կը կապեն մուկերով շինուած կեմերով, և այս խուրձերէն երեքական չորսական իրարու միացնելով — կրող անձին կարողութեան համաձայն — պարաններով կապելով շալակներու կը վերածեն: Շալակները կապելէ յետոյ, երբ այլեւս յօտելու գործը վերջ գտած է, կ'սկսին անոնց փոխադրութեան: Այգիէն տուն գնացող ճամբուն երկայնքը Օրթոս շալկող կիներու և աղջիկներու շարունը կ'սկսի: Այս երթուղարձը մէկ երկու օր կը տեւէ, մինչև որ որթոտի խուրձերը հասնին: Կրնայ ըլլալ որ շալկուորները տեղատարափ անձրեւի բռնուին, ընդհանրապէս տարատանտարաններ չեն գտնուիր ճամբուն վրայ. ստիպուած կ'ըլլան շարունակելու իրենց ճամբան ու անապարելու վայրկեան մ'առաջ տուն հասնելու համար: Այգիները գիւղերէն ընդհանրապէս առ առաւելն քան վայրկեան հեռու կ'ըլլան. վո՛յ այն շալկուորներուն, որոնք 10-15 վայրկեան տեղատարափին տակ կը մնան ...: Տուն հասնելով իրենց շալակները վար կը դնեն. կը տեղաւորեն ամիւրներու վրայ՝ Օրթոսի խուրձերը կանոնաւորապէս շարելով իրարու վրայ, բայց օդին մէջ, ուր մնալով ամառն իրուն արեւուն տակ կը չորնան: Յետոյ իրենց հագուստները կը փոխեն, ու կ'սպասեն անձրեւին դադարման կամ ընդհատման՝ իրենց գործը շարունակելու համար:

Փոխադրելու ոչխատութեանց աւարաւմէն անմիջապէս վերջ կամ հոյնիակ միաժամանակ, կ'սկսին այգիները սարբինելու: Սարբինաները ընդհանրապէս քիչ մը կոր և իրենց մէկ ծայրը երկճղի գաւազաններ են: Այգին կարելէն անմիջապէս յետոյ խուրձերով այգին կը փոխադրեն, և անոր զանազան կէտերուն վրայ տանական, քանական կը ցրուեն: Այգեգործ գիւղացին զանոնք մէկ մէկ առնելով իւրաքանչիւր որթատունկի մօտ, շեղակի, գետինը կը խրէ, երկճղի ծայրը վեր պահելով: Մէկ որթատունկի համար այն քան անդամ 2 սարբինայ կը գործածէ, որքան բունին վրայ յօտուած

մտեր կան • իւրաքանչիւր մովի համար երկու սարքինաց ըսեւ է • Մոլերը մէկական ասնելով, կը ձգէ սարքինային վրայ անոր երկու ճիւղերուն միջեւ, շատ մասաղ մոլերը կընայ փաթթել սարքինային շուրջը գագաթէն դէպի վար: Յօտուած մոլերը այսպէս սարքինային վրայ ձգուելով ծածք մը կը ձեւացնեն. և երբ քանի մը շաբաթ յետոյ, անբեւեւելով ծածկուին, այն ասնն ճշմարիտ հովանոց մը առաջ կուգայ:

Սարքինաներու վրայ ձգուելով, մոլերը փախանակ գետնի վրայ սողալով ամբողջ այգին ծածկելու, վերը օդին մէջ կախուած աւելի լաւ կ'աճին, և որթատուներուն անջրպետներէն կարելի կ'ըլլայ աւանց անոնց վնաս հասցնելու, սեւէ որթատուների մօտեւոր: Ասկէ զատ, խողովը ողկոյզները, վերը աւելի մնալով չեն խաթարուիր, կանոնաւորապէս կ'աճին, ու հաւասարապէս կը հասաւորան: Էգին սարքինել ըսելով ուրեմն, գիւղացիները կը հասկնան: յօտուած որթատուների ճիւղերը սարքինաներու վրայ ձգել: Տեղ տեղ սարքինելու գործողութիւնը, յօտելու գործողութիւնէն առաջ կ'ընեն, բայց այն պարագային, յօտուելու ու սարքինողը նոյն փորձառու անձը ըլլալու է, որպէսզի շարկադրուի աւելորդ ըլլալով անկուած սարքինաները հաւաքելու, կամ պէտքին շափ միայն գործածել գիտնայ:

Նախորդ ատրուան մոլերը, յաջորդ ատրին, իբրեւ անպէս համարելով չեն կարեր. ընդհակառակը անոնցմէ երկու կամ երեք հատը պահելով միւսները կը կարեն • աւելին վնասակար կը համարեն որթատուներին ուժեղացման, որովհետեւ, ասանք, շատ աւելի խողով կուտան քան նոյն ատրուան մասաղ մոլերը: Սարքինելու գործողութեան մէջ կարեւոր կէտ մը կայ, զոր պէտք չէ զանց ընեմ: Վարպետ այգեգործները, սարքինելու ասնն, ուշադրութիւն կ'ընեն որ բոլոր մոլերը կամ ճիւղերը մէկ կողմի վրայ սարքինուին, և ոչ թէ որթատուներին բոլորաթիբը բոլորածիւ աւրածուին: Այսպիսով ասանք պարաններուն անցքերը ոչ միայն չեն խափաներ, այլ կը թողուն անցք մը ուրիշ արեւին ճառագայթները, ազատօրէն պիտի կրնան որթատուներին բունին և ողկոյզներուն հետ հզուամի մէջ գըտնուել ցորեկուան դիտուոր ժամերուն, պարագայ մը՝ որ խողովներուն ճիշդ ժամանակին հասուննալուն կը նպաստէ:

Երկրորդ, սարքինելու գործողութիւնը իր ժամանակին ունի, այս ժամանակը ճշտելու համար, մոլերէն մէկուսն վրայ յօտուելով կարելով ձեռք մը կը բանան, եթէ այդ կարուած տեղէն անոր աւելը կաթիլ կաթիլ դուրս գայ, կը հասկնան թէ սարքինելու ժամանակն է, և վարպետը կամ աէրը կ'աճապարէ ժամ առաջ այդ գործը կատարելու:

Յօտելու և սարքինելու ինչպէս նաեւ ուրիշ գործողութիւններու

պահուեն, աշխատաւորները մեծ զգուշութիւն կ'ընեն, որպէսզի մտե-
 րուն մատաղ կոկոնները չթափին կամ չճմլուին: Այս երկու գոր-
 ծողութիւններէն յետոյ, այլեւս այգին կը թողուի բնութեան խնամ-
 քին մինչև խաղողին հասուննալը: Ասկէ յետոյ, ան կ'ուսնանայ ու
 կը ծաղկի, ծաղիկներէն յետոյ ազօխ կուտայ և ազօխը հասուննա-
 լով խաղող կ'ըլլայ: Գիւղացին շարաթը հեղ մը կ'այցելէ իր սիրած
 այգին, ամէն կողմերը աչքէ կ'անցնէ, եթէ սարքինաները ծած են
 կ'ուզէ, եթէ ճիւղերը չափէն աւելի երկարած դանէ, դանոնք գետ-
 նէն կը վերցնէ և սարքինաներու վրայ կը տեղաւորէ, այսպէս կը
 հսկէ, հոգ կը ասնի, որպէսզի ոչ մէկ բան արգելք չըլլայ որթա-
 սունկերու աճման: Մտերը մտանաւորապէս ծիրանի, տանձի և
 խնձորի ծառեր են, բայց գիւղացին չուզեր որ ասոնք թուով շատ
 ըլլան, որովհետև անոնք կը մնասն որթատունկերուն՝ ըլլայ իրենց
 արմատներով, ըլլայ իրենց համատարած ստուերով, որ պիտի ծածկէր
 որթատունկերը՝ զրկելով դանոնք արեւին կենսատու ճառագայթնե-
 րէն: Իւրաքանչիւր այգիի մէջ երկու, երեք կամ չորս պտղատու
 ծառեր միայն կը գանուին ու ոչ աւելի:

Ըսի թէ կարուած որթատունկի ճիւղերը շաղակներով տուն
 կը կրեն: Ասոնք խուրձերու ձեւին սակ, տանիքներու վրայ 7 արեւին
 սակ կը պահեն քանի մը ամիս, այնպէս որ լաւ մը կը չորնան անկէ
 յետոյ կը շղջրատեն կը փոխադրեն իբրև վաւք գործածելու համար
 ձմրան, աշնան և գարնան եղանակներուն մէջ: Ասիկա դիւրավատ
 և լաւ բոց արձակող վաւք մըն է, բայց իր կրակը, բաղդատմամբ
 կաղնիի և քարկըշգուրի կրակներուն, այնքան զօրաւոր չէ, աւելի
 մեղմ է. ուտի, դայն կը վաւեն թոնիրները բոց ձգելու, և մանա-
 ւանդ բուրգի աշեն, ամանները թրծելու համար: Հոց եփելու կամ
 աման թրծելու համար ասիկա կը մեռայ յարմարագոյն վաւքերէն
 մէկը:

ԻԳ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԺԶ.

ԱՅԳԻ

Բարութի այգիները բողբոջատեսակ խաղողներ կ'արտադրեն, ասոնք կարմէ կը գանազանուին՝ իրենց պատւերուն խաչորութեամբը, գոյնովը, քաղցուին աւելի կամ նաւազ քաղցրութեամբը, կեղեւնիքուն նրբութեամբը կամ կարծրութեամբը, և, վերջապէս՝ ամանց շաւա և ամանց ալ ուշ հասունանալովը: Խաղողի գլխաւոր տեսակները հետեւեալներն են.

Ճերմակ խալող (խաղող), որուն պատւերը միջակ խաչորութիւն կ'ունենան, կեղեւը շատ թանձր ու կարծր չըլլայ, և ընդհանրապէս թարմ վիճակին մէջ աւաւելիւ կը ծաւայէ:

Սեւ խալողը, որ շատ տեսակներու կը բաժնուի, կարմիր խաղողը որ միայն աւաւելիւ կը յարմարի. չամշուկը, որմէ չամիչ կը շինեն. Շաքուկը կամ Շաքարիկը որ շատ քաղցր կ'ըլլայ, եզան աչիը խաչոր պատւեր կ'ունենայ, մուրսը, ճննդուկը, Մայրամ խաղողը, ալպրֆեիկն, որ ամէնէն ասաջ կը հասունանայ, խաչոր ճերմակ պատւերով խաղող մըն է, գիւնուկը, որմէ գինիի քաղցուն կը հանեն. և, վերջապէս, խաչկողը, որուն ողկոյցները խաչածեւ են, և պատւերը՝ շատ խիտ և այլն:

Գինուկին կեղեւը կարծր, հասա և տապեցնալ է, ասիկա ամէնէն ուշ կը հասունանայ, իր քաղցուն բաղբաւարար աւելի թանձր կ'ըլլայ, քան միւսներունը. ալպրֆեիկն յետոյ շաքարուկը կամ շաքարիկը կը հասունանայ, յետոյ՝ կարմիրը: Գիւղացիին համար շատ կարեւոր են երկու տեսակները՝ չամշուկը և գինուկը: Եթէ միւսներուն իւրաքանչիւրին համար հինգ տասը սրթասունիկեր ունենայ, ասոնց համար պարաններ կը յատկայնէ: Միւս տեսակները թարմ վիճակի մէջ կ'աւաւելին, իսկ ասոնք իր սնտեսութեան մէջ, կարեւոր բացեր կը գոցեն մանաւանդ գինուկին գինին, իրիւ փոխանակելի ապրանք:

Բացառելիւ համար Բարութի գիւղերուն այն ճարտարարուեստը, որ այգիներու արտադրութիւնը օգտակար կը դարձնէ անոր անտե-

սուբիեան, զանազան ձեւափոխութեանքու ենթարկելով զանոնք, կ'սկսիմ
գրելու նախ չամիչի պատրաստութեան մասին:

Կայ բնական չամիչը և կայ սրճեատականը:

Խախտը կը հասունանայ, և ողկոյզները տակաւին երկար տանն
որթատուէկին վրայ տակախ կը մնան, կը ցամքին տասիճանորար,
կը չորնան, ու չամիչի կը վերածուին: Փիւղացին այս կերպով չա-
միչ ունենալու ի վիճակի չէ, որովհետեւ պէտք է որ ողկոյզները,
այդեկութէն վերջն իսկ, չաբաթներով արթատուէկին վրայ թողու
հասունցած վիճակով. տակա իր անարտահոսութիւնը կ'ունենայ՝ պէտք
է ապ սնովել զայն, եթէ հնարաւոր ըլլայ, գողերուն ու յախչատկիչ-
ներուն դէմ: Աստից գողերը կրեաններն են, որոնք, չես գիտեր
ո՛ւրիշ կը մանեն այդին շրջակայ լեռներէն ու դաշտերէն գալթելով,
հոն կ'օթեւանին կամ բնակութիւն կը հաստատեն, և, որթատու-
կերուն կ'այցելեն երբ խաղողները հասունցած ըլլան, և կը շպեն
(կը քամեն, կ'ուտեն) հասունցած բնախ պտուղները: Երկրորդները՝
մեղսներն ու պիճակներն են, որոնք հասունցած պտուղները կը խա-
թարեն: Երրորդները՝ շրջակայ՝ այգի չունեցող քուրդ գիւղացիներն
են, որոնք գիշերները՝ այգիները կը մանեն, և, իրենց ուղածին չափ
խաղող քաղելով կ'աներեւութանան պահապանէն անտեսանելի կերպով:
Անշուշտ բոլոր քուրդերը այս միջոցին չեն դիմեր, կան շատեր որոնք
պատուախնդիր են, և չեն դիմանիր ցերեկեայ կամ գիշերային գողու-
թիւններով պարտապելու: Եւ տակայն, տաղակները, գաւառին մէջ
իննատուները առ հարիւր քուրդեր, զազաներ կամ գրմանճներ եղած
են:

Բարուի բարբառին մէջ, խաղող բառը խաւովող կը հնչուի, որոշ
արասրերու մով մը: Ողկոյզին՝ կող կ'ըսեն. խաղողի հասիկները պը-
տուղ բառով կը զանազանուին. տակէ կազմուած է պտղաւելներգոր-
ծական բայը, որ կը նշանակէ՝ ողկոյզին վրայէն պտուղները փրցնել:
Առանց պտուղի ողկոյզը կուզկապ կ'անուանեն: Իսկ ողկոյզին մէկ
փոքր ճիւղը, խաղողի պտուղներով միտսին, նեւ կ'անուանեն: Հա-
սուննալու մօտ եղող խաղողը՝ որ սակայն դեռ բոլորովին թթու համ
ունի, ազոխ կ'անուանուի:

Աղոխը կը չորցնեն, և, ձմեռնային եղանակին մէջ, անոր թթուն
կը գործածեն պահոց կերակուրները համեմելու համար: Չորցուած
աղոխը ազոխոք կ'անուանեն: Փիւղացին լիմոն չունի, նոյնիսկ շա-
տեր, որոնք հեռաւոր գաւառները չեն գանուած, կամ Պսիխ պան-
դխտութեան չեն գնացած, լիմոնի գաղափարն անգամ չունին: Ուս-
տի անոր տեղը կը գործածեն՝ քացախը, ալսորի թրուն, և մանա-
ւանդ ազոխոքի ջուրը, որուն նախապատուութիւն կուտայ գիւղա-
ցին՝ միւսներէն:

Թարմ ուղտիկն ջուրէն սխտորով խառն արգանակ մը կը շինեն և պահոց օրերը, մէջը հոյք բրդելով, դգալով կ'ուտեն: Իսկ սւախք օրերուն ալ խորոված մսի հետ կ'ուտեն իբրև մարսեցնող և տխոր-
ժարեր:

Այս փոքրիկ շեղումը, իր կարգին ընելէ յետոյ, կ'անդրադառ-
նամ չամիչի արհեստական պատրաստութեան: Յուլիս ամսուան
վերջերը, երբ արդէն չամչուկ խաղողը բուսկան հասունցած կ'ըլ-
լայ, սանախիկները՝ հարսներուն ու սղջիկներուն հետ, փոքր կաթ-
սաներ, շիրիկ, մաքուր մսխորաջուր, կամ նոյնիսկ կաղնիի մսխոր
միասին տանելով այգին կ'երթան, ու, չամիչի պատրաստութեան
կ'սկսին: Այգիին մէջակերը, նախապէս, գետինը, շուրջ 2-3 քառու-
կուսի մէջք տարածութեամբ կը հարթեն ու կը մաքրեն:

Կաթսաներուն մէջ մսխորաջուր կը լեցնեն, սրուն հետ կը խառ-
նեն 60 քիլօկրամ խաղողի համար 100 ախրէմ՝ շիրիկ, ու կուտցնե-
լու կ'սկսին: Մինչ մէկ կողմէն սանախիկներ ջուրը կուտցնելու դրո-
զած կ'ըլլայ, հարսներն ու սղջիկները չամչուկը կը կթեն (քաղել)
և իրենց գոգնոցներուն մէջ լեցուցած կը բերեն սանախիկն ու՞ր քով
կը հաւաքեն: Տանախիկներ, այս խաղողները, եթէ չամիչը քիչ քա-
նակութեամբ պիտի պատրաստուի, ուղիոյզ ուղիոյզ կ'ը՛կզմէ կուտցու
մսխորաջուրին մէջ, քանի մը վայրկեան մնալէ յետոյ այգուկս ընկզմ-
եալ վիճակին մէջ, կը հանէ և կուտայ հարսներուն կամ սղջիկնե-
րուն, սրունք, զայն՝ պատրաստած գետնին վրայ կը շարեն քով քո-
վի, սուանց իրարու վրայ դիզելու: Իսկ եթէ մեծ քանակութեամբ
չամիչ պիտի պատրաստուի, այն ատեն շատ մը ուղիոյզներ մէկ ան-
գամէն կ'ընկզմէ, կուտցու մսխորաջուրին մէջ: Այս դարձութիւնը
կը շարունակուի մինչև որ քաղուած կամ կրաւած, ինչպէս կ'ըսեն
իրենք, խաղողը սարսի: Այն ատեն կ'աթաց կեն. ժողովելով սուս
կը դառնան: Շուրջ 10-15 օր, մսխորաջուրով թրջուած ուղիոյզնե-
րը, այգիին մէջ, արևին ներքև փռուած կը մնան անշարժ, և սա-
տիճանաբար, պտուղները ցամքելով կը կանճին: Չամիչը այլևս
պատրաստած է: Պէտք է զայն սուս փոխադրել: Ինչպէս
տեսանք, սանախիկինն է որ չամիչը եփելու մասնագիտութիւնն ունի,
և այս մասնագիտութեան ամէնէն նրբին մասը կը կայանայ՝ ընկզմ-
մումին տեւողութիւնը լու գնահատուլուն մէջ, տսիկա, լայն փորձա-
սութիւն պահանջող կարողութիւն մըն է, սրովհետև եթէ՝ խաղողին
մսխորաջուրի մէջ ընկզմումի տեւողութիւնը աւելի կամ նուազ ըլ-
լայ, այն ատեն չամիչը լու չըլլար: Նոյնը նաև՝ մսխորաջուրած
խաղողներուն ցամաքումի տատիճանին մասին: Տանախիկներ, չամիչը
եփելէն 10 կամ 15 օր յետոյ այգին կ'այցելէ, աչքէ կ'անցնէ գետ-

նին վրայ տարածուած չամիչի սղկոյղները, երբ անոնց ցամաքումը բաւական գանկ, հրաման կուտայ իր հարմներուն, որպէսզի սուն փոխադրեն զայն:

Չամիչի փոխադրութիւնը հարմերուն ու սղջիկներուն համար ոչ միայն գիւտարին ու տաղաւկալի աշխատութիւն մը չէ, այլ, ընդհակառակն՝ հաճելի ժամանց մը կը համարուի միշտ. որովհետեւ, նախ ոչ, ընդհանրապէս մեծաքանակ չըլլար փոխադրելի չամիչը, երկրորդ որ, հարմներն ու շտապատ սղջիկները, որոնք, օրն իբուն գիւղին կամ տանը մէջ կաշկանդուած կ'ապրին, ազատօրէն ո՛չ կըրնան խօսիլ, ո՛չ կրնան խնդալ, իրենց կեսուրին կամ կեարայրին, կամ նոյնիակ մօրը ներկայութեան: Մայրերը բժախնդրութեամբ կը հսկեն իրենց շտապատ և անշտապատ սղջիկներուն նիւս ու կացին, շարժումներուն, խօսակցութեանց ու նոյնիակ արատայտութեանց և զանակին վրայ. կը սաստեն, և անոնց ստաւը, պատգամ է: Այս վիճակին մէջ սպրտը շտապատ սղջիկներու և հարմներու նոյնիակ քունի մը տարիներ տալ տալուցս կ'իններու համար, այգեզնայութիւն մը, յիշեալ պայմաններուն մէջ, հաճելի արձակուրդ մը կը համարուի Այգի... Ինչ գեղեցիկ վայր, որ իր կանանչ ու ժպտուն տերեւներուն տակ կը ծածկէ դեռտախներու ազատ խօսակցութիւնները, ժպտները, կատակները: Ծամբուն երկայնքը անզգայի կ'ըլլայ իրենց, կ'ուզեն որ ան ո՛ր տակ ի երկարէր: Կրնայ պատահիլ որ կատակները քիչ մը լրջութեան փոխուին, այն տակն իբարու շտապատ, կամ լիախ հայնայութիւններ ընելէ զգոյշ կ'ըլլան: Միայն, եթէ իրարու դէմ շտապատ կանան, իբարու ՏՐՎ կամ քոմ շուն ... կ'ըսեն: Մէկը անոնցմէ տեղի տալով կը լուի, միջազէպը կը դադրի, և ժամ մը վերջ քէնը կ'անհետի, առանց մինչեւ սուն հասնելու, որովհետեւ եթէ մեծերը լսեն, կամ գիտնան, վա՛յ անոնց. կը յանդիմանուին ծանրապէս, և, իրենց արժանապատուութեան զգացումները խորապէս կը տանջեն զիրենք: Վէճը, ուրեմն, տեղւոյն վրայ իսկ կ'անհետի, որովհետեւ վիճորդները ո՛չ միայն չեն ուզեր իրենց մեծերէն յանդիմանութիւններ լսել, այլ չեն ուզեր որ գիւղացիներէն ուր օտար անձ իրենց մասին աննպատակ խօսք մը խօսելու սուխ ունենայ:

Այգի համակը, կ'սկսին չամիչները ժողովել իրենց կուզկապներով միասին: Սուաններու մէջ կ'ամփոփեն զանոնք, և շարկելով սուն կը փոխադրեն: Ետտ չեն կրնար յամենալ այլեւս, որովհետեւ տանախնոջ կողմէն, իրենց ժամանակը հաշուրւած է միշտ. ու անուկան գործեր ալ մինչեւ իրենց վերադարձը տակախուած կը մնան:

Փոխադրութեամբ դեռ չամիչի գործը շուտախորհ: Տանախկներ,

բորբը իր շուրջը հաւաքած կը նստի, իր տաջեւ ունենալով շամիչի
 ասեւնները: Նոր աշխատութիւն մ'ալ կայ կատարելիք: Բողորը
 միասին, զանոնք իրենց կուզկապներէն զատելով կ'զբաղին: Այս
 աշխատութիւնն ալ կրնայ տեւիլ կամ նաւազ երկարատեւ ըլլալ,
 շամիչին քանակութեան համեմատ: Կազկապներէն զատելէ յետոյ,
 խաչորները մանրերէն կ'անջատեն. ինչպէս նաեւ անոնց մէջ զանաւազ
 ազոխչորեր, որոնք տնտս կամ խակ սխուղներ են չորցուած վիճակի
 մէջ: Անջատումներու այս գործն ալ աւարտելէ յետոյ, ասնաթիկիւր,
 անոնցմէ իւրաքանչիւր կոչաք, աւանձին կաշտաներու կամ կտակու
 մէջ կ'ամբռնէ (կը տեղաւորէ), և, որպէսզի, չորքատանի կամ երգո-
 սակի մակերը... անոնց չմտնեան, բերանները իրենց խաւիկիւր
 ծածկելէ յետոյ կաշկիւրով կը շեխէ (կը ծեփէ): Ասիկա ձմրան պո-
 շոր է, հետեւ սրաք, ձմրան եղանակին միայն շամիչ կաշտաններուն
 բերանները պիտի կրնան բացուիլ:

Չամիչը, Բալուի գիւղերուն մէջ, ընդհանրապէս շամագործու-
 թեան իբր նիւթ ծուռացած չէ. հազուադիպօրէն միայն, երբ շատ ա-
 ստա ըլլայ, այն ատեն մաս մը, աւելցած իրենց ձմեռնային պաշտ-
 րէն, չնչին գնով մը կը ծախեն, կամ կը փոխանակեն աւրիշ պիտայք-
 ներու հետ: Չամիչին յորը (շուրջ 7 ազէս քիզոկրամ) 1-5 թրքու-
 կան գանկանի կրնային ծախել, մէկ գանկանը չորս մէթալիք հաշ-
 տելով կամ շուրջ հինգ կրամ արծաթի համարժէք նկատելով:

Ասիկա, իբր չոր պտուղ, կը պահեն ձմրան եղանակին համար:
 Ընդհանրապէս մանուկներն են որ կ'արտուն գայն. շաքիժուան ըն-
 թացքին քանի մը անգամ պէտք է որ իրենց գրպանները՝ ասնաթի-
 կինը՝ շամիչով, նաւշով և ընկոյզով լեցնէ: Երբեմն նոյնիսկ զանոնք
 կաշտակու դիտաւորութեամբ, կամ վարձատրելու համար, անոնց
 կամքը շահելու նպատակաւ:

Նոր տարուան, Գեղա. 31ի, երեկոյին է որ կարտաներու բու-
 ցումը կը կատարէ ասնաթիկիւր, որու բացարձակ իրաւունքն է ո՛րեւէ
 կարտսի կամ կտտի քերան բանալը կամ գոցելը: Այդ երեկոյին,
 ան, ո՛չ թէ շամիչը ասիով կը բաշխէ, այլ գողնացը զեփ զեցուն,
 խաւնուած նաեւ՝ նաւշի, ընկոյզի, չոր թուփի և բախչի հետ, դուրս
 կազայ մտանէն (խզէն), և սեղանին վրայ կը պարպէ գողնացին չոր
 պտուղները, հոն կը դնէ նաեւ պտտակիսի ծալերը, այն ատեն, ասն
 ամբողջ բնակչութիւնը, կազանդի այդ սեղանին մասնակից կ'ըլլայ:

Կաղանց բաւը կը նշանակէ Բալուի բարբառին մէջ, նոր տար-
 ւոյ ասիւիւ արտելիք նաւէր, որ կ'ըլլայ ընդհանրապէս չոր պտուղ
 և մանուշարապէս զարդ ու աւարկաներ կամ գործածութեան համար:

կերպասեղէններ, թաշկինակ եւն: Կալընսել բայը, որ ներգործակամ
սեւով կը գործածուի, կը նշանակէ՝ կաղանդի օր մէկու մը նուէր-
ներ սալ: Նոր ասուոյ գիշերը կը կաղընտեն նաեւ լծկան կենդա-
նիները:

Չամիչով կ'եփեն նաեւ խուշապ, հետը խաւնելով մթամբչոք որ
կ'ըլլայ թթուանուշ գովացուցիչ մը, զոր եղինծին կամ ուրիշ՝ պա-
հոց կերակուրներու հետ կ'ուտեն:

Չամիչի պատրաստութեամբ, գիւղացին կ'ուշննայ այգիներու ա-
ռաջին բերքը իբրեւ սան լիցք կամ ձմեռնային պաշար:

Անցնելէ առաջ խաղողի ճարտարարուեստին կամ անոր քաղ-
ցունն այլեւայլ գոյափոխութեանց ձեւով կիրառութիւններուն, հարկ
կը համարիմ քանի մը խօսք ալ գրել՝ այգիներու պահպանութեան
մասին, զոր ցանքերու և պարտէզներու պահպանութենէն աւելի կո-
րեւոր և աւելի գծուարին գործ մը կը համարի գիւղացին:



ԻԳ. ԳԼՈՒԽ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Ժէ.

ԱՅԳԵՊԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԱՅԳԻՆԵՐՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Քիւղի մը բոլոր այգիները իրարու կից ըլլալով այգեատանը կամ եգիպտացի ինչպէս կ'ըսեն անոնք, — կը ձեւացնեն: Էգիպտանը, ընդհանրապէս, անթափանցելի ցանկապատով ապահովուած չեն ըլլար. և չեն ալ կրնար ըլլալ, որովհետեւ գիւղացիներուն համար 2—3 քիլամէթր երկայնութեամբ ցանկապատ մը շինելը անխոխարի- նելի ծախքերու պատճառ պիտի ըլլար. բայց անոր շրջագծին ինչ ինչ մասերը, որոնք բանուկ ճամբաներու եզերքները կը վերջանան, մէկուկէս երկու մէթր բարձրութեամբ ցանկապատերով փակուած կ'ըլլան: Այս ուղեմերձ այգիները ոսփի սակ կը համարուին, «մեր էգին՝ ոտքի տակը» երբ կ'ըսեն, կ'ուզեն հասկցնել թէ՛ իրենց այգին ճամբու մը եզերքը կը գտնուի: Ոտքի տակ համարուող այգիները փորձութեանց ... ենթակայ են. հայ կամ քուրդ ուղեւորներ մանա- ւանդ, շատ կարճ շեղումով մը կը փորձուին յաճախ այգին մտնելու, և առանց այգեպանին հաւանութիւնն ունելու, խաղող քողելու: Այս պատճառու է որ ճամբաներու եզերքները չոր պահ մը կամ փուշերէ ցանկապատներ կը շինեն, ոտքի տակ ելող այգիները ա- պահովելու համար, քանձգութեանց դէմ:

Շրջագծին մնացեալ մասերը, որոնք ճամբաներէ հեռու կը մնան, բոլորովին առանց ցանկապատի կը մնան. այնպէս որ, այդ սահման- ներուն մօտ արածող նախիրներ, կամ սլխարներ, անարգել կրնան մտնել այգիները և աւերներ պատճառել:

Ուրեմն, գիւղի մը բոլոր այգիներուն պահպանութեան գործը միանգամայն ստանձնող մէկ կամ երկու անձեր պէտք են: Ասոնց պաշտօնը պիտի ըլլայ, այգիներուն կտրուելէն և սարքինուելէն ան- միջապէս յետոյ, ցերեկն ի բուն, իսկ ծաղկելու և սողոխ բռնելու շրջանէն սկսեալ մինչեւ այգեկոթ, գիշեր ցորեկ աչալուրջ հակա- ղութիւն կատարել, այգիները անախորժ հիւրերու այցելութեանը

դէմ ապահովելու համար Այս գրադոււմը՝ շուրջ հինգ ու կէս ամիս կը տեւէ:

Գիւղին մէջ, միշտ, ճուարակներէն մէկը կամ երկուքը պիտի գտնուին, այս պաշտօնը ստանձնելու տրամադիր: Գիւղացիները, երեկոյին ժամուն գուռը կը հաւաքուին, — որովհետեւ հոն կ'ըլլայ երբեմն ժողովասեղի, իսկ ձմեռ եղանակին ալ՝ ախոռներու սաւունքերը կամ ձիթիհանքերը. — մելիքներն ու ազգեցիկ անձերը, իբրև գիւղացիներու վաստակաւորները վայելողներ, կ'ընտրեն խնդրանքներ կայացնող կամ նոյնիսկ տեղւոյն վրայ յօժարութիւն յայտնողներէն մէկ երկուքը խորեւ պաղպանջի (այգեպան): Անոր վեցամսայ, վարձքը կ'որոշեն, և բոլոր գիւղացիներուն լիը յայտարարեն՝ թէ՛ պաղպանջիին անունը և թէ՛ իւրաքանչիւր այգեատէր ընտանիքի վըճարելիք վարձքին քանակը, համեմատելով անոնցմէ իւրաքանչիւրին ունեցած այգիներուն թիւին: Կը սրտասնի երբեմն որ քուրդ այգեպաններ ընտրուին, երբ հոյեր չգտնուին:

Այգեպաններուն վարձքը բաի թէ արմաթով կը հասուցուի. իւրաքանչիւր այգիի համար երկու դոլ կամ կէս չափ ցորեն, գարի կամ կորեակ կ'ըլլայ: Երբ այգեպանը քուրդ ըլլայ, կորեկը կը նախընտրէ. անոնք որ կորեկ չեն ունենար, գարիով կամ ցորենով կը հասուցանեն: Հաշուազիպօրէն գրամով կը վճարեն:

Վարձքերը կը հասուցուին կամ կաշերու ժամանակ, կամ աշնան վերջերը, երբ այլևս անոր պաշտօնը աւարտած կ'ըլլայ:

Այգեպանները կամ պաղպանջիները, որպէսզի կարենան քիչ յոգնութեամբ, և անվրիպելի կերպով իրենց հսկողութեան գործը կատարել, պէտք է որ յարմարագոյն դիրք մը ընտրեն, ուրկէ մէկ ակնարկով կարենան բոլոր այգիներն ալ անվրէպ աննել:

Յարմարագոյն կը համարուին ամէնէն ցած կամ ամէնէն բարձր դիրքերը, որոնց առջեւ կը տարածուին բոլոր այգիները, և որոնցմէ ամէնն ալ տեսողութենէ չեն վրիպիր: Ընդհակառակն, եթէ այգեպանը շատ ընդարձակ ըլլայ և տարածուի անկանոն կամ խորտաբորտ գեանի մը վրայ, այն տանն մէկէ աւելի դիրքեր կ'ընտրեն իրենց հսկողութեան իբր կեդրոն ծառայելու համար:

Այս դիրքերուն վրայ կը շինեն մէկական խուղ հետեւեալ կերպով. ընտրուած տեղւոյն վրայ, 5-6 մէթր երկայնութեամբ չորս գերաններ կը կանգնեն, քառակուսի ձևով: Ասոնց ծայրին մօտ կը շինեն քառանկիւն անակ մը ծառի ձիւղերով ու տերեւներով, և չորս երեսներուն վրայ մէկական սրտուհան կը թողուն, ուրկէ պաղպանջին պիտի հսկէ ամէն կողմերու վրայ: Անկանոն ձևով սանդուխով մը կարելի կ'ըլլայ միայն հոն բարձրանալ:

Մինչեւ որ թատուակներուն ազոխ բռնելը, այգիներու հսկողու-

թիւնը կատարելի դիւրին կ'ըլլայ, որովհետեւ մինչեւ այն ատեն, անոնց անբողձալի և սրտասհական հիւրերը միայն կենդանիները կըրնան ըլլալ, ուստի ցերեկեայ հսկողութիւն մը կը բաւէ այգիները անոնց դէմ ապահովելու համար: Բայց երբ աղայրբերն հասուենալու նշան կուտայ, այլևս սրտնորոգներուն կամ սրտզարնչիներուն մասնագութիւնը կ'աւելնայ, հսկողութիւնը կը դժուարանայ, որովհետեւ, գիշերային անբողձալիներու այցելութեանց շրջանն է որ կ'նկսի և կը տեւէ մինչեւ այգեկութ. պէտք է, միշտ, գուրտուն այցելութիւնները կանխելու համար գիշերներն անքուն անցնել, այգիէ այգի քափառելով, հոս, հոն, ազուէսներու, ճագարներու կամ կրիաներու հունամ շնկոցներուն դարանակալ ըլլալով, կարծելով որ գողերու գողտագողի գնացքներու շնկոցներ ևզամ ըլլան անոնք: Այսպիսի հսկողութիւն մը կատարել մէկ երկու անձերու միջոցաւ նիւթապէս անկարելի է. մանաւանդ, գիշերները, որովհետեւ, գողերը մութէն օգտուելով կրնան այգիները մտնել, և սրտաստանները, անկարելի է որ կարենան անոնց մուտքը տեսնել, և կանխեն անոնց շտատակութիւնները. ուստի, խողովներու շրջանին, գիւղացի երիտասարդները, զինուած, փոխնիփոխ, ամէն գիշեր, արեւը մտրը մտնելուն պէս, ութական կամ տասնական այգեստանը կ'երթան, և պահուորդութեան գործը կը դիւրացնեն սրտզարնչիին աւաջնորդութեամբ: Անոնք այգի հասնելուն պէս, գլխաւոր գիրքերը կ'որոշեն այգեստանի շրջապատին մօտերը, և բամբուկով երկուական անձերու, մինչեւ լոյս աչալուրջ կը հակեն, և արշալոյսին մօտ գիւղ կը դառնան: Գիւղացիները դեռնին տկանջ տալով կրնան հեռուները գտնուողներու ռանտայնը, կամ խօսակցութիւնները լսել, մանաւանդ գիշերային լութեան մէջ: Այս միջոցը կը գործածեն նաեւ այգիներու պահպանութեան շրջանին:

Անոնք երբեմն որոգայթի մէջ կը ձգեն աւազակները, որոնք զէնքով, հրացանով, տարձանակով կը հարկադրուին: մերթ դիմադրելու, ձերբակալուելէ խուսափելու համար: Այսպէս, զինեալ դիմադրութեան մը ընթացքին, հրազեններու պայթիւնները մինչեւ գիւղը կը լսուին, ու գիւղացիները իսկայն կը հասկնան թէ այգիներու մէջ յարձակում կայ. երկաթի կտոր մը գտնողը այգի կը վազէ պահուորդներուն օգնելու համար: Մինչեւ անոնց ժամանումը ստկայն, կամ աւազակներէն մէկ երկուքը բռնուած կ'ըլլան, կամ փոխած կ'ըլլան: Այս դիմադրութեան միջոցին կը սրտասի որ վերաւորներ ալ գտնուին, նոյնպէս կրնայ սպանութիւն պատահիլ, ո՛չ մէկ կողմը տակայն կառավարութեան կը դիմէ, գողերը արդէն չեն կրնար անոր դիմել, իսկ հայերը գիտեն թէ՞ կառավարութեանէն ներս յանձին իրեն, ո՛չ իրաւունքը և ո՛չ նոյնիսկ բացարձակ արդարութիւնը տալըն:

Չսկսած թիւն չեն վայելեր: Հոն, հայր արհամարհելի է՝ որպէս գիւղացի, որպէս հայ և որպէս այլակրօն. ուստի ան կը վախնայ նոյնիսկ կառավարութեան մօտ արդարութիւն փնտռելու երթալու: Հետևաբար վերաւորուողը ցաւը կը քաշէ մինչև որ դարմանուի, իսկ մեռնողն ալ աւանց բժշկական տեղեկագրի կամ կառավարական քննութեան կը թողուի: Իրերու սահմանը հոտ կը վերջանայ:

Հսկողութեան գործին՝ գիւղացիներու արտասովոր մասնակցութիւնը կը շարունակուի մինչև այգեկութ. այգեկութը սկսելու երեկոյին իսկ վերջ կը գտնէ ան:

Պաղպաղիկն սովորական կամ ցերեկեայ հսկողութեան սահմանին մէջ կ'իջնան նաև նոյնինքն գիւղացիները: Ան իրաւասութիւն ունի արգիլելու մէկը՝ որ իր դրացիին այգին չմտնէ, աւանց անոր հաւանութեան, հսկառակ պարագային, եթէ մէկը անոր հրամանին կամ յարուցած արգիլքին դէմ անտաստէ, գիւղին աւագանին կամ մեկիքներուն կը տեղեկացնէ, ասանք հարկ եղածը կը կորագրեն յանցաւորին նկատմամբ՝ կամ տուգանքով մը, և կամ հաշտարար կ'զանակով:

Պէտք է ըսեմ թէ՛ գիւղացիները օրինապահ և կորգապահ են. հազուադէպ պարագայ մը կը համարուի կարգի կամ անի դէմ անտաստութիւն մը, եթէ՛ գիւղերու մէջ իրենք ունենային բանա և արգառ ու սղղամիտ սատիկանութիւն, ասորիներով այդ բանաը փակ պիտի մնար աւանց բանասրկեալի:

Խաղողներուն հասուննալէն մինչև այգեկութ տեւող շրջանը, գիւղացիներու՝ մանաւանդ քաղաքացիներու համար շատ հաճելի ժամանակ մը կը համարուի: Ամէն կիրակի առտու, իսկ քաղաքացիները ամէն երեկոյ, իրենց զբոլումներէն յետոյ, այգի կ'երթան: Գիւղացիները իրենց ճաշը հոն կ'ընեն, և մինչև երեկոյ զուարճանալէն յետոյ կը վերադառնան: Այլ է սակայն քաղաքացիներու պարագան: Ասանք, այգիներուն մէջ կ'ունենան գեղեցիկ հնձաններ, որոնք ոչինչով կը տարբերին քաղաքին տուներէն, նոյնիսկ անոնցմէ ալ գեղեցիկ, բարեձեւ, կոկիկ ու հանգստաւէտ: Ամառն ի բուն հոն կը գիշերեն: Առաւօտուն արեւը ծաղկուն պէս քաղաքը կ'իջնեն իրենց գործերով պարտապելու, և երեկոյին, դեռ արեւը մարը չմտած, այգի կը վերադառնան: Հոն, դրացիներով կը հաւաքուին, օղխամելով ուրախութիւններ կ'ընեն և ապա իրենց ընթրիքը կ'ընեն, որ մտեղէն կերակուրներով բաւական ճոխ կ'ըլլայ:

Հնձանները (հնձան) սովորապէս երկյարկ գեղեցիկ ամառանոցներ են: Եւ ունին տան մը բոլոր պէտք եղած բաժանումները. սենեակներ, դահլիճ, մառան ևն: Շատ մաքուր կը պահուին, արդէն մաքրասիրութիւնը, բալուցիներու, մասնաւորապէս քաղաքացի կի-

ներու վրայ էն առաջ աչքի դարնող առաքինութիւններէն մէկն է : Անոնք, ուրեմն, գարուն ըլլալուն պէս, այգիներուն բացուելէն, կտրուելէն և սարքինուելէն անմիջապէս յետոյ, իրենց հնծանները կը փոխադրուին, ուր կ'անցնեն մինչև այգեկութի վերջերը :

Գիւղացիներու պարագան նոյն չէ. առնք այգիներու մէջ հըն-
ձաններ չունին. և հետեւաբար հոն չեն գիշերեր, բացի պահնորդնե-
րէ : Արդէն այգ շրջանը իրենց ամէնէն շատ բազմազատ ամիսնե-
րէն կը բաղկանայ, և ստիպուած են արշալոյսին հետ կալը կամ
դաշար գտնուելու, իրենց համար զուարճութեան օրեր չկան, բացի
կիրակի օրերէն, երբ դարձեալ դժուար է իրենց կալերէն հեռանալ :
Ապահովութեան տեսակէտով ալ, քաղաքը, մասամբ, գիւղերէն առա-
ւելութիւններ ունի, մանաւանդ որ քաղաքի տուները, աւելի լաւ
պաշտպանուած կ'ըլլան քան գիւղի տուները, ուր գողեր շատ
դիւրութեամբ կրնան մտնել՝ պատէն մագլցելով կամ նոյնիսկ դրան
բանալիներ, մազէ բանալիներ յարմարցնելով : Ասկէ զտա, քաղա-
քացի թուրքն ալ շատ հակամէտ չէ այսպիսի արկածախնդրութեանց
մէջ նետուելու մինչդեռ քուրդերը թելադրուած կարգ մը աղաներէ
կամ պէյերէ, յաճախ գիշերային գողութիւններով կը հարկադրեն
գիւղացին, որ տունը անպաշտպան չթողու :

Այգետէրերը իրաւունք ունին իրենց այգիներէն խաղող քաղե-
լու շարժումն ընթացքին և տուն տանելու միայն ուսելու համար :
Բայց իրաւունք չունին օրէնքով սահմանուած մամոնակէն առաջ,
այսինքն տասանորդումի պաշտօնական ձեւակերպութիւնները դեռ
չկատարուած, այգեկութ ընելու : Պաղպանչին իրաւունք ունի ար-
գիլելու իսկոյն, կասկած յարուցանող նմանօրինակ դէպք մը : Բայց
ո՛չ ան իր իրաւասութիւնը շարաշար կը գործածէ զայն չափազան-
ցութիւններու տանելով, և ո՛չ ալ գիւղին հասարակութիւնը տեղի
կուտայ այգպիսի դէպքերու, որոնք այսպանելի են գիւղացիներուն
համար. ուստի. անոնց ու պաղպանչիներու միջև իրերը միշտ ներ-
դաշնակ ընթացք մը կ'ունենան. առանց յաճախապէս վէճերու, ան-
համաձայնութեանց և շարունակական գանգաւաներու :

Պաղպանչիութիւնը, (այգիներու պահպանութիւնը) ուրեմն, աւել-
ի դժուարին ու փափուկ գործ մըն է քան՝ հովուութիւնը, ուլով-
նութիւնը (ուլերու երամակները արածելու պաշտօն կամ զբաղում),
եղնարօտութիւնը (եղնարածութիւն) և նախընտրութիւնը :

ԻՅ. ԳԼՈՒԽ

Մ Շ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

ԺԸ.

Է Գ Ե Կ Ի Թ (Ա Յ Գ Ե Կ ՈՒ Թ)

Հաստենցած խաղողները, մինչև վարագայ Խաչի Տօնը, այն է անարտեմքեր ամառն վերջերը, որթաառուկներուն՝ վրայ կը մնան: Ասկէ յետոյ է որ օրէ օր կ'ապաստուի այգեկուծի պաշտօնական ձեւակերպութիւններուն: Էգին մսնել, էգին կրել, էգիները մսնել, նոյն խմատը ունին, և կը նշանակեն Այգեկուծ ընել: Այգեկուծը, բոլոր գիւղերը միախամանակ չին ընել, լեւնային գիւղերը, ուր ամառն ի բուն բարեխառնութիւնը վար է բողբոսամամբ գաշտային այգիներուն, միշտ աւել խուշ էգիները կը մսնեն: Բայց, միեւնոյն գիւղին մէջ, բոլոր այգեատերերը միասին պարտաւոր են էգեկիթ ընելու, չեն կրնար ատրեր ժամանակներու մէջ ընել ինչպէս հաւնձքերը կ'ընեն: Որովհետեւ պաշտօնական արտօնութիւնը գիւղին բոլոր այգիներուն համար կ'առնուի, և նոյն օրն իսկ պաշտօնական պաշտօնը վերջ կը գանէ, անկէ յետոյ պահպանութեան գործը անկարելի կը դառնայ, և յապաղող այգիները անապահայ կը դառնան աւարառութեանց ու քանդումներու դէմ:

Ինչպէս կալը, այնպէս ալ այգին, բանջարանոցը, ասուտները (Առուոյտի արանը), խոտերը, ծառատանները ստասմորգումի ենթակայ են: Ինչպէս կալի գլխուն մէջ բաշտարեցի չափելու օրինական պայմանները, կառավարութիւնը, օրէնքով պիտի ստանայ նաև խաբողին ստասմորգը, կամ տուրքը զոր գիւղացիները պաղար կ'անուանեն:

Երբ ցանքերը հաստենալու մօտ կ'ըլլան, մէկ երկու շաբաթ առաջ, կառավարութիւնը կ'սկսի ստասմորգումի պաշտօնական գործողութիւններով պարտապելու: Նախօրօք արուած պաշտօնական յայտարարութեան մը համաձայն, ստասմորգ գնելու արամագիր եղող ունեւորներ, սրոշուած օրը կառավարական շէնքին բակը կը հաւաքուին: Հոն, կառավարիչին նախագահութեամբ գումարուող վարչական ժողովին կազմը (Իտարէ մէճլիսի), սրուն մէջ ներկայ կ'ըլլան նաև գաւառին Առաջնորդը և երկու ուրիշ հայ անդամներ, գիւղերը

անո՞րդի կը հանուիս գիւղերը աճուրդի հանել կամ աճուրդով ծախել տասցուածին պաշտօնական խնամար անոր բոլոր բերքերուն տասանորդին վաճառումը կը նշանակէ : Մունետիկը կը յայտարարէ բարձրաձայն, ի լուր ամէնուն, թէ այսինչ գիւղը աճուրդով կը ծախուի, ու որ կ'ուզէ գնել, թող գին մ'աւաջարիէ : Թեկնածուները յաջորդաբար աճուրին կը մասնակցին, խնդրոյ աւարկոյ գիւղին վաճառման գինը տասնամարտը կը բարձրանայ, գնորդներ ետեւէ ետեւ տեղի կուտան կամ ձեռնիմափ կ'ըլլան և աճուրդը կը մնայ մէկ կամ երկու անձի վրայ : Այն տան թեկնածուն կամ թեկնածուները հարկ ելած երաշխաւորութիւնները տալով պատկանեալ պաշտօնատան, աճուրդի մուրհակը կ'ստորագրեն : Այս գործողութենէն յետոյ, աճուրդը ստորագրողներուն կը պատկանի այլևս գիւղին բոլոր բերքերուն տասանորդը :

Տասանորդի այս վաճառումը, իւրաքանչիւր գիւղի համար, տարին մէկ անգամ միայն տեղի կ'ունենայ, ու, այս մէկ վաճառումով կամ աճուրդով վաճառման մաս կը կազմեն՝ կալը, բանջարանոցը, խոտերը, ծառատանը ևն : Ուրեմն, այն շահնան կամ շայնան որ կալը չափած է, պիտի տասանորդէ նաև նոյն գիւղին այգիները՝ այգեկութէն առաջ :

Այգիներու տասանորդումը հետեւեալ կերպով տեղի կ'ունենայ :

Այգեկութէն քանի մ'օր առաջ, շայնան գիւղ կուգայ գիւղացիներուն հրաւերին համաձայն : Հոն նախնական խօսակցութիւններ մը կը փոխանակուին՝ անոր և գիւղին մեկիքներուն կամ ըէսին միջեւ . որմէ յետոյ, իրենց հետ միասին առնելով քանի մը անձեր ալ որպէս գնահատող (մուխամին), ինչպէս գիւղին գլխիւրը, գրադիւրը և այգիներու տէրերէն քանի մը գլխաւոր անձեր ալ, ու այգեստան կ'երթան : Հոն, բոլոր այգիները աչքէ կ'անցնեն, թէեւ նիւթապէս անկարելի է բոլոր որթատունկերը աչքէ անցնել մէկ մէկ գնահատելու համար, ուրեմն, գնահատութիւնը վեր ի վերոյ տեղի կ'ունենայ հետեւեալ կերպով, իւրաքանչիւր այգիի քանի մը որթատունկերը միայն աչքէ կ'անցնեն, և անոնց խաղողին քանակութեան հետ համեմատելով ամբողջ այգիին բերքը, գնահատուները (մուխամին) կը յայտարարեն ըսելով, այս այգին 120 լիւր խաղող կը պարունակէ օրինակի համար :

Շայնան.— Ո՛չ, այս այգին 160 լիւր խաղող կ'ընայ տալ կը պատասխանէ, ուստի տար վրայ՝ իմ տասանորդի իրաւունքս 20 լիւր կ'ընէ :

Գնահատողները.— Ո՛չ, ա՛ղա, այս այգին այնքան խաղող չի կ'ընար տալ, հարկը 100 լիւր կուտայ :

Օ՛հ, չէ՞ք տեսնէր ինչպէս որթատունկերը ողկոյզներով ծանրաբեւուած են. ամէն մէկուն վրայ երկու երեք լիւր խաղող կայ . . .

կ'ըսէ շայնանս :

Քնահատուները եթէ ուզեն այգիին տէրոջ խնայել, կը պնդեն իրենց գնահատութեան վրայ, և շայնան ճարպիկութեամբ կը տանին ուրիշ այնպիսի որթատունիերու մօտ, որոնց վրայ կամ խաղող չկայ կամ շատ քիչ կայ :

— Խիղճ ըրէ, ա՛զա, տե՛ս, սա որթատունիերը, որոնք շատ քիչ խաղող ունին կամ բնաւ չունին, ու գիտցիր որ այնպիսիներ շատ են այս այգիին մէջ, շնորհք ըրէ. այս մարդուն, կ'ըսեն գնահատուները և վերջապէս երկուստեք համաձայնութիւն կը գոյանայ, և գրնահատութեան քանակը այսպէս ճշտուելով կ'արձանագրուի երկու տարակներու մէջ, որոնցմէ մէկը գիւղին գրադրին քով կը մնայ, ոսկի միւսը՝ շայնային :

Այսպէս այգիէ այգի անցնելով իրենց գնահատութիւնները կ'ընեն ու կ'արձանագրեն : Եթէ գնահատուներէն ոմանք այգեատէրերէն մէկուն հետ հին հաշիւ մը ունին, կա՛նքէնով են, վա՛յ անոր. շայնան կը պատպնեն որթատունիերու այն պարտններուն առջեւները, որոնք ուղկոյղներու անսովոր աւատութեամբ մը ծանրաբեռնուած են : Քնահատութիւնը տարապայման կերպով բարձր կ'ըլլայ, համաձայնութիւնը կամ տեղի կ'ուննայ ի վնաս այգիին տէրոջ, և այս կերպով գնահատուն, կա՛ն գնահատուները իրենց վրէժը լուծած կ'ըլլան իրենց հակառակորդէն, և կամ առկախ կը մնայ, այն պարագային, երբ գիւղին ըսը, կամ մելիքները միջամտեն ի նպաստ այգեատէրոջ :

Փոքր շեղումով մը ըսեմ թէ՛ մերթ գիւղացիները իրենք իսկ միջոց կը դառնան իրենց գրայիններուն հարստահարուելուն : Պէյերը այս պարագաները շահագործել լաւ գիտեն անոնց դէմ, ի վնաս ամբողջ գիւղին կամ գիւղացիներէն ոմանց :

Այն գնահատութիւնները, որոնց մասին համաձայնութիւն չի գոյանար, առկախ կը թողուին, մինչեւ որ բոլոր այգիներուն տասնորդումը աւարտի : Հոն, իրենց համաձայնութիւնները երկու տարակներու մէջ գրելէ և կնքելէ յետոյ, ամէնը միտաին, շրջապատած շայնան, գիւղ կը դառնան : Այն, որուն այգիին գնահատութիւնը առկախ թողուած է, սրտարատութիւններ տեսած է, շայնան, մելիքները, գրողիրն ու գնահատուները իր տունը ճաշի հրաւիրելու : Մերժում չկայ... հրաւէրը յօժարութեամբ կ'ընդունուի :

Սեղանը պատրաստուած է, օղի կամ անցեալ տարուրնէ մնացած դդումով դինին դրուած է մեծկակ սկահակ մըն ալ իր կողքին : Կ'սկին, խմել մին կամ միւսը, շայնանները՝ ընդհանրապէս օղի խմելու հակամէտ են : Ժամանակը կը սահի՝ արտերու, այգիներու, ցանքերու շուրջ տեղի ունեցող խօսակցութիւններով, համարձակութեան չափանիշը կը բարձրանայ, և վերասպահ զգուշաւորութիւնը կը պակ-

սի, գլուխները քիչ մը տաքցած են արդէն Խօսակցութեանց շարքին, մեղիքներէն լեզուանին ու համարձակը սախիթէն օգտուելով սակախ մնացած գնահատութեան խնդրոյն կ'անդրադառնայ:

— Աղա՛, Աստուած օրեր տայ քեզի և զաւակներուդ, սա մեր Կրպօ աղբօր շնորհք մը ըրէ, և վերջացուը, քեզի աղօթող թող ըլլայ, այգիին տասանորդը որոշէ, եթէ սա շնորհքը չընես, ամբողջը աւարի կը արուի երբ միւս այգիները ամայանան, այն ստենն այէյին ալ մնաս կ'ըլլայ սա խեղճ մարդուն ալ, (պէյը բուն տասանորդը գնողն է, իսկ շայնան՝ իր պաշտօնեան կամ ծուան) կ'ըսէ մեղիքը: Ուրիշներ ալ, ուրիշ ձեւերու սակ ոյժ կուսան անոր խօսքերուն, ըսելով:

— Աղան բարեսիրտ է, մեր աղան է, մեր գեղը անոր բարիքները շատ վայելած է, մենք աւանց անոր չենք կրնար ըլլալ: Քիտենք որ անոր սիրտը փուխ է, չի մերժեր ... կ'ըսէ ուրիշ մը:

Պատասխանելու կարգը աղայինն է: Անանք, աղաները ընդհանրապէս շողոքորթուելու շատ հակամէտ են, ուստի, նախ, քիչ մը յօժարութիւնը կը յօսարդեցնէ, որպէսզի շողոքորթութիւնները իրենց չտիր գանեն, այն ստենն, կ'ըսէ. «Է՛հ, քանի որ այսքան կը թախանձէք, ձեր ըսածին պէս թող ըլլայ, և, գաւնալով այգիին տէրոջը, «գնա՛, սա մեղիքներուն աղօթէ, եթէ տանք չըլլային, այս շնորհքը պիտի չգանէիր... կ'աւելցնէ: Ասով սակայն մնացած համաձայնութիւնն ալ վերջ կը գանէ, գիւղին ու շայնային տեարակները կը փակուին:

Հացկերայթէն վերջ շայնան կը մեկնի գիւղէն: Մեղիքներուն հրամանին համաձայն, գիւղին գղերը բարձր տանիքի մը վրայ կեցած, բարձր ձայնով կը պոռայ. «Լսեցէ՛ք, գեղացի՛ք, բարբառ ալ լսեցէ՛ք հա՛, վաղը էգեկի՛թ ը, ամէն մարդ թող իր էգին կիթէ հա՛...» Վերջը չըսէք թէ չի լսեցի՛ք հա՛...»

Այս հրատարակային յայտարարութեան վրայ, գիւղը կարծես զսպանակով լարուածի պէս, մէկ ծայրէն միւսը կը շարժի, եւ ուզես մըն է կ'սկսի, նոյն այս յայտարարութիւնը կայծակի արագութեամբ շրջակայ քուրդ գիւղերն ալ կը սարսածուի:

Պատրաստութիւնները փութով սեղի կ'ուշնենան. սախիթներ, կարոցներ, սաւաններ, փալաս (կապերտ), նոյնիսկ անկողին, տապաս, կողով եւն, կը ժողվեն, էշերը, ջորիները կը փալկեն (համեալ): Նոյնիսկ այն ընտանիքները, որոնք իրենց աղջիկները հեռու գիւղերու մէջ ամուսնացուցեր են, իսկայն տան երխտատարդներէն մէկը կը զրկեն, որպէսզի փութայ և իր քոյրը, կամ հօրեղբօր աղջիկը էգեկիթի բերէ:

Այս պատրաստութիւններէն յետոյ, երեկոյին իսկ, լուսնի լուսով

յաճախ, այգեկուծի գնացողներու թափօշը կ'սկսի. գիւղին երեք չորրորդը, երխաստարդներ, հարսեր, աղջիկներ, մանուկներ, հարկ եղած աւարկաները էշերու վրայ բեռցուցած ճամբայ կ'երկեն, իրենց կը հետեւին նաեւ շուներն ալ:

Այգեկուծը հունձքին պէս դժնդակ չէ, ընդհակառակն շատ հաճելի, ածնակատարութեան նման դէպք մըն է, որ տարին մէկ անգամ միայն տեղի կ'ունենայ: Աշխատութիւնը ծանր չէ, ամբոն կիզիչ արեւը չկայ, բաղգատարար տանելի գովուծիւն մը կ'ունենայ այգիներու ստուերաշատ միջավայրը, ուր փոշի չկայ, և ամէն որթատունկ որ պիտի կթուի, կթուին համար բնական հովանոց մըն է գովարար ու խնկաբայր: Ասոր համար է որ գիւղին դեռտոթի սերունդին համար գուարճութեան ածն մըն է այգեկուծը:

Քանի մը գիշեր այգիներու մէջ կ'օթեւանին. այս միջոցին տուներն ալ անպաշտպան չեն թողուր: Աւաւտեան, արշալոյսին բացուելէն յետոյ, այգեկուծի կ'սկսին: Իւրաքանչիւր որթատունկի քով մէկական հոգի կեցած, զգուշութեամբ ողկոյզներու կտիւնները կը կտրեն մասնաւոր կարողներով, և իրենց տուել կտայտած գոգնոցները կամ սաւանները իբրև պարկ գործածելով, քաղուած ողկոյզները նախ անոնց մէջ կը լեցնեն, անոնցմէ ալ, խոշոր սափաթներու մէջ կը փոխադրեն յետոյ: Մինչ այգեկուծը կը շարունակուի մէկ կողմէն, միւս կողմէն ալ շափտնաս պատանիներ, էշերով կը թուած խաղողները խոշոր սափաթներով սուռն կը կրեն, և ներսի սան զանազան անկիւնները կը լեցնեն, իւրաքանչիւր տեսակի պատկանող ողկոյզներով առանձին կոյտեր ձեւացնելով:

Ճամբուն երկայնքը մեծ եռուղեռ և անտուր խանդավառութիւն կը աիրէ, երգը, լաւուզը, շերը կամ խաղը օդը կը թնդացնեն: Կ'երթան ու կը դառնան անդադար, այգիէն տուն և տունէն այգի:

Գիւղերու մէջ այգեկուծը քանի մը օր միայն կը տեւէ, որովհետեւ, գիւղացիին կալի զբաղումները դեռ ամբողջովին աւարտած չեն ըլլար, ու, դեռ ասոնք չաւարտած դաշտերու աշխատանքներուն պիտի վերսկսին: Արտերը պիտի հերկեն, որպէսզի աշընցանի (աշնանացան) պատրաստ ըլլան, հետեւաբար, որքան հնարաւոր է, կը ջանան այգեկուծը շուտով վերջացնելու: Քաղաքացիներու այգեկուծը ատար տասնեւհինգ օր կը տեւէ. որովհետեւ, ինչպէս ըսած եմ, կը կրկնեմ թէ անոնք այգեկուծը պարզապէս գուարճութիւններու և խնջոյքներու գեղեցիկ աւիթ մը կը համարեն, և այգեստան կ'երթան աւելի ուրախութիւններ սարքելու քան այգեկուծ ընելու:

Վերջին օրը, այլեւս, երբ որթատունկերը բոլորովին ողկոյզներէն մերկացած կ'ըլլան, վերջին ճառքաղն է որ կ'ընեն, ումանք

Իսկ ամէն աշխատութիւն տւարտած՝ կը պատրաստուին իրենց այգիին հրաժեշտ տալու, ամէն կողմ եւուզեալ կը դադրի, ուրախութիւնները կը չափաւորուին, խաղող կրողները էշերով, Զորիներով այլեւս չեն վերադառնար այգի, և եթէ տակաւին քիչ մը խաղող մնայ հոն՝ ան ալ հարսները սաւաններով շտկելով հրաժեշտ կուտան որթատունկերուն, քանի մը շաբաթ յետոյ վերստին գալու և գանոնք քաշելու պայմանաւ:

Տարօրինակ իրողութիւն. այգեկուծէն շաբաթ մը վերջ, անկարելի է առանց յուզումի այգիներուն այցելութիւն տալ, կարճ ժամանակի մէջ ինչպէս որթատունկերու այն ժպտուն կանանչութիւնն ու թարմութիւնը թօշնումի ու դալկութեան փոխուեցան, տերեւները սկսած են դեղնիլ, և վրդովիչ ամայութիւն մը կը տիրէ հոն: Ցերեկները եզնարօտները, կամ նախըր արածողները կը պտտին երբեմն, և որթատունկերուն վրայ խաղող կամ մուցուած ողկոյզի ճիւղեր գանկու:

Հսկակեմբեր ամսու վերջերը, դարձեալ այգիները կ'երթան, այս անգամ սարբինաները կը հաւաքեն և տուն կը փոխադրեն, առաջիկայ տարին գարձեալ գործածելու համար: Սարբինաները հաւաքելէ յետոյ, որթատունկին բոլոր ճիւղերը ի մի ամփոփելով, գետնին վրայ կը պսակեցնեն, վրան հող լեցնելով կը ծածկեն, և հողին վրայ ալ քանի մը քարեր կը դնեն, որպէսզի սեւէ պատճառով ճիւղերը հողէն գուրս չելնեն կամ գուրս չհանուին: Ասիկա՝ եգիպտէ քաշել կ'անուանեն, կամ եգիպտացի քաշել, բալուցիներու բարբառով: Այգիները կը քարեն աշունը, պարզապէս ձմրան ցուրտին դէմ ապահովելու համար: Որթատունկը ցուրտէն ամէնէն շուտ ազդուող տունկերէն է: Զմեռն ի բուն, մինչեւ գարունը այսպէս քարուած կը մնան ճիւղերը, գարունը կ'երթան դարձեալ գանոնք կը բօթուեն (քարին և հողին տակէն կը հանեն) կը փորեն, կը յօտեն և կը սարբինեն: Ամբողջ գուռաին մէջ, որթատունկը պաղաւտութեան վասնդէն զերծ պահելու համար այս միջոցը միայն կը գործածեն:

Գիւղացիները, երբեմն, այգեկուծի օրերուն, ձմրան համար խաղող կը պահեն: Գետինը կը փորեն, փոսեր կը բանան, այս փոսերուն մէջ խաղողի ողկոյզները զգուշութեամբ շարելէ յետոյ, փոսերուն բերանները անձանաչելի կերպով կը ծածկեն, այնպէս որ գուրսէն երբեք յայտնի չընեն թէ այնինչ տեղը խաղող պահուած է: Զմեռնային եղանակին կը հանեն փոսերէն թաղուած խաղողները, որոնք գրեթէ անխաթար վիճակի մը մէջ մնացած կ'ըլլան:

Այս կերպով խաղող պահելը շատ սովորական չէ, ուրիշ աւելի յարմար և ընթացիկ ձեւ մըն ալ կայ, որով տուններուն մէջ ալ կ'ընան բաւական քանակութեամբ թարմ խաղող պահել ձմրան եղա-

Դասկին ուտելու համար Այս մասին յետոյ պիտի գրեմք

Այգեկուծով, ուրեմն, այգիներու տշխատութիւնները վերջ կը գտնեն, և որթելու մտերը քաղելէ յետոյ, այլևս իրենց մտահոգութիւնները կը թեթեւան, ու կարգը կուգայ խաղողները բմելու (քամել), գինի հանելու, ըռուպ եփելու և ուրիշ քաղցրեղէններ, ինչպէս պաստիս, ռոնիկ, քեմե ևն սրտարտակու : Խաղողը, գիւղական տնտեսութեան մէջ, գիւղացիին համար ունի այն գերը ինչոր կը կատարէ թուծը, որա մասին այդէն գրած եմք :



ԻՋ. ԳԼՈՒԽ

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԽԱՂՈՂԻ ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԸ

Ա.

Այգեկեղութիւն կը յաջորդէ խաղողները Բնելու (քամեղու) տշխա-
տութիւնը: Գիւղի բոլոր այգեատէրերը իրենց ասն մէջ մասնաւոր
տեղեր ունին, ուր խաղողները կը քամեն: Այս մասնաւոր տեղերը
սալէ կ'անուանեն հիւսիսայինները, զուր կ'անուանեն հարաւային
կամ ձախափնեաց գիւղերը, ասնք ալ մեծկակ տաշախ մը մէջ կը
քամեն:

Սալքը մէկուկէս մէթը շոյնքով, երկու մէթը երկայնութեամբ,
և շուրջ 40 սանդիմէթը խորութեամբ արուեստական աւազան մըն
է, որուն յատակը սուրքարերով ծածկուած է, այնպէս որ ս'եւէ հե-
ղուկ չի թափանցեր գետնին մէջ: Կողերն ալ նայնպէս սուրքարե-
րով և ընտիր շոյտխով անթափանցելի դարձած են: Ասոր յատակը
իւր երկայնութեան վրայ քիչ մը շեղ է, այնպէս որ երբ մէջը հեղուկ
մը լեցուի ընտու չի լճանար, այլ, հաւաքուելով ստորին մասին մէջ,
անոր յատակին մօտ հաստատուած ազուգայէն, (կուշխան, ծորակ)
գուրս կը հոսի:

Կայ սալք որ վիմախոր է, ևս տեսած եմ Ձէթ գիւղի մէջ այս-
պէս վիմախոր հաս մը, որ շուրջ մէկ և մէկուկէս մէթը արամա-
գծերով և 30-40 սանդիմէթը խորութեամբ ձուածու և սրբատաշ
արարուեստութեամբ ահագին քարէ մը կը բազկանար: Տէրը, որ
վարպեա քարակոխի մը և վարպեա որմնագիրի մը եղած է միանգա-
մայն, մասնաւոր ճաշակ մը գրած էր իր այս գործին մէջ, որ թե-
րեւս այսօր փրատակներու տակ ծածկուած է անյիշատակ. օր մը,
անշուշտ, ս'վ գիտէ սակայն երբ, երեւան պիտի հանուի: Այդ սալքը
կոխուած է 1885 թուականին, և լեռնէն դոյզ մը հաւթկու գամէշնե-
րու լծուած սայլով մը, առն փոխադրուած է 1896 թուականին:

Գուրս կամ սաւեր փորուած մեծ կոճղ մըն է, որուն ծայրը ծո-
րակ մը հաստատուած է, խաղողը անոր մէջ քամելու տանն, զայն
այնպէս մը կը զեակղեն գետինը որ մէկ ծայրը քիչ մը բարձր ըլլայ

միւս ծայրէն, որպէսզի մէջի հեղուկը դիւրութեամբ ծորակէն կամ ազուգայէն դուրս հոսի:

Սալք, կամ գուռ կամ տաշտ, պէտք է որ գեանէն 20-25 սանդիւնէթր բարձր տեղի մը վրայ զետեղուած ըլլան, ազուգային կողմը քիչ մը ցած և հանդիպակաց կողմը քիչ մը բարձր ըլլալու դիրքով մը: Իսկ ազուգային առջեւ դարձեալ 30-40 սանդիւնէթր խորութեամբ փոս մը գտնուի. այնպէս որ երբ խաղողը քամուի, այս փոսին մէջ, ազուգային շրթունքին առկ կարելի ըլլայ աման մը դնել, որպէսզի գոյացած քաղցուն ամանին մէջ հոսի:

Քամելու համար կան մէկուկէս մէթր երկայն և մէկ մէթր լայն տուրակներ, որոնք կրնան մտնէ հիւսուած կամ պարզ կտուէ կտրուած ըլլալ:

Հսի թէ, խաղողները այգիէն տուն փոխադրուելէ վերջ, տեսակները զատ զատ տեղեր կը կուտակեն ներսի սան մէջ: Նախ սպիտակ խաղողը կը քամեն, որովհետեւ անոր կեղեւը հուրք է և չի կրնար երկար տանն անխաթար մնալ: Իսկ գինուկը ամէնէն վերջը կը քամեն, ինչպէս նաեւ խաչկողը: Գինուկին կեղեւը հաստ ու կարծր է, զանիկա շաբաթ մը եղածին պէս կը պահեն, մինչեւ որ «փլի», այսինքն կեղեւը կակուղնայ, և պատուտելու կամ քաղցուն դուրս գալու երեւոյթը ստանայ:

Քամելու գործողութիւնը հետեւեալ կերպով տեղի կ'ունենայ. վերը յիշուած պարկին կէսը խաղողով լեցնելէ յետոյ, սալքին մէջ կը դնեն, և քամողը, սաքերը լուսիէ յետոյ, բռնելով պարկին բերանը մէկ ձեռքով ոլորուած վիճակով, երկու սաքով կ'սկսի կոխտակելու, հեղուկը կամ քաղցուն սալքին մէջ հոսելու կ'սկսի, ու սալքէն ալ ազուգային առջեւ հախապէս դրուած ամաններուն մէջ, երբ մէկ ամանը լեցուի, կը վերցնեն զայն և ուրիշ մը կը դնեն անոր տեղը. մինչեւ խաղողին հատնիլը, կամ աշխատութեան ընդհատումը:

Քամողը կը շարունակէ կոխտակել, քաղցուն կը հոսի, և պարկին մէջ գտնուող խաղողին ծաւալը կը փոքրնայ: Այս պարագային, քամողը միշտ կ'ոլորէ պարկին պարանոցը զոր բռնած է ամրապէս, որպէսզի միշտ խաղողը պարկին մէջ պրկուած մնայ, և ասով քաղցուն հոսումը դիւրանայ: Այս գործողութիւնը կը շարունակուի մինչեւ որ այլեւս քաղցուն հոսելէ դադրի: Այն ատեն այլեւս հարկ կ'ըլլայ պարկը պարպել՝ դուրս թափելով անոր մէջ մնացած կուզկապը, կեղեւը և խաղողին կուտերը, որոնք, ամէնը միասին շիւք կը կոչուին: Երկրորդ անգամ դարձեալ պարկը խաղողով կը լեցնէ. ու նոյն ձեւով կը քամէ, այսպէս, մինչեւ որ վերջ գտնէ:

Մինչ մէկ կողմէն խաղողները կը քամեն, միւս կողմէն պահան-

Չտաէրեր, կամ քաղցուի գնորդներ՝ քաղաքայի, գիւղացի, քուրդ, զազա, պէյ, աղա դուռներուն առջեւ, էշերով կամ ջորիներով միասին կ'ապաստեն, որ իրենց պահանջները քաղցուով փոխանակուին։

Կամ եթէ գնորդ են, իրենց սակարկութիւնները վերջանան։ Գիւղացի այգեատէրերը ճամբու կը գնեն ասոնք կարգաւ, անոնց այսպէս կամ այնպէս դժուարեամ տալով։ Գիւղացին, որ իր գնումները ընդհանրապէս, չըսենք միշտ, փոխանակութեամբ կ'ընէ, իբրեւ փոխանակելի նիւթ սենի, արճեապուրիներու, ինչպէս գարբինի, կօշկարի, ներկարարի, հիւսնի, մանրալամաուի, կամ իբրեւ վարձք հասուցանելու՝ ծառաներու, մշակներու, պաղպանչիի, կղնարօտի, անգապանի, ուլովնիի, նախարանիի, հովիւի, կենի, ցորեն, գարի, սոս, քուշնայ, շուշմայ, քաղցու, կենս վերջինը ասոնցմէ՝ քաղցուն ըլլալով, անով այլեւս իր բոլոր հաշիւներուն մնացորդները կը փակէ, ու ինքիւր մէջ կ'ամփոփուի պահ մը իր մտահագութիւնները դարձնելով իր անակամ մնացած աշխատութիւններուն վրայ։

Թաղողը քամելու գործողութիւնները կ'աւարտին, պորտաքերը կը հաստուցուին, վարձքերը կը վճարուին և աւելցած քաղցունները կը մնան մեծ կաթսաներու մէջ։ Այս քաղցունները երկու կարգերու կը վերածուին․ գինուկին և խաշկողին քաղցունները խառն, առանձին կաթսաներու մէջ լեցուած կ'ըլլան, իսկ միւսները, ուրիշ կաթսաներու մէջ, առաջին տեսակէն գինի պիտի պատրաստուի, երկրորդը՝ ըռուպի և ուրիշ քաղցրեղէններու պատրաստութեան կը վերապահուի։ Անշուշտ, քաղցուն երկար ատեն կաթսաներու մէջ պահել կարելի չէ, որովհետեւ երկար մնալով կը թթուի, ուստի պէտք է անյատաղ գործի սկսիլ։

Հաս է գարձեալ տանտիկինը, տանը իշխանուհին, որ կը հրամայէ՝ առանց սղմուկի, հրամանները կը լսուին՝ առանց զանցառութեան և կը կատարուին առանց տրտուեցումներու։ Ան է որ գինի պիտի պատրաստէ, և ան է որ ըռուպը և միւս քաղցրեղէնները պիտի շինէ, ճշգրտով անոնց քանակը, և աստիճանը, եփելով կամ խմորելով։ Այս բոլոր փափուկ գործողութիւնները, շատ հասուն փորձառութեամբ մը, անվրէպ գլուխ կը հանէ, ուղղակի ինք վարելով, և հարկ եղած ցուցմունքները ինք ընելով։ Հորսները, և չափահաս աղջիկները ծառայական աշխատութիւն մը միայն կը կատարեն հետեւելով տանտիկնոջ հրամաններուն։ Տանտիկինը սակայն իր գործերը չի ծածկեր անոնցմէ, ընդհակառակն ամէն բան անոնց ներկայութեանը կ'ընէ, կը բացատրէ անոնց իր փորձառական ճարտարարութեամբ և այս կերպով զանոնք ալ իրենց կարգին սանտիկնութեան կը պատրաստէ, գլխունալով որ այդ ընելը իր նուիրա-

կանս պարտականութիւնն է, որմէ պէտք չէ որ թերանայ, կամ խաւսափի:

Երկու անմիջական աշխատութիւնները, գինիի պատրաստութեան և ըսուպ եփելու, միաժամանակ պիտի կատարուին: Առաջինը, այսինքն գինիի պատրաստութիւնը, շատ աշխատութիւն պահանջող գործ մը չէ:

Սաղողները քամելու ստեղծ, մտա մը տեւ և սպիտակ տեսակէն, կը գտան, ձմրան եղանակին ուտելու համար, իբրև թարմ պտուղ: Սաղողը երկու երեք ամիս թարմ վիճակի մէջ հետեւեալ կերպով կը պահեն: Գոռոններու մէջ նախ քիչ մը կտուտաթի մաքուր ձանձ կը լեցնեն. այս ձանձին վրայ, սանաթիկներ, զգուշութեամբ խաղողի ընտրուած ուկոյզները կը շարէ, ո՛չ այնքան խիտ: Ուկոյզներու այս շարքին վրայ դարձեալ խաւ մը ձանձ կը լեցնէ. այս երկրորդ խաւին վրայ ալ շարք մը ուկոյզ կը շարէ, այսպէս խաւ մը կտուտաթի ձանձ և շարք մը ուկոյզ իրարու վրայ կ'աւելցնեն մինչեւ որ գոռոնը լեցուի: Ուրիշ, նոյն մեծութեամբ գոռոն մ'ալ անոր վրայ կը շրջին իբրև կախարիչ, այնպէս որ երկու գոռոններուն եզերքները իրար շօշափեն լաւ մը. այս զետեղումը ընելէն յետոյ, երկուքին եզերքները կաւով կը ծեփեն, առանց ամենափոքր անցք մը իսկ ձգելու: Այս գոռոնները կը դնեն մառանը առանց իրենց տեղերէն շարժելու: Մնալով գրեթէ միօրինակ բարեխառնութեան մը մէջ, խաղողը մինչեւ Յունուար ամիսը թարմ կը մնայ: Նոր տարիին կամ Մնուդին կը բանան զանոնք և խաղողի ուկոյզները կը հանեն:

Իւրաքանչիւր գոռոնի մէջ չորս չինգ քիլօկրամ խաղող կարելի կ'ըլլայ պահել, առանց խճողելու:

ԻԷ. ԳԼՈՒԽ

ԽԱՂՈՂԻ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍ

Բ.

ԸՌՌՈՒՊ ԿԱՄ ՌՌՈՒՊ

Սալքը և պարկերը լուացուած մաքրուած են այլեւս : Հիմա աշխատութեանց վայրը դորդաններն են : Տանտիկինը, դորդանին մէջ, օճախներու վրայ կաթսաները կը զեանդէ, և անոնցմէ իւրաքանչիւրին մէջ 60-70 օխա քաղցու լեցնելով կ'սկսի տաքցնելու : Կրակի մեղմ ջերմութեամբ աստիճանաբար կը տաքցնէ, մինչեւ որ հեղուկը եռալու սկսի : Եռացումը կը շարունակուի երկար ատեն, տանտիկնոջ հսկողութեան տակ : անիկա քայլ առ քայլ կը հետեւի հեղուկին բարեխառնութեան աստիճաններուն, և առանց ջերմաչափի, փրփուրին քանակութենէն և գունափոխութիւններէն կրնայ հասկնալ քաղցուին կրած փոփոխութիւնները, և ըստ հարկին կրակը կը մեղմացնէ կամ կը սաստկացնէ : Եռալու միջոցին, յաճախ, իր ձեռքը գտնուած մեծ շերեփով կամ պոչով-թասով կը հոսէ, այսինքն շերեփով հեղուկը կը բարձրացնէ և բարձրէն կը հոսեցնէ դարձեալ կաթսային մէջ : Եփելով քաղցուն՝ կը ջրաստի, այնքան որ ամբողջին երրորդ մասը մնալով՝ կը թանձրանայ : Այն ատեն տանտիկինը հոսած ատեն դոյացած փրփուրին կը նայի, եթէ ան կարմրագոյն ըլլայ, կը նշանակէ թէ ժամանակն է եփելու գործողութիւնը դադրեցնելու : Ասկէ զատ, քիչ մը պնակի մը մէջ կը լեցնէ, եթէ մածուցի պէս անոր փակչափ, այն ատեն հասկնալի կ'ըլլայ թէ ռուպը եփած է, ուստի, կաթսային կողերուն վրայ գտնուած անկերէն բռնելով օճախին վրայէն կը վերցնեն : Կրակէն հեռացնելէ յետոյ, դեռ տանտիկինը բաւական ատեն շերեփով կը հոսէ ռուպը որպէսզի շոգխացումը շարունակուի և զանգուածին մէջ շոգի չմնայ ընաւ :

Քաղցուն երբ եփելու սկսին, անոր հետ քիչ մը ըռաքիող (կարմրորակ հող մըն է) կը խառնեն, որպէսզի օտար նիւթերը քաղցուէն բաժնուելով յատակը վայրասուզուին : Այս զտումով, ռուպը կ'ըլլայ մաքուր և կ'ունենայ մութ կարմիր թափանցկութիւն մը : Ատոր գոյնը կը տարբերի թթեռուպի գոյնէն, որ դեղնորակ է :

Ռուպը եփուելէն յետոյ, երբ կաթսաները վար կ'առնեն օճախ-

ներէն, ըսինք թէ տանտիկինը շարունակ կը հոսէ շերեփով մինչեւ որ այլեւս դանգուածէն շոգի չբարձրանայ: Այն ատեն հասելու գործողութիւնը կը դադրեցնէ, և մէկ երկու ժամ կը մնայ ուսպը կաթ-տաներուն մէջ, մինչեւ որ բարեխառնութիւնը իջնէ գաղջ վիճակի տանտանին:

Նախապէս արդէն սեւձիթուած կարտաներ լուացուած մաքրուած և լու մը չորցուած պատրաստ կ'ըլլան, տանտիկինը ուշադրութեամբ կը զննէ անոնց ներքին երեսները հաստատելու կամ համոզուելու համար թէ անոնք կատարելապէս չոր են, որովհետեւ, եթէ կաթի մը ջուր գանուի անոնց մէջ, ամբողջ ուսպը կը թթուեցնէ: Այս ճշգումը ընելէ յետոյ, կ'սկսի, «օրհնեա՛լ ես Աստուած» ըսելով ուսպը կարտաներուն մէջ լեցնել պոչով թասերով: Լեցուած կարտաները հարաները կը փոխադրեն մաւանը և կը շարեն տանտիկնոջ ցոյց տուած տեղերը: Այս փոխադրութիւնները սուտանելէ յետոյ, տանտիկինը մաւանը կ'երթայ, իսկ հարաներն ու չափածաս տղջիկները դորդանը, սւր կը հաւաքեն բոլոր ամանները, կը լուան՝ կաթ-սայ, պսակ, շերեփ, պոչով թաս, չամձայ, եւն, կը մաքրեն լաթով կամ դայնայով կը ցամքեցնեն, և, կը տանին իւրաքանչիւրը իր տեղը կը զետեղեն: Իսկ տանտիկինը միւս կողմէն, կարտաներուն բերանները խուփերով ծածկելէ յետոյ, եզերքները կաւով լու մը կը ծեփէ, այնպէս որ ո՛չ փոշի և ո՛չ իսկ օդ կարենայ ներս թափանցել: Ի հարկէ տանտիկինը կը խիէ կարտաներուն բերանը, երբ ուսպը սովորական բարեխառնութեան մէջ կը գանուի:

Ամէն տուն, իր ունեցած խաղողին սուտաութեան, և ընտանիքին անդամներուն թիւին համեմատ լոռուպ կը պատրաստէ: Չմուսնային եզանակին սպասելիք գլխուսուր պաշարներէն մէկն է ուսպը: Թթեռուպը, և խաղողի ուսպը իրարմով կը փոխանակուին: Անոնք որ թթեռուպ չեն ունենար, միւսը կ'ունենան, և անոնք որ այս երկուքէն ուր կ'ունենան, խաղողի ուսպին նախապատուութիւն կուտան:

Չամազան ձեւերու սակ իբրեւ կերակուր և իրրեւ ըմպելի կը գործածեն զայն: Ինչ որ խօսած եմ, այս տեսակէտով, թթեռուպի գլխուն մէջ, նոյնը կը պատշաճի նաեւ խաղողի ուսպի գործածութեան պարագաներուն: Ասով կը պատրաստեն նաեւ՝ ճիւղայ և ափսայ:

Ճիւղայն հետեւեալ կերպով կը պատրաստեն: Կ'առնեն պէտք եղածին չափ ուսպ, տար հեա, իր կէսին չափ ջուր կը խառնեն, կ'աւելցնեն այս խառնուրդին վրայ բաւականաչափ արգար եղ (իւղ), տար մէջ կը շարեն թոնիրի հացի բարակ սրտառներ՝ իրարու վրայ, և տար մէկ երկու վայրկեան կ'եռացնեն այս խառնուրդը, շուտով կը

Թանձրանայ : Թանձրանալուն պէս՝ կրակէն կը հեռացնեն : Ասիկա դիւրաստորաստ կերակուր մը կ'ըլլայ :

Ասիսայ : Ասիսան բալուցիին շատ յարգի հրուշակն է : Կը պատրաստեն հետեւեալ կերպով :

Նախ բաւականաչափ նուրբ ալիւր (խասալիւր, շարժողէ անցուած ալիւր) կը պատրաստեն : Արդար իւզը ամանի մը մէջ լաւ մը քաղելէ (այրել) յետոյ, մէկ կողմէն դժարով կը խառնեն իւզը շրջանակաձեւ, աջ ձեռքով, միւս կողմէն. ձախ ամով ալիւրը, բարձրէն շարժման մէջ եզոզ իւզին վրայ կը հասեցնեն քիչ քիչ : Այսպէս մինչեւ որ բաւականաչափ ալիւր տրուի իւզին : Աճանք մաղմաղ կրակի վրայ կը դնեն սանաթիկինները, և կը շարունակեն ալիւրը խառնել դժարով, մինչեւ որ լաւ մը խարկուի իւզով : Տանաթիկինները, դժարին ծայրով, քիչ մը՝ այդ խարկուած ալիւրէն իրենց քովը պատրաստ դրուած ռուպին մէջ կը լեցնեն. եթէ եւացում առաջ գոյ, այն ատեն այլևս խարկելը շարունակելու պէտք չի մնար, այլ ռուպը քիչ քիչ կը լեցնեն խարկուած ալիւրին վրայ, և կը շարունակեն խառնել մինչեւ որ ռուպը՝ ալիւրէն հաւասարապէս լաւ մը ծծուի : Ասիսան այլևս պատրաստուած կը համարուի : Հարսները կամ աղջիկները այդ գոնգուածը գնդակներու կը վերածեն : Ասիկա կ'ըլլայ տախտային վերջին ձեւը :

Ըսի թէ Բալուի գիւղացիներուն համար, ասիսան շատ յարգի հրուշակ մըն է : Ո՛չ միայն դոյն ստան բնակիչները երբևէն կ'ուտեն սերի կամ կարագի կամ հաւկիթի հետ, կամ նոյնիսկ սուանձին, այլ, իբրև շատ կարեւոր անուշեղէն մը, սեղանի վրայ կը հանուի՝ նշանատեքներու, հարսնիքներու, խնջոյքներու և մահաւան պարագաներուն հոգու հաց տրուելու անիթներով : Նաեւ, երբ սաղաւարներու սուիթով, նշանուած աղջիկներու ընտանիքներուն կողմէն, իրենց խնամքներուն կողմէն փայ զրկուի, ի միջի այլոց, տախտան ալ պէտք է որ գտնուի անպատճառ զրկուած փային մէջ :

Ըռուպը եփուելէն անմիջապէս յետոյ կարգը պատանելին (պատանելի տեղական հնչումով) կուգայ : Պատանելին հետ միաժամանակ կը պատրաստեն զանազան տեսակ ռաձիկներ, ինչպէս նաեւ բրդօններ (քեամէ) :

Պատանելին համար սպիտակ խաղողին քաղցուն կը նախընտրուի : Պատրաստութիւնը հետեւեալ կերպով տեղի կ'ունենայ : Պատրաստողը դարձեալ սանաթիկինն է : Քաղցուն կաթնայի մը մէջ կ'եւացնեն նախապէս, յետոյ, հետը քիչ մը ընպրիտ կը խառնեն (կրահող) ու կ'սպասեն որ հեղուկը ընամախի (ռովախի) այսինքն ունելորդ նիւթերը յատակը վայրատուելին և քաղցուն մաքրուելով ջինջ թափանցկութիւն մը ստանայ : Այն ատեն կ'սկսին դարձեալ եւացը-

հեղու, հեղու կին մահերեսին վրայ փրփուրներ կը գոյանան. տանտիկինները զանոնք շերտիով կ'առնեն, կը թափեն, մինչև որ այլևս փրփուր չի գոյանայ: Ասկէ յետոյ նշան կամ քնախր ալիւրը քիչ քիչ բարձրէն կը հոսեն հեղուկին մէջ մէկ կողմէն անդադար և տրագորէն խառնելով զայն: Ուշագիւր կ'ըլլան որ ալիւրը ամբողջովին ստորածուի հեղուկին մէջ, առանց կոյտեր կողմելու: Երբ ալիւրին քանակութիւնը բաւական սեպն, այլևս կը դադարեցնեն զայն և թանձրացած կամ ալիւրով յագեցած հեղուկը քիչ մը տան ալ խառնելէ յետոյ կը դադարեցնեն. պատակդի նիւթը պատրաստուած կ'ըլլայ այլևս. տակա մալեզ կը կոչուի: Կամ մասնաւորելով պաստիսի մալեզ կ'անուանեն, զանազանելու համար անոր այս իմաստը իր միւս խմաստներէն (տես բառարանը):

Ինչպէս որ նկարագրած են թուփի պատակի գլխուն մէջ, այնպէս այ է հոս: Մալեզով կաթման տանիքը կը հանեն, — այսքանը միայն այրերուն դործն է, — հոն մաքուր կառուները գետինը փռուած, պատրաստ են: Մալեզը կը լեցնեն կառուին վրայ, և տանտիկինը ծեփելով կը ատրածէ այդ կոյտը տալով անոր համահաւասար բարակութիւն, և ողորկութիւն: Այս գործողութիւնը վերջ կը դանէ երբ մալեզը լինայ: Մալեզուած կառուները այս վիճակին մէջ կը մնան քանի մը օրեր, մինչև պատակը ցամքի և կարելի ըլլայ զայն կառուներէն անջատել:

Անջատելու գործողութիւնը այն է ինչ որ է թթեպատակը՝ իր կառուէն զատելու գործողութիւնը, զոր կրկնելու հարկ չեն տեսներ: Կառուներէն անջատուած պատակի թերթերը արեւով քիչ մ'ալ չորցրնելէ յետոյ ծալերու կը վերածեն համահաւասար ծաւայով միշտ քառակուսի, երբեմն ալ եռանկիւն ձեւերով, և թրծուած կարասներու մէջ իրարու վրայ շարելով կը պահեն, անոնց բերանները ծեփելով:

Պատակի մալեզը օգտագործելով կը պատրաստեն նաեւ ըռոճիկներ (ռոճիկ սուճուզ), հետեւեալ կերպով: Ընկոյզի միջուկները զատելէ յետոյ թելերու վրայ անցրնելով շարացներ կը շինեն շուրջ կէս մէթրէ տակի երկայնութեամբ: Կ'ըլլան ոչ միայն ընկոյզի, այլև նուշի կամ ծիրանի կուտի միջուկի շարոցներ, նոյնիսկ ծիրանի կուտին լեղի միջուկներն ալ մոխրաջուրով եփելով կը քաղցրացնեն, այսինքն անոր դառնութիւնը կ'անհետացնեն, և յետոյ թելերու վրայ անցնելով տակով, շարոցներ կը շինեն: Այս շարոցները մալեզին մէջ կ'ընկղմեն և անկէ հանելով քիչ մը տան կը կախն, դորձեալ կ'ընկղմեն ու կը կախն, և այս գործողութիւնը երեք չորս անգամ ընելէ յետոյ կը կախն մինչև որ մալեզը ցամքի և իր փակչուելութիւնը կորսնցնէ: Այն տան ըռոճիկը պատրաստ կ'ըլ-

բայ: Տանախիկներ գտնուք կը հաւաքէ և պատանխին հետ միասին կամբնէ:

Շիպր, ինչպէս որ ըսած եմ ասկէ առաջ, քամուած խաղողին մնացորդն է: Կը բաղկանայ՝ կուզկապեն, պտուղներուն փուրերէն (կեղեւ) և կուտերէն: Երբ, առաջին անգամ, խաղողը կը քամեն քաղցուն առնելու համար, կը մնայ շիպր, զոր ջին թափեր իբրև անպէտ մնացորդ մը, այլ՝ զայն զօրաւոր մասնութեանով ճնշելով դարձեալ կը համեն հեղուկ մը, որ այլևս քաղցուն համը չունենար, և հետեւաբար զայն իբր այն ջին գործածեր՝ սակայն ան ալ կ'օգտագործեն, օղի հանելով անկէ:

Այդ տապանամ հեղուկին հետ կը խառնեն որոշ քանակութեամբ՝ սպիտակ խաղողի քաղցու և կը թողուն այս խառնուրդը կարասին մէջ, քանի մը օրուան ընթացքին կը խմորուի ան, զոր կը թորեն պղինձով կամ թորանօթով ու կ'ուկեկան ընտիր օղի: Թորումի և զանակին մասին արդէն գրած եմ թուեթի օղիի պատրաստութեան գլուխին մէջ:

Իսկ, երկրորդ անգամ մամուլէ անցած շիպր, զոր կտրելի է շիպին շիպր անուանել, այլևս անպէտ կը համարուի, ուստի զայն կը թափեն կամ էշերուն կը կերցնեն:

Կան մարդիկ, որոնք, մասնաւորապէս տունէ տուն պատանխով շիպ կը հաւաքեն, քաղաքացիներն են որոնք կ'զբողին այս գործով: Մեծ քանակութեամբ հաւաքած շիպէն օղի կը պատրաստեն, և այս օղին կէս առ կէս կը բաժնեն իրենց՝ և անոնց միջև, որոնք իրենց շիպը տուած են առանց դրամական փոխարինութեան: Եթէ հինգ քիլօկրամ շիպէն մէկ լիտր օղի էլնէ, կէս լիտրը պէտք է տրուի անոր որ շիպ տուած է:

ԻԸ. ԳՂՈՒԽ

ԽԱՂՈՂԻ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍ

Գ.

ԳԻՆԻ

Ռուսալը, ընտանիքի բոլոր անդամները, անխափր, իբրև անունդ կը գործածեն: զայն կը գործածեն թէ՛ կերակուրի տեղ և թէ՛ շաքարի տեղ: Իր պէտքը, ուրեմն, անհրաժեշտ է:

Գինին, ընտանիքի միայն այրերուն ձմեռնային անհրաժեշտ ըմպելին է: Կիները, հարսները, սղջիկները, պատանիները հայնիսկ պարկեշտութեան հակառակ բան մը ըրած կը համարուի, եթէ գինի խմեն: Հափաճա կերտատարդները տղատ են գինի խմելու, ան ալ իրենց մեծին հրամանաւ: Այրերը կ'ըսեն. «Եթէ կնիկներն ու սղջիկները գինի խմեն, հըպը մենք ջո՛ւր պիտի խմինք...»: Եւ սակայն գինին ալ ձմեռնային լիցքի անհրաժեշտ մասը կը կազմէ, ինչպէս արմախքը եւն:

Գիւղացիները այն համոզումը ունին թէ՛ տա, այն միակ ոգելից ըմպելին է, որ, ամէնէն աւելի, մարդկային արեան անհրաժեշտ տարրերը սուս'աօրէն կը ներածէ՝ խմուելով. «Արիւն կը շատցնը, գե՛ղ ըսն» կ'ըսեն: Բայց եթէ կ'արգիլեն կիներու, պատանիներու, սղջախիկներու՝ անոր գործածութիւնը, պարզապէս անոր համար է որ, իբրև ոգելից ըմպելի, գինովցնող յասկութիւն ունի, և թէ անոնք չեն կրնար ինքնազսպութիւնն ունենալ գինովութեան մղումները չափաւորելու կամ արգիլելու:

Նոյնիսկ թուրքեր և քուրդեր՝ հասկցնելու համար թէ՛ հայերը մասնաւորապէս գիւղացիները գինին ո՛րքան կը սիրեն, կ'ըսեն. «Գինի՛ կետլուււրն տինի»: Այսինքն գինին՝ անկրօնին կրօնն է: Եւ իրենք իսկ յաճախ չեն քաշուիր, և, որակելու համար լաւ գինին՝ կ'ըսեն. «Ըս գինին՝ մեռօնի պէս գինի ը...»: Այս գինին միւսոնի պէս գինի է, ըսելով հասկցնել կ'ուզեն թէ շատ ընտիր գինի մըն է ան:

Բազմանդամ ընտանիքներ կան, որոնք, կարասներով, մեծաքանակ գինի կը լեցնեն: Իւրաքանչիւր կարաս 30-40 լիտրի պա-

բունակութիւն կ'ունենայ: Ոմանք 20-30 տարուան հին գինի կ'ունենան: Հին գինի ունենալը պարծանք մը կը համարեն:

Վանքերը, Բարձրահայեաց և Խոչայ, հարիւրաւոր լիւր պարունակութեամբ կարասներ ունեցած են, որոնք միշտ գինիով լեցուն եղած են, շնորհիւ՝ իրենց ընդարձակ, բազմաթիւ և ընտիր այգիներուն:

Այս կարասները գիւղացիներու սովորական կարասներուն չեն նմանիր՝ մեծութեամբ, թրծուածքով և հողային զանգուածով: Ասանք շատ ընտիր հողէ շինուած, կարծր և անթափանցական են: Ունին մետաղային հնչիւն. իրենց հնութեան թուականը ո՛չ ոք կը յիշէ: Սաւուազն հինգ դարերու հնութիւն ունեցող հսկայական կարասներ են, որոնց ինչպէս շինուելը, ինչպէս դուրգէ անցուելը և վանքերու մաւանները փոխադրուելը շուծուած աւեղծուածներ մընացած են ցարդ դժբախտաբար, ու, վերջին աւերածութիւններն ալ՝ աւեղծուածը լուծելու ամէն առիթ անհետացուցին:

Բարձրահայեաց վանքին մէջ, կը պատմեն արդընցիներ, կային կարասներ, որոնք հարիւր լիւր = վե՛ հարիւր օխտ = պարունակութիւն ունէին, և ասոնց բարձրութիւնը երեք մէթրի շտի եղած է: Ասոնցմէ գինի քաշելու համար 5-6 մասիճաննոց սանդուխներ կը գործածէին եզեր:

Չմտնամ ըսելու թէ գաւառին արդի բրուանները այդպիսի հսկայական կարասներ երբեք չեն կրնար շինել:

Չմեւնային սաստիկ ցուրտերուն դէմ, ճամբորդութեանց մէջ, բացօդեայ աշխատանքներու ընթացքին, ինչպէս սանիքներու ձիւները Բերելու, դանոնք լողելու, ատինելու ասեն, չմսելու կամ սաստիկ ցուրտին ազդեցութիւնը չզգալու համար, կը բաւէ որ գիւղացին՝ դոլ մը, երկու դոլ գինի գլուխը քաշէ, երկու երեք ժամ սուեցուցիչ ցուրտը ո՛չինչ ազդեցութիւն կ'ընէ իր վրայ: Գինին ձմեւնային ըմպելին է:

Հարսանիքներու, խնջոյքներու, տօնախմբութեանց, հիւրնկալութիւններու նոյնիսկ հոգու հացի սեղաններուն վրայ, կերակուրներու շարքին, անհրաժեշտօրէն պէտք է որ գինին իր փարչովն ու սկահակովը բազմի... , առանց անոր՝ սեղանները որպէս աղքատի սեղաններ, անշուք կը համարուին:

Քաղցուին պէս, գինին ալ վաճառման, կամ փոխանակութեան նիւթ է. շատեր, գինի պատրաստելու համար փոխանակ քաղցու գընելու, մէկ անգամէն գինի կը գնեն, կամ իրենց պահանջքին տեղ գինի կ'աւնեն, մասնաւորապէս այն գիւղերէն, ինչպէս են Թիլ, Թրխէ, Խոչմաթ, Հափաւ ևւն որոնց դինիին համբաւը՝ ամբողջ գաւառին մէջ տարածուած է:

Պինին կը պատրաստեն, մասնաւորապէս, գինուկ, կողոսկրայ, խաչկող խաղողներու քաղցուներէն. ստոնցմէ գինուկին և կողոսկրային գինին տապեցնող է իր պարունակած մեծաքանակ աղաղին պատճառաւ: Եզան աչք խաղողին քաղցունէն պատրաստուած գինին, ուռպի քաղցրութիւն կ'ունենայ, և, թէեւ ուշ կը գինուլցնէ, բայց հեղ մը որ գինուլցնէ գիւրութեամբ մարդուն օձիքը չի թողուր: Այսինքն, անուլ գինուլցող մէկը ուշ կ'սխալի իր գինուլ վիճակէն. մինչդեռ միւս գինիներուն աղդեցութիւնը տար աղդեցութեան չափ երկարատեւ չըլլար: Այս գինին եխսուած կամ եխսման գինի կ'անուանեն: Ոմանք, քաղցուն եփելէն, եռացնելէն յետոյ կը պատրաստեն այս գինին: Թերեւս եխսուած կամ եխսման որակիչները այս գործողութիւնը բացատրելու մաքով կիրարկուած ըլլան:

Եխսուած կամ չեխսուած գինիներուն պատրաստութիւնը՝ ուռպի պատրաստութեան չափ աշխատանք և յոգնութիւն պահանջող գործ մը չէ, կը պահանջէ միայն տանտիկնոջ ուշադրութիւնը կամ հսկողութիւնը:

Բալուի բոլոր գիւղերուն մէջ, առանց բացառութիւն սեպելու քաղաքն ալ, այն կարասները, որոնց մէջ գինին պիտի պատրաստուի, անհրաժեշտօրէն պէտք է որ սեւձիւման ըլլան: Կարասները կը սեւձիւթեն (կպրածիւթ) հետեւեալ կերպով.

Նախ մեծկակ ամանի մը մէջ սեւձիւթը (կպրածիւթ) կը հալեցնեն, սեւձիթուելիք կարասն ալ քիչ մը շուրջ $38^{\circ} - 40^{\circ}$ կը տաքցնեն: Տանտիկինը, երկար գաւազանի մը ծայրը փաթտուած քուրջը թաթխելով լոյծ սեւձիւթին մէջ, պտուկեցուած կարասին ներքին երեսը կ'սկսի անուլ օծել մէկ կողմէն, և միւս կողմէն կարասը փորի վրայ թաւալեցնել: Այսպէս ամբողջ ներքին երեսը, առանց ամենափոքր տեղ մը բաց ձգելու, սեւձիւթով կ'օծէ: Ուրիշ աւելի գիւրին կերպ մը կը գործածէ տանտիկինը երբ պէտք ըլլայ մեծ կարասներ սեւձիթելու: Սա է այդ կերպը. փոխանակ սեւձիւթը ուրիշ ամանի մը մէջ հալեցնելու, կը հալէ նոյնինքն սեւձիթուելիք կարասին մէջ, անոր ստի մեղմօրէն ջեռուցանելով: Սեւձիւթը հալելուն պէս, նոյն գաւազանին քրչապատ ծայրովը կ'սկսի զայն տարածել խնամքով ներքին ամբողջ մակերեսին վրայ: Այս կերպով սեւձիթելու գործողութիւնը կ'աւարտի: Այդ գաւազանը, որուն ծայրը քուրջէ գնդակ մը շինած են, սեւձի-փաս կ'անուանեն:

Գիւղացին այն համոզումը ունի թէ գինին անկարելի է չսեւձիւթուած կարասներու մէջ պահել. և երկու պատճառներ գիտէ, որոնք իր համոզումը կ'ամրապնդեն: Մէկը սա է թէ՛ պարզ կարասները ըլլալով թափանցական, գինին, որպէս հեղուկ մարմին, կրնայ մզուիլ և դուրս ելնել: Երկրորդը այն է թէ՛ գինին, չձիւթուած

ամսաներու մէջ, չի կրնար երկար սաակն անայլայլ մնալ, կ'աւրուի : Այս պատճառը թերեւս, բանաւոր է : Հաւանաբար սեւծիւթը հակա- նեխիչ մը կ'ըլլայ ընդդէմ այն մանրէներուն, որոնք պիտի այլայլէ- ին գինին՝ տարրալուծելով անոր գոհարին մէկ մասը :

Արդարեւ, եւրոպական ճարտարարուեստին մէջ, գինին խմոր- ուելէն յետոյ, զայն սակաւներու մէջ քաշելէ աւտջ, զանոնք ծծումբի ծուխով կը հականեխեն, անոնց մէջ վառելով ծծումբի մէջ թաթ- խուած նիւթեր : Փիւզային ո՛չ ծծմբային կազին, և ո՛չ ալ կարու- ճիւթին հականեխիչ ազդեցութեան մասին ծանօթութիւններ ունի, քոյց դարերու աւանդական փորձառութեամբ համոզուած է թէ սեւ- ձիւթուած կարտաներու մէջ է միայն որ գինին տարիներով կրնայ զերծ մնալ հեւանդութիւններէ կամ այլայլումէ :

Այսպէս, ուրեմն, կաշտածերը պատրաստելէ յետոյ, գինիի հա- մար վերապահուած քաղցուները կը լեցնեն անոնց մէջ, և խուփե- լով կը ծածկեն անոնց բերանները, միայն եզերքները ծերպեր կը թողուն, որոնցմէ, խմորումէ գոյացած կազը դուրս կ'ելնէ : Քանի մը օրէն արդէն խմորումը կ'սկսի, և կը յայտնուի եւտցումի շնկո- ցով մը : Կը շարունակուի սա, ըստ ոմանց, մինչեւ քառասուն օր, ու մերթ ալ աւելի կը տեւէ : Տանտիկինը յաճախ կ'այցելէ մաւանը և աչքէ կ'անցընէ խմորումները, ան կը հասկնայ, երեւոյթներէն, խմորման քոյր փուլերը, և երբ, ժամանակը գոյ, այսինքն տեսնէ թէ գինին պատրաստուած է, այլեւս կարտաներուն բերանը խուփելով ծածկե- լով եզերքները կը ծեփէ և այս կերպով օգի հետ հազարդակցութիւ- նը կը դադարեցնէ :

Փորձածութեան տակն, տանտիկինը կարգով կը բանայ կարտա- ներուն բերանը, անկէ զատ, ո՛չ ոք կրնայ մտանալ անոնց : Ան գինի տանելու միջոցին զգոյշ կ'ըլլայ որ ջուրի հետ երբեք հազար- դակցութիւն չունենայ, որովհետեւ, կաթիլ մը ջուրն իսկ բաւական կ'ըլլայ ամբողջ կարտա մը գինին տարրալուծելու և քոյցաթի վե- րածելու. ուստի ուշադրութիւն կ'ընէ որ թոյց աման չընկղմի անոր մէջ : Պէտք է նսեւ որ գինիով լեցուն կարտաները զով տեղ դըր- ուին՝ տարան եզանակին, որովհետեւ բարձր բարեխառնութիւնը կը լիտսէ գինիին :

Կարտաներէն գինի տանելու համար մասնաւոր ամաններ կան, որոնք ուրիշ պէտքերու չեն գործածուիր : Ասոնք դալ կ'ըսուին : Իոյը ջրդրումէ կը շինեն : Ասոր ուռած մասին վրայ լայն բերան մը կը բանան, մէջի կուտերը կը պարպեն և կ'ունենան տանաւոր թաս մը : Այս տանուը իրրիւ բանակ կը ծառայէ և անոր գործա- ծութիւնը մեծապէս կը գիւրացնէ : Ահա ասով է որ գինին կարտան

կը քաշին մուրասանելու ամէջ, որոնք սեղաններու վրայ կը դրուին գործածութեան տակն:

Գինիէն յետոյ կուգայ քացախը, խաղողի ճարտարարուեստին իբրեւ վերջին արտադրութիւնը: Բալուցին քացախ ունենալու համար շատ չի մտահոգուիր, ուստի այս թթուն իրեն համար երկրորդական կարեւորութիւն միայն ունի. որովհետեւ, հարկ եղած տակն ան կը գործածէ՝ ազոխի, ազոխչորի, ալսորի թթուները, ինչպէս նաեւ՝ թթիւմորը:

Բանջարեղէնները աղը դնելու համար, ինչպէս կաղամբը, բեւեկնիի սերերը, սամիթը, փերփերը, որթի սերերը եւն. փոխանակ քացախի՝ թթիւմորը կը նախընտրեն. պահոց կերակուրները աղտորի թթուով կը համեմեն, իսկ ուրիշ պարագաներու տակ ազոխի և ազոխչորի թթուները կը գործածեն:

Սակայն քացախ ալ կ'ունենան: Մասնաւորապէս զայն չեն պատրաստեր, այլ պարզապէս անզգուշութեանց հետեւանքով, այսինքն գինիին կարասին բերանը բաց ձգելով, կամ անոր մէջ թաց աման ընկղմելով կը պատահի գինին այլայլումը և այս այլայլումէն այսինքն գոհով տարրալուծումէն ընտիր քացախ առաջ կուգայ. և այս քացախը կը գործածեն ուրիշ թթուներու տեղ:

Ալքոլը կամ գոհոլը դիւղացիին համար անուշով միայն ծանօթ է, գործածութեամբ՝ անծանօթ: Ուստի խաղողի ճարտարարուեստը, Բալուի մէջ, գինիով այլեւս վերջ կը գանէ:

ԻԹ. Գ. ԱՌԻԽ

ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐ

Ա.

Բոլոր այն խտանողները, զորոնք Բարեպետները՝ խաչելով կամ երկելով՝ իբրև կերակուր, կամ նայն իսկ հում վիճակի մէջ ալ՝ իբրև ուղիան կը դործածեն, բաննաւ կ'անուանեն:

Բանձարները՝ երկու կարգերու կը բաժնուին, մշակելի բանջարեղէններ և ինքնաբոյս բանջարեղէններ: Մշակելի բանջարեղէնները մշակութեամբ ձեռք կը բերուին: Ասոնց մշակութեան կը յատկացուին պարտէզներու մէջ բազմաթիւ տնուներ կամ մշարաներու կը սերմանուին կամ կը անկուին (սասր զարնել), կը խնամուին պարբերական ուսգուններով և քախուսներով և վերջապէս կը քաղուին Երբեմն, ամբողջ տրտեր ալ կը յատկացուին անոնց մշակութեան համար, երբ հարկ ըլլայ մեծ քանակութեամբ տրտադրել: Ծառերով շրջապատուած պարտէզներ կան, որոնք ամբողջովին իբրև բանջարանոց կը դործածուին: Գիւղացին այս պարտէզները անու կ'անուանէ, իսկ միւլանոյն պարտէզին համաչափ և համակարգ բաժանումներն ալ մշարայ:

Ածուները ցանկով և մէկուկէս մէթր բարձրութեամբ պատով մը շրջապատուած կ'ըլլան: Աստատրակ պողոտաներէ կ'անջատուին չաք պատերով, մնացած մասերը (փուշերէ կողմուած չափաւներով ցանկ):

Ինքնաբոյս բանջարեղէնները բնութեան խնամքին սակ կ'տան, պարտէզներու խտանուաներուն, տրտերու, լեռներու կողերուն մէջ կամ քաւերու վրայ: Գիւղացին անոնք միշտ պատրաստ կը դանէ գարնան եղանակին, և զանոնք քաղելու և առն աանելու յոգնութիւնները միայն կը կրէ: Այս կարգին պատկանողները բազմաթիւ են: Ինքնաբոյս բանջարեղէններու առատութիւնը թերեւս պատճառ եղած ըլլայ, որ Բարեպետ մէջ անոնց մշակութիւն սահմանափակ ըլլայ: Արդարեւ, գիւղ մը միայն կայ, զուտ թրքաբնակ Սեյսիլար գիւղը, քաղաքին տրեւտեան կողմը կէս մամ հեռու, Արամանիի ուղ եղերքին վրայ, որուն խաղաղասէր բնակչութիւնը՝ օգտագործելով իր գեղին առջիւ տարածուող գետափի տրտերը, ամբողջութեամբ բանջարեղէնի մշակութեան կը յատկացնէ:

Թուրքերը, Բալուխ մէջ, միայն ա՛յսքան լաւ բան ունին : Այս գիւղը քաղաքին ու գիւղերուն հաւասարապէս կը հասցնէ՝ կաղամբ, պան, պանիսան (պտանճան), սոխ, սխտոր, լոլիկ եւն : միւս գիւղերուն մէջ ամէնէն աւելի մշակուածներն են՝ լոպիկ (լաւբիս), թէւեկը մշակուին նաեւ՝ դդում, սոխ, սխտոր, անուխ (անանուխ), ազտաքեղ, (պաղտանոս), բայց քիչ քանակութեամբ այնպէս որ՝ ձմրան եղանակին իբրեւ պաշար ունենալու համար կ'ստիպուին դուրսէն գնելու՝ ինչ որ չունին :

Մշակութեամբ հայթայթելի բանջարեղէններն են՝ կաղամբ (լահանայ) պանիսան (պտանճան, լոլիկ կամ պոլսիկ, սապոլին (ստեպղին), պան (կանաչ պղպեղ), սակ (ճարճեղ), լոպիկ՝ ապխտակ կամ կարմիր (լաւբիս), շողգամ, բոլկ, փերփեր, դդում, անուխ, սոխ, սխտոր եւն :

Իսկ ինքնաբոյս կամ վայրի բանջարեղէններն են . կսնկառ, քրդին կամ քրդիկ, յելուկ, գաբ, խավնձիլ, եղինն (մամուռ), լոռուկ աւիլուկ, բախսիկ ամիրիսան, խոռուկ, փարչուկ, պսիկ, բորթ (եղնալեզու), լահանուկ, փափուկ, սիպիս, մայրամ ծաղիկ կամ ծաղիկ քուռաթ, կոսով կամ կոսեմ, առուի կարօս (կարդալ առվի և ոչ թէ առուի), զախպուր, բթուկիչ, դաղձ (դաղճն) լուինն (կարդալ լիինն) ձողուկ, առուոս (առուոյս), քամաթ, պառկուկ մազիկիպ, ապու մօ, բուբ, պրաս, լեռայ անուխ, ննեղկայ հացիկ (էպէմ կէօմէճի - սունկ եւն :

Գիւղացիները, թէ քաղաքացիները, միջանկեալ ըսեմ թէ, քաղաքացիները այս վայրի բանջարեղէններէն շատերը չեն կրնար ունենալ, որովհետեւ շուկաներու մէջ չեն ծախուիր, իսկ գիւղացիներու կիներն և աղջիկներն են որոնք լեռներն դաշտերը կը պտտին իրենց տունին համար հարկ եղած բանջարեղէնները հաւաքելու : Ըսել պիտի ուղէի թէ հայ գիւղացին, զայն վաճառման նիւթ չընէր, իսկ այն լեռնաբնակ քուրդերը, որոնք քանի կը մասնաւոր բանջարեղէններ միայն ծախելու կը տանին, առաւելապէս հայ գիւղերը կը նախընտրեն իբրեւ շուկայ . որովհետեւ, հոն, իրենց ունեցածը արմրտիքի հետ փոխանակելու առիթները կ'ունենան, և փոխանակութիւնը դրամով կատարուելիք վաճառումներէն քանի մ'անգամ շահուէտ է : Հայ գիւղացին կամաւորապէս կը խաբուի քուրդ լեռնականէն, որովհետեւ անոր համար, դձ մը, կես չափ, նոյնիսկ չափ մը ցորեն աչքի չգար, մինչդեռ քուրդին համար, երբ մէկ օլչակ ցորենը 28 դահեկան ըլլայ, չափ մը ցորենը պիտի արժէ 7 զր. կէս չափը՝ 3, 5, դոլը՝ շուրջ մէկ զր. մինչդեռ քաղաքացին՝ 7 զր. արժող ցորենին տեղ հազիւ 2 զր. պիտի վճարէր, 3 զր.ին տեղ՝ 1 զր. : Ասոր վերայ աւելցուցէք նաեւ կշուելու միջոցին քաղաքացիներու կողմէն

եղած ներսու թ յաւանքը , և սակարկութեանց ընթացքին յայտուցուած գիւտարութիւնը . պիտի հասկնաք թէ ինչու քուրդ վաճառորդը հայ գիւղերը իբրեւ իրեն շուկայ կը նախընտրէ :

Քաղաքը փոքր է . բոլոր խանութպանները իրար կը ճանչնան , աւստի գնումներու կամ վաճառումներու միջոցին շատ անգամներ համերայն կը գործեն ընդդէմ պարզամիտ շինականին , ըլլա՛յ հայ ըլլա՛յ քուրդ :

Քուրդ մը , երբ , բեռներով վառելիքայտ , ամուխ , պտուղ , կամ բանջարեղէն տանի քաղաքը ծախելու , քաղաքացի առաջին գնորդը նախ բեռը լու մը կը պնէ , և կ'արտասոյտէ այնպիսի գիրք մը , որմէ քուրդը կը կարծէ թէ իր վաճառելիք նիւթը լու տեսակէ չէ . կամ , յորմարագոյն շրջանին ի վաճառ բերուած չէ : Այս հոգեբանական նախնական ազդեցութենէն յետոյ , սպրանքին արժէքին 1/10 ը իբրեւ գին կ'առաջարկէ : Քուրդը կը մերժէ , ու մէկ կողմէն չօ՛ ... ըսելով էշերը առաջ կը քչէ . առաջին գնորդը կարեւորութիւն չընծայեր , քուրդը չի նաճանջեր : Քիչ մը հեռանալէ յետոյ , գնորդը իր գրացիին կը պոռայ . « Տա՛ , եօ՛ , Աստօ՛ , ըս ընքապապը խեղդելուը » ու կը հասկցնէ թէ ինք ի՛նչ գին տուած է : Այս երեւոյթը շուկային մէկ ծայրէն միւսը նայնութեամբ կը շարունակուի :

Քուրդը բեռներու տակ կ'ըսած իր էշերը կը պատցնէ ընդունայն , եւ , յանկարծ կը տեսնէ որ , իր՝ 30-40 ետգմաներով փաթառուած թաղիքէ գլխարկը վերը , օդին մէջ կը ճօճի : Խանութները հան մեծ մասամբ միայնակ և ցած են : Չարածճի երխաասարդներ կամ պատանիներ , տանիքներուն ցուիքներուն եղերքին մօտ կը կենան և գիմացկուն թելի մը ծայրէն կապուած կարթ մը վար կ'իջեցնեն այն պահուն երբ քուրդը նոյն խանութին առջեւ կեցած սակարկութեամբ զբաղած է : Կարթը դիւրութեամբ կը կառչի ետգմաներէն մէկուն , և յանկարծ գլխարկը օդին մէջ կը բարձրացուի : Քուրդը յանկարծակիի եկած , կ'այլալի , կը պոռայ , կը հայհոյէ : Խանութպաններէն մէկ քանիները իբր թէ տեղեկութիւն չունին եղածէն , կը բարկանան տանիքի ստահակներուն , կ'սպառնան՝ հուսկ ուրեմն կը միջնորդեն և գլխարկը վար կ'առնեն... մինչ միւս խանութպանները բարձր քրքրիչներով կը լեցնեն շուկայի մթնալորտը : Քուրդ վաճառորդը մինչեւ կէսօր կը թափառի . յուսահատութեան ու լքումի երեւոյթներ ցոյց կուտայ , որովհետեւ կը մտածէ թէ իր գիւղը քաղաքէն երեք չորս ժամ հեռու է , պէտք է որ վերադարձը գիշերուան մութէն առաջ գլուխ ելնէ : Ահա , այս միջոցին է որ վերջին գնորդը կը ներնայանայ և 1/10 էն քիչ մ'առելի գին կ'առաջարկէ : Քուրդը սիրտջօժար կ'ընդունի . բայց մինչեւ որ բեռան փոխանցումը կատարուի , վաճառման գինը դարձեալ 1/10 ի կ'իջնէ... :

Լեռնական քուրդը , կ'զգուշանայ քաղաքացի թուրք գնորդներու

մօտենալու, որովհետեւ, անոնք բունի կրնան նոյնիակ զնում անուան տակ, գրուել անոր ծախելու բերած նիւթերը, աւելի չնչին վճարումի մը փոխարէն: Ահա թէ՛ ինչո՛ւ լեւնական քուրդը հոյ գիւղացիին վրայ աւելի վատահու թիւն կ'ուեննայ:

Երբ խնդիրը գիւղացիին մասին է, քաղաքացի հայն ու թուրքը շուտով կը համաձայնին իրարու հետ, անոր դէմ: Անշուշտ, այս համաձայնութեան մէջ հոյ քաղաքացին ճարտարութիւնը կ'ուեննայ միշտ կրաւորական գիրք բունի գրացի թուրքին կողքին ընդդէմ գիւղացիին: Երբ գիւղացի կ'ըսեմ, հարկ է հասկնալ նաեւ թէ՛ հոյ գիւղացին և թէ՛ քուրդ գիւղացին, ցեղի և կրօնի խտրութիւն չկայ խտրութիւնը կառավարութեան շրջանակներէն կ'սկսէր ծագում աւնել ու զարգանալ:

Գտնում բուն եիւթին: Այս բանջարեղէնները թէ թարմ վիճակի մէջ կը խաշեն կերակուր կը պատրաստեն անոնցմով և կամ, հում վիճակի մէջ, միայն աղ ցանելով վրան կ'ուտեն. և կամ թէ չորցնելով զանոնք՝ ձմեռնային եղանակին կը գործածեն աւանձին, կամ խաւն:

Գդումը, պատինձանը բարակ շերտերու վերածելով, և թելերու վրայ շարելէ յետոյ արեւին տակ կը կախեն և այս կերպով զանոնք չորցնելէ յետոյ կարասներու մէջ կը պահեն:

Շատ աւելի շահեկան պիտի ըլլար, եթէ վերը յիշուած ինքնաբոյս բանջարեղէնները իրենց պատկերոյցերովը ներկայացնելու ի վիճակի ըլլայի, և որովհետեւ անկարելի եղաւ ինձ զայն ընել, գոնէ անոնց մասին քանի մը ծանօթութիւններ աւելցնել այս գլխուն մէջ, շահեկանութենէ զուրկ աշխատութիւն մը չհամարեցի:

Կանկառ.— Այս ինքնաբոյս բանջար, մշակուած ծանօթ կանկառին համն սւ նմանութիւնը ունի, աւանց անոր մեծութիւն ունենալու: Բարակ փուշերով ծածկուած ընկոյզի մեծութեամբ գլուխ մը՝ որ գեանէն հազիւ 10 սանդիմէթր բարձրութիւն կ'ուեննայ, բարակ բունի մը վրայ, նոյնպէս եզերքներուն վրայ փուշեր ունեցող քանի մը տերեւներ կ'ուեննայ իր շուրջը:

Ասիկա լեռները կը բուսնի, ուտի հարսեր ու աղջիկներ ստիպուած են խմբովին սաւաններ միտսին տանելով լեռները երթալու, կանկառ հանելու համար: Կանկառ հանել կը նշանակէ կանկառ քողել: Հանել բառը քողել բառին տեղ կը գործածեն այն պարագային, երբ բոյսերը կամ տունկերը արմատէն կը կտրեն փոխանակ գեանին երեսէն կտրելու՝ հողին մէջ թողելով անոնց արմատը:

Ուրեմն կանկառը ձեռքով չեն քողեր, որովհետեւ փշոտ է, ուտի զայն քուլպայով կը հանեն արմատէն: Բոյսին այս մասը ձերբակ, համեղ է. մինչ ցողունը և գլուխը կապտախառն կանանչու-

Թիւն մ'ուշին, իսկ տերեւները լեզուահամ են :

Շարաթը երկու երեք անգամ, անձրեւներու դադարումէն յետոյ, սաւաններով սուն կը կրեն. մկրտաով փուշերէն կը խուզեն, և տերեւներէն կը մտքրեն, յետոյ մաս մը թարմ վիճակի մէջ կը խաշեն, իւզով և հաւկիթով ստապկելէ յետոյ իբրեւ կերակուր կ'ուտան : Մնացածը շարացներու կը վերածեն և կը չորցնեն արեւով և իբր ձմրան պահեստ, կ'ամրնեն : Ասիկա կարեւորագոյն բանջարեղէններէն կը համարուի :

Երբեմն լեռնային քուրդ գիւղերու կիներն ալ հայ գիւղերը բերելով՝ տարցուներու հետ կը փոխանակեն զայն : Քուրդերը նոյնիսկ թուրքերն ալ տար համար մասնաւոր բառ մը չունին, քանակեալ բառը կը գործածեն առանց բացառութեան «Քրովայ, դը քեանկեալ պուխր» = կնքահայր գու կանկաւ կ'ուտան :

Գար կամ Խաւնձիլ. — Պիտի ըսէի բանջարեղէններուն համեղն է, իր ասորժելի ու ոչ խայթող թթորութեամբը : Կը բողկանայ 35-40 սանդիմէթը երկայնութեամբ ցողունէ մը, որ կը վերջանայ եզջերուի եզջիւրներու նմանող ճիւղաւորումներով : Այս ճիւղերու ծայրերը կան իր ծաղիկները : Երկու սանդիմէթը լայնութիւն ունի ցողունը. ամբողջ բոյսը ծածկուած է կեղեւով մը, որ իր վրայ ունի տեղ տեղ ելունդներ, որոնք կարծես ծաղիկներ ըլլոյն. նման մարդոց ձեռքերուն վրայ երբեմն գանուող աւելորդ միսերու, կանկառկ բաւած : Հեռուէն դիտող մը՝ մողեսի մը իրանին պիտի նմանցնէր զայն :

Փայտեղէն մաս գրեթէ չունի. արմատէն և ճիւղերէն քիչ մը կը կտրեն և կեղեւը մտքրելէ յետոյ կ'ուտեն առանց եփելու. իսկ իբրեւ կերակուր՝ զայն կը մանրեն, և հաւկիթով միասին եփելով քողտքակիրթ ժողովուրդի մը ամէնէն աւելի փնտրած մէկ կերակուրը կ'ուշենան :

Ասիկա՝ լեռներու չքնաղ մէկ բանջարեղէնն է, բնութիւնը չըսենք, այլ քողտքական պայմանները՝ զայն միայն զազա քուրդերուն չնորհած են : Կ'ամի լեռներու անտառախիտ մասերուն մէջ միայն, ու նոյնիսկ ոչ ամէն լեռան մէջ : Իր ուճուճ ձիւներուն հայելէն առաջ իսկ կ'սկսի այնպէս որ, երբ մարտ, ապրիլ ամիսներուն ճիւները հալելու կ'սկսին, ան արդէն իր արմատին վրայ կանգուն կը տեսնուի՝ պատրաստ քողուելու : Մայիս ամսուան ընթացքին քանի մ'անգամ միայն, լեռնաբնակ վաճառորդներ հայ գիւղերը կ'իջնեն, և զայն ցորենի, կորեակի և ուրիշ արմախքներու կամ ընդեղէններու հետ կը փոխանակեն :

Լոռուկ կամ լոռսակ. — Ասիկա կը բուսնի ամէն տեղ, բայց լեռներու մէջ այնքան չաճիր որքան պարտէզներու չափառներու մէջ,

ուր, իր բարակ ծղօաները մէկ մէթրէն սուղի կ'երկարին ու բազմազան նման փշուռա ճիւղերու կամ փոքր սուռնկերու կը փաթտուին :
 Իր լայն տերեւները որթատունկի տերեւներուն կը նմանին : Կակուղ կամ գիւրութեամբ ծամուելիք բանջարեղէն մըն է ուս և ուրիշ բանջարեղէններու հետ խառնելով միայն խաշօն կը պատարասան :
 Հարուստին գիւղացիները միայն սաիկա իբրեւ բանջարեղէն կը գործածեն, մինչդեռ հիւսիսայինները լոշուկ սնուան սակ կը ճանչնան ուրիշ երկար մարդակերպ արմատով բոյս մը, որուն մասին սա նախապաշարումը ունին թէ՛ սասր արմատը եթէ հողին մէջէն հանուի, իբր թէ կը պուսայ, ու հանուլին համար սպէտալի կ'ըլլայ : այս պատճառաւ անոր չեն մօտենար : Լոշուկը թարմ վիճակի մէջ կ'ուտեն :

Աւելուկը՝ հասակեկ բազուկներու վրայ աճող 25-35 սանդիմէթր երկայնութիւն ունեցող տերեւներէ կը բաղկանայ, և մածուցիկ սուրի մ'ունի : Ինքնաբոյս է : Լեռները, դաշտերը չաճիբ միայն պարտէզներու կորդերը, մանաւանդ աղբանոցներու մէջ առատօրէն կը գրանուի : Թեթեւօրէն լեղուահամ է : Ուրիշ բանջարեղէններու հետ միասին խաշելով իւզով ու հաւկիթով սապկելով կերակուր կը պատարասան : Կ'ըսեն թէ մանուռորոպէս սասամոքսի տկարութեան հակադդող օգտակար բանջարեղէն մը համարուած է գիւղացիներու կողմէն : Ասիկա չեն չորցնէր : Երկրորդական բանջարեղէն մը կը համարուի :

Թախտիկ.— Այս բանջարեղէնը փոքրիկ ու կլոր տերեւներով բոյս մըն է, գետնէն հողիւ 5-6 սանդիմէթր կը բարձրանայ : Շատ համեղ և դիւրամարս է : Կ'աճի առատօրէն արտերուն այլեւայլ մասերուն վրայ : Աս ալ սուրիուկին պէս մածուցիկ հիւթ մը ունի :

Ամիրիշխանը՝ արմատի մը վրայ տասնեակ մը նուրբ ծղօաներ ունեցող բանջարեղէն մըն է : Տերեւները երկայն են, անոնց մէկ երեսը կանանչ իսկ միւսը մանիշակագոյն է :

Ասիկա թախտիկին չափ առատ չէ, բայց անոր համը ունի, և անոր պէս կակուղ ու դիւրամարս է :

Քրզիկ կամ Քրզիկ.— Հիւսիսայինները՝ այս բանջարեղէնները քրզիկ կ'անուանեն, իսկ հարավայինները՝ քրզիկ : Գետնէն դէպի վեր ուղղակի ցցուող նուրբ ծղօաներէ կը բաղկանայ, շրջապատուած բազմաթիւ սրածայր տերեւներով : Ասիկա առատօրէն կ'աճի միայն լեռներու մէջ, իսկ դաշտերու մէջ չի գտնուիր բնու : Այս բանջարեղէնը հում վիճակի մէջ չեն ուտեր, այլ երբ թարմ է՝ կը սապկեն իւզով ու հաւկիթով, կամ մանուռանդ՝ պղղուրի, ծեծածի և կորկոտի հետ խառնելով միասին կ'եփեն :

Գարնան եղանակին, առատօրէն քաղելով, պարաններու պէս կը

հիւստն, և շարժախնեւում մէջ պատերէն կախելով կը շորցնեն և յետոյ կարասներու մէջ կը պահեն իբրեւ ձմրան պաշար:

Հելուկ կամ Հելուկի. — Հիւսիսայինները հելուկ կ'անուանեն, իսկ հարաւայինները՝ հելուկի: Ամէնէն յարգի բանջարեղէններէն մէկն է: Հողիւ գետնէն քիչ մը վեր ցցուող բունի մը շուրջը շարուած, 20-25 սանդխմէթր երկայնութեամբ և 2-3 սանդխմէթր լայնութեամբ, դանակի շեղբի նման տերեւներ ունի, որոնք ուղղաձիգ դիրքով վեր կը բարձրանան՝ իրար գրկած: Այս տերեւներուն կեդրոնը կը գտնուի այոճը, որ բոլորաձեւ ծիլ մըն է, տերեւներէն աւելի կը բարձրանայ և փոքրիկ գլուխով մը կը վերջանայ: Ասիկա ծաղկին ընդունարանն է:

Այս բանջարեղէնն ալ թէ թարմ վիճակին մէջ կ'ուտուի և թէ իբրեւ ձմրան պաշար, շորցուելով կը պահուի, ճիշդ քրդիկին պէս հիւսկէններու վերածելով: Երբեք սակայն հում վիճակի մէջ չեն ուտեր: Շատ համեղ բանջարեղէն մըն է, եփելու եղանակը այն է ինչ որ է քրդիկինը:

Ասոր արմատն ալ մասնաւորապէս առեւտուրի նիւթ է: Չայն կը շորցնեն, կ'աղան և ասով կ'ուռնենան Երեզ ըսուած փոշին, զոր քօլոյի կամ օսրայի տեղ կ'օգտագործեն դիւղացիները՝ արհեստներու մէջ. ինչպէս օրինակի համար, հեկեր Երեզով կը թանան: Թուրքերը և քուրդերը՝ այս բառը շիրիօ կը հնչեն:

Աս ալ գաւառին լեռնոտ մասերուն մէջ կ'աճի միայն, դաշտային մասերուն մէջ չի գտնուիր կամ հազուադիւրս է:

Եղինն, ելին կամ մումուռի խոտ: Այս բոյսը ամբողջովին շատ մանր և անհամար փուշերով ծածկուած է: Մայիս ամսուն կ'աճի և մինչեւ Յուլիսի վերջերը կանանչ վիճակի մէջ կը մնայ. կը գտնուի պարտէզներու չափառները, աղբուն կորդերը, ջրաւէտ վայրեր և ձորերու եզերքները: Հիւանդներու և մանուսանդ անմաքուր արիւն ունեցողներու այս խոտին խաշօնը կը յանձնարարեն: Կ'ըսեն թէ ասոր արգանակը՝ արիւններթուլեան (մայրասուլ) հիւսնողութիւն ունեցողներու, և ձեռքերու կամ ոտքերու եռք ունեցողներու օգտակար է: Ասոր գաղջ ջուրովը կը լուան հիւանդոտ անդամները:

Պսիկը. — Ասիկա Մարտ Ապրիլ և Մայիս ամիսներուն կ'աճի ընդհանրապէս ցորենի արտերուն մէջ: Երկար ցողուն մը ունի որ կը վերջանայ վարդադոյն ծաղիկով մը, զոր հարսնուկ կ'անուանեն: Այս բոյսը իբրեւ բանջարեղէն կը գործածեն միայն հարաւային գիւղացիները, որոնք զայն թէ հում կ'ուտեն և թէ՛ խաշելով և իւղով ու հաւկիթով տապկելով: Այս բանջարեղէնը դժուարամարս է:

Քուռաք կամ պրաս: Ասիկա կձու համ մը ունի, մանուսանդ անջրդի դաշտերուն մէջ աճող քուռաքը, որ սոխէն աւելի կձու կ'ըլ-

լայ: Ասիկա սխտորի ընտանիքին կը վերաբերի: Տերեւները, չեղբի նմանութեամբ, սխտորին տերեւներէն կը տարբերին միայն իրենց փոքրիկութեամբը:

Մարտ ամսուան ընթացքին երեւան կ'ուզայ, և մինչեւ Մայիսի վերջը իր թարմութիւնն ու մատղաշութիւնը կը պահէ: Նոյն ամիսներուն, գիւղացի հարսներ ու աղջիկներ դաշտերը կ'երթան քուռաթքաղելու: Շարսթը մէկ կամ երկու անգամ սաւաններով կը բերեն, հետեւեալ աւտունը դայն կը մաքրեն, պարանի պէս կը հիւսեն չորցնելու և իբրեւ ձմրան պաշար պահելու համար: Թարմ վիճակի մէջ, աւանց խաշելու կերակուրներու հետ կ'ուտեն իբրեւ սխտոր-ժարեր աղցան: Իսկ չորցուածը ապրցունքու հետ խառնելով միասին կ'եփեն, մանուսանդ պղլուրի և ոսպի ապուրներու հետ, զորոնք աւելի համեղ կը դարձնէ ան իր գրգռիչ յատկութեամբը: Եզնաքոցներ, լծվարներ երբ դաշտը գտնուին, իրենց աշխատութեան օրերը, հացին հետ քուռաթք աղին մէջ թաթխելով կ'ուտեն, փոխանակ սոխի և սխտորի, որոնց կծուութիւնը, յաճախ, աւելի խայտոզ կ'ըլլայ, մինչդեռ քուռաթքինը՝ աւելի մեղմ, եթէ անջրգի վայրերու մէջ աճող տեսակէն չըլլայ:

Նշանուած աղջիկներ, կ'ընտրեն լաւագոյն տեսակները, կը հաւաքեն զանոնք արտերէն, կը լուան, կը մաքրեն, բուռ բուռ առնելով արցակներ կամ խրճիկներ կը կտտեն անոնցմով, խնամք տանելով որ անոնց երկայնութիւնը հաւասար և հաստութիւնը համաչափ ըլլան: Այս արցակները կը զրկեն իրենց նշանածին տունը, իբր նուէր՝ իրենց գողարիկ սէրն ու հաւատարմութիւնը գործնական փաստով յիշեցնելու համար իրենց նշանածին:

Մայրամ ծաղիկ.— (Մայրամ ծաղիկ) ասիկա շփոթելու չէ Մայրամ խոտին հետ, որ սաստիկ դառնութիւն մը ունի և իբրեւ դեղ կը գործածուի (տես բուսարանը): Ունի երկայն ու բարակ տերեւներ, որոնք մութ կանանչութիւն մը ունին, ցօշուկներուն ծայրը ձերմակ գոյնով ծաղիկներ կը գտնուին: Ասոր համեւ ալ քրզիկին համին նման է: Մեծ առատութեամբ կ'աճի դաշտերու մէջ: Թարմ վիճակի մէջ իբրեւ խաշոն գործածելէ զատ, հելուկին, քրզիկին, քուռաթքին պէս աս ալ կը չորցնեն հիւստեամբ պարանի ձեւին տակ, և կը պահեն կարասներու մէջ իբրեւ ձմրան պաշար: Չորցուած Մայրամ ծաղիկը ձմեռը կը խաշեն և առանձին իւղով տապկելով կերակուր կ'ընեն, կամ ապուրներու հետ խառնելով կ'եփեն միասին:

Խառնիկ և փառչուկ.— Այս երկու բանջարները իրարու շատ կը նմանին՝ իրենց գոյնովը և բարձրութեամբը, իրենց տերեւները քիչ մը կը տարբերին իրարմէ: Գլխաւոր տարբերութիւնը որ կայ անոնց համերուն մէջ է, որ աւելի զգալի է: Գարնան ցանքերու ա-

տեն, ասոնք տրտերու մէջ երեւան կուգան, չեն մեծնար, ունին ցցուն տերեւիկներու սուր ծայրեր, քանի մը փոքրիկ թելանման ծղօաներու վրայ: Ասոնք սաւանց խաշելու նոյնիսկ, գիւղացիները հաւմ վիճակի մէջ կ'ուտեն:

Թորթ. — Հանրաժողով քանջարեղէն մըն է, որ եզան լեզուին կը նմանի. ասոր համար ըսուած է նաեւ եզնալեզու, ծածկուած է մսեղէն հասիկներով, սրոնք խարտոցի մը երեւոյթը կուտան անոր: Տերեւները լայնիկեկ ու երկայն, գեանի վրայ տարածուած կ'աճին տրամտին շուրջը: Այնքան ախորժահամ չէ: Բայց գիւղացիները զայն օգտակար բոյս մը կը համարեն բուժիչ յասկութիւններու տեսակէտով: Չայն կը խաշեն և ջուրը հիւանդներու կը խմցնեն: Երբ խաշօնը ուտեն կամ անոր ջուրը խմեն, բերանը, լեզուն, իրենց լայրժուն վիճակը կը կորսնցնեն, իբրեւ թէ օճաւով լուացուած ըլլային:

Թորթին արմատին ճիշդ մէջտեղէն ուղղաձիգ կերպով կը բարձրանայ ցօղուն մը, որուն ծայրը կը բացուին բաց կապոյտ ծաղիկներ: Այս մէկ հատիկ ցօղունը պոճ կ'անուանուի:

Ասիկա սովորական բանջարեղէններու կարգը չեն դասեր գիւղացիները, զայն իբր խաշօն կ'ընեն միայն հիւանդներու կերցնելու, և անոնց՝ անոր արգանակը խմելու համար:

Լվիւն. — Այս բուսին ուղղագրութեան վրայ վստահ չեմ, գուցէ լուիւն ըլլայ, հաւանօրէն «լու» բառէն կազմուելով, որովհետեւ խայթող համ մը ունի:

Գաշտերու մէջ անոր տճումը բնու տեսնուած չէ. զայն կը գտնեն լեռներու ծառախիտ մասերուն մէջ, փխրուն հողերու վրայ: Ասոր տերեւները՝ սխտորի կանանչ տերեւներուն կը նմանին, բայց աւելի երկայն են քան սխտորին տերեւները: Իր տերեւներուն մէջէն կը բարձրանայ սպիտակ ծիլ մը աւելի քան տերեւները, և կը պարունակէ իր հունտերը: Ասիկա արմատովը միասին կը հանեն: Իբրեւ բանջարեղէն չեն գործածեր, իր խթիչ համին պատճառաւ, այլ զայն չորցնելով կը պահեն իբրեւ դեղ գործածելու համար ըստ հարկին:

Ծննդարեւութենէ ազատող կիներու կը խմցնեն լուինճի արգանակը դաղջ բարեխառնութեամբ, երբ անոնք որովայնի կամ արգանդի, կամ ներքին սեւէ գործարաններու մէջ խիթեր ունենան: Լուինճին դերը, բանջարեղէններու շարքէն դուրս պէտք է համարել, սն կը պատկանի գաւառական բժշկութեան բաժնին:

Կոսով կամ կոսեմ. — Ասիկա ունի կծուութիւն մը որ հուսալայրող է: Կ'աճի առուակներու եզերքը առատօրէն, դաշտերու մէջ

չի գտնուիր: Հում վիճակի մէջ, իբրեւ աղցան, կերակուրներու հետ կ'ուտեն:

Քրեմար. — Ասիկա արմատէն բամբուռոզ ու գեանի վրայ տարածուող շատ մը տերեւներով շրջապատուող բոյս մըն է, տերեւներուն եզերքները փոթփոթ են, արմատը սպիտակ է, և երբ կտրեն, կաթ դուրս կուգայ: Լեռներու և դաշտերու մէջ աճող բոյս մըն է, պարտէզներու մէջ բնաւ չի գտնուիր: Առատօրէն կը գտնուին Գիւղացիները զայն կ'ուտեն թէ հում, և թէ՛ կերակուրներու հետ եփելով, բնաւ չեն ստապկեր, որովհետեւ կարծր է բաղդատամբ միւս բանջարեղէններուն: Ձմրան համար սա ալ հիւսելով խոշոր շորոցներու կը վերածեն, և չորցնելով կը պահեն կարտաներու մէջ:

Լեռայ-անուխ. — Շատ մը ճիւղերու բամբուռոզ, շատ մանր տերեւներով ծածկուած բոյս մըն է, որուն տերեւները իբրեւ համեմ կը գործածեն՝ իրենց կծուութեան համար. իսկ բաղմանդի ցօղունէն աւելներ կը կտակեն. հաճելի և խթիչ հոտ մը կ'ուենենայ այս աւելը: Իբրեւ բանջարեղէն բնաւ չի գործածուիր:

Փրօփրօուկ. — Ասիկա փուշերով ծածկուած տերեւներ ունի, որոնք թորթին պէս գեանի վրայ տարածուած կ'աճին: Երբ խոշոր փուշերը կը կակուղնան և անձնաս կը դառնան: Համով բանջարեղէն մը չէ, եփելու ատեն զայն ուրիշներու հետ կը խառնեն, և ապա եփելով կերակուր կը պատրաստեն:

Սիպեղ. — Քանի մը ծղօտներ ունի, որոնք ծածկուած են բարակ ու նեղ տերեւներով: Արմատը ճերմակ է կաթի պէս: Ասիկա առատ է, և երկու ամիսի շտի կը տեւէ անոր թարմութիւնն ու մատուցութիւնը: Կարգ մը ուրիշ համեղ բանջարեղէններու պէս յաճախ կը փնտռուի:

Առուի կաբոս (կարգալ աւովի կարոս). — Ասիկա չէ այն կարոսը (քերեվիզ) որ միտով կ'եփուի, թէեւ տերեւները քիչ մը կը նմանին անոր տերեւներուն, բայց համը կը սարքերի անոր համէն: Կ'աճի առուակներու եզերքները, և իբրեւ աղցան կ'ուտեն առանց խոշորու կամ եփելու: Արմատը ճեփ ճերմակ է սիպեղին արմատին պէս:

Ջամպուր. — (Տես բաւարանը) Ջամպուրը լեռնային բոյս մըն է, 20-25 սանդիսէթր բարձրութեան կը հասնի իր աճումը: Ասիկա կը բաղկանայ կարծր ցօղունէ մը, որուն շուրջը, արմատէն մինչեւ գագաթը, տերեւներ կան. իր տերեւները այնքան խոշոր չեն, մութ կանանչ գոյն մը կ'ուենան: Թեթեւօրէն կծուանամ է, երբեք զայն իւղով ստապկելով կերակուր չեն ըներ, այլ իբրեւ աղցան կը գործածեն: Չայն կը չորցնեն, բուռ բուռ կը կտակեն և ձմրան օրերը, մասնաւորապէս պահոց օրերը, կը խոշեն, և վրան աղ ցանելով առանց իւղի կ'ուտեն:

Մեծ պահոց առաջին երկուշաբթի օրը, անպայման զամպուր պիտի խաշեն և վրան աղ ցանելով պիտի ուտեն: Չամպուրը չորցնելէ զսա աղն ալ կը դնեն, այսինքն աղի ջուրի մէջ կը պահեն զայն 10-15 օր, այն ատեն հանելով հացով կ'ուտեն: Անոր ուտուելիք մասը միայն տերեւները կը կազմեն, ցօլունները փայտի պէս կարծր են և չեն ուտուիր: Ատիկա շատ ախորժարեք է, հետեւաբար շատ հաց կը կերցնէ: Գիւղացիները կ'ըսեն. «Չամպուրը հացի խրոսով ք»: Ըսել կ'ուզեն անոր հետ հացը չափէն աւելի կ'ապուի: Այս համեմատած բանջարը գաւառին ամէն կողմը ծածօթ է միւսնոյն անուանով: Քուրդեր և թուրքեր ալ միւսնոյն բաւը կը գործածեն՝ առանց հնչումի ուրէ փոփոխութեան:

Իւաղձ.— Մատենագրական բառ մը, որուն «ն» տառը ջնջուած է գաւառական հնչումին մէջ: Վայրի անանուխ կարելի է անուանել զայն, որովհետեւ տերեւներուն մեծութիւնն ու ձեւը անանուխին տերեւները կը յիշեցնեն, միայն դաղձին տերեւներուն տակի երեսը սպիտակ խաւ մը ունի: Առուններու եզերքը, կամ ջրառատ վայրերու մէջ առատօրէն կ'ածի: Անանուխին շափ զօրաւոր հոտ չունի համն ալ նուազ համեմային է:

Մերթ լուալէ յետոյ աղին մէջ թաթխելով կ'ուտեն, բայց իր գլխաւոր գործածութիւնը սա է որ քանապուրի մէջ կը մանրեն և կ'եփեն թերեւս զայն աւելի դիւրամարս կը դարձնէ:

Առանց դաղձի քանապուր չեն եփեր: Յարութեան ճրագալոյցին երեկոյին, պահքը լուծող առաջին կերակուրը՝ դաղձով թանապուրը պէտք է որ ըլլայ միշտ:

Գարունէն մինչեւ աշուն, ուրէ ատեն ան կը գտնուի ջուրերու մօտերը, ո'րէ ստեն գիւղացին զայն կրնայ ունենալ քանի մը վայրկեանի մէջ, որովհետեւ լեռները, հեռաւոր դաշտերը երթալու և զայն փնտռելու պէտք չկայ միւս բանջարեղէններու պէս, այլ տուներուն կից կամ մերձաւոր պարտէզներու մէջ կամ առուններու եզերքը կ'իջնէ թանապուր եփող կիներ կամ հարսը քանի մը վայրկեանէն կրնայ ուղածին շափ քաղելով սուն բերել:

Իւաղձին ջուրն ալ կը պատրաստեն, և իբրեւ դեղ կը գործածեն: Դաղձի ջուր կը պատրաստեն մեղմ կրակով դաղձը եռացնելով: Բաւական ժամանակ այս արգանակը պաղեցնելէ յետոյ շիշերու մէջ կը լեցնեն և կը պահեն հարկ եղած ատեն գործածելու համար:

Կ'ըսեն թէ՛ երբ մէկուն լեզուն բռնուի, այսինքն չկարենայ խօսիլ, դաղձի ջուր կը կաթեցնեն քիթին ունդերուն մէջ: Սաոր աղեցութեամբ ենթական իր խօսելու կարողութիւնը կը վերստանայ:

Դաղձը երբեք խաշօն չեն ընէր, ոչ ալ իւղով կը տապկեն անով

կերտկուր պատրաստելու համար, իր դերը միայն այնքան է, ինչքան որ վերը բացատրեցի: Չայն չորցնելու խակ պէտք չունին, որովհետեւ ձմեռն իսկ թարմ գազձ գտնել կարելի կ'ըլլայ միշտ:

ԱՌՈՒՆՏ (առուոյս).— Ասիկա ինքնաբոյս խտանդէն մը չէ, զայն կը մշակեն մասնաւորապէս ո՛չ թէ միայն իբրեւ բանջարեղէն մը, այլ նաև կենդանիներու իբրեւ կեր ծառայող խտան մը: Ասոր մշակութեան կը յատկացնեն ամբողջ արտ մը կամ նոյնխակ երկու արտեր: Կը հերկեն զամռանք ու կը սերմանեն: Գարնան սկիզբները, Մարտ և Ապրիլ ամիսներուն երբ ստիպուին հազիւ գետնէն մէկ երկու սանդիմէթրի չափ բարձրացած ու գեռ մատուցէ, հարսեր ու աղջիկներ կը քողեն զայն առանց արմատէն հանելու, և իրենց գոգնոցներուն մէջ լեցնելով սուն կը սանին: Կը լուան, կը մաքրեն, կը խաշեն և պահոց օրերուն, խաշօնին վրայ միայն քիչ մը աղ ցանելով կ'ուտեն, իսկ ուտիք օրերուն ալ, կը ստակեն իւզով ու հաւկիթով: Շատ համեղ բանջարեղէն մըն է: Նաև, ձմրան համար մտա մը կը չորցրեն, ուրիշ բանջարեղէններու հետ խառնելով, կերտկուր կը պատրաստեն:

Ապրիլ ամսուն վերջերը կամ Մայիսի ընթացքին իր աճումը կը հասնի մինչեւ 70 սանդիմէթրի բարձրութեան, այն ստան կը ծաղկի և բանջարեղէն ըլլալէ կը գաղբի: Ծաղկած վիճակին մէջ, չեն թողուր որ կենդանիները ուտեն զայն, որովհետեւ կը փռնին, ուտի միասակար կը համարեն: Հասուննալէն յետոյ մանգաղներով կամ գերհսուներով (գերանդի) կը քողեն: Քաղուած առուոյսը բուս բուս առնելով և իրարու վրայ գնելով կ'ուլորեն և երեք չորս մէթր երկայնութեամբ պարանի մը ձևը կուտան անոր: Չայն լու մը ոլորելէ յետոյ երեք ծալք ընելով իրարու վրայ կը գարծնեն: Ասանք իրարու հետ կ'ուլորուին ու այլեւս չեն քակուիր: Այսպէս որոշուած առուոյսի քանակութիւնը փիլայ կ'անուանեն, և ոլորելու գործողութիւնն ալ՝ փիլայել ներգործական բայով կը յայտնեն:

Երեսուն փիլայ առուոյսը մէկ բարդ կ'անուանեն բարդ մի առուոս երբ ըսեն, երեսուն կապոց կամ փիլայ կը հասկնան: Այս փիլաները չորցնելէ յետոյ մարտքներու մէկ անկիւնը կը շարեն: Չմրան եղանակին զայն սաթուրով մանրելով յարդի և քասի հետ կը խառնեն և կենդանիներուն իբրեւ կեր կուտան: Աս վիճակին մէջ ան միասակար ըլլալէ կը գաղբի, և ընդհակառակն, անոնց օգտակար կ'ըլլայ իբրեւ լուսադոյն սնունդներէն մէկը:

Փերփեր.— Աս ալ ինքնաբոյս բանջարեղէններու կարգին կը պատկանի: Ոչ լեռներու մէջ և ոչ ալ ուրիշ խոզանուտներու վրայ կ'աճի: Կը գտնուի բամպակի արտերուն մէջ պարտէզներու և առուոյսի արտերուն կորդերը, ուր մեծ աւատութեամբ կ'աճի ստ-

տասակներու և ուրիշ գաշտացին խոտերու հետ խառն : Գորնան և զանակին չի գանուիր, միշտ ամբան ընթացքին, մինչև տշնան առաջին ամսուան լրումը կարելի է գանել զայն կանանչ վիճակի մէջ :

Զայն կը քաղեն, և թարմ վիճակի մէջ կը խաշեն և իւզով կը տապկեն, համը քիչ մը թթու է : Այս թարմ վիճակին մէջ, կը գործածեն նաեւ ուրիշ կերակուրներու հետ ալ, ինչպէս անով կը պատրաստեն պորանի եւն :

Զմբան եղանակին համար ալ կը պահեն զայն երկու վիճակներով : Առաջին . զայն նախ կը խաշեն, յետոյ կը պաղջրեն, և տապ կը փռեն քանի մը օր որպէսզի չորնայ : Զորնուէ յետոյ կը պահեն մասնաւոր ամաններու մէջ : Ասով կ'եփեն ձմեռը, փերփեր տպուր, և ուրիշ պահոց կերակուրներ՝ ծեծածի, և ուրիշ ապրցուներու հետ խառնելով :

Երկրորդ, դարձեալ զայն կը խաշեն, կը պաղջրեն, և յետոյ մասնաւորապէս սեւըրթուած կարասներու մէջ լեցնելով վրան՝ աղջուր կ'աւելցնեն այնքան որ ծածկէ, որպէսզի փերփերը աղջուրին երեսը չկուտակուի, վրան սալ քարեր ալ կը դնեն, որոնց ճնշումին տակ, մինչև վերջ, փերփերը, ջուրին խորը ընկղմած կը մնայ : Մնալով այսպէս, օրերով, աղջուրին մէջ, կը դեղնի, և գործածուելիք տատիճանին հասած, աղը մճած կ'ըլլայ : Ասիկա, սոխով, սխտորով տապկելով շատ համեղ կերակուր մը կ'ըլլայ :

Այսպէս աղը դրուած փերփերը՝ աղի փերփեր կ'անուանեն, կաղամբը՝ աղի լահանայ, բուսկնին՝ աղի բեկի եւն :

Ինքնարոյս բանջարներու կարգը կ'ամբողջանայ՝ լահանուկով, թթուկիչով, սունկով, ճննդկահացիկով, պառկուկ մազիկով և պապու մօրուֆով : Ասոնցմէ լահանուկը կաղամբի նմանութիւնն ունեցող բոյս մ'է, սակայն անոր պէս տերեւները իրարու վրայ փաթտուելով գլուխ կամ փոր չի կազմեր, և փոքր կ'ըլլայ . Բալուի հիւսիսային գիւղացիներու անձանօթ է սա բանջարեղէնը, ծանօթ է ան հարաւայիններուն : Թթուկիչը՝ թթու համ մը ունի, ունի խոշոր տերեւներ : Ասիկա, իր թթուաշ համին համար երբեմն առանց խաշելու կ'ուտեն : Կարեւոր բանջարեղէն մը չէ : Սունկը երկու տեսակ կ'ըլլայ մէկ տեսակը կ'անուանեն գալու կամ օձու սունկ, որուն հովանոցեակին ներքեւի երեսը ածուխի պէս սեւ կ'ըլլայ . ուռնիներու օտքը բուսնող սունկերը այս տեսակէն են . իսկ բարտիներու արմատներու քով կամ մանաւանդ կաղնիի անատուներու մէջ աճող սունկերն են որոնք ուտուելու համար կը քաղուին : Ասիկա հազաւագիւտ է, նաեւ գիւղացիներ պատահաբար զայն կը քաղեն երբեմն, և կամ խորովելով, կամ տապկելով կ'ուտեն :

Ճնճղկահասցիկը առատօրէն կ'ածի արտերու մէջ, բայց իբրև կարեւոր բանջարեղէն մը չի համարուիր: Քիչ անգամ զայն կը խաշեն և կը տապկեն:

Պառկուկ մագիկը որ թերմաման բանջարեղէն մըն է, ինչպէս պտարու մօրուքը. իբրև աղցան կը գործածեն. առաջինը կը չորցնեն նսեւ, և ուրիշ բանջարեղէններու հետ միասին խաշօն կ'ընեն:

Ահա, սասնք են ինքնարոյս բանջարեղէնները, զորոնք Բալուի գիւղացիները, ամառ, ձմեռ, ուէ ատեն կրնան ունենալ սուսնց ծախքի: Բաղդատամբ սսոնց տեսակներուն շատութեան, մշակելի բանջարեղէնները տեսակով շատ նուազ և քանակով նոյնիսկ անբաւական կը մնան, գիւղեր կան որոնք տարւոյն մէջ հազիւ քանի մը անգամ միայն մշակուած բանջարեղէն կ'ունենան: Սսոնցմէ միայն լոպիկը, կաղամբը, բողկը, սոխ, սխտոր, պան բացառութիւն կը կազմեն: Գետնախնձոր չկայ. գիւղեր կան որոնք լոլիկի գործածութիւնն իսկ չէին գիտեր ասկէ 30-40 տարիներ առաջ. շողգամ, սակ, ամբուկ, քիչ գիւղեր կ'ունենան, ան ալ շատ քիչ քանակութեամբ: Բանջարեղէնի մշակութեան յետադէմ վիճակը, որ քան ինքնարոյս բանջարեղէններու առատութեան, նոյնքան երկրագործական ուրիշ զբաղումներու շատութեան արդիւնք է: Գիւղացին՝ որ այնքան ցորենի, գարիի, ոսպի, ֆիթի, եւնի, բամպակի, այգիի, ծաւերու մշակութեան աշխատութիւններով կը կլանուի, չի կրնար ժամանակ գտնել, բանջարեղէններու մշակութեան լայն ժամանակ չատկացնելու: Կիներն ալ, որոնք դաշտի աշխատութիւնները հաւատարմայէս կը բաժնեն այրերուն հետ, հազիւ կիրակի և ածի օրեր կրնան ժամանակ գտնել տծուներու մէջ. իբրև զբօսանք պարտաւելու բանջարեղէններու մշակութիւնն ընելով: Բանջարեղէններու քիչ մը մշակութիւնը, սոխի, սխտորի, լոպիկի, կաղամբի, եւնի, տանախիլիները կ'ընեն, որովհետեւ, ամառնային եղանակին անոնք հարկագրուած կ'ըլլան տուն մնալու, և սուսնին գործերով պարտաւելու, այս գործերու շարքին, կ'աւելցնեն երբեմն տծուներու աշխատութիւններն ալ: Սսոնք կը պատրաստեն, կը յարգարեն մշարաները, սասը կը զարնեն (յետոյ պիտի բացատրեմ), կը քսինն, կ'ուռզեն, և բանջարեղէններ կը հասուցնեն. սսոնց համար յատկացուած ժամանակը տեւորդ ժամանակ մը կը համարեն. այսինքն երբ տանախիլինը անսկան գործերը աւարտէ ա՛յն ատեն միայն տծուներու աշխատութեամբ կը պարտաւի:

Այժմ պիտի խօսիմ թէ գիւղացիները ինչպէս կ'ընեն բանջարամշակութիւնը, և ո՛ւր կամ ի՛նչ տեսակ գետնիներու վրայ:

Բանջարամշակութեան տեղերը գիւղերու անմիջապէս քովիկը, աղբիւրներու հոսանքին ուղեւ կամ առուններու եզերքը ընտրուած

գեախններ են, որոնք եթէ միայն բանջարեղէններու մշակութեան յատկացուած են, ածու կ'անուանեն գիւղացիները. իսկ եթէ ուրիշ բերքերու կողքին մաս մը գեախն ալ բանջարեղէններու մշակութեան յատկացուած է, պարզապէս պաղչայ, պարտէզ կ'անուանեն, ուր կը գանուին նաեւ մրգատու ծառեր: Ածուները՝ ամէն կողմէ բարախ կամ ուռի ծառերով, պատով ու փշալից ցանկով շրջապատուած պարտէզներ են: Անոնց բանուկ ճամբաներու եզերքը վերջաջացող սահմանը կը փակուի մէկ կամ մէկուկէս մէթր բարձրութեամբ և 75 սանդխմէթր հաստութեամբ շոք պատով մը, որուն վրայ կը գանուի անցքը կամ դուռը, որ կը փակուի նաղդուռով մը: Ճաղգուռը դուռ մըն է որուն մէջ տախտակի տեղ, ձողեր կը գետեղուին, իրարմէ 20ակսան սանդխմէթր անջրպետով, և հորիզոնական դիրքով հաստատուած, երկու՝ իրարու հորիզոնական և ուղղածից դիրքով հաստ սիւններու վրայ, ասանցմէ մէկը՝ երկու ծայրերը վերին բարաւորին և ստորին սիմին մէջ ազուցուող կրօնկներով կը վերջանայ. իսկ միւսին վրայ կը հաստատուի գորտը: Անշուշտ շատ հաստատուն դուռ մը չէ, բայց պարզապէս կենդանիներու և փոքրիկ շտրածձի տղաքներու դէմ անցքը փակելով՝ ածուները ապահովելու կը ծառայէ: Թէեւ, անոնք, տղաքները, երբեմն յանգրգնութիւնը կ'ունենան նոյնիսկ բանալիներ շինելու և դուռը բանալու: Ածուները չեն հետաքրքրեր դիրենք, բայց պարտէզներու մէջ երբեմն ծիրան, սալոր և ուրիշ պտուղներ գողնալու... կ'երթան, և երբեմն ալ բռնուելով ծեծով մը կը քուեն իրենց յանցանքը:

Ածուները, ուրեմն, հաճոյատեսիլ վայրեր են: Քաւարայով, տանտիկիները, հաշանելն ու ազջիկները կը փորեն, վայրի խտաբը կը բախեն, կը մաքրեն, և համաշփ մշարաններու կը բռնեն, կազմելով փոքրիկ տիօսներ, որոնք իբրեւ առու պիտի ծառային ոռոգումներու տակն, կաւտաներ, որոնք մշարաններուն թումբերուն յարմար մէկ կէտին վրայ թողուած անցքեր են, ուրկէ ջուրի հոսանքը առուէն բաժնուելով մշարային վրայ կը տարածուի: Երբ մշարային ոռոգումը աւարտի, կաւտուը կը փակեն ցեխով, և ջուրի հոսանքը կը կտրուի մշարայէն:

Իսկ դաշտերու մէջ, միայն լոպիկի = լուբիա = մշակութիւնը կ'ընեն, աս ալ վերջին ժամանակներու մէջ, ուր պէտք զգացին աւելի մեծ քանակութեամբ լուբիա տրտաղրելու, իբրեւ վաճառքի նիւթ և իբրեւ սան լիցք:

Կաղամբ.— Այս բուռը Բալուի բարբառին բոլորովին անծանօթ է. գիւղացի թէ քաղաքացի լանանայ բառը կը գործածեն: Ասոր մշակութիւնը հետեւեալ կերպով կը կատարուի: Նախ, պարտէզին կամ ածուին խոպան մէկ անկիւնը կամ աղբամուցներու վրայ ան-

կանոն կերպով կը սերմանեն : Մէկ քանի շաբաթէն խիտ կերպով կը ծլին հունասերը , և 5-8 սանդէմէթրի չափ երբ գեանէն կը բարձրանան , այն ստեն զանանք տրմատով միասին հանելով ցանուած տեղէն , կը փոխադրեն նախապէս պատրաստուած մշարաներու մէջ , ուր որոշ անջրպեաներով հաս հաս հողին մէջ կը անկեն : Բանջարեղէններու այս կերպ անկադործութիւնը սասր զարնել , իսկ անկուելիք ծիլերը արմատով հանուած , սասր կ'անուանեն : Սաարը զարնելով անկադործութիւնը անհրաժեշտ եղանակ մը համարուած է բանջարամշակութեան մէջ . որովհետեւ կաղամբը , ինչպէս ուրիշ կարգ մը բանջարեղէններ , կրնան տծիլ լաւ կերպով եթէ իրարմէ որոշ կամ բուսականաչափ հեռու անկուին . բայց որովհետեւ առաջին սերմանումով , հունասերուն շատ մանր ըլլալուն պատճառաւ , անոնցմէ ընտրելագոյնը կարենալ զտանելը անկարելի է , ստոր համար սասր զարնելու միջոցին դիմած են : Ծլած հունասերուն միջեւ կարելի է զտանել լաւագոյնները , և զանանք մշարաններու մէջ փոխադրելով , հոն համաչափ հեռուործութիւնները դիւրութեամբ ճշդել :

Սասրը զարնուելէն օր մը յետոյ , առաջին ուռգումը տեղի կ'ունենայ , բոլոր մշարաները ջուրով կը ծածկուին , ինչպէս զարնուած սաարներուն մէկ մասը : Այս առաջին ուռգումէն երեք օր , սպաշորս օր և վերջապէս շաբաթը և առ առաւելն 10-15 օրը մէկ անգամ տեղի կ'ունենան միւս ուռգումները յաջորդաբար : Լահանան աշնան սկիզբները կ'սկսի զլուխ կապելու , այսինքն տերեւները կ'ամփոփուին , իրարու կը փաթտուին սեղմ կերպով , իբր կեղրոն ունենալով ծիլը որուն փոք ալ կ'ըսեն : Մինչեւ աշնան վերջին ամիսը , երբ այլեւս ցուրտերը կ'սկսին , եղեամբ առատները կը ծածկէ բուսականութիւնը , այն ստեն միայն լահանաները քաղելու ժամանակը հասած կը համարեն , ուստի յօտոցներով անոնց բուները կը կտրեն , և էշերու բեռցելով տուն կը փախադրեն : Կաղամբը եթէ ձմեռն իսկ առանց քաղուելու մնայ իր բունին վրայ , անպատեհութիւն չեն տեսներ , ցուրտը զայն աւելի կը քաղցրացնէ կ'ըսեն :

Ըսի թէ բոլոր գիւղերը բանջարանաց չունին , մտնուանդ լեռնայինները . կաղամբը կը մշակուի գլխաւորապէս , Սէյախլար , Սղամ , Սագրաթ , Թիւ , Թրխէ , Նաճարան , Նորգեղ գիւղերու մէջ : Այս գիւղերուն մէջ մշակուած քանակութիւնը՝ ամբողջ գաւառին անբաւական է : Այս պատճառաւ , ընդհանրապէս Խարբերդի լահանան է որ կը վաճառուի , և աւելի յարգի կը համարուի իր թերթերուն սպիտակութեան ու քաղցրութեան համար . սակայն , տսիկս երկար ժամանակ չկրնար դիմանալ : Բալուի լահանային թերթերը կանոնաչորակ են ընդհանրապէս , փորին կեղրոնական մասը , այն է ծիլը միայն ուղիտակ է , բայց առ աւելի երկար ժամանակ կրնայ դիմա-

Տոպ, մինչեւ Ապրիլ, հոյնիակ Մայիս ամիսը կազմաբը աղ ջուրի մէջ
անխաթար կը մնայ:

Հաճանան ձմրան յատուկ բանջարեղէն մըն է. տրգէն Հոկտեմբեր
ամսուն կը քաղեն, և խոշեղէ յետոյ աղը կը գնեն երբեմն մանրը-
ւած երբեմն ալ մէկ գլուխը երկուքի ճեղքուած վիճակով: Հետեւ-
եալ կերպով աղը կը դնեն զոյն: Թաշեղէ յետոյ մուրսասանկուած
կամ սեւըրբուած կարամներու մէջ կը տեղաւորեն, զինքը ամ-
բողջովին ծածկելու շտի աղջուր կը լեցնեն՝ թթիամորի լծոյթով
խառնուած: Վրան ալ կը ծածկեն քարերով, որպէսզի միշտ ջուրին
մէջ ընկղմած մնայ, որովհետեւ ջուրին երեսը եթէ ելնէ կը սեւնայ,
կ'աւրուի և հարկ կ'ըլլայ այդ մասը թափել: 15-20 օր այսպէս
մնալով այլեւս խաճանան աղը մտած կ'ըլլայ, այսինքն այլեւս կրնան
զոյն գործածել կերակուրներու մէջ:

Աղը դրուած կամ թթուաւի վերածուած խաճանան սխտով միա-
տան, մերթ սխտոր ալ խառնելով, ստակելով իւզո՛վ կ'ուենեան,
սաւանց շատ աշխատութեան, բաւական համեղ կերակուր մը, որով
ճարելի է ժուլ սնցնել: Իսկ սահասարակ ապրցուներու հետ խառ-
նելով կը պատրաստեն անով տպուր, եղինծ, եփելով զոյն խաւուր-
մալով (խորկուած միտով), ուրիշ բանջարեղէններու հետ ալ խառն
կը ստակեն: Այսպէս իր գործածութիւնը շատ է՝ Իեկտեմբեր ամի-
սէն սկսեալ մինչեւ Մայիս ամիսը: Անկէ յետոյ այլեւս չի գործած-
ուիր, որովհետեւ, երբ կ'լիման տաքնոյ, աղը դրուած խաճանան կ'աւ-
րուի. այն է լարծուն վիճակ մը կ'ուենեայ, համը կը փոխուի, և
այլեւս գիւղացի տանտիկինը կը հարկադրուի կենդանիներու կեր-
ցնելու կամ թափելու:

Ասոր տերեւները, երբեմն, մասնաւորապէս քաղաքացիները,
ձեծուած միտով ու ձաւարով լիցք կը շինեն: Բողաքացիին համար
ասիկա ընտրելագոյն կերակուրներէն մէկն է, զոր սակացն գիւղա-
ցիները քիչ անգամ կը պատրաստեն, որովհետեւ, անոնք ատրուոյն
մէջ հողիւ քանի մը անգամ թարմ միա կ'ուտեն: Իրբեւ միս կը
գործածեն միայն խաւուրման, իսկ բանջարեղէնները կը ստակեն,
ուտիք օրերու համար, արդար իւղով, և պահոց օրերու համար ալ
օրիկով կամ շուշմոյի իւղով:

Պան.— Քուրդերը և թուրքերը իսօք բաւը կը գործածեն. բոյց
քուրդեր, երբեմն, սրած բաւն ալ կը գործածեն: Սոխէն յետոյ, ա-
մէնէն շատ գործածական բանջարեղէններէն է: Ամէնէն աւելի հուժ
վիճակի մէջ կ'ուտեն զոյն կերակուրներու հետ, կամ առանց կերա-
կուրի հացի հետ միայն, հուժ կամ խորոված: Խորովելու համար,
անոնց վրայ մէկական փոքրիկ ծակ կը բանան, ուրիշ անոնց մէջ
մէկ մէկ քիչ աղ կը լեցնեն, յետոյ շամփուրի վրայ անցնելով թա-

նիրին մէջ կը կախեն. մեզմ ջերմութեամբ կը խորովուի, և աղով համեմուած իր կծու թիւնը ախորժակ կը գրգռէ:

Ասոր մշակութիւնն ալ, լահանայի մշակութեան նման սաստիկ զարնելով կ'ըլլայ: Կան մանր և խոշոր տեսակները, ինչպէս նաեւ կծու և անուշ տեսակները: Բայուր պածերը ընդհանրապէս կծու ու յաճախ շատ կծու կ'ըլլան: Մէյախրար գիւղը կ'արտադրէ խոշոր ու նուազ կծու պածեր:

Աս ալ, լահանային պէս աղը կը դնեն: Եսիս, աղը գրուելիք բոլոր պածերը կը ծակեն շիշով մը կամ շամփուրով մը. յետոյ սեւ-ձրթուած կարասի մէջ դնելով՝ վրան սղի ջուր կը լեցնեն մինչև որ ծածկէ զանոնք սամբողջովին, վրան քանի մը սալքար ալ կը դրնեն, և այսպէս խուփով մը կարասին բերանը կը փակեն: Բանի մը շարաթէն, պածերը աղը մսած կ'ըլլան. անոնց կանանչ գոյնը գեղինի կը փոխուի: Ասիկա աղի պան կ'անուանեն: Երբեմն կերակուրներու մէջ կը մանրեն, զանոնք համեմելու համար, բայց յաճախ կերակուրներու հետ կ'ուտեն, կամ սոսկ հացի հետ՝ պահոց օրերը ու անով ժուլ կ'անցրնեն:

Ասկէ դատ, թելերու վրայ անցնելով թարմ պածերը, անոնցմէ շարոցներ կը կազմեն, և շարասիներու պատերէն կամ առիքէն կախելով ամրան եղանակին կը չորցնեն. օդին մէջ այսպէս չորցնելէ յետոյ, թոնիրներու մէջ կը կախեն երեկոյին: Կոն մեզմ բարեխառնութեամբ մինչև առտու լաւ մը կը չորնայ և փխրուն կամ բեկանուա վիճակ մը կ'առանայ: Ասկէ յետոյ թակով, կամ սանդով կը ծեծեն և կամ երկամաքարով կ'աղան ու ասով կ'ուռնենան մանր և կարմիր պղպեղ, զոր կը պահեն կերակուր համեմելու համար, գիւղացիներուն՝ գրեթէ, սեւ պղպեղը բոլորովին անծանօթ է, բայց ոչ քաղաքացիներուն:

Տակ.— Ծակնդեղը այսպէս կ'անուանեն: Աս ալ պածին և կաղամբին պէս կը տնկեն: Վերջին ժամանակները, սասոր մշակութիւնը հետզհետէ նուազեցաւ, և գրեթէ անկարելորդ դարձաւ: Ասիկա ալ աշնան միջոցին կը հանեն գետնին տակէն: Չայն խաշելէ յետոյ կ'ուտեն, շատ քաղցր համ մը կ'ուռնենայ, կամ թէ խաշելէ յետոյ անոր թթուակը կը պատրաստեն քացախով: Ասոր տերեւները տակի բազուկ, կամ սարղապէս բազուկ կ'անուանեն: Աս ալ կերակուրներու հետ միասին կ'եփեն, իբրև բանջարեղէն:

Բողկը, տակին պէս քիչ կը մշակուի: Երկու տեսակներ կան. սպիտակ բողկը և սեւ բողկը, սեւ բողկ անուանը կուտան անոր համար որ, անոր կեղեւը սեւ է: Երկուքն ալ կծու են, և կ'ըլլան խոշոր:

Աշնան վերջին ամսուն գետնին մէջէն կը հանեն, և տուն տա-

Տեղով քակերու մէջ կը թողեն, որպէսզի թարմ մնայ, ձմեռը կը հանեն անկէ և առանց խաշելու կ'ուտեն: Ներքին կարգ մը հիւանդութեանց օգտակար համարելով զայն, առաւելները, մեղրով միասին կը կերցնեն հիւանդներուն:

Շողգամն ալ, երեւոյթով բողկին նման է, բայց համով կը տարբերի անկէ: Ասով ապուր կ'եփեն շողգամ ապուր անուշով:

Սոխի ու սխտորի մշակութեան համար մասնաւոր արտեր կը շտակացնեն, ամուսներէն զատ, երբ մեծ քանակութեամբ արտադրել հարկ ըլլայ: Երբ սոխը հասուննայ և պոֆ կազմուի, կամ ծաղկի և հոռա ձեւացնէ. այն ատեն հունար կ'առնեն և մնացած տերեւները, որ գահցած են և չեն ուտուիր այլեւս, կը կոխկուտեն, որպէսզի հողին մէջ գանուող արմատը կամ գլուխը զօրանայ: Քանի մը շարաթ այդ վիճակին մէջ մնայէ յետոյ, գետնէն կը հանեն, մէկ երկու օր արեւը պահելէն յետոյ, ներսի տան մէկ անկիւնը կամ կարտաներու մէջ կը լեցնեն ձմրան եղանակին գործածելու համար: Ամէն գիւղ մեծ քանակութեամբ սոխ շարտադրեր, ուստի շատեր կ'ատիպուին գուրսէն գնելու՝ փոխանակութեամբ:

Սխտորի մշակութիւնն ալ նոյն եղանակով կ'ընեն:

Լոպիկ կամ լուբիտ. Լուբիտ բառը անձանօթ է գիւղացիներուն ընդհանուր առմամբ լոպիկ կը գործածեն, նոյնպէս քուրդերէն շատեր: Լոպիկը երկու տեսակ է հոն. մէկը սլաղչի լոպիկ կ'անուանուի, իսկ միւսը՝ դաւեսի լոպիկ: Պաղչի լոպիկը ամուսներու մէջ կը ցանեն, անոր բոյսը բողեղի սէս կը մագլցի. ուստի երբ բուսնելէն յետոյ քիչ մը բարձրանան, անոնց մօտ՝ մէկուկէս, երկու մէթր երկայնութեամբ սարբինաներ կը տնկեն: Հետզհետէ լոպիկին նուրբ ցողունները աճելով սարբինաներուն շուրջը կը փաթտուին և մինչեւ գագաթը կը բարձրանան: Շարաթը անգամ մը կանոնաւորապէս կ'ուտեն: Սարբինաներուն շուրջը լոպիկի պաճուկներով կը ծածկուի գագաթէն մինչեւ ստորտար: Հեղ մը որ սկսին լոպիկ տալ, այլեւս հարսները պարբերապէս կը քաղեն խոշորները, իսկ մանրերը կը թողուն որ խոշորնան: Քաղուած լոպիկներէն կերակուրներ կը պատրաստեն կամ գանոնք կը շորցնեն, ու ձմրան համար կը պահեն: Այս լոպիկին պաճուկները կ'ըլլան երկայն, լայն, մտուտ, և հատիկները այնքան խոշոր չեն ըլլար, ուստի, շատ համեղ կ'ըլլան: Իւզով սխտորով կը տապկեն և ախորժահամ կերակուր մը կը պատրաստեն անով: Կամ ըլլայ թարմ, ըլլայ չոր, ձաւարով և խարկուած միտով ապուր և կամ եղինձ կ'եփեն: Ասոր հատիկներն ալ գոյնզգոյն կ'ըլլան:

Գալով գաշտի կարմիր լոպիկին, ատիկա, արտերը վարելէ յետոյ կը ցանեն: Այս տեսակին ցողունները շատ չեն բարձրանար, հազիւ

60-70 անդամները կը բաղադրուին, կը ծաղկին, ու կ'սկսին լողիկ տալ: Ասոր պաճուկները նեղ և ուռած կ'ըլլան, ուստի հասիկները տեղի փոքր են քան միւսին հասիկները: Կը թողուն որպէսզի լաւ մը հասունանան: Հասունալէն յետոյ կը քաղեն կամ կը ժողովեն, և կը թողուն որ չորնան, յետոյ հասիկները կեղեւներէն կամ պաճուկներէն կը զտան, թակով ձեծելով: Ասկէ կ'ուսենան ինչպէս կ'ըսեն երկրորդ տեսակ լողիկը, զոր դաշտի լողիկ կ'անուանեն: Ասիկա փնխամուկելի կամ վաճառելի լաւ բնուի է:

Ճերմակ լուբիան (Փատուլիա) • Ասիկա մինչեւ 1870 թուականը այն քան առատութեամբ չէր մշակուեր, և նոյնիսկ, գեանախնձորին սկէս այն քան ծանօթ չէր գիւղացիներուն: Կը թռելիթէ, վերջին ժամանակները անոր մշակութիւնը խարբերուէն Բալու ներածուած ըլլայ: Այս ճերմակ լողիկը քիչ կը գործածուի: Պողչի լողիկն է որ շատ կը փնտառուի գիւղացիներու կողմէն: Իսկ դաշտի լողիկն է որ այր երկրագործները կը մշակեն, միւսը, ինչպէս բարձր քանջարեղէնները կ'ինեն են որ կը մշակեն:

Լողիկը, ուրեմն, մշակելի բանջարեղէններու մէջ կարեւոր տեղ մը կը զբաւէ, թէ՛ իբրեւ պաշտ, և թէ՛ իբրեւ փոխանակելի արտադրութիւն: Ամբողջ շատ քիչ կը մշակուի, և քիչ ալ կը գործածուի: Իսկ գեանախնձորը հոյ գիւղացին սակէ քառասուն տարիներ առաջ անունն անգամ լսած չէր, այժմ միայն քաղաքացիները կը գործածեն, ան ալ երբեմն, Խարբերուէն ստանալով:



ԽԹ. ԳՂՈՒՆ

ԿԱԹՆԵՂԷՆ

Բարութի գիւղացի երկրագործ ժողովուրդը թէպէտ և կաթնատու կենդանիներ կը սրահէ, այսինքն, մատակ (էգ գոմէշ), կով, ոչխար և այծ, սակայն անոնց կաթը շահագործելու խնդրով չզբաղիր: Գիւղացիները միայն իրենց տունին համար բաւելու չափ, իւրը, սրահիրը, թորախը, չորքանը, քումասը կը պատրաստեն, անկէ յետոյ եթէ անոնցմէ մաս մը աւելնալու ըլլայ, կը ծախեն: Աւելի ճիշդը, կը ծախեն եթէ շատ ստիպուած ըլլան: Վաճառի անոնց ամենօրեայ անունդին մեծ մասը կաթնեղէն կ'ըլլայ: Ընդհանրապէս, ծախողները հողագործ չեղող փոքր տուներն են, որոնք կը խնայեն կաթէն, մածունէն կարագէն, ուրիշ պէտքերու հետ փոխանակելու համար: Անոնք միայն իւրը կը գործածեն զանազան կերակուրների պատրաստելու համար:

Այս խնայողութեամբ աւելցած իւրը, քոբախն ու քումասը ծախելով՝ անկէ առաջ եկած արգիւնքը կը յատկացնեն իրենց անհրաժեշտ պէտքերուն:

Իսկ լեռներու մօտ ապրող գիւղացիները, մանուսանդ լեռնաքնակները, ընդարձակ արօտավայրեր ունենալով, բազմաթիւ ոչխար և այծ կը սրահեն փոխանակ արջաւներու: Անասնապահութիւնը և կաթնեղէնի անտեսութիւնը, անոնց առաջին շահարկեր գործն եղած է: Հոն, հազարաւոր այծերու համար արուած անունդը անասուներու քաղմախիտ կողմիններու տերեւներն են: Անասնապահը կ'աշխատի միայն այս տերեւները կերցնելու այծերուն, ուրիշ ընելիք մը չունի, անիկա այդ մասին բնաւ ծախք մը ընելու հարկին տակ չի գըտնուիր, վերջապէս առանց իր կողմէն ըլլալիք դոյն ծախքերու, անասնապահը օգտուելով բնութենէն շտրկուած ձրի պարգեւներէն, կը շահագործէ այծերուն և ոչխարներուն մազը, միսը, բուրդը, մորթը, կաթը, իւրը, սրահիրը, քոբախը, չորքանը և քումասը: Ինչպէս ըսի, արօտավայրը ձրի, սառնորակ և սքանչելի ջուրը ձրի, լեռներուն և լեռնադաշտերուն զմայլելի բայց գոյնզգոյն ծաղիկները ու անապատ մարգերը նոյնպէս ձրի, սառնց վրայ աւելցուցէք նաեւ կազգուրիչ և աննման օգին մէջ ապրիլը դարձեալ ձրի, զոր կը վայելէ լեռնալեռնի անասնապահը և կ'ապրեցնէ հազարաւոր այծեր ու ոչխարներ, անիկա օգտուելով այդ ձրի պարգեւներէն, իր անտեսական վիճակը

դրած կ'ըլլայ ամէնէն ճոխ պայմաններուն տակ, առանց տակոյն կարենալ անտեցմէ օգտուելու:

Լեւնաբնակ անասնապահը ո՛չ միայն մեծաքանակ իւղ, պանիր, թոմատ, թորախ կը ծախէ զանոնք գնող վաճառականին, այլ նաև կը ծախէ այծերուն վեց ամսուան մասողաց արու ուլերը հազարներով, զանոնք շահագործող վաճառականին, որ կը ստնի զանոնք ծախելու դաշտաբնակ գիւղացիներու, իւրաքանչիւրը էինգ, վեց դանկանի: Գիւղացիներէն անոնք որ նիւթական թոշրատու միջոցներ ունին, այդ ծախուելիք ուլերէն ութը, տասը հաս կը գնեն իրենց պէտքին համեմատ, պահելով զանոնք մինչեւ յաջորդ տարուան աշնան ամիսները իբրեւ խառուրմայուներ. տանք «չափիչ», կ'անուանուին: Չափիչին միւր իր նմանը չունի, եթէ ըսեմ չափագանցութիւնը բրած չեմ' ըլլոր, ո՛չ Եգիպտոսի տեղական փոքրիկ գաւնուկին միւր, ո՛չ ալ Պոլսոյ խըւըրճըքը չեն կրնար երբեք հաւասարիլ Բալուի պատուական չափիչներու միտին՝ համեղութեան և կոկողութեան տեսակէտով:

1. — Կ Ա. Թ. Ը

Մեր գիտցած շատ մը երկիրներու կաթը առանց շաքարի չի խըմուիր, մինչդեռ Բալուի կաթը, մասնաւորապէս արդէն շաքարուա ըլլալով, պէտք չունի աւելորդ ծախքերու, անոր համը սքանչելի է և թանձր մանաւանդ Յունիսէն սկսեալ մինչեւ Իեկոնմբերի վերջերը ալ աւելի համեղ և թանձր կ'ըլլայ: Առատ կաթ ունեցողները մեծ կաթսաներու մէջ եռացնելով զայն կը պարպեն լայնաբերան կոսերու մէջ (հողէ տաշտ), ուր կը մնայ մինչեւ որ անոր մակարդը բերու ժամանակը գայ, գաղջ բարեխառնութիւն ունենայ: Մակարդը պարզ թանով կ'ըլլայ: Մակարդուելէն վերջը, կոտին բերանը բաց կը ձգուի, որպէսզի վրայի սերը անվթար մնայ առանց խառնուելու մածուցին հետ: Եթէ կաթը աւսուան ժամերուն մակարդուած է, անոր վրայի սերը իրիկունը կը հաւաքեն տարածելով զայն տախակ պնակներու վրայ, և մածուցը յաջորդ աւատուն կ'սկսին հարել կամ հողէ շինուած խնոցիով և կամ ոտոր համար մասնաւոր շինուած տիկերով, ինչպէս որ տակէ աւաջ նկարագրած եմ «Բրտագործութիւնը» վերնագրին տակ: Յունիս ամիսէն ըսկըսեալ մինչեւ Օգոստոսի վերջը, առատ արօտավայր ունեցող գիւղերու մէջ, օրական երեք անգամ կաթ կ'առնուի այծերէն, ոչխարներէն, — առաւօտ, կէս օր և իրիկուն: Կէս օրուան պահուն, կաթ կ'իջը, շատ հաճելի տեսարան մը կը պարզուի գիւղին «պեր», տեղին մէջ:

Հովիւք իր արածած այծերուն և ոչխարներուն հօտը, առաւօ-
տուն, դեռ կէտ օր չեղած, արօտավայրերէն պէտ տեղը կը բերէ, որ
գիւղին մօտերը կը գտնուի ընդհանրապէս: Կիներ ու աղջիկներ
ճուլակը (դոյլ) ձեռքերնին առած կ'երթան հոն իրենց այծերն
ու ոչխարները կ'իջեցնեն: Եռուզեռ մը կ'սկսի այդ միջոցին կիներու
և աղջիկներու, որոնք տենդոտ գործունէութեան մը մէջն են, հե-
հեւ երթ ու դարձը ընելով գիւղէն պէտ տեղ պէտ տեղէն գիւղ, իրենց
լեցուն կամ գոտարկ կաթնամաններով: Պէտ տեղը խոնուած են
բազմաթիւ այծեր ու ոչխարներ, որոնք անհամբեր իրենց սիրուն իկ
ուլերուն ու գառնուկներուն կարօտագին կ'սպասեն խլացու-
ցիչ մայիլներով: Տեղ մը տխրիկ չեն ընէր այդ անասունները
չարչարանքներ աւելով զիրենք կ'իջող կիներուն: Ուլերուն և գառ-
նուկներուն փոքրիկ հօտերն ալ իրենց հովիւներէն պէտ տեղը բեր-
ուած են, որոնք կը խաղան, կը ցատկրան, իրարու հետ կը կռուը-
տին: գլուխ գլխի զարնելով: Չարածճիները մէյ մը իրարու կը զար-
նեն իրենց պղտիկ եղջիւրներով, մէյ մը իրարու վրայ կը ցատկեն.
հոս հոն կը վազեն արհամարհելով հովիւներուն սպառնալիքը, սաստն
ու անոնցմէ կերած փոքրիկ գաւազանի հարուածները: Մայրերնին
կը փնտռեն այս փոքրիկ անառակները տենդագին հնձուքով մը.
կաթի համար, երբեք, վասնզի անօթի չեն, փորերնին կուշտ են
լեցունած թարմ կանանչ խոտերով: Անոնց փնտռածը մայրերնին է,
որոնց գուրգուրանքը վայելելու, անոնց լեզուներէն լիզուելու, համ-
բուրուելու սրամուշ կարօտն է որ զիրենք մզած է այդ սիրտ հատցնող
անհանդարտութեան:

Այծերուն, ուլերուն, ոչխարներուն և գառնուկներուն անվերջ
մայիլները, կաթնառու կիներուն և աղջիկներուն փոսիկահունչ
ձայները, հովիւներուն սպառնալիտն սաստը, հանդէպ իրենց հօտերուն
և անոնց մէջ կարգ պահելու քրտնեցուցիչ դժուարութիւնները, շէն
չող երեւոյթ մը տուած են պէտ տեղին, կեանքն ու ոգեւորութիւնը
հոն փոխադրուած են այդ ժամուն, և պէտ տեղը կարծէք թէ տօնա-
վաճառի մը տեսարանը կը ցուցադրէ: Վերջապէս կաթ կ'իջեցնու
գործը կ'լրանայ, անասուններուն հօտերը հովիւներէն կ'առաջնոր-
դուին դարձեալ դէպի արօտավայր հոտ ժամ մը կամ երկու ժամ
հանգիստ ընելէն յետոյ:

Ըսի թէ մածուներ կը հարեն խնոցիով կամ տիկերով անկէ իւր
առնելու համար, ելած իւրը կը լուան պաղ մաքուր ջուրով քանի
մը անգամներ, որպէսզի անոր մէջէն թթուած թանը քամուելով
դուրս ելլէ անկէ: Յետոյ, այդ գտուած իւրը բաւակամուշափ աղով
չաղելէն վերջը կը դնեն իր յատուկ ամանին մէջ, և այսպէս,
հեազհետէ իւրը հանելով մածուներէն, կը պահեն յետոյ հալելու և ա-

դէն զտակելու համար, կամ եղածին պէս վաճառելու համար: Այդ իւղամանը լեցուելէն յետոյ, ուրիշ մը կը պատրաստեն, հոն, օրը օրին գրուելիք իւղին համար: Անոնք որ բազմաթիւ կաթնատու ա- նասուներ ունին, բնականօրօր իւղամանները շատ կ'ըլլան, և կամ քիչ՝ որ նուազ կաթ ունին: Յետոյ, բոլոր իւղամաններուն իւղը կը լեցնեն խոշոր տիկերու մէջ, այնպէս որ իւրաքան- չիւր տիկ 50-60 քաշ իւղ կը պարունակէ, զոր բառնալով ուժեղ ջորիներու, կը տանին հեռաւոր քաղաքներ, հոն ծախելու հա- մար իւղավաճառներու:

2. — Պ Ա Ն Ի Ր Ը

Պանիրը կը պատրաստեն կաթէ, զոր, լու մը եռացնելէն վերջը, կը լեցնեն տաշտերու մէջ, ուր կը թողուն մինչև որ անիկա գաղջ ըլլալու աստիճանին հասնի: Նոյն պահուն անոր մէջ կը դնեն ոչ- խարի և կամ այծի միզամանը իբրև կաթը խմորող նիւթ, ու այդ- պէս կը թողուն քանի մը ժամ տաշտերու մէջ, անկէ յետոյ ամբո- ջովին թանձրանալով պանիրի կը վերածուի: Յետոյ կ'սկսին զաղն բոլորածեւ կողապարներու վերածել և տեղաւորել իրենց յատկացյ- ուած ամաններուն մէջ, ճնշումի կ'ենթարկեն անոնց վրայ ծանր քա- րեր դնելով, այս ճնշումէն պանիրին մէջ մնացած աւելորդ ջուրերը կը քամուին: Յետոյ նորէն կը հանեն զայն ամաններուն մէջէն ու կ'սկսին վերածել փաթրիկ շերտերու, աղելով ամէն մէկ շերտ պանիրը, կարգով կը շարեն իրարու վրայ պանրամանին մէջ: Թրքահայաստանի բոլոր գաւառներուն, և մասնաւորապէս Բալու գաւառակին պանիրը աւելի իւղոտ է, վասնզի հոն սուխրութիւն ե- ղած չէ ուրիշ օտար երկիրներու պէս կաթէն իւղը առնելէն վերջը պանիր պատրաստել, այս պատճառաւ համեղ է և աւելի անուղա- րար:

3. — Թ Ո Ր Ա Խ

Թորախը կաթնեղէն մըն է. կը պատրաստեն իւղը առ- նուած զուտ թանէն, այսինքն թանը եռացնելով, զայն կը լեցնեն ձերմակ կտուէ պատրաստուած քիչ մը մեծկակ տոպրակներու մէջ, յետոյ զանոնք կը կտխեն ձեղունէն, թանջուրը, որ եռացմամբ բաժ- նուած է պանրիտէն, կը մղուի և կը հաւաքուի ամանի մը մէջ, կախուած տոպրակին տակ զետեղուած: Երբ այլևս տոպրակներուն մէջ քամուելիք թանջուր չի մնար, այն ատեն տոպրակները ձեղու- նէն վար կ'առնեն, բանալով կը պարպեն անոնց մէջէն թանձր պան-

բիտը, որ թորախն է: Յետոյ զայն տղելով կը դնեն հողէ մասնա-
ւոր ամանի մը մէջ:

Թորախը պատրաստելու այս գործողութիւնը կը շարունակուի
ամէն օր այն առններուն մէջ, ուր առատ կաթ ունին և հետեւաբար
ամէն օր խնոցի կը հարեն: Այս ամէնօրեայ պատրաստած թորախը
կը հաւաքեն քանի մը մեծկակ կոտերու մէջ, բայց տղելէն վերջը:
Յետոյ կը պարպեն լայն տաշտերու մէջ, ուր կը շաղեն դարձեալ ա-
ղով, և մաս, մաս անկէ կը լեցնեն անոր համար մասնաւոր շինուած
ուլերու մազոտ տիկերու մէջ: Մազոտ տիկի մէջ կը դնեն, որով-
հետեւ մազը թորախը աւրելէ զերծ կը պահէ: Ամէն մէկ ուլի տիկ
զրեթէ 12-15 հոխա թորախ կը պարունակէ, տախա թէ կը
ծախեն և թէ ձմրան եղանակին կ'ուտեն, մանաւանդ գինի խմող-
ները գինիին վրայ թորախ ու սոխ կ'ուտեն, վասնզի տխորժակ կը
քանան ասոնք, որքան ուտեն թորախ ու սոխ այնքան գինին տխոր-
ժելի կուգայ իրենց:

4. — Թ Ո Մ Ա Ս Տ Ը

Թոմաստը միւս կաթնեղէններուն պէս աման գինով չի ծախ-
ուիր, վախա քսակ ունեցողները հազուադէպ պարագաներու տակ,
միայն կրնան ճաշակել անոր համր: Հարուստն ու քաղաքացի ունե-
ւորը զայն կը վայելեն յոճախ և աւատօրէն: Գիւղացի անասնա-
պահը եթէ աւելի կաթ ունենայ իր տանը համար թոմաստ կը պատ-
րաստէ, բայց ո՛չ միւս կաթնեղէններուն շափ առատ: Անոր համար
որ թոմաստը միւսներէն շատ աւելի արժէքով կը ծախուի և հետե-
ւաբար ամէնէն աւելի շահաբեր է: Քանի մը խօսքով կ'ուզեմ ըն-
թերցողներուս բացատրել թէ թոմաստը ինչպէ՞ս կը պատրաստուի:
Ասիկա խառնուելու մըն է կաթնեղէններու, զայն պատրաստողները
մասնաւոր փորձառութիւն ունեցողներն են: Զափին համեմատ կ'առ-
նեն կաթ, մածուն, կարագ, թարմ թորախ և սեր, և իրարու հետ
խառնելով լաւ մը կ'աղեն և կը շաղեն, յետոյ զայն կը ձգեն իր
վիճակին մէջ մինչեւ օր մը, որպէսզի ցամքի ան: Անկէ վերջը
մաս, մաս կը լեցնեն, կամ աւելի ճիշդը կը դնեն անմաղ լերկ տի-
կերու մէջ, որոնց վրայ բաւական ծանր քարեր կը դնեն, որպէսզի
թոմաստը լաւ մը ամրանայ և օդը պարպուի այդ ծանրութեան տակ,
տասը կամ տասնհինգ օր անցնելէն վերջը կրկին կը հանեն զայն
այդ լերկ տիկերուն մէջերէն դնելու համար այս անգամ ուլերու
կամ այծերու մազոտ տիկերու մէջ, ասոնց վրայ դարձեալ ծանր
քարեր դնելով կը թողուն զայն այլեւս մինչեւ որ յարմար ժամա-
նակը գայ անոր ծախուելուն: Ամէնէն համեղ և ամէնէն անուրարն
է կաթնեղէններուն մէջ թոմաստը:

5. — ՉՈՐԹՈՍՆԸ

Չորթանը նայն ինքն թորթանն է, ըսի թէ թորթախը լաւ մը ազելէն յետոյ, կը լեցնեն ուլերու մազոտ տիկերու մէջ, խոկ անկէ մաս մը տանելով փոքրիկ գնդիկներ կը շինեն և կը շարեն զանոնք փոյտէ սեղաններու և ուրիշ լայն ու տափակ տախտակներու վրայ, յետոյ զանոնք կը դնեն արեւին տակ, որպէսզի չսրնան, ա՛յս է չորթանը:

Չորթանն ալ տան լիցքին մէկ մասը կը կազմէ, բայց միայն ձմեռուան եղանակին մէջ կը գործածուի գրեթէ յաճախ, այսինքն չորթաթը երկու-երեք անգամ ապուր կ'ելին չորթանով ու ծեծածով միասին: Ինչպէս կ'ելին գարնան և ամառուան եղանակներուն մէջ ծեծածով թանապուրը: Հոն, հինէն իվեր սովորութիւն եղած է, որ ծննդեան ճրագալոյցի իրիկուան ճաշին, առաջին կերակուրը չորթան ապուրն ըլլայ: Իսկ զատիկ ճրագալոյցի իրիկուան ճաշի սեղանին վրայ ծեծածով եփուած թանապուրն ըլլայ: Այս երկու ապուրներուն համեզութեան իրարմէ տարբերութիւնը, բաւական զգուշի կ'ըլլայ, վասնզի թանապուրը շատ աւելի համեղ և ախորժելի է, քան չորթանապուրը, մանաւանդ երբ առաջինը դաղձով եփուած ըլլայ: Երկու ապուրներն ալ թէ դիւրամարս և թէ անդարար են:

Չորթան ապուր եփելու ժամանակ, նախ, զայն հաւել պէտք կ'ըլլայ, նարեւու գործողութիւնը հետեւեալն է, — տանտիկինը հարուելիք չորթանին կտոր կը պատրաստէ, որ մանաւորաբար անոր համար շինուած է, գրեթէ մինչեւ կէսը, կամ քիչ մը աւելի անոր մէջ գաղջ ջուր կը լեցնէ, յետոյ այդ ջուրին մէջ կը լեցնէ չորթանէն հինգ կամ վեց գնդիկներ ու կ'սկսի զանոնք խառնել չորքրնահար կոչուած յատկապէս շինուած ու յղկուած փայտով մը, մինչեւ որ այդ գնդիկները լուծուին ջուրին մէջ. ահա, այս թանով կ'ելին չորթան ապուրը: Բարեկենդանի և ուրիշ տօնական օրերու մէջ երբ սոռն ըսուած շատ յարդի կերակուրը կը պատրաստեն խիտ բարակ հոցերէ, վրան կը լեցնեն հարուած չորթանէն, նոյնպէս՝ տաղուած իւղ. որ կ'ըլլայ իրենց համար պատուական կերակուր մը, չմոռնամ ըսելու որ սխատը ալ կ'անցնեն անոր վրայ:



Լ. ԳՎՌԻՆ

Վ Ա Ռ Ք

Չեռուցումի համար, Բաղուի գիւղացիները կը գործածեն երկու գլխաւոր նիւթեր. փայտեղէն և կենդանիներու քակորները:

Ասոնք երկու կարգերու կը բաժնուին, անոնք, որոնք աւելի ջերմոյժ կ'արտադրեն, և անոնք, որոնց արտահոսած ջերմութիւնը մեղմ է բազրտամամբ առաջիններուն: Առաջինները, որոնց գլխաւորն է՝ կաղնի փայտը, ճիւղ կամ արմատ, ձմեռնային ցուրտ եղանակին, ասն Չեռուցման համար օժտիներու մէջ կը վառեն, նաեւ եփելու համար կերակուրներ ալ: Թոնիւրները առքցնելու համար մասնաւորապէս փաշտելու կը վառեն, որուն ջերմութիւնը կաղնիի փայտին ջերմութենէն յետոյ կուգայ, և կրակը երկար ատեն չափաւոր բարեխառնութիւն մը կը պահէ, և շատ կը յարմարի հաց եփելու: Կերակուր եփելու համար կաղնի փայտին հետ կը գործածուի ձեփը որուն ջերմութիւնը աւելի տկար է բայց նաեւ՝ տեւական ու կանոնաւոր:

Թուրգի, այն է ամաններ թրծելու համար դարձեալ ձեփ, յարդ, ցուրեր (դիւրալառ ճիւղեր), կշգուր, ու քիչ անգամ քոր-կշգուր և աթար կը վառեն:

Իբրեւ վառք, ուրեմն, գիւղացին կը գործածէ կաղնիի ճիւղերը և արմատները, փաշտելու, ձեփ, աւրպաս, աթար և զանազան ծառերու ճիւղեր ալ երբեմն. ինչպէս՝ բարտիի, թթենիի, ուռենիի, սրթատունկի չոր ճիւղեր, շուշմայի, ձանձ եւն:

1. — Ա. Թ. Ա. Ր

Ըսած եմ թէ ախտներուն յատակը ընդհանրապէս կը սաղարկեն տափակ քարերով, և անոր վրայ մանր ու արեւով չորցուած թրիքը (խուշգի) ամէն սուտու և իրիկուն կը փռեն չափաւոր թանձրութեամբ, այսինքն հինգ-վեց սանդիւմի չափ, որպէսզի անասունները անոր վրայ նստին:

Օրը երեք անգամ անոնց նստած տեղերը ցախաւելով կ'աւելին և զանոնք կը լեցնեն քրեփոսին մէջ (պրուծ), ու անոնց տակը խուշգի կը փռեն, բայց հակառակ որ օրը երեք անգամ կ'աւելին, նորէն մաս մը կը մնայ մէզերուն ու թրիքներուն մնացորդներէն չոր խուշ-

կիին տակ, և այսպէս հետզհետէ թրիքի շատ կարծր խառ մը կը կազմուի, ու շարունակուելով այսպէս շորս հինգ ամիսներ, ամէն օր կը թողու մէյ մէկ բարակ խառեր սալարկուած քարերուն վրայ, որմէ կը գոյանայ գրեթէ առաջ սանդիւմ, գուցէ աւելի թանձրութեամբ կարծրացած քակորի շերտեր, առ է աթարը: Ապրիլ ամսուն մէջ, երբ այլեւս անասունները ախտուներէն դուրս կը հանեն, այն ատեն, կամ մէկ երկու շաբաթ վերջը, իրենց գործին յարմարած օր մը, հողագործ գիւղացին փետտաներով աթարները կը հանէ ախտին սալարկուած քարերուն վրայէն, և յետոյ մաքուր ջուրով կը լուայ անոնց ամբողջ յատակը, կը մաքրէ և կը պատրաստէ յաջորդ տարուան համար: Աթարը կը գուրին պէս չէ, ըսի թէ կարծր է և անոր պէս դիւրավառ ալ չէ: Օճախներու մէջ չեն վառեր աթարը իբր վառելիք նիւթ, այլ կը վառեն զայն հում ամանները թրծելու ատեն, նոյնպէս՝ ձէթ հանած միջոցին, երբեմն ալ կը թափեն զայն մոխրակոյտին վրայ, որպէսզի իրենց արտերը փոխադրեն իբր պարատացուցիչ նիւթ: Աթարին վրայ առաջ կուգայ սպիտակ բորբոս մը, որ աղբորակի յատկութիւնն ունի, քուրդերը այս նիւթէն վառող կը շինեն:

Այդ հինգ ամիսներու տեւեղութեան միջոցին, բոլոր արջաանները օրակոն երեք անգամ կեր կ'ունենան իրենց մսուրներուն մէջ և կէս օրին ու եօնփուան ատեն (իրիկուան մօտ) ալ զանոնք իրենց կապերէն արձակելով՝ կը տանին աղբիւրը ջուր խմցնելու: Անոնք կ'ըսեն (տավարը ջրել) «տավարը ջրեցէ՛ք, ճաշք ը էղեր, տավրուն նայէ՛ք օր (նայիլ—հող տանիլ) ընծնք ըլ (անանք) ձիզի (ձեզի) նային» այսինքն, ոչխատին իրենց համար. այսպէս կ'ըսէ տան մեծը:

Տավարներուն աղբը, այսինքն թրիքը, օրուան մէջ երեք անգամ կ'աւլեն և զայն կը լեցնեն թրքփոսին (պրուճ) մէջ, որ ախտին մէջ մէկ կամ երկու հատ են, և որ երկու մէթր երկայնութիւն մէկ մէթր լայնութիւն և կէս մէթր խորութիւն ունին: Ախտին յատակը ըսի թէ մասնաւոր ստիակ քարերով սալարկուած է, ուր կէս օր, առտու և իրկուն խուշգի (չոր մանրուած թրիք) կը փռեն մէկ երկու սանդիւմ թանձրութեամբ, որպէսզի տավարները նստելու ատեն հանգիստ ընեն անոր վրայ: Թրքփոսին կամ պրուճին մէջ լեցուած թրիքը, օրը մէկ կամ երկու անգամ կը պարպեն. մէկ մը առաւօտուն, մէկ մ'ալ կէս օրէն յետոյ: Ինչպէս ըսի, կը տանին զայն թափելու դուռներուն առջեւ և կամ կալին մէկ կողմին վրայ:

Այդ հինգ ամիսներուն մէջ, իրենց տեղերուն վրայ հետզհետէ դիզուած այդ թրիքները, իրարու նմանող, մեծ կամ փոքր, կարծես մէկ մէկ բլուրներ ըլլային անոնք:

2. — Ա Տ Ր Պ Ա Ս

Բալուխ կարգ մը գիւղերու մէջ աւազան կը շինեն կիները փողոցին և դորդանին ցուրքներէն բաւական հեռու տանիքին մէկ անկիւնին վրայ : Ատրպասին շրջագիծը գրեթէ 9-10 մէթր է որուն վրայ չորս թրիքի պատեր կը շինեն, մօտաւորապէս մէկ ու կէս մէթր բարձրութեամբ, ու կը թողուն գոյն այդ վիճակին մէջ առանց անոր վրան ծածկելու :

Փոքր սենեակի մը երեւոյթն ունի ներքինով և արտաքինով, սա սարքերութեամբ որ տարպասը առանց ձողունի է : Անոր պատերէն մէկուն վրայ անցք մը կը թողուն իրրեւ դուռ : Թէ ինչպէս կը շինէ տարպասը գիւղացի կիներ և ինչո՞ւ համար : Յունիսի վերջերը երբ անձրեւի վախ չկայ, թրիքը օր ըստ օրէ կը հաւաքեն և առանց ժամանակ անցնելու, յարդի և ուրիշ դիւրավառ նիւթերու հետ խառնած, օտքերով կը շողեն և կը սկսին տարպասին պատերը հիւսել փոքր համեաններու ձեւ մը սալով անոր, այնպէս որ այս հիւսքը ճշմարիտ պատ մը կը ձեւացնէ : Հիւսելու այս գործողութիւնը «տարպաս գարնել» կը կոչուի : Ատրպասը, մաս մաս և օր աւուր կը գարնեն, այնպէս որ մէկ շաբթը երբ կը հիւսուի, օր մը կամ երկու օր յետոյ ուրիշ շաբթ մը կ'աւելնայ նախորդին վրայ, այնպէս որ նախորդը արդէն արեւին տակ չփլչելու շափ հաստատուն վիճակ մը ստացած կ'ըլլայ :

Ատրպասը այս կերպով կը շինուի մինչեւ իր որոշ բարձրութիւնը : Ատրպաս գարնելու գործողութիւնը այնքան ճարտարութիւն և փորձառութիւն չի պահանջեր, դեռատի հարսերուն և չափահաս աղջիկներուն գործն է. այրեր բնաւ մասնակցութիւն չեն ունենար այս աշխատանքներուն մէջ : Ատրպասը կը մնայ իր դիրքին մէջ տանիքին վրայ մինչեւ Օգոստոսի վերջերը : Ինչպէս ըսի, ան չորս պատերէ բաղկացած թրիքի շինուածք մըն է, որ պէտք տեսնուած է գիւղացի հողագործին կողմէն : Բացատրեմ. գիւղացի հողագործը իր ցանած բամպակի արտերուն չորս եզերքներուն վրայ դդում և կանակերչաք կը ցանէ. դդումը ծանօթ է ամէնուն, անոր մեծն ալ կայ պզտիկն ալ, կլորն՝ ալ երկայնն՝ ալ, տսիկա թէ դեղնագոյն է, թէ կանաչագոյն, զոր կ'ուտեն զանազան կերպերով, այսինքն միսով և թէ իւղին մէջ տապկելով : Իսկ կանակերչաքը տարբեր բոյս մըն է, որ կը բարձրանայ իր արմատին վրայ գրեթէ մարդու հասակի չափ, բաժնուելով միեւնոյն տանի իր արմատին վրայ քանի մը ճիւղերու : Ասոր հունտերը երբ կը քաղեն, կը լեցնեն տարպասէ այդ անակներուն մէջ, ուր հատիկները՝ իրենց կճեպներէն կը բաժնուին : Այս մասին արդէն գրուած է :

Աստուծոյ շնորհակալութեամբ մեր է, որք իբրև վառք կը գործածեն, աշխատեցանակին զայն տանիքներէն կեզրսուն փոխադրելով: Ասոր կրակն ալ շատ բարկ չըլլար:

3. — ԿԸՇԳՈՒՐ ԿԱՄ ԿՇԿՈՒՐ

Մտրտ ամիսէն սկսեալ այլեւս դիզուած թրիքի բլուրներուն ըստ չեն թափեր կենդանիներուն քակորները, այլ օրը օրին զայն կը կողեն տանիքներուն, ցուիքներուն և դորդանին դուրսի և ներսի պատերուն վրայ, զոր չորցնելով կը վառեն զայն վեց-եօթ ամիսներու ընթացքին, այս կերպ կը շարունակեն «ծեփ» կ'ըսեն անոնք: Ասոր շինուածքին շատ մը ձեւեր կուտան դիւզացի կիները, այսինքն, սափակ, երկայն, կլորակ, մեծկակ, ու փոքրիկ, ընելով միեւնոյն տան անոնց ամենուն կանակներուն վրայ զանազան նախշեր:

Հունձքը դեռ չսկսած, դիզուած բլրածեւ թրիքի կոյտը կը շարունակէ կը վերածեն իբրև վառելիք բաւելու չափ հինգ ամսուան համար: Այս կը շարունակեն «ծեփին» տէս բարակ ու սափակ չէ, այլ անոր ամէն մէկ հատը գրեթէ մէկ քիլոյէն աւելի կը կշռէ: Եթէ աշխատեցնել ամիսներուն, ձմեռուան ու գարնան յաճախակի ձիւնն ու անձրեւները, օրը օրին ծեփուած կը շարունակեն չորնալուն արգելք չըլլային, հարկ չէր մնար այդ հինգ ամիսներուն մէջ թրիքի հաւաքման: Գիւղացի իր ընելիք գործերը կարգի դրած ու դասաւորած է և զանոնք կը կատարէ յաջորդաբար: Տանը մեծէն որոշուած արուած է արդէն այնինչ օրուան մէջ այդ թրիքի կոյտը կը շարունակէ վերածելու:

Աստուծոյ կանուխ աշխատող երկսեռ բողբոջները հոն են, որ դուրսէն թրիքին առջեւ, ամէնքն ալ բողբոջացած ու սոթտուած, կ'սղ ու պատրաստ՝ դործի սկսելու համար: Նախ հեռուոր ճամբաներ ջուրը կը բերեն հոսեցնելով զայն իրենց նոր բացած սուժամեա նեղկուկ սուռներէ, կը շարունակեն ըլլալիք թրիքը մաս մաս այդ ջուրին մէջ խառնելու և խիւսը պատրաստելու համար: Յետոյ դիզուած թրիքէն հաշուելու, բայց բաւական խոշոր մաս մը կը զատեն իր կոյտէն բահերով ու փետաւաներով (վանդի հինգ ամիսներու տեւողութեան միջոցին, թրիքին նորը հինին վրայ դիզուելով կ'ամրանայ) ստորածելով զայն ընդարձակ տեղի մը վրայ թրիքի բլուրին քով: Անոր ճիշդ քովէն հասող ջուրը կը թողուն որ այդ փորուած մասին վրայ հոսի, ու կ'սկսին թիկերով ու բահերով խառնել զայն ջուրին հետ մինչեւ որ անիկա քիչ մը լուծուի:

Անկէ յետոյ ջուրը անոր վրայէն կը դադրեցնեն և նոյն միջոցին անոր վրայ քանի մը սափաւ բարակ յարդ (մրեղ) լեցնելով կ'սկսին արորել. կիներն ու աղջիկները սոթտուած ոտքերով կը կոխակառնեն:

Իսկ այրերը բաճերով շարունակ կը խառնեն կոխկուտուած զանգուածը: Այս գործողութիւնը կը տեւէ մինչեւ որ այդ զանգուածը կազմող ամէն տեսակ քսիւորներ, ինչպէս՝ բրիւ, զպսուլ, կոշկոռ, աթարի կտորներ լաւ մը լուծուին և իրարու հետ խառնուին:

Կէս ժամու չափ գազար սառլէն վերջը, կ'սկսին անկէ մաս մաս լեցնել պատգարակի վրայ և երբու մարդերով կրել զայն գէպի կուլին մէկ անկիւնը կամ անոր կուլուելիք տեղը, ուր արդէն կ'սպասեն կշգուր կողող (շինուլ) երկու կամ աւելի վարժ կիներ, և ձեռքի վարժ արագութեամբ պատգարակէն իրենց սաջեւ թոփուած զանգուածին կ'սկսին կլոր ձեւ տալ: Պատգարակը սանողներուն երթու գարձը կ'ըլլայ արագօրէն, իսկ զայն կողող կիներն ալ տնոնցմէ վար չմնալ կը ջանան իրենց աշխատութեանը մէջ, որպէսզի կարենան ամբողջ գործը միաժամանակ աւարտել: Ամէն մէկ պատգարակէն թոփուած թրիքը չորս կողպար պէտք է որ ըլլայ, անոնք մէկ հաս կշգուրին մէկ կողպար (կողտպար) կ'ըսեն:

Կշգուր ըլլալիք այս աւաջին մասին աշխատութիւնը, գրեթէ երկու ժամ կը տեւէ, և այս մասը հաւանական հաշիւով յիտուն վաթսուն պատգարակ կ'ըլլայ, որ կուտայ իբր արդիւնք, մերձաւորապէս երկուհարիւրէն աւելի կշգուր թրիքի գէզեր կան, որոնք վերեւ յիշուած աշխատութեան ժամերու հաշիւով, երկու, երեք, գուցէ չորս օրէն հողիւ կ'աւարտին, եթէ անով գրողող մարդերութիւնը ութը կամ տասն ըլլան: Եւ այս մեծաքանակ կշգուրները այն նախապես սկան տաւներուն համար են, որոնք հարիւր գլուխէ աւելի մեծ ու վոքր կենդանիներ կը սնուցանեն: Հազարաւոր կողպար կշգուրներ գրեթէ մէկ արտավար տեղ կը ծածկեն: Նախապեսական մեծ տաւներ կան, որոնք իրենց ցանքին համեմատ, ընդարձակ կուլեր կ'ունենան, ամոնք երկու՝ կամ երեք՝ կուլեր, եթէ վարելիք ու ցանելիք բուսականոչափ հողեր ունին:

Ահա այս կուլերը այդ մեծ տաւները կը յատկացնեն կշգուրի, որ կը ծածկէ գոնոնք ծայրէ ծայր իր բազմաթիւ կողպարներով, ամէնքն ալ չարքաշ կիներու ջլապինդ բողուկներէն անցած:

Կշգուրը կողուելէն քանի մը շաբաթ վերջը, արդէն չորցած կ'ըլլայ, ուստի զայն կը փոխադրեն կշգրտուն: Ասոր կը յաջորդէ հաճօնը կամ հուճքի եղանակը:

ՀԱ. ԳԼՈՒԽ

ԲՐՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Բարուի բարձր գիւղերը, իրենց սաօրեաց պէտքերուն համար, կը գործածեն պղինձէ և հողէ ամաններ: Անոնք շունին յախճապակիէ պնակ և շն. անօթներ: Հո՛ղն է անոնց գործածած ամաններուն նիւթը: Անկէ կը շինեն հետեւեաց անօթները, — կարաս, կոս, բզուկ կամ բզիկ, կախակի, բարդան, հասիր, բապիկ, կուժ, փառչ (սափոր), խնոցի, խուփ, օճախ, բոնիր, փեքակ ևւն: Այս շինուելիք ամաններուն հողը երկու տեսակ է, մէկը կարմիր է, կամ սասր մօտ գոյն մը, իսկ միւսը ճերմակ: Աանք բարձրովին տարբեր են միւս հողերէն իրենց կարծր և մածուցիկ յատկութեամբը: Տեսակ մը հողի հանք՝ որ կարծես թէ բնութենէն արւամ է միմիայն յատկացուելու համար այս ամաններուն պատրաստութեան: Անոնք սա հողին «կողմի հող» կ'ըսեն:

Այր մարդիկ քանի մը օրեր իրարու վրայ կ'երթան էջերով միասին այս հողին տեղը, ուր կ'աշխատին փետտաներով վերցնելու անոր կողերէն մաս մաս էջերուն բնա պատրաստելու համար, ու յետոյ զայն բերելով կը լեցնեն չարտախին մէկ անկիւնը և կամ անոր բացի տանիքին վրայ: Անկէ վերջը կ'սկսին գտնել անոր մէջէն մանր քարերը, խիճերը, զատազան խտերու արմատները, ու մնացածը կը փշրեն: վերածելով փոշիի ու յետոյ կը մաղեն, այդ մաղուած մասին վրայ ջուր լեցնելով կ'սկսին խառնել զայն թիւրով, մինչև որ կուր լու մը ծծէ ջուրը և վերածուի լոյծ ցեխի, յետոյ խիստ բարակ մաղով մաղուած ցորենի յարդէն մնացած հաւրք մրեզէն մաս մը ցեխին հետ խառնելու շափ կը թափեն անոր վրայ ու կ'սկսին խառնել զանոնք իրարու հետ թիւրով ու երբ թանձրանայ, օտքերով կը արորեն: Այս խառնումի գործը ժամեք կը տեւէ, մինչև որ անկիւնը լլայ թանձր խիւսի նման ու կաշուն: Բրուտ կինը ցեխին պատրաստուելու ատեն հո՛ն է, կը հակէ միշտ անոր վրայ, կը փորձէ զայն, տեսնելով որ այլևս կը բաւէ անոր խառնելու աշխատութիւնը կը ձգէ որ անկիւն հասնուի իր վիճակին մէջ ամբողջ օր մը: Յաջորդ օրը, առտուան ժամերուն, բրուտ կինը, այդ շաղուած կուր մասերու վերածելով կ'սկսի իր նախապէս ընտրած ամանը շինել:

Նախ թանիրը շինել կ'սկսի, թանիրը քանի մը տարին անգամ

մը կը փոխեն նոր մը դնելով անոր տեղը : Անոր շինուելը գիւրին չէ կարծուածին չափ, ոչ միայն շատ ժամանակ կ'աւնէ ան, այլ անոր ձեւը, չափը մեծ խնամք կը սրահանջի, կին բրուաէն : Հակառակ պարագային անիկա անյարմար կը դառնայ իր մէջ եփուելիք հացին : որքան ալ զայն առքցնող կրակը աւատ ըլլայ, անոր կողերը ուշ կը առքնան ու բնու չեն կարմրիւր բարկ կրակին ազդեցութենէն, և կողերուն վրայ փակցուած լուսնները խմոր վիճակի մէջ, կողերէն կտոր կտոր վար կը թափին կրակին վրայ, եթէ վարպետ բրուա կինը տուած չըլլայ անոր շինուածքին չափն ու ձեւը :

Յաճախ պատահած է որ շինուած նոր թոնիրը փորձած են հաց եփելով անոր մէջ և չեն յաջողած, սախալուած են նոր մը շինել քայց աւելի փորձառու վարպետ բրուա կնոջ մը ձեւքով, ի՞նչ է այդպիսի անպէտ թոնիրի մը թերութիւնը, անոնք այսպէս կ'ըսեն — «Ըս թոնիրը խուլը, մուխ կ'էնը (կ'ընէ), փատ շատ կ'ուտը (կ'ուտէ), հացը խմոր խմոր կրակին մէջ կը թափը (կը թափէ) եւն : Շինուելիք թոնիրին տակի մասի տրամագիծը գրեթէ 150 սանդիմ է, իսկ անոր բարձրութիւնը 120 և թանձրութիւնը 10-12 սանդիմ է : Թոնիրին ներսի կողմը, տակէն մինչև անոր բերանը կը կոկէ բրուա կինը կ'ըր ու յլկուն կսկան ըսուած քարով մը, որպէսզի խորտուրտ չի մնան և հաւասար ըլլան այն մասերը, որոնց վրայ հաց պիտի ծեփուի : Քաւակուսի չէ թոնիրը, տակուսի ձեւ ունի ան, վարի մասը լայն է և հետզհետէ կը նեղնայ մինչև անոր բերանը, տակի մասին մէկ կողմին վրայ ծակ մը բացուած է, ի հարկին կը գոցեն և կը բանան հաց եփուած միջոցին, այսինքն եթէ կրակը խիստ բարկ ըլլայ, այդ ծակը կը գոցեն, եթէ թոյլ ըլլայ, կը բանան զայն որպէսզի կրակը արծարծի, անոնք այդ ծակին «ծարծ» կ'ըսեն, ա՛յս է թոնիրը :

1. — Կ Ա Ր Ա Ս Ը

Կարտը մեծ տման մըն է զոր կը գործածեն՝ գինի, յարմախք, տպրցու, ռուպ, թուխ, չամիչ, պատտեղ լեցնելու : Կարտին տակը և անոր վերի մասը, այսինքն բերանը, մերձուոր հաշուով 30-35 սանդիմէթր տրամագիծ ունի, իսկ տակի մասէն 20-30 սանդիմ վերքոք հետզհետէ լայնութիւնը կ'սկսի մինչև անոր բերանէն քսան սանդիմ վար : Կարտին ներսի կողմը գուրսինով միասին բրուա կինը այնպէս մը կը կոկէ մարտյով (գործիք) որ կը զարմացնէ մեզ թէ աւանց կազապարի ի՞նչպէս շինուած է ձեւքով :

Կարտաներուն շինուածքին ձեւերը կը տարբերին իրարմէ, նոյնպէս անոնց՝ իրարմէ ունեցած մեծութիւնները, ասոնց տեղը մտածան

է, ուր կը տեղաւորեն զանանք քով քովի, որպէս մէկ մէկ խոչոր տակաւներ:

2. — Կ Ո Տ (Ք Ի Ի Փ)

Կոտը կտրտաէն աւելի փոքր է, բերանը լայն է, խորութիւնը շուրջ կէս մէթր, ան ունի իր շտա մը տեսակները, անոր շինուածքին ձեւը նայնա է, ինչ որ է կտրտաինը, բայց շունի վերջինին նրբութիւնը, այն պարզ սրտածառով որ շտա կը շինեն կտակեր, նկատի ունենալով միշտ պէտքն անոնց, որ պիտի դարձածուին սուղի, պատակի, շամիչի, թութի, սապի, լուրխայի, պղղուրի, ծեծածի, ֆիթի, քուշնայի եւն.ի պահպանութեան համար:

3. — Խ Ն Ո Յ Ի Ն

Խնոցին կարեւոր անօթ մըն է. անով մածուներ կը հարեն կտրուղը զատելու համար:

Երկայնութիւնը գրեթէ մէկ մէթր է, անիկա հաւկթաձեւ է, մէկ ծայրը բարակ, միւսը բութ, իսկ մէջտեղի հաստութիւնը քառասուն տանգիւմէթր է: Մածուներ խնոցիին մէջ լեցնելու համար, մէջտեղին վրայ լայնկեկ բերան մը թողուած է: Խնոցիին երկու ծայրերը կը վերջանան դուրս ցցուած շրջանակներով, որոնցմէ կ'անցուի պարանը զայն աւատատուէն կախելու և հարելու տակն: Անիկա այս գոյգ պարաններուն մէջ դրուելով 30 տանգիւմ վեր կը մնայ գետինէն մածուներ հարուած միջոցին: Բրուտ կիներ զգուշանքի ամէն միջոց և իր բոլոր ճարտարութիւնը ի սպաս կը դնէ խնոցիին շինուածքին բոլոր մասերուն վրայ, որ ունենան կատարելալ համաշափութիւն, հարթութիւն և յորմար խորունկութիւն:

Լսած էք աւատուան մօտ, արշալոյսը դեռ չծաղած մածուէն հարող խնոցիին ձայնը, ի՞նչ անուշ ձայն...: Այդ տակն տանաիկինը մակարդուած մածուներ խնոցիին մէջ լեցուցած, զայն հարելու հասած է անոր առջեւ «խնոցի կը հարէ» կ'ըսեն իրենք, անոր հարումի միօրինակ ձայնը ընդհատ կ'արթնցնէ տնեցիները մոմաւանդ տանը մեծը, որուն աւաջին խօսքը կ'ըլլայ հետեւեալը. «Օրշնեալ է (օրհնեալ) Ասուած (Աստուած), բարի լս, բարի Քիրիստոս, մուխանսթին մխթաճ չեհես (չընես)» եւն: Ու խնոցիին ձայնիւնը անընդհատ կը շարունակէ ճլամփ, ճլամփ, ճլամփ, ճլամփ, զոր աւատուան զով օդը կը տանի բաւական հեռուները:

Նայն տակն ինչպէս ըսի, տանը մեծը արդէն ելած անկողնէն, կը կանչէ իրենները, ըսելով էլէ՛ք տղաք, էլէ՛ք, (ելէ՛ք) հայտէ, թէզ

(չուտ) արթ իամը (կողմ) բացուած ը (է), ըսել կ'ուզէ լուսցած է : Ամէն տուներէ այդ պահերուն , խնացի հարելու ձայները կ'ազդարարեն աշխատատէր գիւղացիներուն , որպէսզի ամէն ոք պատրաստուի իր գործին գլուխը գանուելու :

4. — Բ Ղ Ո Ւ Կ Ը Կ Ա Մ Բ Ջ Ո Ւ Ջ Ը

Բղուկը երկու տեսակ է, մեծ ու փոքր, մեծը 50 սանդիւմ երկայնութիւն և 40 սանդիւմ շրջագիծ ունի, որոնց մէկ զոյգին մէջ թարմ թան լեցնելով կերակուրներու հետ միասին դաշտ կը տանին, հոն գործող աշխատուորներուն :

Բղուկին բերանը լայն ու կլոր է : Իսկ միւս տեսակ բղուկը ասկէ քիչ մը փոքր է թէ երկայնութեամբ և թէ հաստութեամբ, տասը մէջն ալ թան կամ թանապուր կը լեցնեն ո՛չ թէ դաշտի աշխատուորներու տանելու համար, այլ կը տանին զայն սղրիւրին գուռին մէջ դնելու , որպէսզի պաղ ջուրին ազդեցութենէն անոր մէջի թանը կամ թանապուրը պաղի, իրիկունը դաշտէն եկողնելուն պաղուկ, պաղուկ կերցնեն :

Ուրիշ բաներու համար ալ կը գործածեն այդպիսի բղուկներ , այսինքն անոնց մէջ կը լեցնեն մեղր, անուշեղէն (բէշէլ), օղի, քոցախ, իւղ, պանիր, ձեռքի տակ գործածելու համար :

5. — Հ Ա Ս Դ Ի Ր

Հասդիրը երկու տեսակ է, տաշտի ձեւ ունի, և իրր այն կը գործածուի, զայն կը շինէ կին բրուտը , տասը մեծն ալ կայ, պըղտիկն ալ, խորուռի և տախակ է ան : Մեծը կը գործածեն լուսցքի , պատտեղ ըլլալիք մալէզի և այլնի համար, իսկ փոքրը կը գործածեն փոքրիկ երեխաները անոր մէջ լողցնելու և անոր շորերը լուսչու համար :

6. — Պ Ո Ւ Տ Ո Ւ Կ (Ս Ա Ն)

Բալուի գուլուին մէջ պուտուկը ճարտարարուեստի տեսակէտով, երկու տեսակ է, որոնց մէկը բալուցի կինը կը շինէ կաղձի հողէն , որ մետապայման հանք մըն է : Այս հողին գոյնը կարմրագոյն և դիմացկուն ըլլալով շատ յարմար է ամաններու շինութեան : Իսկ միւսը , Ապտերի պուտուկն է, Ապտերը Բալուի լեռներուն մէջ քուրդ գիւղ մ'է, գրեթէ Բալուէն չորս ժամ հեռաւորութեամբ : Այս գիւղին բնակիչները ընդհանրապէս բրտագործութեամբ կ'ըզբայլին, ասանց

չինամ թուր տամանները նուրբ, գեղեցիկ ու ճաշակաւոր են, այս տամաններուն գոյնն ալ կարմրորակ է, որուն տրամաքին երեւոյթը կը փայլի իբրեւ մետաղ. հնչուն ձայն մը ունի: Ըսի թէ Ապարեանի պուտուկը արուեստի տեսակէտով աւելի ընտիր ու գեղեցիկ է, այնպէս որ գրեթէ յախճապակի ողորկութիւն կ'ունենայ:

Բայց բալուցի կնոջ շինած պուտուկին կաւն ալ մանաւանդ Ապարեանի շինած տամաններու կաւէն վար չի մնար գոյնի և տոկունութեան տեսակէտով, երկու հողերէն պատրաստուած կաւը ընտիր, մետաղային և անթափանցական է: Միայն տարբերութիւնն այն է որ, բալուցի կնոջ շինած տամանները, մանաւանդ պուտուկը, որուեստի նրբութիւնը չունի, ինչ որ ունի Ապարեանը: Բայց բալուցի կնոջ փոյթը չէ, թէ իր շինած տամանները կոշտ ու սնճոշակ են, կը բաւէ որ անիկա իր շինած տամաններով իր տանը հարկ եղած պէտքերը տեսնելով, ստիպուած չըլլար Ապարեանի պուտուկ և կամ տամաներ գնելու: Պուտուկը կը գործածեն կերակուր եփելու համար, ասոր ձեւը ճիշդ ասնի ձեւին կը նմանի, միայն թէ ասիկա իր բերնին մօտ երկու կողմերուն վրայ, իրարու դէմ դիմաց երկու կամրջակներ ունի, որոնք «անկ» կը կոչուին. «Աղջի՛, պուտուկին անկէն՝ բաւը (բանէ) օր (որ) խաղա մի (փորձանք) չի հանես», կ'ըսէ ասնախիկներ իր հարսին կամ աղջիկին:

7. — Ք Ա Ր Ղ Ա Ն

Քարղանը գիւղացիին կերակուրի պնակն է, որ շատ մը տեսակներ ունի, այսինքն մեծ, փոքր, երեսկուկ, կամ քիչ մը խոր, որուն մէջ հեանւեալ կերակուրները կը լեցնեն — կաթ, մածուն, թան, սուպ, ջրախառն սուպի օջորակ, սպուր (չորսպ), արդանակ, եւն: Ասիկա մեր գիացած սկահակներուն մէկ նմանութիւնն ունի:

8. — Բ Ղ Ո Ղ

Բղողը կտտէն քիչ մը փոքր է, բայց ո՛չ անոր պէս երկայն, անոր բերանը աւելի լայն է քան իր ներքեւի մասը: Ասոր մէջ կը պահեն աղուած պանիր, իւղ, խաւուրմայ (խղին մէջ կարմրցուած միս), հալուած դմակին խորխրդէն (հալուած դմակին մնացորդ մանրուքը), ասոր մէջ եռացուած կաթ ալ լեցնելով կը մակրդեն մածուն պատրաստելու համար:

9. — ԲԱՌԻԿ, ԿՈՒԺ, ՓԱՐՉ (ՉՈՒՐԻ ՍԱՓՈՐ)

Ասոնց երեքն ալ տարբեր են իրարմէ ձեւով ու մեծութեամբ: Բաղիկը, ճիշդ բաղի ձեւ ունի և փոքր է փարչէն, փարչն ալ կուտէն. բաղիկը միայն կը գործածեն իբրեւ ջուրի տաման, ասիկա մաս-

Նաւարապէս մանուկներու համար կը շինեն, իբր խաղալիք: Իսկ կուժն ու փարչը ջուր լեցնելիք ամաններ են, որ կը գործածուին հաւատարապէս դաշտին, կալին և ասն մէջ աշխատողներուն ջուր պատրաստ ունենալու համար: Գարունէն սկսեալ մինչև աշնան վերջին ամիսը գրեթէ, ջուրի համար գործածուած անօթները կուժն ու փարչն են, անկէ վերջը անոնց խմելիք և կամ ասնը ընդհանուր պէտքին գործածութեան համար ջուրը կը բերեն ավբերէն փայտաշէն գոյգ քուրակներով (սթիլ), անոնք սթիլ կ'ըսեն նաեւ պղինձէ շինուած քուրակին, որուն մէջ կաթ ալ կը կթին, մածուան ալ կը մակրդեն երբեմն, մանուկանց քուրդ գիւղերուն մէջ:

Գիւղացի բրուա կնոջ շինած վերը յիշուած երեք տարբեր ամանները ջուր խմելու համար, արդարեւ չունին այն արուեստի գեղեցկութիւնը, ինչ որ ունին Փարիէն (չարտանձող) ծախելու բերուած կուժը և փարչը: Փերիի սափորները ո՛չ միայն ճաշակի, այլ ասկանութեան և ջուր պաղեցնելու անասկէտով ալ գերազանց են, անոնց կաւը ճերմակ ու ընտիր է: Անոնք մասնաւոր արհեստէն եղող վարպետ բրուաներու գուրդէն (չարխ) ելած են ջուրը և ճաշակաւոր, Ասպերցիներու շինած ամաններուն պէս:

Կուժը իր պարանոցին մօտ երկու ուսերուն վրայ իրարու դէմ երկու անկեր ունի, իսկ փարչը և բաղիկը մէկ մէկ անկեր, բաղիկին անկը իր կանակին վրայ է: Ամուսուան եղանակին մէջ, ասոնք ջուրը պաղ կը պահեն և նայնիակ կը պաղեցնեն ջուրը իր բնականէն տակի, այն պատճառաւ որ գիւղացի կին բրուան շինած ամաններուն կողմի հողը, ջուրը պաղեցնող յասկութիւնն ունի, մանուկանց, երբ ասոր զանգուածին պատրաստութեան ասեն, անոր հետ, քիչ մը օղ ալ խառնուի: Կայ նաեւ գըլղըլիկը, որ իբրեւ սափոր կը գործածուի:

10. — Կ Ս. Խ Կ Ե Կ Ը

Կախկիկը բղուղն է պարզապէս, որ երկու անկեր ունի, անոր մէջ կը լեցնեն իւղ, կը դնեն պանիր եւն. քիչ քանակութեամբ, և երկու անկերէն չունն մը անցնելով պատին վրայ զարնուած ցիցէ մը վար կը կախեն որպէսզի մըջիւնի կամ կասուի այցելութեանէն ... զերծ պահեն անոր պարունակութիւնը:

11. — Օ Ճ Ս. Խ

Ասիկա մեր գուլառարարքաւին մէջ փախսբերական իմաստով կը նշանակէ տուն, ընտանիք, լիութիւն եւն. օճախդ շէն մնայ, օճախդ մշի — մարի. իր նիւթակած շէնքը մասնաւոր ձեւ մը ունի:

Կիներ կը շինեն զայն, այրեր անվարժ են այդ գործին. անոր ձեւին վրայ յատակ գաղափար մը կազմելու համար կը բաւէ աչքի առջև ունենալ իր՝ կէսէն, վերէն վար կարուած թոնիր մը, կէսն է ուրինն թոնիրին, վերի մասը նեղ, վարի մասը լայն: Վերի բացուածքը շրջանակ մը ձեւացնելու չափ կորուսելուն ունի և անոր երկու ծայրերուն և ետեւի մասին վրայ մէկ մէկ դնուած և երկու անգիծէթնոց բարձրութիւններ կան, որոնց վրայ կը դրուի կերակուրի սանր, ասանք եւ որտանիի զերը կը կտատրեն անցք ապով ծուխին վեր բարձրանալու: Այս է օճախը:

12. — Փ Ե Թ Ա Կ Ը

Փեթակը մէկ մէթր, կամ 120 սանդիւմ ճակատ, մէկ մէթր լայնութիւն և մէթր ու կէս բարձրութիւն ունի, ասկէ փոքրն ալ կայ, զոր կը գործածեն ընդհանրապէս ցորենի և ալիւրի իբր ամբարներ: Բազմամարդ սուներու մէջ յարմար անկիւններու վրայ կը շինուին այս փեթակները կիներէ՝ միշտ հոն դրուելու համար: Որովհետեւ փեթակը ծանր ըլլալով տեղէ տեղ չի փոխադրուիր: Այս փեթակներուն ճակատներուն մասերուն վրայ տեսակ տեսակ զարդեր ալ կը բուազեն մանուսնոց անոնց վրայ, որոնց մէջ լեցուցած են, կամ կը լեցնեն, մէկ տարուան համար ալիւրի պաշարը, զոր կ'ազան աշտան վերջին ամսոյն մէջ, ասիկա «բնադուն» կ'անուանեն իրենք: Կազմի հողէն շինուած այդ բոլոր ամանները, բացի փեթակէն, արեւին տակ չարցնելէն յետոյ, կը թրծեն Նոյեմբերի սկիզբը: Անոնց թուրժը մասնաւոր շէնք մը չէ ամաններու թրծուելուն յատկացուած: Շատ պարզ է ան, այսինքն խրաքանչիւր տուն, որ թրծելու ամաններ ունի, իր գուլիթին արտաքին դրան առջև, անկէ քանի մը մէթր հեռու ընդարձակ փողոցին մէջտեղը կ'որոտծեւ շրջանակի մը վրայ աթարներ կը շարեն և այդ աթարներուն վրայ կարգով կը դնեն նախ թրծուելիք կարտաները, յետոյ, անոնց վրայ կոտերը, բղուկները, բզազները, կուժերը, սափորները եւն: Ամէնէն վերջը խուփերը, և յետոյ, ասոնց ամէնքն ալ կը ծածկեն դարձեալ թանձր ու սափակ աթարներով, կըտաւառով, շուշմայի չոր ձանձերով (ճիւղ, ցօղուն), ցորենին յարդէն ելած առատ կաթնիքներով, որոնց վրայ խաւ մը աթարներ եւս կը դնեն, ասոր վրայ ևս կրկին՝ այդ վառելիք նիւթերը, ու կրակը ստալով կը վառեն զայն:

Որքան պակաս կրակին ազդեցութիւնը, այնքան հոն պատրաստ եղող վառելիք չոր նիւթերէն թուրժին վրան կը լեցնեն, այսպէս սուտուրնէ մինչեւ իրիկուն կրակը միշտ պիտի վառի թուրժը վարով

կնաջ զուցմունքներուն վրայ, մինչև որ անիկա յայտարարէ թէ
 դադրեցնելու է այլևս զայն արծարծելու գործողութիւնը : Հե-
 տեւեալ աւաւտութեամբ թուրթին մէջէն կը հանեն թրծուած բոլոր աման-
 ները և զանանք մէկիկ մէկիկ աչքէ կ'անցնեն զխմուղու համար թէ
 կտարած կամ մետաղաւ կա՞յ, այսպէս անպէտաները ձգելով մնացած
 չմետաղաւծները ներս կը տանին իրենց յարմար տեղերուն
 վրայ դնելու համար : Իսկ այն մեծ կարտաները, որ զինի համար են,
 նախ քան ներս տանելը, հարուած սեւ ձիւթով կը ծեփեն անոնց ներ-
 սի կողմը, սակի մասէն մինչև անոնց բերանը :

Հուժ ամաններու նախկին գոյնը, ըլլայ սպիտակ, կամ տարբեր,
 ամաններուն թրծուելէն յետոյ, կարմրորակ կ'ըլլայ, և կարտար հըն-
 շուն ձայն կ'ուռնենայ. երբ աման մը սեւ վիճակի մէջ ըլլայ
 բուրգի (թուրթ) գործողութենէն յետոյ, սաիկա հուժ է, և փխրուն
 կ'ըլլայ



ԼՐ. ԳՂՈՒԽ

ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ

Հոն, ձկնորսութեան կերպերը տեղէ տեղ կը տարբերին իրարմէ: Քաղաքացի ձկնորսը քանի մը կերպերով ձուկ կ'որսայ. նախ, կարթով, որ երկաթէ շինուած ու անոր ծայրը քիչ մը ծուռած նաւը ու սուր տսեղ մըն է, և ետքի մասը կլոր ծակ մը ունի, ուրկէ ձկնորսը կ'անցնէ կանեփահիւս բայց բարակ և հաստատուն երկայն շուան մը: Ձկնորսը այդ գործիքն սանելով կը կենաց գետին եզերքը, ու կարթին ծայրին վրայ ձուկերուն կերը տնուր մը տեղաւորելէն վերջը զայն կը ձգէ գետին՝ մէջ ձեւքին մէջ պահելով կարթին շուանին ծայրը: Նոյն տանն ձուկերը կը հաւաքուին այդ կերին շուրջը զայն ուտելու համար, անոնց խածած միջոցին, կարթին սուր ծայրը կը մխուի իր շրթունքին մէջ և կը բռնուի անկէ:

Յետոյ, ուրիշ կերպ մ'ալ կայ ձուկ որսալու համար. այսինքն, ուռկանով: Ուռկաններն ալ իրենց հիւսուած քներով կ'ուռնան իլենց տեսակները, քաղքցի ձկնորսին ուռկանը բոլորովին կը տարբերի գիւղացի ձկնորսին ուռկանէն: Քաղքցի ձկնորսին ուռկանը բոլորակ ձեւով հիւսուած է, որուն երկայնութիւնը մերձաւոր հաշիւով 120 սանդիմ է, անոր աակի մասերուն վրայ ամրացուած են քանի մը հաս երկ-երկու սանդիմ երկայնութեամբ ու լայնութեամբ կապարներ. իսկ ուռկանին վերի մասը, այսինքն, անոր բերանը անցուած է կլոր ու յղկուած փայտէ շրջանակի մը վրայ, և այդ շրջանակին ճիշդ մէջտեղին վրայ գտնուած է մէկ մէթրի չափ երկայն կամ քիչ մը աւելի, հաստատուն փայտէ բուն մը: Ձկնորսը այդ գործիքով կ'երթայ գետին եզերքը, ու կը ձգէ զայն շուրին մէջ տնուր մը բռնելով անոր ձողը, քանի մը վայրկեան սպասելէն վերջը ուռկանը շուրէն դուրս կը հանէ. որուն մէջ եթէ ձուկեր ինկած են, կը պարպէ զանոնք, ու նորէն կ'սկսի շարունակել այդ գործողութիւնը մինչեւ որ ուզածին չափ ձուկ որսալ կարենայ:

Քաղաքացի ձկնորսը ուրիշ տեսակ ուռկան մը եւս ունի, որ թէպէտեւ վերը նկարագրած իս ձեւն ունի, բայց չունի անոր պէս փայտէ շրջանակ և փայտէ բուն: Միայն թէ ասոր լայն բերնին բոլորակին վրայ փայտէ շրջանակին տեղ, քովէ քո', խիտ խիտ, կապարներ անցուած են ու կապուած է այդ բերնին հետ գրեթէ 7-8

մէթր երկայն հաստատուած չուան մը: Չկնորար սակայն այդ գործիքով կրնայ ձուկ որսալ, միայն փչուած ու իրարու հետ ամուր կապերով միացուած, աիկերէ կազմուած լաստերու վրայ կենալով:

Անիկա այդ լաստին վրայ նստելով զայն կը թիտալարէ դէպք գետին ա՛յն տեղերը, ուր կը յուսայ թէ ձուկեր կան, և հո՛ն կեցնելով զայն, կը ձգէ ջուրին մէջ ուռկանը, ժամերով կ'որսայ հոն այդ շրջանակին մէջ: Անկէ որսացուած ձուկերը լաստին վրայ պարպելէն յետոյ, լաստը կը թիտալարէ գետին ուրիշ կազմերը: Արդէն ան շատ լաւ գիտէ իր փորձառութեամբը թէ ո՞ր ամսուն, ո՞ր եղանակին և գետին ո՞ր մէկ մասերուն մէջ ձկնորսութիւնը կրնայ արդիւնաւոր ըլլալ: Լաստին կազմուածքը այժի, կամ ոչխարի աիկերէ կը բաղկանայ, անոր ամէնէն փոքրը 15-20 աիկեր կ'աւելնայ: Լաստով թէ ձուկ կ'որսան հոն, թէ մարդեր կը փոխադրեն և թէ սպրանք:

Գիւղացի ձկնորար սակայն, ձուկ որսալու համար աւելի շատ կերպեր հնարած է: Անիկա քաղաքացի ձկնորսին ձուկ որսալու կերպերն ունենալէ զատ, ունի ուրիշ կերպեր ալ: Բացց պէտք է ըստ թէ Բալուի ամէն գիւղ ձուկ որսալու վրայ այնքան գաղտնար չունի, որքան ունին ա՛յն գիւղերը, որ Արածանիին մօտերը կը բնակին, ինչպէս, Թրխէ, Թիլ, Նոր գիւղ, Արմը ճան, Կիւլիշկիլ, Ուղունօպոյ եւն. գիւղերը:

Ես, իբրև թրխեցի, լաւ գիտեմ թէ ի՞նչպէս և ի՞նչ կերպով ձուկ կ'որսացուէր հոն, մանաւանդ որ յաճախ առիթն ունեցած եմ, և՛ս ձկնորսներու հետ ձկնորսութեան երթալու և մասնակցելու առնոց աշխատանքներուն: Հո՛ն որսալու եղանակները աշնան, ձմեռուն և գարնան ամիսներն են: Ամառը ձուկի որսարդութիւն չէ՛ն ըներ հոն, ո՛չ ալ ձուկ կը սիրեն ուտել այդ եղանակին մէջ, հաւանաբար, սոսք ըլլալուն պատճառաւ:

Բացի ամառուն եղանակէն, միւս բոլոր եղանակներուն մէջ, ձուկ որսալու համար, մասնաւոր կերպերն ունին անոնք: Աշնան եղանակին մէջ մանաւանդ հետեւեալ միջոցը կը գործածեն — Անոնք չորցած սարբինաներէ երեք-չորս խուրձեր կը կապեն, որոնց ամէն մէկը, երկու մէթրի չափ երկայնութիւն կ'աւելնայ: Յետոյ այդ խուրձերը աւնելով կ'երթան գետը հինգ-վեց ընկերներով, որոնց երկուքը սարբինայի խուրձերէն մէկ մէկ հաս վառելով, իր ուսին վրայ առած կը մանեն գետին ա՛յն մասերուն մէջ, ուր հազիւ կէս մէթրի չափ, կամ աւելի պակաս խոր է: Այդ վառուող սարբինայի խուրձերը բռնող երկու մարդոց քովերը կը կենան երկու մարդեր ևս, որ ունին իրենց ձուկը բնուն մէջ մէկ մէկ հաս ետեմանի աշտեաներ:

Սարբինայի խուրձերուն վառուած ծայրը ջուրէն քիչ

մը բարձր կը բռնեն անոնք, ձուկերը սակայն այդ լոյսը տեսնելով, գետին խոր տեղերէն կ'ելլեն, կուգան դէպի ան սառնոց վախճալու ու կը խաղան այդ լոյսերուն շուրջը և յետոյ կը մնան անշարժ ձկնորսներուն առջեւ: Եւ այն միջոցին երբ ձկնորսները այլեւս յրատակօրէն կը տեսնեն զանոնք ջուրին մէջ սարքինացի խուրձերուն վառուղ լոյսերուն շնորհիւ, իր'նոց բռնած այդ եռութանի ոչտեսող ուժգին հարուած մը կուտան անոնց, մխելով զանոնք անոնց մարմիններուն մէջ, վայրկենապէս կ'անշնչանան: Այս կերպով սրասցուած ձուկերը սովորաբար, սանուաղն չորս հինգ հոխոցէն պակաս չեն կշուեր:

Երկրորդ, աշունը երբ անձրևէ ու գետը պղտորի հեղեղներով, այդ գետին պղտորութիւնը, ձուկերը թափասական կ'ընէ իրենց տեղերէն, անոնք սառնոց կարենալ տեսնելու իրենց սովորական ապրած տեղերը (վանդի գետը պղտորող ցեխը ձուկերուն աչքերը ձեփած ըլլալով անոնց տեսողութիւնը կ'արդիւնէ) անգիտակցաբար կը լեցուին գետին մէկ անկիւնը, կամ անկէ բաժնուած փոքր ջրամասերուն մէջ: Այս առիթէն օգտուելով ձկնորսը սակայնով կ'որսայ ձուկեր և կ'աւնենայ գոհացուցիչ արդիւնք:

Արդէն ջուրը վճիտ եղած ատենը ձուկերը ո՛չ ուսկանով կ'որսացուին ո՛չ ալ ուրիշ կերպերով, միայն աշնան գիշերները, ինչպէս վերը նկարագրեցի, սարքինաներու լոյսերուն տուած պատենո: Թե՛նէն կ'որսան: Իրենք այդ երեքօրեանին «խըշտ» կ'ըսեն:

Չմեռուած եղանակին մէջ սակայն, բաւական դժուար է ձուկ որսալը: Գժուար է անոր համար որ, լեռ, ձոր, բլուր ու դաշտ թանձր ձիւնով կը ծածկուի յաճախ, և գետն ալ իր շատ մը մասերովը կը սառի: Այդ խիստ պայմաններուն տակ սակայն, գիւղացի ձկնորսը արդէն ցուրտին վարժուած ըլլալով, կ'արհամարհէ զայն և անհրաժեշտ եղող առարկաները հետը միասին առնելով դէպի գետը կ'աւզուի: Գործիքները կը բաղկանան ուսկաններէ, կացիններէ, երկայն ցիցերէ, ձողերէ և սափաթներէ: Գետը արագ հոսանուա ըլլալուն համար, իր ամէն տեղերը չեն սառիր, բայց սառի մեծ ու փոքր կտորներ միշտ պակաս չեն իր մէջ, այդ սառի շարունակական բեկորներէն ահաբեկած, ձուկերուն էն մեծերը կը քաշուին գետին ամէնէն խորունկ տեղերը, իսկ անոնցմէ փոքրերը թէ սառէն և թէ այդ մեծ ձուկերէն զգուշանալով, կ'ապաստանին գետին միացած ջուրի ա՛յն մասերուն մէջ, որոնց վերի ծայրերը ցամաքին փակած են: Գետին միացած ջուրին այս վարի մասին «բերան» կ'ըսեն անոնք: Գետին անկիւն տուող այս ջրամասը երբեմն կ'աւնենայ 100—150 մէթր երկայնութիւն և 7-8 մէթր լայնութիւն, և կարծես փոքրիկ լիճի մը երեւոյթն ունի: Ա.ս ալ անկան կ'անուանեն:

Գեառնի գուրա երկարած այս ջրամասերն ալ թէպէս կը սառին, բայց անոնց վերի ծայրերը քանի որ միացած չեն գետին, ձուկերը անոր հոսանքէն քշուած բազմաթիւ սառի կտորներէն ազատ ու ապահով ըլլալ կը կարծեն հոն, և այս հանդարտ ու խաղաղ ջրամասերը, սպաստանարանը կ'ըլլան բազմաթիւ ձուկերու, որոնք կը մնան հոն սպահովելով ինքզինքնին, մինչև որ օդերը տաքնան և գետին սառերը հալին: Քիւղացի ձկնորսը ջուրին այդ մասերուն մէջն է որ ձուկ կ'որսայ ձմեռուան խստամբեր եղանակին մէջ. թէ ի՞նչպէս, բացատրեմ:

Գետին՝ ու այդ ջրամասին միացած տեղը, այսինքն բերանը, կը դոցեն ուսկանով, որպէսզի այդ խորշին վրայի սառը երբ կտարելու սկսին, ձուկերը չխախին դէպի գետ. ձկնորսներէն մէկը ուսկանին մէկ ծայրը բռնած գետին այդ բերանէն կ'անցնի անոր դիմացի կողմը, ուր երկոյն ցիցը կըլ տրնէ ցամաքին վրայ հողին մէջ բաւական խորունկութեամբ և ուսկանէն իր ձեռքն ունեցած ծայրի հաստատուն շուանը կը փաթթէ այդ ցիցին վրայ, նոյնը կ'ընէ տաղիի կողմի ձկնորսը, այդ կերպով երկու կողմերու վրայ ամբողջուած ցիցերէն կը կապուի ուսկանը, և որովհետև ուսկանը հինգ վեց մէթր երկայնութիւն և մէթր ու կէս լայնութիւն ունի, արդէն ան բռնած կ'ըլլայ այդ ջրամասին լայնութեան խորունկ մասերը: Ուսկանը կը հիւսեն վուշի թելերով (քեթէն), կանեփահիւս երկու շուաններու վրայ: Ուսկաններ կան, որոնք չորս հինգ մէթր երկայնութիւն ունին, ինչպէս ըսի, կան ալ որ հինգ վեց մէթր են, անոնց այն կողմը, որ ջուրին սակ պիտի մնայ, իր մէկ ծայրէն մինչև միւս ծայրը կտարներ ունի, կտարներուն այդ ծանրութեամբն է որ ջուրին սակ կը մնայ ուսկանին այդ մասը գետինին հետ շիման մէջ պահելով, որպէսզի ձուկերը անոր սակէն չկարենան փախչիլ դէպի գետը:

Երբ անոնք ուսկանով գետին ու այդ անկանին բերանը կը գոցեն, անկէ վերջը կ'սկսին անոր վրայի սառը կտարելու կացիններով, ուսկանին ձգուած տեղէն 5-6 մէթրի չափ դէպի ետ անոր երկայնքին ու լայնքին վրայ: Յետոյ, անոր վրայէն կտարուած այդ մեծկակ սառի կտորը ձողերով վար կը քշեն ուսկանին վրայէն և կուտան զայն գետին հոսանքին: Նոյն սակն ուսկանը իր ձգուած տեղէն հանելով կը բերեն այդ գետամասին ա՛յն տեղը, ուրկէ սառի կտորը կտարուելով վար արուեցաւ: Հոն, կրկին ցիցերը կը զարնեն անոր երկու կողմերու ցամաքին վրայ և ուսկանը կը ձգեն ջուրին մէջ, կտարելու շուանները սիցերուն վրայ: Ու կ'սկսին նորէն կտարել սառի խոտորակներու միտով ու զայն ուսկանին վրայէն վար կը քշեն դէպի գետին հոսանքը:

Այս գործադուլիւնը կը կատարեն շարունակ, մինչև այդ դե-
տաժանին վերջաւորութիւնը, հետզհետէ անոր մօտեցնելով ուսկանը,
ու երբ այլևս անոր վրայէն մնացած վերջին սառն ալ վար կը
տրուի դէպի գետը, նոյն պահուն, ձուկերու բազմութիւն մը իրա-
րու վրայ դիզուած կ'երևի ծանծաղուա ջուրին մնացած այդ նեղ
մասին մէջ, ուրկէ փախչելու այլևս տեղ չունին բնաւ այդ կենդա-
նի մեռելուները, պաշարուած ըլլալով ուսկանէն և ցամաքէն: Նոյն
միջոցին, ձկնորսները երկրորդ ուսկանով մը կը մտնեն այդ ծան-
ծաղուա ջուրին մէջ և կ'որսան ձուկերը մինչև որ անոնց ամէնքն
ալ հանեն ցամաք, մաքրելով անոնցմէ այդ գետամասը: Այդ միջո-
ցին սախաթներն ալ ջուրին մէջ ձգելով ձուկեր կը հաւաքեն ու-
նոնցմով:

Ձկնորսը իր փորձառութեամբը հասկցած է թէ երբ սառած այդ
գետամասին մակերեսին վրայ տեղ տեղ բացուածքներ նշմարուին,
անիկա այլևս հաստատ համադրումով մը գիտէ թէ, հաս լեցուող ձու-
կերու հոծ բազմութիւն մը կայ, վանդի գետէն երկնցող լեզուակի
նման այդ սահմանափակ ջրամասին մէջ երբ ձուկերու բազմութիւնը
կ'ապաստանի բուսկան երկար ժամանակ անոնց շնչառութեան ջեր-
մութենէն, այդ ջրամասին մակերեսին վրայ տեղ տեղ փոքրիկ ծա-
կեր կը բացուին, առնի երգիքի պէս, ահա, այս նշաններով փորձա-
ռու ձկնորսը գործի կ'սկսի ու կը յաջողի այդ տեսակ խորշերու
սառը մաքրելով որսով մեծ քանակութեամբ ձուկեր, այսինքն
150-200 հսխայի չափ, որ այդ օրը բարեկենդանն (ուրախութեան
անսովոր օր մը) եղած է գիւղին բոլոր տուներուն:

Գարնան եղանակին մէջ, Ապրիլ և Մայիս ամիսները մանա-
ւանդ, ձկնորսութեան, ամէնէն յարմար և հաճելի ժամանակներն են,
վանդի գետը իր յորդումին լրութեան հասած, իր աջն ու ձախը
բազմաթիւ փոքր կամ մեծ ջուրերու մասեր կը բաժնէ իր իրանէն,
որոնք բուսկան երկար ճամբորդութեամբ մը դարձեալ կը միանան
վարը իրենց փրփրած մայր իրանին: Գիւղացի ձկնորսը այդ բաժ-
նուած ջրամասերուն մէջն է որ ձուկ կ'որսայ ցորեկէն սկսեալ մին-
չև յաջորդ առտու:

Շատ անգամներ պատահած է որ ցորեկէն աւելի, գիշերուան
պահերուն, ալ աւելի արդիւնաւոր եղած է ձկնորսութիւնը, վանդի
գիշեր սառն, ամէն ինչ կը լռէ, այդ լռութենէն ու խաղաղիկ հան-
դարաութենէն ախորժած, ձուկերը կը սիրեն գետէն դուրս ելլել ու
մտնել այդ խորշերուն մէջ, եզերքներուն մօտերը: Կը բաւէ որ ի-
րենց այդ ընտրած փոքր ջրամասերը գէթ մէկ մէթրի չափ խոր ըլ-
լան: Մանաւանդ եթէ սիրած ալ ըլլան անոնք իրենց այդ նոր մի-
ջավայրը, հոն կը լեցուին բազմութեամբ:

Քիւլապի ձկնորսը ցորեկ տանն, մէյ մը աչքէ կ'անցնէ գետէն բաժնուած այդ բոլոր ջրամասերը, քննելու համար անոնց երկայնութիւնը, լայնքը, յատակին քարքարուտ և կամ աւազուտ ըլլալը, (քարքարուտ եղած տեղերը ձուկերը չեն սիրեր մնալ) ջուրին հանգարտ ու մեղմ ընթացքը, ուսումնասիրելէն վերջը, ան կ'երթայ այդ ջուրերուն մէջ սրտալու: Ձկնորսներու նաւագագոյն թիւը երեք հոգիէ կը բաղկանայ այդ եղանակին մէջ, երբեմն չորսի կամ հինգի ալ կը բարձրանայ մասնակցութեամբ ուրիշ փափաքողներու:

Արդէն երեք հոգիներով ձուկ սրտալը կարելի կ'ըլլայ, միւսները աւելորդ են: Երեքէն երկուքը, ուսկանը բռնած կը մանեն ջուրին մէջ, գրաւելով անոր երկու եզերքները ուսկանով. ինչպէս ըսի, ուսկանը 4-5 մէթր երկայնութիւն ունի հիւստուած երկու կողմերու շուաններու վրայ, որոնց մէկ կողմը կապարներ կան շուանին մէկ ծայրէն մինչեւ անոր միւս ծայրը քով քովի շարուած ու ամրացուած, իսկ ուսկանին միւս կողմի շուանին մէկ ծայրէն մինչեւ անոր միւս ծայրն ալ, իրարմէ երկու սանդիւմ հեռաւորութեամբ, ստանալու սանդիւմ երկայնութիւնով յղուեն և բթաչափի հաստութեամբ փայտեր կապուած են: Ձկնորսներէն երկուքը երբ ուսկանը կը ձգեն այդ խորշին ու գետին միացած տեղւոյն մէջ իրարու հանդիպակաց կողմերուն վրայ ուսկանին կապարին կողմը, որ ջուրին յատակին փակած է, իրենց ոտքերէն մէկը անոր վրայ կը դնեն, ու կը բռնեն թէ անոր շուանը և թէ ջուրին երեսին վրայ մնացող ուսկանին միւս կողմի շուանը ու կը կենան ուշադիր, աւանց ձայնի ու շարժումի: Նոյն տանն իրենց միւս ընկերը, որ ուսկանին ձրգուած տեղէն քսան երեսուն մէթրի չափ հեռու, այդ գետամասին քով կ'սպասէ, անոնց տուած սուլելու մէկ նշանին վրայ, կը մանէ ջուրին մէջ և ձեռքին գաւազանովը ջուրին կը գարնէ մէկ երկու անգամներ ու կը քալէ ջուրին մէջէն դէպի ուսկանը: Նոյն տանն ձուկերը դէպի գետը փախչելու պարագային կը հանդիպին ուսկանին ցնցելով գոյն ուժգնապէս: Այդ ցնցումէն ուսկանը բռնող որսորդները անմիջապէս գոյն ջուրէն վեր կը վերցնեն և անոր կապարին ու սախատակներուն կողմերը իրարու միացնելով կը ժողվեն ու կ'ելլեն ցամաք, ձուկերը հոն պարպելու: Յետոյ, նորէն կ'սկսին նոյն գործողութեան, և իրենց տուած նշանին վրայ, միւսը, որ վերը ջուրին մէջ կ'սպասէ, ջուրին ա՛յն տեղը, ուր կեցած էր, հոնկէ կ'սկսի գարնել ջուրին գաւազանով ու գալ դէպի ուսկանը, այս կերպով անոնք այդ ջրամասը կ'որսան մինչեւ անոր վերի ծայրը, որ գետէն բաժնուած է:

Երբեմն պատահած է, որ գիշեր տանն այդ խորշերուն գետին հետ միացած տեղերէն մէկուն մէջ որսացած են ձուկեր, անկէ ու-

աանց հեռանալու և յաջողած են բաւական քանակութեամբ չորս հինգ հախանաց ձուկեր սրաւ:

Քարնան տախաներուն մէջ ձկնորսութեան կերպ մըն ալ կայ, ա՛յն է, ինչպէս ըսի, գետին յորդած տանը, իրմէն շատ մը մասեր կը բաժնուին, որոնց մէկ մասը, որ ծանծաղ է և իր ընթացքը բաւական երկար է, կը գոցեն զայն իր գետէն բաժնուած տեղւոյն վրայ: Անոր այս գոցուելու գործողութիւնը բաւական ժամանակ կ'առնէ, այսինքն քանի մը ժամեր, և կը կատարուի 10-20 մարդոց միջոցաւ:

Անոնք նախ անոր բախուած տեղւոյն լայնութեան վրայ երկայն ցիցեր կը դարնեն և տաջեւն ու ետեւը մեծ քարեր կը շարեն իբրև ջուրին մէջ բարձրացող պատ մը գրեթէ մէկ մէթրի շափ լայնքի մը վրայ: Անկէ վերջը, այդ պատին մէջէն ու գուրսէն կը գոցեն ծառի կանանչ տերեւով ճիւղերու խաւրձերով, յետոյ, անոնց վրայ ալ կը լեցնեն ջուրին գիմացող մարդագետինի մեծ կտորներ, որոնց «չիմ» կ'ըսեն: Այդ շխմեռէն անոնք պատին ներսը, գուրսը ու վրան կը լեցնեն այնքան, որքան պէտք ըլլայ բոլորովին ջուրը ցամքեցնելու, ու երբ պատին ծակերէն ջուրը գուրս խաւրձելու փորձեր ընէ, անմիջապէս անոնք գարձեալ կը գոցեն շխմերով:

Երբ այդ գործողութիւնը կը վերջանայ ու այդ ջրամասը կը ցամքի, ձուկերը յանկարծակիի գալով, կը մնան առանց ջուրի իրենց տեղերուն վրայ առանց կարենալ շարժելու, այն տան կարելի կ'ըլլայ անոնք ձեռքով հաւաքել, իսկ այն տեղերը, որ քիչ շատ խորունկ ըլլալով ձուկերուն մէկ մասը իր մէջ պահած է, ուսկանալ կ'սրտան, քանի որ կարելի չըլլար անոնք ձեռքերով բռնել: Վերջապէս, ըլլայ ուսկանալ, ըլլայ ձեռքերով ու գաւազանի հարուածներով այդ ցամքեցուցուած խորշին երկայնքը ծայրէ ծայր մտլէ կ'անցնեն անոնք առանց անոր մէջը ձուկ մը ձգելու, ու երբ անոնք կը պատրաստուին առն Վերադառնալու իրենց ձուկերու պաշարով, այդ գոցուած ջուրին պատը կը բանան, որպէսզի, մէկ երկու շաբաթ վերջը տակաւին չցամքած, դան նորէն գոցեն զայն: այս ջրամասին «չաթ» կ'ըսեն անոնք:

Քարնան մէջ ձուկ սրաւու կերպ մըն ալ կայ գիւղացիներուն մէջ, որ գարձեալ տեղի կ'ունենայ Ապրիլ և Մայիս տախաներու տանները, ինչպէս ըսի, երբ Արածանին կը յորդի, բարձրանալով իր խորքէն, կը տարածուի իր լայնքին վրայ ու զայն իր սովորական ճամբուն մէջ սեղմող փոխանակ լեռներու, դաշտեր կը գտնէ իր եզերքներուն վրայ, որոնց այն մասը, որ փխրուն հող է, գետին մէջ կը փլչի, անոր բաղմահուտակ կոհակներուն յաջորդական հարուածներէն ի վնաս հալագործին:

Արտերուն այդ փլած տեղին եզերքէն մինչեւ գետին յատակը գրեթէ 5-6 մէթր բարձրութիւն կ'ունենայ, բայց ամէն տեղ այնքան բարձր չէ: Գետին նուազամ միջոցին, արտերուն շրթունքէն հետզհետէ կը ցածնայ ան, և սրովհետեւ գետն ու արտերը հաղորդակցութեան մէջ են այդ միջոցներուն, ձուկերուն մէկ տեսակը որ աւանձին սպրիլ կը սիրէ, մանաւանդ այդ տեսակ հոգէ փուլերուն մէջ, գետին՝ արտերուն հետ այդ շիման տեղերէն իրեն համար բոյներ կը շինէ մէկ երկու մէթր ներս երթալով: Գիւղացի ձկնորսը սակայն, այդ ձուկէն աւելի հնարագէտ ըլլալով կ'ընայ անոր հետքը գտնել ու զայն բռնել իր բոյնին մէջ:

Այս ձուկին սրտացողը, երկայն գաւազան մը ձեռքն տաւած կը մտնէ գետը, վնասելու համար ձուկին բոյնը արտերուն փուլերուն մէջ, գետին երկայնքին վրայ ջուրին մէջէն այդ խուղարկութիւնը կ'ընէ ան, զանոնք գտնելու պարագային, իր մէկ սաքին թաթը կը դնէ ձկան բոյնին բերանը, ու երկայն գաւազանը այդ բոյնէն ներսը կը մտցնէ, անով ձուկը գուրս բերելու: Այդ միջոցին, երբ բոյնին մէջն է ձուկը, գուրս կ'ազայ անկէ դէպի գետը, և սրովհետեւ անցքը բռնուած է սրտորդին սաքին թաթովը, կ'արգելուի ան փոխաչելէ, որսորդին թաթին բթամասը բերնին մէջն առնելով՝ կ'սկսի ծծել:

Նայն տակն ձկնորսը կ'ամացուկ մը ձեռքը ջուրին մէջ մխելով անոր տկանջին մէջ կ'անցնէ իր մտաները ու վեր կը հանէ զայն անկէ: Այս ձուկին քնարու կ'ըսեն անոնք: Ասիկա բնու փուշ չունի իր միսին մէջ, բայց իր ողնայարին և թեւերուն ոսկորներէն, թեւերը սղոցածեւ են և վտանգաւոր, եթէ մարդիկ անոր հարուածներուն հանդիպին: Ասոր զոյնը սեւի վրայ կը զարնէ, մանաւանդ անոր կանակին կողմը. իսկ փորը, մոխրագոյն է, գլուխը սափակ, շրթունքներէն ալ կ'ախուած երկայն պիսիւր ունի, ասոր միսը համեղ և իւղատ է, բայց ոչ այնքան դիւրամարտ:

Ամէնէն մեծը հոխայէն աւելի չի կըշուր, ձկնորսները այս ձուկէն քանի մը ժամուան մէջ, ամէն մէկը 15-20 հոտ բռնած են այդ բոյներուն մէջ, հոգուագիւտ է՝ անոր բռնուիլը ուղեկանով:

ԱՐԱԾԱՆԻԻ ԶՈՒԿԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Անոր ձուկերուն մեղի ծանօթ եղածները ութ տեսակներ են: Ահա, իմ գիտցածներս, որ ծանօթ են գիւղացիներուն հետեւեալ տեսակներով. սանտրիկ, մող, խաս, չորանկան, դրո, Երպութ, օնաձուկ և քոսքոս: Թոսթոսին մասին ծանօթութիւններ տուի վերը.

հիմա դառնանք միւսներուն : Մա՛տրիկը տափակ է և փշտա՛ Շտա
չի մեծնար մն , բայց առատ է , ամէնէն մեծը հարիւր
տիրէմէն աւելի չի կշուր , գետին ամէնմասերուն մէջ կը
գանաւի ու ամէն տակն ալ ձկնորսին ոււկանը պարտը չի համեր :
Առաջին անգամ ձկնորսին ձգած ոււկանի մէջ երբ այս սանարիկ
ձուկը կ'իջնայ , տափկա խխսս փոյձուած նշան մըն է , որ այդ օրը
քիչ ձուկ պիտի կարենան սրտալ :

Մուլը , այս ձուկը Արածանիի ձուկերուն ամէնէն ընտիրն է , ա-
սոր մարմինն կազմուածքը , ձււ , երեւոյթը գեղեցիկ ու սիրուն
է , միան ալ մանաւանդ գեր , համեղ և դիւրամարս է , փոքրէն սկստալ
մինչեւ անոր մեծը միշտ կը փնտոււի , իբրեւ ընտրելագոյն ձուկ :
Անոնք հոն , ձուկերու մեծութեան համեմատ զսա զսա տնուն-
ներ կուտան , այսինքն , մազոյ (ջուլհակին մէգիգին չափ) , սնկէ ա-
ւելի մեծին , այսինքն , անոր կր'իծը , գրսբ , ասկէ աւելի մեծին ,
պալսր , ա՛լ աւելի մեծին , բասալ : Մուլ ձուկէն յոճախ սրտոց-
ուած է բայի բատամէն : միւս երեք չափերն ալ , -բատամին-ձանբու-
թիւնը 15-20 հոխա կը կշուէ . շատ գժուարութեամբ կ'որսացուի
ոււկանով : Մուլին պայտըր ըսուած ձուկերը 6-7 հոխա կը կշուն :
Այս մուլ ձուկը կ'որսացուի Ապրիլ և Մայիս ամիսներուն մէջ , մա-
նաւանդ փշտափի , ցորենին ձոնին և դաշտի մոշիին ծաղկած տակն-
ները , անիկա դուրս կ'ելլէ գետին խորունկ տեղերէն ու կը
փնտուէ գետէն բամբուած ջուրին ա՛յն մասերը կամ գետին միա-
ցող լեռներէն հասող ա՛յն փտակները , որոնց բատակները աւազուա
ըլլան և զիրենք սնուցանող նիւթերն ալ՝ ախորժեկի : Ասոր սրտոց-
ուիլը ընդհանրապէս գիշերուան տակները կ'ըլլայ : Տեղ մը երբ
սիրելու ըլլան այս ձուկերը , հարիւրաւորներով կը լեցուին
հոն : Անոնց ամէնքն ալ միեւնոյն մեծութիւնը կ'ուեննան գրեթէ ,
իրարմէ նուազ տարբերութեամբ , ամէնքն ալ պալսրներ կ'ըլլան
այդ տեղէն բռնուած ձուկերը :

Ես կը յիշեմ անգամ մը , գիշեր տակն մեր բարեկամ ձկնորս-
ները քառասուն հինգ հաս մուլ ձուկէն պայտըրներ սրտային , չորս
էշերով փոխադրեցին գիւղ , կ'ըսէին թէ եթէ շարունակէին սրտալ ,
նոյն տակն , նոյնքան ալ պիտի կրնային ունենալ այդ մեծութեամբ
մուլ ձուկեր :

Ասոր միտը նուազ փշտա է , գլուխն ու շրթունքները մանաւանդ
իւղտա և շատ համեղ են , շրթունքն անոր էշու շրթունքին պէս
կախուած է իր գունչէն :

Ասոր , ձմեռուան մէջ կ'որսացուի , ինչպէս ըսի , սառած խորշե-
րու մէջ կ'ըլլայ : Ասիկա համաչափ գիծեր ունի իր կունակին վրա ,
իսկ փորին կողմը գեղնագոյն է , գիւղացին հաւանական է որ խոս

տառիկ բառը կրճատելով «խառ» անուանը տառած է անոր իր վրայի գիծերուն համար:

Սխառ տառած է այս խառ ձուկը, շատ չմեծնոր ան, որմէ պալսրի մեծութեամբ տեսած չենք քնու: Ասոր միտք փշտա է բայց ո՛չ այնքան շատ և համն ալ բաւական տխորժելի է: Այս տեսակէն եղողներուն մեծութիւնը և ծանրութիւնը կարծես միեւնոյն են, շատ քիչ կը սարքերին իրարմէ, սասնց ամէնքն ալ, առ ստուելն կէս կէս հոխայ կը կշռեն:

Չոր անկած (տկանջ) այս ձուկն ալ տառած է, գուցէ խառէն աւելի, և կ'որսացուի երեք եղանակներու մէջ ալ, յարգի ձուկ մը չէ տակիս, փշտա և անհամ ըլլալուն համար: Ասոր գլուխը չեն սաւեր իր տկանջներուն չորութենէն և լեզիութենէն: Ասիկա գետին բոլոր տեղերուն մէջ կը գանուի, ուր որ սեղէ, հան կ'երթայ, հայրենիք չունի ան գետին մէջ: Ասիկա բառամներ շատ ունի, կը մեծնայ ամէն ձուկերէն աւելի:

Գըս ձուկը, գիւղացի ձկնորսը այս անուանը տառած է անոր, հաւանաբար խիտ մտա և գէր ըլլալուն համար. արդարեւ, որքան օր անիկա մտել ու գէր է, նայնքան ալ այդ գէրութեան պատճառաւ դանդաղացարժ է: Գիւղացին սովորաբար գանդաղ և ծանրաքայլ ձիուն, ջորիին, գամէշին, եզան և իշուն «գըս» կ'ըսէ: Այս գըս ձուկը իր գոյնի ձերմակութեամբը նմանը չունի Արածանիի մէջ, սսոր մէջքը մոմաւանդ ուղտի կանակին պէս վեր ցցուած երեւոյթն ունի, բայց ոչ ստիտկածիւ, այլ՝ միտերով կողմուած մէջք մը, որ հաստ է և որ չի ցուցներ երբեք անոր կանակին ցցուածութիւնը:

Ըսի թէ գէր է ան. արդարեւ այս ձուկին փոքրն անգամ, երբ շիշերու վրայ զարնուած կրակին վրայ կը խորովեն, կրակը բոցերու մէջ կը մնայ իր վրայ թափուած իւղէն: Ասոր մեծը չոր անկածին մեծին հաւասար է գրեթէ չափով, բայց բայց ո՛չ կշիւքով փամպի, երկուքը հաւասար մեծութեամբ նայն ծանրութիւնը չեն ունենար, «գըս»ը աւելի կը կշռէ քան չորանկածը: Հակառակ իր այնքան մեծութեան, ձկնորսները շատ գիւրութեամբ կրցած են գոյն բանել տականով, երբեմն ծանրութիւն ունեցած է 15-16 հոխայ:

Շրպութը. այս ձուկն ալ ձերմակ է իր գոյնովը, բայց ո՛չ գըսին պէս: Ասիկա իր գլուխէն մինչև իր պոչը միեւնոյն համաչափութիւնն ունի շատ քիչ սարքերութեամբ մը. կարծես, մէջքի հաստութիւն չունի ան: Շատ գժտարութեամբ կ'որսացուի, քիչ անգամ պատահած է անոր բանուիլը ուսկանով: Ամէնէն նոր ու հաստատուն ուսկանն անգամ չի դիմանար շրպութին գլխուն հարուածին, գոյն պատուելով կ'ազատի Բանուերու պորտագոյնն,

երկու ուսուցիչներ կը ձգուին իրարու ետեւ ջուրի մէջ, այնպէս որ երբ առջեւի ուսուցիչը կարենայ պատուել, անոր ետքի ուսուցիչը այլեւս անկարող կ'ըլլայ վերստէլ, և անով կը բռնուի: Պատահած է որ ուսուցիչը, ինք հեռուէն տեսած աւ անոր վրայէն նետուած է գետին մէջ, և կամ ուսուցիչին մէկ կամ միւս ծայրին քովերէն, արագօրէն ցամաքէն փախած ի'րզկինքը գետին մէջ ձգած է: Երբ զինքը բռնել կարենան ձկնորսները, ջուրէն հեռու պիտի տանին զայն ցամաքին վրայ, վասնզի, այդ միջոցին իր գանուած տեղւոյն ցամաքը եթէ գետին մօտ ըլլայ, անկէ շատ դիւրութեամբ կրնայ փախչիլ դէպի գետը: Ասոր միտը համեղութեան տեսակէտով գրեթէ կը հաւատարի մող ձուկին միտին:

Օձաձուկը, հոն բնուէ չեն ուտեր, ու չեն որսար զայն, սովորութիւն եղած չէ հոն անոր միտն ուտել, այս պատճառաւ գաղտնիար չունի թէ ի՞նչ տեսակ համ ունի անոր միտը:

Թոսթոսին ցատկութեան վրայ վերը մանրամասն գրած ըլլալու ամուսնային աւելորդ կը սեպում իր մտանքը քան մը գրել հաս:



ԼԳ. ԳԼՈՒԽ

ԲԱԼՈՒԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երեք տեսակ յատակագիծերու վրայ շինուած են եկեղեցիները . — Կաթողիկէ . կիսագլխածեւ կամարով և սրբազ հողով ծածկուած : Կաթողիկէ եկեղեցիներու տեսակները, ս յիշան շատ չեն, որքան շատ են միւս տեսակները : Իմ գիտցած տեղերու մէջ կը յիշեմ գտնէ մէկ հաստ միայն գմբէթաւոր եկեղեցի, որ Բալուի չորս եկեղեցիներէն մէկն էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուամբ : Շատ մեծ չէր այս եկեղեցին, այլ, չափաւոր : Խաչածեւ էր ան և գրեթէ աւելի քառակուսիի մօտ ձեւ մը ունէր : Հարաւային կողմն ունէր երեք հաստ բաւական մեծ կակ յուսամուսներս Աւանց սիւնի էր այս հոյակապ եկեղեցին, որ կը փայլէր իբր գոհար մը իր հիւսնալի գեղեցկութեամբը : Փառաւոր, շքեղ, սիրուն տեսք մը ունէր ան, որքան հայելու ըլլայիր անոր համաչափ և կոկիկ կաթողիկէին, քեզ տաինքնող խաչկալին, ճաճանչաւոր սեղաններուն, մանաւանդ աւագ խորանին սկեզօծուած հուրք բոցի խորհրդաւոր շինուածքին, գամուած կը մնայիր քեզ սքանչապաղ անոնց զմայլելի գեղեցկութեանը :

Այս գեղեցիկ եկեղեցին, քաղաքին, մանաւանդ հայաշատ կեդրոնի մը մէջ շուկային մօտիկ, կառուցուած էր բալուի վարպետ ճարտարապետի մը պատրաստած յատակագիծին վրայ : Բաղաքը երբ հեռուէն կը տեսուէր ճամբորդներու, առաջին անգամ անոնց կ'երեւնար Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բարձր և սիրուն կաթողիկէն իր վրայ ծածկուած կարմիր կղմինարներովը :

Կամարածեւ եկեղեցիները ընդհանրապէս շատ են հոն, կան որ բաւական ընդարձակ են, և կան չափաւոր, և փոքր : Այս տեսակ եկեղեցիները շինուած են ընդհանրապէս աւելի երկայնքի վրայ, չափաւոր բարձրութիւն մը ունին և իրենց եր'այնութեան համեմատ հարաւային կողմին վրայ ձգուած են քանի մը յուսամուսներ չափաւոր մեծութեամբ, հիւսիսային կողմն ալ զրկուած չէ յուսամուսներէ : Հակառակ որ այնքան շատ են անոնք, դարձեալ քիչ մը մութ են այս կամարածեւ եկեղեցիները, որոնք բաւական մեծ ըլլալու համար, քիչ մը ցած են : Այս ընդարձակ տարածութիւն ունեցող եկեղեցիները ունին իրենց մէջ 12 հաստ հաստ բոցի սրբատաշ յղկուն քարէ սիւներս Այսպիսի եկեղեցիներուն կամարներէն մէկը չորս սիւներու վրայ դրուած է, և միւսներն ալ երկ-երկու

սիւներու վրայ : Ասոնք իրարու միանալով կը կազմեն ամբողջ ծածքը, որուն ասնիքը կ'ըլլայ տափարակ :

Նոյն սճով շինուած եկեղեցիներ տլ կան, որոնք բողբոսամամբ այս ընդարձակ եկեղեցիներուն ունին միայն վեց հաս սրբատաշ յղկուած քարէ սիւներ : Այս բազմակամար եկեղեցիներուն հիմերը տեղին կարծրութեան, կամ փխրուելութեան համեմատ կը դրուին, գրեթէ երկու կամ աւ աւաւելն երեք մէթր խորութեամբ և մէկ ու կէս մէթր լայնութեամբ որոնց վրայ կը բարձրացուին հաստատուն սրտերը կրախառն շաղախով հիւսուած կարծր բայց կոփուած ու տաշուած քարերով : Թէև տա եկեղեցիները իրենց վրայ բարձրացած կաթողիկէ չունին, ո՛չ տլ սնոր դուրսի կողմէն եկեղեցի երեւնալու յայտնի երեւոյթը հեռուէն դիտողի մը համար, սնանց ներսի կողմը միայն եկեղեցիի յատկանշաւթ իւններն ունի . ըլլան տնոնց կամարները, սիւները և ձեղունը, ճարտարապետական մտանաւոր չափերու վրայ շինուած են : Սիւներուն բոլոր խոյակները նուրբ քանդակներ ունին հրեշտակներու և կամ զանազան սուրբերու նկարներով պարզարուած :

Ասոնց սեղանները ընդհանրապէս երեք հաստ են : Աւագ խորանը մանաւանդ իր վրայ եղած արտաքին զարդարանքէն զատ, նրբաշէն գեղեցկութիւն մըն է ինքնին : Հաս տլ կը փայլի հայ վարպետ հիւսնին, կամ առաջագործին ճաշակն ու տակձագործող միաքը :

Իսկ միակամար եկեղեցիին ամբողջ երկայնութիւնը կը ծածկէ սնամէջ կէս գլանի մը ձեւն ունեցող կամար մը քարուկիր : Եկեղեցիներ կան, որոնք ունին ընդարձակ գաւթիթներ և իրենց քովիկը սրտաէզներ և դպրոցներ : Քաղաքի եկեղեցիներէն ոմանք կառավարութենէն արտօնուած են զանգակատուններ ունենալու, իսկ կան եկեղեցիներ տլ, որ չունին այդ առանձնաշնորհումը, սակայն կան հինէն մնացած տախտակէ և կամ տախտակածիւ երկաթէ կոշնակ գործածել :

Իսկ կան եկեղեցիներ տլ, որոնց պատերը աւանց կիրի, պարզ քարէ և կամ աղիւսէ շինուած են : Անոնց սիւները, ձեղունը ամբողջովին փայտերէ կազմուած են : Այս եկեղեցիներուն պատերը մանաւանդ աւանց կրախառն շաղախի հիւսուած ըլլալնուն, տախտակութեամբ են հաստատուն շինել, դնելով զանանք լայն ու խորունկ հիմերու վրայ, այն պարզ պատճառով որ իրենց վրայ դրուելիք խոշոր գերաններուն ծանրութիւնը կարենան վերցնել : մանաւանդ որ այդ հսկայ գերաններուն վրայ տակաւին պիտի դրուին խիտ խիտ, իրարու կից գրեթէ չափաւոր հաստութեամբ փոքրիկ գերաններ (գարձեկ) և սնանց վրայ տլ մ'որդակներ, տարա տախտակ և կամ ուրիշ նիւթեր, զորս կը գ. մնն և կամ կը շարեն այդ դարձեկներուն վրայ

և յետոյ զայն կը ծածկեն նախապէս պատրաստուած մտիւրի և կամ
տխարի փոշիներու հետ խառնուած գիմացկու ճաղի ցեխով մը :

Հողէ շինուած այս պարզ եկեղեցիները ընդհանրապէս գիւղացի-
ները կ'ուսնենան, բայց ոչ ամէն գիւղ, վասնզի իմ գիւղացի գիւղե-
րու մէջ կան կարգ մը գիւղեր, ինչպէս Չէթ, Սագրաթ,
Խոչմաթ և Թրխէ, որոնք ունին միակամար և խաչածեւ քարուկիր
եկեղեցիներ, մանաւանդ Չէթ գիւղի եկեղեցին, որ հարստարտակա-
կան ձեւով շատ կը նմանի Պոլսոյ Պէշիկթաշի հայոց եկեղեցին ձե-
ւին, ինչպէս ըսի, արեւելքէն արեւմուտք երկարող մէկ կամարի մը
տակ կը հանդէի և իր ամրակուս պատերը քարուկիր և տաանց
աիւնի են :

Գիւղերու այդ պարզ եկեղեցիներուն տանիքը ընդհանրապէս
ծածկուած է հողով, տախարակ է տանիքը, զոր կը լողեն անձրեւոտ
օրեր, կոկուած յղիուն ծանր քարէ գլանով մը (լող) : Բայց այս պարզ
եկեղեցիները որքան որ քարուկիր չեն, հաստատուն են անոնք ի-
րենց խորունկ հիմերովը, լայն պատերովը, խոշոր ու մեծ գերան-
ներովը և անոնց վրայ շարուած խիտ խիտ բաւական հասակեկ դար-
ձեկներովը : Աս եկեղեցիներուն արտաքին երեւոյթը շատ քիչ կը
տարբերի գիւղի տուներէն, այդ տարբերութիւնը միմիայն անոնց
մեծութիւնն ու իրենց պատերուն ձերմակ, կամ կարմրագոյն ծեփե-
րէն կը զանազանուի :

Գիւղերու մէջ կան եկեղեցիներ, որ ըստ բաւականին մեծ են և
կան ալ, որ փոքր են : Եկեղեցիներէն ոմանք ունին կալուածներ,
այսինքն արտ, այգի, պարտէզ, որոնց հասոյթներով եկեղեցւոյ ըն-
թացիկ ծախքերը հոգալէն վերջը, հասոյթին յաւելեալ մասը կը
չտակապնեն գնուելիք անշարժ կալուածներու :

Եկեղեցիներու մատակարարութիւնը կը բնաձնուէր գիւղին մէջ
վատահելի մարդու մը գիւղին մեծերուն որոշումովը : Այդ ընտրուած
մարդը նոյն տանն կ'արժանանար եկեղեցւոյ երեսփոխան պատուա-
նունին :

Թողական Խորհուրդ, Ընդհանուր ժողով չունէին անոնք ըստ
Սահմանադրութեան կանոններու : Անոնց ժողովը կը կազմուէր մի
միայն գիւղին մեծերէն, որոնք ամէն ինչ էին : Եկեղեցւոյ երեսփո-
խանը եկեղեցւոյ մատակարարութեան հաշիւը Յունուարէ Յունուար
կը ներկայացնէր այդ ժողովին :

Կան եկեղեցիներ ալ, որ շինուած են գիւղերէն դուրս գերեզ-
մանատան կից, ինչպէս Թրխէի և Սղամի եկեղեցիները, որոնք տ-
ւանդարար կ'ըսուի թէ Թաղէոս Առաքեալէն շինուած են, շատ հին
են անոնք, քարուկիր և ամրակուս պատերով, տախարակ տանիքով
մէլ մէկ մատուաներ : Թրխէի Ս. Սարգիս եկեղեցին մանաւանդ :

գիւղին վերեւ պարտէզներու ծայրը, հսկայ բլուրի մը ստորտը շինուած է: Եկեղեցւոյ արտաքին մուտքը ընդարձակ գաւիթ մը ունի, իրեն կից ունենալով միեւնոյն աստիճանային սիւնակներ: Այդ գաւիթին մէջ բացի Ս. Պատարագէն, պարզ ժամերգութիւն կը կատարուէր գարնան և ամառուան եղանակներուն մէջ: Եկեղեցւոյ ներքին և արտաքին երեսօյթը, որեւէ գեղեցկութիւն մը չունի. բայց իր դիրքը աննման է, վասնզի իր վերեւ հարաւային կողմը, զանազան ծառերով զարդարուած հսկայ բլուրն է, եկեղեցւոյ արևելեկան կողմը, գիւղին լայնատարած դաշտը ուղղակի մասկ մըն է, որուն երկու եզերքներուն վրայ զանազան ծառեր անկած են ծայրէ ծայր, աջ կողմը, ջրագացքներ՝ և հիւսիսի կողմը գիւղին բազմութիւ պարտէզներն են, իսկ ձախ կողմը, աւելի ճիշդը եկեղեցւոյ արևմտեան կողմը ընդարձակ դերեզմանատունն է, որ կարծես թէ բնութիւնը մասնաւորապէս օժտած է զայն բազմազան ծառերու զարդարանքով: Ահա, Ս. Սարգիս եկեղեցին, որ պճեւուած էր բնութեան ճոխ գեղեցկութեամբը:

Օտար այցելուները գմայլանքով կը դիտէին այս հիանալի տեսարանը, յայտարարելով թէ իրենք շատ մը երկիրներ ճամբարդած ըլլալով, երբեք չեն հանդիպած այդպիսի գեղեցիկ դիրքով, հիանալի տեսարանով, աւաղջարար օդով և տաաա ջուրով օժտուած եկեղեցիի մը:



ԼԳ. ԳԼՈՒԽ

ԲԱԼՈՒԻ ԳԻՒՂԻ ՏՈՒՆԵՐԸ

Գիւղի տուները մեծ մասամբ միայնակ են հեանելու բաժանումներով շինուած, դուրսի և ներսի տուն (զոր կը գործածեն նրատելու և պտուկելու համար, Դեկտեմբեր, Յունուար, Փետրուար և Մարտ ամիսներուն մէջ), խզն (մառան), ախոռ, մաքաղ, դորգան (գաւթ), սախա, փոքր սենեակ, որ ախոսին մէկ անկիւնը շինուած է: Նախ, շինուելիք տունին յատակագիծը կը պատրաստեն տունին տէրն ու որմնագիրը: Յետոյ անոնց ցուցմունքներուն վրայ, մշակները կ'սկսին բանուի շինուելիք տունին պատերուն հիմերը, գրեթէ մէկ մէթրի շափ խորութեամբ և 60-70 սանդիւմ լայնութեամբ: Չմտնում ըսելու որ հիմերը բացուած միջոցին, ոմանք ոչխոր մը կամ արու այծ մը իբրև մասաղ կը մորթեն ճիշդ բացուած հիմին վրայ: Տունին համար այս հնաւանդ գոհարութիւնը ընելէն վերջը, որմնագիրը «Հայր մերով» մը պատերուն չորս անկիւններուն անկիւնաքարերը հիմերուն մէջ կը զեակէ, որոնք կարծր, մեծ ու կոփուած քարեր են: Գիւղի տուները սա հասարակ իրարմէ անջատուած չեն, մինակ անոնց դորգաններու վրայ բացուած փողոցին մեծ դուռներն են, որ կ'որոշեն տուները իրարմէ, գիացնելու համար թէ սա սաո՛ր տունն է, ան՝ անորը:

Ասոր համար է որ անոնց տուներուն ներսի մասերուն պատերը անձրեւէ զերծ մնալով չոր կը մնան հեռացնելով իրենցմէ փլչելու վտանգը: Մինակ դորգաններուն պատերն են որ յաճախ անձրեւին, ձիւնին և փոթորիկին հետ յարսերութեան մէջ ըլլալով, հաստատուն կը շինուին վերը յիշուած չափերուն համեմատ, մանաւանդ խոշոր քարեր են այդ պատերուն կառուցուածքին գլխաւոր նիւթերը: Իսկ տունին ներսի մասերուն պատերը, որ անձրեւի երեսը չեն տեսներ, առհասարակ չթրծուած հում աղիւններէ կը շինուին, անոր համար որ անոնք ինչպէս ըսի, դորգանին արտաքին պատերուն փլչելու վտանգը չունին: Արտաքին պատերը գեանէն մինչև 2 մէթր բարձրութեամբ քարերով կը շինուին, իսկ մնացած բարձրութիւնը՝ հում աղիւսով որ քարքին կ'անուանեն:

Իսկ կան կարգ մը գիւղեր, որ քարի հանքեր չունին իրենց մօտերը և հետու տեղերէ ալ բերելու համար զանոնք, մեծ դժուարութեանց կը բախին նիւթական տեսակէտով, սախալուած են հում

աղիւստով շինել իրենց տուները, վասնզի այդ կարգի գիւղերու հողը ձիւթի պէս կաշուն ըլլալով, խիստ դիմացկուն է, և երկար ատրի- ներ կը ստիպայ անձրեւին ու խստաշունչ փոթորիկներուն: Այս հողէն կը թափեն կողոպտորներու մէջ հում աղիւսներ, զանոնք արեւին ասկ չորցնելէն յետոյ, անոնցմով կը շինեն շինուելիք տունին բոլոր պատերը:

Տունին և դորդանին պատերը երբ քարով, կամ աղիւսով շինուելով կ'ամբողջանան, կը ձգեն զանոնք իրենց վիճակին մէջ երկու ամիսի չափ, մինչեւ որ չորնան և նստին իրենց հիմերուն վրայ: Շինուած պատերուն բարձրութիւնը իրենց յասակէն մինչեւ վերի ծայրը, գրեթէ չորս մէթր է: Պատերուն չորնալէն յետոյ, անոնց վրայ հաստ գերաններ կը դնեն: Զմեռուան և գարնան կղանակներուն մէջ իրենց բնակած յարկաբաժինները քառակուսի են մեծ մասամբ, երբ անոնք երեքական բաժանումներէ կը բաղկանան, մէկ բաժանումին, մէկ մաղ կ'ըսեն: Մէկ մաղը մերձաւոր հաշիւով երկուք ու կէս մէթր լայնութիւն ունի, այսինքն պատերուն վրայ դրուած առաջին գերանը, պատէն երկուք ու կէս մէթր հեռու պէսք է որ ըլլայ, և այդ միջոցը հետեւաբար կ'ըլլայ մէկ մաղ: Յետոյ այդ առաջին գերանին վրայ շարուած դարձեկներուն իւրաքանչիւրին ծայրերուն մէկը գերանին վրայ կուգայ, իսկ միւսը՝ պատին, և միեւնոյն գերանին վրայ պիտի շարուին երկրորդ մաղին դարձեկներուն մէկ ծայրերը, իսկ անոնց միւս ծայրերն ալ պիտի դրուին երկրորդ գերանին վրայ ասիկա կ'ըլլայ երկու մաղ, և այս երկրորդ գերանին վրայ դրուած դարձեկներուն միւս ծայրերը կը գեանդուին այդ գերանին դիմացի տունին պատին վրայ, նոյն ստեն տունը բաղկացած կ'ըլլայ երեք մաղերէ:

Բոլոր գերաններուն վրայ շարուած դարձիկներուն իրարմէ հեռաւորութիւնը գրեթէ քսանական սանդիւմ է: Հոն, շատ մը տեղերու մէջ, տուներու գերանները և դարձեկները բարտի են: Տունի շինութեան համար, անմէնէն յարմարագոյն աստղձը, բարտի ծառն է: Միւս ծառերը, ինչպէս, ուռենին, թեղօշը, թթենին, կաղնին, փշատին, ծիրանին եւն, թէեւ շատ կան հոն, բայց շիփ շխտակ չըլլալնուն համար, այնքան յարմար չեն իբրեւ աստղձ տունի շինութեան համար: Եւ եթէ ոմանք բարտի ծառ չունենալով, ասիպուին տունի շինութեան համար այդ ծառերէն գործածել, զանոնք վերջապէս ձեւի բերելով, շատ ժամանակ կը կորսնցնեն և թէ նիւթական վնասներու կ'ենթարկուին հիւսնին և աստղձագործին երկար ատեն օրավարձք տալով:

Ներսի տան ճիշդ յար և նման կը շինեն նաեւ դուրսի տունը, որ դորդանին յարակից է, և մօտ՝ փողոցի դրան: Դորդանը գիւղա-

ցիին համար մամուռանդ այնքան կարեւոր է, որքան՝ սան միւս մասերը, սնոր պէտքը շատ զգալի է գարնան և ամառուան եղանակներուն մէջ, վասնզի հոն է որ իրիկուրնէ մինչեւ սաւառու, եղ, կով, գամէշ, մատակ, հորթ, ընձուղ, էշ, քուսակ միասին կը գիշերեն քով քովի:

Գորգանը, սունին բոլոր կենդանիներուն իբրեւ մակաղասակ ալ կը ծառայէ, ուստի սունին տէրը ստիպուած է զայն շինել ընդարձակ գետնի մը վրայ լայն ու բարձր պատերով: Ախար կամ ախտաներն ալ իրենց ունեցած խաշինքներուն թիւին համեմատ կը շինեն, գուրսի ախտ և ներսի ախտ անուաներով կ'որոշեն անոնք, իրարմէ զանազանելու համար: Ներսի ախտին մէջ կը կապեն միայն գամէշներ և լծկան եզներ իրենց մաւրներուն առջեւ, իսկ գուրսի ախտին մէջ ալ կը կապեն մատակ, կով, հորթ, ընձուղ, ձի, ջորի և աւանակ:

Այս ախտները իրարու կից են անջրպետուած մէկ պատով և մէկ դուռով, որոնք կ'իյնան իրենց բնակած սունին ներսի կողմը, այսինքն գորգանին կից եղող սունը, ուր իրենք կը բնակին, որուն կից է նաև ներսի սունը, որ իբրեւ ննջատենեակ և կամ սուղի ճիշդը ննջարան, կը ծառայէ նոր ամուսնացողներու: Այս ներսի սան կից են սհա, ախտները, այնպէս որ մէկ շարքի վրայ կը գանուին բոլորն ալ: Գորգանէն մինչեւ ներսի ախտին գուրս հաւանական հաշիւով 15-20 մէթր երկայնութիւն մը ունի երկու մէթր լայնութեամբ, սակայն անցք մ'է կենդանիները գուրս, ներս սանելու բերելու համար, այս երկար անցքը ցորեկ տանն անգամ, լուսամուտ չունենալուն համար, լոյս չունենար, եթէ գուրսի սան գորգանին մէջ բացուած գուրս բաց չի ձգուէ, այդ երկար անցքին անոնք «խել» կ'ըսեն:

Ըսի թէ Բալուի կարգ մը գիւղերու սուները սահասարակ միայնակ են, բայց վերջերս այդ նախնական հին ձևը չի մնաց հոն, ոմանք իրենց սուները սկսան շինել երկրորդ ցորկի վրայ իբրեւ բնակութեան տեղ: Այս նորոյթը միայն անոնք ներմուծեցին գիւղի սուներու շինութեան մէջ, որոնք պանդխտութեան ցուպը ձեռք սանելով Պոլիս երթալ գալ սկսան, ունենալով շատ քիչ ճաշակ գեղեցիկին, հանգստաւէտութեան և առողջապահիկ պայմաններու: Գիւղացին ընդհանրապէս իր սունը կրախտան շաղախով շինելու համար, միջոց և պատեհութիւն չունի, սա պատճառաւ է որ՝ եթէ սն ուղէ շինել իր սունը այդ հաստատուն նիւթերով, իր պիւտճէին հաւասարակ ութիւնը բացարձակօրէն պիտի խանգարուի: Վասնզի հողագործ գիւղացին կիր պատրաստելու համար, պիտի ստիպուի իր արտերուն վար ու ցանքին և զանոնք հասունցնելու գործին ժամերը

կորսնցնել, որոնք իրեն կենսական են. ասկէ զատ, կիրով շինուելիք տունին ասէրը պիտի պարտաւորուի սրմնադրին և մշակներուն տւելի օրտաւարձք տալու, անոր համար որ այդ նիւթով շինուելիք տունին պատերուն շինուի իւնը կ'երկարի, որքան չերկարիր եթէ պարզ յե'ստի շինուէր: Կայ ուրիշ բայց երկիւղալի պարագայ մը, որ ա'լ տւելի շրջանայեաց ընելու սախած է հողագործ գիւղացին մանաւանդ, երբ նկատի կ'առնէ իր շուրջը զինքը շրջապատող այլադուան գլխացիներու նախանձը և անոնց թշնամական վերաբերմունքը հանդէպ իրեն, ան չկրնար սղասօրէն բնակիլ այնպիտի ասն մը մէջ, որոնք սէյերու և զրացի ազաներու տուներուն գեղեցկութիւնն ու շուքը պիտի ունենային: Ինչպէս որ Թրայ Հաշիմ պէյը կ'ըսէ եզեր թէ, պէտք է որ իր գիւղացի հողագործ հայ մարապայի՛ն սաքը փոխանակ կօշիկի, արեխ տեսնէ:

Այս սրտաճատներով, ան հարկադրուած է խոնկեմութեամբ, միջավայրին սրայմաններուն համեմատ, իր գործին, գիրքին յարմարող պարզ տուն մը ունենալ շինուած ըլլալով ան սովորական յեխով, քարով և փայտով և կամ Բարբինով: Ըօի թէ նախ շինուելիք տունին պատերուն հիմերը կը դրուին և անոնց վրայ կը բարձրացուին պատերը մինչև իրենց որոշ տեղը: Յետոյ ըստ շինուելիք տան յատակադի, գերանները կը զետեղեն պատերուն որոշ մասերուն վրայ, անոնց երկու ծայրերը այդ տեղերուն մէջ ամբողջելէն յետոյ, անոնց վրայ կը դնեն գարձեկներ իրարմէ քսանական ս. դ. մ. ն. ոււորութեամբ, այդ գարձեկներուն վրայ կը շարեն նսեւ խիտ խիտ մարգակներ, ու անոնց վրայ ա'լ տախտակներու կտուներ և կամ ծաւերու դայար ճիւղերը, նլեր ըսուած: Անկէ վերջը զայն կը ծածկեն լու մը պարտատուած յեխով: Այդ յեխը ոչ միայն հողով կը պատրաստեն, այլ անոր հետ կը խառնեն բուսական տառա յարզի մանրուք (մզկ), աթարի փշրուած փոշի և կրակի մոխիր, որպէսզի այդ խառնուրդով տանիքին յեխը ամուր և հաստատուն ըլլայ դիմանալու համար տեղացող ճիւղին և անձրևին: Ահա, այս յեխով կը ծածկեն տախտակներուն վրայ թարձր բայց կարգով շարուած ճիւղերը գրեթէ քսան սանդիմ խորութեամբ: Յետոյ անոր վրայ կը լեցնեն 30-40 սանդիմէթր խորութեամբ, մազուած մաքուր հող, որուն վրայ յետոյ կը քաշեն բուսական ծանր քարէ լողը, կը լողեն զայն երկու մարդերով, լողին երկու ծայրերուն մէջ անցուած լողփասք բանելով: Ահա Բալուի կարգ մը գիւղերուն տուները: Յետոյ կ'սկսին շինուած նոր տունին բարձր պատերուն վրայ ցուիքները դնել, որպէսզի պատերը շնասուին անձրևէն: Յուիքն է սակայն, որ կը պաշտպանէ այդ պատերը թրջուելէ, եթէ ոչ, անոնք անձրևէն յոճախ թրջուելով կը փլչին:

Յուսիքին նիւթը կը պատրաստեն կողնի և փշտաի ծառերուն գիւնացիուն ճիւղերէն, և դանտիք բաւական թանձրութեամբ իրարու վրայ դնելով կը շարեն պատին վրայ խիստ համաչափութեամբ մը, որուն կէսը պատէն դուրս կ'երկարի, իսկ կէսն ալ՝ պատէն ներս իբրև պաշտպանութիւն պատին: Շատ անգամ աշնան և ձմեռուն տրեւոտ օրերուն մէջ, գիւղացի տարիքատ անջր և կիներ, և իրենցմէ փոքր տարիք տանեցողներն անգամ տանիք ելլելով կարգով կը նստին ցուիքներուն տակ կանակինն պատը տալով և կուրծքերնին ալ՝ տրեւիս տաքնուլու համար...

Հիւսիսային գիւղերուն տուները մեծ մասամբ երկայարկ են: Առաջին կամ գեանայարկը՝ իրարու կից կը դանուին, ներսի տունը իր յարակից մասերով, ինչպէս գրած եմ վերը, դորդանը ներսի տունը կը բանէ փողոցէն. իսկ դորդանէն քարաշէն, մերթ սրբատաշ քարերով, և երկու տասիճանները մէկ քարով շինուած տանդուս մը կը բարձրանայ տանիքը, որուն յարմարագոյն մէկ մասին վրայ կայ շարսախար սւր գիւղացիները կ'անցնեն գարնան եղանակին մէկ մասը, ամբողջ ամառը և աշնան առաջին ամիսը: Չորտախին երկու կողմերը կը կազմեն տան երկու պատերը, իսկ միւս երկու կողմերէն մէկը ալաւսով ծածկուած կ'ըլլայ, շորբորդ կողմը՝ բաց է: Չորտախը իր քով կ'ունենայ նաեւ մէկ կամ երկու սենեակներ ալ, ուր կ'ամփոփեն՝ ցերեկները, անկողինները, և կը դրուին սպրցուի կարասները և ամէ: ինչ որ ամենօրեայ գործածութեան համար անհրաժեշտ է: Այս տուներուն տանիքները տարին անգամ մը կը շաղախեն (եխեն), և ամբողջ վեց ամսուան ընթացքին հոգ կը տանին որ մաքուր մնան: Պատերը թէեւ կիսովին հում աղիւտով կը պատուին, սակայն նոյն այդ պատերը մէկ դարէ աւելի կը ստիան տեղատարաի անձրեւներու, կարկուտի և ձիւնի: Որովհետեւ աղիւտները քարքիճները, ինչպէս կ'անուանէ գիւղացին, մասնաւոր խնամքով մը կը պատրաստուին, և ընտիր հողով մը, որ սովորական հողէն աւելի կաշուենութիւն մը ունի:

1909 թուականին, սկսան իւզաներկ տախտակներով երկայարկ տուներ շինել Հալաւ գիւղի մէջ, իսկ Ձէթ գիւղի՝ եկեղեցիին առջեւ տարածուող ընդարձակ հրապարակին աջ ու ձախ քովերը իրենց միջեւ ունենալով՝ կամարակապ երկակ աղբիւրը՝ իր ընդարձակ աւազանով, կառուցուեցան երկու կուսակցական քլիւպներ, սրբատաշ քարերով, և եկեղեցիին, սւ աղբիւրին հետ միասին վայելուչ շրջանակ մը կազմեցին:

Ներսի տուները, ընտանիքի թիւին համեմատ կ'ըլլան աւելի կամ նուազ ընդարձակ, և կողմնական լուսամուտներու տեղ առատ-

աստղին վրայ միայն էրդիք անուշով քառակուսի անցք մը կ'ունե-

նունէ : Դորդանին մէկ անկիւնը կը գտնուէի թոյրեզերք (Թոնրեզր) գեանէն շուրջ մէկ մէթր բարձրութեամբ և 2-3 քառակուսի մէթր լայնութեամբ, ճաղերով դորդանէն դատուած դարեւանդ մը, ուր թաղուած կ'ըլլայ թոնիրը : Ասիկա քոնքսուն կամ թոյրեզերք կ'անուանէ գիւղացին : Տան ուրիշ բաժանումներ ալ կան, միշտ սաւաղին յարկին մաս կազմող, ինչպէս քոզ, ուր ուլերը, գառնուկները կը պատասպարուին. կշգրտուը, ուր կը դիզուին ձեփ, ասրայաս, կշգուր, քարկեզուր, արար, փայտ վերջապէս վառքի վերաբերեալ բոլոր նիւթերը, կպցանքէն սկսեալ մինչև կաղնիի խոշոր արմատները :

Գիւղացիին օճախին մէջ, ձմեռն իբրև, կրակը անչէջ կը մնայ, այնպէս որ ան լուցկի իսկ գործածելու պէտք չունենար. երեւակայել պէտք է թէ 5-6 ամսուան ընթացքին ինչ մեծ քանակութեամբ վառք կ'սպառի, և ասկէ կարելի կ'ըլլայ հեանւցնել նաեւ թէ երկրագործ գիւղացին, նոյնիսկ ճվարակին բնակութիւնը սրբան ընդարձակ ըլլայ նոյն համեմատութեամբ ալ վառելանիւթ կ'սպառի :



ԼԵ. ԳԼՈՒԽ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Անհրատեչտ էր մասնաւոր գլխաւ մը յատկացնել՝ բնական, գիտական և պետական բոլոր այն միջոցներուն, որոնք, գիւղացի ժողովուրդին համար, աւուղջ ու աւույգ երկարակեցութիւն մը ապահովելու բնայթը պիտի ունենային: Այս միջոցները բաղկացնող սարքերն են՝ օդ, ջուր, սնունդ, բնակութիւն, մաքրութիւն, բարեկեցութիւն, հաղորդակցութիւն, աշատութիւն, ապահովութիւն, և մասնաւոր պետական խնամքներ ապահովող լաւագոյն օրէնքներու խմատուն գործադրութիւններ:

Բալու քաղաքը «Բալուայ քաղաք» «Սուրբ Մասրուպայ» (Ս. Մեսրոպ) յաւանածեւ, բարձրաբերձ ու լայնամիտ լեռան հարաւային կողին վրայ փռուած, սնոր մէջքէն մինչեւ տաքերը կը տարածուի, և կը վերջանայ՝ Արածանիի ափը բարձրացող, «Սուրբ Մասրուպայ» համանաման յաւանածեւ, բայց փոքրածաւալ խարակի մը կրնակը: Կ'ըսուի թէ՛ ներքնուղիի մը միջոցաւ, այս խարակը Ս. Մեսրոպի բերդին իբր հաղորդակցութեան դուռ ծառայած է անցեալին մէջ, և իրօք ալ, գետին վրայ բացուող քարայր մը ունի, ուր կ'իջնեն եղեր գետէն ջուր աւնելու համար:

Քաղաքը, իր այս դիրքին մէջ, զուրկ մնալով արեւմտեան և հիւսիսային զովարար հովերէն, ամառնային եղանակին մէջ կ'ունենայ ճնշող մթնոլորտ մը, որ զայն անբնակելի կը դարձնէ Մայիսէն մինչեւ Հոկտեմբեր: Այս պատճառաւ է որ, քաղաքացին, հազիւ օրը երեկոյ կ'ընէ իր խանութին մէջ, և, դեռ արեւը մարը չմտած, այգեստանը կ'աւնէ իր շունչը՝ Վա՛յ անոնց, որոնք այգի շունին:

Քաղաք մըն է սն, ուր, մութը տարածուելուն պէս, երթեւեկ եռուղեւ, զուարճութիւն կը դադրին, մինչեւ աւաւօտ, գերեզմանային լուծիւն ու սոսկում կը ախրէ: Ծովեզրեայ կարգ մը զուարթ քաղաքներու բոլորովին հակապատկերը կը ներկայացնէ: Դիւրին է հետեւցնել թէ այգալիսի մեռելութեան մը մէջ ապրող ժողովուրդի մը հոգեբանական վիճակը ի՞նչ ախուր անդրադարձումներ կ'ունենայ՝ իր նկարագրին, և իր մտածելու եղանակին և աւուղջութեան վրայ:

Տուները երկայարկ են ընդհանրապէս և ունին յարմարագոյն բաժանումներ: Շատ մաքուր կը պահուին. քաղաքացի կիներ, այս տեսակէտով գովելի է, փողոցները նեղ են: Ասոնց մաքրութիւնը, բը-

նակչութեան մաքրասէր հաղածութիւններէն կախում ունի, և ոչ թէ թաղապետութեան մը առօրեայ աշխատութեան մաս կը կազմէ. ո՛չ, հոն թաղապետութիւնը սնուն մըն է միայն: Իր գործը քաղաքացի ժողովուրդին կ'իյնայ կտտարել, իր պաշտօնականերուն ալ՝ ամսական ապահովել կ'իյնայ: Եթէ իւրաքանչիւր ընտանիք, իր սան առջեւները ամէն առաւօս մաքրէ, արդէն փողոցները մաքրուած կ'ըլլան, և, շնորհիւ քաղաքին շեղ դիրքին, անձրեւներէ դոյացող ջուրի հասանքները մեծապէս կ'օժանդակեն ժողովուրդին ու թաղապետութեան . . . :

Հմայելի ջուրը, պէտք է ընդհանուր առմամբ ըսել՝ ջուրը ո՛չ թէ նուազ է քաղաքին մէջ, այլ կը պակասի նայնիակ հազիւ մէկ երկու ազբիւրներ կան, որոնք քիչ քանակութեամբ ջուր կը հասցնեն, և, ձմեռները, ասնք ալ երբ սառին, այն սառն ժողովուրդը կը հարկադրուի, մեծ դժուարութիւններով ու վճարումներով, Արածանիի ջուրը դործածել, մասնաւոր հայթայթիչներու միջոցաւ, որոնք աիկերով թաղէ թաղ ջուր կը կրեն պէտք ունեցողներուն: Ա՛ս է քաղաքին աւուղջապահական պայմաններուն մէկ մասը. մէ՛կ մասն է աս սակայն, յետոյ պիտի խօսիմ անդառութեան նկատմամբ:

Քիւղերը տարբեր են: Ասնք, աւհասարակ, հաստատուած են բնական յարմարագոյն վայրերու մէջ, ուր աւուղջապար օդը, բազմաթիւ կամարակապ ազբիւրներու առաօրէն հոսող՝ վճիտ, սրտ և մերթ նայնիակ բուժիչ յասկութիւններով օժտուած ջուրերը, — ինչպէս Սագրաթ գիւղի «Սեւ Ա.կ» ազբիւրին սառնաման ջուրը, — բարեխառնութեանց աստիճանաւոր փոփոխութիւնները, և շրջապատող զմայլելի ու պէսւլիտուն տեսարանները ոչ միայն գիւղացիին կեանքը կը կենսաւէտեն այլ խոչնակա կ'ազդէն անոր երեւակայութեան վրայ, որ զինքը աւելի միամտութեան կը մղէ քան քաղաքացին: Գուցէ ա՛ս ըլլայ պատճառներէն մին, որով գիւղացին իր յաճախակի պանդխտութիւններու ընթացքին, միշտ իր գիւղին կապուած մնայ՝ արհամարհելով Պոլսոյ կեանքն ու բնական գեղեցկութիւնները:

Ազբիւրներէն զոտ, բազմաթիւ առուակներ, ամէն ուղղութեամբ, կենսաստար երակներու նման կ'երկարին, անոնց շուրջը, և իրենց զաշտերուն ու պարտէզներուն կենդանութիւն կը բաշխեն: Քիւղերը այս առուակութիւններով օժտուած են: Սակայն, այդ ջրաւատ վայրերը, տեղ տեղ ճահիճներու վերածուած կ'ըլլան, ծածկուած ճոխ սիւղուտներով որոնք ախտավարակ մթղուկներու ազբիւրներ կը դառնան վտանգելով գիւղացիին բնական աւուղջութիւնը: Քիւղացիներու գիտակցութենէն այս իրողութիւնը միշտ խուսափած է և երբեք հաղածու դանուած չեն զանոնք ցամքեցնելու և մշակելի հողերու վերածելու: Թէեւ այս մօրուաները ընդարձակ տարածու-

Թիւններ չեն գրուեր, սակայն, աւելի մնաստակար են, անոր համար որ գիւղերու շատ մօտիկները կը գտնուին, իրենց պարտէզներու կողքին նայնիակ : Գաշտի գիւղերը ամէնն ալ այս անպատահուած թիւնը ունին : Լեռնայինները չունին գտնանք, կամ հազուադիւս են հոն մօրուաները :

Գիւղի տուները երկայտարի են : Գեանայտարիը՝ որ կը բաղկանայ ներսի տունէն, ուր ձմեռնային եղանակը կ'անցնեն, ախտներէն, մարահներէն, ֆոզէն, կեզրեսունէն, քոյրեզերէն (քոնրեզր), խզէնէն (մաւան), խելէն և դորդանէն : Երկրորդ յարկը կը բաղկանայ ընդհանրապէս շարձախէ մը, որ էական մասն է, և ամէն տուն պէտք է որ անհրաժեշտօրէն ունենայ, և սենեակէ մը կամ սենեակներէ, ուր կը դնեն սուօրեայ գործածութեան յատկացուած կարասիներ, ապրցուներ, և անկողիններ : Չարատիւը, ընտանիքին ամարանայն է, հոն կ'անցնէ ան Մայիս ամիսէն մինչև Սեպտեմբերի վերջը, նայնիակ Հոկտեմբերի կէսն ալ : Չարատիսին երկու կողմերը պատեր են, մէկ կողմը՝ բոլորովին բաց է, իսկ միւս կողմը, կիսով չափ, ազատով մը կը փակուի : Ազատը՝ վարագոյրի դեր կը կատարէ : Օդը և արևը, ուրեմն, անարգել կը թափանցեն հոն, և կը նպաստեն գիւղացիին առողջութեան : Չարատիսին առջեւը կը տարածուի ընդարձակ եռաջր, որ ներսի տան ամիսքն է : Գիշերը անկողինները շարձախին մէջ, կամ եռաջր կը յարգարեն, համեմատ օդին բարեխառնութեան, և հոն կը գիշերեն, բացօդեայ : Այս բացօդեայ գիշերելը թէև հաւառողջապահական չէ, նկատելով որ մթնոլորտական բարեխառնութիւնը գիշերն իբրև անփափօխ կը մնայ գրեթէ, և խոնավութեան աստիճանը ամառը շատ վար է, բայց նկատի առնուելիք լուրջ անպատահուած թիւն մը կայ, որով գիւղացիները չեն մտահոգուիր : Տուները պարտէզներու կից ըլլալով, ամիսքները մժղուկներու յաճախովայր կը դառնան գիշերները, և, որպէսզի ամիսք գիշերօղները այդ պատահաններու պատճառով նեղութիւններէն դերձ մնան, կը հարկադրուին յաճախ կեզուր վառելու : Կեզուրին արձակած ծուխէն, մեղուկները կը հեռանան ամիսքներէն, կամ կը ստակին : Անշուշտ, ամէն ամիսք այդպէս ենթակայ չէ այդ վտանգաւոր կենդանիներուն յաճախումին :

Ամառնային այս կեանքը աւելի տանելի է քան ձմեռնայինը :

Ներսի տունը ըստածը, գեանի վրայ, աւելի կամ նուազ ընդարձակ սրահ մըն է, որ պատահան չունի, բայց առատաղին կեդրանը երդիւք ըստած, 50 քառակուսի ամիսքիմէթր լուսամուտ մը ունի, ուրկէ միայն կը լուսաւորուի այդ սրահը : Ջեռուցման և կերակուրներու պատրաստութեան յատուկ օճաղ մը ունի, որուն վրայ կը քարձրանայ բխերիկը (ծխնելոյղ) հետզհետէ նեղնալով : օճաղը, ձրմ-

րան եղանակին, մանաւանդ ցուրտ օրեր, անշէջ կը մնայ, և միշտ օդը մաքրելու միջոց մը կը դառնայ միանգամայն: Սասակաշունչ ցուրտերու ատեն, էրզիքը կը ծածկեն բաւական թանձր, շուրջ 10 սանդխմէթր, հաստ սաւով մը, որպէսզի ցուրտը ներս չխուժէ. այս սառը կրնայ մինչեւ երկու օր մնալ, երբ հալի, կը փոխեն զայն: Էրզիքին շեշտակի տակը, գետինը կայ պրուներ, փոս մը, ուր լուսամուտէն կաթիլ կաթիլ իջնող սառին կամ անձրեւին ջուրերը կը հաւաքուին: Ներսի տուն կայ որ, դորդանէն դուռով մը միայն անջատուած կ'ըլլայ. կայ ալ որ, ներսի տունը դորդանին միայն նրբանցքով մը կը միանայ, այս նրբանցքը խել կ'անուանեն: Խելին վրայ կը բացուին նաեւ ախոռները, եւն: Ահա այս ներսի տունը գիւղացի ընտանիքներու ձմեռնային բնակավայրն է, և ինչպէս կարելի է հետեւցնել, չի գոհացներ աւուղջապահական բոլոր պայմանները: Հոն կը սրահին, հոն է սեղաց սեղը ուր անկողինները ցորեկները դիզուած կը մնան, հոն է սալքը, ուր կը դրուին ջուրի սափորները, հոն կը ճաշեն, և հոն է ուր տանտիկինը ջայր կը մանէ, հոն գործողը կտու կը հիւսէ. ամէն աշխատութիւն հոն տեղի կ'ունենայ: Ասոր կից մէկ երկու սենեակներ ալ կը գտնուին, ուր նոր ամուսնացողները կը գիշերեն:

Գիւղացիներու մաքրասիրութիւնը, ընդհանուր առմամբ, քաղաքացի կիներու մաքրասիրութեան հետ կը մրցի հոյնիակ: Տանիքները և ներսի տունը և յարակից սենեակները տարին անգամ մը անհրաժեշտ է որ ընտիր կաւով ծեփուին: Իսկ շարսախար և իր յարակից սենեակները, գարնան վերջերը շաղախելէ յետոյ, շաբաթը կամ տասնեւհինգ օրը հեղ մը, կաղճիի լուծույթով մը կը շփեն: Այս կերպով, յատակը, պատերը պատինոնները և պատուհանները կը մաքրուին, կը կոկուին և կը ճերմկցուին: Մաքուր կաւի անուշահոտութեամբ մը կը բուրումնաւէտի բնակարանը:

Գիւղացիներու անկողինները, վերմակները և բարձերը, ընտիր բուրդով կամ բամպակով լեցուած, կ'ամփոփուին տեղական շատ սուկուն կտաւէ շինուած տատառներու մէջ, որոնց վրայ, մէկ կողմը կը ծածկէ եւրոպական սպիտակ կտաւէ մաքուր երես մը, իսկ միւս կողմը՝ դարձեալ եւրոպական տպածոյէ շինուած արտաքին երես մը, զոր պոս կ'անուանեն: Տապասաները, փալսաները նմանապէս մաքրութեան տեսակէտով մեծ խնամքի աւարկայ են: Ամառնային եղանակին՝ շաբաթը մէկ անգամ, իսկ ձմեռնային եղանակին ալ՝ տասնեւհինգ օրը կամ ամիսը հեղ մը լուացք կ'ընեն: Լուացքի համար կը գործածեն՝ օճառ և կաղնիի մոխրաջուր ինչպէս նաեւ քակ, քակելու համար թրջուած զգեստեղէնները կամ կտաւեղէնները, որպէսզի գիւրին մաքրուին:

Մեծերը առաւօտուն տրչարոյսին տղբիւրը կ'երթան և հայր մեր մը ըսելով կը լուացուին, երեկոյին դաշտի աշխատութիւններէն յետոյ իրենց սաքերը ձեռքերը և երեսները լուալէ յետոյ տուն կը մանեն: Կերակուրի նատելէ, եկեղեցի մանելէ առաջ պէտք է որ լուացուին. «Անլուայ եկեղեցի մանել, անլուայ ձեռքերով հաց ուտելը մեղք ք» կ'ըսեն, ու կը հարկադրեն որ պզտիկներն ալ այդ սովորութեան դէմ զանցսուութիւն չընեն: Երբ տղայ մը լուացուած չըլլայ, քիթը, բերանը աղտոտ ըլլան, «ծօ՛, կ'ըսեն, Սրբայ ճրագ էս լիղեր» տղայ, սրբավայրի ճրագ լիղեր ետ: Երբեմն, փոքրիկներուն բաճկոնին մէկ կոճակին վրայ, օղակաւոր թաշկինակ մը կ'անցնեն, որպէսզի անով իր քիթն ու բերանը սրբէ:

Գիւղացիներու սնունդը շատ կը տարբերի քաղաքացիներու սնունդէն: Քաղաքացիները տարամերժօրէն մսակեր են, անոնք ո՛չ միայն ձմեռնային եղանակին բաւելէ տւելի քանակութեամբ խորհուած կամ տապկուած միս (խավուրմայ) կ'ուեննան, այլ, ամէն օր թարմ միսը անպակաս կ'ընեն իրենց սեղանէն, կերակուրները ճոխ են տեսակով ու գերանուցումի տեսակէտով. բանջարեղէնը երկրորդական տեղ մը կը գրաւէ իրենց կերակուրներուն շարքին մէջ. ձուկ, հաւ, թէեւ չեն պակսիր, բայց նախապատուութիւն կ'ուտան անոնք ոչխորի կամ այծի միսերուն, կաթնեղէնն ալ երկրորդական գիծի վրայ կը մնայ անոնց համար. մեղրը, հաւկիթը նշանակութենէ զուրկ ուտելիքներ են: Օրուան մէջ, երեք անգամ կը ճաշեն, առաւօտուն կամ սրահեղին, կէսօրին, ճաշ, և երեկոյին, այսինքն պառկեծամեկն առաջ: Տօնախմբութիւններու սեղանները կերակուրներու տեսակներով ու որակով շատ ճոխ կ'ըլլան: Երեկոյին նախ քան ընթրելը, անհրաժեշտ է սգելից ըմպելի խմելը: Ձմեռնային եղանակին երբ իւրաքանչիւր ընտանիք, ինքիրեն է, այսինքն հիւր չունի, գինի կը խմէ, իսկ տօնախմբութեանց, հարսանիքներու, նըշանատուքներու և ո՛րեւէ առիթով տեղի ունեցող տասնջականութեանց միջոցին նախ օղի կը խմեն և կը հրամցնեն, կը խմեն մինչեւ որ ալքովի ազդեցութեան տակ իրենց զուարթութիւնը այլեւս իր բարձրագոյն սասիճանը գանէ. անկէ յետոյ ընթրիքը կ'սկսի, և, ընթրիքի միջոցին ալ գինիին փարչը և սկահակը սեղանի վրայ կուգան. հարկ է խմել, ո՛չ ոք կրնայ մերժել, մերժելը տասնջականութեան սգին նախատել է: Երբ կերակուրը վերջ գանէ, շատեր հազիւ կըրնան իրենց տուները դառնալ, ճամբան իյնալով, ելնելով և մերթ փոխելով: Հարկ է նաեւ աւելցնել թէ, այս շախտանցութիւնը տեղի կ'ուեննայ միայն կոչունքի օրերը. սովորական օրերուն մէջ գինովութիւնը հազուադէպ է, թէեւ, կերակուրներէ առաջ մէկ քանի գաւաթ օղի, կամ երկու երեք գաւաթ գինի միշտ կը խմեն: Այս

պայմաններուն մէջ քաղաքացին չի կրնար երկարակեաց ըլլալ, և արդարեւ ալ երկարակեաց չէ. հազուադէպ է ծերունիներու հանդիպիլ քաղաքի մասնաւորապէս հայ բնակչութեան մէջ: Աւողջապահական կենցաղի անդիտացումը, զանցաւումը քաղաքի կամ գիւղի բնակչութեան գլխաւոր թերութիւններէն մէկն է: Թուրք բնակչութիւնն ալ չի տարբերիր հայ բնակչութենէն անհագութեան, ագիտութեան և զանցաւումեան տեսակէտով: Աւաղին հանդիպումով զանոնք պիտի գտնէք վախ, գունատ, փոքրակազմ և սակայն նշրքամիտ. նրբամտութիւն մը որ յատուկ է քաղաքացիներու՝ ճնշումի, սպաւնալիքներու և ստեղծմի ներքեւ ապրող: Իր ապրուողը երկւոյթը որքան օղին ու ջուրին, այնքան ալ գերանուցումի, ոգելիցի չափազանց գործածութեան և Ֆիզիքական աշխատութեան, մարդանքի պակասին վերագրելի է:

Գիւղացին, ընդհակառակն, սրոշապէս ընդակեր ու բանջարակեր է: Ամբողջ տարւոյն ընթացքին ան ուսելու բանջարեղէններ կը գտնէ՝ թարմ կամ չոր, զորոնք իր ապրցուններուն հետ խառնելով կամ աւանձին արդար եղով տապկելով իբրեւ աննգատու կերակուր կ'օգտագործէ: Բանջարեղէններու գլխուն մէջ արդէն կարելի է ըմբանել թէ որքան տարբեր, և ինչ քանակութեամբ մշակելի կամ ինքնարոյս բանջարեղէններու պաշար մը կ'ապահովեն իրեն հողը, մշակութիւնն ու բնութիւնը: Ասոր վրայ աւելնողով նսեւ կաթնեղէններու սուստութիւն մը, ընդեղէններու տեսակներ, լիուլի բուսարութիւն կ'ուստան անունդի պէտքերուն: Հաւը, զոր ամէն տուն կը բուծանէ, յիտուն, հարիւր ու աւելի թիւով, իբրեւ մասցու չի պահեր, այլ ան կը բուսականանայ անոնցմէ քանի մը բաքդ հաւկիթը միայն տանելով: Քիչ անգամ հաւ կը մտրթեն անոնք, «մեղքը» կ'ըսեն. միայն աքաղաղները, երբեմն, ուխտագնացութիւններու պահուն իբրեւ մատաղցու կը ստանին: Աս չի նշանակեր թէ՛ գիւղացին, գանուելով քաղաքի միջավայրին մէջ, նուազ մասկեր պիտի ըլլար: Սակայն, քաղաքի կամ շուկայի հեռաւորութիւնը գիւղացիին՝ կրտսող աշխատութիւնները, յաճախ գրամի չգոյութիւնը կը հարկադրեն զինքը գոհանալ անոնցմով միայն, զոր ինք պատրաստ ունի իր սունէն ներս: Ռուպը, մեղրը, հաւկիթը, սերը, մածունը, կարագը, արդար իւրը միշտ պատրաստ ունի: Երբ նեղը միտն հաւկիթ կ'ուսան, և հաւկիթը ամէնէն ուսելի գիւրապատրաստ կերակուր մը կը համարեն անոնք. «Կովը մինչեւ օր (որ) դաշտէն առն դառնայ, հաւը մուսաֆիրը ճամբու կը դնը...» կ'ըսեն, հասկցնել ուզելով թէ եթէ կաթնեղէն չգանուի առնը հաւկիթն ալ անոր համարժէք անունդ մըն է, կամ թէ, գիւղացիին համար, կովը որքան կարեւոր է, հաւն ալ նոյնքան անհրաժեշտ է...:

Թէեւ, շաբաթը քանի մը անգամ, խորհուած միտով ձաւարով
կամ ծեծածով եղինձ կ'ուտեն, բայց քիչ քանակութեամբ, այնպէս որ
կարելի չէ տալ մասկեր անուանել զանոնք:

Մարտ ամիսէն սկսելով մինչև Յունիս, անոնք բնաւ թարմ միս
չեն ուտեր. Յունիս ամսուն, երբ զանազան պտուղներ կը հասուն-
նան, այն տանն միայն կ'սկսին երբեմն թարմ միս ուտելու: Այդ
ամիսէն սկսելով, քուրդ վաճառորդներ չորս հինգ ամսուան մատաղ
ուլեր կը բերեն հոյ գիւղերը, և չնչին գիներով կը ծախեն գիւղա-
ցիներու: Գիւղացիները կը գնեն և թանիրներու մէջ խորովելով
կ'ուտեն: Այսպէս մինչև Սեպտեմբեր ամիսը, շաբաթը անգամ մը
թարմ միս կ'ուտեն: Իսկ Սեպտեմբերէն մինչև Փետրուար, կամ
Բուն Բարեկենդանի վերջին կիրակին, գիւղերու մէջ կը զենուին
շաբաթը կամ երկու շաբաթը անգամ մը՝ եղ, կով ու գամէշ, և տ-
ալ գիւղացիները թարմ միս կ'ուտեն: Միսէն կը պատրաստեն
ամբողջ գաւառին սիրած կերակուրը՝ Բուճրան, կամ խորովելով
կ'ուտեն: Մտացու կենդանիներուն սաքերը, գլուխը, քաղիթը մաք-
րելով խաւ կը ձգեն թանիրներու մէջ. իսկ նրբաղիքները մաքրելով,
ձաւարով լիցք կը շինեն:

Քաղաք և գիւղ ամէնէն յարգի կերակուրը կը համարեն Բուճ-
րան. տախտ ծեծուած միտով ու ձաւարով կը պատրաստեն, հուս մի-
տը և ձաւարը կը շողեն այնքան որ ձաւարը կակուղնայ և կպչուն
վիճակ մը ունենայ. տախտ հուս Բուճրան է որուն վրայ սզատքեղ,
տխա և կանանչ պած մանրելով կ'ուտեն. տակէ մաս մըն ալ գնդիկ-
ներու վերածելով կ'եփեն: Մերթ միջիկով (միջուկ) մերթ առանց
միջիկի: Հումը սակայն շատ ախորժածամ է: Այս կերակուրին ո՛ր
տատիճան յարգի համարուելուն մասին գաղտնիք մը կազմելու հա-
մար, փոքր շեղումով մէջ պիտի բերեմ պատմութիւն մը զոր ինծի
աւանդած է ինծի ծանօթ մտաւորական քարոզիչ մը:

Այս քարոզիչը ստամոքսի հիւանդութեամբ մը չորս տարի կը
տաւաղի, հակառակ շարունակական դարմանումներու անբուժելի կը
մնայ: Ախորժակը կը պակսի, մարսողութիւնը կը տկարանայ, կը
նիհարնայ օրըսօրէ և կմախք մը կը դառնայ: Տօքթ. Քրիստիէն,
գերման բժիշկ մը, շարունակ անօգուտ դարմանումներ կը փորձէ.
Վերջին անգամ կը յայտարարէ. «Ահա, տախտ իմ ամենալու գեղա-
գիրս է զոր քեզի պիտի տամ, կը յուսամ թէ այլեւս պիտի լուա-
նայ վիճակդ, հակառակ պարագային ուրիշ ընելիք չունիմ, և կը
յոյտարարեմ թէ տա իմ գիտական պաշարիս վերջին մտտը պիտի
ըլլայ»: Դեղագիրը կ'ուտէ ջրայնոտ, սրանեղ վիճակով, յուսահատ
տուն կը գառնայ: Չորս տարի շարունակ կաթով ու մածուկով մի-
այն սպրած է հետեւելով բժիշկներու խիստ յանձնարարութիւննե-

բուն, և ահա բժշկութեան վերջին խօսքէն յուսահատ, դեղագիրը մէկդի կը դնէ. պէտք է այլևս մեռնի, բայց դո՛ւնէ հում բուժքային կարօտովը չմեռնի...: «Կնի՛կ, վճռապէս կ'ըսեմ, ինձի քուՖթայ չաղէ, հում քուՖթայ կ'ուզեմ, ալ հերիք է այսքանը, պէտք չէ որ աւանց զայն ուտելու մեռնիմ...»: Կինը կը դողայ, քարոզիչը կը հրամայէ, վերջապէս կինը տեղի կուտայ, և շուտով պատրաստութեան կ'սկսի: ՔուՖթան պատրաստ է. հիւանդը ուզածին չափ կ'ուտէ. և, քիչ յետոյ թմրութիւն մը կուզայ վրան, կը պառկի. կինը կը տազնապի, ալ պիտի մեռնի կը մտածէ ինքիւրեն. կը մօտենայ անոր բաղկերակը կը բռնէ, ի՞նչ տեսնէ,— պարզապէս կը քնանայ, կը ծածկէ վերմակով մը: Քունը քանի մը ժամ կը տեւէ, հուսկ ուրեմն կ'արթննայ, բայց անօթութիւն կ'զգայ, ախորժակը սգեւորուած է. նոր մարդ մը եղած է կարծես, «Կնիկ ինձի հում քուՖթայ...»: Շաբաթ մը աւելի կ'անցնի, հիւանդութիւնը կ'անհետանայ, տեղուցութիւնը իր բնական գոյնին կը փոխուի, սյժերը կը վերստանայ բոլորովին, և, իր բժիշկին այցելութեան կ'երթայ...:

Բժիշկը զարմանքով կը տեսնէ որ հիւանդը կարճ ժամանակի մէջ իր սուղջութիւնը գաած է, և կը բացագանչէ. «Օ՛հ, տես՞ք, ի՛նչպէս հրաշք գործեց իմ վերջին դեղագիրս...»:

Գարմանեալը աւանց պատասխանելու դեղագիրը իր բժիշկին կ'երկնցնէ, որ կ'առնէ, և կը տեսնէ որ ո՛չ մէկ դեղորանի կնիք կայ վրան:

— Ուրեմն դուք իմ առած դեղագրիս համաձայն դեղեր գործածած չէք, այնպէս չէ՞, կ'ըսէ սրտաբեկութեամբ մը:

— Այո՛, բարեկամս, գործածած չեմ, և ո՛չ մէկ դեղ, կը պատասխանէ ապաքինեալը:

— Ի՛նչպէս ուրեմն ապաքինեցաք, ո՛վ բժշկեց ձեզ, կը հարցնէ ան:

— Ձիս՝ հում քուՖթան բժշկեց... , հաւատացէք ըսած իս, կը պատասխանէ:

Այս պատմութիւնը ցոյց կուտայ թէ բալուցիին ստամոքսին որքա՛ն յարմարած է այդ կերակուրը...:

ՔուՖթայէն յետոյ կուգան միւս կերակուրները, որոնք հետեւեալ անուաններով ծանօթ են ամբողջ գաւառին:

Եզինձ՝ ձաւարով կամ կորկոսով և խարկուած միտով եփուած, սրմբսիկ ապուր, բաննաբ ապուր, փերփեր ապուր, քանապուր, չորքանապուր, փոխիկ, քանխաւ, հրպրֆ, քարխանայ ապուր, խաւ, ռոնիկ, նիմիլայ, սրոսն, ֆալանօս, ֆոսիկ, սապակ հաւկիթ, խորխ՝ խորոված, ասպնջուր, ոսպով ապուր, ֆեաւֆեակ կամ հարխայ: Ասոնցմէ զոտ կան նաեւ բանջարեղէններու կերակուրները, որոնք

միասնաբար քաղցած ևն արդէն բանջարեղէններու գլխուն մէջ:

Պղլուրով եղինծը կ'եփեն խարկուած միսով, պղլուրով, որոնց հետ կը խառնեն քիչ քանակութեամբ աղացուած սխտա ալ: Սխտա խառնելու սովորութիւնը հարուստիներու յատուկ է, մինչ աջափընեաները, կամ հիւսիսային գիւղերը, փոխանակ սխտաի բանջարեղէններ կը խառնեն յաճախ. ինչպէս՝ լոպիկ, քչմաթ ևն: Շաբաթը քանի մը անգամ կ'եփեն:

Կորկոտով կամ ծեծածով եղինծը՝ պարզ ծեծած է և խարկուած միսէ կը բաղկանայ: Ասիկա քիչ անգամ կ'եփեն:

Սրմբսիկ ապուրը մանր պղլուրով միսով կամ իւղով կ'եփեն, սսիկա եղինծէն քիչ մը աւելի լոյծ է, ընդհանրապէս հունձքի կամ դաշտի աշխատութիւններուն եղանակին, հնձողներու համար կ'եփուի, որովհետեւ շատ ուշ կը պաղի, այնպէս որ գիւղէն մինչեւ դաշտ հասնիլը շուրջ կէս ժամ կը տեւէ, և այսքան ժամանակի մէջ ուրիշ սեւէ կեղտակուր պիտի պաղէր:

Թանապուրը՝ մածնաթանով և ծեծածով կամ կորկոտով կ'եփեն, հետը խառնելով քիչ մը կամ բաւ մը դաղձ: Ասիկա պաղ վիճակի մէջ կ'ուտեն, դիւրամարս կերակուր մը կը համարուի, իր մէջ ո՛չ իւղ կը պարուակէ և ո՛չ ալ ճարպ: Տարւոյն ամէն եղանակներուն մէջ ալ գիւղացին կրնայ ունենալ: Ասոր եփելը բաւական ժամանակ և ուշադրութիւն կը պահանջէ: Տանախիկներ պաղ թանին հետ մաքրուած ծեծած, շուրջ 1/8 համեմատութեամբ, խառնելէ յետոյ կրակին վրայ կը դնէ, և կ'սկսի քրփռերով անընդհատ խառնել, չմոռնամ ըսելու թէ տաքցնելէ աւել հաւկիթի մը ճերմկուցն ալ կը խառնէ հետը: Մինչեւ որ եփ ելնէ, կամ եռալու սկսի, պէտք է որ անընդհատ խառնուի, սպա թէ ո՛չ՝ թանը կը կտրի և երբ եռալու սկսի, այն ատեն տանախիկներ կը դաղրի խառնելէ, և կը թողու որ մեղմ կրակով ժամու մը չտի եփի, մինչեւ որ ծեծածը կամ կորկոտը պէտք եղածին չտի կակուղնայ: Յարութեան ճրագայլոյցին երեկոյին, պէտք է որ ամէն տուն, աւանց քացառութեան, թանապուր ունենայ սեղանին վրայ, այդ ընթրիքը տունց մսեղէնի պէտք է որ ըլլայ:

Թարխանան երկու տեսակ կ'ըլլայ. մէկը՝ թանով ու ծեծածով, իսկ միւսը՝ պարզ ջուրով ու ծեծածով:

Առաջին տեսակը հետեւեալ կերպով կը պատրաստուի: Մածնաթանը և ծեծածը՝ մեծիակ կաթսայի մը մէջ իրարու հետ կը խառնեն, ու կ'եփեն: Եռալու միջոցին տանախիկներ շերտիով անընդհատ կը խառնէ որպէսզի ծեծածը թանին հետ լաւ մը միաւորի, յետոյ կրակէն կը հեռացնէ որպէսզի պաղի: Պաղած այս խիւսը գնդակ-

ներու վերածելով, արեւին տակ կը պահեն մշնչեւ որ լու մը չոր-
նայ :

Ջուրով քարխանան տարբեր կերպով կը պատրաստուի : Նախ,
ջուրով կորկտար կ'եփեն, յետոյ շուրջ ութը օր այդ վիճակին մէջ
կը թողուն սրպէսզի խմորուի, չմտնամ ըսելու թէ՛ եփուած միջո-
ցին, ամոր հետ կը խառնեն անանուխ, աղասքեղ և կանոնչ պոճ
կամ պղպեղ : Ասկէ վերջը խմորուած այս խիւսը գնդակներու վե-
րածելով կը չորցնեն :

Թարխանայով տեսակ մը ապուր կը պատրաստեն, որ քիչ մը
թթուահամ կ'ըլլայ, և կ'ուտեն զայն աշնան ու ձմրան եղանակնե-
րուն ընթացքին :

Հրայրէր հիւսիսային գիւղերուն անծանօթ կերակուր մըն է. խկ
ծանօթ է ան միայն հարուստային գիւղերու և լեռնաբնակներուն : Ա-
սիկա կը բաղկանայ պարզ ցորենէ և լոպիկէ, զորոնք իրարու խառ-
նելէ յետոյ կ'եփեն :

Փոխիլիսը, խաւիժ ալ կ'ըսուի : Տարեւը աղնծելէ յետոյ կ'աղան .
այս ալիւրը ջուրով կը խառնեն, կ'եփեն, հետը կը խառնեն նաեւ
արդար իւղ ու ուռալ :

Խորիսը ձուկով և ձուարով եփուած եղինձ է : Պուտուկին յա-
տակը կը շարեն բարակ փայտեր, տանց վրայ եւս մաքրուած ձուկ,
յետոյ վրան ձուար լեցնելէ յետոյ պուտուկին բերանը կը ծեփեն, և
կը թողուն որ մաղմաղ կրակի վրայ կամ թոնիբի մէջ եփի :

Այս կերակուրին ուրիշ մէկ տեսակն ալ կայ, որ միայն ձուկով
կը պատրաստեն : Նախորդին պէս շորք մը բարակ փայտեր, ու աս
փայտերուն վրայ շորք մը ձուկ կը շարեն : Պուտուկին բերանը ծե-
փելով կը դնեն մաղմաղ կրակի վրայ : Չուկը ասք շոգիի միջոցու
կ'եփի, և կ'ըլլայ համեղ խորոված մը : Չուկը կը խորովեն զայն
փակցնելով թոնիբին կողերը կամ պարզապէս կրակին վրայ ձգելով :
Կը տապկեն նաեւ զայն արդար իւղով և հաւկիթով մամուռորապէս
այն ձուկերը, որոնք շատ փշուտ չեն, ինչպէս թասթասը կամ ընձու-
կը, ըստ հիւսիսայիններու :

Քոռսիկը՝ պահոց օրերու յատուկ պարզ կերակուր մը կամ ա-
ւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել թէ քացան մըն է : Ընկոյզի միջուկը և
սխտորը չափաւոր քանակութեամբ աղով միտսին կը ծեծեն սանդի
մէջ, և լու մը արորելէ յետոյ, ջուրով կը խառնեն, և մէջը հաց
բրդելով կ'ուտեն :

Չորքան ապուրը, թանտպուրին տեղը կը գրուէ ձմեռնային ե-
ղանակին մէջ, երբ մածնաթան չեն կրնար ունենալ : Չորցուած մա-
ծնաթանը կը լուծեն ջուրի մէջ՝ հարելով, յետոյ ծեծածով ապուր
կ'եփեն անով : Ա՛ս է չորթան ապուրը : Ա՛ս ալ գիւրամարս է :

Բաննաւ ապուրը հեռեւեալ կերպով կը պատրաստուի: Նսիս ծեծածը քիչ մը ժամանակ կ'եփեն յետոյ սապը կը լեցնեն, և կը թողուն որ միասին լաւ մը եփին: Տակաւին չեփած, երբ եւացման մէջ է դեռ, բնաւ դգալ չին միւտը մէջը, դգալ դպելուն պէս, ամանին կամ պուտուկին յատակը կը փակին սապը և ծեծածը, կերակուրը ուր կ'առնէ կ'ըսեն գիւղացիները. և կը խանձրով կ'այրի, կ'ածխանայ: Բաւական մը եփելէ յետոյ սակի բազուկ մանրելով հեար կը խառնեն և կը շարունակեն եփել մինչեւ որ այս վերջինն ալ եփի: Ուտիք օրերը արդար իւզով խճիկ կ'անցնեն վրան, իսկ պահոյ օրերը անժուր կամ շիրիկով կ'ուտեն:

Փերփեր ապուրը բանձար սպուրէն սա տարբերութիւնը միայն ունի որ, սառ հետ սակի բազուկին տեղ չորցուած փերփեր կը խառնեն: Աս ալ արդար իւզով կ'ուտեն. կամ շիրիկով պահոյ օրերուն մէջ: Այս կերակուրներէն դաս դեռ կը մնան ուրիշներ՝ ալ, որոնց մասին զանազան գլուխներու կամ բաւարանին մէջ աւելի կամ նուազ ծանօթութիւններ տրուած են: Այսքանը բաւական է որոշ գաղափար մը ստլու համար գիւղացի ժողովուրդին սննդաւթիւնը, որովով ս'ըքան կը յարմարի առողջապահական պահանջներուն: Կարեւոր է հոս արձանագրել սա պարագան թէ՛ գիւղացին՝ ալ մէն կերակուր մէկ ժուր միայն կ'ուտէ, կարելի չէ կէսօրուան կերակուրէն իրկուան համար աւելցնել: Կէս օրին և երեկոյին միշտ սանը կամ պուտուկը կ'եռայ: Երեկոյնը դեռ բոլորովին մութը չթանձրացած իրենց ընթրիքը կ'ընեն, սե մէկ երկու ժամ յետոյ կը պուտուկին: Կէսօրները ընդհանրապէս ժամացոյցի վրայ չեն ճշդեր: Արեւի շրջանէն, մերձաւոր հաշուով կէսօրը կը գնահատեն, ամառնային եղանակին մէջ, իսկ ձմեռները, երբ արեւը օրերով ամպերու ետին սքողուած կը մնայ, ախտներու կենդանիները շատ անգամ, կը բաւաչեն, իրենց ծարաւած կամ անօթեցած ըլլալը այս կերպով իմացնելով: Իսկոյն զանանք կ'արձակեն, կը տանին տղբիւրը ջրելու համար (Չուր խմցնել), դարձեալ ախտ կը տանին իւրաքանչիւրը իր մտերին սաջեւ կը կապեն, անոնց կերը կուտան և յետոյ իրենք կը ճաշեն: Գիւղացիներէն ոմանք ժամացոյց կ'ուենեան թէեւ, բայց անոնց ճշգրտմը անկարելի է գիւղին մէջ, ուստի այնքան օգնակար չեն ըլլար:

Ամառնային եղանակին մէջ, ծառերու, լեռներու, սան բխերիկի ստուերներուն երկարութիւնը, հոլովական գիւրքը իբր նշան կ'առնեն արեգակնային բարձրութիւններուն և հակուսներուն. և այս կերպով կ'որոշեն՝ սրագեղը, հաւքը և եսինքը, իբրեւ օրուան գլխաւոր հանգրուանները, որոնց համաձայն կը կարգադրեն իրենց աշխատութիւններուն բաշխումը: Բայց գիւղացին, սննդաւթեան տեսակէ-

տով խօսելով, իր ստամոքսը չէ որ ժամանակին հանդրուաններուն
կը յարմարցնէ, այլ, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել թէ՛ ան՝ ժամա-
հասկներու բաժանումն է զոր իր ստամոքսին կը յարմարցնէ: Այս
սովորութիւնը, գուցէ, աւելի առողջապահական օրէնքներու համա-
ձայն ըլլայ:

Այս կարեւոր գլխուն առաջին հատուածին մէջ, ես, հաղորդակ-
ցութիւնն ալ առողջապահական պայմաններու տեսակէտով անհրա-
ժեշտ ազգակ մը նկատեցի, և արդարեւ, եթէ ան, առեւտուրի, ի-
մացական զարգացման վրայ ազդող անհրաժեշտութիւն մըն է, ան-
հրաժեշտութիւն է նաեւ՝ ան, մարդկային առողջութեան նկատմամբ
ալ իր դրական և ժխտական երեւոյթներուն տակ: Հարկ չկայ
կարծելու թէ՛ այս մտածումը՝ բռնազբօս, կամ նախապաշարեալ դա-
տուութեան մը գնահատութիւնն է, որ իբրեւ վարկած կ'աւանդի
մտանաւոր գիտեմտով մը. ո՛չ, եթէ՛ դաւառացի ժողովուրդին հաղոր-
դակցութեանց միջոցները՝ իրենց ամէնէն վաղնջական ձեւին տակ
մնալ կը շարունակեն, գիւրին կ'ըլլայ հետեւցնել թէ՛ ասանք, երբ
կոչուած են անտեսական կեանքին մէջ արդիւնքի տեսակէտով ան-
խառնախելի գեր մը կատարելու, չեն կրնար Ֆիզիքական ոյժերու
սպառման նաւազագոյն խնայումներովն արդիւնաւորուիլ: Գիւղացին
տարւոյն բոլոր եղանակներուն մէջ, աւելի կամ նուազ ստիպուած
է՛ հաղորդակցութեան մէջ մնալ՝ իր դաշտերուն, դրացի գիւղերու,
իր՝ և հեռաւոր քաղաքներուն հետ, երբ ան մեծ և ըստ ամենայնի
ինքնաբաւ միջավայրի մը մէջ չէ որ կ'ապրի, ուր գամէ շուտով՝ գե-
ղը, գեղապորժը, բժիշկը, աստիճանաբոյժը և այդ նպատակին սպառե-
լու սահմանուած բոլոր հում կամ պատրաստ նիւթերը: Իր սայլե-
րը ամէն ուղղութեան վրայ, ճամբաներ շունին ըստ հարկին փոխադ-
րելու ղինքը ուղած տեղը, նայնպէս իր դրասանները չեն կրնար գիւ-
ղէն քաղաք հիւանդ փոխադրել, ճամբաները յաճախ կամաններու կը
վերածուին իրենց երկայնքին՝ զանազան մասերուն վրայ, կամ խո-
ւոչներով գժուարանցանելի կ'ըլլան: Ուստի ան, հիւանդ կամ ա-
ռողջ, հարկադրուած կ'ըլլայ յաճախ հետիտան կարելու ժամեր տե-
ւող ճամբաներու երկայնութիւնները, գիւղէ գիւղ, լեռներէ, ցորերէ
անցնելով՝ փայտ, արմա՛ք, ընդեղէն, շինութեանց գերաններ, կամ
քարեր շարակով կամ լւսի վրայ դրած փոխադրելու: Այս ամէնը
ընելու համար ծանր աշխատութիւններու հարկ է դիմագրուել: Տա-
րակոյս չկայ թէ, սկզբունքով, աշխատութիւնը առողջութեան պայ-
մաններէն մէկն է, ո՛չ ոք կրնայ ժխտել այս ինքնայայտ ճշմարտու-
թիւնը, բայց ան, իբրեւ ճշմարիտ, խնդրական նոյնիսկ վիճելի կը
դառնայ, երբ առաջ կը բերէ յոգնութիւններ, որոնք առողջապահա-
կան սահմաններէն անդին կ'անցնին, երբ դործունէութիւնը արագ-

րէն իր արդիւնաւոր վախճաններուն չի յանգիր, ըսել պիտի ուզէի թէ՛ Ֆիզիքական սոցերու և կենսաբանութեան վասնումները համեմատական չեն ըլլար անոնց մթերումին, ի հարկէ հաւասարակչութիւնը կը խախտի, ու այս խախտումը առողջութեան խաթարում առաջ կը բերէ: Առաւել ճիգ՝ նուազ արդիւնք, համապատասխան չեն երկարակեցութեան և սոցերու անովթար պահպանումին: Այս իրողութիւնը անասկան չափազանցուած գնահատութիւն մը պիտի համարուէր, եթէ, տարւոյն ընթացքին, այս կարգի սպառող յագնութիւնները հազուայէպ եղելութիւններ միայն ըլլային: Բայց, երբ գիւղացիին ամենօրեայ կեանքը՝ արշալոյսէն մինչև մութ, նոյնիակ կիրակի օրեր ալ, այս եղանակով ընթանալու դասապարտուած կը մնայ, այն ստեղծ, այս անսովեան գործնական հետեւանքները ծանրապէս զգալի կը դառնան ժողովուրդին վրայ, սղելով անոր կենսականութիւնը, և կրճատելով ամէն ինչ որ պիտի նպաստէր անոր առողջ և գործունեայ երկարակեցութեան: Ասիկա երբ անհատին համար անվիճելիօրէն ճիշդ է, անվիճելի է նաև անհատներով կազմուած գիւղացի կամ ոչ գիւղացի ժողովուրդի մը համար ալ:

Կառուղի գոյութիւն չունի միակ հասարակաց պողոտան, ուրիշ պետական հազարակեցութիւնները կը կատարուին ջորիներով կամ ձիերով, Խարբերդէն Կարին երկարող ուղին է, որ Բալուի դաշտերը, արեւելքէն արեւմուտք կտրելով կ'անցնի, առանց լայն պողոտայով մը Բալուի քաղաքին հետ կապուած ըլլալու, և առանց նոյնիակ կարեւոր կայաններու: Կայանները՝ անոր երկայնքին վրայ դանաւող գիւղերն, ինչպէս՝ Կիւլիշկէր, Արմըճան թուրքերէն Եարըմճայ, Նորգեղ, Նոր գեղայ Մրզուայ, Նորչնակ թրքաբնակ գիւղը և ուրիշներ:

Հազարակեցութեանց մասին խօսելու սրահուն, պետական օրէնքներու և անոնց գործադրութեան նկատմամբ լուրը իրողութեանց պատճառները սքողել պիտի ըլլար, ու, պատճառներն սքողելով, ճշմարտութիւնները առեղծուածային պիտի մնային:

Ժողովուրդը, ըլլայ հայ, քուրդ կամ թուրք, իր առողջապահական պէտքերու մէջ, կառավարութեան ներկայութիւնը երբեք չըզգար. սա հարկահաւաքութեան, ու տուրքերու դանձումներուն, զինւորագրութեան և բերքերը տասանորդելու միջոցին իր ներկայութիւնը կ'զգացնէ: Ան՝ ժողովուրդը, կը կարծէ թէ ինք ամէն ինչ պարտաւոր է կառավարութեան տալու, իսկ կառավարութիւնը ո՛չ ինչ պիտի տայ իրեն...: Քողաք մը, որ շուրջ երեք հարիւր մեծ ու փոքր գիւղերով շրջապատուած ոչ նուազ ընդարձակ դաւառակներէն մին կը կազմէ. ո՛չ բժիշկ ունի, ո՛չ դեղագործ և ոչ իսկ դեղարան: Թաղապետութիւնը գէթ բժիշկ մը ունենալու էր, ըստ օրինի:

Հան, սակայն, մանրալաճառներ են զեղազործներ և իրենց կրթակաները՝ զեղարաններ: Ասոնք կը վաճ առնն կամ կը պատրաստեն նահապետական բժշկութեան վեր սքերեալ բուսական կամ հանքային զեղորաներ, որոնց չափը, կշիւը և կիրառութեանց պարագաները գնահատող միակ հեղինակութիւնը ունին՝ սափրիչ-ատամնարայէներ, ժողովրդական համբաւեալ բժիշկներ, նոյնինքն իրենք մանրալաճառները, որոնք ո՛րեւէ պատասխանատուութեան իրկիւզը չունին, որովհետեւ, պետական օրէնքներու իրաւացի սեղմումներուն ենթակայ չեն: Բարւա մէկն է եղած այն շատ մը գաւառակներէն, որոնք օսմ. կայսերական նախկին կեդրանական կառավարութեան հանդէպ շատ պարագաներու առկա գրեթէ անպատասխանատու ապրած են. ի հարկէ ներկայ հանրապետական կառավարութեան մասին չէ իմ գիտողութիւնս:

Ըսի թէ թաղապետութիւնը, առողջագրական տեսակէտով սակաւարոյական կամ պետական անուանակոչութիւն մըն է, երբ ժողովուրդին առողջագրական պայմաններուն վրայ իր օրինական հակակշիւր ի գործ չի դնէր: Ան, մահերու և ծնունդներու արձանագրութիւններ ունեցած չէ երբեք, և այս պատճառաւ գաւառը ճշմարիտ մարդահամար ալ ունեցած չէ. երբ մէկը կը մեռնի, առանց ձեւննա պաշտօտաւն քննութեան, և անոր մահը ստուգող տեղեկագրին և հրամանագրին, նոյնիսկ ննջեցեալին անշնչանալէն երկու կամ երեք ժամ յետոյ գերեզման կը դրուի: Ոճրագործութեանց պարագային երբ աննական դատախազ մը տեղւոյն դատարանին ամբաստանութիւններ ներկայացնէ, դատաւարին որոշմամբ, կառավարութիւնը՝ պազը-մասեկի թաղապետական բժիշկը կը հրաւիրէ, որ գոյ և տեղեկագիր տայ: Բժիշկը, առնուազն երկու օրէն կրնայ համնիլ Բարւա, և սպաննեալը գերեզմանէն հանել տալով դիտողնութիւնը կը կատարէ և կուտայ տեղեկագիր մը, որ գաւառավարութեանց իբրև փաստաթուղթ պիտի ծառայէ:

Գաւառին բնակչութեան, — հոյ, թուրք, քուրդ անխորթն սանելով, — աճման կամ նուազումին մասին ոչ մէկ տեղեկութիւն և ոչ իսկ հեռաքրքրութիւն ունեցած է կառավարութիւնը: Ո՛ւր կը մնայ որ ժողովուրդին առողջագրական պայմաններուն մասին հոգածու գտնուէր: Այս տեսակէտով, գիւղացի ժողովուրդը կատարելապէս ինքնավար եղած է . . . , այսինքն ինքն իր գլխուն լքուած է. դժբախտաբար, իր գլուխն ալ անբաւական եղած է օրրատօրէ բան մը աւելցնելու իր առողջագրական գիտակցութեան վրայ: Գիւղացիին երկարակեցութեան սատարող իբր գլխաւոր ազգակ կը մնան օլը և ջուրը, և մասամբ ալ՝ սնունդի որակը:

Սակայն, վիճակագրութիւն մը ցոյց պիտի տար անմիջապէս

թէ՛ այս երեք ազգակիները սնուածական մնացած են սնոր՝ աչքի զարնող առողջութիւն մը ազատախելու. եթէ գտնուած են 120-130 տարեկան ծերունիներ, ասանք հազուադէպ իրազուժիւններ պէտք է համարել, որոնք մէկ երկու դարու ընթացքին, քառասուն գիւղերուն մէջ հազիւ մէկ երկու անգամ երեւան կուգան: Իրազուժիւններ, զորոնք ամբողջ ժողովուրդը մտանանիչ պիտի ընէր իբրեւ կազական դէպք:

Առողջագրահական բաժինը գեւ ունի իր մասին խօսելիք նիւթեր. ըսի թէ՛ գիւղացին, մասնաւորապէս հայ գիւղացին՝ անական, հազուաանգէնի, կարասիներու, մահիճի մաքրութեան անասկէտով գովելի նախանձախնդրութիւն մը ունի: Ասոր հակասակ, կայ պարագայ մը, որ պիտի կրնար հակասութիւն մը համարուիլ, այդ նախանձախնդրութեան, ասուեր ձգելով սնոր մաքրասիրութեան վրայ: Բարձր գիւղերուն մէջ ալ, — խօսքս միայն հայ գիւղերու մասին է, — ախտները, գամերը, բոզերը տուներու յարակից մասը կը կազմեն, անոնց դուռները ներսի տուներու մէջ կը բացուին, կամ անկէ ո՛չ շատ հեռու կը գտնուին: Խճողուած կենդանիներու շունչը, թրիքներու գորշահոտութիւնները ամբողջ տան միմիայրաւ կ'ապականեն ձմեռնային եղանակին մէջ: Իսկ ամառնային եղանակին մէջ դորդանները կը գառնան եզներու, կովերու, գամէշներու, էշերու և ոչխարներու մակազատակի, դորդանները բացօդայ կ'ըլլան մեծ մասամբ: Չարտախը ուր կը գիշերէ տան բնակչութիւնը, կը գտնուի դորդանին եզերքը, այնպէս որ ասք եղանակին, ապականիչ օդը անկէ շարտախ կրնայ տարածուիլ և գիւղացիին առողջութիւնը խաթարելու պատճառ գտնուի: Քուրդ գիւղերու մէջ, ընդհակառակն ախտներուն մէկ մասը, մասնաւորապէս սչխարներու գամերը՝ գիւղերէն 5-10 վայրկեան հեռու կը գտնուին: Այս պարագան հայ գիւղացիին անձանօթ չէ, բայց ան աւելի կը մասնագուրի ապահովութեան խնդրով, ան, նայնիակ իր բողմամարդ տուէն ներս, շրջապատուած իր գամփաներով, հարկադրուած է արթուն հակել, գիշերն ի բուն, իր կենդանիներն ու կարասիները գիշերային գողերու աւարի շատու համար: Գողեր ոչ միայն պատերէն վեր մագլցելով, կամ դորդին դուռը բանալով ներս կը մտնեն, այլ նայնիակ ախտներու պատերը կը ծակեն և անկէ կենդանիներ կը փախցնեն . . . : Ահա պատճառը, որով ստիպուած է գիւղացին՝ իր ախտներուն կամ գոմ ուն կից սպրելու:

Առողջագրահութեան մասին գրելու ատեն, հարկ է յիշել նաև այն հիւանդութիւնները, որոնք ծանօթ են հայ գիւղացիին իբրև մասնաւոր անուաններով: Այդ հիւանդութիւնները հետեւեալներն են. դող, բարակ ցաւ, swars, դեղնութիւն, լուսնոտութիւն, խելագարու-

թիւն, խորոզիկ կամ կապասնազ, հար, բերնհար, խոցոնկ (խոստուկ),
 սարուկ, կապ, վարցաւ, փորցաւ, կողասապ, աչփի ցաւ, ձմրուկ,
 ջրծաղիկ, ծաղիկ, հարսանեք, գուշաօղան, ջղածգուքիւն կամ խաղ-
 ցնել, ֆօթրում (անգամալուծիւն):

Դուրը, Բարուի մէջ, ամէնէն շատ տարածուած, — այս բացաս-
 րու թիւնը անբաւական է, պէտք է ըսել ամբողջ գաւառին մէկ ծայ-
 րէն միւսը տարածուած հիւանդութիւնն է, — գաւառին պատուհասը:
 Այս հիւանդութիւնը կ'սկսի ամբոսն վերջերը կամ աշունը, ու կը
 վերջանայ ձմրան սկիզբները, ոմանց վրայ աւելի երկար կը տևէ:
 Ընդհատող տենդով մը կը յայտնուի: Հիւանդը նախ՝ տարապայման
 ցրտութիւն մը կ'զգայ, կը մսի, կը դողայ, յետոյ ջերմի կը փոխուի
 այս մսիլը. — նախ զայն պառ ջուրով կը լսզցնեն և յետոյ անկողնի
 մէջ կը պառկեցնեն: Իբրև դարման, ոմանք, վերջին ժամանակ-
 ները սիւլֆատ ար քինին և լուծողական մը կը գործածէին. իսկ
 շատեր ոչինչ կը գործածէին կամ իբրև դեղ մայրամ խոսի շատ
 դառն արդանակը կը խմէին: Հեռաւոր գիւղերը, դողկապ ալ կ'ը-
 սեն, այսինքն քահանայէն օրհնուած պատրոյգ մը կ'առնեն և հիւան-
 դին դաստակին շուրջը կը կապեն: Այս պատրոյգին վրայ եօթը
 հանգոյցներ կ'ընէ քահանան կամ աղօթողը, և ասով եօթը տարի
 տեւող դողը, որ ամէնէն յամառն է դողերուն, կապուած կ'ըլլայ:
 Ամէն տարի գիւղի մը բնակչութեան մեծագոյն մասը այս հիւանդու-
 թեամբ կը վարակուի, և մերթ, տուն մը, մէկէ աւելի հիւանդներ
 կ'առնենայ երբ մէկ երկուքը կ'ապաքինին, միւսները կը հիւանդա-
 նան, ով որ մինչև ցուրտերուն սկսիլը դողցուցած չէ, այդ տարե-
 շրջանին իր հիւանդանալու կարգը անցուցած կ'ըլլայ: Ճշմարիտ
 պատուհաս մըն է առ ամբողջ գաւառին համար, մասնաւորապէս այն
 գիւղերուն համար, որոնք դաշտային ու ջրառատ վայրերով շրջա-
 պատուած են, իսկ բարձր լեռներու վրայ գտնուող գիւղեր որոնք
 այնքան պարտէզներ չունին համեմատաբար քիչ կը ստուալին այս
 հիւանդութենէն:

Բարակ-ցաւ. — Գաւառին մէջ, թոքախտը, գոնէ այս անունով
 կամ բառով անծանօթ կը մնար մինչև վերջին ժամանակները, բայց
 այն հիւանդութիւնը, զոր բալուցին բարակ-ցաւ անունով ճանչցած
 է, հաւանորէն թոքախտը եղած ըլլայ: Բարակ ցաւ անուանած է,
 որովհետև սուր ցաւեր չի պատճառեր հիւանդին, որ սակայն,
 հետզհետէ կը ծիւրի, ախորժակ չունենար, կը նիհարնայ, կը գու-
 նասի ամէնօրեայ տենդի մը ազդեցութեան տակ, և բոյսի մը պէս
 սատիճանաբար կը թօշնի, հոսկ ուրեմն մահը անխուսափելի կը
 դառնայ:

Դեղ կամ դարման անօգուտ կը դառնան, և արդէն այդ միջոց-

ներսուն չեն դիմեր կամ դիմեցու տեղ չունին, որովհետև բժիշկ չկայ: Հիւանդին ախորժակը ինչ բանի որ յարմարի կը կերցունն աւանց խնայելու: Բայց սրբավայրեր կը դիմեն, ուխտեր կ'ընեն, խաչքարեր կամ տաճարներ կը լուսեն, Կարեկի, Աւետարանի ընթերցումներ ընել կուտան ինչպէս բոլոր միւս տեսակ հիւանդութիւններով բռնուածներու, նոյնպէս այլ այս հիւանդութեամբ առատագուլներու վրայ, մինչև որ «հոգոց»ը կարգան:

Գիւղացին այս հիւանդութենէն չի ստակար, որովհետև, շատ հազուադէպ է ան. հիւանդութեանց կամ մահերու շարքին մէջ աննշան համեմատութիւն մը միայն կ'ունենայ:

Կայ հիւանդութիւն մը, որմէ Բայուլի հայ գիւղացին կը ստակայ, swarsն է, Փրանկախար: «Swarsն է, տարա ը տակը» ըսելով կը հասկցնեն թէ Փրանկախար է, կամ այդ ախտով վարակուած է: Swars ունեցողէ մը չափազանց կ'զգուշանան. անոր ձեռքէն ո՛րեւէ բան չեն տաներ, անոր զգալով, անոր պնակէն, կամ անոր հետ չեն ձաշեր, սաստիկ վարակիչ և յոյժ վատագուոր հիւանդութիւն մը կը համարեն զայն: Երբ մէկը մարմնայն այլ և այլ մասերուն վրայ վէրքեր ունենան, և անոր ձայնը խաղտա ըլլայ կասկածելի կը համարեն զայն, «տարա ը տակը» կ'ըսեն: Այս հիւանդութեան բուժման համար, զարմանալի մատածում, աղօթքի, ուխտի չեն ապաւինիր, սուրբերու մատաղ չեն խոստանար, այլ ուղղակի բժիշկ կը փնտռեն, և կատարեալ համակերպութեամբ կը յանձնուին ժողովուրդին մէջ համբաւ ունեցող ժողովրդական բժիշկներու, որոնք, սակայն, հազուադէպ այլ են: Անոնց սրատուէրները կամ բժշկական աւերիչ կամ բուժիչ յանձնարարութիւններուն կէտ առ կէտ կը հետեւին, որպէս աստուածային պատգամի մը:

Բարեբախտաբար, ժողովրդական բժիշկներէն ամէնքն այլ յանձնառու չեն ըլլար այս հիւանդութիւնը դարմանելու, գոնէ հասկցած ըլլալով թէ կեանքի հետ վատագուոր խաղարկութիւն մը պիտի ըլլար այսպիսի յանդգնութիւն մը: Մեր օրերուն, Բայուլի Սագրաթ գիւղին մէջ կար ստիրիչ մը, Պառարա Թորոս աղբար, որ շնորհիւ իր ձեռքը դանտած բժշկական ձեռագիր ստուար հատորի մը, զանազան թեթեւ հիւանդութեանց դեղեր կը ստնամանէր: Ան, swarsը չէր դարմաներ, ինք սակայն, գուտաւին լուազոյն տաամնարոյժն էր, ակուներ կը քաշէր, կամ կը դարմանէր, ուռած լինդերը, կամ ուռէ այտուցներ կը ծակէր՝ հասուենցնելէ յետոյ, կը մաքրէր թարախներէն, կը դեղէր զանոնք և կը յաջողէր բուժելու:

Միակ անձը, որ մասնաւորապէս swarsը բուժելու մասնագիտութիւն ունեցողի համբաւը տարածած էր, Հաքիմ Գեւօն էր մերթ Պըզմըշէնցի Գեւօն Գէորգ կոչուած, Խարբերդի Պըզմըշէն գիւղին ա-

հաւնով, որ իր ծննդաւայրն եղած է: Հաքիմ կամ Հէքիմ Գեւօ, տարին անգամ մը Սարքերդէն Բալու կ'այցելէր կամ հարկը պահանջուած ատեն կը հրաւիրուէր, մասնաւորապէս այդ ախար բուժելու համար, փոխարէն կ'առանար ցորեն կամ գրամ:

Ան, որպէս միակ դեղ, անդիլը կը գործածէր իր պարզ վիճակին մէջ, սերիշ նիւթերու հետ խառնելով և դեղահատերու ձեւին վերածելով: Հիւանդը, այս դեղահատերը պիտի գործածէր՝ խիստ պահեցողութեան մը շրջանին, հրաժարելով թթու, կծու, աղի կերակուրներէ, պտղ ջուր խմելէ, սովորական հացի տեղ բազարջ հացը կը յանձնարարէր: Ներսէն դեղ գործածելու տեղ, երբեմն անդիլը կըրակի վրայ լեցնելով շնչել կուտար:

Հաքիմ Գեւոյէ զոտ կար նաեւ Սարքերդ պարակական փոխ հիւարատոս Գրիգոր պէյ, որ գաւառական բժշկութեան հմտութիւն ունեցողի մը համբուը կը վայելէր, ունէր իր արամաղբութեան տակ բժշկական ձեռագիր աւելի ստուար հատար մը, որուն օգնութեամբ կը պարապէր բժշկութեամբ, հակառակ որ Սարքերդի թագապետութիւնը իր վկայեալ պաշտօնական բժիշկն ունէր. ու կային նաեւ ուրիշ մասնաւոր մէկէ աւելի վկայեալ բժիշկներ և դեղագործներ: Գրիգոր պէյ, սակայն, Բալուի օգտակար չէր կրնար ըլլալ, քանզի դարմանելու տեսակէտով:

Տարսը, բաղդատ համբ բարակ ցաւին, աւելի տարածուած է, բայց, բաղդատամբ դողին, աննշան համեմատութեան մէջ գտնուած է: Շատ անգամ չափազանցուած է անոր գոյութիւնը ըստ թիւի, որովհետեւ, յաճախ արեան անմաքրութեան կամ ուրիշ պատճառներով մարմնոյն այլևայլ մասերուն վրայ գոյացող վէրքերը տարսի ախտանիշեր համարուելով, իբր այն դարմանուած են: Քանի մը գիւղերու, և իւրաքանչիւր գիւղի մէջ հազիւ մէկ երկու վարակուածներ գտնուած են, ան ալ՝ բուժուած կամ իբր թէ բուժուած վիճակի մէջ: Ասոնք, Պոլիս, իրենց պանդխտութեան միջոցին վարակուած և հոն տեղւոյն վրայ դարմանուածներ են, որոնք տարս հայրենիք դարձած են, ինքզինքնին բոլորովին տաքքինած համարելով:

Կոյրերու, խուրերու թիւը նոյնպէս աննշան է, ինչպէս նաեւ խելագարներու և լուսնոտաներու: Ամբողջ գաւառին մէկ մէկ երկու խելագար, քանի մը պակասամիտ և քանի մը լուսնոտ հազիւ գրանուած են մեր ժամանակները. տախա, մասամբ, չէր կրնար իբր ապացոյց ծառայել հաստատելու համար թէ՛ տարս գաւառին մէջ տարածուած չէ եղեր շօշափելի համեմատութեամբ: Կարելի է ըսել թէ՛ հոյ գիւղացին որ պանդխտութենէն քանի մը օգուաններ, քաղեր է, վնասներ ալ քաղեր է անկէ. ու այդ վնասներէն մէկը այս հիւան-

դուժիւնն է: Լեւնադմասկները, որոնք պանդխտութիւններ կամ տարազնացութիւններ ունեցած չեն, այլ տարած են միայն իրենց լեւներու սահմաններուն մէջ, զերծ մնացած են վարակումներէ: Չմտնանք ըսելու թէ կիներու մէջ *sars* ունեցող դանուած չէ, կամ լրանուած չէ. տա եթէ ճիշդ է, կարելի պիտի ըլլայ այն տակն ըսել թէ՛ այդ տխուր թէ՛ն փոխադրուած է Բալու, բայց հոն տարածուած չէ, կամ դարմանուած է վարակաւորներուն՝ հայրենիք վերադարձէն առաջ, և այս կերպով անոնց ընտանիքները վարակուած չեն:

Աչքի ցաւը միայն ամբողջ կզանակին շատ կը պատահի գիւղերու մէջ մասնաւորապէս կայերու աշխատութեան կամ հունձքի շրջանին. յաճախ խոցասակ կ'ուսննայ, կը կարմրի, կը ճայրտաի: Աչքի հիւանդութեան գլխաւոր դեղերն են. *խսուս* ըսուած բոյսին արմատին կաթը, սրագլիզ և հաւկիթի դեղնուց, ազսիսի թթու: Շիպը կամ պողլեզը և հաւկիթին դեղնուցը բաւ մը իրար կը խառնեն, և երեկոյին պառկելէ առաջ, աչքին վրայ կը կապեն, մինչև առաւօտ ցաւը կը դադրեցնէ: Իսկ *խսուսի* կաթը մէկ քանի անգամ կը կաթեցնեն ցաւող աչքին մէջ:

Գեղնութիւն. — Գիւղացիին համար այս հիւանդութեան տխուր նիշերն են աչքին սառնեկիւն դեղին գոյն ստանալը, և դէմքին դունտաիլը: Ասոր շատ մը դարմաններ կ'ընեն, գլխաւորը հետեւեալն է. ամանի մը մէջ քանի մը հատ չորցուած ծիրան կը դնեն, վրան մարդկային մէզ կը լեցնեն և երեկոյին, բացօդեայ տեղ մը կը դրնեն: Մինչև առաւօտ կը մնայ այդպէս. առաւօտուն, անօթուց, հիւանդը թրջուած այդ ծիրանները կ'ուտէ: Առիկա մէկ երկու անգամ կը կրկնեն: Գեղերու վրայ այնքան վատահութիւն չունի գիւղացին. կան դեղնութիւն կարող համբաւեալ անձեր, որոնք մասնաւոր բանաձեւեր ունին զորոնք իբրև աղօթք կ'արտասանեն, և հիւանդը կը բժշկուի...

Գեղնութիւնն այլ հաղուողէպ է. և կը կարծեն թէ վախէ առաջ կուգայ:

Հարը հարբուխն է, որուն համար ո'ւէ գեղ չեն գործածեր. սկսիլը, զարգանալը և մեղմանալը մինչև ապաքինում սովորապէս վեց-եօթը օր կը տեւէ, ո'չ աւելի:

Տարուկ կամ տարուեկալը վէրք մըն է՝ որ յատուկ է Բալուի, ինչպէս Խարբերդի, Տիգրանակերտի եւն: Այս վէրքը տարի մը կը տեւէ, հակառակ բոլոր տեղական դարմաններուն: Ասոր իբր դարման կը գործածեն կապոս քարի ալիւրը զոր խմորի հետ խառնելով վէրքին վրայ կը դնեն: Սուրճի ալիւրն այլ կը գործածեն. տարիս պարզապէս վէրքին վրայ կը ցաննեն:

Կապ. Այս հիւանդութիւնը սեռային անկարողութիւնն է. գիւղական

փորձառութիւնները ասոր զէմ ո՛րեւէ դեղ չուենին. սեռային անկարողութիւն ունեցող մը ստիպուած է մասնաւոր բժիշկի գիտելու: Ասպր քակո լինե՛ալ համ սրանք կ'աղօթեն և խաղըլի վրայ հանգոյցներ քնելոյ հիւանդի: Կը յանձնեն:

Յացուկ համ ցըյուակ. — Ասանք զէմքի վրայ Կոյոցոյ շարուած վէրքեր են, սրանք շարուին միջոցաւ կը ասորածուին զէմքին զանազան մասերուն վրայ: Կարող իւզոյ սիւլիւլը կը շողեն և վէրքին վրան կը քսեն: Այս դեղը կը ցամքեցնէ: Սիւլիւլը կարմիր ու թոււնաւոր փոշի մըն է. սրով կ'օժեն նաև երկաթեղէնները, որպէսզի խանութեան զէմ սրչապանուի, ու չժանգոտի:

Վարցաւ. — Ասիկա երկարատեւ հիւանդութիւն մըն է. ամիսէն ուելի կը տեւէ: Հիւանդին ասքութիւնը չընդհատիր. քիչ անգամ ինքզինքը կը ճանչնայ, հիւանդութեան մեծագոյն մասը կ'անցնէ գիտակցութիւնը կորուսած վիճակի մը մէջ և զաւանցումներով: Կը կերցնեն մածուն, մերթ կորկոտով ապուր. կը խմցնեն աւատարէն մածնաթան և ջուր ըստ հիւանդին տխորժակին: Հիւանդին տխորժակին կը հետեւին ընդհանրապէս: Երբ ան ինքզինքը գանելով պահ մը ուտելիք կ'ուզէ, առանց մերժելու՝ ուզածը կը կերցնեն. ուտելէն յետոյ դարձեալ կ'ընկղմի անգիտակցութեան ու զաւանցումի մէջ: Այս վիճակը կը շարունակուի 20-25 օր. սրմէ յետոյ ապաքինումը կ'սկսի, ու կը տեւէ 20-30 օր եթէ դարձ չընէ հիւանդութիւնը:

Գեղ չուենին այս հիւանդութիւնը բուժելու համար, բայց կ'աղօթեն, սուրբերուն մատաղներ կը խոստանան, սրբատեղիներ կը լուսեն, համալի քակել կուտան վրան, նարեկ, Աւետարան կը կարդան:

Այս հիւանդութեան շրջանին մահը հազուադէպ է. հազիւ թէ հարիւրէն մէկը միայն մեռնի: Քիչ անգամ երեւան կուզայ ան. միայն 1896ին էր որ համաճարակի քնոյթ առաջաւ, և ամբողջ գաւառին հայ գիւղերուն մէջ ասորածուեցաւ: Թալանումի հետեւանքով (1895) գիւղացիներ անկողին անգամ չուենին. հիւանդները կը պառկէին խոտերու վրայ՝ պաստառներով, ցնցոտիներով ծածկուած: Այդ թուականին, դերման միսիօնարութեան մը պատկանող, նպատամասոյց յանձնախումբ մը, Բաշուի հայ կարօտեալներուն նպաստաշխելու եկած էր: Յանձնախումբին բժիշկները գիւղերը այցելութեան կ'ելնեն, բոլոր վարցաւով պառկողներուն՝ անբացատուպէս, մածնաթան խմցնել կը յանձնարարեն: Այդ հիւանդներէն հազիւ 2-3 մահը պատահեցան մինչ հիւանդներուն թիւը 300է ուելի կը հոչուրէր:

Ուրիշ կարեւոր նկատողութիւն մը: Այս ծանր հիւանդութեան

միջոցին, հայ գիւղացին վարակուածի մասին բնու չի մտածեր. ան կը կարծէ թէ միայն սարսն է որ կը փոխուի (կը վարակուի), հետեւաբար, մեծ ու փոքր, առանց վարանուածի, առանց երկիւղի հիւանդէն չեն հեռանար:

Գուշ պողան, հաւանօրէն՝ սիֆթերի.— Այս հիւանդութիւնն ալ կոկորդի մէջ երեւան կուգայ բարբոքուածով մը: Կոկորդին ներսի կողմը կ'աւելն Տաքութիւն կ'ունենայ հիւանդը թուքը չի կրնար կշնէր «Պողոզը լցուեր ք», կ'ըսեն: Ասոր դարմանը հետեւեայն է. շան փինը կը չորցնեն, պէտք է որ ճերմակ ըլլայ ան, ալիւրի կը վերածեն, և մասուրայի մէջ քիչ մը լեցնելով անկէ, հիւանդին կոկորդը կը փչեն պորբերապէս քանի մը անգամ: Միակ դեղը սա է, որուն բարերար ու արագ ներգործութեան վրայ հաւատք ունին: Եթէ պարանոցին գուրսի կողմը աւելցք ըլլայ, ծխախոտի տերեւին վրայ մեղր քակով վրան կը կապեն քանի կը անգամ: Ասիկա ուսուցքը կը ցրուէ:

Ծաղիկ.— Ասիկա ծաղկախան է, զոր պարզապէս ծաղիկ բառով կ'անուանեն: Ծաղկիլ բայը բացի իր որոշ խմաստէն, կը նշանակէ նաեւ ծաղկախտի բանուիլ:

Այս հիւանդութիւնը կը ճանչնան սա հետեւեալ նշաններէն: Վարակուողը նախ աաքութիւն կ'ունենայ, աչքերը կը կարմրին, կը հազայ, և, աւելի կամ նուազ վէրքեր «շիս» կը հանէ մարմնայն վրայ: Հետզհետէ այդ շիսերէն ոմանք կը չփն (կ'անհետին) և նորեր կ'ելնեն: Այս վէրքերուն «մաւ»ը կայ, որ եթէ աչքին մէջ երեւան գայ, զայն կը կուրցնէ:

Հարկ եղած գլուշութիւնները ի գործ կը դնեն, որպէսզի հիւանդը տաք պահուի, անոր սովորապէս քաղցրեղէն կը կերցնեն, ռուպի օջարակ կը խմցնեն. այն համոզուածով թէ, քաղցր կերակուրները՝ հիւանդութիւնը դուրս, մորթին վրայ վանելու բնութիւն ունին, և եթէ հիւանդութիւնը դուրս չի տայ, վտանգաւոր կը դառնայ:

Պատուասար կամ փաւփինը, գիւղերու մէջ փորձառու և տարէց կիները կ'ընեն, հետեւեալ կերպով: Ծաղկախտով վարակուած մէկուն վէրքէն տակի ծայրով թարախ կ'աւնեն, և աջ ձեռքի բթամասին ու ցուցամասին միայն աւելը սեր ոսկոր չկայ, դնելով կ'սկսին կամաց կամաց տակին սուր ծայրովը ձեծել, մինչեւ որ արիւնին հետ հազարդակցութեան մէջ մտնէ. այն ատեն չամիչ մը ճեղքելով կուտերը կը հանեն և վէրքին կամ փաւփինին վրայ կը կապեն, մինչեւ որ վէրքը սարսքինի, պատուասար բռնէ կամ ոչ:

Ծաղկախտով վարակուողը չեն լողցնէր, նոյնիսկ չեն թողուր որ բնու ջուր դիպի դեէ պատճառով մը անոր մարմնայն սեւէ մէկ

տեղին, մինչեւ քառասուն օր. որմէ յետոյ զեռ ժամանակ մըն ալ կ'ըզուշացնեն ապաքինողը պաղառութենէ:

Խուճիկը հիւանդութիւն մըն է հետեւեալ ախտանիշերով. գլուխը, գէմքը ամբողջովին կ'ուռին մորթը կը մթաղնի սովորականէն աւելի, և այլանդակ կամ սարսափ ազդող երեւոյթ մը կ'ստանայ հիւանդը: Կ'ուռնենայ նաեւ սովորականէն աւելի տաքութիւն, և կ'ստիպուի անկողնոյ մէջ անցընել զայն: Այս հիւանդութիւնը 15-20 օր կը տեւէ մինչեւ տաքի ելնելը: Ոտքի ելնելէն յետոյ գլխուն բարբ մազերը կը թափէն, և հետզհետէ նորէն կը բուսնին, նոյն գոյնով ու խտութեամբ: Մէկը որ այս հիւանդութեամբ անգամ մը վարակուած ըլլայ, միշտ ենթակայ կ'ըլլայ նոյն հիւանդութիւնը ունենալու, մարդ կայ որ տարւոյն մէջ երկու անգամ կամ անգամ մը, կամ երկու տարին մէկ անգամ այս ախտէն կը բռնուի. ասոր համար ալ զզուշութիւններ կ'ընեն. թէեւ չեն գիտեր թէ ինչէն առաջ կուգայ, և ինչով կը դարմանուի:

Այս հիւանդութիւնը Բայուլի գիւղերուն մէջ հազուադէպ է այնքանոր քնակչութեան մեծագոյն մասը անոր անուշը անգամ չի գիտեր. Սարբերդի աւելի ծանօթ է քան Բայուլի:

Հարսանեքը կը յայանուի ջերմով կամ տաքութեամբ, և մարմնոյն վրայ առաջ եկած կարմրութիւններով: Հիւանդը տաք կը պահեն, ընդհանրապէս քողցրեղէն կը կերցնեն:

Խաղցնել, խաղ ըյնիլ կ'ըսեն անոր որ ջղածգութեան նոպաներ կ'ուռնենայ (սխաղմօս): Խույ ըյնիլ ալ կ'ըսեն այս հիւանդութեան, աչքերը կը կորանցնեն իրենց տեսողութիւնը, գետին կը պտակի, ցնցումներ կ'ուռնենայ, բերանը կը փրփրի, մէկ վայրկեանի չափ այդ վիճակով տառապելէն յետոյ, ինքզինքը կը գանէ:

Այնպէս կը կարծեն թէ՛ ալբերը հանդիպում մը կ'ընեն ենթակային, և զայն կը խաղցնեն. ընդհանրապէս ջուրի հոսանքներու մօտերը տեղի կ'ուռնենան այդ գիւային հանդիպումները, և կը կարծեն թէ ալբերը կամ գեւերը տուռներու եզերքները կը բնակին: Այս նախապաշարուամով, այդ հիւանդութեան ենթակայ անձերը, կ'ըզուշանան որքան որ հնարաւոր ըլլայ, տուռներու մօտէն անցնելու:

Ալբերը երբ մէկը խաղցնեն, ո՛րեւէ դարմանի չեն դիմեր հիւանդին մարդիկը, միայն նոպայի շրջանին գլխուն վրայ պաղ ջուր կը սրսկեն, և Նարեկ աղօթամատեանէն աղօթքներ կ'արտասանեն:

Գաւառին մէջ այս հիւանդութիւնը շատ հազուադէպ է:

Գիւղացիները՝ հիւանդները խնամելու իւրաքանչիւր հիւանդութեան մասնաւոր եղանակներ չունին: Գլխաւորապէս մաքուր կը պահեն, ձերմակեղէնները, անկողինը, վերմակը, և, ամառնային եղանակին մաքուր օդի մէջ կը պտակեցնեն, իսկ ձմեռը ներսի քան

մէկ անկիւնը, իրենց միւս անկողիններէն անջատ :

Կերակուրներու մէջ քիչ անգամ զանազանութիւն կը դնեն, կը կերցնեն հիւանդին ինչ որ անոր ախարժակը ուզէ. ընդհանրապէս սանձ, խնձոր, կորկոտ տպուր կուտան. կաթը անտես կ'ընեն, թան կը խմցնեն, ձմերուկ կը կերցնեն. ու, զարմանալի է որ ձմերուկը ամէնէն աւելի անվնաս նոյնիակ օգտակար նկատելով անոր քովէն անպակաս կ'ընեն :

Իրացիներ, ազգականներ, երբ հիւանդ տեսի կ'երթան, հետերնին կ'առնեն նաեւ ուտելիքներ, կերակուր ու մտղէն, մրդկողէններէն ձմերուկն է զոր ամբոյն ու աշնան եղանակներուն առատօրէն կ'առնենան, սակէ յետոյ կուգայ ձմրուկ սանձը, որ քիչ մը թթուայ է և հաճելի համ մը ունի :

Լուացքի մասին թէեւ սակէ առաջ յիշատակութիւններ ըրած եմ, բայց աւելորդ պիտի չըլլար քանի մը մանրամասնութիւններ ալ աւելցնել հոս, ծանօթացնելու գիւղացիին աշխատանքն ու աշխատելու եղանակը այնպէս ինչպէս որ է :

Լուացքին օրը, կիները, հարսերը և ազջիկները, գիւղին մեծ ու փոքր աղբիւրները կամ գիւղին քովէն երկարող առուներու եզերքը կ'երթան, լուացքի վերաբերեալ բոլոր առարկաները՝ կաթսաներ, պոչով թաս, քուրակ, օձառ, կապնիի մոխիր, փայտ, կշգուր, ձեփ և լուացուելիք լաթերը իրենց հետ տանելով : Հոն, խոշորկեկ քարերով օձախներ կը շինեն, և կաթսաները անոնց վրայ գետեղելէ յետոյ կը վառեն, անոնց մէջի ջուրը եռացնելու համար : Ամէն լուացք ընող, երկու պլիմնով ջուր կ'եռացնէ. մէկուն մէջ մոխրաջուր, իսկ միւսին մէջ պարզ ջուր : Կաթսաներուն մօտ գետեղուած է տախարակ և յղկուն երեսով մեծ քար մը :

Եռացած մոխրաջուրէն դոյլ դոյլ կ'առնեն, անոր մէջ աղտոտ լաթերը կը թքջեն լաւ մը, կը նմռեն, և զանանք քարին յղկուն մակերեսին վրայ դնելով թակով կը ծեծեն կամ իրենց բառովը՝ կը քակեն : Թակուած այս լաթերուն վրայ տեսակ մը գորշագոյն կաւ կը քսեն, այս կաւը աղտերը լուծելու բնութիւնն ունի. տասր կ'ըսեն լաթերը կաւել : Այս լաթերը յետոյ պող ջուրին մէջ թափելով կը լուան ու դարձեալ կը թակեն : Մուցայ ըսելու թէ լաթերը կաւելէ յետոյ կ'օձառեն : Այս ամէնը ընելէ յետոյ քանի մը վայրկեան կաթսային մոխրաջուրովը կ'եռացնեն, և յետոյ պողջրելով, կը քամեն : Քամելու գործողութիւնը հետեւեալ կերպով կ'ընեն. եթէ լուացուած լաթը խոշոր է, ինչպէս վերմակի երես, շապիկ, վարաթիք, այն ստեն երկու կիներ դէմ դէմի կը կենան, մին՝ մէկ ծայրէն, միւսը՝ միւս ծայրէն բռնելով՝ մէկը դէպի աջ կ'որորէ, միւսը՝ դէպի ձախ : Այս տեսակ խոշոր կտորները մէկ կին տաանձին չի կրնար քամել,

որովհետեւ, ոչ միայն կտորը մեծ է, այլ կտաւն ալ տեղական հասարակութեան ըլլալով ստուար կոյտ մը կը ձեւացնէ: Այսպէս, քամելէ յետոյ կը չորցնեն:

Զմբան եղանակին մէջ, լուացքը տաժանելի կ'ըլլայ: Երբ ձիւնը կը ծածկէ գետինները, լուացարար կիները ո՛չ առուններու եզերքները և ոչ ալ ազբիւրները կրնան երթալ, և կ'ստիպուին գորղաններու մէջ լուացք ընել: Հարսերն ու սղջիկները, յաճախ բոկոտն ազբիւրէն ջուր կը կրեն, մինչև որ ան վերջ գտնէ: Քիւղացի կին սեռին չարքաշութիւնը շատ մեծ է. բայց տւելի մեծ է այն հոգեկան վիճակը, որ այդ ամէնը իրեն տանելի ճակատագիր մը համարելով, անարտունջ ու սիրայօժար կ'ենթարկէ իր անձը՝ անոնց:

Լուացուած լաթերը չարատիւր կը փռեն: Զմեռնային եղանակին, չորացուած օրեր կը տեսնէ, բայց եթէ ստիպողական ըլլայ, ստաքցուած թոնիրներու մէջ ալ կը կտակեն, ուր քանի մը ժամէն կը չորնան:



Լ.Ջ. ԳԼՈՒԽ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԻՄԱՑԱԿԱՆ

ԵՒ

ԿՐԹԱԿԱՆ ԷՋԵՐ

Քաղաքիները կրօնատէր են : Սուրբերու և ուխտատեղիներու անուաները՝ խոր երկխոսութեամբ մը կը յիշատակեն անանք : Արքայապետերու շատութիւնը, ուխտագնացութեանց յաճախութիւնը՝ անոր կրօնասիրութիւնը կ'աւելցուցանեն : Շատ մը գիւղեր, իրենց եկեղեցիովը չեն բաւականացած, այլ, գիւղին շուրջը, անկէ դուրս նոյնիսկ, իր սահմաններուն մէջ, ունեցած են մէկէ աւելի սրբավայրեր, նաւիրական ժայռեր, ծառեր, աղբիւրներ, սրանք, քրիստոնէական շրջանին փոխանցուած, ու սուրբի մը անուանով յորջորջուած, ապրած են հաւատաւոր ժողովուրդին սրտին մէջ, և, խմբական կամ զանգուածային ուխտագնացութեանց կեդրոններ մնացած են : Սովորապէս շաքաթ երեկաները բաղմամբիւ ուխտաւորներ, մեծ մասամբ հարսեր ու աղջիկներ, հեռաւոր գիւղերէ կ'այցելեն այդ վայրերը, կը լուսեն, կ'աղօթեն, և խնդրուածքներ կը մտաուցանեն, և եթէ սրբավայրը մտաուա ունի կանգուն վիճակի մէջ, հոն գիշերելով, կիրակի առաւելան արշաւանանք կատարել կուտան քահանային, մասալ կ'ընեն, կ'եփեն, կ'ուտեն ու յետոյ իրենց գիւղերը կը դառնան :

Նշանաւոր ուխտավայրերն են՝ Քաղցրահայեաց Ա. Աստուածածնայ՝ կամ Հովառու վանք, իր մօտ գտնուող Հովառ գիւղին անուանով : Սաչայ՝ կամ Թլայ վանք իր մօտ գտնուած Թիլ կամ Թիլք գիւղին անուանով : Հայտրա, սր ապա նորագուած, և, առաջնորդ Բարթողիմէոս Պաղճեան վարդապետէն Ա. Ասրգիս(*) անուանով օծուած : Չէթ գիւղին արեւմուտքը բարձրադիր լեռան մը գագաթը կը գրտնուի, Սուրբ Մարտապ, ուր գաւառին մէջ ապրող աւանդութեան մը համաձայն, Սուրբ Մկրտիկ աղօթած, ճգնած և հոյ տառերը գտած է : Ասիկա մտանաւոր մտաուա չունի, իր բարձրաբերձ գագաթին վրայ իրարու կից երկու երեք քարակիր սենեակներու կիսուեր հետքերը կանգուն կը մնան, և, զայդ մը մէջէմէջ վիմափոր սենեակ, լե-

(*) Սրբավայրին ժամկոչին անուանով, որուն գերեզմանը կայ մասունքի ետեր :

րան գազաթէն՝ անոր հիւսիսային արեւմտեան ուղղածից կողին վը-
րայ, 7-8 նեղ սատիճաննոց անդուխով մը մասնակի: Այս սանդու-
խին գլուխը կը գտնուի մէկուկէս երկու մէթր բարձրութեամբ
և մէկ մէթրէն աւելի լայնութեամբ բեւեռագիր արձանագրու-
թիւն մը:

Ամառնային եղանակին, գաւառին ամէն կողմերէն խուռներամ
ուխտի կ'երթան այդ վանքերը կամ սրբավայրերը, իւրաքանչիւ-
րին՝ իր անուան սօնակատարութեան օրը, ըստ եկեղեցական սօնա-
կարգութեան: Ասոնցմէ Հայպատ մասնաւոր օր չունի, որովհետեւ,
ծանօթ սուրբերու շարքին մէջ «Հայպատ» անունը գոյութիւն չու-
նի, բայց ամէն շաբաթ, երեկոյին արեւը մարը մանկէն յետոյ ուխ-
տաւորներու խումբեր լեւը կը բարձրանան և հան կը գիշերեն, վե-
րեկը կէս ժամէն աւելի կը աւելէ: Ձէթ գիւղը, 110 տուն զուս
հայ բնակչութեամբ, բացի իր Ս. Թորոս քարուկիր ու կամարաւոր
եկեղեցիէն, հինգ սրբավայրեր եւս ունի. Սուրբ Սաշ՝ գիւղին հա-
րուային ծայրը՝ անկէ 100 մէթր հեռաւորութեամբ մը անջատուած,
Հայպրաքոր, «Հայպատի քոյրը», Արեւմտեան մուտքը, Հայպատի
ձամբուն օտքը, Թուխ մանուկ և ուրիշ մը արեւելեան կողմը և
Հայպատ: Ասոնցմէ ոմանք քանդուած հինուուրց եկեղեցիներու
մնացորդներ եղած են, ինչպէս գիւղացիներու պեղումներէն երեւան
եկող հիմերէն յայտնի եղած է:

Այս սրբավայրերէն իւրաքանչիւրին մասնաւոր զօրութիւններ
կը վերագրուին, ինչպէս Հայպատը՝ ամուլ կիներու, և չափանաս
աղջիկներու բաղձանքները կատարող սուրբ մը ձանչցուած է:

Գիւղացիներու ջերմեռանդութիւնը ազգած է նաեւ քուրդերու
և թուրքերու վրայ: Կը պատմեն թէ՛ Բալուի Նէճիպ փաշայի կինը
սարիներէ ի վեր ամուլ կը մնայ. զուակ ունենալու համար ուխ-
տագնացութիւն մը կը կատարէ գէպի Հայպատ, ծնրադիր մինչեւ
լերան գազաթը բարձրանալով: Այս ուխտագնացութենէն յետոյ
երկու արու գաւակներ կ'ունենայ յաջորդաբար, Իսլրահիմ և Բիւշտի
պէյեր անուններով, որոնք, սպա, Բալուի ամբողջ բնակչութեան,
անխտիր՝ հայու, քուրդի, թուրքի և նոյնիսկ կաւապարութեան շա-
հերուն պատուհասներ դարձան մինչեւ 1914 թուականը:

Բալուի հայ գիւղացին, իր այս կրօնասիրութեամբ եկեղեցիին
հետ այնպէս մը նայնացած է որ, անկէ դուրս ո՛չ ոք, որ քահանայ
չէ, ոչ մէկ սղօթարան, որ եկեղեցիի չի նմանիր, անզօր կը մնայ
զինքը իր դարաւոր դաւանութենէն բաժնելու, ոչ մէկ յորանուա-
նական քարոզութիւն կրնայ խախտել իր անդրդուելի հաւատքը
զոր այդ գիւղացին ունի իր սուրբին զօրութեան ու անոր բարեխօ-
սութեան վրայ, ո՛չ ոք կրնար զայն հեռացնել իր քարերէն, նուի-

բական ծառերէն, ու կենդանաբար սղբիւրներէն, որոնք զինքը անխորտակելի ցանցի մը մէջ կը պահէին:

Տալով այսպէս անոր հաւատաւորութեան նկարագիրը, պիտի կրնամ ըսել թէ՛ պատճառներէն մին է աս, որով ո՛չ մէկ յորանուանութիւն յաջողած չէ այդ գիւղերէն ներս թափանցել՝ անոր նոր քրիստոնէութիւն մը ստրկեցնելու... զայն ճշմարիտ Աստուծապաշտութեան դարձնելու համար...:

Պարտի միտիոն սրտութեան Խարբերդի ճիւղը շատ ճիգեր թափած է, քարոզիչներ զրկած, ճրիարար սուրբ գիրքեր շուայլօրէն բաշխած, որպէսզի, այդ գիւղերուն մէջ ալ բազմաթիւ կեղեցիներ հաստատէ: Բայց հայ գիւղացին կը նկատէր որ, նախ, անոնց կրօնական երգերը ո՛չ մէկ կերպով իր շարականներուն կը նմանէին, անոնց կրօնաբանութիւնը յուսի ազդեցութիւն կ'ընէր իր գեղարուեստական ճաշակին վրայ. անոնց քարոզիչները՝ գիւղի Կրպոյէն, Մրասոյէն, Սրգոյէն սարբերութիւն չունէին, ու նոյնիսկ Աւետարանի, մանաւանդ Նարեկի գրաբար ընթերցումը չէին կրնար ընել. հետեւաբար հոգեկան շատ բնական անտարբերութիւն մը, նոյնիսկ արհամարհանք մը ունեցաւ միշտ անոնց հանդէպ, որովհետեւ չէր կրնար հաւատալ թէ՛ Աստուծոյ Աւետարանը այնքան թեթեւօրէն փողոցներու անկիւնը պիտի քարոզուէր, փոխանակ սրբազայրերէն ներս, ու Աստուծոյ մարդոց միջոցաւ քարոզուելու: Գործը այսքանով վերջ չի գտներ: Երբ, այդ քարոզիչները, գիւղացիներէն աւելի ուամիկ, ուղղակի դէմ ելան սուրբերու գոյութեան, անոնց բարեխօսութեան, յայտնապէս արհամարհեցին՝ շատ հասարակ մարդերու կարգը դասելով Ս. Գրիգոր Լուսաւորիչը, Ս. Մեսրոպը, ուրացան Հաղորդութիւնը, ծաղրեցին Պատարագը, այն ասան անա գիւղացին երես դարձուց բալտրովին այդ նորագոյն փրկիչներէն, ու, երբ, փողոցին մէկ անկիւնը պատին կրթնած քանի մը միտմիտներ հազիւ իրենց շուրջը հաւաքած կ'սկսէին Աւետարան կարդալու, վերէն, ցաւիքին եղերքէն, պատանիներ անոնց վրայ հող ու ջուր կը թափէին, և, այս կերպով, հակառակ քարոզիչներու յամառութեան, — որովհետեւ Քրիստոսի համար կը նախատուէին... — գիւղը անթափանցելի կը մնար: Եւ հնձողները խորապէս կ'ըմբռնէին թէ սխալ դաշա մտած էին:

Միւս կողմէն, այն ժամանակները գիւղերու մէջ կ'ապրէին կրօնական խնդիրներու և վարդապետութեանց հմուտ մատուցողներ ալ, որոնք միշտ Պարտի աւաքեալներուն դէմ կ'ելնէին, վիճարանութիւններով: Մատուցողին այս շարքին ոչքառու դէմքերէն էին՝ Անդրէաս Պատուելի Կատարիկեան կամ Վարժապետեան, Տէրոյեան Աստուր Պատուելի (հայ գիւղացին սովորապէս վարժապետ անուանը կը գործածէր ուսուցիչներու համար, յետոյ պատուելի բառը գոր-

ծածած է հաղուադիպօրէն), Պ. Յակոբ Սիմօնեան տալս տնօրէն՝ Սար-
բերդի և Մէլրէի կեդր. վարժարաններուն, Օհան Վարժապետ, Համ-
բարձուս կարուկեան՝ դրող ու երգիծախօս, Յովհաննէս Մանուէլեան՝
ուսուցիչ և գրող, Յակոբ վարժապետ Վարժապետեան, և դեռ ու-
րիշներ, ասանցմէ զասա ալ երկրորդական գիծի վրայ դանուող աւելի
ուսուարաթիւ մասւորականութիւն մը։ Ասոնք ճշմարիտ պատմէշ մը
կը կողմէին գիւղացիին շուրջը զայն պաշտպանելով յարանուանու-
թեանց հետամուտութիւններուն գէմ։

Պարսի միսիօնարութիւնը, ի գին նիւթական շատ զսնդութիւն-
ներու յաջողեցաւ քաղաքին մէջ միայն, 20-25 տունէ բաղկացեալ
համայնք մը կողմէլու, որուն վրայ աւելցաւ, 1896ին, նպատաներու
բաշխումի շրջանին, ընտանիք մ'ալ, որ սակայն, 1897, երբ նպաստ
բաշխող գերման միսիօնարութիւնը հեւացաւ, ու նպատար դադրե-
ցաւ, այն տանն հրամարեցաւ բողոքականութենէ...

Կրօնական այս վիճակին ստատրած է նաեւ գիւղական ընտա-
նիքներու մէջ աիրող նահապետական դրութիւնը։ Ընտանիքի ո՛րեւէ
անդամ չէր կրնար՝ աւանց իր տան մեծին հաւանութեան, դաւանա-
կան փոփոխութեան գիւմել։ Ընտանիքի մեծերը տարէց ըլլալով,
տարիներէ ի վեր իրենց համոզումին մէջ անդառնալիօրէն ամբա-
պնդում, գիւրութեամբ չէին կրնար տարբեր կողմ թեքումներ ու-
նենալ։ Իրենց հոգեբանական վիճակը տարբեր չէր հասարակ գիւ-
ղացիներու վիճակէն. ո՛վ կ'ըլլար Սարբերդէն եկող եղբայր Մինաս
մը, կամ Մըտաբը Հոյլըր մը, որուն լեզուին վրայ թաւալող հայ
բառերը գլխիվար կը շրջուէին, որուն շեշար ծիծաղելի էր իրեն
համար, որ պիտի քարոզէր իրեն. նաեւ անպաճոյճ աղօթարաններ,
ինչպէս ըսի, չէին կրնար քանդել այն իմացական հոյակապ շէնքը,
որ կառուցուած էր նիւթական պատկառազող շէնքերու ետին Տան
նահապետը, որուն մէկ հրամանէն կոխում ունէին տան բոլոր ան-
գամները, երկամութիւն իսկ չունեցաւ, պահ մը, իր հաւատքին՝ իր
դաւանութեան մէջ գեղեւելու։

Ես չեմ խօսիր գաթուղիկ եկեղեցւոյ մասին, որովհետեւ, անոր
կողմէն ոչ մէկ փորձ եղած է մեր գիւղերուն մէջ տարբեր դաւա-
նութիւն տարածելու։ Անշուշտ, մարդորսութեան այս եղանակը
անցեալին կը պատկանի, յետոյ սակայն Սարբերդ եկան ճշմարիտ
միսիօնարներ ալ, որոնք յաճախ քարոզութիւններով հայ գիւղացիին
հասկցուցին թէ իրենց սիրտը անոր սրտին շատ մօտիկ կը տրուիէր.
եղան անոնցմէ ոմանք, որոնք հայ գիւղացին քաջայերեցին, որպէսզի
աւելի փոքրի իր հաւատաւորութեան ձեւին, թէեւ միսիօնարական
կեդրոնը անոնց վրայ գորովալից աչքով չնայեցաւ. սակայն հայ գիւ-
ղացին զանոնք հայ նկատեց ու զանոնք սրտով սիրեց։

Ի՞նչ եղած է Բալուի կրթական վիճակը :

Սօսել է առաջ, մասնաւորապէս, Բալուի մասաւորականութեան մասին, նախ հարկ է նկատի ունենալ գաւառին կրթական վիճակը : Մինչեւ 1870 թուականը, Բալուի քաղաքէն դատ, գիւղերու մեծ մասը իր վարժարաններն ունեցած է : Ոմանք՝ եկեղեցիական կից մասնաւոր շէնք մը, ոմանք ալ նոյնիսկ եկեղեցին, կամ անոր բակը, կամ հազուադէպ պարագաներու սակ ալ, ախոռներու սափուները իբրեւ վարժարան գործածած են, ուր, Հոկտեմբերէն մինչեւ Ապրիլ ամիսը, գիւղին մանուկները և մինչեւ 15-16 տարեկան տղաքները կը յոճախեն ելեր, գիւղին քահանային կամ աշխարհական վարժապետի մը խնամքին տակ՝ Քերական, Հեգարան, Սաղմոս, Նարեկ, Ջէն Հոգեւոր, Կրօնագիտութիւն, Հայիւ (Թաւաբանութիւն) և Երաժշտութիւն ուսանելու : Գտներու ժամանակացոյց չկար ընդհանրապէս, վարժապետին կամքէն կախում ունէր դասապահին ճշգումը, տեւողութիւնը և օրը . ժամացոյցը՝ արեւը, ծառերուն ստուերը, նախընդին դաշտ մեկնիլը կամ դաշտէն դառնալը էին :

Աշակերտները գետինը տապասաներու վրայ կը նստէին կարգաւ, և իրենց արեխները կամ եմենիները դաւիթը կը շարէին : Գաւիթ ըստածը բուն վարժարանէն բազրիքով կը պատուէր : Հոն կը դնէին նստել, ձմրան եղանակին ջուրին սափորները : Ուսուցչին տեղը մէկ մէկուկէս քառակուսի մէթը տարածութեամբ և գետնէն 20 սանդիմէթը բարձրութեամբ գահաւանդ մըն էր, ուր փոխաթ մը, ասոր վրայ տապասո մը փռուած, և կրթնելու համար ալ բարձ մը դրուած կ'ըլլային : Հոն կը նստէր վարժապետը, իր մէկ կողմը կը գտնուէր ծխնելոյղով օձախը ուր, ձմեռը կրակ կը վառէին, ջեռուցման համար : Վառքը աշակերտները կը հայթայթէին կարգաւ, իւրաքանչիւրը իր տունէն մէկ երկու խուրձակ, քանի մը ծեփ, քանի մը քարկշգուր, ճղեր եւն բերելով :

Ուսուցիչը, իբրեւ տարեկան վարձք, 600-1000 կամ 1500 զրշ . կ'առնէր, վճարումը՝ ընդհանրապէս ցորենով կ'ըլլար, գրաւոր պայմանագրութիւն չի կար : Վարժապետը, սակայն, ուրիշ առիթներով ալ կը վարձատրուէր . տանախկինները երբ հաց եփէին, վարժապետին մէկ երկու հատ կը զրկէին : Շատ անգամ՝ սեր, կարագ, մեղր և խաւուրմայ ինչպէս նստել օղի կը զրկէին որպէսզի իրենց գաւակին երկու աչքով նայի... : Վարժապետը փոքրիկ դուռով պատիհոն (պահարան, տօլապ) մը ունէր իր մօտը, ուր կը դնէր մասնաւորապէս օղիին շիշը (1) : Գիւղացիին համար՝ վարժապետին ներելի էր խմել,

(1) Օղիին շիշը, ընդհանրապէս ետթուղ կ'ըսուէր, ասիկա հողե շիւնուած եւ քարմարցանկով օձուած, ոսպնեակի մը ձեւն ունի, իր բերանը եզերքին վրան կը զսնուի. կարելի է հաղաղակ անուանել զայն :

եթէ չի խոսէր, կը հարկադրէին զինքը որ խոսէր մանաւանդ կոչունք-
ներու տակն:

Վարժարանի օրէնքները ստուար թիւ մը չէին կազմեր: Լուս-
թիւն, աչքերը դրփին էջին վրայ յաւած պահել, կէս օրին անպայ-
ման քնանալ, և, առանց հրամանի դուրս չելնել: Սիւնէն վար միշտ
պնակիտ մը կախուած կ'ըլլար, սասոր մէկ կողմը՝ դիտագիր խոշոր
Ք տառ մը դրուած էր, որ կը նշանակէր «գնո՛ւ», իսկ միւս կողմը՝
Մ տառը, որ կը նշանակէր «մի՛ երթար»: Երբ աշակերտ մը պէտքի
համար դուրս երթալ ուզէր, վարժապետէն հրաման կամ արտօնու-
թիւն ստանալու պէտք չունէր, պնակիտին Մ տառը կը դարձնէր ա-
շակերտներուն կողմը ու կ'երթար. վերագարծին, ակզք նստելէ ա-
ռաջ, պարտաւոր էր պնակիտին Մը սիւնին կողմը դարձնելու, իսկ
Քը՝ աշակերտներուն կողմը: Որքան տտեն որ պնակիտին Մը աշա-
կերտներուն կողմը դարձած գտնուէր, ո՛չ ոք կրնար դուրս ելնել
վարժարանէն, որքան ալ դուրս ելնելը ստիպողական ըլլար:

Վարժարանին պատիժները հետեւեալներն էին. ոտքի վրայ կե-
ցընել ծանր սաւորկայ մը, «Յայամաւուրք»ի պէս մեծ գիրք մը տա-
լով ձեռքը, յանցաւորը դայն պարտաւոր էր բարձր բռնելու: Ծեծ՝
ձեռքին վրայ, ճկուն մուկերով, և փալախչայ, որ մէկ մէթը երկայ-
նութեամբ յղկուած դիմացկուն և հասակեկ փայտ մըն էր: Իր վրան
իրարմէ որոշ հեռաւորութեամբ երկու ծակեր ունէր, որոնց միջոցաւ
դիմացկուն չուանի մը երկու ծայրերը փայտին հետ կը հանկուրց-
ուին: Պատժապարտը կրնակի վրայ կը պտուկեցնէին, անոր երկու
ոտքերը քովէ քով բերելով և անցնելով չուանէն ներս կը պրկէին
ամբողջս, երկու աշակերտներ պրկող դաւաղանին երկու ծայրերէն
բռնելով վեր կը բարձրացնէին, այն ատեն ուսուցիչը, երկայն ու
ճկուն մուկերով, անոր ոտքերուն ներքեւին, ուզած թիւով ու թա-
փով հարուածներ կը փակցնէր: Փալախչան միշտ սիւնէն կախուած
կը մնար աշակերտներուն առջեւ, և կարգապահութիւնն ու լռութիւնը
անթերի կ'ըլլային...:

Կը պատահէր սակայն որ ուսուցիչն ալ գիւղացիներէն ծեծ ու-
տէր: Ուստի ան, յաճախ կ'զգուշանար ազդեցիկներու զաւակները
ծանր պատիժի ենթարկելու...:

Ամբան կէսօրները, այն վարժարանները, որոնք ամառներն ալ
բաց մնալ կը շարունակեն, բոլոր աշակերտները՝ պարտաւոր էին
կարգու պտուկելու և քնանալու, գոնէ ժամու մը չափ: Ուսուցիչը
կամ վարժապետը շարքերուն մէջտեղէն գաւաղանը ձեռքը շարու-
նակ կ'երթար ու կը դառնար, եթէ անոնցմէ մէկուն աչքերը բաց
գտնէր, անոր ոտքերուն շրա՛խ մը կը փակցնէր, պէտք էր որ, հա-
կառակ պարտադային աչքերը փակելով քնանալ կեղծէր...: Երբ ժա-

մանակը հասած նկատէր վարժապետը՝ կը հրամայէր, ու ամէնը մէկէն ոտքի կ'ելնէին, կարգաւ, աղբււրը կ'երթային, կը լուացուէին ու յետոյ վարժարան կը դառնային դասերով պարտաւելու համար, մինչեւ երեկոյ, երբ եկեղեցւոյ զանգակը կամ կոչնակը հնչէր, այն ատեն, դարձեալ կարգաւ, եկեղեցի կ'իջնէին, և ժամերգութեանց աւարտումէն յետոյ իրենց տուները կը դռուէին: Միւս, այսինքն սերտողութեանց պահերուն ուսուցիչը հսկող մը նշանակելով աշակերտներուն վրայ՝ ինք ալ կը քննարար տալտալին վրայ երկընցած...:

Վարժարանները քննութիւններ ալ ունէին: Գիւղին մեծերը, կարգաւ գիտցող կամ ոչ, կիրակի օր մը, վարժարան կը հաւաքուէին, աշակերտները վարժապետին պատուէրին համաձայն, ներկա կ'ըլլային հոն. այդ օրը գիւղին համար հանդիսութեան մեծ օր մը կ'ըլլար: Քննութիւնները կ'սկսէին:

Ներկաներէն մին առաջին աշակերտին կը հարցնէր...

— Հաւատքով ի՞նչ ես.

— Քրիստոնեայ եմ, կը պատասխանէր:

— Քրիստոնեայ ի՞նչ ըսել է, կը հարցնէր ուրիշ մը.

— Քրիստոսի հետեւող և անոր հաւատացող, կը պատասխանէր երկրորդ աշակերտը:

— Աստուծոյ անունն ի՞նչ է, կը հարցնէ ուրիշ մը.

— Որ էն, կը պատասխանէ երրորդ մը:

— Ի՞նչէն գիտես, չորրորդ մը կը հարցնէ.

— Որովհետեւ, Աստուած ինքը Մովսէս մարգարէին բերնով ըսած է թէ, ես եմ Աստուած Որ էն, կը պատասխանէ:

— Աստուծոյ ուրիշ անուններ ալ գիտե՞ս...

— Այո, Չոր Օրինակ, Տէր, Ամենակալ, Եւոյն... կը պատասխանէր աշխոյժ կերպով, և այս պատասխանը տաւած ատեն ազան աջնապէս կը կարծէր թէ, Այո, Չոր Օրինակ, Տէր, Ամենակալ, Եւոյն բառերը բոլորն ալ Աստուծոյ անուններն են...

Հուսկ ուրեմն քննութիւնը վերջ կը գանէր, և գիւղացիներէն մեծը, կ'ըսէր. «Վարժապետ, ըսը՝ օր աղաքը երգ մի ըսն...», վարժապետը հրաման կ'ընէր, և աղգային երգերէն երգ մը երգել տալով քննութիւնները կը փակուէին մինչեւ կէսօր, եթէ աւաւաւուն սկսած ըլլային:

Այսու հանդերձ, գիւղացին, երբ առաջին անգամ իր զուակը դպրոց կը տանէր, վարժապետին կը յանձնէր հետեւեալ բանաձեւով. «Վարժապետ, խուրպան, ա՛լ ըս աղան իմս չը, քուզիք ը. գո՛ւն գիտես, միւր քիզի, ոսկորը ինձի...»:

Փոքրիկը իրեն սահմանաւած անկիւնը սգլտած, քերական մը ձեւ-

քը, ստրատիանայր, հեղ մը կը նայի այն սեւ խաչին, որ տառջին էջին ճակատը կը գրաւէ, և որուն ոտքը ետեւէ ետեւ կը շարուէին, ա, բ, գ, տակդժուածային նշանները մինչեւ և, օ, ֆ, ու հեղ մ'ալ կը նայի սեւուլիկ յօնքերուն տակէն երկայն մուլին, որ կը ճօճի վարժապետին ձեռքին մէջ...

Աշակերտները կ'ուսնենային կտաւէ կարուած քառակուսի պայուսակ մը, զոր կապով մը՝ ձախ ուսէն աջ անութին ներքեւ կը կրէին. անոր մէջ կը գնէին իրենց Քերականը կամ Հեգարանը: Իսկ Տարերք Քերականութեան և Ձէն Հոգեւորին պայուսակները խոշոր կ'ըլլային: Կաղամար, մերսո՛ւ, գրի՛չ... օ՛հ ասոնք հազուագիւտ էին. ես կը յիշեմ մեր դասընկերներէն մէկուն հայրը Պոլսէն կաղամար մը և գրիչ մը զրկած էր. կաղամար ըսուածը դեղարանի պարզ փոքրիկ շիշ մը, որուն մէջ աչքի ջուր կը լեցուի: Ամէնքս ալ կը բաղձայինք անկէ ունենալ, և ունեցողը կտաւէ պարկիկի մը մէջ կը պահէր, և ձեռքէ չհանելու համար ամէն հոգածութիւն չէր խնայեր: Հապա եթէ ճիճեան գրչածայրը կտարէ՞ր... Ի՛նչ մեծ աղէտ... ե՛րբ պիտի կրնար հեղ մ'ալ զայն ունենալ... Իրաւ է թէ քաղաքը կը ծախուէր, բայց այդ թուականներուն, երբ գիւղացին փոխանակութեամբ կ'ապրէր, շարտիճներով աամնոց մը իսկ չէր ունենար գրպանը. և փոխանակութեամբ գնելու համար երկու երեք գրչածայրեր մէկ չափ ցորեն պիտի արժէին իրեն վրայ շուրջ 5 զրշ. կամ աւելի քան մէկ Քրանք:

Մանիչակագոյն կամ մոռ մեղան ալ հազուագիւտ էր: Երբեմն չափանոս սղաքներ տիկնուկ կամ հարսնուկ ըսուած ծաղիկը կ'եւաացնէին և հետը խառնելով զան ըսուած հանքային նիւթը կապոյտ գոյնով մեղան մը կը շինէին. տախա սակայն առօրեայ գործածութեանց չէր բուեր:

Սակայն, 1880էն սկսեալ, վարժարաններէն ներս բարեշրջումը կ'սկսի, և օրէ օր զգալի կը դառնայ գլխաւոր գիւղերուն ու քաղաքին մէջ: Կը շինուին գրասեղաններ, կը կազմուին դասաւանդութեանց ժամանակացոյցեր, և գիւղերու բողոքամարդութեան համիմատ, մէկէ աւելի ուսուցիչներ կը պաշտօնավարեն միեւնոյն վարժարանին մէջ, կ'ուսնենան նաեւ ողջկանց վարժարան, վարժուհիներով կաւալարուած: Հարկէ ըսել թէ իգական սեռի դաստիարակութիւնը ուշ սկսած է Բալուի մէջ:

1880 թուականէն առջին, քաղաքին, Խոշմաթ և Հախա գիւղերու վարժարանները Հայոց Միացեալ Ընկերութեան ղեկավարութեան կը յանձնուին. և կրթական նոր ձեւ և նոր ոգեւորութիւն մը կ'սկսի: Ուրիշ գիւղեր ալ հետզհետէ անոնց օրինակին հետեւելու կը պատրաստուին, երբ 1895 թուականը այդ գնացքը կը կա-

սեցնէ՝ 1888 թուականին, Պոլսոյ Պէշիկթաշ արուարձանին մէջ կը կազմուի 30-40 սուներէ բաղկացեալ Սզամ գիւղացի պանդուխտներու միջեւ ընկերութիւն մը, ղեկավարութեամբ Մարտիրոս Չանիկեանի անձնուէր աշխատութիւններուն: Ասիկա իր նիւթական օժանդակութեամբ կ'ապահովէ գիւղին վարժարանին 40-50 մանուկներու դաստիարակութիւնը, և 1895էն յետոյ, Պատրիարքարանի միջոցաւ, լուծուած այդ ընկերութեան պատրաստ դրամը պարբերապէս նոյն վարժարանին կը զրկուի, հանգուցեալ Օրմանեան պատրիարքի հոգածութեան շնորհիւ:

1896ի գարունը քաղաքացիները, թէեւ թալանուած, և դեռ անապահովութեան տարտախներուն սակ, Ս. Էնուուորիչ եկեղեցւոյ վարժարանը վերաբանալու փորձ կ'ընեն: Ուսուցիչ չէր սրահսեր, և Չէթ գիւղացի վկայեալ ուսուցչի մը կը յանձնեն զոյն վերակազմելու գործը: Երբ սուսջին անգամ վարժարանին դռնէն ներս կը մտնեն ուսուցիչ ու աշակերտ, վարժարանին պատերուն վրայ կնատրուածներու արեան հետքերը դեռ անջինջ կը դանեն:

Ասկէ տարի մը յետոյ, միւս թաղի Ս. Ատուածածին եկեղեցւոյ վարժարանն ալ կը վերաբացուի. իսկ երկու տարի յետոյ՝ Հափաւ Չէթ, Խոչմաթ, Սզամ, Սագրաթ, Ենաղ և դեռ ուրիշ գիւղերու մէջ ալ նոյն շարժումը կ'սկսի, և մինչեւ 1911 թուականը, 1895ի աղէտներուն հետեւան քները կ'անհետանան բոլորովին: Ոստում մըն էր կատարուած վերանորոգութեան, որ տեղի աւելցուաւ շուրջ տասնեւիկոյ տարուան մէջ. և Օամ. Բ. Սահմանադրութեան 4-5 տարիներու շրջանին, գիւղերը կերպարանափոխուեցան, ինչպէս անտեսապէս, նոյնպէս ալ կրթական տեսակէտով:

Բաւական սեպեւով Բալու կրթական գործին նկատմամբ այնքան մը ծանօթութիւնը, կը դառնամ հեղ մ'ալ, անոր մտաւորականութեան, որ ուշագրաւ եղած է, սակի ճիշդը, շրջակայ շատ մը գաւառակներուն մէջ, սուսջնորդողի դեր մ'աւելցած է 1860 թուականներէն սկսեալ, թերեւս սակի հեռուոր անցեալէն ի վեր:

Նախորդ հաստատմանը մէջ, Բալուի գիւղացիներուն կրօնասիրութեան մասին գրելու սովորով, յիշատակութիւնն ըրի նուեւ, գաւառին մէջ իբրեւ մտաւորական մեծ համբաւ տարածալ քանի մը անձերու անունները, հեղ մ'ալ պիտի ուզէի ուղղակի անդրադառնալ այդ շարքին հասկցներու համար թէ՛ մտաւորական բնուրինչ տարողութեամբ կիրարկուած է յանձին այդ գիւղացիներուն ինչպէս կը պատշաճի անանց շալուարին ու արեւին . . . զի անանք մեծ մասամբ գիւղէն անբաժան մնացած, արջաքին տարածալ իրենց գիւղացի անուս եղբայրներէն չեն զանազանուիր. յոճաթ գոչաթ, պարաէզի, այգիի աշխատանքները բաժնած են և իրենց դերքուկ և

րեւոյթն ու կոչկոռոտած անդամները մտաւոյականութեան ոչ մէկ յայտարար նշան չէին մասնելը:

Անդրէաս Վարժապետ կատարիկեան, մէկն էր գաւառին արժանաւոր զաւակներէն. կարճահասակ, գեղի տարազով տպրող, սակաւախօս, նաւազ ժպտողէմ, թաւ յօնքերու առկ ծածկուած խոհուն աչքերով, սրանք յաճախ դէպի վա՛ր կը հակէին, քան վեր. թողնուած արժանիք մըն էր. Ինք եթէ յիշողութիւնս զիս չվրիպեցներ, արհեստով առաջագործ մըն էր, և ի Պոլիս իր պանդխտութեանց շրջանին, այդ արհեստով ապրած է: Իր զիւլին մէջ ուսուցչութիւն ալ ըրած:

1897 թուականին, որպէս քահանայ Սարգերդի Ս. Յակոբ թաղին, Թլկասինցիի վարժարանին կրօնի ուսուցիչ կարգուած էի, միանգամայն կը հետեւէի Հայերէնի և Գիտութեանց դասաւանդութիւններուն:

Գիտութեանց ուսուցիչը խնդրեց ինձմէ գրորար պարբերութեան մը քերականական վերլուծութիւնը.

— Տէ՛ր հայր ըսաւ ան, խնդրեմ բացատրեցէք ինձի թէ «Տէ՛ր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է, և փառքդ՝ անհասանելի, որոյ սղորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ՝ անբաւ, դո՛ւ ըսաւ առատ մարգարտութեանդ քո...» պարբերութեան մէջ, քերականօրէն ի՞նչպէս կը բացատրէք «որոյ կարողութիւնդ» ի, «դ» տառը ի՞նչու, ի՞նչ կանոնով դրուած է գոյականին վրայ, ևս կը նկատեմ թէ՛ ապագրական սխալ մ'ըլլալու է...»

Ես, նոր սկսած էի գրորարի հետեւելու, բնականաբար պիտի չկրնայի գոհացում տալ այս հարցումին. ուստի Թլկասինցիին դիմեցիս Այս վերջինը՝ «տա ճարտասանական ոճով յօրինուած նախադասութիւն մըն է» և ոչ աւելի սրտասախանեց: Ես տարակոյսի տակ մնացի:

Նոյն օրը կէսօրին, դիմեցի Անդրէաս Վարժապետին, որ այդ օրերուն Սարգերդ կը գանուէր: Պարզեցի խնդիրը անոր և լուծումը խնդրեցի: Անդրէաս Վարժապետ գլուխը վեր առաւ և առանց սեւէ վարանումի, կարծես թէ արդէն պատրաստուած ըլլար այդ հարցումին պատասխանելու, պայծառ յիշողութեամբ մը և նաւրբ ժպտով մը ըսաւ. «Տէ՛ր հայր, Հայր Բողոքատունի Տարերք Քերականութեան մէջ — յեշելով նաեւ էջը — «որ» յարաբերական դերանուն մասին կանոն մը կայ, ըստ որում, ան յօդ չառնել, բայց իր յօդը իր գոյականին կուտայ: Արդ, փոխանակ՝ «Տէ՛ր Աստուած մեր, որոյ կարողութիւն . . . » ըսելու, «դ» դիմորոշ յօդը տալով իր գոյականին կազմած է՝ «Տէ՛ր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին . . . » նախադասութիւնը: Ուրիշ կանոն մ'ալ բացատրեց՝ որ կը վերաբերի

որ յար սրերականին՝ երեք գէժքերու տեղ՝ կիրառու թեան :

Շնորհակալութեամբ բաժնուեցայ իրմէ և անկէ ուղղակի վարժարան վազեցի...: Գտայ Թլկատինցին, որ կը գտնուէր սուսուցչական խումբի հետ, անոր հաղորդեցի Անդրէաս Վարժապետի բացատրութիւնը: Թլկատինցին իր հիացումը յայտնեց անոր մասին ըսելով «Վայ քեռքի . . . ի՞նչպէս միաքը պահեր է այնպիսի ժամանակի մը մէջ, ուր Տարերք Քերականութիւնն անունն անգամ մուցուեր է . . .»

Անդրէաս Վարժապետ այդ թուականին արդէն 65 տարեկան էր :

Աշխարհարար լեզուով իր գրելու կարողութիւնն ալ տկար չէր: Կը յիշեմ, 1883 թուականներուն, ան «Արեւիք»-ի միջոցաւ Երաժշտական Նիկողոս Թաշճեանի շնորհակալութեան գիր մը ուղղած էր, որ գեղեցիկ կերպով ու հասուն բացատրութիւններով խմբագրուած էր :

Ուրիշ տարէց մտաւորական մ'ալ, Վարդան Վարժապետ կամ մեծ Վարժապետ անունով ծանօթ, կ'ապրէր Սադրաթ գիւղին մէջ: Իմ մանկութեանս օրերուն արդէն խոր ծերութեան մէջ էր և երբ էս աչակէրս կ'ուրայ իր որդւոյն Յակոբ Վարժապետի, հայրը՝ Վարդան արդէն մեռած էր :

Յակոբ Վարժապետ, ինքն ալ իր հօրը, Մեծ Վարժապետին աշակերտած է: Բազմակողմանի միաք մըն էր աս, ոչ միայն լաւ գրարար գիտէր, այլ և մայրենի լեզուին շատ հմուտ էր հասել թուրքերէն լեզուին և օրէնագիտութեան :

Ուշիմ, հանդարտ ու զուարթ խառնուածքով, բարձրահասակ և նուրբ կազմով անձ մըն էր: Իր քաղցր ընտանրութեամբն ու աչքառու կարողութեամբը մեծ ազդեցութիւն ունեցաւ կառավարական շրջանակներուն վրայ: Գոտական խնդիրներու համար ամէն գիւղէ իրեն կը գիմէին. զանոնք անշահախնդիր յօժարութեամբ կ'ընդունէր և անոնց կ'օգնէր իր խորհուրդներովը, ցուցմունքներովն ու միջամտութիւններովը:

Իպրահիմ պէյ, որդին Նէճիպ փաշային, որ այն ժամանակները ամբողջ Բալուի իշխող միակ սյժն էր, զայն իրեն ամենօրեայ խորհրդակիցն ըրած էր: Յակոբ Վարժապետ շատ հեղ առիթը կ'օգտագործէր ի նպաստ գիւղացիներուն միջամտութիւններ ընելով:

Գիրքը, զոր ամէնէն աւելի կը սիրէր, Եզնիկի Եղծ Աղանդոյն էր :

Վերջին տարիները ուսուցչական ապարէզէն քաշուելով՝ դատական գործերով կը պարապէր: 1897ին իր մահկանացուն կնքեց Սադրաթի մէջ: Իր գիւղացիները իբրև երախտագիտական արտասոյսութիւնանոր մատուցած անշահախնդիր ծառայութեան համար, գիւղին վարժարանին մէկ անկիւնը թաղեցին, գերեզմանաքարին վրայ՝ տապանազր-

աւած ձուածեւ մարմարիանի տախտակ մ'ազուցանելով: Ասիկա
գիւղացիներուն համար յարգանքի և գնահատութեան բացառիկ ձեւ
մըն է, որովհետեւ ոչ մէկ գիւղի եկեղեցիին կամ դպրոցին բակե-
րուն մէջ ննջեցեալ թաղուած չէ բնաւ:

Պօլոս Վարդապետ Նաթանեան, Բալուի Առաջնորդական փոխա-
նորդը, Յակոբ Վարժապետի մասին, իր Արասը Հայաստանի գրքոյ-
կին մէջ աննպաստ նկատողութիւններ ըրած է. այդ նկատողութիւն-
ները պայքարներէ առաջ եկած թիւրխմացութեանց արդիւնք են:
Յեանագոյն՝ քաղաքական շատ աւելի պղտոր ժամանակներու մէջ,
Յակոբ Վարժապետ, հայրենասէր մը մնացած է, բայց՝ լս'ւ հայրենա-
սէր մը:

Թըրխէ կամ Թրխէ գիւղին մէջ ապրած է, 1840 թուականնե-
րուն կամ աւելի առաջ, Մարգար Մարգարեան տնուն վարժապետ
մըն ալ, որուն գիրքերն ու ձեռագիրներն միայն կրցած եմ տեսնել,
առանց միջոց ունենալու անոնց արժէքին մասին գաղափար մը
կազմելու: Իր թուը նոյնպէս Մարգար Մարգարեան Խարբերդի
Սինամուա թաղի վարժարանին մէջ պաշտօն վարած է և 1895ի դէպ-
քերուն սպաննուած:

Անդրէաս, Վարդան և Յակոբ վարժապետներու գծին վրայ գըա-
նուող ուրիշ շատեր ալ կ'ամբողջացնեն մտաւորականութեան այս
շարքը, որոնք առաջնորդողներն եղան՝ ուրիշ երկրորդ գծի մը վը-
րայ գտնուող մտաւորականներու ստուար խումբի մը: Անոնք,
սապասի, պնալիսի, փալախչայի վարժարաններու գաւակներն ե-
զած են և իրենց ուշիմութեամբը, անմրցելի ինքնաշխատութեամբը
յաջողած են իւրացնել այն ամէնը, զոր ոչ իրենց վարժարանները,
պարսունները, ո՛չ ալ իրենց գաւառը կրնար տալ: Գաւառը կուսա-
կալութիւն մը չէր, ո՛չ ալ նահանգ մը (սանճագ), այլ գաւառակ մը,
ու նախապէս գիւղախումբ կամ աւան մը, որ խոնարհագոյն աստի-
ճանի կաւավարիչով մը կը կաւավարուէր:

Ժամանակագրական կարգով, անմիջապէս ասոնց կը յաջորդեն
ուրիշներ ալ, որոնց գլխաւորները իրենց ուսումը Պոլսոյ ազգային
վարժարաններուն մէջ աւած են: Յովհաննէս Մանուէլեան, Սղամցի,
ունեցած է յօգուածներ Պոլսահայ թերթերուն մէջ, եղած է ուսուցիչ
հայ լեզուի (աշխարհարարի), պաշտօնավարած է Բալու, Ակն, Ա-
րարկիւր, Երզնկայ: Մեռած է 1903ին իր գիւղին մէջ: Յակոբ Սի-
մօնեան, Հալուցի, տնօրէն Խարբերդի Ս. Յակոբի թաղային վար-
ժարանին, պաշտօնակից Թլկասիւնցիի, ապա տնօրէն՝ 1897-1903,
Մէլրէի կեդրոնական վարժարանին, ուր կը պաշտօնավարէր նաեւ
Ռուբէն Զարգարեան: Քաղաքական պատճառներով 1903ին, իր մէկ
աշակերտին կողմէ կ'սպաննուի գիշեր մը, երբ, ուսուցչական ժողո-

վէն ելած առն կը վերադառնար՝ առաջնորդութեամբ երկու լապտերակիր աշակերտներու, նոյն միջոցին, երբորդ մը գաշուհասար կ'ընէ զայն: Մեռաւ 50 տարեկան հասակին մէջ:

Ասոնցմէ և ուրիշ շատ մը սեռուցիչներէ զտա, ժողովուրդին մէջ կային արհեստաւորներ, որոնք մաքուր հայերէն կը խօսէին. ունէին հասուն գաղափարներ, հմուտ էին Ազգ. Սահմանադրութեան կանոններուն. գիւղացի որմնադիր մը, ամբողջ նարեկ աղօթագիրքը գոց սորված էր: Իր ծերութեան տակն կը ցուէր որ քանի մը գլուխները մուցած էր:

Կարելի է ըսել թէ գիւղացիներէն հարիւրին քսանը գրել կարողալ գիտէր, մինչդեռ իր գրացիներուն հազարին մէկը հազիւ կարողալ գրել գիտէր: Այս տեսակէտով հայերը անկարելի է բաղդատել թուրքերուն և քուրդերուն հետ, որոնք ամբողջ գաւառին մէջ մէկ պետական նախակրթարան ունէին:

Քահանաներ ալ կային որ բաւական զարգացում ունէին. Սաղրաթի Տ. Ղեւոնդ քահանան, որու մասին 1889 թուականին Մելքոն Կիւրճեան, այս ալ Հովաքի, (Հրանդ ծածկանունով) Պալսոյ թերթերուն մէջ ներկայացուցած է անոր անթերի հայերէնով մը արասյայտելի, գրուածելով նաեւ անոր կենցաղագիտութիւնը և արասյայտութեանց փափկութիւնը: Քաղաքին Տ. Գրիգոր քահանան, յետոյ Տ. Սուրէն քահանայ Տէրոյեան, 1907էն սկսեալ Առաջնորդական փոխանորդ:

Բալուի այս գիւղացի մտաւորականներու շարքին վրայ կ'աւելնան նաեւ ուրիշներ, որոնք իրենց բնագաւառէն դուրս սարած են. մասնաւորապէս Պոլիս զարգացում աւած են և նշանաւոր եղած են իբրև ճարտարապետ, գրող և պետական պաշտօնատար: Ինչպէս ճարտարապետ՝ Յովհաննէս Ազնաւորեան, Գրիգոր Գալֆա, Տօնիկ Գալֆա, որուն ձեռակերան է Ակնայ գեղեցիկ Մայր Եկեղեցին, և Պ. Թորամանեան: Պետական պաշտօնատարներ և գրողներ եղած են՝ Օտեան, Աղաթօն, Փաշայեան, Մելքոն Կիւրճեան, Նէմցէ Պետրոս ևն: Ասոնք իրենց բնագաւառին մէջ չեն կրցած ունէ գեր կատարել. բայց գանուելով Պոլիս, մասնաւորապէս ճարտարապետները, իրենց պանդուխտ հայրենակիցներուն մեծապէս օգտակար եղած են՝ բանաւորութեան ստպարէզը տանելի դարձնելով և ընդունակները այդ ստպարէզին մէջ բարձրացնելով:

Գեղարուեստական բաժնի յիշատակութեան մէջ, ճարտարապետութեան կողքին, պիտի կրնամ բարեբողբաբար աւելի լայն տեղ տալ երաժշտութեան, որոշ գաղափար մը տալու համար հայ գիւղացիին՝ երաժշտական հակումին, ընդունակութեան և իր գաւառին մէջ կատարած դերին մասին:

Այս կարեւոր ու զգուարին գլուխը արժանաւորապէս կարենալ ներկայացնելու համար, անհրաժեշտ նկատեցի, արեւելեան արուեստին հմուտ և գաւառին գեղարուեստական ճաշակին, ու պայմաններուն շատ մօտէն ծանօթ անձի մը աջակցութեան գիմելու:

Հայրենակիցս Պ. Ա. Գօլոյեան, ինքն ալ նոյն գաւառակին արժանաւոր գաւառակներէ մին, հաճելով բողձանքիս գոհացում առ նեանկալ կուս ուսումնասիրութիւնը գրի առաւ այս գրքին համար: Այս ուսումնասիրութիւնը երևան կը բերէ հմտութեան ու փորձաւորութեան համահաւասար լծորդութիւն մը, որ, զերծ արուեստին թշնամի կաշկանդումներէ, իրականութեանց ճշգրիտ պատկերը կուտայ:

Ահա այդ ուսումնասիրութիւնը:

« Բալուի հայ գիւղացին, թերեւս ամէնէն աւելի հակում ու ընդունակութիւն ցոյց տուած է դէպի գեղարուեստ, դէպի երաժշտութիւն մասնաւորապէս: 1870 թուականներէն սաղին, լատձ ենք տւանդութիւններ, մօտէն իրազեկ եղած ենք յայտնութիւններու, որոնք լրջօրէն մեր ուշադրութիւնը գրաւած են, ու մեզի տուած են այն համոզումը թէ՛ այդ յայտնութիւնները, հակառակ այդ գաւառին փարչական ու աշխարհագրական ժրատ պայմաններուն, բաւական պիտի ըլլային՝ գաւառներու երաժշտական պատմութեան մէջ՝ անոր ուշադրաւ դիրք մը սահմանելու:

Աի մը ժողովուրդ, սեղմուած իմացականութեամբ՝ անպատզ և հոգիով անհողորդական գրացիներէ, որոնցմէ ոչինչ կրնար քաղել՝ իր միտքը, հոգին ու ճաշակը անուցանելու համար, երբ, պատահութեամբ մը, աւելի բեղուն միջավայրի մը հմայքներուն դէմ յանդիման դանէ ինքզինքը, դէպի գեղարուեստ, դէպի երաժշտութիւն կը հակի, այս ընտրութեամբ, մեզի, իրաւամբ ենթադրել պիտի տար թէ՛ այդ հակումը հեռաւոր ժառանգականութեան մը ճառագայթումը կրնայ եղած ըլլալ, որ, պատմական շրջաններէն սկսելով, սերունդէ սերունդ անշէջ անդրադարձումներով շարունակած է վերապրիլ՝ չընարհիւ գիւղացիներու առայգ յիշողութեան, վառ երեւակայութեան և բնախօսական յարմարութիւններուն:

Պիտի կրնայինք ըսել թէ՛ այդ գիւղացիները արդէն վարժապետ, ճարտարապետ և երաժիշտ կը ծնին, ժառանգականութիւնն իրենց իրրեւ ուսուցիչ ունենալով:

Մեր նպատակը՝ բնական գարձած այս հակումին հոգեբանական աղբիւրներուն վերլուծումն ընել չէ, այլ՝ ծանօթանալ է նոյն այն հոգեկան վիճակներուն ներգործող ազդակներուն, որոնք կը կազմեն երաժշտական պատմութեան մը այլադան հանգրուաններն իրարու միացնող երիզը: Այս կերպով պիտի կրնանք մօտենալ անոր, գիւ-

զացիին, կատարած դերին, իր և շրջակայ գաւառներուն մէջ:

Քանի մը կարեւոր գիւղեր՝ Հալաւ, Չէթ, Սգամ, Սաղբաթ, Սոչմաթ, շատ կանուխէն, Պոլսոյ հետ անընդհատ շփման մէջ գտնուած են, անստեղծ կան պայմաններու հարկադրութեամբ:

Չուզուր-Չէչմէի պանդոկին բոլոր մեծ ու փոքր սենեակները, որոնց թիւը վաթսուէն պակաս ըլլալու չէ, միշտ չէն մնացին մեր գիւղացիներուն բնակութեամբը: Այդ պանդոկը անոնց երկրորդ տունը, երկրորդ հայրենիքը դարձած էր: Հոն ապրեցան, բազմութեամբ, ու ապրեցողցին իրենց գաւառին կենցաղը, սովորոյթը, երգերը, պարերը: Այդ կեանքին մէջ, հակառակ իրենց հանապազօրեայ ստեղծանելի յոգնութիւններուն և իրենց երեւակայութիւնը ամուշող կարօտի և հայրենաբաղձութեան բանկումներուն, չմտցան իրենց երաժշտական հակումը. միշտ սիրեցին զայն, և հետեւեցան անոր:

Գում-Գոսիւի Մայր Եկեղեցին, ու Գարանոցը իր ներշնչարանը կը դառնան Կիրակի տաւուները, արշալոյսէնտառ, երբ, Մայր Եկեղեցւոյ ժամկոչները, պանդոկին բակին մէջ կեցած, քաղցր ձայնով, երգելու կ'սկսէին աղօթքի հրաւերը, գիւղացիները խկոյն կը պատրաստուէին եկեղեցին հասնելու ժամանակին և քաղցրալուր օրհներգութեանց հմայքը վայելելու: Մայր Եկեղեցին, իր Գարանոցով իր Արիստակէս Յովհաննէսեանի և Նիկողայոս Թաշճեանի պէս երաժշտապետներով, իր մեծ ու փոքր դպիրներով, իր պատրիարքով և մանաւանդ շողշողուն արարողութիւններով, անոնց համար արուեստի ու մեծվայելչութեան կեդրոն մըն էր: Հոն կը յաճախէին, կ'ուկընդրէին, և, շնորհիւ իրենց արագ ըմբռնումին և սուր յիշողութեան շատ բան կը սորվէին. դարձին, զանանք հայրենիք կը սանէին, ու կը սորվեցնէին անոնց՝ որոնք դեռ Պոլիսը տեսնելու բախար ունեցած չէին:

Այդ շրջանին 1860 — 70 թուականներուն, Համբարձումեան Չայնադրութիւնը, ապա ու ցորդ Հայկական Չայնադրութիւն կոչումով ճանչցուած, յիշողութեան վարպետներուն վրայ վճարական յաղթանակը տարած, կոկուած, ու անհրաժեշտ դարձած էր վերջ տալու համար յիշողութեան դարաւոր ու անասնման վաստակումներուն: Այս նոր արուեստին հրաշագործ դերին մասին գիւղացին աւելի խոր պատկառանք տածելու կ'սկսի, բայց որովհետեւ այլևս անոր ուսուցումը իրեն անմատչելի կը մնար, ոչ ոք, որ պոլսեցի ըլլար, պիտի չհանդուրժէր որ դերբուկ պատաքինով այդ խրամայրնեքն մին Մայր Գարանոցէն ներս ապրդէր Հայկական Չայնադրութիւնը սորվելու համար, ուստի ան տարբեր միջոցի կը դիմէ:

Շուրջ 1882 թուականին, հովաւցի երկու տնուսնացած ուսու-

ցիչներ, մին՝ Ղազարոս Ուլովճեան, իսկ միւրը՝ Կիրակոս Վարժապետեան, որդին՝ գաւառին մէջ հմուտ հայկաբանի համբաւ վայելող Կաթարիկեան Անդրէաս վարժապետի, իրենց երաժշտական հմտութիւնը խորացնելու բաղձանքով Պոլիս կը դիմեն: Ուլովճեան Մայր Գպրանոցին մէջ միայն, Հայ եկեղեցական Երաժշտութեան դասերուն կը հետեւի, իսկ Վարժապետեան Կիրակոս, նոյն գպրանոցին երաժշտական դասերուն հետեւելէ զատ, առաջնորդութեամբ իր հայրենակից Մելքոն Կիւրճեանի (1) (Հրանդ) խորհուրդներուն, Սամաթիայ Թաւրային վարժարանի դասընթացքին ալ կը հետեւի և թուագէտ Պ. Փասգալէ մեծապէս կ'օգտուի՝ չափազիտութեան մէջ բաւական հմտութիւն ձեռք բերելով:

Գրեթէ երեք տարի կը տեւէ իրենց ուսանողական շրջանը: Նիկիոյցոյս Թաշճեան հայրական հոգածութեամբ մը ջանք չի խնայեր՝ անոնց եկեղեցական Երաժշտութիւնը և Հայկական Չայնադրութեան եկեղեցական ճիւղը (2) ուսուցանելու:

Ուլովճեան և Վարժապետեան, բաւական համարելով այլեւս իրենց եռամեայ զոհողութիւնները, ճայնադրուած եկեղեցական եղանակներու ստուար պաշարով մը իրենց ծննդավայրը կը դառնան: Ասանք կ'ըլլան Բալուի առաջին երաժշտագէտները, որոնք Չայնադրութիւնը այդ գաւառին մէջ կը ծանօթացնեն: Թէեւ ասանք ալ իրենց դէմ կը գանեն յիշողութեան վարպետներ, սակայն, լուրջ դժուարութիւններու չեն բախիր իրենց նուաճումներն ընելու:

Այս զոյգին վերադարձովը, Բալուի եկեղեցական երգեցողութիւնները, միօրինակութիւն ու նոր գրոշմ կ'ստանան, պոլսական հայ եկեղեցական երաժշտութեան Թաշճեան գպրոցին (3) երաժշտական ոճն ու կշռականութիւնը իւրացնելով:

(1) Այդ բուսականներուն, Մելիֆոն Կիւրճեան, Սամաթիոյ վարժարանին հայերէն ճիւղին ուսուցիչն էր:

(2) Հայկական Չայնադրութիւնը երկու ճիւղերու կը բաժնուի, եկեղեցական եւ քաղաքային, քաղաքայինը այն ճիւղն է որուն մեջ կը գործածուին Արեւելեանի քրեական հասուածին բոլոր չափերը, անով հազարաւոր եղանակներ ձայնագրուած են:

(3) Պոլսոյ հայ եկեղեցական երաժշտութիւնը, 1860էն առիկն, երաժշտագէտներու միջեւ, կը շարունակէր պայքարի ճիւղ դառնալ. եւ մամուլը սեւոյ արձագանգ կուսար անոր: Երկու տեսակետներու շուրջ տեղի կ'ունենան վիճաբանութիւնները: Առաջին տեսակետը պաշտպանողները կ'ընդունեն թէ բերանացի աւանդուած, ու ապա ձայնագրուած շարականի եղանակները հարազատ ու վաղնջական են, եւ պէտք է զանոնք անվրար սլահել: Այս խումբին գլխաւոր հետեւորդներն է-

Պէտք է այս առիթով ըսել թէ՛ գիւղացին կը ծնի, բայց քաղաքացին կ'արժեցնէ: Գիւղերը, մեծ մասամբ, երաժշտական կազմակերպութեան մը տասողձը չէին կրնար սեննալ, և մեծ սւ փոքր արուեստագէտներ միշտ իրենց գործունէութեան իբր բեղուն տաղարէզ, քաղաքը պիտի ընարէին: Եւ, այսպէս ալ եղաւ, Բալուի քաղաքը նախասպէս թգաուեցաւ անանցմէ: Անկէ յետոյ՝ Խարրերդ քաղաքը, կեդրոնը, և անոր կարեւոր արուարձանները Հիւսէյնիկ, Եղէզի, ինչպէս քաղաքին Ս. Յակոբ, Ս. Կարապետ թաղերը իրենց երկարատեւ կայաններ եղան, ուր երգեցողութիւնները կ'անսնուարեցին և ուսուցանելով՝ հեռաւոր գիւղերու ալ երաժիշտ սեսուցիչներ հասցուցին:

Ուրովէտան, 1894 թուականին, երաժշտագիտութեան պաշտօնով, Կարին կը կանչուի, Ղեւոնդ եպ. Շիշմանեանի առաջնորդութեան շրջանին սւ անոր հրաւէրով: Երբ, Կարին՝ իր նոր պաշտօնատեղին մեկնելու համար Երզնկա կը հանգիպի, կը խուզարկուին իր գոյքերը, որոնց մէջէն ձայնագրեալ հայրենասիրական երգ մը կը գտնուի:

զան, 1870էն առիւն, Համբարձում Չերչեան, իր մեծասպանից աւակերսր Լ. Խաննեան եւ դեռ ուրիշներ: Ասոնք, ընդունելով Արիսակես Յովհաննէսեանի այն վարկածը ըս սրում, ան կը յայտարարէր թէ շարականները սաղաչափեալ են, եւ պէտ է որ եղանակներն ալ անոնց սաղաչափութեան համեմատ բաշխուին, նոյնութեամբ մեծ երաժշտագէտին կարծիքին կը նետեւին, եւ, շարականի վրայ կասարուած յաւելումները, կամ փոփոխութիւնները Քաղաքական Երաժշտութեան անհարկի պատուասումներ կը համարէին:

Միւս խումբը սակայն, որուն վերջին, բայց կարկառուն ներկայացուցիչը կը հանդիսանայ Նիկողայոս Թաւնեան, ձգտումն ունէր ամենէն աւելի եղանակները բաղքալուր ներդաւնակութեան մը վերածելու համար, ջնջել անչափակցութիւնները, եւ դիւրասան շրջանառութիւններով ոգե. որիչ դարձնել զանոնք: Այս խումբը անուշ չափազանցութեան զնաց, բայց ո՛չ ինք, Ն. Թաւնեան: Անոր՝ Էջմիածին (1875) հրատարակուած ձայնագրեալ շարականին մէկ օրինակին վրայ մասիսով կասարած փոփոխութիւնները մինչեւ 1890 թուականը դեռ Մայր Եկեղեցւոյ Դպրանոցին մէջ կը մնար, եթէ այդ օրինակը սակաւին կը մնայ, բաւական պիտի ըլլայ երաժշտական այս ուղղութեամբ կասարուելիք ուսումնասիրութեան մը արժանահաւասարձը սալու:

Թէ այս երկու բաժանումներէն ո՞րը իրաւունք ունի, ասիկա մեզ մեր նիւթէն բոլորովին պիտի հեռացնէր որովհետեւ շատ ընդարձակ ուսումնասիրութեան մը նիւթ կրնայ ըլլալ:

Կառավարութիւնը զոյն շնորհակարգ գրութիւն մը համարելով, պատասխանատու կը բռնէ զինքը, և երեք տարուան բանաստիճաթիւն կը դատապարտէ 1894ին, կամ 1895ի նախօրեակին, 1897ին իր բանաստիճաթիւն պայմանաժամը կը լրանայ, և, այլևս փոխանակ Կարին երթալու, իր ծննդավայրը կը դառնայ, և շատ չանցած՝ դարձեալ Սարբերգ պաշտօնի կը հրաւիրուի: 1902 թուականին ջրգողութեան հիւանդութեամբ անկողին կ'իյնայ, և հակառակ Տօքթ. Միքայէլ Յակոբեանի բժշկական խնամքներուն, Եղէգի գիւղին մէջ իր մահկանայուն կը կնքէ:

Կիրակոս Վարժապետեան կը շարունակէ իր երաժիշտ ուսուցչի պաշտօնը՝ Սարբերգի Ս. Կարապետ թաղին մէջ, 1897 թուականին, Բաղուի Ս. Սատուածոմին եկեղեցւոյ երաժշտապետ կը կարգուի, և 1902 թուականին, ունի եկեղեցւոյն վրայ քահանայ կը ձեռնադրուի:

Ետ դառնանք դէպի 1882 թուականը: Չորս մանուկներ, երեքը Ձէթ գիւղացի, և մէկը, Մարտիրոս Աթիկեան, Հովաթ գիւղացի, Պալիս կը սարուին իրենց ծնողներուն խնամքին տակ, և Պէզձեան Մայր Վարժարանին ծաղկացին իբրև սան արձանագրել կը արուին: Երկու Ձէթ գիւղացիները հազիւ մէկ երկու ամիս կը հետեւին իրենց վարժարանին, և կը հրաժարին, Մարտիրոս Աթիկեան, թէ ուշիմ, և թէ՛ իր գիւղին մէջ կանոնաւոր դպրոց տեսած էր թէև, բայց հազիւ երեք տարի կը շարունակէ, ու դժբախտութեան մը պատճառաւ, թերաւարա կ'ըլլայ:

Միւսը, Ձէթ գիւղացին, իր գիւղին մէջ, մինչև Տարբերք քերականութիւն կարգալու շափ տալուցս իր երբ կը ներկայանայ ծաղկացի դաստիարակին, Միւսի Մաքսուաի, մուսքի քննութիւն անցընելու համար, իրեն կը հարցուի թէ ո՞ւր տեղացի ես.

— Բաղուոյ Ձէթ գիւղացի կը պատասխանէ, յստակ ու անվարան:

— Ի՞նչ կարգացած ես, կը հարցուի.

— Սալմոս, Ձէն Հոգեւոր, Նարեկ և Տարբերք Բերականութիւն... կը պատասխանէ սահուն կերպով...

Այս պատասխանին վրայ, դաստիարակին շրթունքներէն թեթև ժպիտ մը կ'անցնի, և կը հարցնէ «Մասունք Բանի»ն քանի հատ է, ու քննութիւնը վերջ կը գանէ: Ծաղկացի երրորդ դասարանին մէջ տեղ մը կը սահմանուի իրեն, և ձեռքը կը տրուի Գ. Տարի Մայրենի լեզու մը, և Գարագաշեանի Համաբար Բերականութիւնը:

Ասիկա իր ուսանողութիւնը կը շարունակէ, և սուիթ կ'ուենայ, շնորհիւ իր քաղցրալուր ձայնին, և՛ իր ծնողքին բուն բողձանքին տակ, երաժիշտ ոչակերտներու շարքին մէջ արձանագրուելու: Ասիկա իրեն պատահութիւն մը կ'ըլլայ մեծանուն երաժշտապետ Նի-

կողայսա Թաշճեանի աշակերտը ըլլալու: Նոյն տարին, արդէն, երաժիշտներու սուաջին դժին վրայ կ'առնուի Թաշճեան միայն երաժշտութիւն ու իր կեանքի վերջին տմիաներուն ալ եւրոպական ձայնագրութիւն դաստիասելով իր մահկանացուն կը կնքէ: Այս մահը շատ կը յուզէ վս. քրիկ երաժիշտը, բայց իր հայրը կը քաջալերէ զինքը ըսելով՝ շատ կարող երաժշտապետ մը պիտի ունենայ քսնի մը օրէն, իբրեւ ուսուցիչ:

Ասկէ յետոյ Համբարձում Չէրչեան և Լ. Սանճեան կը յաջորդեն ասոնց ալ կ'աշակերտի, և, կ'սկսի եկեղեցական եղանակները մեծ յաջողութեամբ ձայնագրել: Լեւոն Սանճեան, տեսնելով այդ դեռ 13 տարեկան աղուն յաջող ձայնագրելը, մտնուող խնամքի առարկայ կը դարձնէ, և, ոչ միայն եկեղեցական, այլ նաեւ Քաղաքական — ինչպէս կ'անուանէին անոնք, — երաժշտութեան վերաբերեալ գրութիւնները իրեն կը արամադրէ, սրպէսզի սն ուզածին չ'օգտուի: Սանճեան վերջապէս Մայր Եկեղեցոյ երաժշտապետութեան պաշտօնէն կը հրաժարի. բայց կը պահէ Ազգ. Հիւանդանոցի երաժշտապետութիւնը:

Մեծատաղանդ երաժշտապետը, իր այս պաշտօնավարութեան ընթացքին 1887 Ապրիլի վերջերն է որ Ազգ. Սահմանադրութեան տարեդարձին օրը երգուելու համար, կը յօրինէ «Վավմըմըզ պուՏէվլէթին լուժֆըլա պուլմուշ խմթիազ» երգը, մէկը իր ընտրելագոյն եղանակներէն, որուն բառերը Թէրճիմանը Հագիգաթ թուրքերէն թերթին խմբագիրը Ահմէտ Միտհաթ էֆէնաին յօրինած է:

Դեռատի ուսանողը իր դաստիարակին, Միւսիւ Ֆրանկիւլին կը դիմէ և կը խնդրէ որ արտօնուի՝ շաբաթը մէկ անգամ, կէսօրէ յետոյ, Ետի-Փուլէի Ազգ. Հիւանդանոց երթալու՝ Լ. Սանճեանի երաժշտական դասերուն հետեւելու համար:

— Պիտի արտօնեմ քեզ, կը յայտարարէ, դաստիարակը, բայց նախ ես եղանակ մը պիտի երգեմ, և դու ալ պիտի ձայնագրես, պիտի կրնամս...

Ուսանողը մտախար և թուզթը կ'առնէ, և քառորդ մամէն իր արտօնութիւնը կը շահի...

1886 թուականին, Պէղճեան Մայր Վարժարանէն հրաժարելով, Պէշիկթաշ բնակող հայրենակից բարեկամներու թելադրութեամբ, Մաքրուհեան Վարժարանի ձրիավարժ անն կ'այժամագրուի: Այս տեղափոխութիւնը պատահութիւն կուտայ իրեն հետեւելու նաեւ Բիւզանդական Չայնագրութեան:

Իր փոփոքին վրայ, բարեկամներէն մէկը, Մաքրուհեան Վարժարանէն ոչ շատ հեռու գանձուող յունական աշաղմակ, վանքը կ'առաջնորդէ, զինքը կը ներկայացնէ ձերունի յոյն քահանայի մը, որ

հմուտ էր Բիւզնդի. Չայնագրութեան, և անոր կը հասկցնէ թէ իր ներկայացուցած ուսանողը կը փափաքի հետեւիլ Յոյն Չայնագրութեան:

Քահանան յօժարութեամբ յանձն կ'առնէ սորվեցնել. բայց, ուսանողը յաւարէնի անծանօթ կ'ըլլայ, իսկ քահանան ալ գէթ թուրքերէն խօսելու բոլորովին անտեղեակ կ'ըլլայ:

Առաջին դասով բարձրացնող և վայրէջ ճայնանիշերուն տասնձանական արժէքները կը բացատրէ յաւարէն լեզուով... բայց դիտելով որ իր աշակերտը ո'չինչ կը հասկնայ իր խօսածէն, երկրորդ փորձով իւրաքանչիւր ճայնանիշի արժէքը երգելով բացատրելու փորձ կ'ընէ. ուսանողը տեսարակին մէջ, հայկական ճայնագրութեամբ կը նշանակէ: Երբ քահանան կ'աւարտէ, ինք նոյնութեամբ կը կրկնէ... քահանան դարմացած տեսարակին կը նայի, և գլուխը կը շարժէ: Գոտերը կը շարունակուին:

Միւս կողմէն, շաբաթը մէկ երկու անգամ, Լեւոն Խանձեանի մօտ կ'երթայ, շարունակելու համար ընդօրինակութիւնները, որոնց թիւը մինչեւ 1890 թուականը քանի մը հազարի կը հասնի: Այդ միջոցին կը ճայնագրէ իր հայրենակիցներէն հայրենիքին մէջ երգուող շերերը, մեծ մասամբ թուրքերէն: Անկէ կ'ուսանի նաեւ ջութակահարութիւն:

Արամ Բժշկեան, երաժշտապետը Պէշիկթաշի Մաքրուհեան Վարժարանին, և աշակերտը Ն. Թաշձեանի, մեծ համարում կ'ունենայ անոր մասին. բայց, անշուշտ, Խանձեանի որպէս մրցակից, թաքուն սրտաբեկութիւն մը կ'ունենայ երբ նոյն վարժարանին մէկ աշակերտը, երաժշտութիւն ուսանելու համար այլուր կը դիմէ, և վարժարանին երաժշտական դասերուն կը հետեւի պարզապէս կարգապահութեան և փափկանկատութեան համար:

1889ին իր ընթացքը կ'աւարտէ: Երգնկայէ, և ապա Արաբկիրէ պաշտօնի կը հրաւիրուի, կը մերժէ երթալ: Մաքրուհեան Վարժարանի Տեսչութեան կողմէն նոյն վարժարանին մէջ քանի մը դասեր կը յանձնուին, բայց երկար չի տեւեր այս պաշտօնավարութիւնը. 1890ին, որպէս քաղաքական յանցաւոր կը ձերբակալուի, իր երաժշտական բոլոր աշխատութիւնները կը գրաւուին, ու այլեւս ետ չեն դարձուիր հակառակ, ոստիկանութեան նախարար Նազըմ փաշայի մատուցուած մէկէ աւելի խնդրանքներու: Այս աշխատութիւն երուն մէջ կային նաեւ, Հայկական Չայնագրութեան դասագիրքի մը ձեռագիրը՝ իր կողմէ պատրաստուած, Տաճկական Եզոնակներու և Չափերու Բացատրութիւնները, Յունական Չայնագրութեան կանոններ եւն: Ետըջ վեց ամիս ոստիկանութեան բանար մնալէ յետոյ, 1891ին կայսերական հրամանով կ'աքսորուի Ափրիկեան Տրիպոլիս, ուրիշ երկու քաղաքական աքսորականներու հետ (*):

(*) Մարգար Մովսէսն՝ Սեբասացի, և Սարգիս Տօթորեան՝ Տիւրիկցի:

1893ին աքսորաւայրէն փախչելով Սարգիսը կը մտնէ, և քանի մը
ամիս հիւր կը մնայ սյուրսիական փոխ հիւպատոս Գրիգոր պէյի մօտ,
և 1895ին գարունը, երբ օր մը Մէզրէի բանաւր սւրիչ քաղաքական
յանցանքով դատաւարաւում բանաւրկեալներու այցելութեան կ'եր-
թայ, գողութեան յանցանքով դատաւարաւում բանաւրկեալ մը
զինքը մտանանիչ կ'ընէ բանալին հարիւրապետին: Ասոր վրայ, նոյն
օրը կը ձերբակալուի Բայց, նոյն օրն իսկ, քաղաքական յանցան-
քով ձերբակալուածներու և դեռ դատական վճիռի չենթարկուածնե-
րու կայսերական ներում կը շնորհուի, սակէ ինք ալ կ'օգտուի:
Երկար չի տեւեր այս ազատութիւնը. 3-4 ամիս յետոյ, երբ 1895ի
կոտորածները, աւարտութիւնները և հրձիգութիւնները կ'կսին,
զինքը դարձեալ կը ձերբակալեն ու կը բանաւրկեն Մէզրէի բանաւր
զինքը ամբաստանելով որպէս հրատարակիչը «Բոստ» անունով թեր-
թի մը: Հարցաքննութիւններն ու վկայութիւնները ձերբակալեա-
լին նպատաւոր ըլլալով, բանալին կ'արձակուի թէւէ, բայց Սար-
գիսը մնալու չարածուիւր. սատիկանական հսկողութեամբ Բայու կը
զրկուի. ուր, 40 օր յետոյ դարձեալ կը ձերբակալուի և հարցա-
քննութեան կ'ենթարկուի: Կացութիւնը յուսահատական կը դառ-
նայ, կը հասկնայ թէ այդ գաւառակին մէջ արդարութենէն օգտուիլ
չատ գժուար պիտի ըլլայ, հարցաքննութեան և ենթարկուիլ կը մերժէ:
Այս յանդուգն մերժումը խոր սպաւորութիւն մը կ'ընէ հարցաքննիչ
դատաւորին (մուսթանթըգ) Բայրահիմ էֆէնաիին վրայ, որ մեծ ըզ-
գուշութեամբ զսպում հոգեկան խայտանք մը ընդհանարել կուտայ
բանաւրկեալին, իբրեւ թէ համամիտ գտնուած ըլլար սնոր մեր-
ժումին...: Յետոյ կը հասկցուի թէ հարցաքննիչը կրօնափոխ հայ
մըն է, 95ի դէպքերուն միջոցին իսլամացած: Մեղիքը կուտակուի
(Տիգրանակերտ) կը ներկայացուի. և անոր հրամանաւ, դատական
իշխանութենէն սատիկանութեան կը վերադարձուի քննութիւնը, և
բանաւրկեալը Արզնի Մասէն տարուելով, սրբղ ձեւակերպութեամբ
մը ազատ կ'արձակուի: Քանի մը ամիսէն Բայու կը դառնայ: Այս
բանաւրկութիւնները պատճառ կ'ըլլան որ վերջապէս իր ծննդավայ-
րը դառնայ և անոր ծառայէ:

1896 Օգոստոսի վերջերը քաղաքին վարժարանը՝ դէպքերէն յե-
տոյ, առաջին անգամ ըլլալով կը վերսրացուի, և անոր վերակազ-
մութիւնը իրեն կը յանձնուի:

Այս պաշտօնավարութիւնը երեք ու կէս տարի կը տեւէ. երա-
ժշտութիւնը կը կրէ կարեւոր փախչուցութիւններ, մասնաւորապէս
Պատարագի արարողութեան մէջ եղանակներու նորութիւններ կը
ներմուծուին: 1899ին Սարգիսը կը հրաւիրուի: Այս պաշտօնավա-
րութիւնը իրեն սախթ կ'ընծայէ՝ տարի քահանայէ մը ստորերէն

սորվելու և ստորի եկեղեցական եղանակները ձայնագրելու, հայ և ստորի երգեցողութեանց մասին քաղաքական ուսումնասիրութիւն մը կատարելու քաղձանքներով: Ասորի քահանան ալ իրմէն Հայկական Չայնագրութիւն կ'ուսանի:

— Ինչո՞ւ ստորերէն կը սորվիս և ստորի եղանակները կը ձայնագրես, կը հարցնէ օր մը իրեն այցելող՝ Եփրատ Քոլէճի հայերէն ճիւղի ուսուցիչ, ստորի Պ. Աշուր:

— Իմ մայրենի լեզուս ու եկեղեցիիս երաժշտութիւնը լաւ կերպով ուսանելու համար, կը պատասխանէ....:

1903 ին՝ Պագըր-Մատէն և 1906 ին՝ Տիգրանակերտ կը հրաւիրուի. 1910 ին՝ Տիգրանակերտի կաթողիկէ հայոց վարժարանին կողմակերպութիւնը իրեն կը յանձնուի համաձայնութեամբ Չէլէպեան Գերոսպոյժաւի և հոգաբարձութեան. հոն երաժշտական դասերուն վերին հոգը իրեն կը թողուի. մինչեւ 1913 թուականը: Տիգրանակերտի պաշտօնավարութեան շրջանը առիթ մը կ'ըլլայ իրեն, քաղղէարէնի հետեւելու զայն նկատելով որպէս շարունակութիւնը ստորերէնի:

Կարգն է այժմ երեւան հանելու այն դերը, զոր այս երիտասարդ ուսուցիչը կատարած է, Բալուի, Խարբերդի, Պագըր-Մատէնի և Տիգրանակերտի հայ և հայ կաթողիկէ եկեղեցիներէն ներս մասնաւորապէս:

Ըսինք թէ՛ Ուլովճեան և Վարժապետեան արդէն կարեւոր դեր մը կատարած էին երաժշտութիւնը Բալուի և Խարբերդի մէջ տարածելու համար: Ասոնք խտորէն աւանդապահ մնացած են իրենց պաշտօնավարութեան ընթացքին, ուսուցած ու տարածած են ինչ որ Պոլսէն բերած էին կամ ապա մերթ Պ. Գրիգոր Մէհաէրեանէ կ'ստանային:

Չէթ Գիւղացիին դերը ստորեր եղաւ: Առիկա, շարականները նոյնութեամբ պահելու կողմնակից էր սա տեսակէտով որ, անոնք աւելի կամ պակաս հնութեան դրոշմ մը ստացած են, և կրնան ուսումնասիրութեանց կարեւոր ատաղձներ տալ: Իսկ Պատարագի երգեցողութեանց մասին կ'ուշենայ յանդգնութիւններ, զոր նախորդները ունեցած չէին: Կը յօրինէ՛ «Սո՛ւրբ, սո՛ւրբ»ի, «Աւաւօտ լուսոյ»ի, «Տէր ողորմեայ»ի, «Ամէն հայր սուրբ»ի, «Քրիստոս պատարա եալ»ի շատ մը եղանակներ, որոնց ընթերցումը կը տարածուի բոլոր այդ շրջաններու եկեղեցիներէն ներս:

Նուեւ, թափօրի շարականներուն տեղը, ինք եղաւ որ՝ Կրասեր Պատարագարձումի (Չէրչեանի) Անեմ Բուսելի «Աւաւօտ լուսոյ»ն երկը սովորութիւն դարձուց:

Ասոնք անշուշտ յանդգնութիւններ են, բայց տհաճութիւն չեն պատճառեր պատկանեալ տաղանթներու, փոխանորդներու, թաղա-

Աստուծոյ զատ, ունեցած է շատ մը դպրոցական երգեր ալ, որոնք, մրցանակաբաշխութեան և ուրիշ դպրոցական հանգիստութեանց յայտագրերուն մաս կը կազմէին: Իժմախատար, պարբերական անգլափոխութեանց պատճառաւ մեծ մասամբ կորսուած են:

Թէեւ ս'չ ամբողջ, բայց քիչ մը աւելի լայնօրէն ներկայացուցինք այս գիւղացի երաժշտագէտին կեանքին քանի մը դրուագները: Անշուշտ պատմութիւն մը աւելի պատճառարանեալ, աւելի բարոյացուցիչ կ'ըլլայ ոչ թէ միայն իր զգայացունց խոշոր գէպքերով, այլ այդ գէպքերը առաջ բերող պայմաններուն այն ամէն մանրամասնութիւններովը, որոնք յաճախ անկարեւոր կը նկատուին, բայց կը կազմեն պատմութեան մը բարոյական բովանդակութիւնը:

Սրբազան երաժշտութեան մասին այսքան մը խօսելէ յետոյ այս ուսումնասիրութիւնը պակասաւոր պիտի ըլլար, եթէ այսքանով մը բաւականանայինք: Անշուշտ ընթերցող մը պիտի հարցնէր թէ՛ այս գիւղացի ժողովուրդը՝ իր դաշտին մէջ, իր ուղեւորութեանց միջոցին, ի՞նչ պայմանութեան անձկատ օրերուն՝ իր հոգեկան խռովքը և իր հրճուանքները արտայայտելու համար ինքնուրոյն երգեր ունեցած չէ՞: Անկարելի է որ, այսքան երաժշտասէր ժողովուրդ մը, միայն եկեղեցական երգեցողութեամբ բաւականանար, որովհետեւ անկարելի է որ կրօնասիրութեան աւրնիներ ունեցած չըլլար նաեւ իր սարբեր սէրերն ալ, ու այս սէրերը արտայայտող՝ ինքնուրոյն լեզուներ:

Բայուրի երաժշտութիւնը երկու գլխաւոր բաժանումներով կը բաժանուի ներկայացնելու մին է կրօնականը, միւսը՝ աշխարհիկը: Այս վերջինն ալ կրնանք երկու ճիւղերու վերածել, որոնցմէ մէկն է՝ Հայրենասիրականը, իսկ միւսը՝ Շինականը: Եւ վերջապէս Շինականը կը վերածենք երեք բաժանումներու, Հայկականի, Հայ Թրքականի և Հայ Քրդականի:







Հայրենասիրական երգերը ամենամեծ մասամբ Պոլսոյ հայերէն երգերն են, որոնց եղանակները արեւմտահայկական են: Երբ տակաւին գիւղացին ձայնագրութեան ծանօթ չէր, Պոլիս երգուած երգերը յիշողութեամբ կը սարվէր ու իր գաւառը կը անգամփոխէր: Այս երգերէն գլխաւորներն են. «Ժամ է, հայն'ր, արի՛ք ձեր բախան ողջունել...», «Ով քաջազունք...», «Ազնիւ ընկեր մեռանում են», «Ես յարկս պերճ», «Իմ սիրելի գաւաղունքս», «Ո՞րն է աշխարհ Հայաստան...», «Ռուսական պետութիւն, հայեր, մտաւ Հայաստան...» են, որոնց մէջ կան որ արեւելահայ դրոշմ մը ունին: Գիւղացին, այս երգերը կ'երգէր չափական ճշգրտութեամբ մը, կամ անկարեւոր ազուտութեամբ: Բայց կ'երգէր ան զանոնք իր հոգւոյն բովանդակ

Թափովը. անոր այնպէս կը թուէր թէ տանոց ետեւ կեանքի նոր
արշալոյս մը կը ծագի: Իրեն համար գանձեր էին անոնք, կը գուր-
գուրոր սնունց վրայ, և իր ձեւագիր երգատետրին մէջ, ծովկագիր
վերտառութիւններով կը դրոշմէր անոնց գլխագիրերը: Երգարանը
մասունք մըն էր գիւղացիին համար....

Հոս զարտուղում չինք ըներ բացատրելու համար գիւղացիին
հոգւոյն վրայ այս երգերուն առաջ բերած խոր ազդեցութիւնը, բա-
ցատրելու համար նաեւ երաժշտութեան ու երաժիշտներու դերը՝ մեր
քաղաքական ճակատագրին վրայ: Այս դրութիւնը կ'է տեւէ մինչև
1888—1895 թուականները՝ գաւառներու մէջ, և 1895ին վերջնակա-
նայէս կը լռէ հայրենասիրական երաժշտութիւնը, պետական խիստ
արգելքներու պատճառաւ, առլով իր տեղը դպրոցական երգերու,
որոնց մէջ հայրենասիրական բառերը կը պակսէին այլևս, ուստի
գիւղացին անոնցմով նուազ կը հետաքրքրուէր:

Երաժշտութեան՝ Սրբազան և Հայրենասիրական այս բաժանում-
ները մեծ թափով զարգացան ի վնաս միւս շատ աւելի կարեւոր
բաժանումներուն, այնպէս որ հոյ լեզուով երգուող քանի մը պա-
րերգներ միայն մնացած են:

Ասոնցմէ մէկ քանին ձայնագրուած են արդէն: Յաջորդ Էջերով
կուտանք անոնցմէ երկու հատը իբր նմոյշ, հայկական ու եւրո-
պական ձայնագրութիւններով միանգամայն ձայնագրուած:



7

3/8

Յորդոր

է լայ կայ նայ : տե նե : ըբ : հայ եայ :
 կա նանչ : դաշ տե : ըբ : ինչ խե : ախ ու Վախ :
 ըի : Զե լալ : փո թուս : տար տե : ըբ :

Allegro

է լայ կայ նայ : տե նե : ըբ :
 հայ եայ կա նանչ : դաշ տե : ըբ :
 ինչ խե : ախ ու Վախ է : ըի :
 Չե լալ : փո թուս : տար տե : ըբ :

Պ Ա Ր Ե Ր Գ

Ելայ կայնա սեներ (սանիփ),
 Նայա' (նայեցայ) կանանչ արսեր,
 Ինչխա (որչափ) ախ ու վախ երի
 Զ'ելալ փոթուս սարսեր:

Էլլամ սեներն ի՞նչ էնիմ
 Վարդ մանուսակ չորցրնիմ
 Ես պուլպուլիկ հարս մրն իմ
 Մորուօօ արիկն ի՞նչ էնիմ:

Օվան Բալուայ (Բալուի դաշեկն) փրթաւ հովը,
Տարին թաղկանց բնիկ (աղուոր) կովը,
Թաղիկ Օղլի պասրդ ցածցուր
Սառան մուրազին հասցուր:

Սառան նստր փողոցը,
Հալին զարկեր կրծոցը
Ահա, կանչե տղոցը
Ուսգա (ուրկե) կուգաս լծոցը (արս հերկեկեն),
Ինչ բան ունիմ քու ծոցը:

Գ.

Զախաւոր Յորդոր

9/8

Ես վերբն գուր գա յի դուն դու

ուր բա ցիր Ը սիր կառնի Տ կառնիմ ու

ի ս խա բե ցիր Սէ ռեդ կե

րա կ է ռիր վրա ս թա փե ցիր

Allegro Moderato

Ես վերբն գուր գա յի դուն դու

ուր բա ցիր Ը սիր կառնի Տ կառնիմ ու

ի ս խա բե ցիր Սէ ռեդ կե

րա կ է ռիր վրա ս թա փե ցիր

Ես վերեկն գուգայի (գալ) դուն դուր բացի,
Չեմքո ծոցըդ դիր, ախ երի լացի,

Ըսիր կ'առնիմ, կ'առնիմ ու իս (զիս) խաբեցիր,
Սերրդ կրակ երիր, վրաս վաթեցիր (թափել):

Մեր պաղչան (պարսեզ) գառնուկ մի մրսաւ
Ակռայիս մեջ ցա՛ւ մի մրսաւ
Կրցեմ (գացեմ) մօրքս քսեմ,
Ախջիկըդ եա՛ր մի գրսաւ:

Մայրամ շասր զարկեր ք բարսը (բարձր) լեռները.
Մեկդին սուրուն (հօսը) կ'արծի (արածիլ), մեկդին՝ գառները,
Եարդ զնաց Մայրա՛մ, մինակ մնացիր,
Լալով լալով աչքերդ կուրցուցիր,
Հերի՛ք լաս Մայրամ, աչուիս կ'աւիրի,
Քեզ պզտիկ կարգողին, սնակն աւիրի:

Եարքս եկր՛, շո՛ւս եկր (եկուր),
Ճամբրնին (նամբայ) հարցո՛ւր եկր՛,
Կր կանչիմ ե՛լ ու եկր,
Բեռներդ բառցի՛ր եկր:

Ախ կ'ենիմ, արին (արիւն) գուգար,
Սրսքս սեւ քարի՛ն գուգար,
Ինչխե՛ ախ ու վախ երի,
Սիլայեն մեկ մի չի գար:

Ռահանը կժան (կուժ) մեջ,
Եկր՛ նստին մարդու մեջ
Ես իմ եարքս կր նանչնամ
Հարիւր հազար ախջկայ մեջ:

*Կայ նաեւ ժարժառուամբ, որ սրափողի և թմբուկի ընկերակցու-
թեամբ կ'երգուի միայն երբ քողքուած աղջիկը հօրենական սուենէն
կը բաժնեն եկեղեցի տանելու և պատկառութիւնը կատարելու համար՝*

Ժառում ժառժառում: Աչքերդ կ'աւիրին.
Էկան սանողնիդ, Քու պզտիկ կարգողիդ
Աչքի հանողնիդ.
Մի՛ լար հարսնուկ մի՛ լար. Տնա՛կն աւիրի:

*Ժառժառումը կամ ժարժառումը հրամեշտի ողբ մըն է, ու կը
նուագուի ի դիմաց հարսին և իր ծնողքին: Ասիկա կը համապա-
տասխանէ թրքական Գաչեգար եղանակին, Ակնայ հայ երգեցողու-
թեանց գլխաւոր ելեւէջը կը կազմէ, և ոչինչով կը տարբերի Աւագ
Ուրբաթ գիշերը՝ Աստուածամօր անուհով երգուող ողբերէն, իր ե-
րաժշտական յօրինուածութեամբը:*

Բալուի գիւղացիները, հայ - թրքական երամշտական ճիւղին պատկանող եղանակ մ'ալ ունին. մն է որ միշտ կ'երգեն իրենց պանդխտութեան օրերուն, կամ ուղեւորութեանց միջոցին, անոր յարմարցնելով թուրքերէն լեզուով բանասանդուած իւն մը. Ո՛չ միայն ամբողջ գաւառին, այլև շրջակայ գողովուրդներուն ալ ծանօթ է ան, և, մասնաւոր յորջորջումով մը կարբուք Հալասի կ'անուանեն : Հոս, ի վիճակի ենք ընթերցողներուն աալու անոր ձայնագրութիւնը, որ եղանակը կ'արտայայտէ իր բոլոր նրբութիւններովը :

Զաւիտուոր - Յորգոր • • = 1 Տանրեւելուրդ

8/8

Allegro moderato

Ահա զմայլելի մեղեգի մը : Երաժիշտ արուեստագէտ մը՝ պարզ
 տկնարկ մը պատգնելով զայն պատկերացնող խաղերու յօդակցու-
 թեան վրայ, խնայն պիտի վկայէր թէ՛ քիչեր միայն պիտի կրնա-
 յին զայն երգել. զայն կարենալ երգելու համար՝ ճկուն, բարձր,
 շատ վարժ, և, երաժշտական քաղցրալուր հնչականութեամբ օժ-
 տուած ձայն մը ունենալ անհրաժեշտ է : Սակայն, երգողը զայն
 կ'երգէ, հեղ մը որ երգէ, հագեկան խոր յուզումներով. ան կը փո-
 թորի ի, ունկնդիր շինականը կ'ալիկածի, և, փղձկումներու անզուսպ
 ալիքներու վէտվէտու մները կ'զգայ իր շրթունքներուն վրայ, երբ,
 մանաւանդ, պանդխտութեան մէջ գտնուած ըլլայ :

Այս եզանակին մէջ ախրապետող երկու բարեր միայն կան, ո-
 րոնք, զգացումները զաշնաւորող խաղակարգութեանց ճոխ առէջքը
 կը կազմեն : Խոնարհագոյն խաղը որպէս ձայնաուղթիւն գործածե-
 լով, ընդոստ երկրորդ բարը կը գտնէ, ոչոքական յանկուժիւններով
 կը տարածուի անոր վրայ, կը յամենայ. կը դեղեւի անոր շուրջը
 ալիծածան կրկնութիւններով, և, յանկարծ, արագ ու սահուն ար-
 լայքներով վերացումներ կ'ընէ. բայց, հեշտալուր անկումով մը, շու-
 տով նոյն բարը կը գտնէ. հեղ մ'ալիքը թաւալի անոր շուրջը գողարիկ
 նահանջներով, հուսկ ուրեմն, ընդհարումներու արեւելեան շեշտերով
 քնքուշ գայթուումներ կ'ընէ, կը խոնարհի, կը նուաղի և իր հասնումը
 կ'եղերերգէ :

Երաժշտական այս կտորը՝ իր հեռաւոր վաղնջականութիւնն ան-
 փոփոխ կը պահէ. ո՛չ ոք կրցած է զայն բարեփոխել, և ո՛չ ոք պի-
 տի կրնար անոր մէջ օտար արուեստի և օտար բնութեան ազու-
 ցումներ ընել. զի, անոր քաղցրութիւնն ու պարզութիւնը այնքան
 յանկութեամբ իրարու կը յօդակցին, որ, մին կարելի չէ փոխել՝ ա-
 ռանց միւսը եզձանելու : Անոր շրջանառութեան պարզութիւնը և
 գողարիկ գայթումները ո՛չ Բիւզանդական երաժշտութիւնն ունի, և
 ոչ ալ՝ Թրքականը, այլ, զայն պէտք է փնտռել Հայկականին մէջ.
 պիտի կրնանք ըսել թէ՛ այդ եզանակը մեր եկեղեցական ԲԶ եզա-
 նակին եթէ ոչ հարազատ մայրը, գտնէ անոր հարազատ փոքր կրնայ
 համարուիլ. իրարմէ օտարացած՝ քաղաքական պայմաններու գարա-
 լոր հակազդեցութեամբ, պահելով նմանութեանց բնական ու անեզ-
 ձանելի գիծերը : Թող մեր, Արեւելեան Երաժշտութեան տաղանդա-
 լոր վարպետները զայն բողբոստեն՝ Աւագ Ուրբաթ գիշերը երգուող
 «Արծաթսիրութեամբ» շարականին երաժշտական յօրինուածութեան
 հետ. կը տարակուսինք թէ՛ անոնց հանդիսութիւններուն մասին
 ատրրեր վճիռ մը պիտի կարենային տալ :

Երկրորդը որ նոյնքան տարածուած է, Ուրճա Աղբղի անունով
 եզանակ մըն է, որուն ելեւէջը (gamme) աւելի ընդարձակ է քան

նախորդինը, ան, բարձրագոյն խաղէն կ'սկսի, և ճշնաստիճանական արագ յաջորդութիւններով կը գտնէ իր խոնարհագոյն յարը, ու ա-
 սոր վրայ կը վերջանայ: Այս եղանակը մեզի համար օտար է, և նա-
 րագոյն ժամանակներու յօրինուածութիւն մը ունի:

Քրդահայ Երաժշտութիւնը. անա մեր նիւթին ոչ նուազ կտրե-
 ւոր աստղձը: Կտրեւոր է ան ո՛չ թէ իր հնագոյն արուեստի և հա-
 բազատութեան տեսակէտով միայն, այլ նաեւ՝ Հայ Երաժշտութեան
 հետ իր ունեցած առհաւտկան տղերսին համար:

Քուրդ կամ Քրմակն անուան աակ ապրող և մասնաւորապէս
 Բալուի լեռներն ու հովիտներուն բարձունքները գրաւող գիւղացի-
 ները, իրենց կեանքին վրայ ներգործող արտաքին կամ օտար ազ-
 գակներէ յաւէտ զերծ ապրած են: Իրենց հովիտներէն ու սարադաշ-
 տերէն ընտելեացած չեն. կը խօսին քրդական բարբառ մը միայն,
 անձանօթ են թուրքերէն լեզուին: Ասոնք անլիթար պահած են՝ ի-
 րենց սովորութիւնները, բարքերը, տարազը՝ հաւատարմօրէն հետե-
 լելով իրենց աւանդութիւններուն. ասոնց կարգին, երաժշտութիւնն
 ու իբրեւ երաժշտական միակ գործիք սրինգը, իրենց վաղնջական
 ու հարազատ ժառանգութիւններն են. լավուզներ (չեր) նոյնու-
 թեամբ, սերունդէ սերունդ աւանդուած են առանց զգալի փոփոխու-
 թիւններու: Պարզութիւնը՝ անոնց հարազատութեան գլխաւոր ա-
 պացոյցներէն մէկը կրնայ համարուիլ:

Այս լավուզները կամ՝ ինչպէս զայն կ'անուանեն հայ գիւղացի-
 ները, ծերերը, քուրդը և լեռնարհակ հայը միանգամայն կ'երգեն՝
 քրդերէն քերթուածներով. արոնք գիւցազնական կամ հովուերգական
 քնարերգութիւններ են ընդհանրապէս: Անոնք, ըլլան հայ թէ քուրդ,
 կ'երգեն նոյն աւիւնով, նոյն զգացումով և հոգեկան նոյն խառնքնե-
 րով: Երաժշտական այս բաժնին մէջ, անո՛, երկու ժողովուրդներու
 յայտնած հոգեկան յանկութիւնը. իրենց ազգագրական տղերսը երե-
 ւան կը բերէ:

Ընդհակառակն, դաշտարհակ հայ գիւղացիները լավուզներու
 նկատմամբ արհամարհանք մը ունին, չեն սիրեր զանոնք: Այս ար-
 համարհանքը բռնազբօս է, և ինքնուրոյն ու տարբեր մշակոյթէ մը կը
 բխի: Ան, հայ գիւղացին անկարելի է որ չգմայլի, երբ ո՛նկնգրէ
 փոխաստական կարիճ երիտասարդին և իր նշանածին՝ սրինգի վրայ
 երգող ողբերգութեան, ուր, այնքան անխտան արուեստով, սի-
 րոյ երկու տարաբախտ աստրակները մահուան գիւղը իրար կը
 կանչեն. . . :

Բալուի քրդահայ երաժշտութիւնը, ուրեմն, տարակոյս չկայ թէ՛
 այն հնագոյն երաժշտութիւնն է, որ մեզի պիտի կրնայ տալ նախա-
 քրիտոնէական հայ երաժշտութեան մերձաւոր պատկերը: Անով կը

տարուինք մտածելու թէ՛ Հայաստանի մէջ, նոր կրօնին տարածուելէն վերջն իսկ, երկու ժողովուրդները իրարու հետ աւելի սերտ աւրնչակցութիւններով կապուած են եղեր, աւելի աւանջ երթալով պիտի ըսէինք թէ՛ այսօրուան բազմաթիւ քրդաբնակ գիւղերու բնակչութեան նախահայրերը հայ եղած են: Այս ենթադրութիւնը ստոյգ վարկած մը ըլլալու կը մօտենայ, երբ նկատի առնուի թէ՛ այսօրուան շատ մը քուրդ գիւղերու անունները, պետական արձանագրութեամբ իսկ յաւերժ սցած, հայերէն անուններ են. ինչպէս՝ Սարաջոր = Սարաջուր, Քարոր = Քարեր, Վարգենիկ = Վարդենիք, Գոմ, Եորչնակ, Գողըզ = Գողիկ եւն, որոնք այսօր միայն քրդաբնակ գիւղեր են:

Ասկէ զատ, այս երաժշտութիւնը շունի ո՛չ բիւզանդականին, և ո՛չ ալ թրքականին դիմագծութիւնը, բայց կը պահէ հայկականին հետ հանգիստութեան որոշ յատկանիշներ մը: Այսպէս, սովորապէս երգուող լավագոյն կան, որոնց կազմութիւնն ու ճաշակը շատ կը նմանի մեր եկեղեցական ԴՁ եղանակին յօրինուածութեան՝ իրենց գլխաւոր խազի ընարութեամբն ու շրջանառութեամբը:

Կարելի չէ՞ մտածել թէ՛ ասոնք բխած են այն աղբիւրէն, ուրկէ բխած է՝ մեր Արեւադալի երգերէն մանուսանդ «Լոյս, Արարի՛չ լուսոյ...» փոտարանական երգը: Ասիկա, թէ՛ իր բանաստեղծութեամբը և թէ՛ իր երաժշտութեամբը՝ քրիստոնէական մկրտութեամբ մը նուիրագործուած մեհենական երգեցողութեան մը վերապրումը չէ՞ արդեօք: Աւրեմն, անոնք որ պիտի ուղէին հայ երաժշտութեան վերլուծումն ընել, զայն մերկացնելու իր յետնագոյն դարերու ընթացքին կրած փոփոխութիւններէն, և անոր նախատիպը գտնելու համար, անհրաժեշտ է որ ուսումնասիրութեան իբր՝ լրացուցիչ եզր առնեն քրդահայ երաժշտութիւնը, որ կ'ապրի դեռ Բայուլի և շրջակայ գաւառներուն, ու մասնաւորապէս քրդական կէս անկախ շրջաններու մէջ:

Բայուլի հայ գիւղացին բնութենէն օժտուած է քաղցրալուր ձայնով մը, որ ունի երաժշտական ամէն յատկութիւն: Անիկա սովորապէս երեք ութնական բարձրութիւն կ'առնենայ ու շատ ձկուն է:

Հայ և քրդահայ երաժշտութեանց մէջ ինքնուրոյն եղանակներով կ'արտայայտուի ան: Առանջինին մէջ երկարող խազի մը տեւողութիւնը առանց մասնական թրթուումներու՝ միակերպ, միապաղաղ սասիճանով կ'արտայայտուի, մինչ երկրորդին մէջ. մէկ մանրերկրորդ տեւողութեամբ միեւնոյն սասիճանը շորս նոյնաման խազերու վերածելով և իւրաքանչիւրը զգալի շեշտումներով յարագրելով կ'արտայայտուի, այսինքն թրթուուն է:

Չայնը, ուրեմն, բալուցիներու երաժշտական ընդունակութեան

մէկ յատկանիշը կրնայ համարուել, այնպէս որ, մերթ սն քաւական համարուած է շատերու, որպէսզի, առանց սրուեստի, առանց ուսուցչի, իբրեւ երաժիշտ ճանչցուին, մեզի ըսել տալու աստիճան թէ Բալուի գիւլացիք երաժիշտ կը ծնի:

Ս. Մարտիրոս

Երաժշտութենէն յետոյ, կարեւոր է տալ քաւացիներու յարաբերութեանց և հիւրասիրութեան մասին հասկնալի ծանօթութիւններ, անոնց բարոյական նկարագրին գլխաւոր գիծերը երեւան հանելու համար:

Գիւղացիներու յարաբերութիւնը կը սահմանափակուի թէեւ մասնաւորապէս, ազգականական և խնամիրական շրջանակներու մէջ, բայց, աւօրեայ գործերու բերումով, կրնան անխափ յարաբերութեան մէջ ըլլալ իրենց գրացիներուն կամ գիւղին սեւէ ընտանիքներուն հետ: Իրենց խօսակցութիւնները անկեղծ ու անլերասպան նկարագիր մը կ'ունենան. հաճոյք կ'ըզգան երբ, իրենց տեսակցութեան միջոցին, իրենց կատարած գործերուն մասին ծանօթութիւններ տան: Գաղափարներ կը փոխանակեն ընթացիկ գործերու շուրջ, և իրարու հանդէպ կ'արտայայտուին այնպէս ինչպէս որ են. ուշագրաւ է մանաւանդ որ մեծ զգուշութիւններ կ'ընեն, հաւաքական տեսակցութեանց ընթացքին, պարկեշտութեան սահմաններէն անդին չգայթեղու, իրենց կատակներու սահմանը գիտնալու, այն հաւաքոյթներուն մէջ, ուր մանուկներ, կիներ և աղջիկներ կը գրանուին:

Այնան եղանակին, յաճախ կը հաւաքուին գրացիներէն մէկուն տունը՝ խնէն քաշելու, բամպակ կթնելու աւիթներով: 15-20 անձեր կին, մանուկ, այր՝ կատաւատի ձէթով լեցուած ճրագներու ալօս ու գողգոջուն լոյսին տակ, թէ՛ կ'աշխատին և թէ՛ խօսելով ժամանց կ'ընեն: Անոնցմէ մէկը սուսապիլական պատմութիւններ, հէքեաթներ կը պատմէ, միւսները կ'ունկնդրեն հետաքրքրութեամբ, և կը պատահի որ հէքեաթը երկար ըլլայ, այն ատեն շարունակելի կը թողուն՝ յաջորդ գիշերուան համար: Այս սուսապիլական պատմութիւններուն մէջ ալ զգուշաւոր են. անպատկառ դէպքեր չեն պատմեր. մեծերէն փոքրերը խոր զգուշաւորութիւն մը, և փոքրերէն ալ դէպի մեծերը յարգանք մը կը տիրեն իրենց խօսակցութեանց ու կատակներուն մէջ:

Կը խօսին՝ արտերու բարեբերութեան, ջուրի առատութեան կամ

նուստութեան, անձրեւի և ողողումներու, բուսականութեան աճման, տուրքերու գանձումներուն, հարկապահանջներու զրկանքներուն ու բանութիւններուն, Սարգիս ամուլին գամէշին կամ կտրիճ ընծուղին, Նորայեանց գալխեղդ գամփռներուն քաջագործութեանց, կամ գողերու շահատակութիւններուն, ամիրաներու նենգաւոր ու դաւաղիր հալածանքներուն և դեռ ուրիշ շատ բաներու՝ և, ասոնցմէ իւրաքանչիւրին հետ ազերս ունեցող անձերու, դէպքերու և վիճակներու շուրջ, — և, գիւղացիին համար նիւթ կը պակսի, — լուսթիւնը կը տիրապետէ, ժամերը արագապէս կը սահին, խօսողներուն շրթունքէն կը կախուին ամէնն ալ, և ահա, յանկարծ աքաղաղները կը կանչեն: «Ս՛հ, կէս գիշեր է», կ'ըսէ մին, ուրիշ մ'ալ կը հաստատէ. մանուկներէն ոմանք գլուխնին իրենց մօր ծունգերուն վրայ դրած կը քնանան, մեծերը մեկնելու որոշումը կ'արձակեն, և ամէնքը իրենց տուները կը գառնան: Պէտք չէ մոռնալ թէ՛ խմել չկայ, կամ քիչ անգամ մէկ երկու գաւաթ գինի կը հրամցուի:

Գիւղէ գիւղ յարարերութիւններ կ'ըլլան մասնաւոր պէտքերէ զատ, Տաղաւարներու, Բարեկենդանի, հարսանիքի, այգեկութի, նըշանատուքի և ուրիշ առիթներով:

Ըսի թէ իրարու հանդէպ անկեղծ ու անվերապահ են. ուրեմն անսովոր վստահութիւններ ունին իրարու նկատմամբ: Յաճախ փոխառութիւններ կ'ընեն իրարմէ՝ առանց մուրհակի և առանց տոկոսի. քիչ կը պատահի որ այս վստահութիւնը շարաշար գործածուի: Իրարու գետին կը վաճառեն, վաճառման գործողութիւնը կառավարական արձանագրութեամբ վաւերական դարձնելու պէտքը անկարելոր կը համարեն: Կասկածամիտ չեն, միայն քաղաքացիներու հանդէպ շունին նոյն վստահութիւնը: Իրենց մուրհակը կամ կալուածութեանը՝ Աւեսրանի վրայ երդումն է:

Եթէ հայր մը՝ իր որդիներէն մէկը ժառանգազուրկ ընէ, զրկեալը դատարանի, օրէնքի չի դիմեր, եթէ շատ զայրանայ իր հօրը գործած անիրաւութեան դէմ, «Աստու կը թողիմ իմ դասս, թող Աստուած դաս ու դարասան ենր», կ'ըսէ ու կը մոռնայ եղածը, իր հօր հանդէպ, սակայն, կը պահէ իր խոր յարգանքն ու ակնածութիւնը անոր նկատմամբ:

Ասպնջականութիւնը՝ բարուցիներու նկարագրին աչքառու մէկ գիծը կը կազմէ: Արածանիի աջ ափը գտնուող երկու գիւղեր միայն, օտարականներու նկատմամբ կասկածոտ վերաբերում մը ցոյց կուտան. և հետեւաբար դժուարութեամբ սրտասպարան կուտան անցորդներու. այս տեսակէտով, այս երկու գիւղերը՝ գետէն անդին գտնուող Սարբերդի դաշտին քանի մը գիւղերուն շատ կը նմանին: Ասիկա, անտարակոյս, իր պատճառն ունի: Յիշուած գիւղերը՝ Սար-

քերդէն կարին երկարող մեծ պողոտային եզերքը կը գտնուին, ամէն կարգի ու ազգի ուղեւորներու յոճախ անբողձալի հանդիպումներէն ճանճրացած կասկածամիտ ու սինիւրընկալ դարձած են: Երկրորդ պարտքայ մ'ալ կայ. այս գիւղերը ինքնաբաւ ըլլալու վարժուած են. պանդխտութեան, երկրէ երկիր երթալով դրամ շահելու պայմաններուն անընտել, ատիպուած են իրենց գիւղի մէջ երկրագործութեամբ միայն բուսականաւոր. և հետեւաբար, ծայրագոյն խնայողութիւնը թափանցեր է իրենց նկարագրին մէջ և անոր մաս կազմած է: Բացառութիւններ կա՞ն:

Միւս գիւղերը՝ ասոնց հակապատկերը կը կազմեն: Երեկոյին, ժամէն ելնելէն յետոյ, երբ օտարական մը, սինժանօթ անցորդ մը մտնուի գուռը կանգնած տեսնեն, մէկը կը հրաւիրէ զայն, տուն կը տանի, կը պատասպարէ, կը կերակրէ, և, երբ տուտը ըլլայ, անոր ուտելիք պաշար ալ տալով ճամբաւ կը դնէ, ս'վ որ ալ ըլլայ ուղեւորը:

Ո՛չ միայն գիւղացիները, այլ քաղաքացիներն ալ նոյնքան հիւրասէր են: Շատ թէ քիչ ծանօթ օտարական մը անկարելի է որ պանդակի մէջ թողուն. տուն կը հրաւիրեն և արժանաւայել կերպով մը կը հիւրասիրեն զայն:

Գիւղացիները տօնախմբութիւններ չունին. բայց, ճմուռային եզանակին, Ծնունդի ու թօրէքի ընթացքին, կամ ուրիշ տախթներով տուներէն մէկը կը հաւաքուին և ուտելով ու խմելով ուրախութիւններ կ'ընեն: Այս հաւաքայթներուն մէջ, իրրեւ ըմպելի, միայն գինի կը խմեն. օղիի գործածութիւնը հազուադէպ է:

Քաղաքացիները սակայն ունին տօնախմբութիւններ կատարելու աւանդական սովորութիւն մը, զոր բնաւ զանց չեն ընէր, 1895 յաջորդ տարին իսկ սկսան կատարել իրենց տօնախմբութիւնները: Մեծածախս կոչունք մըն է ան: Եկեղեցական գլխաւոր տօները որոնք կը զբաղադիպին՝ Յակոբ, Թորոս, Կարապետ, Մկրտիչ ևն տնուններուն, այդ անունը կրող անձերը՝ ցերեկին հրաւէր կ'ուզեն իրենց ողջականներուն, խնամիներուն, ծանօթներուն, որոնց հետ գործի բերումով հանապազօրեայ յորաբերութիւններու մէջ կը գտնուին, անոնց կ'իմացնեն թէ իրենց անունին տօնախմբութիւնը պիտի կատարեն, և թէ՛ կը փափաքին որ իրենք ալ այդ հանդիսութեան ներկայ ըլլան: Նոյն հրաւէրը կ'ուզեն նաեւ՝ պանդակներու անկիւնը օթեւանող օտար հայ հիւրերու ալ որոնք իբրև տուտարական կամ պաշտօնայ կարեւոր տեղ մը կը գրուեն:

Արեւը մարը մտնելէն ժամ մը յետոյ, հրաւիրեալները, 15 — 20 — 30 անձեր, հետզհետէ կը հասնին. և թէ պատահի որ ոմանք յամենան, երկրորդ հրաւէր մ'ալ կ'ստանան: 30 — 40 անձերու բուսելու

չափ ընդարձակ դահլիճը՝ գորգերով փռուած կ'ըլլայ . շուրջանակի թանձր տապասաներով երկար բազմոցներ կը ձևւոցնեն , փռոցներով ծածկուած , ու տանոց վրայ ալ , կրթնելու համար մաքուր բարձեր շարուած՝ վերէն վար : Իսկ ճակատի բազմոցին երկու անկիւնները փափուկ փետուրներով լեցուած մէկական տապասա եւս կը փռն դորգին վրայ , և բարձերուն վրայ մէկական գիրգ բարձիկներ կ'աւելցնեն : Այս անկիւնները , ինչպէս նաեւ ճակատի ամբողջ բազմոցը երիցագոյններուն նստելու կը յատկացուի : Իսկ , երկու կողմնական բազմոցներուն վրայ միւս կոչնականները տարիքի և դիրքի կարգով կը նստին : Ասոնք իրենք կ'որոշեն իրենց տեղը :

Չափահաս պատանիները ոտքի վրայ են . դուրսի դրան առջեւ ինչպէս նաեւ դահլիճին մէջ պատրաստ կ'սպասեն , հրաւիրեալները դիմաւորելու և զանոնք դահլիճը առաջնորդելու համար : Մինչեւ որ բոլոր կոչնականները ամբողջանան Գրեթէ մէկ ժամու չափ ժամանակ կ'անցընեն լուրջ խօսակցութիւններով , որոնք տեղի կ'ունենան ընդհանրապէս քաղաքական խնդիրներու մասին . Ռուսիա , Անգլիա , Գերմանիա իրենց զօրութեամբը , մրցակցութեամբը , և հայկական դասի նկատմամբ իրենց դիրքովը , Ապտիւլ Համիտ , Իթթի-հատը իրենց հոգեբանութեամբը ուսումնասիրութեան ճոխ նիւթեր կը դառնան : Կը գոյնն այսինչ կամ այնինչ կառավարիչը որ արդարութեամբ կառավարած է գաւառը՝ հաւասար աչքով նայելով հայր , թուրքի և քուրդի վրայ : Կառավարիչ (գայմագամ) հանգուցեալ (1897 և մեւտ) Ալի Իւրի էֆէնտի մէկն եղած է այն լաւ քիչերէն , զորոնք հայ ժողովուրդը չէր մուշտար իր զուարճութեանց պահերուն իսկ :

Մէկ ժամը , նուիրուած այս խօսակցութիւններուն , արագապէս թաւարած կ'ըլլայ . սպասարկող պատանիները և ծառան անգործ չեն մնար , սեղան մը , ծածկուած ձիւնի պէս սպիտակ ու շատ մաքուր ծածկոյթով դահլիճին վարի անկիւնը կը լարեն , վրան կարգով կը շարեն օղիով լեցուն շիշերը , տանոց քով փոքրիկ գաւաթները , որոնք , սնտուսը շքեղութեամբ լուսաւորուած մթնոլորտին մէջ , բիւրեղային ցոլքեր կը տարածեն իրենց շուրջը , տանոց քով ալ փոքրիկ ու սիրուն պնակներով աղանդերները կը հանգչին : Այս ամէնը շարուած են մետաղեայ մեծտաշտի (ախէ) մը մէջ , որ կը հանգչի սեղանին վրայ : Դահլիճը կը լուսաւորուի ջահով , լամբարներով և աշտանակներով :

Պատանիներէն մին , օղիի փոքրիկ գաւաթները կը լեցնէ , մետաղեայ փայլուն ու ձուածեւ տաշտի մը վրայ կարգով կը շարէ , և , անկերէն բռնած կը մօտենայ , պատշաճաւոր լրջութեամբ , կոչնականներէն երիցագոյնին , կը հրամցնէ անոր , յետոյ քովը նստողնե-

բուն և այսպէս յաջորդաբար՝ ամէնուն : Բաշխուժը աւարտելէն վերջ, ետ կը քաշուի, և սուշար ձեռքը պատրաստ վիճակի մէջ կը կանգնի՝ պարպուելիք գաւաթները հաւաքելու : Բոլոր բազմականները, օղիով լեցուն գաւաթները իրենց աջ ձեռքը բռնած կ'սպասեն : Երիցագոյնը բարեմաղթութիւններու կ'սկսի . «Է՛հ, Սարգիս աղա, (կամ էՖէնաի եւն), անուշովդ ծերանաս, շատ տարիներ սպրիս յաջողութեամբ, երջանկութեամբ և առողջութեամբ, տունդ շէն մնայ...» : Սարգիս աղան, որ ամէնէն վար նստած է, շնորհակալութիւններ կը յայտնէ յարգալիք ձեւերով . յետոյ բոլոր միւսները «կենա՛ցդ, կենա՛ցդ» ըսելով գաւաթները կը պարպեն : Սպասուորողը իսկոյն կը մօտենայ և սուշար կը մօտեցնէ բազմականներուն այն կարգով, ի՛նչ կարգով բաժնած էր, և հրաւիրեալները պարպուած գաւաթները սուշարին վրայ կը դնեն, սպասուորողը սուշարով կը դնէ սեղանին վրայ, ու գաւաթները դարձեալ կը լեցնէ որպէսզի պատրաստ ըլլան : Տօնախմբեալը «տնո՛ւշ հրամեցիք» մը կ'ըսէ . միւսները շնորհակալութիւններ կը փոխադարձեն :

Կը պատահի որ, կոչնականներէն գանուին սմանք, որոնք իրարու հանդէպ քէն ունեցած ըլլան . պէտք է որ տօնախմբութենէն հաշտուած դուրս ելնեն : Երիցագոյնները, որոնք բոլոր ներկաներէն բացառիկ յարգանք վայելողներ կ'ըլլան ընդհանրապէս, հաշտութիւն կ'առաջարկեն, կը միջամտեն, քէն ունեցողները խուսափումի ձեւեր մը կ'ընեն, իբրեւ թէ չուզէին հաշտուիլ, բայց, այդպիսի շքեղ համդիսութեան մը սպասուորութիւններէն ազդուած, կը լռեն . երիցագոյններէն մին կը հրամայէ, սմանք սաքի կ'ելին օղիով լի մէկական գաւաթ իրենց ձեռքը բռնած, մին անոնցմէ աւելի համեստ գանուելով իր ոտխին մօտենալու առաջին քայլը կ'առնէ, ներկաները կը դրուատեն դինքը, միւսն ալ կը մօտենայ : Մեծերուն հրամանին վրայ, անոնք իրենց բազուկները իրարու մէջ սնցուցած, գաւաթները իրենց շրթունքներուն դէմ կը բռնեն . ուրախութեան փոթորկում մըն է որ դահլիճը կը լեցնէ, և, կեցցէներու մէջ հաշտութեան գաւաթները կը պարպուին : Բազուկներու օղակը կը քակուի, դեռ աւելին կայ . պէտք է որ հաշտուողները իրենց դատարկ գաւաթները իրարու դպցնեն . մին կը ջանայ որ իր գաւաթին շրթունքը իր նախկին ոտխին գաւաթին խոնարհագոյն մտախն դպցնէ, և՛ փոխադարձաբար : Սակայ՝ յարգանքի և խոնարհութեան սրտառուչ արտայայտութիւն մըն է որ երկու սիրտերուն իրարու մօտեցում ըլլալը կը հաստատէ : Օղիի մատուցումը քանի մը տնգամ կրկնուած կ'ըլլայ մինչեւ այդ և տօնախմբութեան այս առաջին շրջանը որ մէկ ժամէն աւելի կը տեւէ վերջ կը գտնէ :

Երկրորդ շրջանը կ'սկսի :

Ոգեւորութիւնը կը շեշտուի տակաւ. ամէնքը ա՛լ աւելի զուարթ են, խօսելու, կատակելու և մերթ վիճելու եւսանդուն տրամադրութիւն ցոյց տալու կ'սկսին, բայց տակաւին կարգը ու մասամբ չափաւորութիւնը կը տիրեն: Այս երկրորդ շրջանը՝ իրար պատուելու նոր եղանակով մը կը յատկանշուի. գաւաթները պարպելէ յետոյ կ'սկսին իրարու նետել. այն՝ որուն գաւաթ մը կը նետուի, պարտաւոր է ընդունելու և խմելու՝ նետողին շնորհակայութիւն յայտնելէ յետոյ. երբ տա ալ կը պարպէ զայն ուրիշի մը կը նետէ, այսպէս գաւաթները կկոցի պէս դահլիճին մէկ անկիւնէն միւր կը սուրս: Սպասաւորողները աշալուրջ են, այս անգամ օղիի շիշը ձեռքերնին՝ սուրացող գաւաթներուն ետեւէն կը համին, կը լեցնեն զանոնք ու ետ կը քաշուին: Յանկարծ քանի մը կոչնականներ լեցուն գաւաթներով ոտքի կ'ելնեն, թեւ թեւի մէջ անցնելով շրջանակ մը կը կազմեն, կը խմեն, և զանոնք իրարու դպցնելէ յետոյ՝ ուրիշներու կը նետեն, կը հտաին: Ոգեւորութեան տատիճանը աւելի բարձրացած է. անոնք որ երգել գիտեն, մէկ մէկ շեր կամ շարդի կ'երգեն, եթէ նուագաժողներ բերուած ըլլան, նուագերգութեանց կ'ընկերանան:

Երրորդ շրջանը կ'սկսի:

Այս շրջանին տեղափոխութիւններ կ'ըլլան: Վեր նստողները վար կ'իջնեն, և վար նստողներն ալ վեր կը հրամցուին, սակա կ'ընեն ցոյց տալու համար՝ հաւասարութեան հանդէպ խոնարհամիտ յարգանք մը:

Ամէն հինգ վայրկեան հեղ մը օղիի գաւաթները կանոնաւորապէս շրջան կ'ընեն, կարգը կը խանգարուի միայն այն ատեն երբ իրարու գաւաթ կը նետեն. սակայն, սպասաւորողները աշալուրջ են, կը հսկեն, ու կը տեսնեն անվրէպ թէ որո՞նք իրենց կարգին կը խմեն և որո՞նք չեն խմեր:

Մինչ դահլիճին մէջ, զուարթութիւնները կը զարգանան տատիճանաբար, խոհանոցին մէջ, կիները տենդատ աշխատութեամբ ոգեւորուած, բազմատեսակ կերակուրներու պատրաստութեամբ կ'զբաղին. այդէն քանի մը հտար նախօրօք պատրաստուած կ'ըլլան, վերջին օրուան աշխատութիւնները կրճատելու համար: Մեծ ու պզտիկ սաները, տապակները կրակարաններու վրայ կ'եռան, պէտք է որ բազմականներուն լաւ գնահատութիւնները շահին՝ կերակուրներու որակին ու քանակին, պնակներու, դգոյններու, պատառաքողներու մաքրութեան համանմանութեան ու վայելչութեան նկատմամբ: Անձեռոցներու թիւը կը ճշգե՛ն, լուլիկը (ըպրիզ) և կոնքը պէտք է որ ըլլան նոր ու մաքուր և գաղջ ջուրով լեցուն: Կիներու համար այդ ժամերը մտահոգութեան ու բժախնդրութեան ժամեր են:

Իսաականք այժմ դահլիճը : Արդէն բաւական քանակութեամբ օղի ապաւած կ'ըլլայ չորս հինգ ժամերու ընթացքին . գլուխները տաքցելու են . ոմանց ծունգերը դանդաշելու կ'սկսին . ժամանակը հասած կը համարուի :

— Է՛հ, Սարգի՛ս աղա, կը բաւէ այլեւս... , կ'ըսէ երիցագոյնը : Սարգիս աղան, կը հասկնայ «կը բաւէն», ու, յարգանքով .

— Շա՛տ բաւ, շա՛տ բաւ, կը պատասխանէ, հրամանը ձերն է...

Սակայն դեռ օղիի գաւաթներուն շրջանառութիւնը, կը շարունակուի պահ մըն ալ :

Հրամանը կ'երկրորդուի :

Սարգիս աղան, կտասկի համար, այսօր հոս պիտի մնաք, կ'ըսէ . մինչ միւս կողմէն սպասարկողները սեղանները լարելու պատրաստութիւններուն կ'սկսին : Սեղանները հետեւեալներն են : Բոլորածեւ, արոյրէ շինուած սինիւներ, որոնց շուրջը կրնան տասը անձեր բոլորուիլ, այս սինիւները քառասանի և 40 սանդիսէթի բարձրութեամբ անտակներու վրայ կը դրուին : Անոնց վրայ կարգու կը շարուին պնակները, իւրաքանչիւր անձի մէկ պնակ, հացերը, դգալները, պատտաւաքողները, և անձեւոցները ծալուած վիճակով :

Տօնախմբութեան չորրորդ շրջանը ընթրիքն է, որ աւանուզն գիշերուան ժամը 12ին կամ առ առաւելն առատան լուսնալէն մէկ ժամ առաջ տեղի կ'ունենայ, և մինչեւ որ ընթրիքը վերջ գանէ արդէն լուսցած կ'ըլլայ :

Առաջին անգամ յախճապակեայ սկահակներով՝ բրինձով սպուրները կը բերուին սեղանի վրայ . մեծերը՝ հրամեցէ՛ք, հրամեցէ՛ք . ըսելով դգալները վեր կ'առնեն : Հաղիւ քանի մը դգալ սպուր կը խմեն, սկահակները կը վերցուին . բացառուապէս անոնք որ կ'ուզեն իրենց ախորժակին համեմատ, սպուրը վար դնել, ազատ են : Ապուրէն յետոյ կը բերուի ձուարով ու միտով լեցուած դգուճի, կամ որթատունկի և կամ կաղամբի տերեւներով վաթթուած լիցքը կամ ըստ գրագէտներու պիտի ըսէինք խնողակը : Ասոր կը յաջորդէ բանջարեղէն մը, բանջարեղէնին՝ տապկուած ձուկ, բուճքայ, յետոյ՝ բրինձով և համեմներով լեցուած կողվրայ (գապուրկայ) կարմրցուած, վերջապէս ուրիշ կերակուրներ որոնց կարգին հասել հաւ, հնդկահաւ : Բոլոր կերակուրներու պնակները երկերկու վայրկեան հաղիւ կը մնան սեղանի վրայ, բացի կողվրայէն, հաւէն և հնդկահաւէն, որոնք մինչեւ վերջ պէտք է որ սեղանին վրայ մնան : Ասոնցմէ դուրս միւսները երկրորդական կերակուրներ կը համարուին, ստանտէրը չուզեր որ հրաւիրեալները անոնցմով կշտանան, որպէսզի կտրեան կողվրայէն և հնդկահաւէն իրենց ուզածին չափ ուտել :

Ընթրիքը, զոր, աւելի ճիշդ պիտի ըլլար նախաճաշին նախա-

նաւեր անուանել, երբ սկսի, այլեւս օղիի մատուցուի կը դադրի :
Կարգը գինիին կուգայ :

Արգէն օղին այնքան խմած են շատերը որ, գինի խմելու այլեւս
անկարող կ'զգան ինքզինքնին, հազիւ մէկական կամ երկուական
սկահակ կը պարպեն, ու վերջ կուտան :

Տօնախմբութեան վերջին հանգրուանը լուացումով մը կ'աւար-
տի : Աեղանները կը վերցուին, հրաւիրեալները իրենց տեղերը,
բազմոցներուն վրայ կը քաշուին և լուացումի կարգին կ'սպասեն :
Ապաստուորողները, երկու կամ երեք չափահաս պատանիներ, կոնքը
և գաղջ կամ պաղ ջուրով լեցուած լուլիկը (ըսրիգ) ձեռքերնին,
անձեռոց մ'ալ ուրիշ մը բռնած կը մօտենան երիցագոյններուն. իր
մէկ ծունգը դետին դրած, կոնքն ալ՝ հրաւիրեալին առջեւ, կը նստի
այն որ ջուր պիտի լեցնէ լուացուողին ձեռքերուն : Առաջին բազ-
մականը կը լուացուի, անձեռոց կրողը խկոյն մտքուր անձեռոց մը
անոր ձեռքերուն վրայ կը ձգէ : Ասիկա մինչ կը սրբուի, կոնքը
միւսին առջեւ կը փոխադրուի, և այսպէս կը շարունակուի մինչեւ
վերջը : Գիրքի, հանգամանքի և երիցութեան կարգով : Լուացումը
կ'աւարտի. հանգարտութիւն կը տիրէ, ասիկա թմբութեան նշան է.
Երկու վայրկեանէն լեղի սուրճը կը մատուցուի գարձեալ նոյն կար-
գով, նոյն փափկանկատութեամբ, և, հինգ վայրկեանէն սուրճի գա-
ւաթները կը պարպուին այլեւս ընդհատ կամ բռնադբօս խօսակցու-
թիւններու մէջ :

Ամէնը մէկէն ոտքի կ'ելնեն. հեղ մ'ալ տանտիրոջ բարեմաղ-
թութիւններ կ'ուղղեն իբրեւ հրաժեշտի խօսքեր, որոնց վայելչօրէն
ու աւելի փաղաքջօրէն կը պատասխանէ տանտէրը : Երիցագոյնները,
դէպի դուռ կ'ուղղուին, անոնց ետեւէն միւսները՝ մեկնողներու առ-
ջանցքը կ'ամբողջացնեն : Դուրսը արգէն լապտերները վառուած
պատրաստ դրուած են. ոմանց սպասաւորները եկած են իրենց տէրը
տուն առաջնորդելու, ոմանք ալ իրենք իրենց կ'երթան : Իսկ եթէ
զանուին, ինչպէս յաճախ ալ կը պատահի, ոմանք, որ օղիի ազդե-
ցութեան տակ անկարող ըլլան քակելու առանց գայթումներու,
տանտէրոջ եղբայրները, կամ չափահաս տղաքները զանոնք կ'առաջ-
նորդեն տուն ու կը դառնան :

Տօնախմբութիւնը վերջացած է այլեւս, բայց անոր ազդեցու-
թիւնները քանի մը օր կը տևեն....

Ուշագրաւ է սա պարագան թէ՛ այդ 8-9 ժամ տեւող գիշերոյ-
թին ընթացքին, օղիի չափազանցութեան ազդեցութիւնը կռիւ,
ձեծկուռք առաջ չի բերեր, փափկանկատութիւնը սկիզբէն մինչեւ
վերջը կը շարունակուի, բարոյական հաւասարակշռութիւնը որթնու-
մաօրէն կը պահպանուի, նոյնիսկ կարծես աւելի կը շեշտուի, իօ-

սակցութեանց ու կատակներու միջոցին անպատշաճ շեղումներ չեն կատարուիր, և, կարծես թէ, ընկերային առաքինութիւնները անսովոր թափ մը կ'ստանան այդպիսի հաւաքոյթներու միջոցին: Սոյն հաւաքոյթները կամ խնջոյքները ուրիշ առիթներով ալ անդի կ'ունենան և սրտածառ կը դառնան բարերար հանդիպումներու, ուր թիւրիմացութիւններն ու կասկածամտութիւնները կը փարսախն, ու փոխադարձ օգնութեան պարտաւորութիւնները կը յաջորդին անոնց:

Ահա քաղաքացիներու աօնախմբութիւնը. որ հասարակ է նաեւ, նոյն ձեւով, Տիարպէքիւրցիներու, և Պազըր Մատէնի հայ ժողովուրդին: Կարելի է ստիկա շաւղութիւն մը համարել, բայց կարելի է նաեւ անկէ ուսումնասիրել այդ ժողովուրդին հոգեկան շատ մը կարողութիւնները, ու ասոնցմէ ալ անոր բարոյական նկարագիրը:

Բալուշի հայ քաղաքացին, այս գրքին մէջ շատ բաժին չունեցաւ, իր գիւղացի հայրենակիցներու կողքին, հարկ է զայն առանձին ուսումնասիրել: Ան կը տարբերի գիւղացիներէն իր լեզուովը, իր տարազովը, նոյնիակ իր սովորոյթներովն ու նկարագրովը: Եւ այս տարբերութիւնը անձնական կարողութենէս վեր դասայ, թողլով զայն իբր հայրենասիրական աշխատութեան բաժին մը՝ մեր հայրենակից քաղաքացիներուն:

Վերջացնելէ առաջ կ'աւելցնեմ թէ գիւղացին՝ վերջին ծայր ջերմեռանդ է կրօնի հանդէպ, չափէն աւելի պարզամիտ, գիւրահաւան, և սակայն հպարտ է, ու՛ յամառ, մանաւանդ: Հաւատարիմ՝ ընտանեկան յարկին, ըլլա՛յ այր, ըլլա՛յ կին. կեղծել չեն գիտեր, անվերապահ են: Քաղաքացին, որպէս բազմապահանջ ու բարդ կեանքի մը մարդը կը տարբերի անկէ, օտարներէն աւտո՞ է նկարագրի տարբեր գիծերով. և ասոնք անհրաժեշտ են արդարեւ գոյութեան պահպանման համար, երբ ուրիշ միջոցներ կը պակսին բացարձակապէս, որ զինքը՝ այդ ճնշող միջոցորտին մէջ ապրեցնելու ատակ ըլլային:



ԼԷ. ԳԼՈՒԽ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Բալու, քաղաքային բաժանմամբ, թէև գիւղախմբային վիճակ մը կամ աւան մը (նահիէ) եղած է, սակէ շուրջ 70 տարի առաջ, բայց կազմած է աւանձին առաջնորդութիւն և ունեցած է առաջնորդներու շարք մը, որ կ'սկսի, 1775 թուականներէն և անընդհատ կը շարունակուի մինչեւ 1915 թուականի նախօրեակը:

1895էն վերջ, երբ հարկ տեսնուեցաւ՝ անտեսական պատճառներով, թեմերը վերակազմել, այն ատեն՝ Բալու, Արզնի, Արզնի-Մատէն, Ջերմուկ և Չնքուչ գաւառակները միացնելով մէկ առաջնորդութիւն մը կազմեց Ազգային Պատրիարքարանը: Առաջնորդը Բալու կը նստէր, բայց, պարբերական այցելութիւններով կը հովուէր նաև յիշեալ քաղաքներն ալ: Ասիկա, սակայն, անուանական կարգադրութիւն մնաց միշտ. որովհետև, հարկը պահանջած ատեն, յիշեալ քաղաքներու թաղական խորհուրդները ուղղակի Պատրիարքարանի հետ կը հարգորդակցէին յաճախ, աւանց առաջնորդներու տեղեկութեան: Անշուշտ դորձնական կերպն ալ սա էր, յարաբերութեանց մէջ դանդաղութիւն կամ յապաղումներ առաջ չբերելու համար:

Տեսական պատճառներ ըսինք. սսիկա շատ պարզ է: 1895ի տառնոսայները մեծապէս ազդեցին գաւառներու ժողովուրդին նիւթական կացութեան վրայ: Վանքապատկան կալուածներու՝ ինչպէս նաև զամազան հասոյթների զգալապէս նուազեցան, և Բալու, աւանձին, առաջնորդութիւն մը պահելու անկարելիութեան առջեւ գրտնուեցաւ Պատրիարքարանը ուրեմն, պահելու համար այդ հաստատութիւնը, այդ միջոցին դիմեց:

Ի՞նչ եղած է առաջնորդութեան դերը Բալուի ժողովուրդին մէջ, զարգացման ու առաջդիմութեան տեսակէտով, դժուար պիտի ըլլար պատասխանել այս հարցման: Անշուշտ վարչական այս հաստատութիւնը, հայ իրականութեան մէջ, կարեւոր աւանձնաշնորհում մըն էր, որ պիտի կրնար օգտակար դառնալ, գաւառին որքան կրտսական ու կրթական վիճակին ու ձեռնարկութեանց, նոյնքան անոր քաղաքային յարաբերութիւններուն տեսակէտներով: Վայելելով սուլթաններու պէրսիներով տրուած իրաւունքները, միշտ, կրնային յարաբերութիւններ մշակել կառավարիչներու, դատաւորներու, և բոլոր բարձրաստիճան պաշտօնեաներու հետ, և այս յարաբերու-

Թիւններով անդակուն շատ մը խնդիրներ, դատական, հողային, և կրթական, շատ գիւրութեամբ գաւառին մէջ լուծել, փոխանակ կեդրոնական կառավարութեան պաշտօնատուները հասցնելու, ուր յաճախ Պատրիարքարանն իսկ անլսելի կը մնար: Անանք, առաջնորդները, միւս կողմէն յարարութիւն մշակելով անդունդն ազդեցիկ պէյերուն, հարստահարիչ աւատակեաներուն հետ, կրնային անպաշտօն կերպով օգտակար դառնալ հայ, քուրդ, թուրք գիւղացիներուն միանգամայն:

Առաջնորդները՝ որպէսզի կարենային այս գերը լրիւ կատարել, պէտք էր որ իրենց հանգամանքին պահանջներուն համաձայն պատրաստուած ըլլային: Պէտք էր որ լու թուրքերէն գիտնային և օսմ, օրէնսգիտութեան բաւական հմտութիւն ունեցած ըլլային: Հէր բուեր Ֆրանսերէն գիտնալ, չէր բուեր քարտուելու վարժ ըլլալ, չէր բուեր լու յօդուածներ ու քերթուածներ ստորագրել: զժրախտաբար այս առաքինութիւններէն առաջինները բացարձակապէս կը պակսէին, և իրենք չէին կրնար կառավարութեան վրայ բարոյական ազդեցութիւն ունենալ, իրենց շուրջը համակրութիւն ու պատկառանք ստեղծել: Առաջնորդական պէրաթը առաջնորդներու դաւաճանն էր աւելթաններէն շնորհուած, բայց, արժեցնել պէտք էր զայն:

Կը յիշեմ, հանգուցեալ Օրմանեան, իր պատրիարքութեան օրերուն, 1896էն յետոյ, երբ Պատրիարքարանի յարարութիւնները Բ. Դրան հետ լսի իբր պաշտօնական ձեւակերպութիւն դարձած էր, կը գրէր Պագըր - Մտաէնի, Տիգրանակերաի առաջնորդներուն. «Աշխատեցէ՛ք խնդիրները անդունդն վրայ, անդական կառավարութեան միջոցաւ լուծել և մինչեւ կեդրոնական կառավարութիւնը չզբաղեցնել անոնցմով...»: Բայց Օրմանեան գիտէր նաեւ թէ՛ այդ առաջնորդները, քանի մը բացառութիւնները չհաշուելով, անկարող էին հասկնալու նոյնիսկ պատրիարքին այդ թեւադրութեան խոյ իմաստը...:

Բալուի մէջ, ուրեմն, ժողովուրդը ունեցաւ առաջնորդներ, որոնք զինքը արժանաւորապէս ներկայացնելու անկարող եղան, անկարող եղան այլամերժ, ու ազէտ տարրերով կազմուած կառավարութեան մը վրայ բարոյական ազդեցութիւն առաջ բերելու, ժողովուրդը, անխտիր, անոնց, և զանոնք ալ ժողովուրդին մօտեցնելու: Ուրեմն, իրենց հանգամանքին քաղաքային մասը անպատու մնաց, ու, մերթ, մեասակար դարձաւ: Գալով իրենց կրօնա-մշակութային պարտքին մասին, ասիկա մնաց միշտ կայուն, ենթակայ ժողովրդային կամքին, փոխանակ առաջնորդողի դեր մը ունենալու: Վարժարաններու վիճակին նոյնիսկ անտեղեակ մնային, չունեցան վիճակագրութիւն,

չքննեցին կրթական հաստատութիւններու ընթացքը. բայց մէկ երկու քէն, որոնցմէ էր Պօղոս վրդ. Նաթանեան, որու մանրամասն վիճակագրութիւնն է սր այսօր գուտաւի հայութեան վիճակը բաւական մանրամասնութեամբ կը սրտակերտցնէ: Անոնք գիւղերու վիճակին անսուղեակ մնացին: Իրենց բնակութիւնը հաստատեցին քաղաքը և Քաղցրահայկաց Ս. Աստուածածնայ վանքը, անոր կենտրոն օղբ, ջուրը և դմայլելի տեսարանները վայելեցին. առանց անոնց բան մը տարու... :

Առաջնորդարանի հասոյթները հեռուեալներէն կը բաղկանային. վանքերու կալուածներուն եկամուտները: Վանքերը ընդարձակ կալուածներ ունէին, բայց անխնամ թողուեցան, անոնք հեռուէն աչնչացան եթէ այգիներէ կը բաղկանային, և պէյերէ գրաւուեցան եթէ արանքէ կը բաղկանային: Պաղի. տախտա տուրք մըն է զոր գիւղացիները նուէրի ձեւի տակ կը վճարէին վանքին. այժ, սչխար, արմախք, դրամ եւն. և, առաջնորդարանի սովորական եկամուտներ՝ պտակի, թաղման, մկրտութեան տախտներով: Ռճնեցած են ժողովներ, բայց յոճախ գործերը վարած են առաջնորդները՝ մխտցած քաղաքի կամ գիւղերու ամէնէն ազգեցիկ անձերուն հետ:

Հոս կը ներկայացնեմ ցանկ մը՝ առաջնորդներու, տեղապահներու և փոխանորդներու, որոնցմէ շատերուն մխայն անուներ յայտնի է առանց կարեւոր գործերու:

1775—1802	առաջնորդ եղած է	Գրիգոր եպիսկոպոս
1835—1839	»	Գէորգ վրդ. Էօտէմիչցի, նախարդ առաջնորդ կուտինայի
1840—...	»	Յարութիւն վրդ.
1841—...	»	Պեարոս վրդ.
1843—...	»	տեղապահ Մանուէլ վրդ.
1844—1859	»	» Ռսկան վրդ.
1859—...	»	» Մանուէլ վրդ. Կ. Պոլսեցի
1860—63	»	» Մկրտիչ վրդ. Տիգրանեան Հրաչուպործ
1863—...	»	» Սարգիս վրդ. Վարդապետեանց
1868	»	փոխանորդ Զաքարիա վրդ.
1868 Մայիս 15	»	» Սարգիս վրդ. տեղապահ կրկին
1869—73	»	Պեարոս վրդ. Բազրատունի
1873—75	»	» » » տեղապահ կրկին
1876	»	փոխանորդ Տ. Պօղոս քէյ.
1877	»	տեղապահ Պօղոս վրդ. Նաթանեան
1880	»	Բարթոլոմէոս վրդ. Պաղճեան
1883—85	»	առժ. փոխ. Յրդ անգամ Սարգիս վրդ. Վարդապետեանց

- 1887—89 անդապահ Թէոզորոս վրդ. Տիվրիկլեան
- 1890—91 » Յովհաննէս վրդ. Բզնունի
- 1892 » Քրիզոր քնյ. Տ. Նիկողոսեան
- 1893—94 » Սարգիս վրդ. Վարդապետեանց 4րդ անգամ
- 1898 » Եզնիկ վրդ. Գալփապեան
- 1901—902 » (10 ամիս) Նիկողոս վրդ. Ֆրանկիլեան
- 1902 փոխանորդ Տ. Սաւրէն քնյ. Տէրոյեան
- 1902 միայն ընտրուած Ազան վրդ. Համամեան (Արծրունի)
- 1903 » Խոսրով վրդ. Պէշրիկեան
- 1903—905 անդապահ Կորիւն վրդ. Եսայեան
- 1905—906 փոխանորդ Տ. Սաւրէն քնյ. Տէրոյեան
- 1906 անդապահ Երեմիա վրդ. Խաչատուրեան
- 1907—8—9—10 փոխանորդ Տ. Սաւրէն
- 1911—14 անդապահ Եզնիկ եպիսկոպոս Գալփապեան

Ասանցմէ քանի մը հասար միայն իրենց գործերովը ծանօթ են. մնացեալներուն միայն անուանները կը գանկնք արձանագրութեանց մէջ : Անոնք, որոնք իրենց գործերովը ծանօթ են, հետեւեալներն են.

Պօղոս վարդապետ Նաթանեան որ 1877ին ընտրուած է իբրև առաջնորդական անդապահ, Բաշուի թեմին համար Ասիկա իր պաշտօնը կը վարէ հոն գրեթէ մէկ ասորիի չափ : Նաթանեան վարդապետը իր «Արասար Հայաստանի» ծանօթ զբօսյկով մեզի կը ներկայանայ իբր թունդ հայրենասէր մը և պաշտպան հասարակ ժողովուրդին կապուած իրաւունքներուն :

Յանդուզն եղած է ան իր բոլոր գործերուն մէջ, չէ ընկճուած երբեք այս կամ այն հարուստին ազդեցիկ զիրքէն, այլ խրոխտ կեցուածքով մը զայն արհամարհելու անխիստութիւնն սենեցած է : Սկզբունքին վրայ հաստատ, նկարագիրը ուժեղ, խաւնուածքը յզարիտական, բարոյականը մաքուր, վարքը, բարքը անբասիր և իր համոզումներուն մէջ յամառ ու անդրդուելի, տե՛ս՝ Նաթանեան Պօղոս վարդապետը՝ իր հարազատ դիժերով :

Վան քաղաքին մէջ ծնած է : Իր պաշտօնավարութեան օրերուն Նաթանեան և Սարգիս Վարդապետեան կաւտակցութիւն մը առաջ եկաւ, մէկը հասարակ գտատկարդէն կազմուած, իսկ միւսը հարուստ և ազդեցիկ գտատկարդէն : Նաթանեան Պօղոս վարդապետ կրթնած էր հասարակ գտատկարդին, մինչդեռ Սարգիս վարդապետ հարուստն էր :

Երկու կողմերու կիրքերը այնքան աստեղացած էին, որ երբեք չէին խնայեր զիրար զիրաւորելու համար ամէնէն անպարկեշտ բա-

ուերը գործածել, ու երբ ազգեցիկներու պարագլուխներէն Չթէ-
կան Ղաւկաս աղան և ուրիշներ Սարգիս վարդապետը կ'առաջնոր-
դէին դէպի Առաջնորդարան իբրև յաջորդը Նաթանեանին, նոյն
միջոցին Նաթանեանի կուսակիցներէն, հարուստները սարսափեցնող
կիւրճեան Յակոբ անուն ազգայինը, դանտիր քաշած կը կենաց այն
նեղ փողոցին մէջ, ուրկէ Սարգիս վարդապետը իրեններով պիտի
անցնէր երթալու համար Առաջնորդարան, կը պուսայ ըսելով. «Ո՞վ
որ Նաթանեան է, աջ կողմս թող անցնի, իսկ ո՞վ որ Սարգիս վար-
դապետան է, ձախ կողմս», և կը յարձակի հարուստներուն վրայ ի-
րեններուն հետ միասին, որոնք այս վերջիններուն հարուածներուն
առջև չդիմանալով, ետ կը դառնան Սարգիս վարդապետով: Աս էր
ստեղծուած կացութիւնը Բալու քաղաքի ազգայնոց մէջ Պօղոս վար-
դապետ Նաթանեանի պաշտօնավարութեան տարին:

Պօղոս վարդապետ Նաթանեան Բալուի մասին գրած իր տեղագ-
րութեան մէջ, քաղաքի հայ ժողովուրդին բարոյական նկարագիրը
վերլուծած ատեն, ահաասրակ լաւ չի խօսիր անոր մասին և վի-
րաւորիչ են իր խօսքերը, մանաւանդ Բալուի բարեպաշտ կիներն
անգամ, իր գրչին հարուածներէն զերծ չեն մնացած, իբր թէ անոնք
այդ մարդերէն աւելի արբեցող են եզեր զորս տեսած է ինք իր աչ-
քերովը: Բայց գրաւոր այս ամբաստանութիւնը, այս անպատուաբեր
վերագրումը, որ ուզուած է տեղապահին կողմէն, պաղարիւն դա-
տաղութեան մը և յատկապէս հոգեւորականի անարժան են, և
սխալ:

Արդարեւ, Պօղոս վարդապետ Նաթանեան, ազգասէր մը եղած
է. անշահախնդիր ազգասէր մը, որ միջին ճամբայ ունեցած չէ սա-
կայն. և ժամանակին ու պայմաններուն՝ շատ հեռուէն հետեւած է.
այս պարագան ի հարկէ արդեւք պիտի ըլլար իր ազգասիրական
ձգտումներուն դարգացման ու ասրածումին:

Բայց, հարկ է խտասովանիլ, արդար ըլլալու համար, թէ առաջ-
նորդներու, տեղապահներու, փոխանորդներու շարքին մէջ, միակն
եղած է, որ հետաքրքրուած է գաւառին վիճակովը՝ կրօնական ու
կրթական տեսակէտով. փաստը այն մանրակրկիտ վիճակագրութիւնն
է, զոր կազմած է մէկ տարւան իր պաշտօնավարութեան ընթաց-
քին, ինչ որ ուրիշները ասանակ տարիներու շրջանին չեն ըրած և
ազգին ու Պատրիարքարանին անձունօթ պահած են գաւառներու տ-
մէնէն կարեւոր խրականութիւնները:

1880ին Նաթանեան Պօլոս վարդապետին կը յաջորդէ Պաղճեան Բարթողիմէոս վարդապետը: Պաղճեանը բնիկ պոլսեցի, ծնած է Գում-Գափու թաղը: Մայր վարժարանին մէջ կ'աւանդէ իր սուսումը և Ս. Լուսաւորչեան վարժարանի հայերէնի և ֆրանսերէնի սուսուցիչ կ'ըլլայ: Եռս ջոջերու տուները մասնաւոր դասեր կուտայ է, ինչպէս նաև սուսուցիչ եղած է Փանսեան-Ազատեան վարժարանին մէջ (1870—74):

1864ին Արմենակ Հայկունիի հրատարակած Մուսայի Մասեաց Չայի Ընկերսիրական հանդէսին մէջ հրատարակուած էրնէստ Ռընտանի վաբ Զիսուսին, ինք թարգմանած է, անշուշտ իբր պարզ զբաղումի միջոց և ոչ թէ իբր համոզման խնդիր: 1871—2ին Մանգումէի մէջ հրատարակած է սասնաւորներ և ուրիշ զբոսթիւններ թարգմանածոց և ինքնագիր:

Թարգմանած է նաև Բոլ տը Գոգի Եզրայր Յակոբոս անուն մէջը (1875) և Կին, խոզ, գինի (1880) սր իր վարդապետանալէն յետոյ ստացած է իր աշխարհական Կարապետ Պաղճեան անունով: Վարդապետ ձեռնադրուած է 1877 Յուլիս 10ին Սարէն արքեպիսկոպոս Նարպէյէն:

1877—1880, երեք տարի քարոզչութիւն կ'ընէ Պօլոսոյ մէջ, մասնաւորապէս Ենի-Գիւղ, 1880ին Բալու կը զրկուի իբր սուսնորդական տեղապահ: Բալուի մէջ երկու տարի պաշտօնավարելէն յետոյ, կը հրաժարի և նոյն պաշտօնով կը հրաւիրուի Չմշկածաղէն, ուր կը մնայ մինչև 1886: Յետոյ նոյն պաշտօնով Բաղէշ կը զրկուի ուր կ'ը մնայ միայն մէկ տարի: Վերջապէս ուր սր կը զրկեն զինքը, հասոյքով և սասնոց արտունջի կ'երթայ Պաղճեան վարդապետը, ինչպէս Բաղեշէն յետոյ Երզնկա, Բարեբղ, Ռուստաթոյ սև ամէնէն վերջը Պուլիտրիա իբր այցելու հովիւ կը զրկուի: Այս պաշտօնավարութիւնը իր կեանքին քայքայումը կ'ըլլայ: Պուլիտրիոյ հավաքութիւնը իր արամադրութեանց և խասնուածքին յարմար պաշտօն մը չէր, վասնզի երկար տուն անհովիւ մնացած և եկեղեցական զործերը սասնոց սրտոյ ուղղութեան վարումը թեմ մը, ծերութեան հասակի մէջ յարտակու կերպով չըջուն պաշտօնավարութեամբ մաստկարարել իր դործը չէր:

Այս պաշտօնը ձախողուած մը եղաւ: Վրայ տուաւ իր աւտղջութիւնը և շտա բան ալ իր համբուէն:

Ֆիզիքապէս քայքայուած դարձաւ 1902ին Կ. Պոլիս և Ազգ. Հիւանդանոցին մէջ թշուառ մեռաւ 1904 Յունիս 2ին: Անբասիր և

զգուշաւոր մարդ, մշտնջենական տեղապահ և կնճռատութեանց յարգարիչ:

Միայն Ռոսասթոյի մէջ թոյլ պաշտօնավարութիւն մը կ'ուեննայ, ինչպէս Պոլսոյ թերթերը զրեցին այն ատեն: Չորս տարի Ռոսասթոյի մէջ պատրիարքական պաշտօն վարելէն յետոյ, 1897 Հոկտեմբեր 18ին գումարուած գաւառական ժողովը զինքը պատրիարքական փոխանորդութենէն դադարեալ կը հռչակէ անկարողութեան վերագրութեամբ:

Պաղճեան վարդապետին այս «անկարող» վերագրումը զարմանք պատճառած եղաւ անոնց, որոնք անոր կարողութիւնը ճանչցած էին, գուցէ իր յառաջացեալ տարիքին և գաւառներուն մէջ շատ յոգնած ըլլալուն բերմամբ գործելու անկարողութիւն ցոյց տալ սկսած է Ռոսասթոյի մէջ: Պաղճեան վարդապետին համատժա այս կենսապրութենէն վերջը, պիտի խօսիմ Բալուխ առաջնորդական ակումբին վրայ իր պաշտօնավարութեան մասին, որ կը տեւէ լման երկու տարի: Պաղճեան վարդապետը անտկնկալ մը կ'ըլլայ Բալուխ հասարակութեան համար, ճիշդ յարմար ատենին կը համարի ան հոն, ուր տակաւին քէնն ու ստեղծութիւնը կը շարունակուէին հարաւատին ու հասարակ ժողովուրդին միջև: Հարուստ դասակարգը կը յաւասար թէ Պաղճեան վարդապետը իր կողմը բանելով իր ուզածին համեմատ պիտի գործէ, հայնը կը մտածէր հասարակ ժողովուրդը: Երկու դասակարգն ալ վարդապետին շուրջը կը դառնան զայն իրենց կողմը շահելու համար:

Բայց Պաղճեան վարդապետը երկու կողմերը մտիկ ընելով կը հասկնայ անոնց նպատակները, ու յետոյ ինք կ'սկսի գործել անոնցինէն տարբեր ծրագրով մը, այսինքն, համերայնութեան, սիրոյ և միութեան ծրագրով: Երկու կողմերու պարագլուխներուն կը մօտենայ անձամբ անոնց քովը երթալով, զանոնք համոզելու կը ջանայ, կ'իրքերը մարելու, իրարու մօտ բերելու հաշակցնելու աշխատութիւն կը թափէ: Յետոյ, երբ կը յաջողի երկու կողմի հակառակորդներու կ'իրքերը ստախճան մը մեղմացնել, իր ճարտար և համոզիչ խօսքերովը, զանոնք Սոաջնորդարան հրա իրելով իրարու հետ համբուրուելու, հաշտուելու կերպը գտնել կը մտածէ, և կը յաջողի: Նոյն ատեն կը հասկցնէ անոնց թէ ինք Բալուխ առաջնորդական ակումբին վրայ նստելու համար իբր պերճանք չէ գացած, կը հասկցնէ թէ ինք ասանց ժողովուրդին միացեալ ուժերուն, և ասանց իրեն հետ գործակցութեան սչինչ կրնայ ընել:

Ու երբ ամբողջ ժողովուրդը մէկ հողի, մէկ սիրտ ըլլալով իրենց բարոյական և նիւթական կարելի եղած օժանդակութիւնը արամադրելու հանդիսաւոր խոստումներ կ'ընեն Պաղճեան վարդապետին:

պեախն, անոնց առջեւը կը դնէ Ազգ. Սահմանադրութիւնը որուն հրահանգներուն համաձայն կազմաւորուեալ ժողովները կը կազմակերպէ ու կ'սկսի գործիւն

Նախ, քաղաքին և գիւղերուն վարժարանները բարեկարգելու կ'սկսի, և կեդեցիներուն երգասացութիւնները կը կանոնաւորէ, Առաջնորդարանի գիւհանը կը վերակազմէ, պաշտի գանձումներուն ընդհատուելը կը վերահաստատէ, եւն

Բարթողիմէս վարդապետ բնաւորութեամբ, խառնուած քով հանդարտ էր, նկարագիրը մաքուր, հեզահոգի, անշահախնդիր, իր պաշտօնին նուիրուած մըն էր, ասոր համար, ուր որ զրկէին զինքը ասանց արտնջալու կ'երթար Բարթողիմէս վարդապետ բաւին ընդհանուր իմաստովը Տէրվիշ մըն էր։ Դրամ գիղելու համար նաւր հարամութիւնը չունեցաւ ան երբեք։ Փառքի, տերճանքի, անձնասիրութեան, գոռոզութեան տխտաւոր հիւանդութիւնը չի համարձակեցաւ մօտենալ իրեն, անոր մաքուր նկարագիրը վարակելու համար։ Ոսկին ու արծաթը չի կրցին զոյն հրապուրել, աղքատ սպրեցաւ և աղքատութեան մէջ մեռաւ, այս բարի և կեղեցակիանը

Բալուցին յարգեց զինքը իբրև անկեղծ ժողովրդասէր, սիրեց զինքը իբրև անձնուէր հովիւ, ու երբ ան հեռացաւ իրմէն, շատ ցաւեցաւ, զգալով թէ անոր հեռանալը Բալուէն, մեծ կորուստ մըն է առաջնորդական աթոռին համար։

Ըսի թէ Պաղճեան վարդապետը բնաւորութեամբ, խառնուած քով հանդարտ էր, ոմանք անոր այդ հանդարտութիւնը շփոթեցին թաւրութեան հետ, որպէս թէ թոյլ է եղած ան գործելու մէջ, բայց ճիշդ չէ այս վերագրումը Պաղճեանին համար, և թէ նախնեան վարդապետի կրակն ու կորովը չունէր կ'իրքեր բարբաքելու, ունէր լրջութիւն, հեռատեսութիւն և կ'իրքերը մտրելու ցտակութիւն։ Անոր մանաւանդ թուրքերէն և օտար լեզուներ գիտնալը առաւելութիւն մ'էին իրեն համար։ Վարչական կարողութիւն ունէր Պաղճեանը որ կրցաւ Բալուի մէջ առաջնորդական տեղապահի պաշտօնը արժեցնել ո՛չ միայն հայ ժողովուրդին, այլ տեղական կառավարութեան առջեւ։ Անոր ներկայութիւնը իսաւրեւ մէջ, յարգանքի և մեծարանքի տեղն ունէր։

Պողճեան Բարթողիմէոս վարդապետին հրատարակէն վերջը Բա-
լուէն, իրեն կը յաջորդէ Սարգիս վրդ. Վարդապետեանցը իբրև
առաջնորդական տեղապահ, այս ընտրութիւնը կը կատարուի 1883ին
և կը տևէ մինչեւ 1885: Այս վարդապետը չորս անգամ Բալուի
առաջնորդական ավետին վրայ բողոքու սրտաբան կ'արձանանայ
զանազան տարիներու մէջ: Ուսում, դարգացում չունէր ան, այլ
ունէր քիչ շատ փորձառութիւն եւ ճշդական պայմաններուն յարմա-
րելու կարողութիւն, սասնք էին անոր ունեցած բոլոր պաշարները:
Անկէ զատ, հարուստ գասակարգի հոգեբանութեան թափանցելու,
զանանք սիրաշահելու, մանաւանդ անոնց կամակատարն ըլլալու
կերպը լաւ սորված էր: Ասիկա Նաթանեան Պողոս վարդապետին
մրցակիցն եղաւ հարուստներուն կողմը բռնելով: Երբ Բալուի ա-
ռաջնորդական թեմը վարելու համար Պոլսէն կամ ուրիշ տեղերէ
քիչ շատ բան հասկցող առաջնորդ կամ տեղապահներ կուգային և
զանազան պատճառներով կը հրատարակին այդ թեմէն, Սարգիս վրդ.
Վարդապետեանցը կը հրաւիրուէր ի Բալու առաջնորդական ավետը
թափուր չի մնալու, մանաւանդ հարուստներուն հաշտոյն գործելու
համար: Եթէ ոչ, արժանիք մը չէր ներկայացնէր բնաւ ան:

Սարգիս վարդապետէն յետոյ 1887ին կ'ընտրուի Թէոդորոս Տիւ-
րիկլեանը իբր տեղապահ, որ կը վարէ մինչեւ 1889: Այդ երկու
տարուան մէջ Տիւրիկլեան վարդապետը ոչինչ ըրաւ: Ինք, թէ-
պէտև թուրքերէն լեզուին մէջ կ'ըսէին թէ բաւական վարժ էր և
յարաբերական ընթացիկ գործերուն մէջ ալ փորձառու, բայց երբեք
չի կրցաւ հետեւիլ Պողճեանին գծած ազգայան շաւիղներուն: Անոր
հակադրասակերն էր ան բոլորովին: Թող ներուի ինձ ըսել որ Տիւ-
րիկլեանին ո՞ր տեղացի ըլլալը և ո՞ր միաբանութեան վերաբերիլը
չեմ գիտեր: Ես միայն զինքը տեսած եմ Բալուի առաջնորդական
ավետին վրայ տեղապահի հանգամանքով: Յաղթամարմին մէկն էր
ան, մեծափոր, շատակեր, շահախնդիր և ապիկար:

Անոր շահախնդրութեան մէկ պարագան պիտի պատմեմ, որ բա-
ւական հետաքրքրական է: Թրխէ գիւղին Տէր Թորոս քահա-
նան խենդենալով տունէն կը վախչի ու կ'երթայ դէպի գետը: Իր
փեանն անմիջապէս քահանային կտակէն վազելով կը ջանայ հասնիլ
արգիլելու որ քահանան ինքզինքը գետը չի նկատ. բայց տակաւին
ինք քահանային չհասած, ան կ'իջնայ գետը և կը խեղդուի: Հակա-
ռակ այնքան փնտռութեան, անոր գիտիլը չի գտնուիր որ
թաղուի:

Տիվրիկլեան վարդապետը իմանալով այս պարագան, քահանային փեսան Առաջնորդարան կը կանչէ սպառնական նամակով մը. երբ այս վերջինը կը ներկայանայ Առաջնորդարան, Տիվրիկլեանը երկու հարիւր դահեկան կ'ուզէ անկէ, աւարկելով թէ ինք իբր տեղապահ, Արածանիի մեջ խելգուող քահանային յուղարկաւորութիւնը կատարած է, Արածանիի մեջ միւռոն քափ ընելով, ու գանձել կը յաջողի անկէ այդ դրամը: Այս Սխտոնականութիւնը ստրատիելի գայթակղութիւն մը առաջ կը բերէ Բալուէի մէջ, և իր վրայ շատ սուղի կը նստի:

Այս էր Տիվրիկլեանը, ո՛չ այդ պաշտօնին մարդն էր ան, ո՛չ ալ թեմին կրթական և կրօնական կանոնաւորութեանց վրայ հակելու, անոնց սուղութիւն ստիւլ ու սիրան ու զգացումը ունէր: Անոր միակ նպատակն էր դրամ ունենալ, հոգ չէ թէ անիրաւ միջոցներով, կը բաւէր որ իր գրպանին մէջ լեցուէին անոնք, ո՛չ թէ Առաջնորդարանի անտուկին մէջ: Մեղքիս վրայ, իր հետ գրագիր մ'ալ բերած էր կարապետ անուետի, նշանաւոր էր ան ալ իր ճարպիկութեան մէջ. կ'ըսէին թէ վարդապետը ասանց իր գրագրին խորհուրդներուն գործ չի տեսներ, արդէն փորձելն ալ նոյնը կը հաստատէին:

Վերջապէս Տիվրիկլեանը հեռացաւ Բալուէն, առանց իր հաւելը թողելու գոնէ սպգօգուտ պզտիկ գործի մը յիշատակը:

1890 ին առաջնորդական տեղապահ կ'ընտրուի Վարագայ վանքի միաբաններէն Ներսէս վարդապետ Բզնունին: Այս վարդապետը այդ թուականին Նըպրչի գիւղին վարժարանին ուսուցիչն ու եկեղեցւոյ հովիւն էր: Իբրեւ մարդ, պատուական էր, բայց իբրեւ առաջնորդական տեղապահ, անփորձ էր. վասնզի առաջին անգամն էր որ կ'ստանձնէր այդպիսի փշոտ և պատասխանատու պաշտօն մը, վանական կեանքէն դուրս գալով: Մէկ տարի մը տեւեց անոր պաշտօնավարութիւնը, ասոր պատճառը միայն իր անփորձութեան վերագրելու չէ, այլ առաւելապէս թուրքերէն խօսիլ չգիտնալուն: Կառավարութեան մէջ, ինչպէս ամէն դուռուի հայ առաջն. կամ տեղապահ, նոյնպէս Բալուէինն ալ աթոռ մը ունէր, ուր պիտի նստէր ան պաշտպանելու իր ժողովուրդին իրաւունքները, յետոյ, կառավարութեան հետ ունեցած բարւոք յարաբերութիւնները պահել պիտի գիտնար, վարչական և դատական օրէնքներու մասին հմտութիւն պէտք էր որ ունենար, դժբախտաբար, Բզնունի վարդապետը զուրկ էր այդ կարեւոր յասկութիւններէն, իր եկեղեցագիտութիւնն ու հայագիտութիւնը միայն, չէին բաւեր վարելու համար այդ թեմին բազմապահանջ գործերը: Թէպէտեւ սիրուեցաւ ու յարգուեցաւ ժողո՞ւրդը ուրդէն, որովհետեւ մաքուր եկեղեցական մըն էր, ոգելից ըմպի չէր գործածեր, ոչ ալ կը ծխէր, աշխատելու եռանդ, կորով

չէր պակսեր իրմէն, կրթական գործին բարեկամ, բեմը կենդանի պահող, թեմին այցելութեան գացող, եկեղեցւոյ և վարժարանաց կանոնաւորութեանց վրայ հսկելու նախանձախնդրութիւնն ունեցող մէկն էր Բզնսէնի վարդապետը:

Բայց ինչպէս ըսի, առաջնորդի մը վրայ փնտռուած է՛ն կարեւոր յատկութիւնները շունենայուն համար, այդ պաշտօնին վրայ մնալը, ինք աւելորդ սեպեց և հեռացաւ Բալուէն:

1892ին առաջնորդական փոխանորդի պաշտօնին կը կոչուի Բալու քաղաքի քահանաներէն Տ. Գրիգոր Նիկողոսեանը, որ իր ժամանակի տեղւոյն քահանաներուն մէջ արժանաւորն ու յարմարագոյնն էր այդ պաշտօնին համար: Իբրեւ կարողութիւն, գիտէր հայերէն և թուրքերէն և բուսկան խօսելու ալ՝ կարողութիւն: Քաղաքին բնիկն ըլլալուն համար, տեղւոյն սոյորութիւնները, մարդերուն բարքերը, բնաւորութիւնները աղէկ մը ուսումնասիրած էր: Հայ հարուստին, և թուրք մեծամեծներուն հետ վարուելու, յարաբերուելու կերպերը գիտէր: Սիրուած ու յարգուած դէմք մըն էր այս քահանան, ոչ միայն իր լեզուին ճարտարութեամբը և իր խոհական վարուողութեամբը կրցեր էր ինքզինքը փնտռել տալ շատ մը գործերու համար, այլ իր բարձրահասակ և պատկառելի դէմքն ալ բուսկան ազդեցութիւն գործած էին բոլոր դասակարգերուն վրայ:

Շատ մը եկող գացող առաջն. կամ տեղապահներուն հետ շրջուած ու գործակցած ըլլալով, վարչական գործերու մէջ քիչ շատ հմտացած էր: Երբ փոխանորդի պաշտօնը առանձնեց Տ. Գրիգոր քահանան, բնաւ զգալի չըլլաւ առաջնորդի մը պէտքը: Առաջնորդարանի գործերը վարեց ձեռնհասօրէն, արժանանալով պաշտօնական մարդոց պատմաստանքներուն: Եւ որովհետեւ տեղւոյն ազգ. գործոց համար իր Պոլիս երթալուն անհրաժեշտ պէտքը տեսնուեցաւ, ստիպուեցաւ տեղի տալ այդ հարկադրանքին առջեւ և ուղեւորուեցաւ դէպի Պոլիս: Որպէտզի Առաջնորդարանի գործերը իրենց բնականոն վիճակը չկորսնցնեն, Տ. Հօր բացակայութեան միջոցին, 1893ին կ'ընտրեն գարձեալ Սարգիս վրդ. Վարդապետեանցը, որ կը վարէ այդ պաշտօնը մինչեւ 1894: Սարգիս վարդապետին արժանիքի մասին, նախորդ էջերուն մէջ հարկ եղած բացատրութիւնները տուած եմ:

1894էն մինչեւ 1898ը Բալուն առանց առաջնորդի կը մնայ, 1895ի տեղի ունեցած ընդհանուր ջարդին հետեւանքով:

1898ին վերջապէս առաջն. տեղ. կ'ընտրուի բնիկ պոլսեցի և Խարէն եպիսկոպոս Աչըգեանի օրով, նախկին Արմաշական Եզնիկ վարդապետ Գալիաքճեանը, որ կը վարէ զայն մինչեւ 1901 թուականը:

Գալիսաքճեան վարդապետ Բալու հասնելուն պէս գործի կը ձեռնարկէ նախ ժողովները կազմակերպելու, և անկէ յետոյ Առաջնորդարանի գիւտներ կը կազմէ ու կ'սկսի սոսկ անոր կանոնաւոր ընթացք:

Եզնիկ վարդապետ ճիշդը խօսելու համար ունէր արժանիքներ, այսինքն, վարչական գործերու մէջ բուսական փորձառու էր: Կառավարութեան հետ յարաբերուելու եղանակն ալ իրեն անձանօթ չէր կ'ըսէին, թուրքերէնը պահանջուած աստիճան ծանօթ էր իրեն և կը խօսէր բուսական սահուն: Աշխատասէր էր և գործելու մէջ ալ տրագ: Ինք աշխոյժ, վառվառն, եռանդոտ վարդապետ մըն էր: Իր օրովը սակայն, գրեթէ երեք տարիի չափ, իր պաշտօնավարութեան միջոցին չի կրցաւ ան յիշատակելի գործ մը անսնել զժբախտաբար, ոչ թէ որովհետեւ միջոցներ կը պակսէին իրեն, այլ որովհետեւ օրուան թրքական քաղաքականութեան հետ վարուելու զգուշական հարկն էր անշուշտ որ չի համարձակեցաւ կասկածի տակ ձգել իր գործունէութիւնը: Այս խոհական ընթացքը Գալիսաքճեան վարդապետին համար արժանի գովեստ մըն է մանաւանդ այդ սարսափի օրերուն մէջ:

Այսպէս կը արամարանէին այն տանն զինքը մօտէն ճանչցողները և անոր գործունէութեան իրազեկ եղողները, բայց սակայն ո՞րքան ստոյգ կրնայ ըլլալ չեմ գիտեր, միայն սա գիտեմ որ, իր գործունէութեան մասին այն տանուան Արաբի իրի առաջնորդ Մուշեղ վրդ. Սերոբեանը որ պտոյտի ելած էր Բալուի թեմին միացուած Արղընի-Մատն, Արղընի, Չնքուչ և Ջերմուկ գաւառները, լսեց շատ մը գանդամներ և զժգոհութիւններ, զորս նօթագրելով հրատարակութեան տուաւ Պոլսոյ Սուրհանդակ օրաթերթին մէջ, սակայն յօդուածաշարք մըն էր որ երեւցաւ նոյն օրաթերթին մէջ, ամբաստանելով փաստացիօրէն Եզնիկ վարդապետին ծանր յանցապարտութիւնը:

Եզնիկ վարդապետին անձովն ու անոր գործերովը հետաքրքրուողները կ'սպասէին որ իր գէմ եղած այդ հրապարակային ամբաստանութիւնները հերքուէին իր կողմէն հրապարակաւ. հերքուեցաւ թէպէտեւ, բայց այդ հերքումը չէր այն պատասխանը, ինչ որ պէտք էր ըլլալ: Պաշտօնավարութիւնը զժբախտաբար Եզնիկ վարդապետին, այդ թուականին Բալուի միացած վերը յիշուած գաւառներուն մէջ, իրեն համար նպատաստուոր վկայութիւն մը չի տարհոն, իր կատարած գործունէութեան վրայ վարագոյրներ կան ձրգուած, որքան որ Մուշեղ Սերոբեանը զանոնք բանալ փորձեց, բայց կրկին գոցուեցան անոնք:

Գալիսաքճեան վարդապետ Բալուի առաջնորդական տեղապահութեան պաշտօնէն կը հրաժարի և իրեն կը յաջորդէ 901—1902

(միայն 10 ամիսի չափ) Ֆրանկիլեյան Նիկողոս վարդապետը :

Բալուխ առաջնորդական աթոռին վրայ իմ յիշած թուականներէս աագին, գուցէ առաջ ալ, չեմ կարծեր որ այս վարդապետին չափ ուսումէ, գործի հասկացողութենէ զուրկ մէկը նստած ըլլայ : Մարմնեղ գատարկութիւն մը, որ աննման ուսող մըն էր, գիտէր Հայկական Զայնագրութիւն : Ըսի թէ այս եկեղեցականը 10 ամիս հազիւ մնաց Բալու առանց որեւէ գործ մը տեսնելու հոն : Տիվրիկիլեանին ճիշդ աւ ճիշդ պատկերն էր մարմնական զանգուածով, բայց ոչ անոր գործելու ձեւնհասութեան : միայն աւտակութիւն մը ունէր, խոշոր կազմ և անկուշտ ստամոքս : Բալուցին վերջապէս շուտ հասկցաւ իր խորուած ըլլալը և հրաժարեցուց զայն փրկելու համար առաջնորդական աթոռը այգուխի նմանը շահնուած սպիկարէ մը :

1902 ին առաջնորդական փոխանորդ կարգուեցաւ քաղաքի քահանաներէն Սուրէն քհյ. Տէրոյեանը : Տէրոյեան քահանան ծնած է Բալուի Հալալ գիւղը, ուր նախակրթարանի ընթացքը տւարտելէն յետոյ, Պոլիս կ'երթայ իր ուսումը կատարելագործելու համար, հոն քանի մը տարի դասընթացքի մը հետեւէլէն վերջը, կը վերադառնայ հայրենիք և կ'ընդգրկէ ուսուցչութեան տապարէզը, նախ գիւղերուն ապա քաղաքներուն մէջ աւագ ուսուցչի պաշտօններ կը վարէ և կ'արժանանայ «Աատուր Պատուելի» տիտղոսին : Լաւ սորված էր հին և նոր հայերէն լեզուները զոր կը դասաւանդէր յաջողապէս, կը դասախօսէր նաև թուրքերէն լեզուն, որուն քերականական կանոններուն վրայ բաւական ծանօթութիւն ունէր : Վերջապէս իր ժամանակի կարող ու զարգացած վարժապետներէն մէկն էր ան : Ոչ միայն Բալուի մէջ իր ձեւնհասութեան համբաւը տարածուած էր, այլ շրջակայ գաւառներուն նոյնիսկ, մանաւանդ Պարթերգի պէս կրթական կեդրոն դարձած գաւառ մը, զայն գնահատելով, ուսուցչական պաշտօնի հրաւիրեց զինքը Մէլրէի ազգ. վարժարանին համար, ուր նախ ուսուցիչ, յետոյ անօրէն եղաւ ուսոր, և իբր այն մնաց մինչև անոր քահանայանալու թուականը :

Սուրէն քահանան իրրեւ հարազատ մէկ գաւաղը Բալուի, լաւ սերտած և ուսումնասիրած էր իր հայրենակից հայ և թուրք բալուցիներուն հաղերանութիւնը, անոնց բարքը, վարքը և սովորութիւնները : Որոնց հետ տպրած ու շփուած ըլլալով՝ գիտցած էր իրեն յատուկ քաղաքականութեամբ մը տեղին համեմատ ըլլալ զգոյշ և խոհեմ : Այս խոհական ընթացքովը անիկա կրցաւ ժողովուրդին բարձր գատակարգին համակրանքն ու վստահութիւնը գրաւել և ունենայ իր արժանի դիրքը :

Ահա, Տէրոյեան Սուրէն քահանան, որուն մէկէ աւելի յատկութիւններուն համառօտ նկարագրութիւնն է, որ իր սեւմ գիծելուն

մէջ ներկայացնելու փորձն ըրի հոս, հասկցնելու համար թէ երբ
Բալուսն այսպիսի արժանաւոր քահանայ մը ունենայու պատիւն ու-
նէր, բնական էր որ Ֆրանկիւլեաններ չպիտի կրնային ապրիլ հոն
պաշտօնի վրայ:

Սուրէն քահանան առաջնորդական փոխանորդի պաշտօնը կը
վարէ մած յաջողութեամբ, եկեղեցիներու, դպրացներու յառաջաց-
ման և պայծառութեան համար իր կարելին կ'ընէ, ժողովներու կա-
նոնաւոր նիստերուն կը նախագահէ: Վարչական գործերու մէջ իր
փորձառութեամբ իր խօսքերը միշտ կշիռ ու արժէք կ'ունենան ժո-
ղովներուն մէջ, և կը գնահատուին մինչև իսկ Պատրիարքարանէն,
այնպէս որ իր գործունէութեամբը զգալի ընել չի սար առաջնորդի
կամ տեղապահի մը պէտքը ընթացիկ գործերու համար, եթէ կա-
ռավարութեան առջև Բալուսի հոյ հասարակութիւնը ներկայացնող
վեղարուոր եկեղեցականի մը պէտքը անհրաժեշտ չըլլար կայսերա-
կան Ֆէրմանով և Պատրիարքարանի պաշտօնադրով ուժովցած: Այս
ու ուրիշ պատճառներէ հարկադրուած, բալուցին 1902ին վերջերը
կ'ընարէ Աղան վրդ. Համսամճեանը (Արծրունի), իրրեւ առաջն. տե-
ղապահ, բայց չընդունիր և միայն ընտրուած կ'ըլլայ, 1903ին կ'ընտ-
րուի Ասարսֆ վրդ. Պէհրիկեան, այս վերջինն ալ յանձն շառներ եր-
թալ Բալուս:

Յետոյ, 1903ին կ'ընտրուի առաջն. տեղապահ Կորիւն վրդ. Ե-
սայեան, որ կը վարէ այդ պաշտօնը մինչև 1905: Կորիւն վարդա-
պետ Եսայեանը խառնուածքով բնաւ յարմարութիւն չունէր ոչ միայն
վարչական և առաջնորդական պատասխանատու գործերուն համար,
այլ եկեղեցական կոչում ալ չունէր, եթէ ճշմարտութիւնը պիտի
խօսինք: Ես, շատ մօտէն կը ճանչնամ զինքը, թէ Բալուսի մէջ և
թէ այլուր, ծանօթ են ինձի իր արատաւոց գաղափարները: Յա-
խուան էր չափազանց, իմաստակ, ամէն մարդու չհաւնող, քննադա-
տող, արհամարհող, անփափկանկատ և վերջապէս անթաքի՛թ ու կոչա
էր ան: Հակառակ ինք Այսմաչական մը ըլլալուն, չի կրցաւ ժողո-
վուրդին յոյսերը իրականացնել, բալուցին իրմէն անշուշտ մեծ բա-
նէր չէր սպասեր օրուան քաղաքական աններող պայմաններուն պատ-
ճառաւ, բայց կ'ապասէր անոնել այն բաները զորս կրնար ընել ու
չըրաւ. ինչպէս ըսի, ինք այդ կոչումը չունէր ոչ ալ ժողովուրդին
վրայ մտածելու՝ սրացաւութիւնը: Կորիւն վարդապետը Բալուս հա-
սած օրէն ի վեր սկսաւ պող վերաբերում ցոյց տալ զինքը ընտրող
ժողովուրդին հանդէպ, ասանամարհատ կեցուածքով մը ասեց թէ՛ Բալուսն
և թէ՛ անոր ժողովուրդը աւհասարակ. չհաւնեցաւ ոչ այդ թե-
մին, օղին ու ջուրին, ոչ ժողովուրդին բարքերուն, ոչ անոր բարե-
պաշտութեան, ոչ լեզուին և վերջապէս ոչ անոր հազուադէպ ու

կենցաղին : Եւ այս կարծուած թերութիւնները իր կողմէն, եղան իրեն ծաղրանքի, քաշքշուքի առարկաներ, կարծեա թէ բալուցին կիսավայրենի ժողովուրդը ըլլար, որուն մէջ գործելու համար վարդապետը, ինքզինքը արժանի չէր սեպեր :

Երբ մէկը չսիրէ իրեն յանձնուած ժողովուրդը և անոր տպրած միջավայրը, բնականաբար անոր օգտին չի գործեր ալ, այսպէս եղաւ Եսայեան վարդապետը, որ աւելցուց իր դէմ ժողովուրդին դժգոհութիւնը օր օրի, մանաւանդ այն ժողովականները որոնց հետ ինք պիտի գործէր, քաշուեցուն հետզհետէ իրենց պաշտօններէն, ձգելով զինքը աւանձին առաջնորդարանի արահին մէջ :

Եսայեան վարդապետը չուզեց զբաղիլ երբեք այդ աթոռին վերայ, ժողովուրդին ցաւերովը, երբ այդ մասին տեղատարափ գանգամներ կը թափուէին Առաջնորդարան : մինչդեռ ինք տասնց հանգէպ փոխանակ գործօն քայլ մը տանելու, Պատրիարքարանը կ'զբաղեցնէր իր յաճախակի հրատարականներովը Բալուսն ձգելու համար, և եթէ չեմ սխալիր, կը կարծեմ թէ առանց սարսելու Պատրիարքարանի հրամանին, լքեց թեմը և ուղևորեցաւ դէպի Պոլիս : Տարօրինակ էր Եսայեան վարդապետը, անոր տարօրինակ մարդ մը ըլլուն մէկ նմոյշը պիտի պատմեմ : օր մը երբ ես Առաջնորդարան կը գտնուէի իմ մէկ գործիս համար, վարդապետը ինձի հետեւեալը խօսեցաւ. «Թէ այս բալուցիները երբ եկեղեցի կուգան, իրենց քիթերուն աղտեղութիւնը եկեղեցւոյ աւագ դրան առջեւ կը թափեն իրենց մատներովը, և մատներուն վրայ մնացած աղտոտութեան մասերը նոյն դրան ձակառակն վրայ կը քսեն : նոյն մարդիկը երբ եկեղեցիէն դուրս կ'ելլեն ժամերգութիւնէն յետոյ, միեւնոյն դրան ձակասը կը համբուրեն, որ աղտոտած էին քիչ առաջ իրենց քիթերուն աղտեղութիւնովը» : Եւ ասիկա կ'ըսէր ոչ միայն ինձի, այլ իրեն այցելող բալուցիներուն : այսպէս ժողովուրդին բարեպաշտական զգացումները կը վիրաւորէր իր անզուսպ լեզուովը և իր անփափկանկատութեամբը, և ոտար պէս ինչէր... :

Եսայեան վարդապետ արդարեւ երկու տարի մնաց Բալուս իր պաշտօնին վրայ, բայց չի գործեց բնաւ, ոտանաւոր գրեց. ինք չէր որ ընթացք կուտար Առաջնորդարանի գործերուն, այլ՝ առաջն. փոխանորդ Տ. Սուրէն քահանան : Կորիւն վարդապետին շատ երխտասորդ ըլլալը չէր պատճառը անշուշտ, իբրեւ անյարմար այդ պաշտօնին, ոչ երբեք, անոր խառնուածքը, անփորձութիւնը, վարչական գործերէ չհասկնալը, ինչպէս ըսի վերը, բոլորովին հակոտնեայ բուներ էին առաջնորդական պաշտօնին բողոքատեսակ պահանջումներուն : Չեմ սեղեր անոր աղայական ցնորքներուն անդրադասուալ, զոր դրաւ հրատարակի վրայ «Մատուցքներու» և Սողունի «Ե՛րչ ե՛րգոց»ի վե-

րաբերմամբ, և յետոյ Պոլսոյ կրօն. ժողովին առջեւ յետս կոչում ը-
րաւ : Այս ծանրակշիռ պարագաները ինքնին ապացոյցներ են թէ,
ի՞նչպիսի մէկն էր Եսայեան վարդապետը, որ Բալուի առաջնորդա-
կան թեմին գործերը վարելու պաշտօնը պիտի արժեցնէր զայն ար-
դիւնաւորելու համար :

Եթէ իր առած ուսման հետ միացնէր լրջութիւն, համբերու-
թիւն, կենցաղագիտութիւն և վերջապէս կորով ու սիրտ, Բալուի
թեմը շատ պիտի օգտուէր կրթական, եկեղեցական և այլ կարգի
գործերու տեսակէաներով :

Իր հեռանալէն վերջը Առաջնորդարանի գործերը վարելու պաշ-
տօնը կրկին Սուրէն քահանայ Տէրոյեանի յանձնուեցաւ 1905ին,
մինչև 1906 թուականը զայն վարելէն յետոյ տեղի կուտայ նոր ա-
ռաջնորդի մը ընտրութեան : Սուրէն քահանային կը յաջորդէ Երե-
միա վարդապետ Խաչատուրեան : Կը ցաւիմ ըսելու որ հակառակ
ջանքերուս չեմ կրցած հասկնալ թէ ո՞վ էր այդ վարդապետը, ո՞ր
տեղացի էր, ո՞ր միտքանութեան կը վերաբերէր ուսում ունէ՞ր թէ
ոչ, ի՞նչ գործունէութիւն ցոյց տուաւ Բալուի մէջ իբրև առաջն.
տեղապահ և վերջապէս որքա՞ն տեւեց իր պաշտօնավարութիւնը հոն :
Միայն սա գիտեմ որ Երեմիա վարդապետին Բալուէն հեռանալէն
յետոյ, ոչ առաջնորդի ընտրութիւն չըլլար այդ թեմին համար մին-
չև 1911 թուականը : Նոյն թուականին կ'ընտրուի գարձեալ Եզնիկ
վարդապետ Գալիաքճեանը իբրև առաջն. տեղապահ, որ կը վարէ
այդ պաշտօնը մինչև 1914 :

Բալուի առաջնորդութեան հայաբնակ գիւղերը 1878էն մինչև
1914 :

* Սրբանձտեանց Գարեգին եպիսկոպոս և Նաթանեան Պօղոս վար-
դապետ Բալուի հայաբնակ գիւղերը ցուցակագրած են ժամանակին,
բայց անոնք ճշգրտութեան չեն համապատասխաներ, նոյն թուականնե-
րու մէջ ապրող հայ գիւղերը կազմող ճշգրիտ թիւերուն : Վասնզի
գիւղացիները որքան որ կարելի է իրենց գիւղերու տան թիւերը
քիչ ցոյց տուած են որպէսզի կաւալարակոն և ազգային իրենց վրայ
գրուելիք զանազան սուրքեր ժողովուրդի թիւին բողոքատմամբ թե-
թեւ ըլլան :

Բալու քաղաքը ունէր այն ատեն, այսինքն 1878ին, 600 տուն :

Սգամ	«	1	Եկեղեցի	Ս. Խաչ	«	տուն հայ	45
Չէթ	«	1	»	Ս. Թորոս	«	»	1 0
Խարակետուկ					«	»	20
Հարսիզոմ					«	»	20

*
1
2

			տառն հայ	
	Դաւթի Մրզա			25
	Պաշարաթ		»	15
	Քեանկեառլի		»	30
	Խաճառ		»	20
	Ուղուհոսայ		»	30
	» Մըրզա		»	10
	Կուլիշկեր		»	35
	Արմըճան		»	55
	Նոր Գեղ		»	25
	» Մըրզա		»	30
	Նորչընակ (1)		»	6
3	Մըջոմի Մեղրէ 1 եկեղեցի Ս. Գէորգ		»	30
4	Խարապորք կամ Խարապորք 1 եկեղ. Ս. Աստուածածին		»	25
5	Արթըխան 1 եկեղեցի Ս. Մինաս		»	40
	Խամիշու		»	15
	Տէլէճի		»	15
	Ապրանք		»	25
6	Շնաղ 1 եկեղեցի Ս. Յակոբ		»	50
7	Սազրաթ 1 » Ս. Թորոս		»	65
8	Խոշմաթ 1 » Ս. Աստուածածին		»	90
	Իսապէկ		»	35
	Գումպաթ		»	25
9	Թափայ 1 » Ս. Մինաս		»	50
	Ղամբար Շէյխ (*)		»	3
	Տիլիմիլի (*)		»	4
	Կրպոյ կամ Կրպոյիկ (*)		»	8
	Խարախայոյ (*)		»	1
	Քուրդիքան (*)		»	4
	Տէմըրճի (*)		»	2
	Խաջարի Մեղրէ (*)		»	2
10	Եզ կամ Օխու 1 եկեղեցի Ս. Կիրակոս		»	40
11/12	Հալաւ 2 » Ս. Աստուածածին և կաթողիկէ		»	210
13	Թիլ 1 » » »		»	35
14	Թրխէ 1 » Ս. Սարգիս		»	60
15	Նաճարան 1 » Ս. Նշան		»	30
16	Սըրին 1 » Ս. Աստուածածին		»	25
17	Պաղին 1 » »		»	120
18	Նըպրշի « 1 » »		»	25

(1) Վերջէն մէկ տուն մըն էր, որ կար:

(*) Այս աստղանիւ կրող գիւղերը հայերը լիւիոյ հեռացան Լն:

Լ.Ը. Գ.Լ.ՈՒԽ

ԵՐԴՈՒՄ, ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԷԾՔ

Հաւաստիացնող երգում

Ասւած (Աստուած վկայ, կամ Ասւած խորիմ
 Սըրբութիւնը » »
 Սաչ օր . . .
 Աւետարանը աչքըս քօւցընը . . .
 Աչքըս քօւնայ օր կս չիմ . . .
 Ձեռքըս չորնայ օր կս սուած ըլլիմ
 Նըլլիս փըրթի ըկըր սուա իմ
 Ոտքըս կոյրի » (եթէ) կս հոն գացած իմ
 Խէրըս չի ախյամ (տեանամ) ըկըր սուա իմ
 Էրէսըս սեւ ըլլի » »
 Բերանըս չորնայ » կս ըսեր իմ
 Տղուս խէրը չի ախյամ » չես հաւարնար (հաւատայ)
 Արեւիս » » » սուա իմ
 Քընդ վայը չի լուսցընիմ » »
 Թող Ասւած առնըս աւիրը » կս բրեր իմ
 » » » գոցը » » »
 Տանըս թող բըրըշակ ըլլի » » տեսեր իմ
 » » սեւ հաւը կանչը » » խտար (լուր) ունիմ
 Փորըս » խտտուկ ըյնի » » կերեր իմ
 Լեզուս » չորնայ » » ըսեր իմ
 Մեղքըդ շըլլիս օր չիմ գիտեր (չեմ գիտեր)
 Մօրըս կաթը հարամ ըլլի ինծի
 Քոնանմ, քոն տարիմ
 Ասւած պարտս տայ
 Օրը վըրտս չի մըթնի
 Կովտաս (մարմինըս) ջըրջըրանք ըյնի
 Սիրտըս խըշխիշ ըյնի
 Դուռէ գուռ մուրամ
 Եթը գըրան կտեւ մընամ
 Տըլուս հասրէթը քաչիմ

Գուտառաւանին օրը կոպ ըլլիմ եւաջըդ (աւջեւդ)

Ճաշակը աչքըս քօւցընէ

Օր արեւ չի ախոսմ

Ձեռքովըդ պատանքըս կարես ըկըր չես հաւտընար

Մարմինըս եարս փարայ ըլլի » » » (այսինքն վերքօտի)

Անեճք կամ «այեքըլա»

Կաշըդ առն գայ, թթուն մըննաս, սեւ խապարդ տանիմ, առնդ
աւիրի, դուռդ փակուի, մուխդ մարի, օճաղդ քօւնաս, տուշմընին
խըշմին ուստ գոս, Աստու սրին (թուրին) հանդիպիս, Աստու պա-
լադ տայ, քօւնաս, քօւ տպրիս, ձեռքըդ բռնիմ՝ քուչան օլըցնիմ,
սեւ շուտիկ էլլաս, տարագէ տարայ ըլլիս, տուշդ շիւտն ըյնի, պօյըդ
վեր չելլայ, ըտ պօյըդ մնաս, շան փայ ըլլիս, աչքըդ ճամբան մնայ,
աչքըդ քօւնայ, թաթար խամին էլլաս, ձեռքըդ քաշուի, շըլիդ
կայրի, մեռելի միս ծամես, եղիտի խըշմին հասնիս, քօքըդ չօրնայ,
գլխի գլխու չի տաս, քէսայիդ աակը ծակի, հլըսիս ջըջրանք կըյ-
րիս, բամպըկով ջուր խմցընեն, տանըդ խէրն ու պարտքեաղը, կըյրի
էրթուրդ ըլլի գալըդ շըլի, հոստած շուն, կաշիդ կրծես, տարայ ու
տարայ չօրնայ, թաս մի ջուր տուողին հարսաթը (հասրէթ) քաշես,
եարամաղ հարսի ըւտաթ գոս, լեւէ լեւ՝ ձորէ ձոր ըյնիս, ձեռքըդ
ջուրը մանայ չօր գայ, սեւ հաւըդ կանչը, տուշըդ բըրըշակ մնայ
պօլամ, էրեադ սեւնայ, կերածդ քնթէդ-բերնէդ գայ, զէյր գամ-
պարակ ուտես, հարամ շան թարսիս ըլլի, շար սահաթի գոս, սէզի
մալամադ ըլլիս, գեաինը անցնիս՝ պօլաքմըդ, էտիդ էւջիդ ջուր ըլլի,
պօյըդ պօսըդ վեր չելլայ, ճահանամին ընդի պուճաղն էրթոս, Աս-
տու սեմիշ կէնիմ մուխանագին մըխաստ ըլլիս, տուշմընիս գլխը
չեկածը գլխիդ գայ, ձեռքիդ տամարը չօրնայ, օճաղըդ ու պուճաղդ
անցնի, Աստու կտծ ու կրակը վրադ թափի, ճանճ ըլլիս՝ պատը փա-
կիս, խածուցի հարսաթ մնաս, աչքիդ պիպիկը էլլու, չի ուտես չի
ինդաս, տանդ նասիբ խըսմէդն էրգայ, չի վայլես, աղատութինը չի
ժառանգես, կածկըլտուկի գոս, խոտաուկդ բռնէ, թաթար խամի,
չօւ, քըպըլը հողի՝ մուրսի վրադ, անտէրիթույեսան, անտէր մնաս,
տէրաըրուն տամ, պատանգըդ կարեմ, պատանգըդ ըլլի քիզի, մարտէ-
րը փորուդ չելլայ, սասկիս՝ ջուր տուող մի շըլի, գլխիդ ու կա-
ռաթիդ ուտը, գլխիդ շանդա անցընես՝ գուռէ գուռ ըյնիս, ամէն մա-
տէդ մէկ հաս կախուի

Օրհնէք, օննէնք, օլ ուրիս

Էրկան արեւ ըլլիս, սրակդ պագնեմ, Աստու օսնէնքը վրադ

ըլլի՛, ձեռքդ չորը մանկես (նետես) ջուրը գայ, շիւանի էրես չի տի-
յաս (չի տեսնաս), օճաղդ շէն ըլլի, Ասւած քիզի աղկեկ նշանած մի
տայ, մէկ թագով՝ մէկ պսակով ապրիա, առշմբնիդ գլխը օտգիդ
(տոք) տակն ըլլի, Ասւած սրտիդ մուրազը տայ, մուխաննուգին մըխ
տաճ շըլլիա, թուրըդ կըյրուեկ ըլլի, սեւ օր չի տիյաս, ձեռքդ կան-
չընայ, հալալ կաթ ծծածի հանգիպիա, էրեսըդ պիտակ ըլլի, ապրիա,
զօրանաս, ծերանաս, սեւդ պիտկի (ճերմըկի), կանակդ գետին չի
գայ, Ասւած թեւիդ խուլտագ տայ, առշմբնիդ էրեսը գետին քըսֆի,
քէսագ (քսակ) պէրէքէթլի ըլլի, խօնով խոնջով (սեղան) առնու
գամ, Ասւած սրտիդ կօրայ տայ, Ասւած չաղաներդ քիզի պիտիչ
էնը, պէյը (պահէ): Ասւած քիզի տագիդ (ազգ) մուպարէդ էնը,
ինտէխ դուն տագիդ կը հայիա՝ ըմպէս ալ Ասւած քիզի հայի, Աս-
ւած խարիպներուդ բանին-գործին խէրլի աջողութին տայ, Ասւած
օղորմի մօրդ ու պապուդ հոգուն, քեարդ ու քէսյըդ տայմա տանպա-
կաս ըլլի, դուռըդ տայմա բոց ըլլի, Ասւած մաքիդ էզամը կատարը,
ինչ սրտով օր (որ) դուն ինծի կը հայիա՝ Ասւած ա (ալ) քիզի ըն-
պէս հայի, տատղիկդ բանուեկ ըլլի:

Պայնանական բառեր եւ խօսքեր

Հեռու հատիր, կը նշանակէ խոշոր կարէ: Վրան գնա — խծպէ:
Ծակ սուգը — կեղծ կար: Ել էրթանք — գողցիր: Վասն ի վերուստ
— ապրանքը փոխէ, կեղծը առւր: Քաֆածքը բեր — կեղծածը առւր:
Պիլոտոս — դատաւոր: Տանտէր — գաւառապետ: Թառ, խոռոզ, հու
— անկոչ հիւր: Ուռեցած — յղի: Ուրուր — քրիտոնեայ հոգեւորա-
կան: Սեւաւոր, սեւազլուխ — (նոյնը): Մագ — խլամ հոգեւորական:
Մուխի հոտը — մաքսուոր: Թղթած փէնճիրէ — կոյր, չի նկատող,
բան ու գէշը որոշելու անընդունակ մարդ: Նալ — մէճխիյէ: Չառք
կամ ձեռք — քաւորդ մէճխիյէ: Մատ — դահեկան: Կուա — փարս
(1/40 դահեկան): Եզա աչք — լիրա, ոսկի: Խառդ է — չի խարուիր,
դիւրաւ չի համոզուիր: Էփուներ — կը համոզուի: Խախուտը — վասն-
գաւոր է: Շարմաղն ընկա — կը դիջանի: Ներս տանել — վիրաւոր-
ուիլ, ցուիլ, վշտանալ, քէնտաիլ: Քերդել — կողոպտել: Կարկուտ —
հրացանածգութիւն: Կարքընճիլ — պատերազմական փող հնչեցնել:
Լեզու — սուր: Թմբուկ — հրացան: Օճի լեզու — դաշոյն: Աչք — դըն-
գակ: Մուր — վասօղ:

Աղօթքներ

Տէրունական աղօթք — Հայր մեր էրկինք — Հայր մեր որ յեր'լինա

Օրչնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն: Հայր մեր յերկինս, սուրբ եղեցի անուն քո. էկեալէ արքայութիւն քո. եղեցի կամ քո, օրպէս յերկինս եւ յերկրի. ըզհաց մեր հանապաղ զոր սուր մեզ այսօր. եւ թող մեզ պարտիս մեր, օրպէս եւ մենք թողունք մերոց, պարտապանաց. եւ մի սանիր զմեզի ի փորձութիւն, այլ փրկեա ըզմեզի չարէն: Ձի քոյէ արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

ձառեմ վերջը, — Հացեմ ետք

Օրչնեալ Տէր մեր եւն, Հայր մեր էրկինս եւն:

Հազար անգամ շուքուր քիզի, Տէր երկնաւոր Աւառ: Դու խէր ու պարաքեաթ տա իմ հացիս: Դու լիացնես, Հայր Աբրամու սեղանն էնես, օղլու-չաղիս նասիպը խրամէզը սոսս, ճամբուս... վարող-վասարկողին, ցանող-քողողին, էփող-կերցնողին, բանին-գործին խայրլի յաջողութիւն սոսս...: Դու ետրարմճի ըլլիս Փախիր Փուխարային, լսիմա մի հարսաթը քաշողներուն, դուռէ դուռ, կամ դուռէ դուռ մուրացող խեղճ աղքատներուն... օ՛Ֆ, Տէր Աւառ, դու միզի ազատես զալըմ - զուլումին, քեաֆիր - մուխաննութիւն ձեռացր... :

Գլեհուման աղօթք — էկեսսե — էկեսցե

Աւառ քաւեալըս մեզաւոր (երեք անգամ — (Աստուած քաւեալիս զմեզաւորս):

Տէր Յիսուս Քրիստոս Աւառ, դուն ամմէնքըս խաթու-պալայէն ազատես ըս դիշեր, չար սատանի սագը կոյրես մեր շէմիքէն, օր դիշերս ամմփորձ անցընինք...: Դու սուրբ Բարի-լուսուղ տեսուն արժանի էնես, աւարւայ ժամուղ-պաշտումիդ լայէիս էնես... դուն հասնիս, դուն օղորմիս ըն խղճուկներուն: Վով (ով-որոնք) օր կտոր մի խըսիր, ես փարսս չունի սակը ձգելու, ես վրան առնելու... օ՛ ի խոտաղ առնիմ, էրկնաւոր Աւառ, աճաթի-քանի Փուխարաներ իրկունս անօթի ծարաւ պիտի պաւկին ու չարչըրլին . . . ընոնց հասնիս, ընոնց օղորմիս, ընոնց եւ բոնաս Դու օղորմութեանդ դուռը, օղորմութեանդ խուրպան, Աւառ, Աւառ, էնասաջ ընոնց հասնիս, սօնը (յետոյ) իմ առնա-տեղըս, մալու-մուլղըս, չօլուղս-չօճուխս ազատիս դիշերսուն հազար ու մէկ փորձանքներէն...:

Տէր դու հանգիստ քուն տա միզի: Դուն պահապան կայնիս մեր գլխուն վրայ, որ մուխաննութիւն ձեռքը միզի չի դիպի... օրչեալ Տէր մեր եւն:

Առաւօտեան աղօթք—Բարի-լո սու աղօթք

Բարի լոս, Բարի Քրիստոս Ասւած, հազար շաքաւք քիզի, որ մեր վրայէն անցուցիր ըս գիշերը ու միզի ուղջ-սաւուղջ պէյեցիր: Ընտրճակալ ինք Քու մինէդ (քիզնէ) օր սաւրբ արեւը, — արեւ, արեւ, խաւրպան ըլլիմ սաւրբ էրբսիդ, — սաւրբ լուսը ցաթեցուցիր մեր վրայ, օղորմութեանդ մեանիմ, Ասւած, օր սայմա՛ չիս մոանար միզի պէս մեղաւորները ու օղորմութեանդ դուսը կը բանաս:

Ռաճա կէնիմ Քիզի, էրկնաւոր Ասւած, սաւրբ արեւ, դու իմ մեղքիս, մեղացս թողաւթին տաս... ձեւքիս, սաքիս, աչքիս, մէջքիս խաւթիմ տաս, օր ըս օր թէչմիրկուն բանիմ ու օղլուշաղիս սասախան զտատըկիմ...:

Չալլամ-դուլումին բերանը փակի՛ ու Քիզի փաւք տամ: Աէրիս փոխարէն, խէրլի սըֆթա մի ճամբես (աղեկ շա՛ մը), խըսմէթս հասցնիս... Չաղաներուս աչքը էլիս ձեւքը չի հայնի...:

Օրչնեալ, կամ օյսնեալ եւն, Հայր մեր եւն:

Երեկոյեան գործարողի—Բանբողի աղօթք

Եկեղեցեաց զանգակները զօղանչելու տակն— կօչնըկեն (կոչնակ)

Օրչնեալ էս Ասւած (երեք անգամ—օրչնեալ ես Ասաւած):

Փաւք Քեզ Ասւած, օր Փախիր Փախարային սըսիսը կը ճամբիս անկաւման տեղերէ: Ասւած պին պին պարաքաց տայ: Ըսօր և սաւանց բանի չի թողիր, ըսօր և խըսմէդներս հասուցիր: Ինտէյի ինձի հասար ու օղորմութեանդ դուսը բացիր, ըմմպէս և օղորմիր տլամ աշխըրքի...: Միզի սայմա կ'ապրցընես, Ասւած, Ֆէխէդ, հասչա հասչա զաւալիներ—վկվ գիտը (սվ գիտէ) չի կայցան, չի կըյցան (չի կընալ) ըսօր սըֆդա մի էնէր: Ընանց հասիր, ընանց չարա մի էրը, ընանց սասախան ճամբը: Տիրուկ, Տիրուկ...: Փաւք Քիզի էօր միզի պէքեասար պէյեցիր ու իրկուայ կօչնըկի ձէնն ըլ լսելու ըսյէիս էրիս...: Սաւրբ Ասւած, սաւրբ էւ ըզօր, սաւրբ էւ սամա (սնմաճ), օղորմեա մեզ:

Օրչնեալ Տէր մեր եւն, Հայր մեր էրկինա եւն:

ԼԹ. ԳԼՈՒԽ

ՏԱՐԱԶ

Քաղաքի ժողովուրդը, գիւղացի թէ քաղաքացի, դեռ կը պահէ զգեստի վ զնջական իր տարազը: Նորութիւնները կ'արհամարհան, մասնաւորապէս եւրոպական տարազը՝ որ իրեն համար նորութիւն մըն է:

Տեղական չորս գլխաւոր տարազներ կան. երկուքը՝ հայկական, մէկը՝ քրդական, իսկ չորրորդը թրքական:

Եւրոպական տարազով կը հագուին, հայ ուսուցիչներէն մեծ մասը և քանի մը հաս Պորտէն զրկուած պետական պաշտօնեաներ, ոստիկանութիւնը չհաշուելով:

Այս չորս տարազները իրարմէ շատ սրոշ տարբերութիւններ ունին, այնպէս որ, անոնցմով կարելի կ'ըլլայ, իսկոյն, հիւսիսային հայը՝ հարաւային հայէն, և քուրդը, թուրքը, հայը իրարմէ զանազանել՝ աւանց շփոթութեան:

Նախ ըսրնք թէ՛ զգեստներուն նիւթը, շատ աննշան բացառութեամբ մը, տեղական արտադրութիւն է և ոչ թէ ներածեալ արտանք: Կտաւը դուրսէն գնելու պէտք չունին. գիւղացիները, իրենք են որ կը մշակեն բամբակը, կը մանեն, կը հիւսեն, կը ձեւեն, կը կարեն ու կը հագուին: Հասկցնելու համար թէ մէկը զգեստի տեսակէտով ինքնարաւ է, աւածի ձեւով կ'ըսեն. այս մարդուն հագածը «մօր մանած, պապու գործած ք»:

Գիւղացին ուրեմն, այր՝ թէ կին, գլխէն մինչև ոտքը, «մօր մանած, պապու գործած» կը հագնի: Քաղաքացիներն են միայն, որ ձերմակեղէնի և կնոջական տարազներու համար եւրոպական կտաւներ, տպածոներ և կերպասներ կը գործածեն: Քաղաքացիին գրպանը դրամով լի է. մինչ գիւղացիին դրամը՝ կալը, ախտը, այգին ու դաշտն են. յաճախ ստիպուած կ'ըլլայ փոխանակութեամբ իր պէտքերը գոհացնելու. ամիսներով անոնցմէ շատերուն գրպաններուն անկիւնները կարելի չէ տասը փորայ իսկ գանել:

Այրերուն հագոււածները կը բաղկանան հետեւեալ մասերէն. սպիտակ շապիկ մը, որ մինչև ծունգերը կ'երկարի, երկու քովերը մէկական կարճ ձեղքերով: Ասիկա մէկ կոճակ միայն ունի, իր օձիքին վրայ: Թեւերու երկայնութիւնը մինչև գոտակը կը հասնի: Կիներուն շապիկն ալ այսպէս է, բայց ան միշտ կապոյտ ներկուած

կ'ըլլայ, սակայն կը համարուի երբ անոնք սպիտակ շապիկ հագնին : Այս մասին՝ յետոյ : Ճերմակ վարտիք մը, որ մէջքէն մինչեւ սրունակները կը ծածկէ, այն է սաքերուն և ծունգին միջին կէտը : Ունի խոնկեղարձ մը վերին եզերքին վրայ . սակիս անցք մըն է սրուն մէջէն խոնձան (մէջքի կտայը) կ'անցուի :

Անդրավարտիքը, (շալուար՝ ըստ հիւսիսայնոց, իսկ շլուար՝ ըստ հարաւայնոց) յարեւմտան վարտիքին՝ ձեւով ու մեծութեամբ, կը բաղկանայ՝ խոնկեղարձէն, փոթուռէն կամ դաստակէն և սոնակէն կամ ոլոքէն :

Սոնձեղարձը՝ շլուարին վերին եզերքն է, որ մէկուկէս սանդիւմէթը լայնութեամբ երկու մը պէս, ինք իր վրայ շրջուելով կտրուած է, և կը ձեւայնէ անցք մը, սերկէ խոնձան, (մէջքի կտայը) կ'անցուի : Շալուարին ետեւի մասը, համաչափօրէն իրարու վրայ դարձած շատ մը փոթեր, գուտկը կամ բարձերը վայելչօրէն ծածկելով մինչեւ ոլոքները (փաշա) կ'իջնեն, և հոն փոթերու կոյտ մը կը կազմեն : Քաշելու տանն այդ կոյտը, աջ ու ձախ սրունքներուն կը դարնուի : Այս փոթերու կոյտը գաւնալով սրունքներուն մէջէն վեր կը բարձրանայ և առջևի մասը ծածկելով կը համի խոնձեղարձը : Երկու քովերը բնաւ փոթ չեն թողեր՝ հագնելու տանն, սակիս ծիծաղելի կ'ըլլայ : Շալուարին ստորին մասը կը պատահի որ փոթուռ չունենայ, կամ՝ աւանց փոթերու վերջանայ, այն տանն, ստորամասը կամ նաստակին աւանձին քառանկիւն պատաստով մը գոցուած կ'ըլլայ, սակիս դաստակ կը կոչուի : Քուրդերուն հագած շալուարները միշտ այսպէս կ'ըլլան, ինչպէս նաեւ հայ կիներուն վարտիքները :

Իսկ սւնակը երկու կողմերը ձգուած այն լայն անցքերն են, սերկէ սրունքները կ'անցնին :

Հիւսիսայիններու շալուարին փոթուռ մինչեւ ոլոքները կը համին, իսկ հարաւայիններունը՝ ընդհանրապէս մինչեւ՝ ծնդամէջը (ծունկին հակառակ կողմի մասը) կը վերջանայ, այն է ոլոքէն վեր : Այս վերջինին փոթուռն ալ ստուար չէ և երբեմն իսկ պարզ գաստակ մըն է, որ կը ծածկէ յատակը :

Մանուկներուն հագած անդրավարտիքը ձեւով չի տարբերի շալուարէն : Ասիկա թուրքայ կ'անուանուի : Իսկ կիներուն հագածը, թուրքան, գաստակաւոր է, որուն սոնամասը խաւ է (գունաւոր գիծերով կտուռ մը), իսկ վերին մասը, խոնձեղարձէն մինչեւ գաստակը կապոյտ կտուռ է, ոլոքները փոթերով կը սեղմնն սրունքները և բարակ կապով մը կը կապուին՝ նման մէջքի խոնձային : Ասիկա բնաւ փոթ չունենար, և պէտք է միշտ գունաւոր (կապոյտ) ըլլայ, եթէ կին մը պատահի որ սպիտակ վարտիք հագնի, ինչ որ

անկարելի է, անպատիւ կը համարուի, և ամբողջ գաւառին մէջ ծաղր
ու ծանակի սուտրկայ կը դառնայ:

Շալուարն ալ պէտք է որ կապտագոյն ըլլայ: Սպիտակ կը
հագնին անբացաւապէս բոլոր քուրդերը, և բացաւապէս չքուար եր
կամ դաշտի ոչխատաւթեամբ պարապողներ միայն: Ուխտագնացու-
թիւններու, հանդիսական օրերու և բացաւիկ ուրիշ պարագաներու
տակ հոյնապէս պէտք է որ կապոյտ շալուար հագնին: Աւանականները
ձմեռնային եղանակին մէջ, մազէ կամ բրդէ հիւսուած շալուար կը
հագնին:

Քուճը կարճ պարանոցով գուլպան է, ո՛ր կ'ըլլայ եղանակին հա-
մեմատ թանձր կամ նուրբ հիւսուած, մերթ զարգարուն և գեղեց-
կահիւս: Կայ նաեւ զանկապանը, որ պարզ բրդահիւս պարանոց մըն
է և կը ծածկէ ամբողջ ուրբը, այսինքն՝ սաքին երեսէն մինչև ծուն-
դերը: Զանկապանին սալա կ'ըսեն անոնք:

Չարսիսը կամ սրեխը՝ հաւմ կամ խալախարուած կաշիէ շին-
ուած մուճակ մըն է: Ետեւի մասը բոլորակ կտրուած, իսկ առջևի
մասը՝ ուղղանկիւն: Այս կաշիին ամբողջ եզերքը, իրարմէ հազիւ
մէկական ասնդիմէթր հեռու ծակեր բացուած են: Ուղղանկիւն կող-
մը երկու ծալք ընելով եզերքները իրարու հետ սրիմով կը կտրեն
(սրիմ, կաշիէ առասան), ասիկա չարսիսին բնիքն է: Քիթէն սկսեալ
երկու կողմերը ծակերէն փոփոխակի ետեւէն ու առջևէն սրիմը
անցնելով կը հասնին մինչև կրունկը, երբ երկու կողմի սրիմները
իրարու հանդիպին, այն ասան կը պրկեն զանոնք և՛ եզերքները
փոթելով կաշին կը գողաւորեն: Մէջտեղը կամբջակի պէս մէկ
եզերքէն միւս եզերքը սրիմ մ'ալ կ'անցնեն, ասիկա պէտքին հա-
մեմատ կը պրկուի կամ կը թուլնայ, և կամ կրունկին կապուած
երկու սրիմները սաքին վէգերուն վրայէն դարձնելով կը բերեն սաքին
առջևի կողմը և հոն կը հանկուրցեն (հանդոյց կ'ընեն): Թէ՛ տա և
թէ՛ միւսը քայելու ասան չեն թողուր որ չարսիսը սաքէն ելնէ:

Հում կաշիէ շինուած չարսիսները ամառնային եղանակին չեն
չարմարիր, որովհետև չարնալով կը կտրծրանան և սաքը կը սեղ-
մեն, մինչ խաղախարուած կաշիէ շինուածները միշտ իրենց կակղու-
թիւնը կը պահեն: Չարսիսները եթէ ծակին, սրիմով կը կտրկանեն՝
կաշիէ կտրկանալով գոցելով բացուածքը:

Կայ նաեւ եմենիկ, հանդիսաւոր օրերու համար: Քաղաքացի
կօշկարը (կօշկակարը) կը կտրէ զայն եւրոպական կտրմիր երեսնե-
րով մերթ սեւ ալ կ'ըլլան: Քիթը սրածայր է ու քիչ մը վեր դար-
ձած, կրունկ չունի, յատակը ամբողջովին հարթ հաւասար է:

Յիշենք, այս առիթով, զուարճալիք մը.

Գիւղացին քաղաքացիէն երբ կօշիկ պիտի գնէ, կօշկարը ինքն

է որ անոր համար կ'ընարէ զոյգ մը ընտիր... կօշիկ, և կը ներկայացնէ անոր:

Իւզղացին կը հարցնէ «բարեկամ՝մ, ըս եմէնիդ գիմացկո՞ւն է»:

Կօշկարը կը պատասխանէ, հըպէ՛, ծօ՛, գեղացի, շատ գիմացկուն է, կալէ կալ կ'երթայ (կը գիմանայ): «Կալէ կալ երթալ գիւղական սճ մըն է, որ կը նշանակէ մէկ ասրի, կամ մէկ ամառէն մինչեւ յաջորդ ամառը: Կը նշանակէ նաեւ մէկ կալատեղիէն միւս կալատեղին, հազիւ 5-10 քայլ հեռաւորութեամբ իրարմէ բաժնուած...»:

Այս կերպով քաղաքացին սրամտօրէն գիւղացին պարզմասութիւնը կը փորձէ...:

Քաղաքացիները ընդհանրապէս եմէնի կը հագնին, կան քաղաքացիներ և գիւղացիներ ալ որոնք կօշիկ (գունասուրայ) կը հագնին:

Իսկ քահանաները կարմիր երեաներով եմէնի չեն հագնիր, այլ սեւ կամ թխագոյն կ'ըլլան անոնց կօշիկները:

Չատիկը եմէնիին նման է, միշտ կարմրագոյն երեաներով, ասիկա ունի երկաթեայ կրունկ մը, որ շատիկին կրունկին կը գամուի և երեք ցցուածքներ ունի 1-1 1/2 սանդիմէթր բարձրութեամբ, ասիկա նալչա կ'անուանեն: Չատիկը կիներու կօշիկն է, կայ նաեւ մասը, որ կակուղ քեմսխա՛նէ կը կարուի, ասանց պարանոցի: Մերունիները իրենց գուլպային վրայ կը հագնին, ասն մէջ, իսկ տունէն դուրս, ասանց վրայ իրենց կօշիկները կը հագնին:

Հողաթափը յատուկ է մ'տայն եկեղեցւոյ մէջ հագնելու:

Շտպիկին վրայ, այրերը, կը հագնին անթեւ բաճկոն մը, զոր տեղացիները ելակ կ'անուանեն: Ելակին առջեւի երկու եզերքները, օձիքին ծայրերէն սկսեալ մինչեւ ստորին ծայրը, խիտ կոճակներու և օղակներու երկու շարքեր կը ծածկեն, և հագնելու ատեն այդ բոլոր կոճակներն ալ կը կոճկեն:

Կոճակները՝ գիւղացի հարսները կամ աղջիկները կը շինեն. ասանք քուրջի կտորներէ փոքրիկ գնդիկներ կը շինեն, ասանց մակերեսը կը ծածկեն համաչափ ու վայելուչ ասեղնագործական խիտ ցանցով մը: Թագլով կարճ ատուն մը, սրով կոճակը զգեստին հետ կը կարուի: Երբեմն, գնդիկներու վերածուած քուրջին վրայ ուրիշ կառուէ երես մը կ'անցնեն և պրկումով լու մը կոկելէ յետոյ, իրարու վրայ բերուած ծածկոյթին եզերքները կարելով ատուն կը կազմեն: Կոճակ ըսուածը, որ միշտ շապիկի, բաճկոնի, և զպունի համար կը գործածուի, աս է իբրեւ տեղական ճարտարարուեստ...:

Իսկ օղակ ըսուածը զգեստներուն եզերքներուն վրայ բացուած ու եզերքները ասեղնագործութեամբ ամփոփուած ծակեր չեն, այլ պարզապէս, անոնց եզերքներուն հետ կարուած խայթանէ (6-7 գերձաններով հիւսուած քաւանկիւն առասան) փոքրիկ կամրջակ մըն է, որ

բուն անցքին մեծութիւնը կոճակին մեծութեան կը յարմարցուի:

Այս կերպով պատրաստուած թէ օղակը և թէ կոճակը տարիներ կը դիմանան, այնքան որքան կտաւէ զգեստը, յաճախ հոյնիակ անկէ ա՛լ աւելի:

Ելակին երկայնութիւնը՝ մինչեւ մէջքը կը հասնի և ստորին եզերքները կ'ամփոփուին շալուարին խոնճեղարձին տակ: Ասոր օձիքը, զինուորական համազգեստներու վերարկուներուն օձիքին պէս, մէկ սանդիւմէթի բարձրութեամբ պարանոցը կը սրտէ, և մասնաւոր սակղնագործութեամբ մը զարդարուն կ'ըլլայ:

Ելակին վրայ կը հապնին զպունը: Ասիկա կը բազկանայ երես մը, որ շրջակայ գլուտներու արտադրութիւնը կ'ըլլայ ընդհանրապէս. սեւ գծաւոր է, և տատաւէ, որ տեղական սպիտակ կտաւէ կ'ըլլայ: Ասոր երկայնութիւնն ալ ելակին չափ կ'ըլլայ, կամ հազիւ քանի մը սանդիւմ անկէ երկայն: Կ'ամփոփուի խոնճեղարձին տակը:

Զպունին երկու լանջեզրերը, ինչպէս հաւեւ օձիքին եզերքը, մետաքսեայ կամ սովորական ու կապոյտ ներկուած զոյգ մը խայթանով վայելչօրէն եզերուած կ'ըլլան:

Հապնելու տակն ստոր մէկ եզերքը չաւանով մը կը կտակն միւսին լանջամասին տատաւին կարուած չաւանին, իսկ միւս եզերքով կը ծածկկեն առաջինին կրծամասը. այնպէս որ, պարանոցէն սկսեալ մինչեւ ստինքները անկիւնաձեւ բացուածք մը կը մնայ, ուրկէ կը տեսնուին ելակին կոճակներուն վերէն վար երկարող շարքին կէսը: Ասիկա վայելչութիւն կուտայ կուրծքին:

Գօտին՝ շուրջ երկու մէթր երկայնութիւն և 30-35 սանդիւմէթր լայնութիւն կ'ունենայ: Պատասու մըն է բրդէ կամ բամպակէ հիւսուած: Բրդահիւս գօտին կ'ըլլայ գունաւոր, իսկ բամպակէ հիւսուածը կապոյտ ներկուած կամ սպիտակ կ'ըլլայ: Սպիտակ գօտին քրդական կիրառութիւն ունի, աղքատ գիւղացիներն ալ զայն հարկադրուած կը գործածեն:

Գօտին կտակելէ առաջ երեք ծալք կ'ընեն, կամ երկու ծալք. այս կերպով անոր 10-15 սանդիւմէթր լայնութիւն առկէ յետոյ մէջքերնին կը կտակն, այնպէս որ շալուարին խոնճեղարձը ամբողջովին անտեսանելի մնայ: Պատահի որ անոր մէկ մասը միայն գօտիէն դուրս մնացած ըլլայ, սովորութենէ կամ պատշաճութենէ դուրս բան մը կը համարուի, հետեւաբար ծիծաղելի կ'ըլլայ. այդպիսի մէկը թափթփած մարդու կարգը կը դասեն:

Գօտին մերթ կ'ըլլայ արժէքաւոր ցփաիէ (շալ) որ տեղւոյն վրայ շարտադրուիր: Ներածեալ օտար տպրանք է: Ընդհանրապէս պարս-

կական ճարտարարուեստի գործ, և կը գնուի Կարնոյ տակաւրական հրապարակէն:

Վերջապէս, զպուճիկն վրայ կը հասնին սալքայ: Ասիկա թեւով կարճ վերարկու մըն է, և իր երկայնութիւնը ելակին չափ է: Կը ծածկէ թիկուէքէն մինչև գօտին, այնպէս որ գօտին կը մնայ անոր ստորին եզերքին տակ: Կրծեզրերը, օձիքին և ստորին եզերքները, ամբողջովին կտալոյտ ներկուած խայթանով եզերուած պէտք է որ ըլլան, եթէ սալքան կտալոյտ ներկուած կտաւով շինուած է, իսկ եթէ կտալոյտ տաւիով շինուած է, խայթանը մետաքսահիւս կ'ըլլայ նոյն գոյնը կ'ունենայ: Օձիքը 1 1/2 սանդիմէթր բարձրութիւն ունի, և ճարտարօրէն ձեւուած ու կտրուած կ'ըլլայ:

Գլխարկը կ'ըլլայ՝ գտակ մը կամ թողիքէ գլխանոց մը կամ ֆէս:

Գտակը, հաստուլ կոնի ձեւով, ասեղնագործուած գլխանոց մըն է: Քառակուսի ծակերով, և քառակուսի լիցքերով համադրուած զարդեր ունի, ընդհանրապէս երկկողմնազոյգ եռանկիւններու ձեւով, որոնց ստորին խարիտիները իրարու միացած շրջանակի մը վրայ դէպի վեր ցցուած համաչափ և համադիր բուրգերու շարք մը կը ձեւացնեն: Այս շարքերը կ'ըլլան երկու կամ երեք: Կրնայ ըլլալ որ ասեղնագործութեան յարմարող երկրաչափական ուրիշ կանոնաւոր ձեւեր ալ խառնեն այս բրգածեւ զարդերուն: Սակայն գործածական ընդհանուր ձեւը սաւղինն է:

Այս գդակը կը գործածեն՝ մանուկներ, սրտանիներ և երխտասարդներ, որոնք վրան գունաւոր եազմա մ'ալ կը փաթանն երբեմն, իսկ տարէցները ֆէս կամ թողիքէ գլխանոց կը գործածեն միշտ վրան եազմա մը փաթակով:

Քահանաները՝ վրան սեւ եազմայ փաթառուած թողիքէ գլխարկ կը գործածեն՝ աշխատութեան տակն, իսկ ուրիշ տակն՝ փակեղ:

Ղեւնաքնակ հայերը, քուրդերու հետ յարատեւ շփման մէջ գրաւուելով, տարազով և հագուելու ձեւով շատ կը նմանին անոնց: Թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել թէ իրենց վաղնջական տարազը նոյնութեամբ պահած են. դժուար պիտի չըլլար՝ Ղեւնաքնակ հայերու և քուրդերու ցեղակցութիւնը հաստատել: Այս հայերն ալ կը դնեն թողիքէ պատրաստուած գմբէթածեւ գլխանոց մը, ու անոր վրայ կը փաթանն՝ եզերքներէն կախուած ցանցաւ ծոպաթեւեր, իբրեւ զարդածոպեր, որոնք մինչև յօնքերը և ականջները կը հասնին: Փուշիները (մետաքսեայ սեւ թաշկիմակ): Քուրդերը, սակայն, անոր վրայ կը կապեն իրենց տարիներուն թիւին չափ գունաւոր եազմաներ, այնպիսի ճարտարութեամբ մը որ բոլոր եազմաներուն գոյներն ալ տեսանելի կ'ըլլան. Համբելով այդ գոյները կարելի է

հասկնալ նոյն այդ գլխարկը կրող քուրդին ստորիքը : Իսկ գլխարկին գազաթին վրայ, շատեր, աղէաներէ, վասնգններէ, վնասակար սողուններու խոյթուներէ, և գիշտաիչ գազաններու յարձակումներէն զերծ մնալու համար յաւոյթներ կը կարեն :

Կիներուն գլուխը ծածկող հազուաակազէնները հետեւեալներէն կը բաղկանան. գասկէ մը՝ որուն ստորին եզերքին շուրջը՝ ետզմաներէ ոլորուած շրջանակ մը կը փաթակն : Այս շրջակապը ճիւղա կ'անուանեն : Տիւկային վրայ կը ձգեն բարակ ու թափանցիկ մութ կապոյտ գոյնով շղարշ մը, որ կը ծածկէ կնոջ գլուխը, մինչեւ աչքերը, բերանը, եթէ մանկամարդ կամ նոր ամուսնացած է : Այս շղարշը լաչակ կ'անուանուի : Կինը եթէ տարէց է՝ կամ հատուն հասակի մէջ, լաչակը մինչեւ յոնքերը կը ծածկէ. քիթը, աչքերը, այտերը, բերանը բաց կը մնան :

Անոնց գօտին նրբասիւս և գունաւոր ցփաիէ կը բաղկանայ, զայն իրենց մէջքը կը կտայն, ետեւի մասին ետանկիւն ձեւ մը ստալ : Գօտիին այս ետանկիւն մասը վայելչօրէն կը ծածկէ գաւակները : Գօտիին վրայ կը կտայն գոգնոցը որ պարանոցէն մինչեւ ծունդերէն վար կ'երկարի, սաքերէն 10-20 սանդիւմէթը միայն վեր մնալով : Գոգնոցին մէջքին վրայ կը կարուի երկայն, երիզածեւ նոպր : Ասիկա բարակ և գունաւոր բրդեայ թելերով կը հիւսուին, շուրջ երեք մէթը երկայնութեամբ, և $3 \frac{1}{5}$ սանդիւմէթը լայնութեամբ երիզ մըն է : Երկու գարձով մէջքին շուրջը փաթակէն յետոյ, երկու ճիւղերը իրարու վրայ կը հաստատան փաքրիկ կեռով մը, ձախ կողմը, և ծայրերը կ'երկարին մինչեւ ծունդերէն վար :

Նոր հարսերը, ձմեռնային եղանակին մէջ, մանուսանդ կիրակի և ածնական օրերը, իրենց վրայ կը կրեն մեծ սուսն մը, երկայն, նուրբ, որուն երկու ծայրերը մինչեւ իրենց ոլորները, ծածկելով թիկունքը, գլուխը մինչեւ լանջքը : Ասոր ալ քաղք անուանը կուսան :

Կիներուն շապիկները կապոյտ ներկուած պէտք է ըլլան. ան կ'ուսնենայ կէսկիսուած պրտակերներ, իր ստորին եզերքներուն վրայ շուրջանակի, ինչպէս նաեւ թեւերուն ծայրերը, որոնք երկար կ'ըլլան, և դաստակին շուրջը գարձուելով, փաքրիկ կեռով մը կը հանգրիճուին : Այդ կեռը գարգասեղի դերը կը կատարէ և կ'ըլլայ ընդհանրապէս արծաթէ :

Այս շապիկները կուսակապման շապիկ կը կոչուին (սես բառչարանը, կուսկապ) :

Հարաներուն վերարկուն, բուրդիեան անուսով, կ'ըլլայ մետաքսասիւս ընաիր կերպասէն, որ զպուն մըն է, սւսերէն մինչեւ սաքերուն երեսը կ'երկարի : Ասոր վրայ ուրիշ վերարկու չեն հագնիր :

Հասարակ գոգուներ, խոսք ըստ ըստ գոյ գոգոյն գիծեր ունեցող կասուով
կը շինուի, շրջեզրը ամբողջով ի խոյթանով կզերուած: Կնոջական
գուրպան տարբերութիւն շունի այրերու գուրպոյնէն, միայն սովորա-
պէս անոնք կը հագնին ամէնէն նուրբ հիւսուած տեսակները, սրանք
մերթ, կրնան մրցիլ ճարտարարուեստի գուրպաներուն հետ նրբու-
թեամբն ու ծաղիկներու գեղեցիութեամբը, և կը գերազանցէ մո-
նաւանդ իր տակուսութեամբը. ընտիր բուրդէ հիւսուած այսպիսի
գուրպոյ մը կրնայ մէկ տարի անընդհատ աւրար:

Գուրպան երբ կը ծակի գործածութեամբ կամ ուրիշ պատճառով
մը, բացուած ծակը հիւսելով կը գոցեն, այս գործողութիւնը լեցնել,
գուրպան լեցնել կը կոչուի:

Ծանօթ.— Այս լուսանկարներով ներկայացուած տարազները
ճշգորէն համապատասխան չեն հիւսիսայնաց տարազին: Երկատասարդը
որ հագած է սպիտակ տարազը, կը ներկայացնէ քրդականը կամ
լուսականը. իսկ միւս՝ սեւ գգեսանները առաւելապէս կը նմանին
քաղաքացիներու գգեսաններուն. մանաւանդ շալուարը, սրուն փո-
թուը աւելի բարձր կը մնայ. քաղաքացիները աշխատութեան մի-
ջոցին, իրենց շուկաներուն մէջ այդպէս կը հագուին: Իսկ գլխանո-
ցը բոլորովին քաղքենի է:

Գուրով կնոջական գգեսաններուն, նախ՝ գոգնոցը, որ պարանոցէն
սկսեալ պիտի երկարէր մինչեւ ուրքները, կը պակսի: Ասկէ զտա
գոգուներ պէտք է որ աւելի երկար ըլլայ. ճոպը կը պակսի:

Այս տարազներուն մէջ գեղջկական քիչ բան կայ:


Գուրով գուրպոյին, զոր բուճ կ'անուանեն, տարիա ձմեռնային
գուրպոյին ձեւը և հիւսուածքը կը ներկայացնէ իր զարդերովը:
Զմեռնային գուրպանները հաստ գերձաններով կը հիւսուին և կնո՛
թանձր ու կոշտ. մինչ ամառնայինները նրբածիւս և ճաշակաւոր
կ'ըլլան ընդհանրապէս, մանաւանդ երբ քրդեզնոյ գերձանով հիւս-
ուած ըլլան:

Այս տարազները ձեւք բերել յաջողեցայ 1931ին երբ Պէյրութ
հանդիպեցայ օգտախոսութեան առիթով. հոն, տարազիրներէն պ. Բա-
գարատ Քոչկիչեան սիրայօժար յանձն առաւ օգնել ինծի դժուարու-
թեամբ հայթայթելով զանոնք. հագուողը նոյն ինքն այդ երկատա-
սարդն է, իսկ կինը՝ Տիկին Խաչխաթուն. կրնայ ուրեմն ըն-
թերցողը մտածել թէ՛ այդ գգեսանները բուն իսկ իրենց վրայ ձեւ-
ուած ու պատրաստուած գգեսաններ չեն. այս պատճառաւ կարելի չէ


որ պատկերներու վրայ գիտող մը կարենայ տարազներուն վա-
յելչութեան մասին յստակ գաղտփար մը կազմել:

Կօշիկներն ալ տարբեր են, ինչպէս կը տեսնուի, ի հարկէ տա-
րազութեան տանն և վեց տարիներէն յետոյ Պէյրութի մէջ կարելի
չէր բարուցիներու հագած կօշիկներուն նմոյշը գտնել:





Գուլպայի առջեւի երեսը



Գաւլալայի ետեւի երեսը



Լեռնականներու սարազը
(Բրդական)



Ննոզական պարզ սարսիզ գուր կը հագնին
աշխատութեան միջոցին



Արախան սարազ գոր կը հագնին աշխատութեան միջոցին:



Հարսնութեան սարսուզ

Գ Ե Ղ Ա Կ Ա Ն Յ Ա Տ Ո Ւ Կ Ա Ն Ի Ի Ն Ն Ե Ր



ԱՐՏԵՐ ԵՒ ԱՂԲԻԻՐՆԵՐ

Այբընեք
 Չիթախ
 Փըշմըջեք
 Վերի Կարեք
 Կայկընեք
 Քարաակ
 Էրկան (երկայն) Լարեք
 Ջընուա
 Լարեք
 Ազոթկոմ
 Չըուեք
 Քարըրըկնեք
 Ճախին
 Մնուչեք
 Քարկընեք
 Բողդխար
 Սեւհաախ

Ակնիք
 Քոսաղբիք
 Վարդաղբիկ
 Խլաղբիք
 Սեւակ
 Բունչինեք
 Սըրկընուց
 Սալաքար
 Օձկընի
 Մամխենուա
 Քարաղբիք
 Թոնիք
 Բարտեձոր
 Սիղուա
 Սիղուանի
 Խոուոչ
 Խոուոչնի

Մ Ա Կ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

Մանուկանց
 Մելիքենց
 Մխտնց
 Գիգոենց
 Խաչիկանց
 Նորսոենց

Միքոյենց
 Մրակոտնց
 Թղոյենց
 Սաականց
 Տէրաըրանց
 Ջարդարենց

ԱՅՐ ՄԱՐԴՈՅ ԿՐՃԱՏՈՒԱԾ ԱՆՈՒՆՆԵՐ

Արթայ, Արութ — Յարութիւն
 Գողայ, Գիգայ — Գրիգար

Սրգոյ — Սարգիս
 Պողսոյ — Պողոս

Կրպոյ — Կարոպեա
 Օյոյ, Օհան — Յովհաննէս
 Մրկոյ — Մարկոս
 Մրատյ, Մարտիկ — Մարտիրոս
 Ռըբոյ — Ռուբէն
 Խչոյ, Խաչիկ — Խաչատուր
 Աւքոյ — Աւաքէլ
 Տոնոյ, Տոնիկ — Տոնապետ
 Կուրղոյ, Կուրղիկ — Կիւրեղ
 Գեւոյ — Գէորգ

Մչոյ — Մկրտիչ
 Թորոյ — Թորոս
 Գավոյ — Գաւիթ
 Կիկոյ, Կակոյ — Կիրակոս
 Ասատյ, Ասաւր — Ասատաժատուր
 Իսիոյ, Իսի — Յովսեփ
 Ակոյ, Էկոբ — Յակոբ
 Սուգոյ — Սուքիոս
 Մուսեղ — Մուշեղ

ԿԱՆԱՆՅ ԿՐՃԱՏՈՒԱԾ ԱՆՈՒՆՆԵՐ

Եղտոյ, Եղտա — Եղիսաբեթ
 Ճուլար — Գոհար
 Մրոյ — Մարիամ
 Էթոյ — Եթեր
 Զոյ — Զանիկ
 Զատոյ — Զատիկ
 Սաոյ, Սառիկ — Սարրոս
 Սրբիկ — Սրբունի
 Մաքոյ, Մաքիկ — Մաքրունի
 Օղտոյ — Յուդիտա
 Մարան — Մարինոս

Վարդոյ, Վարդիկ — Վարդունի
 Զրոթոյ — Զարդար
 Աննիկ, Աննոյ — Աննա
 Ըւան — Ըսէնան
 Շուշոյ — Շուշան
 Օղիկ — Իւղաբեր
 Օսկոյ — Իսկունի
 Զէմպիլ — Զապէլ
 Թուրոյ — Թուրվանտա
 Հըւփոյ — Հաիփսիմէ



ԲԱՆՈՒԻ ԲԱՆՏԵՍԸ

1913

ՓԵՐԻ

Չ աբ ա ա ն ճ ա ի թ Գ Ե ա (Փ եր թ Ս ու յ թ)

Լ Ե ա ն ա յ ի ն

Լ Ե ա ն ա յ ի ն

Լ Ե ա ն ա յ ի ն

Ա Վ Մ ՈՒ Ի Ր Մ Ս

Ա Վ Մ ՈՒ Ի Ր Մ Ս

Ա Վ Մ ՈՒ Ի Ր Մ Ս

ՄԱՆՈՒՅՈՒՆ

- Քաղաք... Ծառայ
 - Մեծ գիւղ... Գետ
 - Փոքր գիւղ... Լեռ
- Ատոմանաչափ 1:100,000

ԲԱԼՈՒԻ ԲԱՐԲԱՌԸ

□□□□□□

ԲԱՌԵՐ, ՈՋԵՐ ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

ԲԱՆՈՒԻ ԲԱՐԲԱՌԸ

ԲԱՌԵՐ, ՈՋԵՐ ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

Ա.

Ա. Բալուէ բարբառին մէջ, սոյն ձայնաւորը՝ հնչական երկու տր-
մէքներով կը գործածուի. իբրև պարզ ձայնաւոր, և՛ իբրև
բաղադրեալ ձայնաւոր: Իբրև պարզ ձայնաւոր, կուտայ սոյն
հնչումը, որ ծանօթ է գրական արդի լեզուին մէջ. իսկ, իբ-
րև բաղադրեալ ձայնաւոր՝ է և Ա. տառերուն միացեալ հըն-
չումը կ'արտայայտէ, մանաւանդ՝ Կ, Գ և Ք տառերէն անմի-
ջապէս յետոյ:

Արածանիի աջափնեայ գիւղացիներ իբրև պարզ ձայնաւոր
կը հնչեն, իսկ ձախափնեայ գիւղացիներ, մասնաւորապէս լեռ-
նաքնակներ, քաղաքացիներէն ալ շատեր միասին առնելով,
իբրև բաղադրեալ ձայնաւոր կը գործածեն:

Օրինակ. Աջափնեաներ կ'ըսեն. կուգամ, կ'ըսիմ, կ'երթամ:

Ձախափնեաներ՝ կիգեամ (կուգեամ), կ'եսսիմ, կ'երթեամ:

Ա. Ա'. Միատառ բառ մըն է աա, որ, մերթ շեշտեալ, և մերթ ա-
ռանց շեշտի, բայերու հետ կը գործածուի, անոնց՝ ներկայ և
կտարեալ ժամանակներուն յաջորդելով: Անոնց կուտայ ո-
րոշ կամ մերձաւոր ժամանակի մը իմաստը: Գուցէ՛ ահա,
ահաւասիկ մակբայներուն կրճատում մէկ մնացորդն է:

Օրինակ. Կը գրի՛մ ա, գրեցի՛ ա, կ'երթա՛մ ա, կը խո-
սի՛մ ա. կը գրե՛մ կոր, գրեցի՛ սհա, կ'երթամ կոր, կը խո-
սի՛մ կոր, նշանակութեամբ:

Երբեմն, սոյն ժամանակներէն առաջ կը դրուի, և Հ տառին
յաւելումովն ածում մը կ'առնենայ, և կ'ըլլայ՝ ՀԱ: Օրինակ.
Հա՛ կուգամ, հա՛ էկայ, հա գրեցի: Ահա կուգամ, կուգամ

կոր, հիմա պիտի գամ, հիմա պիտի գրեմ: Անցեալ կատարեալը, մերձաւոր ապառնիի փոխած է (1):

Աբար. 1. Աղբար, մեծ եղբայր: Յարգական բառ մը, զոր փոքրերը կը գործածեն, երբ իրենցմէ մեծերուն խօսք ուղղեն, կամ անոնց մասին խօսին: Կըրպարար = Կարողեա աղբար, Մըլքարար = Մեղքօն աղբար: Կը համապատասխանէ նաեւ թուրքերէն ալա բառին: 2. Կը գործածուի նաեւ հայրիկ բառին տեղ: Օրինակ. Աբա՛ր, ինծի գիրք մի առ = Հայրիկ ինծի գիրք մը առ:

Հոլովում արօր, Աբօր մինէ, Աբօր հեա, Սըրգարօր, Սըրգարօր մինէ, Սըրգարօր հեա = Սարգիս արօր, Սարգիս արօրմէ, Սարգիս արօր հեա:

Ագրումեջ. մէջի. մէջէ: Ստորին սրովայնին՝ սրունքներուն հեա միացած տեղը. երանք:

Ագուգայ. Ագուգի, ագուգէ, յոգ. ագուգանի, ագուգանու, ագուգաներէ: Տան արտաքին պատին ստորտը մասնաւորապէս թողուած անցք, ուրկէ բակին ջուրերը դուրս կը հոսին:

Ագբ. Ոստայնանկութեան գործիք մը, որ՝ առէջները, հիւսելու միջոցին, երկու մասերու կը վերածէ, մաքոքին անցք ստուլու համար:

Աբար. Աթարի, յոգ. աթարնի, աթարնու: Կամ՝ աթարներ, աթարներու: Ախոռներու յատակը ծածկող սալաքարերու ձեւով կարծրացած քակար, որ կը կազմուի կենդանիներէ կոխկառուած թրիքի մնացորդներէ՝ յարդի, հալի և զանազան նիւթերու հեա խառնուած: Ասիկա հազուադէպօրէն իբրև վառելիքիւթ կը գործածուի՝ միայն հողէ ամանները թրծելու համար:

Ալալանկ. լընկի, է: Գիւղերու մէջ, ուսգմանց ջուրերու՝ պարբերական համայնացում: Մասնաւորապէս գարնան ու ամրան եղանակներուն, ամիսը՝ երկու կամ առ առուէն երեք անգամ միայն, հողագուրկ, կամ ոչ-երկրագործ գիւղացիներ՝ ի-

(1) Այս մասնիկը կամ բառը, տարբեր եղանակաւորումներով, բայց գրեթէ նոյն իմաստով կամ զօրութեամբ՝ ուրիշ գաւառական բարբառներու մէջ ալ կը գործածուի:

- Արարկիրի բարբառին մէջ. կը գրե՛մ կը, կ'երթա՛մ կը, կ'առնե՛մ կը:
- Չմշկածագի » » կը գրի՛մ ը, կ'երթա՛մ ը, կ'առնի՛մ ը:
- Ամասիայի » » կ'երթա՛մ կա, կ'ուզի՛մ կա, կ'ուտի՛մ կա:
- Տրասպիգոնի » » կ'երթա՛մ կու, կամ կ'երթա՛մ կը:

րենց ամուսները կամ բանջարանոցները ուռուցելու համար, գիւղին բոլոր ջուրերէն օգտուելու իրաւունք սենին: Ուրիշ օրեր, երկրագործ գիւղացիները միայն իրաւունք կ'ունենան, օրերու կարգով, ջուրերը իրենց միջեւ բաժնելու՝ արտերը և ծառատանները ուռուցելու համար:

Մանօր. — Ոչ-երկրագործ գիւղացիներն ալ, թէեւ արտեր չունին, բայց կ'ունենան ընդհանրապէս այգիներ և ծառատաններ, որոնց մէջ ամուսներ շինելով բանջարեղէն կը մշակեն:

— Այլալընկի օր. «Ըս օր ալալընկի օ՛ր ը» այսօր ալալանկի օր է կ'ըսեն: Գիւղերու ծերակոյտին կողմէն սահմանուած օրեր, ուր, ոչ-երկրագործ գիւղացիներ միայն արածնութիւն կ'ունենան գիւղին բոլոր ջուրերը իրենց միջեւ բաժնելու՝ ուռուցումներ ընելու համար: Ալալանկի օրերը միշտ գրեթէ կիրակի օրերուն կը զուգագիտին:

Ալեւըլայ. կողանդ, կողանդի օր, տարւոյն տաղին օրուան նախընթաց իրիկունը:

Ալիւ. ի. է: Ալիւր:

Ալոն. Վայրի պտուղ մը՝ կալինի մեծութեամբ, գեղնագոյն, և կըլար, որուն մեծագոյն մասը կը կազմեն՝ զոյգ մը կորիզ:

Ալոնեցի. Ալոնի ծառ՝ որ լեռներու, և լեռնային այգիներու ցանկերուն մէջ կ'աճի, անջրդի գեախններու վրայ:

Ալվա. Բարձեալ, նորէն: Ալվա էկան դարնայ էրկան օրերը,

Ալվե. Նոյն, ալվա: Աւնիմ եարս, էլլամ կանանչ լեռները...

Ալբուլն. ասն, տունէ: 1. Ջրաղացքին երկրորդ յարկը. ստորին յարկը շողոտուն կամ շողատուն կ'անուանուի: Այս երկրորդ յարկին մէջ են երկանաքարերը, և հոն է որ արմախքը ալիւրի կը վերածուի: 2. Երկանաքարերուն առջեւ շինուած՝ 70-100 սանդխմէթր երկայն և 50-60 սանդխմէթր լայն ու նոյնքան խոր փոս մը, ուր կը հաւաքուի երկանաքարին տակէն ցայտող ալիւրը:

Ալբ. քու, քեր: Չար ոգիներ, որոնք մարդերը, մասնաւորապէս դեռ չմկրտուած յոյր երախաները կը փոխեն, աւ անոնց տեղ կը դնեն, ճազած, հիւանդոտ երախաներ:

— Ալբու փոխած. Բեղնած, ճազած, վախտ, հիւանդոտ մարդ, երախայ:

Ածան. Հաւ որ հաւկիթ ամելու շրջանին մէջ կը գտնուի:

Առած. — Ածան հաւը գարգըճան կ'ըլլի: Արգիւնք տուողը շատ ակնկալութիւններ կ'ունենայ ուրիշներէն:

Ածել. ն. բ. կ'ածխմ, ես ը ամեցի ցիր եց, հաւկիթ տուլ, հաւաղ-

գիներու և սողուններու համար միանգամայն կը գործածուի:
 — Հաւկիթ Ածել, 1. Ածել. 2. գործ մը կատարել, բան մը ընել:
 Հա մարդը քաղաքը գնաց, տեսնանք ի՞նչ հաւկիթ պիտի ա-
 ծը: Այդ մարդը քաղաքը գնաց, տեսնանք թէ ի՞նչ պիտի
 կրնայ ընել:


Ածիլի. Ածելի:

Ածիլել. ն. բ. Ածիլել:


Ածիլուածք ենել. Ածիլելու գործողութեամբ պարտապիլ:

Ակ. 1. Աղբիւրին բղխած տեղը: 2. Թանկագին քարեր որոնք գե-
 տեղուած են մատանիի, օղի, և ուրիշ գարդեղէններու վրայ:

Ակիւ. Մէկ ձեռքով գործածելի թիակ, որով հաւաքուած սղբը կամ
 մոխիրը կը փոխադրուի մասնաւոր ընդունարանի մը մէջ՝ այ-
 լուր փոխադրելու համար: Ասիկա օճախին անհրաժեշտ գոր-
 ծիքն է, որով կրակը կ'անթեղեն, անթեղը կը բանան, մո-
 խիրը կ'ամփոփեն կամ կը ցրուեն:



Ակիւ



Ակիւն


Ակիւն. Գուլպայի բոլորածեւ
 գարդ մը:

Ակնիւ. 1. Ճանճային վայրեր, ուր, շատ մը տեղերէ ջուրեր կը
 Ակնիկ. բխին և ծածկուած են սէզերով: 2. Գաշտային յատուկ ա-
 նուն, որով գիւղացին կը ճանչնայ գիւղը շրջապատող վայ-
 րերուն որոշ մէկ մարդը:

Աղալ. ն. բ. ամ, աս, այ, անք, աք, ան, աղցայ, ցար, ցաւ,
 ցանք, ցաք, ցան, աղցի՛ր, աղցէք, աղցած: 1. Արմատիքը ա-
 լիւրի վերածել: 2. Մանրել երկանաքարով՝ ձաւար, ձեծած,
 ոսպ և ուրիշ ընդեղէն:

Աղուն աղալ. Արմատիքը ալիւրի վերածել:

Աղաս. Աղաի, տէ: Փայտի ճիւղերով, ընդհանրապէս որթատունկի



Աղատ

բազուկներով հիւսուած պատ: Ամառնային տուէր կը բազկա-
նայ երկու իրարու ուղղահայեաց պատերէ և ծածքէ մը: միւս
երկու կողմերէն մէկը կիսով չափ աղատով կը փակուի:

Աղբար. Բօր, բօրմէ, եղբայր:

Աղբել. Արաը պարտաւարացնելու համար աղբ խիտադրել, որ սովո-
րաբար մտիտէ կը բազկանայ:

Աղբրնե. Յասուկ անուէն: Այն տրտերը որոնք ամէն աստի կը
պարտաւարացուին:


Աղբի. Աղբրի, աղբրէ: Աղբիւր:

Աղբիւակ. Աչքին այն երկու ծայրամասերը, որոնք քիթին երկու
քովերը կը գտնուին:

Աղբուն. Արա որ աղբուած է, պարտաւարացած է:

Աղբուակ. Եղբայր բառին փաղաքշական ձևն է:

Աղեղ. Բամպակը գղելու յատուկ գործիք մը: Կը բազկանայ ձողէ
մը, որուն մէկ ծայրը աստիճանաբար կը կորանայ. միւս
ծայրին վրայ ամրապէս աղուցուած է լայն տախտակ մը, որ
լարին իբր յենարան կը ծառայէ: Լարը, հաստատուած կար



Աղեղ

ծայրին վրայ, կ'երկարի մինչև յենակը, և անոր վրայէն
կ'երթայ և ձողին վրայ բացուած ծակէ մը կ'անցնի և հան
պրկուելով կ'աղխաղխուի: 2. Տես խուլիկնակ:

Աղկեկ. Աղուոր, գեղեցիկ:

Աղկեկնալ. բ. չ. Աղուորնար:

Աղկէկուկ. Աղկէկին նուազականը կամ փաղաքչականն է:

Աղնել. Բամպակը՝ աղեղով գգել. ն. բ. կ'աղնիմ, եցի, աղնը, աղ-
նեցէք, աղնամ:

Աղընծել. ն. բ. կ'աղնծիմ, աղնծեցի, աղնծը, ծեցէք, ծամ: 1. Սար-
կել՝ ցորեն, ընդեղէն, եւն. 2. սաստիկ սաքցնել: Արեւը
զիս աղնծեց = Արեւը՝ զիս սաստիկ սաքցուց:

Աղընծիլ. բ. չ. Սարկուել:

Աղընծիկ. Աղնծուած ցորեն, զոր աղալէ յետոյ, իւզով և ուռպով
փոխինա կը շինեն:

Աղընծուիլ. Աղնծիլին կրաւորական ձեւը:

Աղընփաս. Ուռնածեւ փայտ մը, որով՝ բամպակը աղ-
նելու ստեն, աղեղին լարը կը թակեն, շարու-
նակ: Լարը՝ անոր բախումներուն տակ շարու-
նակ կը թրթուայ և իրեն հետ շփման մէջ գըր-
նուող բամպակը փրփուրի նման անօսը ծուէննե-
րու կը վերածէ: Տես նաեւ Չափ:



Աղընփաս

Աղինակ. Չլաները (որոշ թուով առէջներ) իրարմէ
զատելու համար գործածուող երկճղի փայտ մը:



Աղինակ

Աղու. Թոյն:

— Աղու սալ մեկուն. Թունաւորել մէկը, Թոյն խմցնել:

Աղուրնուկ. Աղուընկայ, յոգ. աղուընկընի: Աղաւնի:

* Աղս. Նոր ծնող երախային պատեանը, որ ծննդաբերութենէն քիչ
յետոյ արգանդէն դուրս կուգայ:

Աղսոր. Հազիւ կէս մէթր բարձրութեան հասնող բազմաճղի թուփ
մը, որ, թթու թփերով ծածկուած մանր ու կարծր հասիկներ
կ'աւնենայ: Ասոր թթուն՝ պահք օրուան կերակուրներն հա-
մեմելու կը գործածեն (սրմախ, suwac):

* Աղուն. Աղացուելու համար պատրաստուած սրմախք:

— Աղուն բունել. 1. Աղացուելու համար ցորեն եւն. պատրաստել:
2. Աղացուելու պատրաստուած ցորենը, կամ սրմախքը քուր-
ձերու մէջ լեցնել:

Աղպրփերի. Սպիտակ խաղողի տեսակ մը, որ ամէնէն առաջ կը հա-
տաւննայ:

— Աղսել. Որթատունկի ճիւղերով պատ հիւսել. ն. բ. կ'աղաիմ,
ես, ը, աղտեցի, ցիր, եց, աղտը՝ տեցէք, աղտամ:

Աղօթ. Աղօթք:

Աղօթ ենել. 1. Աղօթել: 2. Գոհ ըլլալ:

- Աղօթկում. Արեւելք:
- Աղօթկումը ներմկիլ. Արշալոյսը բացուելը Աղօթկումը ճերմկերը =
Արշալոյսը բացուելը է:
- Աղօն. նայն:
- Անրոել. Աղիւսի, ամանի շինութեան զանգուածը լաւ մը շաղկել որ-
պէսզի մածուցիկ դառնայ: Կը գործածուի նաեւ ալիւրի թըր-
ջուած զանգուածին կամ խմորին համար:
- Անուկ. յագ. աճկընի: Սրուէքներուն՝ իրանին նա միացած տեղը,
երանք:
- Անուկը ըյնիլ. Աճուկները ցուելը: Աճուկներու մէջ ցաւ առաջ դալ:
Կը կարծուի թէ՛ գործարանային խախտումի մը նաեւանքն
ըլլայ այդ ցաւը:
- Անկնիքն վերցնել. Աճուկներու ցաւը դարմանելու համար կատար-
ուած մարձում: Մարձումը նաեւեւալ կերպով կը կատարուի:
Որովայնին՝ սրուէքներուն նա միացած կէտէն սկսեալ, մտա-
ներու ծայրերով, զգուշութեամբ դէպի վեր կը շփեն: Այս
գործողութիւնը քանի մը անգամներ կը կրկնեն, մինչեւ որ
ցաւը դադրի «Հարսին աճկընին ընկածը, վերցնել տալու
գնաց»: Վերցնելը:
- Աման չաման. Մանր ու խոշոր ամաններ, աման ու ամանի նամանոյ
աւարկաներ, ամենը միասին:
- Ամբնել. ն. բ. Ուստեստեղէնները ամաններու մէջ լեցնել:
- Ամբճնալ. բ. չ. Ամչցայ, ամբչըցայ, ամչցեր, ամբչըցեր: Ամչնալ,
խոյնիլ:
- Ամպակ. 1. Անհամ. 2. Ըմպելի կամ օշարակ որուն շաքարը նուազ
է. 3. Ըմպելի՝ որուն ալքոլը նուազ է. «Ըս գինին ամպակ ջուր
ը» = Այս գինին ջուրի պէս է:
- Ամպրկնալ. Անհամալ. ջուրի պէս ըլլալ:
- Ամպակ ամպակ խօսիլ. Անհամ, անխմաստ խօսքեր խօսիլ:
- Ամպզոլ. Անու միջնորդ, որ սովորականէն աւելի տաք կ'ըլլայ:
Ամպամած միջնորդ:
- Անագայ. Խաղալու յատուկ մեծ վէգ:
- Անքեղ. ի, է, Մոխիրով ծածկուած կրակ:
- Անքեղել. ե. բ. Կ'անթեղիմ, ես, ը, թեղեցի, դեց, անթեղը, թե-
ղեցէք, անթեղած: 1. Կրակը ամփոփելէ յետոյ մոխիրով լաւ
մը ծածկել, որպէսզի երկար առնն չմարի: Կրակը կ'անթե-
ղեն երեկոնները պառկելէ առաջ, կամ ցերեկը երբ քունի մը
ժամու համար կրակի պէտք չեն ունենար: 2. Ծածկել:
- Անքեղ ենել. Անթեղել:
- Անքեղուիլ. կ. ե. չ. բ. Ծածկուելի. ինքզինքը ծածկել:

Անքրփել. 1. Թոնիրին կողերը երբ պահանջուած բարեխառնութիւնը չեն տւենար, եփաւելիք խմորը չփակչիր, կամ փակչելէ քիչ յետոյ, դեռ հաւմ վիճակի մէջ, Թոնիրին յատակը կը թափի կտոր կտոր: Աս է անթփելը: Թոնիրը կ'անթփը = Թոնիրին կողերը խմորը չեն բռներ: 2. Մեռնիլ: Հիւանար անթփելը = Հիւանգը մեռաւ (անարգակամ):

Անլի. 1. Կերակուր՝ որուն աղը նուազ է: 2. Անհամ (խօսք): — Անլին աղին հայիլ. Համտեսել, գիանալու համար թէ կերակուրին աղը աւելի կամ պակաս է:

Անիծ. Ոջիլի սերմ, կամ ձու: Անիծ քափել, անիծ ձգել. Ոջիլներու ձու ամելը:

Անծոս. Աղտոտ մարդ, ոջիտ մարդ:

Անծոսիլ. ք. չ. տեցոյ, ցար, ցաւ, ծոտիր, եցէք, տած. գլուխը կամ մարմնոյն դանազան մասերուն վրայ անիծ գոյանալ:

Անկ. Ամաններու վրայ հաստատուած կամրջակ, որ կը ծառայէ ամանը բռնելու կամ վերցնելու:

Անկան. անկըճի, յոգ. անկըճուի: 1. Ականջ լսելիք: 2. Չահրակին գլուխին ցիցերու մէջ անցուած երկու սակորներ, որոնց մէջ ճաղը անցուած է: 3. Ճըրճըսին անիւին խարխախին տակ դրուած փայտ կամ քուրջի կտոր որ կը ծառայէ՝ ըստ հարկին խարխախը անիւին աւանդքին աւելի մօտեցնելու, անիւլին և խարխախին աւանդքին միջեւ դանուած անջրպետը այնքան մը նեղցնելու որ, բամպակին կորիզը բամպակին հետ միասին չանցնի անկէ: 4. Գետափները կաղմուած ջուրի այն հատուածները, որոնք, դամաքին մէջ, գետնի վեր կ'երկարին գետին զուգահեռակամ սղղութեամբ: Ասիկա գետային ձկնորսութեան յարմարագոյն վայրը կը համարուի, ուր ձուկերը կը հաւաքուին տրածելու համար: Գետախորշ, ծոցիկ:

Անկան կախել. Մտիկ ընել: Ըտոր ըսածներուն անկան մի՛ կախեր՝ = Ատոր ըսածներուն կարեւորութիւն մի՛ տար:

Անկընուին կախել. Տրամիլ, մտածել տրամութեամբ: Ծօ՛, ինչ Բեարամին իշուն պէս անկհուխող կախեր ետ: Ծօ՛, Բեարխմին իշուն պէս ինչ կը մտածես, ինչո՛ւ տրտում ետ:

Անկընի ետել նետել. Չանց ընել, աւաջարկութիւն մը խնդրանք մը » » բողել. լսել, թայց չկատարել:

Անկընթող. Ականջին ստորին մասը, ուր ծնօտը և սրբանոցը իրա-

Անկընոֆ. րու կը միանան:

Անկել. ք. ն. Չարդասկիներու անկ փակցնել:

Անուի. Չորս հինգ սանդխմէթը լայնութեամբ 3-4 միլիմէթր հաս-

տութեամբ փակ, որ գրաստաններու պոչին տակէն կ'անցնի, և,



Անուսի

Քաշիկ

համեաին ետեւի երկու եզերքներուն հետ կը հանգուցուի: Ասոր դերն է՝ չթողուլ որ բուր գրաստին պարանոցին վրայ սահի, երբ ան զաւելարէն իջնէ:

Անուխ. Անանուխ:

Լեռայ անուխ. Վայրի անանուխ, որ մանրիկ և կծուսհամ տերեւներ ունի, հաճելի հոտ մը կը բուրէ: Տերեւները իբրև համեմ կը գործածուին. իսկ ցողուններէն, որոնք հազիւ 50 սմ երկայնութիւն կ'ունենան, աւելներ կը կտային:

Անուխ աւել. Նոյն:

Անփուս. 1. Փայտ՝ որ չի փախր, 2. փայտ որ փառած չէ:

Այրիլ. 1. Մորմոքիլ, 2. ցաւիլ (վէրք), 3. այրիլ:

Այրուկ. Չափէն աւելի տաք ջուր, կերակուր եւն:

Այրուկնալ. Չափէն աւելի տաքնալ:

Այրուկցնել. Չափէն աւելի տաքցնել:

Ալախ. Թաշկինակ:

Աշխիլ. բ. չ. աշխայ, աշխար, աշխու, աշխի՛ր, աշխեցէ՛ք, աշխած: Կերակուրի նեխիլը, հոտիլը:

Աշխուկ. Աշխած, նեխած, հոտած:

Աշմախ. Աշմբխի, յոգ. աշմբխնի: Կիներու, հարաներու քոզ:

Աշֆ. յոգ. Աշուի: 1. Աշք, ակն. 2. յոգ. աշքեր: Բազմակամար կամուրջի մը անցքերէն իւրաքանչիւրը: Ըս կարմուճը տասներկու աշքեր ունի: Այս կամուրջը տասներկու մասնական կամուրջներէ կը բաղկանայ, կամ տասներկու անցքեր ունի: 3. Որթատունկին արմատին քով կամ շուրջը բացուած փոս: Գարնան եղանակին կը բանան այդ փոսերը, որպէսզի անձրեւներու ջուրերը հոն լծանան և երկար ժամանակ հողին խոնաւութիւնը ապահովուի, և թէ արմատին օգտութիւնը դիւրանայ: 4. Կաղասորի մը բաժանուկները: 5. Տան մը

բաժանուհիները: 6. Երկանաքարին ծակը, ուրկէ ցորինը կը հոսի սպտանուկու համար: 7. Չար գօրութիւն, որ մերթ կ'ըսուի հասե շար աչէ: «Ք», կնի'կ, քու վրայ շար աչք կայ, Ասուած (Աստուած) քեզ պէյը (պահէ):

— Աչքը բանալ. 1. Որթատուկին արմատին շուրջը փոս բանալ: 2. Ուշադիր ըլլալ, ճարպիկ ու շրջահայեաց ըլլալ չխաբուելու համար: 3. Խելահաս ըլլալ, շարն ու բարին գիտնալ:

Աչքը ծակ. Ծակաչք մարդ, ազահ, անկուշատ:

Աչքը լոս. Ծնորհաւորութիւն:

Աչքը լուսել. Ծնորհաւորել:

Աչքը լուսի երթալ. Ծնորհաւորութեան երթալ:

Աչքը սեւ ջուր եղնալ. Կուրնալ, սուանց կուրութեան արտաքին նշանի:

Աչքերդ սեւ ջուր եղնալ. Անէծք. աչքէրդ կուրնայ:

Աչքիս լուսին չեմ իսար. Ծառ կը սիրեմ:

Ապայ. սպի, յոգ. սպանի. կապայ, 1. բրդահիւս թանձր և ջուրի անթափանց վերարկու, զոր ձմրան և անձրեւներու եզանալին կը հագնին ցուրտէն ու անձրեւէն պատասարուելու համար: 2. Պատուոյ վերարկու, զոր մօտուար անցեալին մէջ գիւղերու մեծերը կը հագնէին:


Ապրնիկ. Համբարձման սօնի կերակուր, զոր կ'եփեն սոււներէ դուրս, դաշտերը կամ լեռներու կողերու վրայ:

Ապրնիկ ենել. Համբարձման կերակուր պատրաստել:

Ապրոնան. Ապարանջան:

Ապրեուն. Ապրչուն, մետաքս:

Աջիջատ. (Աչիցատ). բժժանք, յուռոյթ, զանազան ձեւով ու գոյններով սւլուններ, որոնք կը կախուին կենդանիներու կամ մանուկներու պարանոցէն, որպէսզի ակնասարութիւններու դէմ պահպանուին:



Աջիջատ

Աջիջ ըլլիլ. (աչից ըլլիլ) Ակնահար ըլլալ:

Առեզ. Հիւսուածքի մը երկայնութեան ձգուած թելերը, հենք:

Առեզֆ. Նոյն:

Առնել. (Առնուլ). 1. Առնել. 2. սկսիլ: բ. ն. կ'առնիմ, ես, ը, առի, իր, առաւ. ըստ ձախտաինեայ գիւղացիներու, առայ, առար, առաւ, առանք, առաք, առան, ա'ա, առէք, առած: Արգելն առաւ. ձինը առեր կուգա՛յ. անձրեւն սկսաւ. ձինը սկսեր է գալ: Ուրիշ պարագաներու մէջ սկսիլ բայը կը գործածուի, խոնարհուելով արդի քերականութեան ցոյց տուած խոնարհումին համան. սկսայ, սկսար, սկսաւ. հրամայականը սկսի'ր, սկսէք. անց. ընդունելութիւնը սկսած, սկսեր կ'ըլլայ:

Առու. Առուի, առուէ, առ ու ուլ: Առու, վտակ, սրուն լայնութիւնը առ առուէն մէկուկէս մէթր կրնայ ըլլալ, իսկ խորութիւնը կէս մէթր:

— Առած. Գեշը անցաւ, առուին մեջ խեղդուեցաւ = Դժուարի գործը յաջողութեամբ կատարեց, բայց գիւրադոյնին մէջ ձախողեցաւ:

Առուի կարոս. Աղցան մը որ թեթեւ կծուութիւն մը ունի, տախտիկն քնարոյս է, և կ'աճի առուներու եզերքները, ջրուտ վայրերը միայն:

Առուոճ. Առուոյս բոյսը, որ իր մատուց լիճակին մէջ իբրև խաշոն կը գործածեն, և կ'ըլլայ համեղ կերակուր մը՝ իւզով ու հաւկիթով աւքցուելէ յետոյ: Իսկ երբ խոշորնայ ծաղկելու շրջանին մէջ, կը քաղեն, կը չորցնեն և կենդանիներուն կը կերցնեն յարգի և քոսի հետ խառնելով: Թարմ լիճակին մէջ եթէ կենդանիները ուտեն, իրենց ստամոքսը կ'ուռի: Այն առն հարկ կ'ըլլայ կենդանին վաղցնել. Տես փռիլ = փրճիլ բառը:

Առուոս-սպուր. Չուարով, խարկուած միսով, և առուոյսով եփուած եղինձ:

Առուոս-չոր. Չորցուած մատուց առուոյս, զոր ձմեռնային եղանակին կը գործածեն, անով կերակուրներ եփելու համար:

Առուոս-սեղ. Առուոյսի արս, որ միշտ ծաւերով ու մացառներով շրջապատուած կ'ըլլայ գիւղերու մերձաւոր սահմաններուն մէջ:

Առուոս-ֆաղ. Առուոսի հունձք:

Առչինեկ. Անդրանիկ, անդրանիկ զաւակ:

Ասխ. (ասղ) = Ասաղ:

Ասքիսիկ. Ասաղ, յոգ, աստըխկըներ:

Ասխընի. (ասղնի) Կիներու պարանոցէն կախուող և մինչև կուրծքը երկարող, արծաթ շղթաներով շինուած զարդեղէն մը:

Ասղընսալ. բ. չ. միադէմ. կ'ասղնատոյ, ասղնատոց: Մարմնոյն անդամներէն մին թմրելէն յետոյ, խաղտուք մը կ'ունենայ. առ է ասղնատը, փուշ փուշ ըլլալ, ասեղ ասեղ ըլլալ:

Ասղընսուֆ. Մարմնոյն մէջ ասեղներու շուլուուքի նման ցուեր կամ խաղտուքներ:

Ասուած. Ասածու, Ասածով, ասածմէ: Աստուած:

Աբախ արախի. Օղի:

Աբախ հանել. Օղի պատրաստել:


Աբարիֆ. Կաշիէ հաստ փոկ, որով լուծը՝ ալօրին ձողին հետ կը կապուի:

* Արդար եղ. Կարագը հալելով աղէն կը գառեն. աղէն զատուած այս կարագն է որ արդար եղ կ'անուանուի: Աս է որ կերակուրներու համար կը գործածուի, մինչ աղուած կարագը անգործածելի է:

Արգբուկ. Արգար (փաղաքչական կամ նուագական բառ):

Արեղ. Սայլին երկու գերանները, որոնց երկու ծայրերը իրարու

Արեղի. կը միանան եւանկեան մը երկու կողմերուն նման, որոնց



Արեղի

վրայ կը հաստատուին՝ գլանները, տունը, ցիցերը և տոտաները:

Արեղի. Լեռներու այն կողերը, որոնք զէպի արեւելք կը հային, և որուան մեծ մասը արեւին տակ են:

Արեղդեմ. Նոյն:

Արիգակ. Արեգակ:

Արեւ. 1. Արեւ. 2. կեանքի օրեր:

Արեւել. Արեւին տակ փակել ցամքեցնելու, չորցնելու համար:
— Արեւը ձիգի. Օրերը ձեզի, մխիթարական խօսք, որ կ'ուղղուի սգաւորներու:

Արեւելաձաղիկ. Արեւաձաղիկ:

Արիգուկ. Արեւ:

Արդաման. Նուէր:

Արդայ. արդի, արդանի: 1. Ակուայ 2. Սայլին արեղներուն վրա հաստատուած երկու զոյգ ցիցեր, որոնց միջեւ կը թաւալի գլաններուն նեար (աւանցք):

— Արդայ արդի վրայ են. Շատ չքաւոր են, շատ տղքատ են:

Արդայ արդի վրայ դնել. Շատ խնայողութեամբ ապրիլ, նեղ ապրիլ, գրկանքներով ապրիլ:

Արմրկուկ. Գուլպայի զարդ մը, որ
բեկեայ գիծէ մը կը բաղկա-
նայ:



Արմրկուկ

Աւել. Աւել:


Աւել կապել. Աւել շինել:

Աւիլել. Աւլել. կ'աւիլիմ, ես, ր. կ'աւիլինք, լէք, աւիլեցի, ցիւր,
եց: Բոլոր ժամանակներուն մէջ ալ «ի» տառը կը պահուի:

Աւիլաղբ. 1. Աւլուած, հաւաքուած աղբ. 2. Աղբանոց:

Աւիլաղբը տալ. 1. Աղբանոց նետել բան մը: 2. Անպէտ, անկարե-
» ենել. Լոր համարել մէկը:

Աւիլուկ. Խոշոր տերեւներով, մածուցիկ աւիշով, ինքնաբոյս բան-
ջարեղէն մը, որ իբրեւ խաշօն կը գործածուի: Առատօրէն
կ'աճի աղբանոցներու շուրջը:



Աւիլուկ

Ափսօն. Աղօթք, զոր կընեն, հմայիչներ կ'ընեն սողուններու խայ-
թուածքները և ուրիշ վէրքեր բուժելու համար. 2. հմայելով
սողունները թմրեցնել:

Ափսօնել. ն. բ. եց, նը' նեցէք, սօնած, սօներ. աղթելով թմրե-
ցընել. 2. բուժել:

Ափսօն ենել. նոյն:

Բ.

Բ. Բեն, սոյն բաղաձայն տառը, Բալուի այբուբենին մէջ Փ էն նաւրբ, իսկ Պ էն թանձր հնչիւն մը ունի։ Ամէն բալուցի թէ կը լսէ, և թէ կ'արտասրէ, որոշ զանազանութեամբ, սոյն երեք տառերուն հնչական արժէքները։

Բաբ. 1. Փոքր ու կլոր խճաքար։ 2. Խաղ մը, զոր աղջիկները միայն կը խաղան։

Բաբ խաղալ. Խաղ մը, զոր աղջիկները կը խաղան կլոր քարերով։

Բաբար. Խեղճուկրակ մարդ. թափթփուն, անճարակ մարդ։

Բաղիկ. Բաղի նմանութեամբ ստիտր մը, զոր մանուկները կը գտնուին։



Բաղիկ

Ճածեն իբրև խաղալիկ։

Բազուկ. 1. Որթատունկի և ուրիշ սողացող տունկերու երկայն ճիւղեր։ 2. Բանջարեղէն մը։

— Տակի բազուկ. Բանջարեղէն մը։

Բալաբոսիլ. բ. չ. միադէմ մորթին ուռիլը։ Այբուբենով մորթին ներքեւ ջուր կը հաւաքուի, և մորթը կ'ուռի, այս ուռիլը բալաբոսիլ կ'անուանեն։

Բալաբոս բալաբոսիկ. Մորթի ուռեցք։

Բալախ. Խոտ մը զոր կենդանիները կ'ուտեն, փոքր ու փափուկ տերեւներ ունի:

Բալաւար. Դրան վերին սեմը. բարաւոր ալի. Բանալի. յոգ. բալլիստան: Բալլիֆ.

Բալլի



Բամպկիլ. Բորբոսիլ. հացին երեսը, կամ մէջը սպիտակ ու կանաչ բամպակի պէս բորբոս գոյանալ:

Բամպոս. Ծաղիկ մը, որ ձիւնածաղի-Բամպոս. կէն յետոյ կը բուսնի, և ուտարմատ է: Ծաղիկին ծայրերը դէպի դուրս դարձած գարրներ կը ձեւացնեն: Սպիտակ է, դեղնագոյն առէջներով: Իսկ ծաղիկներուն ծայրերուն մօտ դեղին կամ կապոյտ գոյներու մէկական շերտ ունի:



Բալախ

Բան. 1. Իրերու տեղ գործածուող անարոշ անտէն մը. 2. գործ. ըզբաղում:

Բանալ. 1. Բանալ. 2. տարածել. Չարսաֆը բացէք օր թութ թօթվինք մէջը:

Խմոր բանալ. Խմորը սեղանի վրայ բարակ նկանակներու վերածել եփելէ առաջ:

Բանիլ. ք. չ. բանայ, ար, աւ, բանի'ր, բանէ'ք, բանած: 1. Աշխատիլ, գործել: 2. Գէշ ազգել. ընոր աչքը բանու ինծի—անոր աչքը գէշ ազգեց ինծի:

Բան բանիլ. Գործով պարտապիլ. — հայրդ ո՞ւր է, ծօ'. — բան կը բանի—կ'աշխատի, գործով կը պարտապի:

Բանը գիտե. Գործին յարմարութիւնը ինչպէս որ բերէ:

Բանրդ գնա'. Գործիդ նայիր, գործիդ գնայ, իմ գործիս մի խառնուիր:

— Բանիդ քե օր ձեռք կաւսայ. Եթէ գործիդ կուգայ:

Բան գործ ենել իրեն. Ոգի ի բռին բանի մը հետամուտ ըլլալ:

Բանը բանէն տնցաւ. Ուշ հասաւ, յապաղեցաւ:

Բանեց ել. 1. Աշխատայնել. 2. գործել առաջ:

Բանթով. Աշխատութեան դադար:

- Բանթող ենել. Աշխատութիւնը դադարեցնել. ժամանակաւոր դադար:
 Բաննար. Բանջար:
 Բաներուոր. Բանջար քաղելու գնացողներ:
 Բամպառակ. Չուարձախօս, կաստակախօս մարդ:
 անջ. Մգլածութիւն:
 անջիլ. Մգլիլ:
 Բանջոս. Մգլած:
 Բանջոսիլ. Մգլիլ, բորբոսիլ:
 Բանջ կապել. Բորբոսիլ:
 Բանս. 1. Բանա. 2. կարժերու կապոց. ընդհանրապէս չորս կարժը
 մէկ կապոց կամ բանա մը կ'ըլլայ. 3. Չայրին գլանը
 Բառ. Գլխու մազ. կիներու գլխուն մազերը:
 Բառնալ. Բեռնել: Կը բառնամ, բառցայ, բառցի՛ր, բառցէք, բառ-
 ցած, բառցեր:
 Բարդ. Չափ մը: Երեսնեակ. բարդ մը հաւկիթ = 30 հատ հաւկիթ.
 բարդ մը խոտ = երեսուն փիլայ = (խուրձ) խոտ, բարդ մը տեւ,
 30 խուրձ կաղնի փայտի տերեւ եւն:
 Բարդել. Դիզել. իրարու վրայ կուտակել:
 Բարկ. Սաստիկ. կը գործածուի՝ կրակի, թթուներու համար: Քա-
 ցախը բարկ ը. թանիրը բարկ ը = սաստիկ տաք է. կը գոր-
 ծածուի նաեւ ալքոլաւոր հեղուկներու համար. օղին բարկ ը:
 Բարկանալ. Չայրանալ:
 Բարակ մաղել. 1. Նաղ ընել. 2. մանրակրկիտ կերպով հետեւիլ.
 « մանել. բծախնդրութեամբ հետեւիլ բանի մը. 3. հիւանդի
 երեւոյթ ունենալ:
 Բարկրնալ. 1. Բարակնալ. 2. նրբանալ, բանազբօս ձեւեր ընել:
 Բարկրցոս. Բարկացոս:
 Բարկենթան. Բարկենթանի. բարեկենդան:
 Բարձ. 1. Բարձ: 2. Սայլին երկու ատամներուն անջրպետին՝ ուռերը
 Բարս. Բարձր:
 Բարսհայել. Բարձրահայեաց. յատկապէս կը գործածուի Բարձրա-
 հայեաց Ս. Սատուածածնի վանքին համար՝ իր բարձր դիրքին
 պատճառաւ: Բարահայերայ վանքը, բարսհայել ուխտի գցին:
 Բարձրահայեաց վանքը, բարձրահայեաց ուխտի գացին:
 Բարսրնալ. 1. Բարձրանալ. 2. հարսրտանալ: Շատ մի՛ բարսրնար
 = շատ մի՛ հպարտանար:
 Բարսրցրնել. 1. Բարձրացնել, վեր հանել. 2. գովել, փառաւորել:
 Բարսէն երթալ. Հարսրտանալ. Ինքզինքը գովել:
 Բգելս. Յայր, գէր, գիրուկ:
 Բայգ. Ի. քեր: Բայաստան. չարտախին առջեւները տարածուող

տանիք, ուր կը գիշերեն՝ ամառնային եղանակին գիշերները :
 Բերան . բերնի . յոգ . բերոււընի . 1. Բերան : 2. Գանակին սուր ե-
 զերքը : 3. Փողի խողովակի առաջածայրը : 4. Երգ , եղա-
 նակ . բերան մը դու երգը : 5. Անգամ . առջի բերան , առա-
 ջին անգամ , նախ : 6. Գետին , առուին վերջացած ծայրը :
 7. Եզերք : 8. Գրչածայրին ծայրը = խալմին բերանը = գրիչին
 ծայրը : Խոփին բերանը , ուրազին բերանը , դուրին բերանը ,
 այսպէս ունի բազմանիշ գործածութիւններ :

Բերնի . Բերանը անցնելիք գայլ , փայտէ շրջանակ :
 Բզել . ն . բ . կը բզիմ , բզեցի , բզը՝ բզեցէք , բզած , բզեր . Պատ-
 աել , երկու կտոր ընել , լաթ , կերպաս , թուղթ :
 Բզիլ . չ . բ . Պատուիլ :
 Բզիկ բզիկ ենել . Պատու սրտու ընել :



Բզուզ

Բզուզ . Փոքրիկ աման , կարասի ձևով :
 Բերնիար . Բերնի հիւանդութիւն :
 Բերնցաւ . նոյն :
 Բերնփոխ . Փոփոխութիւն՝ կերտկուրի :
 Բերնփոխ ենել . Փոխել՝ ուտելիքները :
 Բիբիկ . 1. Եղէգէ շինուած նուրբ լեզուակ , զոր կ'անցնեն սրտիտ-
 զին (զուռնայ) ծայրը և բերան ամենլով կը փչեն , շունչին
 ազդեցութեան տակ լեզուակը կը թրթուայ և երածչտակում
 ձայն կը հանէ : 2. Աչքին բիբը :
 Բիբիկը սագել . Նուագելու , երգելու սկսիլ :
 Բիթ . բժի . Աչքին կոպերուն եզերքները կարծրացած շարու :
 Բժոսիլ . բ . չ . միտղէմ . Աչքերուն կարծրացած շարուով ծածկուիլը :

Բին. նոյն. Աչքի աղտոտութիւնս
 Բնօթիլ. միտղէմ բոյ: Կոպերուն բիճերով ծածկուելը:
 Բըլըխալ.
 Բըլըխ բըլըխ Եփիլ. (Եռայ, սաստիկ եռայ
 Բըխբըխիկ. Խմորեղէն մը: Իւզով եփուած խմորեղէն մը, առանց
 շաքարի:

Բլուրդ. 1. Կաղնի ծառին պտուղը որ գլանաձև է:
 Եթէ հում ուտէ մէկը բերանը կը տապի,
 բայց քաղցր համ մը կ'ուշենայ եթէ խո-
 բովուի Թիչ անգամ միայն մանուկներ կը
 խորովեն ու կ'ուտեն:



Բլուրդ

Բղուղ. Փոքրիկ կարաս, շուրջ չորս լիար պարունակութեամբ:
 Բղող. նոյն. Այս վերջինը առաւելապէս Խորբերդի մերձակից գիւ-
 շերը կը գործածեն: Իսկ առաջինը՝ կը գործածեն բոլոր վերի
 (Արածանիի աջափնեայ) գիւղերը:

Բղիկ. նոյն:

Բեսիկ. Փոքր այտուցներ, որոնց ներքեւ ջուր հաւաքուած կ'ըլլայ:

Բեսիլ. Ուռիլ:

Բուլոս. Բշտիկ:

Բնաղուն. Մէկ տարուան բուելու շափ, աշնան եղանակին պատ-

Բնաղօն. բաստուած ալիւր:

Բոզկեկ. Փոքր, բազմածղի, նուրբ, մթազոյն ծղօաներով՝ երբ չոր
 է, շատ մանր ծաղիկներով բոյս մը, որ առատօրէն կ'ածի խո-
 զաններու և կորդերու մէջ: Չափազանց դիւրավատ է, բա-
 ւական է վառուած լուցկի մը ձգել աշնան եղանակին անոնց
 մէջ, մէկ վայրկենի մէջ բոցերը կը ծաւալին ամբողջ դաշտին
 երեսը:



Բոզկեկ

Առած. — Բողկեկի պէս՝ կը բորնկի ու կ'եջնայ: Շուտ կը բարկա-
նայ և շուտ ալ կը համդարախ:

Բոք. Մէկ ծայրը՝ ուղիղ անկիւն մը ձեւացնելու շատ ծաած բեւեռ
մը, որ արօրին առտամին վրայ կը զարնուի, և ծաած մասը
բժամատախ պէս կ'իյնայ խտին եզերքին վրայ: Ասոր պաշ-
տօնն է շխուռը որ խտիը շարժի:

Բոքմաս. Բժամատա:

Բոլոր. 1. Ամէնը. 2. շուրջը 3. բոլորտիքը:

Բոլորսանի. (Շուրջը:

Բոլորսի. (

Բոլոր դառնալ. Շուրջը դառնալ:

Բոլորել. Շրջապատել, պաշարել: Ամէն կողմէ զիս բոլորեցին =
շրջապատեցին:

Բոլրիլ. բ. չ. 1. Բռնկիլ. 2. դրդառելի, յանկարծ բարկանալ:

Բոլրուիլ. 1. Շրջապատուիլ. 2. շրջապատել. ամէն կողմս բոլրուե-
ցան, զիս շրջապատեցին, ներք. բայի խմատալ:

Բոլրել. Շրջապատել ամէն կողմէն:

Բոլորննիկ դառնալ. Ինք իր վրայ դառնալ մէկ ոտքի վրայ:

Բոն. Բոյն:

Բոցայ. 1. Գնչու. Թափառական ցեղ մը, որոնք ամառն ի բուն
գիւղէ գիւղ, ծառատաններու մէջ կ'օթեւանին շաբաթներով:
Այրերը ծուրօրէն կը նատին ու միայն մտղ շինելով կը պա-
րապին, իսկ կիները մէկ մէկ երկայն գաւազան ձեռքերնին,
գիւղերը կը թափառին փարայ ընելու (մուրալ), մտղ ծա-
խելու. այս կերպով կ'ապրին, և կ'ապրեցնեն իրենց այրերն
ու զաւակները, շուներն ու էշերը, որոնք իրենց անբաժան
ընկերները կ'ըլլան, ուր որ ալ երթան անոնք: 2. Պաւացու,
կանչուըռտող, համարձակ, խօսք չհասկցող կին:

Առած. — Բոցան քաղաւորին կնիկը եղեր, անոր պարեգիկն ծառին
նայելով՝ «Ըս ի՛նչ աղկեկ մաղ կ'ըլլի», բսե բ: Կը նշանակէ
թէ՝ բնութիւնը չի փոխուի, գիրքը որքան ալ փոխուի:

Բոր. Եւք, քոս:

Բորս. 1. Եւքոտ, աղտոտ. 2. քոսոտ:

Բորսիլ. 1. Եւքոտիլ. 2. քոսոտիլ:

Բորբոս. Երբ հացը երկար ստեն մնայ կը բամպկի, գոյացող բամ-
պակի պէս սպիտակ և կանաչ նիւթը բորբոս կ'անուանեն:

Բորբոսիլ. Բամպկիլ, Նեխիլ:

Բորբոսոսիլ. 1. Զայրանալ, բարկանալ. 2. բոցավառիլ:

Բորբոսիլ. 1. Զայրանալ, բարկանալ. 2. բոցավառիլ:

Բուքակ. Բուքիկի, բուքիկնի: Ջահրակին անիւին առանցքին ծայրը հաստատուած, սւղղահայեաց դիրքով փայտ մը, որուն մէջ կ'անցուի մանիչը:

Բուքել. ն. բ. եցի, ցիր, եց, թը', բուքեցէք, բուքած, բուքեր:

Բուքման. Բուքում, կարում:

Բուքուիլ. կ. բ. սուս, սեր, սում, սիր, Ծօտուիլ, կարուիլ:

Բունբնակ. 1. Մտակեր կենդանիներու հաստակելով սաղին անդին ուտելիք փնտռելը. 2. թախումիլ սաղին անդին թաքուն նպատակներով, բան մը փնտռել կը բունբնում, բունբնացի, բունբնա՛, բունբնացէք, բունբնացած, ցեր:

Բուն. բճի, բճեր: Կարճ պորանոցով գուլպայ:

Բունկալ. բունկըլի, յոգ. բունկըլնի: Ածան հաւերու բոյնը թողում մէկ կամ երկու հաւկիթ, որուն վրայ հաւը կը նստի ածելու համար. եթէ բունկալ չդրուի, հաւը կը մոլորի և ուրիշ տեղ կ'ածէ: Կը պատահի որ երկու հաւ միասին բոյն կը մանեն ածելու համար. երկուքին ալ մէկահամն բունկալ անհրաժեշտ է:



Բուն

Բուճ. Մանուկին քալել սկսելու փորձը:

Բուճ երթալ. (Մանուկին փորի վրայ սողալը:
» ըյնիլ. (

Բուրդը բամպկի փոխել. Սաստիկ յանդիմանութիւններու տակ մէկ կը ընկճել: Քեզ ընանկ գղեց օր, բուրդը բամպկի փոխեց= Խերդ անիծեց:

Բուրիկ. Շատ մանր, և շատ աւողջ աչքերու միայն տեսանելի ոջիլ որ մորթին կը փակչի և դժուարու կը զանազանուի անկէ:

Բուրիկ ըյնիլ. Ոջլտաիլ, մանր ոջիլ, բուրիկ գոյանալ:

Բուն. Ա.փ:

Բուն մի. Ա.փ մը, քիչ մը:

Բոինչ. Լտուտ, պտուղ մը շատ փոքր ու կլոր:

Բորնչի. (Բոինչի ծառ:

Բորնչենի. (

Բոնակ. Մաճին վրայ հաստատուած, հորիզոնական դիրքով փայտ մը, զոր լծվարը կը բռնէ՝ արօրին ուղղութիւն տալու համար:

Բոնել. 1. Պատուաստին յաջողիլը. 2. ծառի մը պտուղ տալը. 3. սաղմնաւորիլը. 4. տոկալ ինքզինք բռնել չփղձկելու համար. 5. մակարդումը յաջող անցնել. 6. արմատ բռնել տունկի մը. 7. փակչիլ, միանալ:

Բրդել. Մանրել հաց մամնաւորապէս

Բրդիկ. Գուրպոյի գարդ մը որ սաւր անկիւնէ մը և սնկեան մէջ դրուած փոքրիկ եւանկիւն, մը կը բաղկանայ :



Բրդիկ

Բրդուն. Հացի կտորներ:

Բրդոս. Մաշտ, սղուամազով ծածկուած:

Բրդոսիլ. Աղուամազով ծածկուիլ:

Բրդոն. Պատառ՝ ուակիքի:

Բեկի. Բեւեկնիլ:

Փ.

Փ. Սոյն բաղաձայնը գեւմ կ'անուանեն, և կը հնչեն «Ք» էն նուրբ խակ «կ» էն թանձր:

Փաբ. Սոււրժիլ. բանջար մը:

Փաբոս. Չար ոգի, որ քնանալու ատեն մարդուն վրայ կը նստի և չի թողուր որ շունչ առնէ. յոգ. գաբոսնի, գաբոսներ:

Փագայ. (Հաւկիթ. մանկական բառ:

Փագակ. (

Փագացնել. Փարգնձել. չ. բ. ցուցի, ցուց, ցուր, ցուցէ.ք, ցուցած, ցուցեր:

Փագրպել. կարքուին երգելը:

Փագ. Փշուտ, հովանոցածեւ, խիտ ճիւղերով և խժուտ թուփ մը, որուն բունը կռամեայ տունիկի մը հաստաթիւնն ունի, մինչ բարձրութիւնը հաղիւ կէս մէթր կ'ըլլայ: Ասիկա իբրեւ վառելանիւթ կը գործածուին Առատօրէն խէժ կ'արտադրէ: Ասիկա կը հաւաքեն ու կը վառեն մեծ քանակութեամբ:

Իւզոտ ճիւղերը կը ծեծեն, կը մանրեն և կենդանիներու ալ կը կերցնեն, յարգի ու խոտի հետ խառնելով:

Փագպե. Բնական մեղր, որ կը գոյանայ կապնի ծառին տերեւներուն վրայ. կանանչ գոյն մը ունի:

Փալ. 1. Փայլ, գիշակեր շնազգի կենդանին: 2. Քթի սղատու-թիւն: 3. Անկանոն գալ բայը. կուգամ, գցի, գցիր, գնաց, գցինք, գցիք, գցին, գնա՛, գցէ՛ք, գցած կամ գցել: 4. ն. ընդ. եկող:

Փալբոն. Փայլի բոյն:

Քնթի գալ. ժրտա մարդ:

Փալխրեւել. 1. Միւր խաչել, թերխաչ եփել. 2. ծեծել, տատիկ ծեծել:

Փալխրեիլ. Եփիլ, թերխաչ ըլլալ:

Փանկաս. Փանգոտ:

» երթալ. Փանգոտելու երթալ:

Փանկսիլ. կը գանկտիմ, գանկտայ, գանկտար, տաւ, գանկտի՛ր, գանկտէ՛ք, տած, տեր. գանգոտիլ:


Քան. 1. Ընկոյզի, նուշի նման պատեղներու միջուկ: 2. Փուշ մ,



Քան

Փշուա խոտ մը, զոր էշերը կ'ուտան: Կտան: Բարզրնեղ. Հաւերու կարկաչելը:

Գափանի. Գափընքի. 1. տանիք աւաջնորդող սանդուխին գլուխը շինուած ծածք, որ դուստլ մը կը փակուի, ըստ հարկին: 2. Տանիքին վրայ լուսամուտ, ծածքով:



Գափանք

Պերան. գերնի. Աւնուաղն քսան սանդխմէթը տրամագծով ձող կամ ճիւղերէն մաքրուած ծոռ, որ տան մը երկու հանդիպակաց պատերուն վրայ կը զետեղուի: Ասոր վրայ կը շարուին, իրարմէ 20-30 սանդխմէթը անջրպետով կցակները կամ դարձիկները, խոչաձեւ, տան ծածքը կողմելու համար: Կցակներուն վրայ կը շարուին մարդակները, մարդակներուն վրայ կը շեցուի փթրունքը, և փթրունքին վրայ ալ հողը:

Պենկեզնալ. (Շատ աղաչել, շատ խնդրել, պողտաթիլ

Պերփեղ. ն. բ. փեցի, ցեր, եց. գերփը, փեցէք, փած, փեր. կողոպտել, տւարի տալ:

Պերփրոսիլ. Աւար ուտել. զեզխօրէն ուտել. ն. բ. շտակցայ, շտալի, շտամ, շտեր:

Պերքնու. Մեծ մանգաղ:

Պզել. 1. Խածնելով ստեւները, մաղերը փրցնել. շուներու համար կը գործածուի. 2. բուրգը կակուղցնել սանտերքով. 3. ծանր կերպով յանդիմանել:

Պզուիլ. փոխդ. բայ. իրարու հետ կուտիլ. շուներու համար կը կը գործածուի:

- Պզուրսիլ. Թրորու հետ կուսիլ, կը գործածուի շուշերու համար. 2. կուսիլ՝ մարդոց համար նախատական խմուստով:
- Պզուրսուխ. Կախ, շուշերու:
- Պրդրու. ((գղըս) Չոր, չոր հոց:
- Պրդրուիկ. (
- Պրդրուցնել. Չոր հոց ուտելու ատեն գղը՛ս գղը՛ս ձայն հանել:
- Պրմրոսալ. բ. չ. շուշերու սպառնական մարտաք հանելը:
- Պրմրոսուխ. Ծան մարտաք:
- Պրմպուխ. Կուսիլ:
- Պրմպուխել. բ. ն. պուքտեցի, տեցի, եց, աը՛, տեցէք, սոս, տեր. կուսիլ, կուսիով ձեծել:
- Պրննիկ. Պլխու շարժում (մանուկներու):
- Պրննիկ ենել. Պլուխը պատուակի պէս աջէն ձախ, և ձախէն աջ արագ արագ հարկել, (մանուկներու համար կը գործածուի): «Գնճիկ մի էրը՛, ալս՛ս», կ'ըսեն:
- Պրնչխրլեզ. Բոյս մը ուսարմատ: Արմատը քաղցր է. մանուկներ կ'ուտան զայն:
- Պրնսրլել. ն. բ. գլորել, եցի, եց, լը՛, եցէք, սոս, եր:
- Պրնսրլ գրնսրլ քալել. Պլորուելով քալել, կը գործածուի երբեմն յոյր մանուկներու և կարճահասակ գիրուկ մարդերու դնոցքը խնայելու համար:
- Պրնսրլուիլ. բ. չ. և կ. յ. Պլորիլ, գլորուիլ. 2. քալել:
- Պրոդալ. բ. չ. ացի, ցեր, աց, ա՛, ցէք, ցոս, ցեր: Ստամոքսին կողերուն կողորդէն դուրս ելնելու ատեն գրուգ գրուգ ձայն հանելը:
- Պրոդուկ. Պրոդալը:
- Պրոդուկը գալ. Պրոդալու վիճակին մէջ դանուիլ:
- Պինճ. Համեմատոր ընդդէն, զոր կը գործածեն կերակուրներու ապրցուին հետ խառնելով:
- Պինուկ. Տեսակ մը սեւ խալող որմէ գինի կը սրտարատուի:
- Պիբ. 1. Տու. 2. նամակ:
- Պլան. Սայլի սնիլ:
- Պլգրլիկ. Չուրի սափոր, որուն պարանոցը մալի պէս է և շուրը այդ մալին ծակերէն անցնելու ատեն գրլգրլ ձայն կը հանէ:
- Պլել. Պլորել:
- Պլիկ. 1. Փոքրիկ գլան: 2. Թել փաթակու գլան (մտփառայ): 3. Տես Տիկ:



Պլիկ

Գլխաւոր. Լ.Ք.ուսին. կիսերը կը գործածեն. փոխանակ՝ էրիկս, է-
րիկդ բակու, գլխաւորս, գլխաւորդ կ'ըսեն:

Գլխել. Կատարել. աւարտել:

Գլխէ գլոխ Ծայրէ ծայր:

Գլխէ հանել. Մոլորեցնել, յոռի ընթացքներու մէջ ձգել:

Գլխըծեծ. Այլազեններու աղօթելը, երկրպագութիւն, համազ,
» ենել. երկրպագել, աղօթել (համազ ընել):

Գլխըկեր. Զարաշուք մարդ, ազխասեր մարդ, որուն երեսէն կամ
չար ազգեցութեան տակ մարդ կը մեռնի:

Էրաւ չերաւ, ախր գլոխը կերաւ: Այնքան վիշտ ու նեղու-
թիւն պատճառեց որ մարդը չգիմանայով անոնց, մեռաւ:

Գլխը.ե. Սայլին գլուխը բարձր բռնելու համար, անոր տակ դրուած
մայթ, ցուպ:

Գլխըցաւ. 1. Գլուխի ցաւ. 2. ձանձրոյթ պատճառող բան:

Գլոխ. գլխու, գլխէ. 1. գլուխ. 2. կատար, գագաթ. 3. աւար-
կայի մը, շինուածքի մը, գործիքի մը ծայրը, աւարտ: Սայ-
լին գլոխը, լերան գլոխը, գեղին գլոխը, կ'ըսեն: 4. Իւրա-
քանչիւր, անձնիւր: Անձ գլոխ, մարդ գլոխ, տան գլոխ:

Գլոխդ ու կաւափրդ ուսր. Անէծք, հայհոյութիւն—սասկի՛տ:

Գլոխ հան լ. Գլխել, աւարտել, յաջողցնել, յաջողութեամբ վեր-
ջացնել գործ մը:

Գլոխը ուսել. Մեռցնել, առանց սպաննելու, այլ վիշտ ու նեղու-
թիւն պատճառելով:

Գղթոր. Կազմիին վրայ գոյացող, կլոր և վրան ելունդներ ունեցող,
առանց միջուկի փայտացած ընկոյզ, որ մէկ կողմին վրայ
ընհանրապէս փոքրիկ ծակ մը կ'ունենայ: Ասիկա աղաղ կը
պարունակէ, և կը գործածուի, փոշիացուելով, խաղախորդու-
թեան մէջ:

Գնկերուկ. Խաղ մը, որուն մէջ մէկը կը գձկի, և ուրիշներ վա-
րէն կը ցատկեն մէկ կողմէն միւսը: Այն որ չկրնայ ցատկել,
ինք պիտի գձկի և միւսները իր վրայէն պիտի ցատկեն: Կայ
այս խաղին ուրիշ մէկ տեսակն ալ: Գնկողը՝ որոշ հեռաւո-
րութեան մը վրայ կը կենայ, բոլոր ցատկողները՝ այդ հեռա-
ւորութիւնը մէկ ոտուամով անցնելէ յետոյ պիտի ցատկեն
նաեւ գնկողին ալ վրայէն: Այս հեռաւորութիւնը, սակայն շըր-
ջանի սկիզբը, խաղացողներու առաջին ցատկողը կ'աւելցնէ:
Այն որ չկարենայ ցատկել, պիտի գձկի, և խաղը կը վեր-
սկսի:

Գնկիլ. բ. չ. կայ, կար, կաւ, կի՛ր, կէ՛ք, կած, կեր. ծռիլ՝ Երկու
ձեռքերը ծռնկերուն դնելով ծռիլ, այնպէս որ իրանը ստո-

բին անդամներուն, սրունքներուն հետ ուղիղ անկիւն մը կապմէ :

Գոլ. 1. ամ. ջերմ, գաղջ. գոլ ջուր—գաղջ ջուր. 2. գոյ. ջերմութիւն. 3. շոգի :

Գոն. Գոյն :

Գոն սալ գոն առնել. 1. Սարսափէն շիկնիլ. 2. ամօթէն գոյնը նետել :

Գոն քափ ըլլիլ. (

Գոն քրփիլ.) Գունաթափ ըլլալ, (կերպաս եւն) :

Գոնք նետել. (

Գոս. Այլադեմներու գերեզման :

Գոսալ. Որոտայ, (երկինքի) :

Գոսել. ն. բ. եցի, իր, եց, սը', սեցէ'ք, սած, եր. Թողել այլադեմ ննջեցեալ մը :

Գոսգուսլ. բ. չ. միագէմ. սրտալ (ամպերու) :

Գոսգրուսկ. 1. Պատենակիր փոքրիկ ճճի մը, սրուն սեւ սրտեանին վրայ կարմիր բիծեր կան : Ասիկա, կ'ըսեն, երբ ամպերը գոռան, այն ստեն միայն երեւան կ'երնէ : 2. Ամպերու սրտալ :

Գոսգրոսուք. Նայն :

Գոսելիս. Պոչոր մարտիս :

Գոսսն. գոսճի, գոսճէ, յոգ. գոսճընի, գոսճընու : Կենդանիներու քակորէն շինուած, հասեալ կոնի ձեւով կամ գոյլի նման սման մը, սրուն ներքին երեսը կաւով ծեփուած կ'ըլլայ ընդհանրապէս : Ասիկա կը գործածուի՝ ազբը կամ մոխիրը փոշեփողոցը փոխադրելու համար : Ասոր մէջ կը պահեն նաեւ թաղող ձմեռային եղանակին համար :


— Գոսոն բերան. Լայն բերան, մեծ բերան մարդ, տղայ :

Գոս. 1. Երկակենցալ կենդանին 2.

Փականք՝ իր բոլոր մասերով :

40-50 սանդիմէթր երկայնութեամբ և 30 սանդիմէթր լայնութեամբ կոճղի մը կէսը, սրուն աստիակցեալ երեսին լայնութեան վրայ 10 սանդիմէթր լայնութեամբ և 5 սանդիմէթր խորութեամբ ուղղանկիւն փոս մը բացուած է, այս փոսին մէջ կը սահի եւ տառջ ըստ հարկին, սողնակը :

Նայն փոսին վրայ



Դրան գորտ

ուղղաձիգ կերպով կան 2-3 փոքր փոսիկներ, որոնց մէջ կը գտնուեն լիտիկները (լեզուակներ): Ասանք դիւրաշարժ են և ըստ հարկին կ'իջնան՝ սողնակին վրայ բացուած աստամնածեւ փոսերու մէջ, և չեն թողուր որ սողնակը բացուելու համար, դէպի ետ շարժի: Սողնակէն քիչ վեր ու անոր զուգահեռա- կան դիրքով կայ բանալիին յատուկ անցքը: Գորտը կը գամուի, խոշոր բեւեռներով, դրան ետեւը ճիշդ անոր եզեր- քի՞ վրայ սողնածակին դէմ:

Գործ. 1. Աստայնանկուծիւն: 2. Աշխատանք:

Գործել. (կտաւ հիւսել:

Գործ ենել.

Գործը. Գանակի շեղքի նման փայտեայ սեպ, որ արօրին ձողին ծայրը կ'անցուի: Փոկը ասոր տակէն անցնելով ձողը լուծին հետ կը միացնէ:

Գործը. Կանանչ գոյնով և տառներու եզերքները գանուող շատ երկայն, բամպակի նման մամուռ:

Գոգ. 1. Ած. գոցուած: 2. Մեծ դերան, որ իբրեւ փականք կը գործածուի: Ասիկա դրան ետեւը կ'երկարեն, երկու ծայրերը սրտերուն մէջ հաստատելով. այնպէս որ եթէ գողերը կեղծ բանալիներով (մազէ բալլի) յաջողին սողնակը բանալ, դարձ- եալ դուռը բանալ անկարելի կ'ըլլայ: 3. մուծ գոյն:

Գոցել. բ. ն. 1. Գուռը բանալիով փակել: 2. Ընդհատել, դադարե- ցրնել՝ խօսք, սրտամուծիւն ևւն: Լերի՛ք, գոցը՛, սալը քո- րոտ է: Ա՛լ մի խօսիր, ընդհատէ, որովհետև հոս խնդիրը հասկցող ուրիշ մարդ կայ:

Գտակ. գտակի, գտակընի: 1. Տղաքներու, պատանիներու յատուկ ս- սեղնագործուած ծակտակէն գլխանոց, որ դոյլի ձեւ ունի: 2. Սիւնագլուխ, խոյակ:

— Պսիկ գտակ. Գտակ՝ որուն գագաթին վրայ գանուող քառակուսի փոքրիկ ծակեր, սեւ թեւով լեցուած: Այս գտակը գլուխին կը դնեն նշանուելու ասորիքին մէջ գանուող պատանիները: Զափահասները այդ գտակը չեն դներ:

Գչե, գեաչե. Բուրդի սղջիկ:

Գուղիկ. գուղիկի, գուղիկընի: 1. Եան լակտա. 2. փողաքշական խմա- տով մանուկներու համար ալ կը գործածեն:

Գո՛ւղը. Վանողական բոս, շան ձագը վռնտելու համար կը գոր- ծածուի:

Գո՛ւղօ, գո՛ւղօ. Եան ձագը կանչելու համար գործածուող հրամայա- կան մը:

Գուլ. 1. Բուլթ. 2. բթամիտ:


Քուլնայ. շ. բ. մխաղէմ. գաղջանայ, (ջուր, կերակուր):

Քուլցնել. ն. բ. Տաքցնել՝ գաղջ ըլլալու չափ:

Քուննդ. կարծր հողակոյտ. հողի կարծր կտոր:

Առած.— Քուննդը նստե՛ր քաղց կուլայ: Մարդիկ, որ իրենց ողբալի վիճակին առանց նայելու, իրենցմէ զօրաւորներու վիճակին վրայ կ'ողբան:

Քուլ. գումն, 1. Աղբիւրին առջեւ գետեզուած սրբաստաշխտոյտ-



Քուլ

ւոր քար մը, որուն խոռոչէն անցնելով ջուրը՝ աւաղանը կը թափի: 2. Փոքրիկ աւաղան, սանդաձեւ:

Քո՛ւո. Քուրդի լակո՛տ. կոչական բառ մը:

Քուլ. բ. շ. Ատելութիւն ունենալ, ռիս պահել: Կրպօն՝ Հմայոյին կը գուայ, տեսնանք ի՛նչ պիտի էնը:

Քու. Նախաստական բառ զոր կ'ուղղեն խօսք մը դժուար ըմբռնող մէկու մը: **Սուլ:** Մօ՛, գոօ՛ էս ինչ էս, կ'ըսիմ, կ'ըսիմ, չեա հասկնար:

Քարբիկ. 1. Յոյր մարդ. 2. թարմ, կը գործածուի վարուենկի կուլթայի և պտուղներու համար:

Քրկրսուիլ. փ. բ. Իրար գրկել:

Քօ. Միակտուր փայտէ՛ փորուած 50 սանդիմէթր սրամագծով տաշտ որուն մէջ թրջուած հաց կը դնեն: Ասիկա, կը թուի թէ լեռնաբնակ քուրդեր կը շինեն, և հայ գիւղացիներուն կը ծախեն: Նուազ գործածական է:


Քօս. Գէշ, գարշ:

Քօս հոսիլ. Գարշելի հոտ արձակել: Ասիկա կը գործածեն մանուկներու և մարդերու համար որոնցմէ մէզի հոտ կուլայ: «Վրադ գօս կը հոտի» = վրայէդ նեխումի հոտ կուլայ. մէզի հոտ կուլայ:

Քօտեկախ. Նոր տարուայ նախորդ երեկոն, ուր տղաքներ դօախով

պայուսակներ կը կախեն երդիքներէն վար, նոր տարւոյ առ-
թիւ նուէրներ ստանալու համար:

Գօժի. գօտու, ներ: 1. Գօտի. 2. գրան առանցքին ուղղահայեաց և
իրարու հորիզոնական դիրքով գերաններ, որոնց վրայ կը
գամուլին գրան տախտակները:



Գ.

Գ. Դա : Սոյն բաղաձայնը, բալուցիները, «Թ» էն՝ նա՛րք, իսկ «Տ» էն ուժգին կը հնչեն :

Դաղձ. Անամուխ նամուղ ինքնաբոյս բանջարեղէն մը, զոր թանա-



Դաղձ

պուրին մէջ կը մանրեն : Անհամ բոյս մըն է : Կ'աճի ջրա-
ւատ տեղեր :

Դաղզիլ. 1. Կատղիլ. (շուներու համար). 2. բարկանալ. (մարդոց համար)

Դաղզուն. 1. Կատղած. 2. զայրացած :

Դայ, դահ. Հնչել Յ տառը Կարծր, տարէց կենդանիի միտ, կամ բանջարեղէն, որ շուտով չեփիր :

Դայնալ. բ չ. Կարծրանալ : Միտի և բանջարեղէնի համար կը գործածուի :

Դայնայ. Ամանները լուալու և ցամքեցնելու յատկացուած քուրջ :

Դան. Բաց, հեռու, անջատ. հոն :

— Դան գնա՛. Հեռացի՛ր :

Դանեն դասեն. Հոնկէ, հոսկէ :

Դաւոճ. Մշակուած և մշակելի տրտեր տաէնը միասին առնելով :

Դաւոճեմակ նոսիլ. Ծարապատիկ նատիլ. գետինը :

Դաւոճի. Տաչտ :


Դաւ. 1. Եկեղեցւոյ դասը, ուր դպիրներն ու քահանաները կը կենան : 2. Հոս. մակրայ. դաս էկը, ծօ՛, հոս եկուր, ծօ՛ : 3. Դաւ. դասախօսութիւն : 4. Ծեծ. ընանկ դաս մի տուի ընոր օր... : Այնպիսի դաս մը տուի անոր օր... :

— Դաւը էլնալ. Դպիրներու կարգը անցնիլ. եկեղեցական երգեցողութեանց մասնակցիլ. երաժիշտ ըլլալ :

Դաւ. հ. 1. Բարձր տեղ, հողաբլուր : Սովորապէս այս անունը կու-


տանն այն հողաբլուրներուն, որոնք, հեթանոսական անցևային մէջ գերեզմաններ եղած սու 2. Երկար, դար մի օր եղաւ, դար մի տարի եղաւ: Սրը երկար տեւեց, տարին երկար տեւեց:

- Գարբնակ. Ոստոյնանկութեան վերաբերող գործիք մը
- Գարձեկ. Գուկաններ, որոնք գերանին վրայ համաչափ հեւաւորութեամբ կը շարուին՝ գերանին ուղղահայեաց գիրքով՝ կազմելու համար տան մը ծածքը:
- Գարվար. Զաւիլար:
- Գարվեր. Զաւիլեր:
- Գարսակ. 1. Գատարկ, պարտպ. 2. ունայն. դարտակ կարտա. դարտակ խօսքեր կը խօսիս:
- Գարսկել. Պարպել, դատարկել:
- Գարսկիլ. Պարպուիլ, դատարկուիլ. ք. չ.:
- Գարսակ գլոխ. Անխելք, ունայնամիտ:
- Գարսակցնել. ն. ք. Պարպել:
- Գգալ. Գգլի, յոգ. Գգալինի Գգալ, սովորապէս բոլորածեւ կ'ըլլայ և ո'չ թէ հակիթածեւ: Տանձենիի և խնձորենիի փայտերէ կը շինեն: Այս փայտերը տասուելու և յղկուելու շատ յարմարութիւններ ունին: Տօսախ կայ Բալուի մէջ:
- Գգալոց. Գգալիոց. տախտակէ չինուած տուփ, որուն մէջ պալ-



Գգալոց

- ները կը դնեն լուտլէ լեատու, և պատէն վար կը կախեն:
- Գգալուկ. Գորտի ձագեր, որոնք Գգալի կը նմանին իրենց երկար տատնումն ու կլոր գլուխովը:
- Գգալսել. Արագ արագ կերտիւոր ուտել: ն. ք. տեցի, եց, ար՛, տեցէք, տած, տեր:
- Գգալբեր. Գգալ փորելու յատուկ կոր կարոց մը:
- Գգմուկ. Բոյս մը, որուն տերեւները սագի թաթի կը նմանի. ս-



Գդմակ

սիկա, գաւառական բժշկութեան մէջ, պալարներու վրայ կը կապեն, որպէսզի պալարին մէջի թարախը դուրս քաշէ:

Գդմրչոք. Շերտուած ու չորցուած դդում, զոր ձմեռնային եղանակին, կերակուրներու հետ կը գործածեն:

Դեզ. Յորենի, գարիի, վարսակի և ուրիշ ընդեղէններու ինչպէս նաեւ խոտի, տեւի խուրձերու կոյս: Մէկ դէզը կը բաղկանայ 40—80—120 խուրձերէ, զորոնք բոլորակ խորխորի մը վրայ կանոնաւորապէս շարելով, հետզհետէ, քանի բարձրանան շրջանակը կը նեղցնեն, և այս կերպով կոն մը կը ձեւացնեն:

Գեմ. 1. Հանդէպ. 2. հակառակ. 3. տեղ, երկիր, հանդերձեալ:

Գեմ դիմաց. Իրարու դէմ:

Գեմ լուս. Արշալոյս:

Գեմ լուսուն. Արշալոյսին, կանուխ, առտուն կանուխ, դեռ լոյսը չծագած:

Դի. դի, դիէ: Կողմ:

Դիզել. Իրարու վրայ կանոնաւորապէս շարել:

Դիմագարձու քիւն. Հմբաստութիւն, յանդգնութիւն:

» **եներ.** Հմբաստութիւն ընել, յանդգնել:

Դիմաւորել. ն. բ. ցի, ցէք, բած, ընդառաջ երթալ՝ հարսնեւորներու, հիւրի, վերագարձող արանդուխտի:

Դիմացը երթալ. նոյն:

Դիր. 1. Տափարակ. 2. տափարակն տափարակ տեղ. 3. հրմ. գնել
Դիրել. Յարգարել գեախնը

բային, գարձուր, գուռը դիր, դուռը գարձուր:

Դիրևորիլ. չ. բ. 1. Խարաքինիլ, կազգուրուիլ. 2. ինքզինքը գանել
անտեսապէս. 3. վրան գլուխը շխտել, շխտուաուիլ:

Դիրբ. Չափ մը՝ ծեծուելիք ցորենի, շուշմայի և ուրիշ ընդեղէնե-
րու: Ըս օր հինկ դիրք կտաւատ աղնծեցի, ծեծեցի սւ ձէթն
ըլ հանեցի: Մէկ անգամ ծեծուելու համար երկու գրիւ կամ
քաւասուկ սւթը օխո ցորեն պէտք է. ուրեմն մէկ դիրքը,
շուրջ 40-50 օխայ է:

Դնդրմցնել. Դատարկ, անխմատ խօսքեր խօսիլ:

Դմբխե. Պարսպ գլուխ, միամիտ մարդ:

Դմոյ. Կոյն:

Դրմպել. բ. ն. Թոնիրին բերանը գումպով գոցել:

Դրմպրլիկ. Փռքրիկ թմբուկ:

Դրմպրլցրնել. Թմբուկ զարնել:

Դոլ. Չափ մը տրմաքի. մէկէն մէկուկէս լիդր պա-
րունակութեամբ աման մը նուրբ տախտակէ
շինուած:



Դոլ

Դոլիկ. Փռքր դոլ մը:

Դոլոն. Մէջը պարսպ փայտ. նուշ կամ ընկոյզ որուն մէջը պարսպ
է, կ'ըսուի նանե փուն:

Դոլոնիլ. Պարպուիլ, գատարկուիլ:

Դող. Շատ սովորական հիւանդութիւն մը, որով հայ գիւղացիները
կը վարակուին աշնան եղանակին. տենդ: Սովորապէս ընդ-
միջուող տեսակէն է. ջերմ:

Դողկապ. Օրհնուած պատրոյգ կամ աւասան, որուն վրայ քահա-
նան կամ դող կապողը քանի մը հաս հանգոյց կ'ընէ, հան-
գոյցներուն թիւը եօթը ըլլալու է: Ասիկա կը կապեն դող
ունեցողին աջ գոտակին շուրջը: Եւ հիւանդը կը բժշ-
կուի:

Դողը կապել. Պատրոյգին վրայ դողկապի աղօթքները կարգաւ


Դողկապ ենել. պատրոյգը օրհնել:

Դողցնել. Դողի հիւանդութենէ բռնուիլ:

Դոնգել. Իրարու վրայ կուտակել խմոր, ցեխ եւն:


Դորդան. զորդընի, զորդընու. յոգ. զորդընի. բակ:

Դումպ. Թոնիրի յատուկ խուփ:



Դուրեր

Դուր. Փայտ ծակելու համար երկաթեայ գրիչ:



Դուռ

Դուռը ձեծել. Դուռը բախել:

Դուռը գարնել.

Դողրուալ. բ. չ. Զայն՝ գոր ձեղքուած ստիստակ մը կամ հուռագա-
րան մը կը հանէ:

Դողրուակ. ձեղքուած ստիստակի ձայն:

Ե.

Ս. Կը կարգացուի Ե՛Չ և ոչ ԹԷ՛ ԷՉ ըստ Ա.կնայ բարբառին: Սոյն ձայնաւոր տասը, բաւերու սկիզբը, մերթ «Ե՛», և մերթ «Է» կը հնչուի. իսկ բաւերու մէջ՝ միշտ որպէս Է կը հնչուի: Բացառութիւն ըլլալով, Ա. լծորդութեան բայերուն, ներկայ ժամանակին, եզակի և յոգնակի Ա. գէմքերուն մէջ միշտ «Ի» տառին կը փոխուի հնչումով: Օրինակ կը գրիմ՝ կը գրինք, կը շինիմ, կը շինինք: Ծաղրելի կ'ըլլայ այն, որ կը գրեմ, կը գրենք. կը շինեմ, կը շինենք կը հնչէ: Հեգնանքով կ'ըսեն, «Հա՛ Իստամբուլ գցեր ը, բարկըցեր ը, գրաբար կը խոսի» — Պօլիս գացեր է, բարակցեր է...

Եզ. Ըթ. «Ը» տառին անունը:
 Եզան աչք. Խաղողի տեսակ մը:


Եզնակ. Ոստայնանկութեան կազմածքին մէջ գործիք մը, որուն վրայ կը յենու հենքը, պրկուած մնալու համար, կամրջակ:

*Եզնարօս. Եզնարած:
 *Ելնալ. 1. ելնել, 2. բարձրանալ, 3. բուսնիլ, 4. ծագիլ, 5. յայտնուիլ:

Եղ. Իւղ, արդար իւղ:
 Եղաման. Իւղ դնելու աման: Աման որուն մէջ իւղ լեցուած է:
 Եղել. Իւղ քսել, մեքենայ ևն իւղոտել:
 Եղիթայ. Բոյս մը:

Եչ. «Ե» տառին անունը:
 Եղջուր. Կարագը հալելէ յետոյ մնացած աւելորդ մասերը՝ աղ, ջուր ալիւր: Եղջուրով՝ իւղով հաց կ'եփեն:

*Եռաջ. Առաջ:
 *Եռաջֆ. Չարտախին աւջեւները տա-



Եղիթայ

*Եռաջուց. Սեռաջուղնէ :

*Երբուանց. Երբէն իվեր :

Եբ. Երբ :

Եբոր. Երբոր :

*Երդիբ. Էրդիբ. Տանիքին վրայ թողուած միակ լուսամուտը, ուրկէ
ձմեռու յին տունը՝ ներսիսուն, լոյս կ'առնէ :

Երես, 1. երես, 2. մակերեւոյթ, 3. էջ, 4. վերմակի արտաքին պատ-
տու, տարածոյ :

Երեսը ժիր. Պնդրես, չամչցող :

Երեսը ժել. Ամչնալը մէկգի գնել :

Երեսը կախել. 1. Տրամիլ, 2. քէն ընել :

Երես դարձնել. Մերժել, չընդունիլ :

Երես դարձ ընել. 1. մերժել, 2. ներկայացնել :

Երեսը սեւնայ. Անիծեալ ըլլայ :

Երեսը սեւ ըլլի " " " "

*Երեսանց. 1. կեղծաւորութեամբ, 2. մակերեսային :

*Երեսպատես. կեղծաւոր :

*Երեսպատեսութիւն. կեղծաւորութիւն :

" " " " ընել. կեղծաւորութիւն ընել, շողքորթել :

*Երեւուկ. Ճամբու մը այն կէտը, ուրկէ գիւղ մը կամ քաղաք մը
կը տեսնուի այլևս՝ Քաղքին երեւուկը հասանք, իրկուն եղաւ :

*Երուրնալ. Երեւնալ. երուրցայ, — ցար, — երուրցաւ, երուրցիր, ե-
րուրցիք :

Աչիք երեւնալ. Ինքզինքը ցուցնել, վախցնել, սպառնալ : Հեղ մի
տըլոր այքին երեւցիլ — սպառնալ, վախցալ :

*Երթկրտալ. Թեթեւ մը շարժիլ, քունէն արթըննալու թեթեւ շար-
ժումներ ընել :

*Երբրկալ. հոյն

*Երբսրվար ըյնիլ. Երեաթ վրայ իյնալ :

*Երբսրվար կործել. Աման մը հակառակ կողմէ, շրթունքներու վը-
րայ շրջել, դարձնել :

*Երբալ. Երթալ. — գցի, գցիր, գնաց. գցինք, գցիք, գցին, գնալ,
գցէ՛ք, գցած գցել :



Ել երբանի ենել. Գողնալ. իբր բարեկամ մէկու մը ստան երթալ ե-
րան մը տաւնց տան ախրոջ գիտութեամբ :

Շասր երբալ. 1. չափը անցունել, չափը անցնիլ. 2. չափազանցել
Շասր գցի, ալ հերիք. ալ կը բաւէ, չափը անցուցիր :

*Երկան. Երկայն :


ԾԱՆՅԹ.— Աստղանիշ ունեցող տառերուն սկիզբը գտնուող և սա-
ւը պէտք է հնչել :

- *Երկանական. Էշ, իշու Կաման մարդ
- *Երկանանկրնուի. Կոյն
- *Երկանք. Երկանաքար:




Երկանք

- *Երնեկ. Երանի:
- *Երկու մասնի. Երկրագործական գործիք մը:



Երկու մասնի

- *Եթնք. Ետինքուան, կէսօրուան և երեկոյեան միջև եղած պահը:



Զ.

Զ. Զո կ'անուանեն սոյն բաղաձայնը. և կը հնչուի Ս տառէն աւելի թանձր:

Զագայ. Զազի, զազանի, զազնաիք. քրդակուն ցեղ մը:

Զագանակ. Զազայերէն:

Զամպուր. Թեթեւ կծուութեամբ բոյս մը որ իբր բանջարեղէն կը գործածուի:

Զանկ. Զանգ, զանգակ:

Զանկասուն. Զանկատան, տունէն. զանգակատուն, եկեղեցւոյ զանգակատուն:

Զըլզըլալ. Փալիլիլ, սատղերու համար կը գործածուի: Ասիները կը զըլզըլան = սատղերը կը փալիլին:

Զըլլիկ. Ծիլ, ծլիկ (սոխի, սխտորի ևն), առուերայէս քրդերէնի մէջ կը գործածուի. քիչ անգամ հայերէնի մէջ: Քրդերէն. Ըզզըլիկը բիւվազ հազ տըղըմ = ես սոխին ծլիկը շոտ կը սիրեմ: 2. կանանց սեռային գործարանին մէկ մասը:

Զրիսքրփիլ. Բ.ն. թըփոյ, ար, աւ. թըփիր, թըփէք, թըփան փիր: Ճաթիլ (ուտելու իմաստով) այս բառը կը գործածուի զայրոյթի արատայայտութիւնը ցոյց տալու:

Զմփըրիկ. Զմփըրկի, չէ. յոգ զմփըրկընի 1. եղեամբ. 2. սուս, սուսոյց:

Զմփըրիկ դառնալ. } 1. սառիլ, 2, թաց լաթի մը ցուրտէն կարծրելիլ
 " րլիլ } րանալը, սառիլ:

Զնկըլիկ. Զնկըլիկի, փոքրիկ զանգակ, նսեւ բոժոժ, գոր ջորիներու, փոքրիկ ուլերոռ, զառնուկներու պարանոցէն կը կախեն: Կարավանի մը առջեւէն գնացող ջորիին վիզէն կը կապեն խոշոր զընկըլիկներու շարք մը, որպէսզի միւս ջորիները անոնց ձայնին հետեւելով կարգով քայլեն:

Զընկըլսալ. Զընկըլիկին ձայն հանելը: Միտղէմ բայ:

Զընկըլսու. Զընկըլիկի ձայն:



Զամպուր

Զոգ. Զոյգ:

Զոգզոգ. Զոյգ զոյգ մակբայ:

Զոգուիլ. } Զուգաւորիլ: Զոգուայ, ուար, ուաւ, զոգուիլ, զոգ-

Զուգուիլ. } ուեց, զոգուած, զոգոգուեր կամ զուգուած, զուգուեր:

Զուխուռել. ն.բ. ուեցի, ուեց, զուխուռը', զուխուռեցէք, խուռած, խուռեր. նեղը զնել, նեղ անկեան մը մէջ մէկը թխմել, հրել:

Զուկուքայ. Զուկութի, զուկութանի. մասային ծայրը ազուցուած սրածայր գամ: Խթան:

Զուկուքել. Խթանել:

Զպուն. Զպնի, զպնէ. յսգ. զպունի: Պատմուճան՝ արանց և կանանց: Առջեւը վերէն վար բաց. ստորին եզերքին վրայ, երկու քովերը, աջ ու ձախ, Կական սմ. խորութեամբ երկու ճեղքեր ունի:

Զպսրլել. Այծերու և ոչխարներու թրքելլը:


Զպսուլ. Զպարլի, զպարլնի: Այծի, ոչխարի, ուլի, դառնուկի թրիք:

Զրդի. Գիհի ցրդի:

Զրդենի. նոյն

Զրդիպսուլ. Յրդիի պտուղ, որ սխեռէն փոքր կ'ըլլայ և կլոր, զոր օղի թորելու ատեն միայն թորանօթին մէջ կը դնեն, կամ թութին հետ միասին կը խմորեն, օղիին հաճելի համ մը կուտայ:

Զրեն. Խոտ մը:



Զրէն

Զօր. Պնդում, ճնշում, բանադրութիւն, ստիպում:

Զօր ենել. Ստիպել. բանադատել:

Զօրել. Կարող ըլլալ, կարողութիւնը հասնիլ: Իմ ուժս չի զօրեր ըստ գերանը վերցնելու:

Զօրով. 1. քանութեամբ, 2. հազիւ, դժուարութեամբ

Զօրպալ. Քանադաստայ :


Զօրպայութիւն ենել. Քանակալութիւն ընել :

Զօրք. 1. Կարողութիւն, ոյժ, զօրութիւն, 2. Կինուոր: Խուրպան

ըլլիմ զօրքիդ զօրացը = Կարողութեանդ մեռնիմ :

— Զօրք առնել. Զինուորադրել :

— Զօրք ժողովել. Զինուոր հաւաքել :



Է.

- է. Սոյն ձայնաւորը, յաճախ, Ա. և Ե ձայնաւորներուն, ՅԱ. և ԱՅ սկզբնաւանկին տեղը կը գրաւէ, Բալուէ բարբառին մէջ, և իբրեւ պարզ ձայնաւոր կը հնչուի:
- էգ. Բաժ. կենդանիներու համար կը գործածուի:
- էգեկիթ. Այգեկութք:
- էգեկուք. Այգեկութ:
- էգի. էգու, էգիէ. յոգ. էգխատան, այգի:
- էգի բանալ. Այգիին որթատունկերու արմատին շուրջը փարել:
- էգին քօթիլ. Գարնան եղանակին, որթատունկին ճիւղերը հողին տակէն դուրս հանել:
- էգին կըյրել. 1. Որթատունկերը յօտել, 2. տասանորդել:
- էմենալ. չ. բ. էմեցոյ, ցար, ցու, էմեցի՛ր, էմեցէ՛ք, էմեցած, էմեցեր. յամենալ, ուշանալ:
- էմեցնել. ն. բ. յամեցնել, ուշացնել. էմեցուցի, ցուցիր, ցուց, էմեցու՛ր, էմեցուցէ՛ք, էմեցուցած, ցուցեր:
- էջնալ. էջայ, էջար, աւ, էջի՛ր, էջէ՛ք, էջած, էջեր: 1. Իջնալ. 1. ցածնալ ջուրերու, գիներու եւն. 3. խոնարհիլ. 4. հանդարտիլ (բարկութիւն):
- էռաջ. Առաջ, նախ, իսկզբանս:
- էռաջուց. Առաջուընէ:
- էռջիկեկ. Անդրանիկ:
- էրդ. Յարդ:
- էրդել. կենդանիներուն յարդ, կեր տալ:
- էրած. Իրազ, էրծի, յոգ. էրծնի:
- էրծահան. Երազահան գիրքը:
- էրկնցնել. 1. Երկնցնել. 2. շատ խօսիլ:
- էրկննալ. 1. Պառկիլ. 2. երկարիլ. 3. երթալ քալել, կամաց կամաց երթալ տեղի մը երկայնութեանը:

Ը.

- Ը Ը. Ե՛ր կը կարգան : Ասիկա յաճախ Ա. և Ե ձայնաւորներուն և ու
 բաղադրեալին տեղը կը դրաւ ։
- Ը Ը. Ա. շարկապ . իսկ մակբայ ըլլալու պարտապային Ա՛լ կը գրուի
 և կը կարգացուի : Ե՛ս ըլ կուգամ ձեզի հետ . ես՝ ա՛լ չիմ
 կրնար քուկել , խոնճեցայ :
- Ը Ղ ու նկ . յոգ . ըղընկուի , ըղընկուընու : Եղուեղ :
 Անէժք . Ասուած քիզի քոս սայ , ըղուենկ չի սայ : Կը մաղ-
 թեմ որ սոսկալի տանջուիս , քոստիս , բայց քերելու և եռքը
 ամօքելու համար , եղուեղ չուենեաս :
- Ը յ նիլ . ր . չ . կ՛ընիմ , նիս , նի , ընկայ , ընկար , աւ , ընկիր , ընկէք ,
 ընկած , ընկեր : 1. Խնուլ . 2. վիճակիլ , վերաբերիլ : Քիզի՞
 ընկեր ը՛ ըս գործը էնել , քիզի՞ մնացեր է . . .
- Ը ն կ ո զ . զի , զէ , յոգ . ընկողնի , ընկողնու . 1. ընկոյզ . 2. բամպակի
 դեռ չբացուած խոզակ :
- Ը ն ն ու ղ . ընձղի , յոգ . ընձղընիս Արու . հորթ , միամեայ եզ , որ դեռ
 արօրի լծուած չէ :
- Ը ն ս ա յ ու . Հասուեցած վարուենկ , կուլթայ , եւն , որոնց կուտը իբրև
 սերմ կը գործածուի :
- Ը ն ս ո ն ու ի լ . Ամբանուլ . գործածելի վիճակի մը համնիլ (թրծուած
 Ը ն դի . Անդի : ամաններու համար կը գործածուի) :
- Ը ն դ ի դ ե մ . Անդիի աշխարհ , հանդերձեալ :
- Ը ս ի . Ասդի :
- Ը ս ի դ ե մ . Ասդիի աշխարհ , այս աշխարհ :
- Ը ո ը ն ի ս . Լաւ , աղէկ : Այս բառը առաւելապէս քրդական գործածու-
 թիւն ունի : Միայն Արածանիի ձախակողմեան հայ գիւղացի-
 ները կը գործածեն : Աջակողմեանները գրեթէ բնու չեն գոր-
 ծածեր : Թիու ըւը՛նա ը . դու աղէ՞կ ես (քրդերէն) :
- Ը ո ը ն ի ս ն ա լ . Աղէկնուլ , ապաքինելու կողմն ըլլալ :
- Ը ո ն աւ ո ս ի լ . 1. Կատուներու , Մարտ ամսուն , մերձաւորութեան
 ցանկութեան զարթնումը , զոր կ՛արտայայտեն կողկողագին
 մրուիւններով : 2. Ցանկասէր ըլլալ , ցանկութենէն հիւանդա-
 նալ :
- Ը ո պ ը ո ղ . Կարմրորակ մաքուր կաւ մը , զոր կը խառնեն եռացող
 քաղցուին հետ , անոր աւելորդ նիւթերը զատելու համար :

Ընանկ. Անանկ:

Ըսանկ. Ասանկ:

Ըսի. Ասի:

Ընի. Անի:



Ընցե. Այնպէս. նսեւ՝ ընցեղ:

Ըսցե. Այսպէս. նսեւ՝ ըսցեղ:

Ընսրեղ. Տարենը մտքրել. ցորենին՝ քարերը, սրունները, կողմիք-
ները ևւն. գասել:

Ընսրսուխ. Տարենը մտքրելու գործուղութիւն:

» Էնել. Տարենը մտքրելու գործուղութեամբ պարտադիր:



Թ.

Թ. Թոյ կամ Թօ կ'անուանեն այս բաղաձայնը, զոր, ընդհանրապէս «Թ» տառէն թաւ կը հնչեն: Հազուադէպ պարագաներու տակ «Տ» տառին հնչիւնը կ'ուենենայ:

Թա'. Մինչեւ, ծայր, վախճան:

Թա' օր, քա' ուր. Մինչեւ որ Թա' օր գիրս գրեցիր, հոգիս հանեցիր—մինչեւ որ համակա գրեցիր....

Թար. 1. գոյ. Թաթ՝ ձեռքի, ոտքի, գուլպայի. 2. զգեստի թեւին՝ ձեռքի վրայ երկարող աւելորդ մասը. 3. ած. կակազ որ կարգ մը տաւեր իրենց ուրոյն ձայնովը չի կրնար հնչել: Օր. գուղաս—կուգաս:

Թարար. 1. ած. Արագաշարժ, տառչդ, յարաշարժ. 2. ան. սուրհանդակ:


Թարար խամի. Խոցառակ կամ մահացու խիթ՝ կուշտի, որովայնի,

Թարար խոսուկ. ստամոքսի, եւն խիթ:

Թարար խամի՛ առնես. Անբուժելի խոցառակներո՛ւ բռնուխ. (ա-

Թարար խոսո՛ւկը բոնր քեզ. նէժք):

Թարշամփուր. Շամփուր, որուն մէկ ծայրը լայն թաթ մը ունի. ա-



Թաթշամփուր

ասով թոնիրին կողերը քերելով՝ հացի կամ խմորի մնացորդներէն կը մաքրեն:

Թարիկ. 1. Մանուկի ձեռք. 2. քերիչ՝ խմորի տաշտին կողերը քե-



Թարիկ

րելով մաքրելու համար:

Թալեթլի. բ. չ. Թլաւ, Թլած, Թլեր: Անձկութենէն մարմրիչ հիւանդի մը արգիլեալ կերակ ուր ուտելու ցանկութիւն ունենալը:

Թալթիլ. Տես թալեթիլիլ:


Թալսիկ. Բանջարեղէն մը, զոր, խաշելէ յետոյ իւզով կը տապ-



Թախաիկ

Կեն: Ասիկա ինքնաբոյս է:

Թակ. Փայտէ ստիւիչ, որ կը գործածուի, անձրեւներու եղանակին, սանիքները ստիւլով պնդացնելու և դանսնք ջուրի անթափանց դարձնելու համար: Լուացքի ստեն զգեստները մոխրաջուրի մէջ եռացնելէ յետոյ ստափարակ քարերու վրայ կը դնեն և կը ծեծեն սասով որպէսզի լուսմաքրուին:



Թակ

Թակալ. Թակլի. կրկնակ կար. յարեւմտան մեքենայի կարերուն:

Թակել. ր. ն. Թակով ծեծել:

Թակլել. կարել, թակալ ընել:

Թակլուամբ. կարուամբ:

Թակլուբ. կար:

Թակման. թակուամբ:

Թամ. 1. Լման, ամբողջ. 2. կատարեալ, անթերի:

Թամամ. Նոյնպէս տես թամ:

Թամամնալ. Ամբողջանալ:

Թամամցնել. Ամբողջացնել:

Թամամիլ. Աւարտիլ, ամբողջանալ:

Թան. Զուրով հարուած և կարագը զատուած մածուէ: Մածուէքի բերեք անգամը ջուրով խառնուած խնոցիի մէջ լեցնելով:

կ'սկսին ետ առաջ շարժել մինչև որ կարագը մածնաջութին երեսը կոյտեր ձեւացնէ: Ասկէ յետոյ կ'սկսին խոցին աջ ու ձախ շարժել պտուտակածել. այս շարժումով կարագի կոյտերը իրարու միանալով գունտ մը կը ձեւացնեն: Այս կերպով հաւաքուած կարագը կը դասեն, մնացած հեղուկը՝ թան կը կոչուի:

Թանալ. ն. բ. թանացի, նաց, նա', նացէք, նացեր: Հենքը հենելէ առաջ, մանածի կարժերը՝ շրէզի մածուցիկ լուծոյթով լաւ մը թրջել, որպէսզի հենելու և հիւսելու միջոցին առէջները և հիւսքը չթնճկոտին: Մանածը թանացի՞ր, կրպօ՞ւ:

Թանապուր. պրի պրէ: Մածնաթանով և ծեծածով եփուած ապուր, որուն հետ կ'եփեն նաեւ դաղձ ըստած բանջարեղէնը: Տկար ստամոքս ու խանդարուած աղիք ունեցողներու օգտակար եղող ապուր մըն է:

— Թանապուր խառնել. Թանապուր եփելու թանը, որոչ համեմատութեամբ ծեծածի հետ խառնելէ յետոյ կրակին վրայ դնեն, ու կ'սկսին տըփչերք ըստած փայտով անդադար խառնել մինչև որ եռալու սկսի: Եռալու սկսելէն յետոյ կը դադարին խառնելէ: Եթէ չխառնեն, թանը կը կտրի:

Թանբերան. Մարդ մը որ առանց մտածելու, անխմաստ խօսքեր կը խօսի Բացրերան, թոյլբերան մարդ:

Թանխաւ. խչի: Սմըրտիկով (ձաւարի մանրուք) և մածնաթանով եփուած լոյծ եղինձ. որու հետ կարագ ալ կը խառնեն:

Թաց. Մեծ տաշտ:

Թանջուր. Ջրի Մածնաթանը եռացնելով կը կտրի. այսինքն պանրիտը և ջուրը իրարմէ կը զատուին: Այս ջուրը թանջուր կ'անուանեն: Ջերմի հիւանդութիւն ունեցողները այս ջուրով կը լողցնեն, և յետոյ ուռենիի թարմ տերեւներով փաթակելով անկողնի մէջ կը պտուկեցնեն: Քիչ յետոյ հիւանդը կը քրանի և ջերմը կ'անցնի:

Առած.— Տունը չունի թանջուր, ետեւէն կախեր ք չանչուր: Տունը ուտելիք չունի, բայց ճոխ հագուստներով, արդուզարդերով կը պճնուի:

Թապլել. ն. բ. 1. նետել, արձակել (քար, փայտ). 2. տապալել:

Թապլբման. Թաւալած, շրջուած, նետուած:

Թապլիլ. բ. չ. լաւ, լած, լեր: Ոտքին՝ ոլոքէն դառնալը. ոտքս թապլաւ = ոտքս դարձաւ:

Թապլլցնել. ն. բ. 1. Գետինը թաւալեցնել (մարդ եւն). 2. հաւը փետուրներէն մաքրելէ առաջ, եռացած ջուրի մէջ ընկզմն քանի մը երկվայրկեանի չափ:

Թապըլիսիլ. բ. չ. տաւ, տած, տեր: 1. Գետնի վրայ պառկած աս-
դին սնդին թաւալիլ: 2. կենդանիներու, մասնաւորապէս է-
չերու մսխրանոյններու կամ կանանչութեանց վրայ ասպլտը-
կիլը:

Թապլոսի. Թաւալում մարդու և կենդանիի:

Թապլուածի. Նեաերու եղանակ:

Թառ. Սիւնէ սիւն հաստատուած և գետնէն 1-2 մէթր բարձր ձող,
որուն վրայ հաւերը կը գիշերեն:

Թառիլ. ռաւ, ռեր, ռած: 1. Բարձր տեղ մը նստիլ: 2. թառի վրայ
եղներ:

— Թառը ելլալ. 1. Թառիլ: 2. բարձրանալ (հեգնական):

— Թառը հանել. 1. Բարձրացնել գովելով: 2. սնկարելին ընել:

— Թառը դնել. Գործ մը գլուխ չհանել. զանց ընել:

Թառմիլ. բ. չ. մաւ, մած, մեր: Թռումիլ:

Թառմած. Թռումած:

Թառմըսիլ. մտաւ, մտած, տեր: Թռումիլ:

Թառմսման. Թառմտած:

Թառմսուկ. Թառմտած:

Թառլիկ. լիկի Ասեղնագործուած գտակ:

Թաս. 1. Զուրի գաւաթ. 2. կաղնիի բլուրդը ճիւղին
հետ միացնող գոգաւոր կեղեւը:



Թաս



Թասիկ

Թասիկ. Բոյս մը որ թասի նման ծաղիկներ սւնի:

Թասուկ.

Թաախ կապել. Վէրքի մը թարախանալը:

Թարախոսիլ. Թարախով աղտոտիլ:

Թարխիլ. խաւ, խեր: Թարախ կապել, սպալարի հաստեղծումը:

Թարգ. 1. Թանձր, հաստ. 2. կարծր, կամ հաստատուել:

Թարգընալ. 1. Թանձրանալ. 2. հաստընալ:

— Լեզուն քարգընալ. Խօսելու կարողութիւնը կորսնցնել. բառի մը

- ասակերը ամբողջովին արատայտոյ լեզուի ճկունութիւնը կորսնցնել:
- Թարգըցնել. 1. Հասոցնել՝ զգեստ, ասպրատ, անկողին եւն. 2. Թանձրացնել՝ կերակուր, օշարակ եւն եփելով:
- Լեզուն թարգըցնել. Խօսելու ասին յազումէն ինքզինքը կորսնցնելով կցկատուր խօսքեր ընել:
- Թարբաֆ. Ապաքինման մէջ եղող հիւանդին կերակուր ուտելու ցանկութիւնը, բացառիկ ախորժակ:
- Թարբաֆը անցրիւն. Ուտելով՝ ուտելու ցանկութիւնը անցնել:
- Թարթիչ. Կոպերուն եզերքը գանուող մազերը:
- Թարթել. Աչքը բանալ գոցել:
- Աչքը թարթելու շի թողել. Ժամանակ չառլ, ցանկարժակի բերել:
- Թարթուածք. Աչք թարթելու եղանակ:
- Թարխանայ. Խանի: Թանուլ կամ ջուրով եփուած, խմորուած և ապա չարցուած ձեծած, որով, ձմրան եղանակին կերակուր կ'եփեն:
- Թարխանայ-ապուր. Թարխանայով եփուած ապուր:
- Թարխոս. Թարախոս, աղատա:
- Թարկ. 1. Թողում. 2. Լքում, ապահարզան:
- Թարկը սալ. Մէկուն օձիքը թողուլ, զատուիլ, հեռանալ:
- Թարկել. 1. Թողուլ, Լքել. 2. ապահարզան ընել:
- Թարկըման. Ապահարզան եղած:
- Թարկուածք. Ապահարզան:
- Թարկուիլ. 1. Ամուսնացումը. 2. Իրար թարկել:
- Թարկըսուիլ. Իրար թարկել:
- Թարպիս. Խոնաւութիւն, թացութիւն (արանքու):
- Թարպիս ենել. Մշակութեան յարմարագոյն աստիճանով խոնաւ-ցընել՝ արտ մը, պարտէզ մը եւն:
- Թարպիս ըլիլ. Խոնաւնալ (արտ):
- Թարպիսը անցնիլ. Խոնաւութեան աստիճանը կորսնցնել, մշակելիութեան: յարմար խոնաւութիւնը պակսիլ:
- Թացան. Հացի հետ ուտուելիք պատրաստ պանիր, հում բանջարեղէն եւն:
- Թաւ. 1. Ջուր, խոնաւութիւն կաշիի եւն. 2. գործողութեան մը կատարելու ճիշդ ատենը. 3. չերմութեան աստիճան՝ ուր երկաթը պէտք է ձեծել՝ անոր ձեւ տալու համար:
- Թաւ առնել. Երկաթին մխուիլը:
- Թաւ սալ. Երկաթին ջուր տալ, երկաթը մխել:
- Թաւը գտնալ. Ջերմութեան, խոնաւութեան որոշ աստիճանի մը հասնիլը:

— Թաւից բերել. 1. Բան մը ճիշդ տատենին ընել. 2. յանկարծակիի բերել:

— Թաւի'ն ը. Թաւին է, թաւին ըլլալ. Ժամանակն է՝ մէկը անակնկալի բերելու:

Թափ. Ոսնուձայն:

Թափել. 1. Իբր անպէտ նետել. 2. լեցնել. 3. պարպել: Ն. բ. Թափե'ց, Թափեցի'ր, ամ, եր:

— Ջուր թափել. Միզել:

Թափիլ. 1. Թափուելի. 2. հիւանդութեան մը հետեւանքով մարմնոյն մէկ մասին փառութեամբ թափիլը. 3. ձուրտէն ընդարմանալ. 4. գունատիլ. 5. գլխովու թեղնէն զգաստանալ, խելքը գլուխը գալ. 6. լէրք դոյանալ:

Թափքը փած. 1. Անճարակ. 2. անճաշակ հագուող մարդ. 3. անհող. 4. ցրուած՝ ասդին անդին:

Թափքը փիլ. 1. Յրուել. 2. լէրքերով ծածկուել:

Թափքը փուկ. Թափի ըրիած:

Թափքը փուկ. Թափի ըրիած:

Թափքը փուկ. Անպէտ իրեղէններ:

Թափոց. Թափուելիք, անլուծառելի ապրանք:

— Կար թափած փսիկ. Յանցաւոր՝ որ իր յանցանքը գիտնալով տաժախար կ'ըլլայ:

Թել. 1. Դերձան. 2. շարունակութիւն:

Թելոսիլ. Հիւսուածքի մը երեսը կարծր աւարկայի մը քսուելով ծուտաիլ, ծուէն ծուէն ըլլալ:

— Թելթել ըլլիլ. 1. Մուտաիլ. 2. գովեստներէ մեծամտիլ, հպարտարտանալ:

Թել փառ. Հիւսուածքի մը մէջէն ատէջներէն մէկը կամ մէկ քանին քաշուած հանուած:

— Թել փախցնել. Հիւսելու տանն թել, կամ կութ պակաս թողուլ:

Թել. Կամնուած արմաիքի կամ ընդեղէններու կոյտ, որմէ յարդը պիտի զատուի հոսելու գործողութեամբ: Ասիկա կ'ըլլայ մէկ մէկուկէս մէթր բարձր, երեք մէթր երկայն և մէկուկէս մէթր լայն խորիսխով դէզ մը:

Թելել. բ. ն. Կամնուած արմաիքը կամ ընդեղէնները հոսելէ առաջ դէզի վերածել:

Թել ենել. Թեղել:

— Թելը հոսել. Յարդը՝ արմաիքէն կամ ընդեղէններէն զատուել գործողութիւնը կատարել, հովի կամ մեքենայի միջոցաւ:

Թելի. Մաւ մը սրուն փայտը կարծր է, մութ կանանչութեամբ

տերեւներ կ'ուեննայ, և բարտի մը նման բարձր կ'ըլլայ.
Թեղօջ:

Թեղիկօն. Ատուտակաւոր և ուղղաձիգ դիրքով հաստատուած գերան մը որ լծակի դեր կը կատարէ: Ասոր վրայ անցուած է երկու հակոյ գերաններու ծայրերը կրող պատուակաւոր կամ մըջակ մը, ինչ ստորին մասին վրայ հաստատուած, գեանէն կէս մէթր բարձրութեամբ, և 0, 75 սանդիմէթր հաստութեամբ երկանաքար մը: Այս երկանաքարը աջ կամ ձախ իր առանցքին վրայ դառնալով կը դարձնէ նաեւ թեղիկօնը կամ պատուակաւոր գերանը, որուն վրայ հաստատուած կամ մըջակը վեր կը բարձրանայ կամ վար կ'իջնէ, գերաններուն միւս ծայրերուն միջոցաւ ճնշում առաջ բերելու կամ ճնշումը դադրեցնելու համար: Տես ձիթ իհանքի մասին տրուած բացատրութիւնները, էջ՝ 79—82:

Թեպուր. պրի, պըրնի: Փետուր:

— **Թեպրփոխ ըլլիլ.** Փետուրները թափիլ և նոր փետուրներ ունենալ:

Թեպրփոխուիլ. Նոյնը:

Թեպրփոխան. Փետրփոխուած:

Թեռ. 1. Մանուած բուրդէ դերձան. 2. բրդէ:

Թեռե. Բրդեայ:

Թել. 1. Ճըճըռօին, ջահրակին անխուները դարձնող լծակ. 2. Անիւի մը մասը այն որուն վրայ զօրութիւն մը կը ճնշէ. 3. օգնութիւն. 4. թելադրութիւն. 5. թել:

— **Թել սալ մեկուն.** Մէկը քաջալերել կամ թելադրել՝ զայն փետակար գործի մը մզելու համար:

— **Թել քիկունք ըլլիլ մեկուն.** 1. Օգնել մէկուն. 2. դրդել:

Թելովը քռիլ (մեկուն). Գործ մը կատարել մէկուն օգնութեան ապա ինելով: Առաջ նետուիլ:

Թելաւորիլ. 1. Թռչունի ձագերուն թեւերուն նոր բուսնիլը. 2. օգնութիւն դանել:

— **Թել առնել (մեկեկ).** 1. Մէկէ մը դրդուիլ, մզուիլ. 2. երես առնել:

Թելրօալ. բ. չ. 1. Թռչնոց ձագերուն թռչելու փորձ ընելը, թեւերնին իրարու բախելը. 2. բան մը ընելու անյաջող նախնական փորձ կատարել:

Թեր. 1. Կողմ. 2. տախարակ փոքրիկ քար, որով մանուկներն նշանառութեան խող մը կը խաղան: 3. քիչ, նուազ ամ.

Թեր էլնալ (մեկուն). Կողմնակցութիւն ընել:

Թերխաղ. Մանուկներու խաղ մը:

— Թեր խաղալ. Թերով նշանաուլթեան խաղ խաղալ:

Թերխաւ. 1. Միս որ լու եփուած չէ. 2. հարս որ երկու երեք ատրի աւաջ ամուսնացած է. 3. այրի հարս:

Թերխաւ եկել. Թեթեւօրէն եփել կերակուրը ու թողուլ իր վիճակին մէջ, ուրիշ աւիթով անոր եփը շարունակելու մասածումով:

Թերխրեուկ. Դեռատի հարս (փողաքշական բառ):

Թեփ. 1. Արմաթիքին կեղեւը, զոր կը զտանն և կենդանիներու կը կերցնեն. ցորենի, փարսակի, ձաւարի, սոսի թեփերը յորդի են իրրեւ կենդանիներու սնունդ: Ասիկա առք ջուրի հետ խառնելով կը հարեն, և, երկուէն անոս ազատող մայր չորքոտանիներուն կը կերցնեն. սես լափ: 2. Մարմնոյն մորթէն բաժնուող աւերարդութիւններ: 3. Չուկերու մորթը ծածկող կարծր ու բուրբանէւ շերտեր:

Թ: փոսիլ. բ. չ. տաւ, տած, տեր: Թեփ գոյանալ:

Թրխսիկ. Արծաթեայ եռանկիւնածեւ զարդ մը, զոր կ'ինները իրենց պարանոցէն կը կտխեն:

Թրխրմոր. Սմոր, խմորիչ հայս:

Թրուբաղ. Քիչ մը թթուահամ:

Թրուբրղուկ. Դայնայէս:

Թրուիլ. բ. չ. ուաւ, ուած, ուեր: Թթու համ ստանալ. 2. խըմորուիլ. 2. չափէն ուելի խմորուիլ:

Թի. թիւ, թիէ. յոգ. թիյանի: Թիյակ, թի:

Թիգ. Երկայնութեան չափ մը որ կը հաշուըուի բթամատին ծայրէն մինչեւ ցուցամատին ծայրը:

Թիյայ. թի: Ասիկա կը գործածուի միայն փորուած հողը վերցնելու, և ոչ թէ գետինը փորելու:

Թիս. Անձայն փուք:

Թմբխոս. Սոս որ մորդուն վրայ թմբութիւն աւաջ կը բերէ:

Թմբխոս ուսել. 1. Շատ քնանալ. 2. միշտ թմբած վիճակ ունենալ:

Թմիլ. բ. չ. մաւ, մած, մեր: 2. Հատնիլ. 3. աւարտիլ, վերջանալ:

Թմցրնել. 1. Հատցնել. 2. աւարտել, վերջացնել:

Թնկեցնել. Մազերը խառնչակել:

Թնկիլ. 1. Մազերուն իրարու հետ խառնուելով հանգոյցներ ձեւացնելը. 2. խառնչակուիլ (գործի մը):

Թնուկ. Մազերու խառնչակութիւն:


Թնսալ. բ. չ. 1. Շարժիլ, տեղէն շարժիլ թեթեւ մը, 2. թնդալ:

Թոզլուխ. Չանկապան:

Թոլ. 1. Թոյլ. 2. տկար:

- Թուրքերան.** Անտիկերոսպոս մարդ. առանց մտածելու ամէն ինչ յայտնող, խօսող մարդ:
- Թուրնալ.** 1. Թուրնալ. 2. կորուլը կորանցնել, տկարանալ գիմադրութեան մը կամ վիճարանութեան մը մէջ:
- Թուրցնել.** Թուրցնել՝ կապ, մեքենայի մը մասը, պտուտակ եւն:
- Թումաս.** Կարագով, սերով և թորախով շաղուած խառնուրդ մը որ տիկերու մէջ կը սրահեն սեղմուած և յետոյ իբրեւ պանիր կը գործածեն: Ասիկա Բուլուի ընտրելագոյն պանիրն է:
- Թուրեզերէ.** Բակին այն մասը, ուր թանիրը թաղուած է. հոն կը կատարուին խմորը բանալու և հաց եփելու գործողութիւնները:
- Թանիւ.** Թանիւ. յոգ. թանըրնի. հաց եփելու հնոց: Ասիկա ընտիր կաւով կը շինուի, և յետոյ կը թրծուի: Ստորին մասը լայն

Ծործ



Թանիր

է, իսկ վերի մասը՝ աստիճանաբար նեղ: Ստորին մասին վերայ ծակ մը ունի, որ անցքով մը գեանին մակերեսին հետ հաղորդակցութեան մէջ կը գտնուի: Ասիկա ծործ կ'ըսուի, ծործին պաշտօնն է թանիրին կրակը արծարծել կամ մեղմացնել: Երբ արծարծել ուզեն ծործին բերանը բաց կը սրահեն, իսկ եթէ մեղմացնել ուզեն, զայն կը գոցեն:

- Թունրսուն.** Տես թուրեզերք:
- Թորախ.** Մածնաթանը եռացնելով կը կտրեն, այս կտրուած թանին պանրիտը կ'ստանան քամելով: Այս սպիտակ ու թանձր մասը թորախն է:
- Թորախ ըլլիլ.** Խայտառակուիլ. ամօթահար ըլլալ:
- Թորախ ենել.** 1. խայտառակել, 2. թանը կտրելով քամել:

Թորք. Բանջարեղէն մը զոր իբրեւ խաչօն կը գործածեն : Այս խոտին տերեւներուն ու արգանակին բուժիչ յատկութիւններ կը վերագրեն : Կշտալեզու :

Թորխարսիկ. Թորսիս պահելու համար մասնաւորապէս պատրաստուած աիկ :

Թորսոս. Իւզոտ ու համեղ ձուկ մը, որ փշուա չէ :

Թուխ. Սեւ :

Թուղթ. 1. Նամակ. 2. Թուղթ. 3. յուսոյթ, բժժանք, կատարողական գրութիւն. 4. պարունակութեան չափ մը, շուրջ 25 արամ, մասնաւորապէս ձէթի համար կը գործածուի :

Թուղթ ենել (մեկուս). Կախարդել մէկը չար ազդեցութեան ենթարկել. խելքը գլխէն հանել :

Թուղթ նայիլ. Գուշակութիւն ընել :

Թումպայ. պի : Անդրավարաիք :

Թունս ելնալ. Վախնալ, սիրտը դող ելնալ :

Թունս հանել (սիրսր). Վախցնել :

Թունչ. Կզակ, ցուկ, մարդու և կենդանիի :

Թուտ. Այտերուն ստորին մասերը :

Թուրգ. Ամանները թրծելու գործողութիւն. թուրծ :

Թուրգ դնել. Թրծել :

Թուփ. 1. Տերեւ. 2. գրքի կամ տետրակի թերթ մը. ծօ՛, Աստօ՛, Սաղմոսէն քընի՞ թուփ կարգացած էս :

Թուփը տըջել. Էջը դարձնել :

Թուիլ. 1. Թուչիլ. 2. ցատկել բանի մը վրայէն, կամ բարձրէն ցած. 3. արտիւլ. 4. փախչիլ՝ առանց գիտցնելու :

Թուիլ սիրսր. Սիրտը դողալ, վախնալ :

Թուուրսիլ. Տատկրանել :

Թրանել. Թուրով շատ մը տեղերէ վիրաւորել :

Թրգել. ն. բ. դեց : Թրծել :

Թրիֆ. Կենդանիներու քակոր :



Թորթ

Թրփսման. Թաղիրթ, աղիք:

Թրփել. ք. չ. միադէմ: Պէտքը ընել, փորը պարպել:

Թրփեփողոց. Մասնաւոր տեղեր, ուր կը կուտակեն, ձմրան եղանակին ախտահարու թրիքները:

Թրփրջուր. Թրիքի ջուր:

Թփրքալ. Ոտքի ձայն ելներ:

Թփրքուկ. Ոտքի ձայն:

— Անկրճին քփրքնել. Յիշեցնել:

Թփրքնել. Ոտքի ձայն հանել:

Թօթվել. ն. ք. 1. Յնցել. 2. վար թափել. 3. փռք արձակել:

— Թուք քօթվել. Թթենիին հասուն թուքերը հաւաքել:

— Շուււմայ քօթվել. Շուււմայի հատիկները իրենց չորցած պատկաններէն դուրս թափել ցնցելով:

— Էզին քօթվել. Որթատունկին ճիւղերը, գարնան սկիզբները, հողին տակէն դուրս հանել:

Թօթվքսիլ. (անդր. ք. 1. Խնքզինքը թօթվել, իր զգեստները

Թօթվքսուիլ. (թօթվել. 2. թեթեւ շարժում մը ընել. 3. փոքր ճիղ մը ընել:

Թօփ. ամ. 1. Հաւաքուած, ամփոփ. 2. գոյ. գնդակ. 3. Թնդոնօթ. 4. կոճակ, հենքի սրոշ երկայնութիւն մը, որ կը հաւասարի 21 արշընի. 5. բոլորը:

Թօփալ. Կաղ:

Թօփել. Հաւաքել, ամփոփել:

Թօփըլսալ. Կաղալ:

Թօփըլսուլ. Կաղ քալուածք:

Փ.

Փ. Փէն Այս բողաձայնը Ս և Շ բողաձայններուն միջին ձայնը կ'արտայայտէ Բալուի բարբառին մէջ, և յատկօրէն կը զտնազանուի անոնցմէ:

Փաժ. ի, է, եր: Երկրաշարժ:

— Փաժ ելնալ. Երկրաշարժ ելնել:

Փաժալ. չ. բ. ժամ, ժաս. ցի, ցիր, աց. ժա՛, ցէք, ցած, ցեր: 1. Շարժիլ. 2. յարատեւօրէն շարժիլ (գլուխ, աչք), ջգային հիւսուցութեան մը հետեւանքով:

Փաժացնել. ն. բ. կը ժաժացնիմ, ես, է. ցնինք, ցնէք, ցնեն. ցուցի, ցիր, ցուց, ցո՛ւր, ցուցէք, ցուցեր, ցուցած: 1. Շարժել. դողացնել (գլուխը, աչքերը). 2. դողացնել:

Փալս. ի, եր: 1. Փոքրիկ ծղօտ (չէօի). 2. լուցկիի մեծութեամբ ծղօտ մը, որ կը մնայ ճրագին մէջ, ըստ հարկին, լոյսը արծարծելու համար. անով պատրոյզը առաջ, ճրագին քիթն դուրս կը մղեն, որպէսզի այրումը դիւրանայ: Տես լուսիկ նրագր:

Փամ. մու, մեր: Եկեղեցի: Եկեղեցի բառը շատ քիչ կը գործածուի, և՛ անոնցմէ միայն, որոնք Պոլիս մնացած են երկար տարիներ:

Փամ կանչել. 1. Եկեղեցի հրաւիրել. 2. Եկեղեցւոյ զանգակին հընչելը:

Փամ զտրնել. Եկեղեցւոյ զանգակը հնչեցնել:

Փամկոչ. Փամկոչ և լուսարար միանգամայն:

Փամուոր. Եկեղեցի գնացողներ:

Փամուց. Քահանայի նուէր:

Փանկ. ի. Փանգ:

Փանկ կապել. Փանգոտիլ:

Փանկ բռնել. Նոյն:

Փանկառ. Պղնձի ժանգ, պղնձի ծծմբատ, տալիս կը գործածեն բրդեղէնները ներկելու համար:

Փանկոս. Փանգոտ:

Փանկոսիլ. բ. չ. 1. Փանգոտիլ. 2. երեսը թթուեցնել, քէն ընել:

Փանկոսած. Փանգոտած:

Փանկոսման. Փանգոտած:

Փառժառուս. (ժարժառուս) ի. է. ներ: Հարսը պատկի արարողու-
թեան սանելու համար երբ հօրենական տունէն դուրս պիտի հա-
նեն եկեղեցի առաջնորդելու, բաժանման ախուր եղանակ մը կը
հնչեցնեն սրափողով (զուռնայ): Այս եղանակը ժարժառուս
կ'անուանեն: Բաժանման ողբերգ:

Փառժառուս փչել. ժարժառուսը երգել, հնչեցնել:

Փիժի. իի. իէ: Ճպուս:

Փիր. 1. կարծր, պինդ. 2. առողջ, ուժով. 3. ամուր: Ուռիցքը
ժիր է (կարծր): Աս ծերը ժիր է (առողջ): Դուռը ժի՛ր գոցը
= դուռը ամուր մը գոցէ:

Փւրնցնել. ն. բ. ցուցի, ցո՛ւր, ցուցէք, ցուցած, ցուցեր: 1. Ճիշդ
ժամանակին հասցնել բան մը. 2. ճիշդ ժամանակին գործերը
ուարատել, ուրիշ գործողութիւն մը ընելու համար:

Փւնիլ. բ. չ. ժմայ, նար, նաւ, ժմիր, ժմէք, ժմած, ժմեր:
ժամանել, հասնիլ, ճիշդ տանին հասնիլ: Ուրիշ աւիթներով
կը գործածուի հասնիլ բայը, քաղաքը հասայ, մարդուն հա-
սայ եւն:

Փուս. 1. Անգամ, հեղ. 2. ճայ. 3. ժամանակ, պահ:

Փուս մը. Անգամ մը, հեղ մը:

Փուր. իւղ: Ըս տպուրը անժուրը ը=իւղոտ չէ:

Փուրել. Կերակուրի մը իւղը բուլական ըլլալ:

Փրել. ն. բ. ժրիմ, ես, ը, ինք, էք, են. ժրեցի, ցիր, եց, ժրը՛,
ժրեցէք. ժրած, ժրեր: 1. Ամուրցնել. 2. համարձակիլ, յան-
դգնիլ. ամչնալը մէկդի դնել: Ըս մաքրինին գամը ժրը օր
լաւ բանի: Էրեսս ժրեցի (համարձակեցայ):

— Էրեսս ժրել. Չամչնալ. համարձակիլ:

Փրիլ. 1. Ապաքինիլ. 2. ուժովնալ:

Փրման. ժրած, ուժովցած:

Փրուորիլ. չ. բ. ժրուորայ, րար, աւ, ժրուորիր, ժրուորէք, րած,
րեր: Ապաքինիլ, կազդուրուիլ, ուժովնալ:

Ի.

Ի. Ինի:

Իլիկ. Իլիի, Իլիէ, Իլիընի, Իլիընու: 1. Բուրդ մանելու պարզ գործիք մը, որ կը բաղկանայ՝ գլխուխէ մը, կեռէ մը, և պոչէ մը: 2. Մարմնայ մէջ դանուած ծուծաւոր ոսկոր:



Իննիբ. Սովորականէն քաղցր ու կլոր թուզ մը, որ ճերմակ կ'ըլլայ: Թուզ բառը ընդհանուր գործածութիւն մը ունի:

Իննիբ. Տեսակ մը թութ:

Ինչխէ. Որչափ:

Ինչսուբ. Ինչպէս:

Ինչտել. Ինչպէս:

Իշկանկառ. Վայրի կանկառ, մեծ գլխուխով և երկայն փուշերով, զոր էշերը միայն կուտան: Տես խաւխազ:



Իթբուբ. Տեսակ մը թութ, զոր չեն ուտեր: Անկէ միայն օղի կը հանեն:

Իւլար. Ի՛ իշու պէս:

Իտուկ. Փոքր էշ:

Իրան. Իրեն:

Իրանց. Իրենց:

Իշկանկառ



Իշխաւող

Իշխաւող. Իշխաղող, հաղարջ:

Իրեփուկ. Երեք տերեւեան աւուռոյս:

Իրեփ. Երեք:

Իրեփ. Իրքուն, իրքէն, իրքերը, իրքերուն: Ա-
 նորոշ անուն մը որուն ուղղական հոլովը
 թէ անձերու և թէ իրերու համար կը գոր-
 ծածուի. իսկ միւս հոլովները սովորապէս
 անձերու տեղ կը դրուին: Այսինչ, այնինչ, բանը...: Ծօ',
 կրպօ', իրքը հոս բեր=այսինչ բանը հոս բեր: Մենք իրքոնց
 տունն էինք...: Այսինչներու տունը:



Իրեփուկ

Ինճուր. Իճաոր, իճչպէս:

Իրկուն. Իրկուան, իրկուընէ, իրկուընով. իրկուըներ կամ իրկուը-
 նիր: Երեկոյ:



Լ.

- Լիւն. Կը կարգացուի լիւն:
- Լակ. Կենդանիներու, մասնաւորապէս շուներու կերակուր որ լոյծ
սպորէ կը բաղկանայ:
- Լակտան. Հողէ աման, որով շուներուն կերակուր կուտան:
- Լական. լակնի. յոգ. լականի: Տաշտ, պղնձեայ սնօթ կերակուր
լեցնելու համար 5-6 անձերու բաւելու չափ:
- Լակել. Տես լկել:
- Լահանայ. լահանի կաղամբ:
- Լահանուկ. Բանջարեղէն մը, զոր խաշօն կ'ընեն:
- Լամլում. Առարկութիւն. անտի առարկութիւն, բաղայք:
- Լամլում ենել. Ծամծմել, որոշ պատասխան չտալ:
- Լայլակ. լայլըկի. յոգ. լըկնի: Արագիլ:
- Լան. Լայն:
- Լանֆ. Լայնք:
- Լանֆին սալ. Հաստնալ, գիրնալ:
- Լար. Առտան՝ մանածէ կամ աղիքէ շինուած:
- Լարել. ն. բ. Յարգարել՝ գործիք մը կամ որոգայթ:
- Լարման. Լարուած:
- Լարուիլ. 1. Լայն նստիլ շատ տեղ գրաւել. 2. յարգարուիլ:
- Լափ. Ծննդաբերութենէ նոր ազատած չորքոտանիներու տրուելիք
սպոր, որ թեփի և գաղջ ջուրի խառնուրդ մըն է:
- Լափայ. 1. Տած. 2. լոյծ կերակուր:
- Լափել. Անյագօրէն ուտել:
- Լեզու. ուի. յոգ. ուրնի: 1. Լեզու. 2. բամբասանք. 3. գրան
կղպանքին մէկ մասը, սողնակ. 4. գետափները՝ ցամաքին մէկ
մասը, որ գետին մէջ կ'երկարի գետին և գերքին զուգահե-
ռական գիրքով:
- Լեզու վաբել. Համոզիչ խօսքեր խօսիլ:
- Լեզուն դուրս ընիլ. Յոգնութենէն շնչասպառ ըլլալ. սաստիկ յոգ-
նիլ:
- Լեզուն դուրս ձգել. Սաստիկ յոգնիլ:
- Լեզուն իրեն փաշել. Լռել, կարճ կապել, մեծին հանդէպ զգոյշ ըլ-
լալ:
- Լեզուն երկնցնել. Յանդգնիլ, լրբութիւն ընել:

Եղուն կարճըյնել. Տես լեզուն իրեն քաշել
 Լեզուանի. Խօսելու լաւ յատկութիւն կամ կարողութիւն ունեցող :
 Լեղենալ. Լեղիի վերածուիլ :

Լեղի աւել. Լեզուահամ բոյս մը, որ
 մէ աւել կը շինեն :

Լենալ. բ. չ. 1. Լեցուիլ. 2. ուռիլ.
 3. թեթեւօրէն գիրնալ :

Լեռ. 1. գոյ. Լեռ. 2. ամ. մեծ, ամ-
 հագին. լե'ւ մի մարդ եւ եղեր
 = շատ մեծցեր ես :

Աւած. Ասուած կը հայի լեռը, կը
 դնը բեռը : Կենդանին ճամբու
 համեմատ կը բեռցուի : Ամէն
 մարդ իր վիճակին ու գիրքին
 համապատասխան ցուեր կ'ու-
 նենայ :

— Լեռնէն գուգայ. Վայրենի է :

Լեասն. լեանի. Նրբահատ քար որով
 գանակներ կամ առ հասարակ
 կարօցներ կը սրեն :

Լեասնել. Սրել :

Լեասնիւր. Յետմտքոր :

Լերդ. Լեարդ :

Լեցնել. ն. բ. 1. Լեցնել՝ աման եւն. 2. գուլպայ մաշած կամ ծա-
 կած տեղերը հիւսելով գոցել :

Լեցուրսիլ. Գիրնալ :

Լեցուրսուիլ. Թեթեւօրէն գիրնալ :

Լեցուիլ. չ. բ. 1. Գիրնալ. 2. ուռիլ՝ մարմնոյ մէկ մասին. 3. կ.
 բ. կամ կրկալ չ. լեցուիլ. 4. թափիլ, հոսիլ :

Լեցուկ. Լեցուած :

Լըխլըխալ. 1. Շարժիլ (առարկայի մը). 2. լըխլըխ ձայն հանել :

Լըխլըխուկ. Դրան սողնակին շարժիլը :

Լըխըրսալ. 1. Դրան շարժիլը եւ լըխլըխ ձայն հանելը, 2. ձերունիի
 պէս քաշել :

Լըխըրսուկ. Դրան, սողնակի, բանալիի ցնցումի ձայն :

Լըխըրցնել. Դուռը, սողնակը, բանալին շարժելով կամ ցնցելով
 ձայն հանել :

Լընկ. Ոտք սրունք. մասնաւորապէս մէկ ոտքի մէկ սրունքի ի-
 մաստով :



Լեղի աւել

— Լրնկ խաղալ. Խաղ մը, զոր կը խաղան մէկ ոտքի վրայ միայն կենալով ու տեղափոխուելով:

— Լրնկ ելլալ. Մէկ ոտքով քալել:

Լրնկի վրայ կայնիլ. Մէկ ոտքի վրայ կանգուն մնալ:

Լրնկըրսալ. Կաղալ:

Լրնկըրսուկ. Կաղ գնացք:

Լրննկիլ. Կաւ: Թարախի, արիւնի, շարաւի թանձրանալը. անշարժ մնալ:

Լժել. Բան մը աւարկայի մը քսելով մաշեցնելը:

Լժիլ. » » քսուելով մաշիլը:

Լժման. Մաշած՝ քար, փայտ, զգեստ:

Լիզել. Լիզել:

— Լիզել պրոթրները. Բանի մը ցանկալ:

Լիզուրսիլ. 1. Ինքզինքը լիզել. 2. բանի մը ցանկութիւն յայտնելու երեւոյթներ ցոյց տալ:

Լիզուրսիլ. Տե՛ս, լիզուըրաիլ:

Լիզուրսուք. Լիզուըրտուք:

Լիլ. Չու, ամորձիք:

Լիսեռ. Ոսկորէ կամ եղջիւրէ շինուած յղկուն ուլուն, որ ջահրակին ճաղին վրայ կ'անցուն, պուքրային և անկճին միջեւ և ճաղին հոյովական շարժումը կը դիւրացնէ:

Լիսեռնիկ. Նոյնը:

Լիբ. Ծանրութեան չափ մը, որ վեց օխայի հաւասար է:

Լիցք. Չմբան պաշար, ուտեստ:

Լիսիկ. Գորտին մէջ դետեղուած շարժական լեզուակ, որ սողնակին ուղղահայեաց դիրք կ'աւնենայ, և անոր փոսերուն մէջ իջնալով պայն փակ վիճակի մէջ կը պահէ:



Լիսիլ. ք. չ. Կաւ, կած: 1. Աւրուիլ, ջրտաիլ, նեխիլ (պտուղի, բանջարեղէնի եւն). 2. տկարանալ, ինքզինքը չի կրնալ բռնել. 3. թափթփիլ:

Լժել. Լժել՝ արօր, սայլ:

Լժկան. Վարող, հերկող կենդանի:

Լկամ. 1. կենդանիի տանձ. 2. դունչ:

Լկել. Ուտել, խմել (շնագգիներու համար կը գործածուի):

Աւած. Ուր օր լիք, հո՛ն կը հաչը: Ուր որ ուտէ, հոն կը հաչէ:

Լման. Ամբողջ:


Լմնալ. Աւարաիլ, ամբողջանալ:

Լմնցնել. Աւարաել, ամբողջացնել:

— Գործը լմնցնել. Գաղանապէս սպաննել:

Լնաղ. Տես լեցնել:
 Լոլախ. Յորդ անձրեւ ու ձիւն:
 Լոլիկ. Ոսկեխնձոր:
 Լոլոզել. Համողել, խաքել:
 Լոխլոխ քաղել. Ցնցումով քաղել (գրասա):
 Լոխլոխ վազել. Հեծեալը անհանգիստ ընող վազք ունենալ:
 Լոկ. Չգրուած թուղթ:

Լողփաս



Լող

Լող. Քարէ մեծ գլան:
 Լողել. Տանիքը, գետինը ամրացնել և յարդարել քարէ գլանով:
 Լողուիլ. Կ. բ. սուս 1. Ամրացուիլ, յարդարուիլ 2. Անկողնին վրայ ասդին անդին թաւալիլ:
 Լողուածք. Լողելու եղանակ:
 Լողուածք ենել. Լողելու անշտտաւթեամբ գրաւուիլ:
 — Լող քաշել. Լողել:
 Լողփար. Լող:
 Լողփաս. լողփրախ: Խաչածեւ իրարու մէջ ազուցուած երկու փայտեր, որոնց ծայրերը կոր են, ու այս կոր մասին մէջ հաստատուած են երկու ցիցեր: Այս երկու սեպերը կամ ցիցերը, կ'անցընեն լողին երկու խարխախներուն կեդրոնին վրայ փռուած մասնաւոր ծակերուն մէջ, և յետոյ պարանով կը պրկեն: Ասով լողը կրնան թաւելեցնել, ուր որ պէտք ըլլայ:

ոռ. Կորածին կենդանիներու կաթովը չինուած սրանիր: Այս կա-
թը կենդանիին ձագերուն չեն կերցներ, որովհետեւ վնասա-
կար կը համարեն: Կենդանին քանի մը անգամ կթելէ յետոյ
կ'սկսին ձագերը մօր ստինքովը դիեցնել:

Լոս. Լոյս:

- Լոս ելնալ. Հրաշքով լոյս ձագիլ:
- Լոս սալ. Լուսաւորել:
- Լոս բլլիլ. Լուսնալ:
- Լոս ենել. Լուսաւորել, լոյս տալ:
- Լո՛ւղ պակսի. Անէծք. կուրնա՛ս:

Լոսնալ. Լուսնալ:

Լուլայ. լուլի. յոգ. լուլանի: 1. Փող հրացանի. 2. թորանօթ:

Լուլիկ. Փռքրիկ սափոր:

Լուսաղբար. Ուխտեաց եղբայրակից: Յարութեան
տօնին ուստուն, մանուկներ կամ պատանի-
ներ որոնք եղբայրանալ ուխտած են, եկե-
ղեցի կ'երթան, և իւզաբերից Աւետարա-
նին ընթերցումէն յետոյ զոյն կը համբու-
րեն: Այս կերպով իրենց եղբայրակցութիւնը
անքակտելիօրէն կնքուած կ'ըլլայ. մինչև
վերջ այլևս անոնք իրարու պիտի չթշնամանան և իրար պի-
տի պաշտպանեն:



Լուլիկ

Լուսաւոր. Կոյր:

Լուսիկ. Կայծառիկ:

Լուսփլիլ. Արշալոյսին բացուելու նշան տալը:

— Աչքը լուսել. Բարեմաղթութիւններ ընել, շնորհաւորել:

Աչքի լուսի երբալ. Նոյն:

Ճագը լուսել. Ճրագին լոյսը արծարծել:

— Սուրբը լուսել. Սրբատեղին մօմ վառել՝ ուխտի համար:

Լոր. Լորամարգի:

Լոճ. Օձառի կաղապար մը:


Լմել. ն. բ. 1. Թրջել. 2. տես լմիկ էնել:

Լմիկ. Հաւկիթի գեղնուցով խառնուած պաղլեղի ալիւր, որով մա-
քուր բամպակը լու մը օծելէ յետոյ խոցառակ ունեցող աչ-
քերուն վրայ կը կապեն երեկոյին պառկելէ առաջ: Յաւը կը
դադրեցնէ:

— Լմիկ ենել. Աչքերը լմիկով դարմանել:

Լսան. Սուր լսողութիւն ունեցող:

Լսուկ. Շուտով լսող:



Հուծ

Հուծ. Հուծ:

Հուծք. Մշակութիւն, երկրագործութիւն, վարուցան:

— Հուծքի երթալ. վարելու, հերկելու երթալ:

— Հուծք ելլալ. Հերկումի սկսիլ:

Հրանոց. Մէկ լիարնոց ծանրութիւն. վեց օխանոց:

Հփլրփալ. բ. չ. Գործ մը յաջողցնելու, կամ բան մը ձեռք ձգելու

համար ամէն միջոցի գիւմել:

Հփլրփուկը եյնիլ. Յաջողելու համար ինչ ընել չընելը չգիտնալ:

Հփրքալ. Անշնորհ խօսիլ:

Հփրքել. Արագապէս ուտել:

Հփրքցնել. Անշնորհ եղանակով ուտել, խօսիլ:

Ի.

- Խ. Խէ բաղաձայնը «Ղ» էն թաւ կը հնչուի:
 Խաբել. ն. բ. 1. Խարել. 2. սակ:
 Խաբրլեել. ն. բ. Համաղել, լսրոյել:
 Խաբոլ. 1. Սաղ. 2. խաբերայ:
 Խաբխրբել. Խարել, համաղել:
 Խազրլ. Մաղոյ հիւսուած առասան:
 Խազրլիլ. բ. չ. լաւ, լած: Չարնուլ, կանճիլ (տերեւներաւ համար
 միայն կը գործածուի):
 Խար. Ծալ:
 Խար խար. Ծալ ծալ:
 Խար Էնել. 1. Ծալել. 2. իրարու վրայ դնել շարել: Կը գործածեն
 նաեւ ծալել բայը, երբ ընդհանուր իմաստով մը արտայայտել
 հարկ ըլլայ: Բայց երբ հաւասար երկու երեք մասերու վե-
 բաժնու գործողութիւնը ուղին հասկնել, այն տակն «խաթ
 էնել» կ'ըսեն, հետք միասին՝ երկու երեք թաւակոն անակոն-
 ներն ալ միացնելով: Ասոր տեղը կը գործածեն նաեւ «ասկ»
 բառը, երկու տակ էնել = երկու խաթ ընել = երկու մասերու
 վերածել:
 — Երկու խար ըլլիլ. 1. Երկուքի վերածուիլ. 2. մէջքը դաւիլ յոգ-
 նութեան հեռեանքով:
 Խաբել. բ. ն. եց, ած, եր: Խայթել՝ սողուններու և միջատներու
 խայթելուն համար կը գործածուի:
 Խաբիլս. Կաթնեղէն, մածուն, կարագ, թորախ, սեր եւն:
 Խաբման. Խայթուած:
 Խաբուածք. Խայթուածք:
 Խաբուիլ. կ. բ. Խայթուիլ:
 Խաբուն. Մեծ տիկին, տանախիին:
 Խալար. Նուէր, պարգեւ, զոր կուտան նորաստակ հարսին կամ
 նշանուած աղջկան, մանչին ծնողքի կողմէն աստուարներու
 օրերուն:
 Խալարել. ն. բ. Նշանուածներու նուէր պիկել, աստուարի տախ-
 թով:
 Խալք. Ծանր սխալ, (շատ գործածական չէ այս բառը):
 Խալքախ. 1. Բեռ կրող էշերու համար սախտակէ կամ ձագերէ շին-

ոււած համեա. 2. ւծ. կին՝ որ լաւ համբաւ չունի, խեռ, տն-
հնազանդ :

Խալիս. Ուրիշ, օտար :

Խալկիկ. Դաստակ :

Խալվար. 1. Հանդարտ, խաղաղ. 2. ամայի, անմարդի :

» կենալ. Հանդարտիլ, անկարգութիւն ընելէ դադարիլ (մա-
նուկներու համար կը գործածուի) :

Խալվաթնալ)

Խալվրթնալ) մ. բ. Խաղաղիլ, ամայանալ (փողոցներու, դաշտերու) :

Խալվրթիլ)

Խախայ. Ազաւա :

— Բոշի խախայ. Սպիտակ ու սև փետուրներով և երկայն պոչով
ազաւա :

Խախուս. 1. Խախտած. հին, փլչելու վիճակին մէջ գտնուող շէնք.

2. Բան մը անհաստատ կերպով տեղ մը դրուած :

Խախ-ել. Տեղէն շարժել :

Խախսրման. Տեղէն շարժած. բան մը որ իր բնական դիրքէն դուրս
կը գտնուի՝ դիպուածի մը հետեւանքով :

Խախիլ. Տեղէն շարժիլ (յօդուած) :

Խած. Պատու :

— Խած մը. Պատու մը :

Խածուկ. Խածուած, կերուած (մասամբ) հաց եւն :

Խածուց մը. Խած մը :

Խածնլ. ն. բ. 1. Խածնել. 2. սիրել՝ կին, աղջիկ, բան մը :

— Աչքը խածաւ. Սիրեց, հաւնեցաւ :

Խածուիլ. Խածնուիլ :

Խակ. Տնա պտուղ :

Խաղ. ու, է. 1. Պար. 2. խաղ, զբօսանք. 3. հենգութիւն, խա-
բէութիւն. 4. սիրերգ, ոչ-կրօնական երգ :

Խաղ ըսել. Երգել :

Խաղալ. բ. շ. ցաւ, ցած. 1. Զբօսուել. 2. պարել. 3. մարմն
մէկ մասին տկամայ շարժիլը :

— Խաղ խաղալ մեկու մը գլխուն. Մէկը խտրել. որոգայթի մէջ
ձգել :

Խաղ ըյնիլ. 1. Պարելու սկսիլ. 2. գործի մը մէջ մտնել առանց
հրաւիրուելու. 3. ջղաձգութեան հիւանդութիւն ունենալ :

— Աչքը խաղալ. Աչքին զանազան մասերուն ինքնաբերաբար շար-
ժիլը, որ բարի կամ չար դէպքի մը յայտարար նշանը կը
համարուի :

Խաղբ. Հանդայց :

Խաղբ ենել. Հանկուբցի, հանդոյց ընել:

Խաղբ ըլլիլ. Ինքնիրեն հանկուբցուիլ:

Խաղցնել. *բ. ն. և սնց.* 1. Խաղցնել, զրօսցնել. 2. Խաղի իբր ընկեր ընդունիլ. 3. պարել տալ. 4. Չզամագութիւն ունենալ: Իբր թէ չարագիններ կը հանդիպին ենթակային, որ Չզամագական գալարումներ կ'ունենայ, յանկարծ աչքերուն գունդերը անբնական թաւալումներ կ'ընեն, հիւանդը գետին կ'իյնայ, ցնցումներ կ'ընէ անդիտակից, բերանը կը փրփրի, և այս վիճակը մէկ վայրկեան կը տևէ: Իբր անմիջական ու միակ դարման, գլխուն վրայ ջուր կը սրահեն, և կ'աղօթեն վերան:

Գետերը, առուները, ձորերը, մասրենիի արմատներուն մօտերը՝ այդ չար սգիններուն յաճախութեան վայրերը կը համարուին. ուստի՝ այդ հիւանդութեան ենթակայ եղողներ ըզգոյշ կ'ըլլան այդ վայրերէն անցնելէ, որքան որ կարելի ըլլայ:

Խաղբ. 1. Խայտատակութիւն, 2. Խայտատակ:

Խաղբ ըլլիլ. Խայտատակուիլ:

Խաղբ ենել. Խայտատակել:

Խաղբ ութին. Խաղքութիւն:

Խայրան. Վեց կօթը դերձաններով հիւսուած աստան:

Խայրան գործել. Հիւսել:

Խայրայ. Թրքական հին թղթադրամ մը:



Խամ. 1. Համբակ. 2. չջրուած կակուղ երկաթ:

Խայթան

Խամ ութին. Անիտրձութիւն:

» Բաշել. Անիտրձութիւն ունենալ:

Խամ ծին. Կենդանիի մը առաջին անդամ ծնիլը:

Խանկառ. 1. Չկրտուած չներքինացուած կենդանի, եզ՝ նախազ կեն.

2. անմաքրելի աղա, աղա որ զգեստներուն վրայ անլուծելի կը դառնայ:

Խանկո եցնել. *ն. բ.* 1. Կերակուրի մը եփելու կանանին հակառակ ձեւի հետեւելով, զայն տելի կարծրացնել. 2. աղտը զգեստներուն վրայ հաստատել:

Խանկո իլ. *բ. չ. ուս.* 1. Կերակուրի մը եփելու ընդունակութիւնը կորսնցնել. 2. աղտին լաթերու վրայ հաստատուիլը:

Խանձ. Խանձ, այրուածք՝ կերակուրի, մազի, բուրդի:


Խանձել. *բ. ն. աւ.* 1. Այրել՝ կերակուր, մազ, բուրդ. 2. չափէն տելի տաքցնել:

Խանձուման. Խանձուած, այրած:

Խանձիլ. 1. Այրիլ. 2. չափազանց տաքնալ:

- խանձրակցել. Այրել, կերակուրը :
- խանձրակիլ. Այրել, (կերակուրի) :
- խանձրահոս. Խանձրահոսի հոս :
- խանձուք. Խանձուք :
- խանգակ. Խանգակ :
- » զարնել, բանալ, փորել. Արտերուն եզերքները խոր ասու-
 ներ բանալ. տակիս կ'ընեն, արտերուն ճահճային մասը չոր-
 ցնելու համար, առելորդ ջուրերը սուղուելով կը հալաքուին
 փոսին մէջ :
- խանցրկսել. Շատ մը խանցակներ փորել :
- խաւ. Այծի, ոչխարի եզան. հորթի եփուած սաք, դլուխ, քու-
 դիրթ :
- խաւ օգել) Խաչ եփել :
- խաւ եփել)
- խաւել. ն. բ. աւ, եր, ած : 1. Խաչել, 2. խաչօն ընել, բանջարե-
 դէները խաչել առանց իւղի կամ միսի, 3. սաստիկ սաքցը-
 նել, 4. չարչարել, նեղել :
- խաւթրփել. 1. կերակուրը այրել, 2. լաւ չեփել կամ թերի եփել,
 3. նեղել, չարչարել :
- խաւթփիլ. 1. Խաչիլ, լաւ չեփիլ, 2. սաստիկ սաքնալ :
- խաւիլ. 1. Սաստիկ սաքնալ, 2. խաչիլ, եփիլ :
- խաւխաւ. Բանջարեղէն մը :
- խաւխրեւել. Հարեւանցի մը խաչել :
- խաւխրեիլ. 1. Հարեւանցի մը խաչիլ, եփուիլ, 2. Այրիլ, մրկիլ :
- խաւխրոսել. Տես խաչխրչել, թերի կերպով եփել :
- խաւխրոսիլ. Թերի կերպով եփիլ :
- խաւման. Խաչուած :
- խաւեզուր. Լուացքի ջուր, որով լաթերը կ'եռացնեն :
- խաւօն. 1. Բանջարեղէն որ խաչուելու համար պատրաստուած է,
 2. խաչուած բանջարեղէն :
- Խաւօնջուր. Խաչուած բանջարեղէնի ջուր :
- Խաւօնցու. Բանջարեղէն որ իբրեւ ձմրան պաշար կը պահուի :
 — Խաչ հանել, Խաչակնքել :
- Խաչբրուկել. Ծնօաները իրարու հետ սեղմել, կարկամել :
 — Արդանին խաչբրուկել. Աղանները իրարու հետ սեղմել, կարկա-
 միլ :
- խաչբուռ. Արտի մը հնձուած մէկ որոշ մասը :
- խաչկոզ. Տեսակ մը սեւ խաղող, որուն ոչկոյզը խաչածեւ կ'ըլ-
 լայ :

Խաչ. ի. եր: Տանիքին մէջակող թող-
 աւած լուսամտաւք ծածկազ քա-
 աակուսիներու ամբողջութիւնը:
 Այս քառակուսիները հասա ու-
 չորս սրբատաշ երեսներով շին-
 աւած են, և մեծութեամբ տա-
 տիճանաբար իրարմէ կը սար-
 բերին: Մեծագոյնին մէկ կողմը
 տանուազն մէկ մէթը երկայնու-
 թիւն կ'ունենայ: Իսկ վերջին
 քառակուսին մէկ կողմին ա-
 ուսկողոյն երկայնութիւնը 45 սանդիւմէթը միայն կ'ըլլայ:
 Այս քառակուսի շրջանակները թաւով չորս են. նախ մեծա-
 գոյնը կը գամուի գուհաններուն վրայ: Ասոր վրայ իրմէ
 անմիջապէս փոքրը կը գամուի, և այսպէս յաջորդաբար բե-
 շւաններով իրարու վրայ կը հաստատուին այնպէս որ ներքեւի
 քառակուսիները յաջորդաբար ութանկեան ձեւը ստանան:



Ծիծեանակները յաճախ այս խաչքին ներքեւը կը շինեն իրենց բոյնը:

Խաչքը կապել)
 Խաչքը շարել, շինել)

Խաչքաբ. Քարեր, սրոնց վրայ խաչքեր փորուած են:

Խաչքուակ. Գուլպայի գարգ մը:

Խառախուռայ. 1. Երազել՝ խառնիխուռն
 անցքերով լի. 2. զաւանցում հի-
 շանդներու՝ ջերմի ազդեցութեան
 տակ. 3. ո՛չ-բարենշան գէպք, սե-
 սիլք:

Խառախուռաներու մեջ ըլլիլ. 1. զաւան-
 ցել. 2. երազել, վրդովեալ քուն
 ունենալ:

Խառխըռել. Խառնել՝ հոս հոն բան մը փըն-
 տակու համար:

Խառնակիչ. Խառնարար. քառ:


Խառնել. ն. բ. 1. Խառնել. 2. յուզել, խու-
 վութիւն սերմանել. 3. թնճկեցնել (մազերը):

Խառնակուրիս. Խառնութիւն, քառութիւն:

» ձգել. Խառնութիւն սերմանել, գժտեցնել:

Խառնակչութիւն. Խառնարարութիւն:

» կնել. Խառնարարի գեր կատարել:



Խաչքուակ

Խառնիսքից. 1. Հին քին, մանածին տախչները, թելերը իրարու հետ
խառնելով հիւսելու գործողութիւնը դժուարացնել. 2. մա-
զերը խառնելով թնճկեցնել:

Խառնէսքիման. թնճկած:

Խառնուման. Խառնում:

Խառնել. ն. բ. 1. Քերել. վայրը, երկաթը խարանել. 2. կարծր
կամ մազահիւս շինուած պղեստերուն մալ մինին քսուելը:

Խառնոյ. Խարտոյ. սղզարատեայ նըբաստմ:

Խառնոցիլ. Խարտոցով քերել վայր, երկաթ եւն:

Խառնոցուիլ. Քերուիլ:

Խառնուկ. Խարտում:

Խառնուք. Խարտումքի թեփ:

Խառ. 1. Անուշ, ոչ-դառն. 2. հարազատ՝ դաւակ, ծնող, եղբայր.
3. հուրր, ընտիր (ալիւր):

Խառար. Կտաւները շրէզէն հանելու և սպիտակցնելու գործողու-
թիւն:

— Խառար դնել. Կտաւները ճերմկցնելու համար «մայխ»ի մէջ դը-
նել:

— Խառար ենել. Կտաւները ճերմկցնել:

Խասենալ. բ. չ. Անուշնալ. դառնութիւնը տնցնել:


Խասեցնիլ. ն. բ. Անուշցնել. ծիրանի կորիցին միջուկը մախրա-
ջուրով եռացնելով դառնութիւնը տնցընել:

Խասեցուել. կ. բ. Մոխրաջուրով եռացուել:

Խասի. Անուշ, ոչ-դառն. ծիրանի ոչ-դառն միջուկ:

Խարիս. Խարիսիս:

Խարիսայ. Աղօրիքներու մէջ գերան
մը որուն մէջ տնիւին ստորին
ծայրը կ'անցուի: Խարիսիս: Ա-
սոր ներքեւը կը գտնուի ծայրը
ուրիշ գերանի մը, որ, շեղակի
կը բարձրանայ աղօրիքին մին-
չեւ երկրորդ յարկը: Ասոր վե-
րին ծայրին վրայ երբ ճնշում
է գործ գրուի, ստորին ծայրը
խարիսան վեր կը բարձրացնէ,
ուսով տնիւը կը բարձրանայ, և
իր հետ կը բարձրացնէ նաեւ
վերին երկանաքարը, և ալիւրը
այնքան հուրր չըլլար: Ընդհակառակն, ճնշումը երբ հուս-
զի, խարիսիսը և տնիւը վար կ'իջնեն, և վերին ու ստորին



Խարիսայ

Երկանաքարերուն անջրպետը կը նուսպի և ալիւրը նուրբ կ'ըլլայ:

Խարխաւն վերցնել. 1. Սոչոր աղալ. 2. Խնու ըլլալ:

Խարխաւն իջեցնել, ցածցնել. 1. Մանր աղալ. 2. լեզուն կարճ կուտի:

Խարխալէն. Խարկուած դմակի մնացորդ:

Խարսել. ն. բ. Սասար ընել:

Խարսրման. Ճերմկացուած:

Խարսուածք. 1. Սասար ընելու գործողութիւն. 2. Եզանակ:

» Կնել. Կառու ճերմկցնելով դրողիւ:

Խարսալ. Բոյս մը:

Խարս. 1. Գունուոր կառուի տեսակ մը զոր տեղացիները կը հիւսին գոյնզգոյն գերձաններով: Ունի, երկայնքին վրայ զուգահեռական գիծեր: 2. Գունագեղ մորթով ձուկ մը:

Խարս գործել. Սասար հիւսել:

Խարսուտիկ. 1. Գոյնզգոյն. 2. սուռ ճերմակ շերտերով զարդարուն իր' մորթ:

Խարս. 1. Կերպասին երեսը ծածկող ծուէններ. 2. արեթ. գիւրաւստ նիւթ մը զոր կը շինեն՝ ծառերու վրայ գոյացած մամուռման այտուցները մոխրաջուրի մէջ եփելով: Նոյն կերպով արեթ կը պատրաստեն նաեւ քուրջի հին կտորներէ:



Խարսալ

Խարսնծիլ. Բանջարեղէն մը, որ միայն լուսներու մէջ կ'աճի, հաճելի թթուութիւն մը ունի և մողեսի իրանին կը նմանի, եղջերուի եղջիւրներուն պէս ճիւղաւորումներով ծածկուած:

Խարսրծիլ. Նոյն:

խաւխաւգ. Փշուտ խտտ մը, զոր
էշեր կը սիրեն ուտել:

խաւուրմայ. Խարկուած միտ:

Խել. Նրբանցը, որով տան մը
ձմեռնային բոլոր բաժա-
նումները՝ դարդանին հետ
հողորդակցութեան մէջ
կ'ըլլան: Ասիկա՝ ներսի-
տունը, աստուը, մարագը
և դարդանը իրարու կը
մխայնէ:



Խաւխաւգ

Խել մը. 1. Շտտ. 2. շտտ եր-
կար. խել մի օր, խել մի
տարի եւնեքկար օր, եր-
կար տարի:

Խելաբոխ. ր. չ. Նուազումէ յետոյ խելքը գլուխը գալ. ինքզինքը
գտնել:

Խելաբրոցնել. Խելքը գլուխը բերել:

Խելաբրուման. Ելքը գլուխը եկած, ինքզինքը գտած:

Խելացը ըլիլ. Խելքը կորանցնել, շուարիլ:

Խելառ. Խենդ, խենդուկ:

Խելըռիլ. Խելքը գլխէն երթալ. ինքզինքը կորանցնել:

Խելֆր գլխէն թոցնել. Նոյն:

Խեչափարս. Խեչեփառ:

Խեր. 1. ամ. Բարի. 2. գոյ. նուրիս ին կենդանիին տաղին անդամ
կթուած կամ զոր տաքցնելով կը կարեն ու կ'ուտեն:

Խեր ըլիլ. Բարեյաջող ըլլալ:


Խել. Խենդ, փախուկ:

Խելնալ. Խենդենալ, փախուկնալ:

Խելուկ. Փախուկ:

Խելուկնալ. Փախցնել, խենդենալ, թեթեւութ իւններ ընել:

Խզար. Մեծ սղոց սրով
 տախտակ կը շինեն:
 Խզարեղ. Փայտը սղոցելով
 կտրել:
 Խզարուխ. Սղոցուել:
 Խզարուհ. Սղոցումքէ ա-
 աջ եկամ փայտի
 թեփ:



Խզար

Խզարեղ. Կտրանել սղոցելով:
 Խզար Բաւել. Սղոցելով զբաղել:
 Խզեն. Մատան:
 Խզիմ. Արմաթիքին մէջ դանուած անպէտ հատիկներ, սղոցիկ:
 Խզմայ. Խզմի: Արմաթեաց փոքրիկ զարդ մը, զոր բոշայ կ'անուանը
 իրենց քիթին ստորին վրայ կ'անցնեն:
 Խզմայել. 1. Բիթը խզմայ սնցնել. 2. ծակծկել:
 Խզմասել. Ծակծկել:
 Խզնել. Մատանի մէջ ամփոփել:
 Խզսել. 1. Պատակել. 2. մեծ մեծ ջարդել:
 Խեչ. Քալ:
 Խըթխըթ. Խաղաուք:
 Խըթխըթ ըլլիլ. Խաղաուքու ենթակայ ըլլալ:
 Խըթխըթալ. Խաղալի:
 Խըթխըթցնել. Խաղանցնել:
Վարդեվար. ի. վարդավառ:

Վարժապետ. ի. նի. Ուսուցիչ և գաստիարակ: Միակ բառը որ այս իմաստներով գործածուած է՝ Յետոյ, բողոքականութեան շըրջանին հաղուադէպօրէն «պատուելի» բառը գործածուած է ստոր հետ նոյն իմաստով:

Վարպետ. ի. նի. Շինութեանց մէջ աշխատող գործաւորներու պետը, փոխ ճարտարագետ:

Վարի դուռ. Գիւղական տուները երբեմն երկու դուռ կ'ունենան, մէկը բակին վրայ կը բացուի որ փողոց հանող դուռն է, միւսը տանիքներու (ցած) վրայ կը բացուի կ'ըսուի նաեւ վերի դուռ կամ չարաբխի դուռ, որ տանիքէ տանիք տանելով փողոց կը հանէ: Ասիկա կ'ունենան այն տուները որոնք լեռան մը կողին կրթում են:

- Վարի տուն. Չմեռնային տուն. կ'ըսեն նաեւ ներսիտուն:
- Վարնոց. Ստորին:
- Վա՛յ ինձիս. Մե՛զք, ափսո՛ս: Երբ մէկու մը վրայ մեղքնան, այս ձայնարկութեամբ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն:
- Վայնասուն փրցնել. Վիճակին մասին դժգոհութեան աղաղակ բարձրացնել:
- Վե՞վ. Ո՞վ:
- Վո՞վ. Ո՞վ:
- Վերի դուռ. Յաժ տանիքներու վրայ բացուող չարտախի դուռ. տե՛ս՝ վարի դուռ:
- Վերնալ. բ. չ. ցաւ, ցի՛ր, ցէք, ցած, ցեր. 1. Բարձրանալ. 2. ստուկիլ. 3. անհետանալ:
- Վերցնել. ն. բ. 1. Բարձրացնել. 2. գողնալ. 3. անհետացնել. 4. մեռցընել. 5. փոխադրել, տեղափոխել. 6. փառաւորել:
- Վերնակ. Առաստաղին հետ հաստատուած ձող մը, որ իբր յենարան կը ծառայէ ներքնակէն բարձրացող հենքին:
- Վերվեր նետուիլ. Ուրախութենէն չկրնալ ինքզինքը զսպել:
- Վերցուիլ. կ. բ. ուսու. 1. Վերցուիլ, բարձրացուիլ. 2. անհետացուիլ. 3. փոխադրուիլ, տեղափոխուիլ. 4. սատկիլ. 5. տունուիլ:
- Վերցուելու. Ստակելիք մարդ:
- Վզուկ. Ուռենիէ շինուած լեզուակաւոր նուագարան սրինգի նմանութեամբ:
- Վզուկ հանել. Սրինգ շինել ուռենիի թարմ ճիւղին կեղեւովը: Ուրոշ երկայնութեամբ ճիւղ մը կը կտրեն, անոր վրայ, նախապէս քանի մը ծակեր կը շինեն սաշելով. յետոյ, առանց ճմլելու, զմեկին կոթով կը ծեծեն ամէն մասերուն վրայ, որպէսզի կեղեւը փայտէն անջատուի: Այն ատեն մատերու թեթեւ ճնշումով հոլովում մը տալով, փայտը և կեղեւը կը բաժնուին իրարմէ, զգուշութեամբ, որպէսզի կեղեւը չսրտուի, փայտը կը հանեն մէջէն: Կեղեւին մէկ ծայրը կը քերեն այնպէս որ կը մնայ ներքեւի բարակ մաշկը: Ասիկա կ'ըլլայ ձայնահան լեզուակը, որ փչող շնչին տակ թրթռալով ձայն կը հանէ, բացուած ծակերը կուտան ձայնաստիճանները:
- Վզուկ փչել. Վզուկով նուագել:
- Վզվրգալ. միողէմ. Շունի պէս վըզ վըզ ձայն հանել:
- Վզվրգուկ. Շունի լալու ձայն:
- Վզրրքալ. բ. չ. 1. Կալ, մանուկներու համար կը գործածուի Ա. դէմքերը չեն գործածուիր. 2. պարսաքարին նետուած ատեն ձայն հանելը. բզգալ:

Վզրրցնել. ն. բ. 1. Արձակել, նետել՝ քար, գնդակ. 2. լացնել:

Վժիկ. վժկի. Ծակուած փոքրիկ փայտ մը, որ անցուած է առաստնի մը վրայ, ասոր երկու ծայրերէն կը բռնեն նախ առանց պրկելու և փայտը՝ քանի մը շրջան ընելու պայմանաւ կը թաւալեցնեն, առասանը կ'ոլորուի, յետոյ երկու ծայրերէն կը պրկեն ու կը թուլցնեն յաջորդաբար, փայտը անիւի պէս սաստիկ արագութեամբ կը դառնայ վըժ վըժ ձայն հանելով:

Ասիկա աղաներու խաղալիկ մըն է:

Վժալ. բ. չ. Վըժ վըժ ձայն հանել:

Վժվժալ. նոյն:

Վժվժուկ. վժալու ձայն:

Վլվըլուկ. Աղմուկ, անհամեմատ տարածայնութիւն խնդրոյ մը նըկատմամբ:

Վլվըլուկ հանել. Աղմուկ բարձրացնել:

Վնկրսալ. բ. չ. Կաղկանձել, լալ:

Վնկրսուք. Կաղկանձիւն:

Վնվնկալ, Հարուածի ազդեցութեան տակ կաղկանձել:

Վրայի քար. Աղօրիքի շարժուն կամ դարձող քարը, դարձող երկանաքար:


Վրայ սալ. 1. Գրգռել. 2. հաւաքել, ամփոփել (կալ եւն):

Վրայ բերել. Աւելցնել (խօսք):

Վրան իյնալ. Հետաքրքիր ըլլալ:

Տ.

- Տ. Տիոն: Տիուն հնչումով: Կցորդ՝ Գ, Թ և Ծ առաւելու:
- Տա՛. Տղա՛յ, Բալուի քաղաքին միայն յատուկ է: Գիւղացիները կը հեզնեն, կը ծաղրեն և կ'արհամարհեն ասոր գործածութիւնը: Գուցէ՛ «տղայ» բառին սղուածն է:
- Տա՛ եօ՛. Ծօ՛, տղա՛յ (քաղաքացիներու յատուկ):
- Տալ. բ. ն. տուի, տո՛ւր, տուած, տուեր. 1. Տալ. 2. վճարել, հատուցանել. 3. անցողականի վերածող օժանդակ. 4. գոյ. կնոջ մը ամուսնոյն քոյրը:
- Տախսրկուկ. Գուլպայի զարդ մը:
- Տակ. 1. Ներքեւ. 2. ծալ (թուղթը կամ պատասաւը չորս տակ ըրաւ). 3. ճակնդեղ:
- Տակ սակ ենել. Ծալել:
- Տակի բազուկ. Ճակնդեղին տերեւները:
- Տակեն մսաւ վրայեն ելաւ. Ամբողջովին սպառեց (հարատութիւն), մսխեց:
- Տակի ջուր. 1. Խաշուած ճակնդեղի ջուր. 2. անհամ ըմպելի:
- Տակի քար. Աղօրիքներու ներքեւի քարը, որ անշարժ է:
- Տանկնակ. Պատուտակածեւ ներկուած բիր: Ծաղկազարդի օրը մասնաւոր կեզեւում բիրեր կը շինեն և զայն կարմիր ներկով կը ներկեն պատուտակածեւ, մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը:
- Տանկրնակ կոուրցնել. Ծաղկազարդի նախորդ երեկոյին բոլոր տաճկնակ ունեցող պատանիներ եկեղեցիին մօտը կը հաւաքուին: Մէկը իր տաճկնակը շեղակի կը կրթնցնէ պատին, ուրիշ մը իր տաճկնակովը կը զարնէ անոր մէջտեղին. որ մէկը որ կտարի, այդ կտորները եկեղեցիին կը թողուն որպէսզի անոնցմով Ծաղկազարդի մասը եփուի:
- Տանկնալ. բ. չ. Սաստիկ բարկանալ:
- Տանկրցնել. ն. բ. 1. Մէկը կրօնափոխ ընել. 2. սաստիկ բարկացրնել:
- Տաղ. 1. Եկեղեցական երգ. 2. կրակով (տաքցուած երկաթով)



Տախսրկուկ

մարմնոյ վրայ կազմուած դրոշմ. 3. ասեղով մարմնոյն վրայ ծեծուած պատկեր:

Տաղ դնել. 1. Ասեղով մարմինը ծակծկելով դրոշմել. 2. չմուսնալ:

Տաղ զարնել. Տաքցուած երկաթով մարմինը այրել նշան դնելու համար:

Տաղել. ն. բ. 1. Այրելով նշան մը դրոշմել մարմնոյն վրայ. 2. նեղել, չարչարել. 3. իւղը այրել սոխով միտսին, որպէսզի իւղին կծուութիւնը անցնի:

Տաղուածք. Դրոշմ, այրուածք:

Տամբ. տամբի. Կարգով մէկուկէս վանկ: Օրծեռնակի նման թուշուռ: Ասոնք գարուէնը կուգան, ձագ կը հանեն և ամառը չվերջացած կ'երթան:

Տամբր. (Երկու վանկ) երկաթ. կը գործածուի նաև յաճախ էրկաթ բաւը:

Տանել. ն. բ. 1. Տանիլ. 2. հանդուրժել. 3. չնախանձիլ: Ընի վիսչի տաներ = ան ինձի կը նախանձի:

Տան վրայ երթալ. Հարանցուին մարանց որպէս մէկ անգամը ըլլալ, և իբր այն ամուսնանալ:

Տապակ. տապկի. Տապակ:

Տապկել. ն. բ. 1. Տապակով եփել. 2. խտրել:

Տապկուիլ. 1. Խտրելուիլ. 2. տաւապիլ. 3. ինքնորաւ ըլլալ:

— Իր եղովը տապկուիլ. ինքնորաւ ըլլալ:

Տապղին. Ստեպղին:

Տաւայ. այի, անի. 1. Մեծ հայր. 2. քալելու այլեւս անկարող ծերունի:

Տանսիկին. Տան երիցազոյն կամ աւագ տիկինը, որ կը հրամայէ հարաներուն: տիկնոջ:

Տաւառ. ի. Տաւառակ, փուշ:

Տաւել. ն. բ. 1. Տաշել. 2. կոփել, քար կոփել. 3. մէկուն կողմը բռնել:

Տաւուք) Տաշեղ:

Տաւեղ)

Տաւման. Տաշուած:

Տաւեղող. Դող կամ տենդ որ տարի կը տեւէ:

Տաւման. Դարման:

Տաւուկ. Վէրք մը, որուն բուժումը տարի մը կը տեւէ, եթէ իր վիճակին թողուի: Բայց տեղացիները կապոյտ քարը, պղնձի ծծմբատ կը գործածեն իբր միակ և լաւ արդիւնք տուող դարման:

Տաւուենակ. 1. Միամեայ. 2. տես տարուկ:

Տարս. 1. Գէշ հիւանդութիւն, Գողիտական ախտ. 2. վիշտ, ցաւ, տառապանք:

Տարս ըլլիլ մեկուն. 1. Մտանդութիւն, տագնապ պատճառել մէկուն. 2. տագնապալից հետաքրքրութիւն պատճառել: Ինչո՞ւ ընտր էրթալը՝ քիզի տարա էլաւ:

Տարս առնել. Գողիտական ախտով վարակուել:

Տարսդնել. թ. ն. 1. Յրուել, հող, յարգ, կենդանի. 2. քանդել, աւրել, առն, պարտէզ եւն. 3. իրարմէ փրցնել, անջատել, թերթ:

Տարսդնուիլ. չ. թ. 1. Յրուել. 2. իրարմէ բաժնուել, ցիր ու ցան ըլլալ:

Տարսոս. Ախտաւոր, Ֆրանկախտաւոր:

Տարսոսիլ. Ախտաւորիլ:

— Ասուած սար: սայ, սարման չի սայ. (Անէծք) Չարաչար սատկի անբուժելի հիւանդութեամբ տառապելով:

— Մարդ մարդու տարս չի գիտեր, կէս գիտերուն ժամ կը կանչը. Մեծ մեծ բաներ սպասել մէկէ մը, առանց անոր վիճակը նկատողութեան առնելու:

Տափ. Տափակ:

Տաւար. տաւրու, տաւրնի. կենդանի:

Տափիլ. թ. չ. 1. Պահուըտիլ. 2. հարանցուն, երբ տունէն դուրս, իր նշանածին կամ անոր մերձաւոր ազգականներէն մէկուն հանդիպի պատահմամբ, կը նստի և գողնոցով գլուխը կը ծածկէ մինչեւ որ անոնք հեռանան: Ասոր կ'ըսուի տափիլ:

Տափուկ. 1. Տափած. 2. տափակ:

Տափման. Պահուըտած:

Տափսեփուկ. Պահուըտուք:

» խաղալ. Պահուըտուք խաղալ:

Տափսալ. Տափակ քար եւն:

Տափարլուկ. Նոյն:

Տափարլցնել. Տափակցնել:

Տափարլիլ. Տափակնալ:

Տեղ. 1. Տեղ. 2. անկողին:

Տեղաց տեղ. Անկողինները շարելու մասնաւոր տեղ:

Տեղանը ձգել. Անկողինները փռել, պատրաստել:

» վերցնել. Անկողինները ժողվել, ամփոփել:

Տեղք ենել. Գողտնիք մը երեւան հանել: Գործի մը, կամ բամբասանքի մը հեղինակը գանել:

Տեղ ենել. Տեղ պատրաստել:

Տեղացի. Երկրորդ անգամ ամուսնացած կին:

Տեղս. Տուղաթի բոյսը:


Տեղսի ծաղիկ. Տուղաթի ծաղիկ: Ասիկա խաչելով ջուրը կը խմեն հազը ամօքելու համար:

Տեներ. տենրի, տէյրըւընի. Տանիք:

— Բարսի տեներ. Չարտախին տանիքը, որ տան մը բարձրագոյն մասը կը կազմէ:

Տեփրել. բ. ն. Տեփուրով արմաթը մաքրել: Մաքրուելիք արմաթը, մաս մաս, տեփուրին վրայ լեցնելով վեր վեր կը նետեն: Արմաթը օդին մէջ բարձրանալու և դարձեալ տեփուրին մէջ իջնալու միջոցին, թեփերը կամ յարդի մնացորդները դատուելով դուրս կը թափին, իսկ քարերը, մէջ տեղ կը հաւաքուին:

Տեփուր. Տախտակով շինուած, շուրջ 75 սանդիմէթր արամագծով գոգաւոր աման մը, որուն առաւելագոյն գոգաւորութիւնը 5 սանդիմէթր կ'ըլլայ:



Տեփուր

Տեփրւածք. Տեփրելու ձեւ, եզանակ: Տեփրելու գործողութիւն:

Տեփրւածք ենել. Տեփրելու գործով պարապիլ:

Տե. Թէ:

Տե օր. 1. Թէ որ. 2. մինչեւ որ:

Տեւ օր. Մինչեւ որ:

Տերսեր. տէրարոջ. Բահանայ. Բահանայ բառը հանրածանօթ չէ:

Տըլ) Դատարկապորտ կին, որ շարունակ փողոցէ փողոց առնէ


Տըլը) առն կը թափառի:

Տիւացու. Երաժիշտ երգիչ, եկեղեցւոյ:

Տիւացութիւն. Երաժշտութիւն:


» ենել. Երաժշտութիւնը նել:

Տիկ. տկի, տկեր. 1. Տիկ. 2. յարդով լեցուած ուլի մորթ, որուն վրայ խայթան կը հիւսեն:



Տիկ, զլիկներ

Տիկ հանել. 1. կենդանիին մարթը իբրև տիկ ամբողջութենէն հանել. 2. սաստիկ ծեծել. 3. ուռեցնել. 4. չարչարել, լլկել
Տիկից. Պաճուճապատանք, փոքրիկ աղջիկներու խաղալիք:



Տիկնուկ

Տիկնուկ. Բոսորագոյն վարդանման ծաղիկ մը: Մանուկներ քաղելով զայն կ'ուռացնեն, հետը քիչ մ'ալ պղնձի ծծմբատ խառնելով կ'ապաստոյն գեղեցիկ և անջնջելի մեղան մը կը շինեն, սես հարսնուկ:

Տիկել. ն. բ. Չափէն աւելի ջուր խմել:

Տիկուց. 1. Դիրտ հեղուկի. 2. մաղելով արմալիքէն զատուած աւելորդ նիւթեր:

Տիկար. Փորը ուռած մարդ, տղայ:

Տիկկայ. յի. անի. Ոլորուած լաչակ, զոր կիները իրենց ճակատը կը կապեն, և յետոյ քօղով կը ծածկեն իրենց գլուխը:

Տիկոզ) Մերկ (մանուկ):
Տիկոն)

Տիկիլ. բ. չ. 1. Ուռիլ (փոր). 2. քէն ընել. 3. ծաւալով մեծնալ (ջուրի մէջ դրուած փայտ):

Տիկոցնել. ն. բ. 1. Ուռեցնել. 2. յղացնել:

Տիկայ. աղու, աղաք. Մանչ:


Տիկայութիւն. Տիկայութիւն, թեթեւամտութիւն:
» ենել. թեթեւութիւններ ընել:

Տիկաբեբ. Ծնանուծ:

Տիկարուբ. Երկունքէն ազատելէն յետոյ մայրը շնորհաւորելու համար կիներ կը հաւաքուին և ուրախութիւններ կ'ընեն: Ծնորհաւորական խնդակցութեանց հաւաքոյթ:

- Տղարուք եկել. Խնդակցութեան արարողութիւններ կատարել:
- Տղացկան. 1. Յղի կին. 2. ծնած կին:
- Տևելնալ. ը. չ. Դանդաղիլ:
- Տոլչայ. չի. չանի. Տախտակէ շինուած ջուրի դաւաթ:
- Տողուկ. Բարակ և աղիքանման շատ երկայն ջրային կենդանի մը, որուն ոչ գլուխը յայանի է և ո՛չ ալ պոչը, գիշերները կը՛սու ձայն մը կը հանէ:
- Տորպակ. պըկի, պըկնի. 1. Տոպրակ, պարկ. 2. մազէ հիւտուած բոլորածեւ և կեղրոնը բաց պսակ մը, որուն ծայքին մէջ կը լեցնեն աղնուած շուշման, կամ սերիչ իւզաւոր հատիկներ և յետոյ ճնշումի կ'ենթարկեն իւզը հանելու համար:
- Տոնիս. Կոշտ (մարդ):
- Տուն. տան, տուներ. 1. Բնակարան. 2. սայլին այն մասը, ուր բնացուելիք խուրձերը կը շարեն. 3. գրքի պարբերութիւն, տուն մը սաղմոս կարդացի. 4. վէրք. 5. տան մը բալանդակութիւնը, կանկարասի ամէն ինչ:
- Տուն կապել. Ուռիլ, թարսխտաիլ. դեռ չհասունցած վէրք գոյանալ:
- Տնաւեր. Տունը այրուած, քանդուած:
- Տնաշէն. 1. Տունը շէն, 2. տուն շէնցնող:
- Տնշէն. Նոյն:
- Տուն տեղ ըլլիլ. Ընտանիք կազմել:
- Տունը գլխուն վրայ փլի. (Անէծք) Տունը քանդուի:
- Տուն գլուխ. Իւրաքանչիւր տունի...:
- Տնուոր. Տունի, բնակիչ:
- Տոփնել. ներգ. բայ. 1. Տանիքները թակել, գետինը ամրացնելու կամ ջուրը անթափանց դարձնելու համար. 2. ծեծել (մաշակ):
- Տոփնուման. Տոփուած, ծեծուած:
- ոփիչ. Երկու ձեռքով գործածելի երկայն պոչով մեծ թակ:
- Տոփնուածք. Թակուածք:
- Տոսիկ. Ուք. մանկական կամ վաղաքշտկան բառ:
- Տոսիկ եկել. Քալել (մանուկներու համար կը գործածուի):
- Տոսնել. ը. չ. 1. Հիւանդին կամաց կամաց քալելը. 2. մանուկին նոր քալելու սկսելը:
- Տոսոզսալ. ը. չ. Պարելու համար թերի, պակասաւոր շարժումներ ընել. միայն թեւերը և իրանը շարժել, առանց ոտքերու համաչափ տեղափոխութեան:
- Տոսոզսուք. Անպէտ, աններդաշնակ շարժում:
- Տորոն. տորնի, տորոննի. Շատ ծանօթ արմատ մը, որմէ կարմիր ներկ կը հանեն բրդեզէնները ներկելու համար:

- Տոբսբալ. բ. չ. Թեթեւօրէն շարժիլ:
- Տոբսրուկ. Թեթեւ շարժում:
- Տոբսնցնել. ն. բ. Թեթեւօրէն շարժել:
- Տուլլուկ. Սրինգ (տիւտիւկ):
- » փշել. Տուլլուկով նուազել:
- Տոոոգայ. ի. Երկայն և հասա զգուկ, որ բամբ ձայն կը հանէ:
- Ճշգօրէն զգուկին պէս կը շինուի:
- Տոոոգայ փշել. Նուազել տուոոգայով:
- Տոոե. Լայնանխատ կին:
- Տոսիկ. Յատքուտուք կենդանիներու ձագերու, ինչպէս քուտակի, ուլի, գառնուկի, հարթի:
- Տոսիկ նետել. Յատքուտել:
- Տոսրկել. բ. չ. 1. Յատքուտել. 2. զազել:
- Տոսիկը հանել. Չարչարել, հոգին հանել:
- Տոսրուալ. բ. չ. Նեղացուցիչ խօսքեր խօսիլ:
- Տոսոցնել. ն. չ. բ. Անպէտ, նեղացուցիչ խօսքեր խօսիլ:
- Տոսրուկ. Նեղացուցիչ խօսք:
- Տրգուկ. Տգրուկ:
- Տրքնկսալ. Դողայ ձուրաէն:



Տրփ շերք

- Տրփ շերք. Թանաղուր խառնելու տափարակ փայտ:
- Տփալ. Դժուար շնչառութիւն ունենալ հիւանդութեան կամ ծանրութեան ազդեցութենէ:
- Տփուկ. Տքուլը:
- Տփոց. Նոյն:
- Տփացնել. Նեղել, նեղը դնել:
- Տեւ. Կաղնի տերեւ, զոր այժերուն կը կերցնեն:
- Տօթ. Խոնաւ տաքութիւն, ամառնային եղանակին մէջ:
- Տօթ ենել. Խոնաւ ու տաք ընել:
- Տօն. Ծննդեան և Աստուածայայտնութեան օրերը:
- Տօն գլուխ. Ութօրէք, ութերորդ օր Ծննդեան:
- Տօն տօնել. Տօնել:

Յ.

- Յ. Յոյ կը հնչուի, և «Չ» տառին հնչումէն որոշապէս կը զանազանուի մանուկանդ բառերու սկիզբը:
- Յադուկ) 1. Ճանճերու ծիրա, 2. միջատներու սաղմ, որմէ, Յարուկ) ապա, որդեր կը գոյանան:
- „ ձգել. 1. Ծրտել, 2. սաղմ ձգել-
- Յախ. ի. եր. 1. Վառելու համար մանր ճիւղեր կամ տունկեր, 2. տունկեր, որոնք շինութեան իբր տաղձ չեն գործածուիր մացառներ:
- Յախը երթալ. Յախ հաւաքելու երթալ, վառքի համար ցախ հաւաքել:
- Յախաւել. 1. Յախերէ, գլխաւորապէս մոշի տունկերէ, կապուած աւել, մէթրէն աւելի երկայն, որով ախտաները կ'աւլեն: 2. Երկայն ու թաւ մօրուք (հեզնանքի համար կը գործածուի այս իմաստով):
- Մուկը ծակը չըսուելիք ցախաւելն ըլ պոչին կը կապը = գլխէն վեր գործեր կ'ընէ:
- Յան. ի. եր. Սերմանուած արմաթ, որ տակաւին հասուցած չէ:
- Յանել. 1. ն. բ. սխուել, 2. սերմանել:
- Որով ցանել. Խռովութիւն սերմանել:
- Յանուիլ. կ. բ. 1. սերմանուիլ, 2. տարազնուիլ, ցրուիլ:
- Յանցառ. 1. խիտ չեղող (մազ, բոյս ևն), 2. ծանծաղ:
- Յանցնել. ն. բ. ցիրուցան ընել, թափթփել:
- Յարել. ն. բ. Արդէն լուացուած աման մը երկրորդ անգամ, գործածելէ առաջ, պարզ ջուրով ցողուել, կը գործածուի նաև ցողուել: Հարեւանցի լուալ:
- Յարուկ. Անմաքուր ջուր, որով ամանը լուացուած:
- Յաւալ. չ. բ. 1. ցաւիլ (վէրք ևն), 2. ցաւ զգալ, մեղքնալ մէկուն:
- Յարուիլ. կ. բ. լուացուիլ:
- Յաւցնել. ն. բ. 1. ցաւ պատճառել, 2. վշտացնել:
- Յախ. Երկրագործական գործիք մը ցախերով հիւսուած, որով սերմանուած աղօսները կը յարգարեն ցանուած արմաթը հողով ծածկելու համար:
- Յախել. ն. բ. 1. սերմանուած արաը յարգարել, աղօսները գոցել, 2. ծածկել, պահել, ուրիշին չգխտցնել:
- Յախուկ. Յաքտուածք

- Յասկունիք ենել. 1. ցտաքելու գործողութեամբ զբաղիլ, 2. գործ մը հարեւանցիօրէն կատարել երեւոյթները փրկելու համար:
- Յեռ. Մարգկային լոյծ քակոր:
- Յեց. 1. Որդ, որ կերպրածները կամ լաթերը ուտելով կը ծակծկէ. 2. ած. շատակեր մանուկ:
- Յեցոսիլ. բ.չ Չոր գերաններուն մէջ ցեց գոյանալ:
- Յից. 1. Գետինը անկուած փայտ, 2. սրտին մէջ հորիզոնական գիծոր մխուած փայտ, ուրկէ տաարկանները կը կախեն, 3. Սայլին տունը չորս անկիւնները հաստատուած երկայն փայտեր որոնք բեռցուած խուրձերուն վար թափելը կ'արգելին:
- Յըյնիլ. Ծնիլ. միայն կենդանիներու (չուն, կատու, գայլ ևն) համար կը գործածուի: Եթէ մարդոց համար գործածուի նախատական կը համարուի:
- Յըյնող. Ծնող (նախատական):
- Յցել. Յիցի պէս անկել:
- Յիցը գարնել. 1. Յիցը հանել, 2. չարչարել, նեղել (սարսնական խմաստով):
- Յորնուկ. Յարենի նմանող բոյս մը:
- Յոցրուկ. Շարաւոտ վէրքեր, որոնց շարաւը, կ'ըսեն, մորթին որ մասին որ դալի, հոն ալ վէրք կը գոյանայ:
- Յոցրակիլ. բ.չ. վէրք գոյանալ:
- Յոցրուկ րյնիլ. Յոցակիլ:
- Յոցրուկը ,, Փորհարութիւն ունենալ:
- Յուցանիք. 1. Հրէշ, 2. Փորձանք:
- Յնսիլ. բ.չ. 1. Խելքը գլխէն երթալ, խերակորոյս ըլլալ, բարկութենէն, 2. ցնդիլ:
- Յնսեցնել. բ.ն. Բարկացնել:
- Յնցղել. 1. Սրակել, 2 Յնցել:
- Յնցղուիլ. բ.դ. 1. Սրակուիլ. 2. չ.բ. Յնցուիլ:
- Յուան. 1. Մարդ որ յաճախ բնական պէտք կ'ուներայ և չկրնար ինքզինքը բռնել, 2. ապիկար անճարակ մարդ:
- Յուել. Պէտք ընել (փորհարութիւն ունեցողի համար կը գործածուի):
- Յուլ. ի. լեր. Բամպակի, կանեփի քաղուած և չոր ծղօաններ կամ առնակեր:
- Յուլիք. ի. եր. 1. Լոյս, ճառագայթ, 2. ցոլացեալ լոյս:
- Յուլալ. բ.չ. 1. Փայլիլ, 2. ցոլանալ:
- Յուլլուկ. Փալփլուկ:




Յորնուկ

Յողուել. Գ.բ. 1. Բերանը ցողուել, 2. Աման մը հարեւանցի լուսլ,
ցարել:

Յողուըուիլ. Թ.բ. 1. Հոգնուլ, 2. Կ.բ լուսցուել, ցարուել:

Յողուոււք. 1. Յողուելու լուսցի ջուր, 2. ջուր սրով լոգանք կա-
տարուած է:



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]


Փ.

Փ. Փիւր, զոր կը կարգան «փիւր», հնչումը աւելի ծանր կամ թու է քան «ֆ» տառին հնչումը:

Փար. 1. Փաթթուածք, շրջան փոկի, պարանի ևն, 2. Փոկին՝ լուծին վրայ աջ կամ ձախ տեղափոխութիւնը՝ ծանրութեան կէտը զօրաւոր լծկանին մօտեցնելու և այսպէսով երկու լծկաններուն ոյժերը հաւասարաչափելու համար:

Փարփարուկ. Բոյս մը:

Փան. 1. Բաժին, 2. կողոպուտ, զոր յեղուղակներումայի ճամբաներու վրայ սպասելով ճամբորդներէն կը վերցնեն՝ անոնց անցքը չարգիլելու համար: Կ'ըսուի նաեւ «ճամբու փաճ»: Յեղուղակներու կողմէն՝ անցորդներէ առնուած ապօրէն տուրք:



Փարփարուկ

Փայ. 1. Բաժին, 2. Հարսնցուի նըւէր, զոր ամէն տաղուարի տա-

թով փեսացուին ծնողքին կը մատուցուի, դեռ ամուսնութիւնը չկնքուած: Կը բաղկանայ գլխաւորապէս, թաշկինակներէ, քօղէ, զարդոսկիներէ (օսմ. հին ոսկիներ) կամ արծաթեայ զարդեղէններէ նաեւ պտուղներէ, ինչպէս խնձորէ, տանձէ, նուշէ, չամիչէ ևայլն:

Փայել. Բաժնէր

Փայ հանել. Բաժին հանել:

„ սանել. Հարանայուլին նուէր տանիլ:

Փայուոր. Փայ տանող պատուիրակութիւն:

Փայ հանուլին փայ շմնաց. Առատօրէն, վեհանձնօրէն բաշխում կատարել ինքզինքը զրկելով:

Փածկլսալ. Փայլիլ (հայելիի, մետաղի^ն ջուրի):

Փածկլսուք. Փարիլիլ:

Փանագ. փանդի, զնի. Արայրէ շինուած կեղծ դրամ, որ վրան զարդեր միայն ունի, տակա կը գործածուէր եկեղեցիներուն մէջ, տասը հասը մէկ մէթալիքի արծաղութեամբ:

Փառ. 1. Քոցախին երեսը կազմուած նուրբ մաշկ, 2. սալմինին մէկ անգամ հալովոյթը. 3. բազուկի երկայնութեամբ հիւսուած կտուռ:

Փաս. Փայա:

„ կըյիլ. Տես՝ փասնալ

„ հանել. Վառերա՛խիթ պատրաստել:

Փասել. 1. Դրան ետեւ դերան կամ քար զնել, որպէսզի զրաէն չի կարենան բանալ, 2. ձեծել, դբելեւ կ'ըսուի:


Փասուիլ. Գոցուիլ, գոցուած դրան ամբոցուիլը:

Փասուոր. ի նի. 1. Էւուր՝ վառերափայտ հայթայթելու համար աշխատաւոր կիներ, չախոնսա աղջիկներ և տղեր, 2. սառիկան:

Փարչ. Փոքր սափար:

Փարչուկ. Փարչի նըմանող ծաղիկ մը:

Փարս ըլլիլ. 1. Խելքը գլխէն երթալ հարուածի ազդեցութեան տակ, ուշակորոյս ըլլալ:




Փարչ

(սէրտէմլէմիշ ըլլալ) 2. Տապալուիլ գետին իյնալ՝ տաքը արգելքի մը հանդիպելու հետեւանքով:

Փարս ենել. 1. Գետին տապալել 2. Ուշակորոյս ընել:

Փարսայ. սի. Մուրողութիւն. տակա կը գործածուի բոշաներու համար, որոնց կիները գիւղերը կը պը-



Փարչուկ

տըտին և ուտելիք կը հաւաքեն:

Փարսայ ենել. Մուրայ (բոշաներու):

Փարսի ելնայ. Մուրայու ելնել:

Փարսայ փուրսայով ապրիլ. Մուրայկանութեամբ ապրիլ:

Փարս. Հեուու, անջատ, զատ:

„ Եսիլ. Քիչ մը հեուու նստիլ, քովքովի չնստիլ:

Փարսել. 1. ք.ն. իրարմէ զատել բաժնել, 2. ք.չ. հայց. հոլ. բնու-
թեան խնդիր կ'առնէ. պատիլ, թափառիլ:

Փարսիչ. Քուրջի, կտոր, որով թոնիրին կողերը կը մաքրեն խմու-
րի նկանակները փակցնելէ առաջ:

Փարսուիլ. կ.բ. իրարմէ բաժնուիլ, զատուիլ:

Փարսիին. ի. մանուկներու պատուաստ:

„ Ենել. Պատուաստել (մանուկնեցո). ծաղիկին թարախէն
կաթիլ մը կը դնեն բթամամն ու ցուցամատը միացնող մաշ-
կին վրայ և սուր սակզով կը ծեծեն, յետոյ շամիչ մը ճեղքե-
լով վրան կը դնեն ու կը կապեն:

Փարսիինել. ն.բ. Մանուկները պատուաստել:

Փերակ. փիթկի, փիթկրնի, 1. Կուէ շինուած բայց չթրծուած շտե-
մարան արմաթի և ալիւրի, մէկ մէթր խորիխով, և շուրջ
երկու մէթր բարձրութեամբ ուղղանկիւն զուգահեռան:

Մեղուի փերակ. Կուէ շինուած գլանաձեւ փեթակ, ուր մեղուներու
պարսը կը բնակի:

— Փեսայ փախցնել. Պատկադրութենէն երկու օր յետոյ փեսան կըն-
քահօր տունը իրիւ և իւր կը տանին, հոն երեք օր պահելէ
յետոյ, կնքահօր արտօնութեամբ միայն, իր տունը կը տանին
և այդ գիշեր տեղի կ'ունենայ անոր՝ առաջատա մուտքը:

Փեսա մանուկ. Փեսամանկաթիք, տոյք, հարսանիքին ընթացքին միշտ
փեսային ընկերացող և զայն առաջնորդող երիտասարդներ
կամ պատանիներ, որոնք կ'ըլլան նաեւ փեսային խորհրդականը:

Փեսաս. Կացին, փայտ կտրելու ծառայող կացին: Բառ չարաւա-
ւոյնոց, իսկ Հիւսիսայինները կացին բառը կը գործածեն,
որուն մէկ կողմը փորելու իսկ միւսը կտրելու կը ծառայէ:

Փեսել. ն.բ. փեստել՝ մազ. հաւ ևն:

Փեսուածք. Փեսելու գործողութիւն:

Փեսուիլ. կ.բ. մերկացուիլ, մազերէ փետուրներէ:

Փեսուք. Փետուածք:

„ Ենել. Փեսելու գործողութեամբ զբաղիլ:

Փեսրոսել. Փետրասել:

Փեսրոսուք. Փետրասուք:

Փեսրքափ. Փետուրները թափած:

Փեքրափ ըլլիլ. Փետրաթափ ըլլալ:

Փերփեր. Փրփրեմ:

” ապուր. Փրփրեմով, ծեծածով և ուրիշ ընդհանրութեամբ
պատրաստուած սրահոյ կերակուր:

Փեն. ի. 1. ուս, 2. կռնակին վերին մասը:


Փենը առնել. (տես՝ փինել:
” դնել. (

Փընչրսե. Բարակ և ճկուն վայտէ շինուած սնուր զոր կամնող կեն-
դանիներու դունչը կ'անցնեն և չուանով եղջիւրին կը կապեն
որպէսզի չափէն աւելի չուտէ կամնուած արմախքէն և չի
ձնասուի:

Փընչըսալ. բ.չ. կենդանիին՝ դունչը թօթվելը, ցըն-
ցելը շողիք, թուք ցոյտեցնելով:

Փընչըսուֆ. Փընչուաւալու գործողութիւն:

Փընչըլոս (կտրտած զգեստներ, ցնցոտիներ հապնիլ:
Փընչըլոս (



Փընչըսէ

Փընչըլոսիլ. բ.չ. պատուաթիլ (զգեստ, կատակէն):

Փր՛ես. կորսուէ՛, (կատուներու կը գործածուի):

Փր՛ե փր՛ե (Եկո՛ւր, եկո՛ւր, (կատուներու համար մխայն կը գո-

Փր՛ս փր՛ս (ծածուի):

Փրունֆ. (ի. նի. ցեխ, տիղմ, որ կը լեցուի մարդակները ծած-

Փրուֆ. (կող տերեւներուն վրայ, և ասկէ վերջն է որ հողով
կը ծածկեն: Այսպէս, ասն մը ծածքը հեռուեալ մասերէն կը
բազկանայ. նախ գերանները կը գեակազուին, ասոնց վրայ կը-
ցակները կամ դարձեկները կը շարուին. ասոնց վրայ մար-
դակները կը լեցուին և մարդակներուն վրայ քեովաչաներ
(տերեւներ, ճիւղեր) տերեւներուն վրայ կը լեցուի փթրունք-
յետոյ հողը. և վերջապէս շողախը:

Փրսալ. բ.չ. փաթ փաթ ձայն հանել:

Փիլայ. յս, անի. ոլորուած խոտ: Խոտը քողելէ յետոյ իրարու վը-
րայ դնելով կ'ոլորեն. երկու երեք մէթր երկայնութեամբ և
յետոյ երկու ծալք կ'ընեն: Այս վիճակով կը փոխադրեն
տուն և չորցնելէ յետոյ կը դիզեն իրարու վրայ:

Փիլայել. ն.բ. 1. Խոտը ոլորել: 2. Խոտը պատասանելովհաց ուտել:

Փիլայուիլ. բ.կ. Որլորուելիլ:

Փինել. ն.բ. Ուսին վրայ դնել:

Փին. Ծունի, կատուի աղբ: Կ'ըսուի նաեւ ռնփին. կը գործածուի
խաղախորդութեան մէջ, ասով կաշիները կը կակազցնեն ասով
քերծումի գործողութիւնը կը դիւրանայ: Գուշ ոչոլան հիւան-
դութեան դէմ = կեղծմաշկ = կը գործածեն ասոր փաշին հի-

Լանդին կոկորդը կը փչեն, արդիւնքը արագ և փրկարար կը դառնայ:

Փինայ. յի, նի, իբրև կարկառն ծառայող կոշիկ կտոր:

Փինայել. ն.բ. հին կոշիկին կարկառն կարել:

Փինասել. կոշիկը թէթեւօրէն կարկառել:

Փինայ ձգել. կարկառն ձգել կոշիկին ներքեւ:

Փինաչի. Հնակարկառ կոշիկի:

Փինչ. Յուսկ, կզակ, դունչ:

Փինչ քինթ ենել. 1. մէկէ մը ելես դարձնել, 2. մէկու մը, բանի չհաւնիլ, 3. տհաճութիւն ցոյց տալ դէմքի ծամածռութեամբ:

Փիր. 1. ծեր, շատ ծեր. 2. մեծաւոր, վարակա, գլխաւոր: Ըս մարդը գողերուն փիրն է:

Փլիլ. բ.չ. 1. փլչիլ, 2. արիւնիլ, քթի: Քիթս փլաւ = քիթս արիւնեցաւ, 3. Փղձկել: Սիրտս փլաւ: 4. Սրտաբեկ ըլլալ. վըշտանալ:

Փլուկ (Փլած, քանդուած:

Փլցնել. 1. քակել, քանդել, 2. արիւնել, 3. փղձկեցնել:

Փլցուիլ. կ.բ. քանդուիլ:

Փլրսիկ. կենդանիներուն մարսողական գործարաններու ամբողջութիւնը:

Փլրսկել. Աւերել, փլցնել, քակել:

Փլրսկիլ. բ.չ. Աւրուիլ՝ քակուիլ:

Փլփլկիլ. Քայքայուիլ, խալխալիլ:

Փնիլ. բ.չ. 1. փճանալ (միջուկ՝ ընկոյզի, նուշի ևն), 2. անճիտուիլ 3. կուրնալ, ոչնչանալ (աչքերու), 4. ցամքիլ (սեռային գործարաններու), 5. դատարկուիլ:

Փնուկ. Դատարկուած:

Փնել. ն.չ. սղբել, պէտք ընել (չունելու և կատուներու համար կը գործածուի միայն):

— Եսկանրարին փինդ դեղ ը, ընի տրաւ խորուն քալեց = կատուին ըսին թէ աղբդ դեղ է, ան, ա՛լ աւելի խորունկ թաղեց՝ քանքարաթաքոյց ըլլալ:

Փննիկ. Խոտի մը արմատը, որ դիւրավառ է և իբրև կպցանք կը գործածուի չորցուելէ յետոյ:

Փննրկսել. ն.բ. փունջ փունջ խլել, փրցնել:

Փնչրսե. տես՝ փրնչրտէ:

Փնչրլոսիլ. Չայրանալ:

Փշաս (Փշուտ ծառ մը, որ շատ մանր, դեղին և շատ անուշ հոտ

Փշասի (ունեցող ծաղիկներով ծառ մըն է: Կ'աճի պարաէզներու

ցանկերու մէջ:

—ՓԵԱՏԻԻ ԱԿՏ ԼՂ. Սպիտակ փոշիով ծածկուած, ձիթապտուղի մեծաւթե մաք պատու մը, որ իր մէջ ունի կարիզ մը ձիթապտուղի կարիզին նման ու անոր մեծաւթեամբ, համը թէև քիչ մը տապեցնող բայց հաճելի է:

ՓՈՒՇ. 1. փուշ, 2. փշալից խտտ մը, կենդանիներուն կը կերցնեն:

ՓՈՒՇ ՓՈՒՇ ԲԼԻԻ. 1. սարսուռ, քսամնիլ:

ՓԵՒԵԻԿ (Փշալից խտտ մը, զոր իբրև բանջարեղէն խաշօն կ'ը-

ՓԵՒԵՈՒԿ (նեն:

ՓԵՒԱՂ. Փուշիքող, հաւնձք:

ՓԵՒԱՇ. Գործիք, որով մազեր կը քաշեն, քթի մազերը կը մաքրեն (ճըմպըղ):

ՓՈԽԻՆՏ. Աղնձուած ցորենի ալիւրով շողուած կամ եփուած մալէզ, որու վրայ ռուպ և տրգար իւլ ալ կը լեցնեն ու կ'ուտեն:

ՓՈԿ. Կաշիէ շինուած և ոլորուած հաստ կապ, որով լուծը արօրին հետ կը կապուի:

ՓՈՂՈԳ. փողցի, փողցընի. 1. տան շրջակայքը որոշ տեղ մը ուր մոխիրը կը կուտակեն, 2. փողոց:

ՓՈՂԳՆԻՆ չափել. Գատարկ, անգործ պատիր:

ՓՈՂԳԻ ԲՈՒՈՒԿ. (Փողոցները պատող աղտոտ աղայ:

„ ՇՈՒՆ (

ՓՈՇԵՓՈՂԱԳ. տես՝ փողոց

ՓՈՇԵՂՈՒՐ. Մոխրաջուր գոր լուացքի տան կը գործածեն, կամ խաղողը չամիչ շինելու համար կը գործածուի:

ՓՈՇԵՉՐԵԼ. ն.բ. 1. Լուալիք լաթերը մոխրաջուրով եռացնել, օձառով լուալէ առաջ, 2. խաղողը եռացած մոխրաջուրի մէջ թաթխել, չամիչ շինելու համար:

ՓՈՇԻ. Մոխիր (մոխիր բառը անծանօթ):

ՓՈՇԻՆ ԳԼԽՈՒԴ. Մեղք քեղի որ...

ՓՈՒԻԿ. փուկի, կընի. Ճակտին թողուած աւելորդ մազի փունջ մը:

ՓՈՒԻԿ ԹՈՂԵԼ. Ճակտին վերև մազի փունջ թողուլ:

ՓՈՍՔ. 1. Մորթ, 2. կակուղ մորթէ վերարկու, 3. ծեփուկ:

ՓՈՍՔ ԽԱՆԵԼ. Սաստիկ ծեծել:

ՓՈՐ. 1. Որովայն, 2. Չաւարով, սոխով միտով և համեմներով եփուած կերակուր մը՝ եղինծին նման, 3. կերակուրի լիցք (տորմա), 4. պատի մը գոգաւորուած տեղը, 5. ամաններու կարասի, պուտուկի, տակառի ուռած մասը, որ կը գտնուի պարանոցին և ստքին միջև:

ՓՈՐ ԷՆԵԼ. 1. ուռիլ գոգաւորիլ: Ըս պատը փոր էրած ը, ծառ գոգաւորուած է, 2. փորը ըսուած կերակուրը պատբաստել:

Փարիկ. Փոր կերակուրը:

Փոթ. 1. Կռինձ. 2. խորշոմ ճակատի:

Փոթել. 1. Փոթ փոթ ընել. 2. տապեցնել (բերանը). 3. երեսը թըթ-
ուեցնել:

Փոթիկ. Շապկին թեւերուն այն մասը, զոր փոթ փոթ կ'ընեն, ա-
նոր լայնութիւնը չափաւորելու համար:

Փոթուիլ. կ. բ. Փոթ փոթ ըլլալ կռնձիլ:

Փոթուկ. Տապեցնող, խակ պառուղ:

» սանձ. Տեսակ մը տանձ որ տապեցնող է և չոր ձմեռը կ'ու-
տեն:

Փոթոյ. Կարճահասակ և գիրուկ մարդ:

Փոթուռ. Տարատ, շարվար:

Փնթի. Աղտոտ:

Փնթոսել. Աղտոտել:

Փնթոսիլ. Աղտոտիլ:

Փոթոս. Տապեցնող:

Փոթուս. 1. Տապեցնող. 2. փոթեր ունեցող:

Փոթփոթիլ. 1. Փոթ փոթ ըլլալ. 2. խորշոմիլ, կռնձիլ:

Փոթցալ. 1. Որովայնի ցալ, խիթ. 2. հակառակութիւն. 3. շար-
ժառիթ հակառակութեան:

Փոթցունսիլ. Իրար անցնիլ:

Փոթփաւ. Որովայնի մաշկ:

Փոթփոսկ. Փորհարութիւն:

Փոթր փեել. Փորհարութիւն ունենալ:

Փուլ. 1. Չառիլեր. 2. փուլողումէ առաջ եկած թումբ. 3. գետի
կամ առուի, կամ հեղեղի քանդումէ առաջ եկած ուղղաձիգ
բարձրութիւն, որ անմատչելի է:

Փուս. 1. Մառախուղ. 2. աչքի մթար, պղտորութիւն:

— Աչքին դեմ փուսը եկեր. Աչքը պղտոր կը տեսնէ:

Փուն. 1. Դատարկ (խօսք). 2. ընկոյզ, նուշ որոնց միջուկը չկայ
կամ փճացած է:

Փուս. Վրիպում (հաւանօրէն կռնակ):

» սալ. Յարձակումը վրիպեցնել, ճարտարօրէն խոյանքի մը ուղ-
ղութենէն շեղելով յանկարծ. այնպէս որ յարձակողը չկրնա-
լով յանկարծ իր ուժգին թափը զսպել, ծանր անկում մը
կ'ունենայ:

Փուս. Փտած:

» փաս, Կարծր, չոր:

» ըլլիլ. 1. Կարծրանալ. 2. սառիլ. 3. մեռնիլ. 4. զգայնութիւնն
ու ճկունութիւնը կորսնցնելով քար կարիլ:

- Փուր. Կեղեւ՝ կուտի, սեխի, պտուղներու եւն:
- Փուռչ. Պատուաւած կտոր, լաթի կտոր:
- Փուշոս. 1. Յնցտախներ հագած. 2. հին՝ կտոր կտոր եղած զգեստ:
- Փուշոսիլ. Չգեստները կտոր կտոր ըլլալ:
- Փուսել. ն. բ. 1. Գեախնը փորել բան մը փնտուելու համար. 2. հաւ
ւերուն՝ ուղբերով գետինը փորելը:
- Փուր. 1. կտոր. 2. կարուած կաթի, թանի կարծր մասերը:
- Փուրել)
Փուր փուր ենել) 1. Ծեծել. 2. կտոր կտոր ընել. 3. մանրել:
- Փուրիլ. 1. կտոր կտոր ըլլալը. 2. աւրուիլ (կաթի եւն):
- Փուրսիլ. կաթը երբ տաքցնեն կը կարի և պանրիտը շիճուկէն կը
բաժնուի կոյտ կոյտ ըլլալով. աս է փտրտիլը:



Փակայ նարտիվան

- Փակայ նարտիվան. Գուլպայի զարդ մը:
- Փուրսուք. Փսր փսր եղած կաթ, աղտ եւն:
- Փսիկ. Ներքին գործարաններ:
- Փսիկը հանել. Ծեծելէն հողին հանել:
» ելնալ. 1. Սաստիկ պարտասիլ. 2. անհամեմատ ճնշումի սակ
աղիքները դուրս թափել:
- Փսննել. ն. բ. 1. Վիժել. 2. բ. չ. վրիպիլ, նպատակէն շեղիլ.
3. յանկարծ գայթիլ. 4. դուրս ցատկել:
- Փսիլ. բ. չ. 1. Փաիլ (փայտ, ոսկոր, ծառ եւն). 2. բոլոր ուժերը
սպառիլ:
- Փսեցնել. 1. Փտեցնել. 2. կենսուհասկութիւնը կորսնցնել տալ, եր-
կարատեւ և ծանր աշխատութեանց հետեւանքով:
- Փսուկ. Փտած:
- Փսման. Փտած:
- Փրել. ն. բ. 1. Կեղեւը հանել. 2. կուտ ուտել (ձմերուկի, սեխի):
- Փրթիլ. բ. չ. 1. Խլուիլ. 2. կարիլ (չուանի, պարանի). 3. բաժնուիլ
(ժայռի կտոր), անջատուիլ:
- Փրցնել. ն. բ. 1. Խլել. 2. քաշելով կարել (պարան, դերձան եւն):

Փրցուիլ. 4. ք. 1. Խլուիլ (քոյսի եւն). 2. Կտրուիլ:

Փրեել. 1. Փշրել, մանրել. 2. բրդել (հաց, դունծղ):

Փրեիլ. Մանրուիլ 3. ք.

Փրեուիլ. Փշրուիլ մանրուիլ 4. ք.

Փրեունք. Հացի մանրուք, փշուրնիք:

Փրոս. Կեղեւ ունեցող:

Փրոսիլ. ք. 3. 1. Կեղեւ կազմել (վէրք). 2. ոգեւորուիլ կազդուր-
ուիլ (հիւանդի):

Փրփրիլ. 1. Փրփուր առաջ բերել. 2. սաստիկ դայրսնալ. 3. յորդիլ
(գեաի):



Ք.

Ք. Քէ. իր բուն հնչումով կ'արատայատուի Բալուի բարբառին մէջ մերթ «կ» ով փոխանակուելով:

Քա'. Չայնարկութիւն զարմացական. ո՛վ, ա՛:

Քա'. Կոչական մասնիկ. ո՛վ, քա՛, աղջիկ, դո՛ւ, աղջիկ:

Քախանգ. Բամպակի արտերը և ածուները անպէտ և վնասակար խոտերէն մաքրելու գործողութիւն:

Քախանգ ենել. Աւելորդ ու վնասակար խոտերը մաքրել:

Քախանել. ն. բ. եց, նը՛. վնասակար բոյսերը արմատէն հանելով արտը մաքրել:

Քախրնգուոր. Քախանքով զբաղող կիներ (կիներն են որ քախանքը կ'ընեն):

Քամ. 1. Բամուք. 2. քիչ մը ջուր, որ կը մնայ, առուին մէջ, իբրեւ վերջին մնացորդ, սուղումներու աւարտումէն յետոյ:

Քամուգ. Նոյն:

Քամար. քամրի, քամրնի. 1. Հարսերու համար մամուտը զարդ, որ իբրեւ գօտի, իրենց մէջքը կը կապեն. 2. կամար շէնքի, աղբիւրի:

Քանցել. ն. բ. 1. Քանդել աւրել սեխի, ձմերուկի արտ, սոխնոց, բանջարեղէնի ածուներ, վերջին արդիւնքը տանելէ յետոյ, Մնացածները հասունցած ըլլան կամ ոչ, կը քաղեն, իրենց տունկերով միասին, ու այս կերպով արտը մաքրելով սրտարտս կ'ընեն աւաջիկայ հերկումի. 2. աւրել, քայքայել տուն, բոյն եւն:

Քանցուգ)
 Քանցուգաւգ) Քանդելու գործողութիւն:

Քաճ. էգ. կը գործածուի՝ շունի, կատուի, էջի, սեւերը յայանելու համար: Ուլերու, գառնուկներու, եզի, գոմէջի, ձիի համար՝ էգուկ կամ էգ կը գործածուի, իսկ մարդոց համար աղջիկ կը գործածուի: Քաճ բառը երբ աղջիկի տեղ գործածուի, նախասական իմաստով կ'առնուի:

Քաւ. 1. Մարմնոյն այն մասը, որ մորթէն ու միտէն ու ջրղերէն կը բաղկանայ, ինչպէս կենդանիներու սրունքին ու որովայնին միջեւ գտնուող մասը. 2. մամուտը ձեւով հողամաս. բարակ երկայն, որ խոպանուտին կը միանայ:

Քաշել. 1. ն. ռ. Քաշել. 2. պրկել. 3. տառապիլ հիւանդութեամբ.
 4. համբերել. 5. էգ կենդանին զուգաւորել սալ:

Քաշել սախսակ. Գերանը սղոցելով սախսակի վերածել:

Քաշիկ. Հինգ սանդիւմէթը լայնքով կաշի, որ գրաստին որովայնին
 ներքեւէն, առջեւի ոտքերուն մօտէն անցնելով համեաին եր-
 կու կողմի եզերքներուն կը կապուի, և թոյլ չի տար որ բե-
 ուր աջ կամ ձախ թեքուի:

Քաշուիլ. 1. ռ. կ. Քաշուիլ, պրկուել. 2. զուգաւորուել էգ կեն-
 դանիի. 3. ռ. չ. սնդամարտածուիլ (տաքի, ձեռքի). 4. հան-
 դուրթելի, սանելի ըլլալ. 5. հետանալ երթալ անգէ մը. 6.
 սպառնալ զարնելու շարժում ձեւ սանել:

Քաշուրսիլ իբարու վրայ. Իբարու զարնելու համար սպառնական
 ձեւեր ընել:

Քաշուրսուֆ. Սպառնական ձեւ:

Քար. 1. Քար. 2. հեղնութեան անուղղակի խօսք. 3. ճատրակի մէջ
 գործածուած քար կամ փայտ. 4. ժայռ:

Քար նետել մեկուն. Մէկուն՝ մեղադրական, ծաղրական կամ յան-
 դիմանական քղարկեալ խօսքեր սեղղել:


Քարբակ. Ճամբաներու եզերքը, կամ արտերու մէջ հաւաքուած
 քարերու դէգ:

Քարել. Ծանր քարի սակ դնել ճնշելու նպատակու:


» դուռը. Գրան կտու մեծ քար դնել, որպէսզի դուրսէն ան-
 կարելի ըլլայ դուռը բուսալ:

Քարբին. Հում աղիւս:

» կըլթել. Հում աղիւս կաղապարել:



Քարիման



Քարի մնուկ

արիման. Գործիք մը, որով բուրդ կը մանեն:

» մանել. Բուրդ, մազ մանել:

Քարի մնուկ. Գուլպայի զարդ մը:

Քարխոց. Կրունկին մէջ գոյացող խոց, որ սովորապէս մորթին տակ ջուր հաւաքուելով կը գոյանայ:

Քարկապոս. Թխագոյն: Այս բառը կը գործածուի միայն այն օձերուն համար, որոնց մորթը թխարակն է և մաշթ գոյն օղակներով պատուած է:

Քարկեզուր) Կարծր կշգուր, որուն կրակը աւելի բարկ և աւելի

Քարկեղուր) դիմացկուն կ'ըլլայ:

Քարմամոխս ենել. Սասաիկ ծեծել:

Քարդան. Հողէ շինուած և լուս թրծուած սկահակ:

Քարոսել. ն. բ. Քարկածել:

Քարպուլուզ. Իրարու վրայ շարուած քարէ աշտարակ, կամ կոյտ, զոր գետափին մօտ կը շինեն, որով ուղեւորներ կը հասկնան թէ գետին հունը ո՛ւր է, (հունին դէմ կը շինեն): Գաշտերու մէջ ալ կը շինեն, ո՛րեւէ նշան մը տալու համար:



Քարդան

Քարբաւ. Ճաշերով շինուած գործիք, որով քար կը կրեն:

Քարբուս. Քարերով լեցուն դաշտ, ճամբայ:

Քաբանձեղ. Սպիտակ ագռաւ:

Քաճ. Կերակուրին փրփուրը, որ կը պարունակէ աղանդութիւններ ալ:

Քաճը առնել. Կերակուրը երբ եռալու մօտ ըլլայ, անոր մակերեսը կուտակուող փրփուրը վերցնել:

Քաճկիւր. Փրփրակալ:


Քեաշալ հաւ. Գիշակեր, սպիտակ թաշուն մը, որուն կտուցը կոր է:

Քեարթ. Փայտի վրայ սըղոցուած փոս. շինուած սառ:

Քեարթթուն. Վարակոտ, ոստոստ:

Քեարվան. Կարաւան:

Քեարվան կորուս. Համաստեղութիւն մը, որ կ'ըսուի նաեւ լուսուն ասղը, լուսուտոր տատը մը, որ արշալոյսին ծագելէն առաջ



Քարքաշ



Քեարթ

- տեսանելի կ'ըլլայ, և ճամբորդներ կը հասկնան թէ տառու
ըլլալու մօտ է:
- Քրթքալ. թ. չ. 1. Եռալու երեւոյթ, որ ջուրին վրայ կը տեսնուի.
2. թեթեւ եռք:
- Քրթքուկ. 1. Եռալու երեւոյթ. 2. եռք:
- Քրխ. Մանկական բառ. Գէշ սպտոտ:
» ր. Աղտոտ է:
- Քրնձ. Քան զ...:
- Քճձ մեզ աղեկհի. Մենէ աղէկները, ոգիներ, որոնք դեռ չմկրտուած
կամ քառասունքը չլրացուցած երեխաները կը փոխեն, անոնց
տեղ դնելով ճագած, նիհար, վատաւոյջ երեխաներ:
- Քիհք. քնթի, եր. 1. Քիթ. 2. բնական բարձր գիւրքի մը դէպի
դուրս առաջացած մաս. 3. գետափներու վրայ դէպի գետ ա-
ջացած մաս, անկիւն. 4. պտուղի մը ծաղիկին տեղը, որ ո-
րոշ հեռքը կը պահէ:
- Քիհք քնթի. Գլուխ գլխի (խօսիլ) դադանի:
- Քիհք քնթի (մեկու մը). Չհաւնիլ մէկը:
- Քիհքը կախ. 1. Հիւանդի երեւոյթ. 2. տրտում. 3. քէնով:
» կախել. 1. Տրամիլ. 2. քէն ընել. 3. հիւանդի երեւոյթ ու-
նենար:
- Քնթի քնթի. Կարեւորութիւն տալ: Իմ բոլոր աշխատանքս քնթին
չի դրեց = կարեւորութիւն չտուաւ, առ ոչինչ համարել:
- Քխալ. Քըխ քըխ հազար:
- Քխոցք. 1. Հազ. 2. հազի ձայն:
- Քխքխալ. Հազար, ընդհատօրէն:
- Քխքխուկ. Հազ:
- Քմել. ն. բ. 1. Քամել. 2. ճնշել:
- Քմած. Մածուն, որուն ջուրը քամուած է, թորախ:
- Քմուկ)
Քմման) Քամուած, ջուրը հանուած:
- Քմոց. Կտաւէ շինուած կոնաձեւ փոքրիկ սլաքի, որով կաթ, մա-
ծուն, և մածնաթան կը քամեն:
- Քմոցե անցրել. Քամել քմոցով:
- Քնրնել. Մրափել:
- Քնրնուկ. Մրափում, մրափել:
- Քնրնուկը գալ. Մրափելու պէտքը զգալ:
- Քնրքախ. Քունը գլուխը:
- Քնուկ. Քնացած, քուն:
» մնալ. Ժամանակին չարթննալ:
- Քնեճալ. Քան մը ունենալու թաքուն ցանկութիւն ունենալ. ասիկա

մանուկներու համար կը գործածուի . երբ բան մը ուտելու ցանկութիւնը կը ցուցնեն, բայց չեն համարձակիր, կամ կ'ամչնան յայտնապէս ուզելու :

Քենց. Ծակաչք. անկուշտ :

Քենցուքին. Ծակաչքութիւն, անյագութիւն :

» Էնել. Ծակաչքութիւն ընել :

Քորալել. ն . բ . Նեաել՝ քար եւն :

Քոզ. 1. Անթեղուած սուտ կրակ . 2. հաւնոց . փոքրիկ սենեակ, ուր հաւերը կը թառին կամ ուլերն ու գաւնուկները կ'արգելուին :

Քոլիկ) Եղջիւր շունեցող այծ, ոչխար, ուր

Քոլսիկ)

Քոռ. Կոյր :

Քոռայ. յի . նի . Որոմ :

Քոռայոս) Որոմուտ :

Քոռաուս)

Քոռք. Փոս փոս (երես, տեղ) :

Քոռնալ. բ . չ . 1. Կուրանալ . 2. աղբիւրի աղին ցամքիլը կամ խափանուիլը . 3. արտի մը ցանքի մը ուրիշ անպէտ բոյսերով խափանուիլը . 4. փակել խցել անցք մը :

Քոռցնել. ն . բ . 1. Կուրցնել . 2. խափանել . 3. աւրել ջուրի աղ, քանդել . 4. խցել :

Քո՛ռնալու. Անէծք (ձայնարկութիւն) :

Քոռսիկ. Ընկուզի միջուկը և սխտորը չափաւոր աղով կը արորեն և ջուրի հետ խառնելով կ'ուտեն պահքի օրերուն :

Քոռսիկ ապուր. Ընկոյզի միջուկով կերակուր մը :

Քոս. 1. Մորթի տարափոխիկ հիւանդութիւն, քոս . 2. ած. մէկէ մը չզատուող, մէկու մը օձիքէն չզատուող, հայկատակ :

Քոս ըլիլ. Մէկու մը հետեւիլ, անկէ չբաժնուելու պայմանաւ :


Քոս աղբիւր. Հանքային աղբիւր, ուր մորթային հիւանդութիւն ունեցողներ կը լոգնան :

Քոսայ. Անմազ. այն որ դէմքին ունէ մէկ մասին վրայ մազ չունենար :

Քոսոս. 1. Քոսախտաւոր . 2. աղտոտ մարդ . 3. անճարակ մարդ, ազդեցութենէ զուրկ մարդ :

Քոսոսիլ. բ . չ . 1. Քոս ունենալ . 2. նախկին ազդեցիկ դիրքը կ'որանցնել . 3. հարստութիւնը կ'որանցնող մարդ :


Քուլակ. քուլի, կընի. Բարակ տախտակով շինուած դոյլի նմանութեամբ անկաւոր աման, որուն մէջ՝ ջուր, կաթ, մածուն, թան կը լեցնեն:



Քուլակ

Քուլայ. լի. լանի. Պատրոյզներու հանգոյց: Բամպակը աղնելէ յետոյ համաչափ պատրոյզներու կը վերածեն, այս պատրոյզներէն 6-7 հատը միասին ու յորելով հանգոյց մը կը շինեն, այս հանգոյցը քուլոյ կը կոչուի:

Քուլպայ. քուլպի, պանի. Փաքրիկ բրիչ, որով արտերը կը քախնեն, կամ ածուներու սուղման ասեն կը գործածեն:



Քուլպայ

Քուլնաման. 1. Աման ուր քուչնայ կը լեցնեն. 2. ստամոքս, զօրաւոր ստամոքս:

Քուլանալ. Արծարծիլ (կրակի):

Քուլացնել. կրակը արծարծել:

Քոբած. Երեսը փոս փոս եղած:

Քոթել. Հարեւանցի կարել:

Քսուիլ) ր. չ. Մէկու մը մօտէն հետեւիլ, ակնկալութեան մը

Քսուրսիլ) համար:

Քրֆիւ. Կակուղ:

Քրֆիլ. Կակուղնալ:

Քրֆրցնել. 1. Կակուղցնել (հաց). 2. զղել՝ բուրդ բամպակ:

Քրսրնիսաւ. Քրաինքէ սուղ եկած մորթային բորբոքում:

» քլիլ. Մորթային բորբոքում ունենալ:

Քցիսայ. քցիսի. Շատ մանր սոխ, որ իբրեւ սերմնացու կը գործածուի:

Քծիսայ սնկել. Սոխ ցանել, սերմանել:

Քօթի. 1. Տկար, անգօր. 2. թոյլ մարդ:

Քօթուբին. Տկարութիւն:

» ենել. Ծուլութեամբ գործի մը հետամուտ չըլլալ:

O.

0. Այս ատուը, Բալուշի բարբառին մէջ, բառերուն սկիզբը, ընդհանրապէս Ո ատուին տեղը կը գործածուի:

Օլբրել. 1. Ոլորել՝ թել, աւասան, պարան եւն. 2. խօսքը փոխել, խօսքէն շեղիլ. 3. դարձնել. 4. հոլովել. 5. շեղել. 6. թաւալել (անիւ եւն):

— Շլլին օլբրել. Հաւ մորթել, մորթել:

Օլբրուիլ. 1. Ոլորուիլ. 2. պատիլ. 3. դառնալ՝ անկիւնէ մը. 4. հոլովուիլ՝ պտուտակի. 5. թաւալիլ՝ երկանոքարի, անիւի եւն:

Օլբրսիլ. 1. Պատիլ. 2. թափառիլ. 3. մուրալ:

Օլբրսոդ. Թափառական մուրացիկ:

Օլբրծուն. Լաւ սխրուած, սեղմօրէն ոլորուած (թել, աւասան, պարան):

Օլոլա. Ջրազացքի ջրամբար, քառանկիւն հասակալ բրգածեւ շտեմարան, որուն փոքր խարխախը դէպի վար շրջուած շեղակի կը յենու զաւիլերի մը: Ասոր ստորին խարխախը կը փակէ սիւլիկոնը, որուն ծակէն ջուրը սաստիկ թափով կը ժայթքէ անիւին թեւերուն վրայ և անոր կուտայ հոլովական շարժում:

Օլոր. Ոլոր, ոլորուածք՝ թելի, պարանի:

Օլոր սալ. Ոլորել:

Օլոր մի սալ. Մէկ անգամ ոլորել:

Օլոր մոլոր. Ջիկզակ, դարձգարձիկ ճամբայ:

Օլորուկ. Ճամբու մը այն կէտը, ուր անկիւն մը կը ձեւանայ:
Ճամբուն կորացած տեղին արտաքին մասը, գազաթը:

Օլորուկը դառնալ. Ճամբուն գազաթին միւս կողմը անցնիլ:

Օլորուկեն դառնալ. Ճամբուն կորացած մասէն անցնիլ, երթալ:

Օլոմ. 1. Ոլոք. 2. միտով միտին եփուած ոսկոր:

Օկ. Տեսակ մը մածուցիկ հիւթ՝ պատրաստուած հաւկիթով, ձէթով և կաւով, որով ճեղքած հողէ ամանները կը փակցնեն, կամ սափորներու ծակերը կը խցեն:

Օկել. Սափորին ծակը օկով խցել, ճեղքած ամանները փակցնել:

Օկուիլ. Կրաւորական ձեւ օկելի:

Օկուկ)
Օկման) Օկուած:

Յիւշար. Ոչխար: Այծ. իսկ ոչխարին մաքի կ'ըսեն:

Օղիկ օղիկ բլիլ) Չափազանց աղաչել պազտաիլ, կտոր կտոր ըլ-

Օղիկ օղիկ գալ) լալ աղաչելով:

Օն. Հնձելի արտին մէկ մասը, գոր, հնձելու սկսելէ առաջ, հնձող-
ներու առաջնորդողը կը սահմանէ: Հնձողները, ասով, կրնան
գիտնալ թէ ինչ ուղղութեամբ պիտի հնձեն, և ո՞րքան
տեղ:

Օես. Գնա՛, կորսուէ՛, կը գործածուի միայն շուներու համար:

Օ'ս օ'ւ. Եկո՛ւր, կը գործածուի շուները կանչելու համար:

Օտօտակ. Դեղին կոկոնով ծաղիկ՝ մը,
որուն կոկոնին եզերքը շըր-
ջանակածու կը փակեն սպի-
տակ ու համաչափ թերթեր:

Օ'զգբ. բայի մը հրամայականը.
Յարձակէ՛ (շուներու համար):

Օզբբցնել վրան. Օչգըչ օչգըչ ըսե-
լով շուներմէկու մը վրայ յար-
ձակելու գրգռել:

Օ'չ. Ոչ:

Օ'չ սայ, օ'չ առնր. Սասկի, շան սա-
տակ ըլլայ (տնէծ.բ):



Օտօտակ

Փ.

Ֆ. Ֆէ:

Ֆաս. Ֆէս գլխարկ:

Ֆիբ. Ընդեղէն մը, զոր կենդանիներու կը կերցնեն:

Ֆեալ. Ֆըչ ֆըչ ձայն հանել: Սողալու ձայն:

Ֆարսալ. Քնանալու ատեն քիթէն ֆըս ֆըս ձայն հանել:

Ֆարսուկ. Ֆըս ֆըս ձայն:

ՏԵՂԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

- Մամխենուս. Տեղ մը, ուր մամոխի (վայրի սալոր) ծառեր շատ կը
գանուին:
- Սիգուսնի. Սեղ շատ գանուած տեղ:
- Խուռչնի. Խոռոչներ:
- Քոսաղբիւր. (Հանքային աղբիւր):
- Աւզնոց. (Նշանակութիւնն սննդանօթ):
- Գբներ. Գուրեր:
- Սալոբար. Լերան մը անունը:
- Հայպար. Ուխտաստեղի մը, որ բարձր լերան մը գագաթը կը գըտ-
նուի:
- Ակնիկ. Զրաւտա տեղեր:
- Խլաղբիւր. Աղբիւր, որուն ջուրը խուլերուն կամ ականջի ցաւ ու-
նեցողներուն օգտակար է:
- Մեկրնուց. Լեռ մը:
- Քարդաղբիկ.
- Շորախ. (Աղի աղբիւր). Շամիրան. հայ:
- Սրբ Մարտուպայ լեռ. Սուրբ Մեսրոպի լեռ, որ քաղաքին արեւ-
մտեան և հիւսիսային կողմը կը բարձրանայ մէկ կողմէն մի-
այն մասէն ի: Գագաթը կան մէկ երկու շէնքեր: Բեւեռա-
գիր տրձանագրութիւն մը, որուն ոտքէն նեղ ու վտանգո-
ւոր ասնդուի մը կ'երկարի մինչեւ վիմափոր երկու սենեակ-
ները:
- Պաղ աղբիւր.
- Շախախնի.
- Բարակար. Լաւեր.
- Սղամայ դար. Բլուր մը, հողակերտ, հին գերեզման, որուն գա-
գաթին վրայ սրբավայր մը կը գըտ-նուի:
- Գոմ. Քիւրա գիւղ մը:
- Սարաչոր. (սարջուր քիւրա գիւղ մը):
- Հայպրբոբ. Սրբավայր մը (Հայպաթի քոյրը) որ կը գանուի Հայ-
պաթի ստորոտը:


ՄՈՌՑՈՒԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ



Աղբաղանի. Տես Բառարանը




Լեռայ անուխ. Տես Բառ.



Տասանաղ . Ոստայնանկուժեան գործիք մը, որ հենք ընելու միջոցին կը գործածուի. Տես էջ 64-65 :



Խոբնդաս



Օգոստոսի Գողթանի զարդ մը:



Օրում և Որում:



Թխքիկ և Տես Բառարանը



Չանչ և Տես Բառարանը


ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂՂԵԼԻ
9	33	ա.քլեր	ալ.քեր
12	7	ըլլայ	ըլլի
16	1	ախուժակով	ախորժակով
16	1	թորիկին	թոնիրին
31	18	եղեր է	էղեր ը
33	15	խորփուլոզ	խորխուլոզ
40	33	տող	դող
41	8	պապուճ	աէր պապուճ
41	11	(գցին.ք)	(գացին.ք)
48	26	անոնք	անոնց
50	5	ճըռճըռճին	ճըռճըռճիին
50	28	լայ	վլայ
51	23	աղուսնողներու	աղնուղներու
58	7	հեքներն	հենքներն
59	21	կը կտարի նաեւ խեղճ	ոստայնանկին փախաքն ալ
61	32	էստամներուն	ատամներուն
62	38	ուղիք	ուղիլ
67	29	գիտնատարաբանին	գիտնուլը տարրաբանին
72	11	ծեցուծ	ծեծած
127	35	կրնակ	կանակ
164	4	քաղիլ	թաղել
170	40	շուտով	շուտով կը
180	18	մաղեկալ	մաղկեալ
180	26	կը	մը
202	5	զայն	զայն
202	6	ամբողջովին	ամբողջովին
207	8	ձեղունք	ձեղուն
216	8	բուռագել	դբուռագել
251	25	Մբզուայ	Մբզայ
303	26	գիծերով	գիծեր
305	22	էր	էին
415	1	ոռ	լոռ
443	14	կարջեւ	կարզեւ
483	16	փաթանն	փաթթներն
548	13	մանուկներցո	մանուկներու
548	18	փիթկի	փեթկի
548	30	բոճն	բառ
550	8	ձուռկ	ցուռկ
550	30	փականըսրին	փական ըսին
556	23	բուտլ	բանուլ
556	26	արխման	Քարխման
558	13	աճագած	առաջացած

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ	Ա.—ԺԹ
Յառաջաբան		
Նշանում եւ հարսանիք		1
Ծննդաբերություն		8
Լոգանք		10
Տղարում		11
Կաղանդ		13
Տեան ընդ առաջ		17
Բարեկենդան		21
Մեծ պահք		31
Վիճակ		39
Մշակութիւն		43
Բամպակ		69
Դարի		70
Քուճիայ		72
Ոսպ		73
Ֆիք		74
Շուճմա		76
Կսաւաթ		79
Զիրանանք		82
Բակլա		83
Կորեկ		84
Յորեն		95
»		101
Կամ, շարշ		121
Թուք		139
Որբասունցի		147
Այգի		153
Այգեպանություն		158
Էգեկիք (այգեկութ)		165
Խաղողի հարսարագործություն Ա.		169
» Բ.		174
» Գինի		179
Բանջարեղէններ		199
Կարմեղէն		205
Կառք		

Ասրույաս	էջ 207
Բրդագործութիւն	210
Չկնորսութիւն	218
Բալուխ շինութիւնները	229
» գիւղի տուները	233
Առողջապահական սպայաններ	239
Բարոյական, իմացական եւ կրթական էջեր	263
Առաջնորդութիւն եւ առաջնորդներ	304
Բառարան	



դրամ պարտնմայ սհուտմա
[Գրոս Լեզուայ] Եմայս դր
Խ Լմ պար Լմ [Գրամարմ
մեմայ Երեմայի մի Խա
Լմ Խալիքի Խալմա մի Խ [Գ
[Ժամիամ] մի Խա Խալայ Խ
[Խալայ] մի Խալայ Խալայ մ
[Խալայ] Խալայ Խալայ Խալայ [Խ
Խալայ մի Խալայ մի Խալայ Խ
Խալայ մի Խալայ Խալայ Խալայ
Խալայ Խալայ Խալայ Խալայ
Խալայ Խալայ Խալայ Խալայ
Խալայ Խալայ Խալայ Խալայ
Խալայ Խալայ Խալայ Խալայ